Հ.Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

9(56)
53
Ի-

Հ.Գ.ԻՆՃԻԿՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

2087

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱԿՆԱՐԿ

G.KH.SARKISIAN
LIBRARY

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ • ԵՐԵՎԱՆ 1984

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ԳՄԴ 63. 3 (5 Թու)
Ի 583

Գրախոս՝ Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Խմբագիր՝ Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջ. Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Սիրելի Հայինեին և Զավեն
Խորենովիչին անմնացորդ
բարեկամական զգացմունքնե-
րով, սիրով ու շնորհակալությամբ
այնքան ընկերական, մշտական-
կանոնին վայել և հասնելի՝ համա-
տեղ աշխատանքի պայմաններն
կայուն մթնոլորտի համար:

[signature]

20.X.84

Ինճիկյան Հ. Գ.

Ի 583 Օսմանյան կայսրության անկումը. Սոցիալ-տնտեսական ակնարկ.— Եր.: Հայաստան, 1984.— 336 էջ:

Գրքում, հարուստ փաստական նյութի օգտագործմամբ, ներկայացված է Օսմանյան կայսրության ճգնաժամի և անկման ընդհանուր պատկերը: Մենագրության հիմնական խնդրին համապատասխան տրվում է հիշյալ պատմական անխուսափելի պրոցեսի վրա վճռական ազդեցություն ունեցած սոցիալ-տնտեսական գործոնների վերլուծությունը:

Նախատեսվում է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

Ի $\frac{0506000000}{701\ (01)\ 84}$ 61—84

ԳՄԴ 63.3 (5 Թու)

© «Հայաստան» հրատարակչություն, 1984

ՆԱԽԱԲԱՆ

> Քաղաքակրթության ուղու վրա կանգնելու թուրքական կառավարության բոլոր փորձերը հանգում էին անփառունակ կործանման...
>
> Ֆ. ԷՆԳԵԼՍ

Պատմության արձանագրած ամենահզոր պետություններից մեկը՝ Օսմանյան կայսրությունը, գոյատևեց մոտ 600 տարի և խոր բացասական ազդեցություն թողեց նվաճած երկրների առաջընթացի վրա։ Բոնի ուժով ստեղծված նման պետական միավորումների զարգացմանը հատուկ տրամաբանությամբ և թուրք վերնախավի քաղաքականության հետևանքով այն երբեք չամրապնդվեց ներքնապես, ապրեց երկարատև ճգնաժամ և անկման ստրաճանական պրոցես։ Պատմական այդ երևույթի պատճառները բազմաթիվ են, գալիս են անցյալի խորքից և օրգանական կապերով կապված են կայսրության անցած դարավոր ուղու ու դրա կեռմանների հետ։ Հարյուրամյակներ մնալով ֆեոդալիզմի ամենացածր, «բարբարոսական» աստիճանի վրա, կայսրությունը ենթակա էր մի շարք բացասական գործոնների ազդեցությանը։ Դրանցից գլխավորներն էին. վաչկատուն ցեղերի հակայական տեղաշարժերը, որոնք իրենց հետ բերում էին տնտեսական քայքայում և սոցիալական պայմանների հետադիմություն։ Այնուհետև, համայնական հարաբերությունների, հողի պետական սեփականության, հարկային սիստեմի կապալային ձևերի գոյատևումը դարձան սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամի խորացման ուղղակի պատճառները։ Նշվածից բացի, խիստ բացասական դեր կատարեց տարբերայնորեն ստեղծված աշխատանքի բաժանումը, երբ մահմեդական վերնախավը իր մենաշնորհն էր համարում պետական, վարչական, ռազմական գործը, երկրի կառավարումը, տնտեսության բնագավառը թողնելով հպատակ ռայային, այսինքն՝ ոչ մահմեդական ժողովուրդներին։ Մյուս կողմից, պետական ապարատը վերևից ներքև մարմնավորումն էր կաշառակերության, անօրինականության, կա-

մայականությունների, որոնց սուր ծայրը ուղղված էր քրիստոնյա ժողովուրդների ու երկրի զարգացման գլխավոր լծակը հանդիսացող նրանց տնտեսական գործունեության դեմ։ Այս բոլորին զուգահեռ կայսրությունում տարվում էր մեծապետական շովինիզմի ընդգծված քաղաքականություն, որը իրապես երկիրը դարձրել էր ժողովուրդների բանտ։ Որպեսզի պատկերը լրիվ լինի, անհրաժեշտ է ավելացնել, որ ոչ մահմեդականները, խղճի ազատության և շարիաթի համաձայն իրավազուրկ էին և պարտավոր էին բոլոր հասարակական ու անձնական խնդիրներում զիջել իսլամ դավանողին։

Անդրադառնալով մահմեդական Թուրքի իրավական դրությանը, Կ. Մարքսը գրել է. «Ինչպիսի սոցիալական վիճակ էլ նա ունենար՝ նա պատկանում էր արտոնյալ կրոնին ու ազգությանը, միայն նա՛ իրավունք ուներ զենք կրելու, և ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան պարտավոր էր հանդիպելիս ճանապարհը զիջել հասարակության ցածր խավին պատկանող մահմեդականին»[1]։

Նման փոխհարաբերությունները շարունակվեցին Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ժամանակաշրջանում և հանդիսացան խորացող ճգնաժամի ու կայսրության անկման կարևոր պատճառներից մեկը։ Երկրի ղեկավարները անընդունակ գտնվեցին Թուրքիան դուրս բերելու այդ վիճակից նաև բարեփոխումների միջոցով, գեթ ինչ-որ չափով կայունացնելու ներքին դրությունը, որը գնալով ծանրանում էր։ Աճում էին անջատողականությունն ու տեղայնությունը, կենտրոնական ու տեղական կառավարական մարմինների օրինազանցությունները ու նրանց անպատիժ մնալը և նման կարգի բացասական այլ երևույթներ։

Հպատակ ժողովուրդների վաղուց ծայր առած ազգային-ազատագրական պայքարն անցյալ դարի սկզբներին ընդունեց ավելի կազմակերպված ու սիստեմատիկ բնույթ, խորացնելով քաղաքական ճգնաժամը։

Երկրի դրությունը չափազանց վատթարացավ հատկապես XIX դարի վերջին քառորդին, երբ իմպերիալիստական պետությունները Թուրքիան դարձրին իրենց կիսագաղութը։

Այդպիսով, ներքին ու արտաքին գործոնների ազդեցության

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 6.—։ *(Հղումները կատարվում են ըստ 2-րդ հրատարակության)։*

հետևանքով սոցիալ-քաղաքական ճգնաժամը հետզհետե խորանում էր և նրա արտահայտությունները ու հետևանքները դառնում էին ավելի ակնառու։

Մեր աշխատության հիմնական խնդիրն է՝ լուսաբանել կայսրության անկման սոցիալ-տնտեսական պատճառները և գլխավորապես այդ տեսանկյունից քննել ներկայացվող բարդ և բազմապլանային պրոցեսը։ Իսկ այդպիսի քննարկման կենսական անհրաժեշտությունը թե՛ պատմության և թե՛ պատմագիտության համար ակներև է։ Կարևոր է ընդգծել, որ կայսրության տնտեսական կյանքի զարգացման խնդիրները, ինչպես նշվեց, հենց սկզբից, քիչ են հետաքրքրել Թուրք վերնախավին։ Նա իր գլխավոր նպատակն է համարել կայսրության հզորության հիմքը կազմող բանակի ու նրա ռազմական գործողությունների և հսկայածավալ երկրի կառավարումը, այսպես ասած, երկրի վարչական ու ռազմական ղեկավարման գործը։ Տնտեսության բնագավառը արհամարհանքով նա թողել էր հպատակ քրիստոնյա ժողովուրդներին՝ «ռայաներին», որոնց պարտքն ու պարտականությունն է համարվել մշակել հողը, զբաղվել արհեստներով ու առևտրով կամ այլ «սև» աշխատանքներով և ժամանակին ու պահանջված չափերով մուծել պետական և մյուս հարյուրավոր հարկերը։ Անգամ ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և կապիտալիստական կարգերի ծնունդը չփոխեցին իրերի վիճակը։ Նոր արտադրահարաբերությունների զարգացումը տեղի ունեցավ հնի բացարձակ ու երկարատև տիրապետության պայմաններում, որն իր կնիքը դրեց երկրի ամբողջ հետագա պատմության վրա և բնորոշեց նրա առաջընթացի յուրահատկությունները։ Ամփոփ կերպով դրանցից գլխավորները կարելի է բնութագրել հետևյալ բնորոշ գծերով, որոնք և լուսաբանվում են ներկա աշխատությունում։ Դրանցից են. Թուրքական ֆեոդալական իրավակարգի ազդեցությունը կապիտալիստական հարաբերությունների զարգացման վրա, օսմանյան պետության և նրա ռազմաբյուրոկրատական վերնախավի, նրա քաղաքականության, ինչպես նաև իսլամի ու շարիաթի մշտական ու ակտիվորեն ներգործող դերն ամբողջ երկրի առաջընթացի վրա, տիրապետող Թուրք և այլ մահմեդական ու քրիստոնյա ժողովուրդների միջև գոյություն ունեցող տնտեսական ու կուլտուրական մակարդակի զգալի տարբերությունները և այդ երև-

վույթի ազդեցությունը Թուրք ու այլազգի բուրժուազիայի զարգացման վրա, տիրող շրջանների ազգային քաղաքականության նշանակությունը հիշյալ պրոցեսների համար, բուրժուազիայի ազգային խմբերի դերն ու տեղը երկրի տնտեսության մեջ, օտար կապիտալի դերն Օսմանյան կայսրությունում կապիտալիստական կարգերի հաստատման վրա և մի շարք այլ, ոչ վճռական գործոնների, որոնք բնորոշ են Արևելքի, մասնավորապես, մահմեդական երկրների զարգացման համար։ Այդ առանձնահատկությունների ուսումնասիրությունը կօգնի Օսմանյան կայսրության հատկապես վերջին շրջանի պատմությունը, ինչպես նաև այնտեղ բնակվող ժողովուրդների անցած ուղին ավելի ճիշտ և խոր ըմբռնելու։ Մյուս կողմից, վերոհիշյալ հարցերի հետագա մշակումն ի հայտ կբերի նոր փաստեր, կամ կտա մի շարք երևույթների նոր մեկնաբանություններ, որոնք անհրաժեշտ կդարձնեն հին դրույթների և հետևությունների վերանայումը։

«Պատմությունը,— գրել է Վ. Ի. Լենինը, —իր հետ բերում է և՛ նոր փաստեր, և՛ հետազոտության նոր եղանակներ, որոնք տեսության հետագա զարգացում են պահանջում»[1]։

Մենագրության համար գիտական ու մեթոդոլոգիական ելակետ են հանդիսացել մարքսիզմ-լենինիզմի դասականների այն ուսումնասիրությունները, որոնցում քննարկվում են ֆեոդալական կարգերի քայքայման և կապիտալիզմի զարգացման պրոցեսները։ Դրանցից են մասնավորապես Կ. Մարքսի «Կապիտալը», Ֆ. Էնգելսի «Ֆեոդալիզմի քայքայումը և բուրժուազիայի զարգացումը», Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» և այլ երկեր։ Չափազանց կարևոր նշանակություն ունեն նրանց դրույթներն առանձին սոցիալ-տնտեսական ու պատմական երևույթների մասին, ինչպես՝ ուսմունքն ագրարային հարցի, կապիտալի նախասկզբնական կուտակման, կապիտալիզմի զարգացման փուլերի, իմպերիալիզմի մասին։ Հատուկ ուշադրության արժանի են դասականների մտքերն այսպես կոչված կապիտալիզմի զարգացման «պրուսական ուղու», Արևելքի երկրներում և Թուրքիայում այդ պրոցեսի յուրահատկությունների, մասնավորապես «ասիա-

[1] Լենին Վ. Ի., Երկ., հատ. 4, էջ 255։ Այսուհետև բոլոր հղումները կատարվում են սույն հրատարակության հատորներից։

կան արտադրանքի» և այլ հարակից խնդիրների վերաբերյալ։

Լայնորեն օգտագործել ենք մարքսիստական հայտնի տեսակետները Թուրքական ֆեոդալիզմի, հողի պետական սեփականության պայմաններում հողագործության և հողօգտագործման ձևերի, ինչպես նաև հնկայածավալ ու բազմազգ կայսրության կյանքում օսմանյան պետության և իսլամի կատարած դերի մասին։ Թուրքիայի զարգացման հեռանկարներին անդրադառնալիս Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը նշել են Թուրք գյուղացու աշխատասիրությունը։ Նրանք միաժամանակ ցույց են տվել, որ տիրող կարգերի նեխածությունը, վերնախավի այլասերումը, ֆեոդալական ճնշումն ու կամայականությունները հանդիսացել են երկրի հետամնացության կարևոր պատճառները։ Այդ պայմաններում, նույնիսկ զարգացման ավելի բարձր մակարդակի վրա կանգնած սլավոնները, հույները, հայերը, հրեաները և ուրիշներ, մարքսիզմի հիմնադիրների բնորոշմամբ, չէին կարող իրենց համար բացել ազատ կապիտալիստական առաջընթացի ուղին։

Օսմանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների և պայմանների ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունի լենինյան այն դրույթը, որ կապիտալիզմի դարաշրջանը գաղութներն ու կիսագաղութները ներքաշում էր ապրանքափոխանակության, «բայց դեռևս ոչ կապիտալիստական արտադրության մեջ... Իմպերիալիզմը ի միջի այլոց, կապիտալի արտահանություն է»[1]։ Հիշյալ պրոբլեմների ուսումնասիրության ընթացքում մենք ելել ենք մարքսիստական այն մեկնաբանությունից, որ ընդհանուր օրինաչափությունների գործողությունը դրսևորվում է կոնկրետ պատմական պայմաններին, ազգային առանձնահատկություններին համապատասխանող տարբեր ձևերով։

Գրքում լուսաբանվող հարցերը ակնառու են իմպերիալիզմի դարաշրջանում, երբ Օսմանյան կայսրությունը ևս ներգրավվում է կապիտալիզմի զարգացման ոլորտը, որին համընթաց տեղի է ունենում մեկ ուրիշ՝ երկրի կիսագաղութ դառնալու պրոցեսը։

---

[1] Լենին Վ. Ի., Երկ., հ. 20, էջ 49.

Բազմաթիվ են Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ մանր ու մեծ ուսումնասիրությունները, ճանապարհորդական նոթերը և հուշերը։ Հենց այդ հանգամանքը պահանջ էր առաջադրել ասվածը չկրկնելու համար ավելի մեծ ուշադրությամբ հետազոտել արխիվային նյութերը, պարբերականներն ու խնդրին վերաբերող գրականությունը։ Նման մոտեցումն անհրաժեշտ էր նաև այն պատճառով, որ Թուրքիայում չի եղել վիճակագրություն ու գրեթե չեն հրապարակվել վիճակագրական նյութեր։ Եղածներն էլ կազմվել են մոտավոր տվյալների հիման վրա գլխավորապես օտար հեղինակների կողմից։

Հայտնի ու դեռևս անհայտ փաստերի ու երևույթների ուսումնասիրման հիման վրա մենք աշխատել ենք ստեղծել պատմական փաստերի մի շղթա, որը և օգնեց առաջադրելու որոշ նոր դրույթներ։

Քանի որ դեռևս Օսմանյան կայսրության տնտեսական պատմությունը մշակված չէ և թուրք հեղինակներն ու նրանց տեսակետների պաշտպանները կարծեք թե մտադիր էլ չեն այդ անելու, անհրաժեշտ էր բացատրել նաև դրա պատճառները։

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում դարերով վճռական դեր է խաղացել այլազգի բուրժուազիան։ Նրա գործունեության հետ է կապված երկրի արդյունաբերության հիմնական ճյուղերի, արհեստների, առևտրի, մասամբ և գյուղատնտեսության զարգացումը։ Իհարկե, այդ բուրժուազիայի ոչ բոլոր խավերն էին ձգտել կայսրությունում հաստատել կապիտալիստական կարգեր։ Թուրք և այլ մահմեդական ֆեոդալների ու ռազմաբյուրոկրատական վերնախավի հետ միասին սուլթանական իշխանության հենարանն էին հանդիսանում այլազգի բուրժուազիայի վերին շերտերը, հողատերերն ու քրիստոնյա աստիճանավորները։ Հույն ֆանարիոտները, հայ ամիրաները և հրեա բանկիրներն ըստ պահանջի դարերով ֆինանսավորում էին օսմանյան պետությանը, նրա սուլթաններին ու առանձին գործիչներին։ Բնականաբար, հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարն ուղղվում էր ոչ միայն ատելի սուլթանական վարչակարգի, այլև նրա հենարանը հանդիսացողների՝ «օսմանյան» հասարակության հիշյալ խավերի դեմ։ Օբյեկտիվորեն այդ պայքարն ուներ թե ազգային-ազատագրական և թե դասակարգային բնույթ, որտեղ

բուրժուական հարաբերությունների հաղթանակին էին ձգտում հպատակ քրիստոնյա ժողովուրդներն իրենց ազգային բուրժուազիայի գլխավորությամբ, մինչդեռ այդ առաջընթացն արգելակում էին թուրքական ու մահմեդական ֆեոդալական տարրերը, հոգևորականությունն ու բարձրաստիճան պաշտոնեությունը։ Հետևապես, որպեսզի Օսմանյան կայսրության անկման պատճառների վերաբերյալ հստակ պատկերացում կազմվեր, պետք էր առաջին հերթին ներկայացնել տիրապետող վարչակարգի դեմ պայքարող ուժերին՝ ոչ թուրք, այլազգիների բուրժուազիային, նրա մտավորականությանը և քաղաքական կազմակերպություններին։ Նյութի պակասը դժվարացնում է տալ այդ բուրժուազիայի ձևավորման և զարգացման պրոցեսն ամենայն մանրամասնությամբ և բոլոր կողմերով։

Գրքում, այնուհետև, բնորոշվում են բուրժուազիայի առանձին ազգային խմբերի գործունեության ոլորտները կամ «մասնագիտացումը» ըստ արտադրանքի և առևտրական գործարքների։ Այդ երևույթը առավել առարկայական դարձնելու նպատակով ամփոփվել և ընթերցողին են ներկայացվում համապատասխան թվական տվյալներ ու եզրահանգումներ։ Միաժամանակ կարծում ենք, որ օգտագործված նյութը դեռևս հնարավորություն չի տալիս ավելի մանրամասն վերլուծելու Օսմանյան կայսրության բազմազգ բուրժուազիայի կամ նրա առանձին խմբերի սիստեմատիկ պատմությունը, որը, անկասկած, կպահանջի նոր աշխատանք ու ջանքեր։ Նույնիսկ թուրք պատմաբանները և սոցիոլոգները, որոնց տրամադրության տակ են պետության արխիվները, չունենալով կամ, չցանկանալով ունենալ ընդհանրացված տվյալներ, դեռևս չեն կարողանում տալ օսմանյան բուրժուազիայի զարգացման ամբողջական պատկերը և բավարարվում են միայն առանձին փաստերով ու օրինակներով։

Կայսրության բազմազգ բուրժուազիայի և մյուս հակադիր ուժերի պատմության համակողմանի մշակումը, անշուշտ, հնարավոր կլինի մի շարք երկրների գիտական հիմնարկների կոլեկտիվ ջանքերի գործադրմամբ միայն, քանի որ Օսմանյան կայսրության պատմությունը, ի վերջո, նրանում բնակված առանձին ժողովուրդների պատմությունն է։ Իսկ ամեն ժողովուրդ իր ազգային լեզվով աշխատություններ ու մեծաքանակ նյութեր ունի, որոնք լավագույնս կարող են ծառայել հիշյալ ընդհանուր նպատակին։

Տվյալ ուսումնասիրության մեջ մենք օգտագործել ենք ռուսերեն, թուրքերեն ու եվրոպական լեզուներով լույս տեսած գրականությունը և մամուլը, ինչպես նաև արխիվային նյութեր։

Հատուկ ուշադրության առարկա են եղել հայերեն աշխատությունները, բազմաքանակ պարբերականներն ու աղբյուրները, որոնց զգալի մասը չափազանց կարևոր է որպես կայսրության ներքին կյանքն արտացոլող տեղական հրատարակություններ։

Տարիների ընթացքում հավաքված փաստական նյութը հնարավորություն է ընձեռում սոցիոլոգիական ուսումնասիրության այս փորձը դիտել որպես Օսմանյան կայսրության տնտեսության զարգացման, բուրժուական հարաբերությունների ձևավորման, սոցիալ-տնտեսական հակասությունների սրման և ներքին ճգնաժամի հասունացման կարևոր պրոբլեմների մշակման առաջին քայլերից մեկը։

Միաժամանակ պետք է նշել, որ առաջընթացի կարևոր խավի՝ կայսրության բազմազգ բուրժուազիայի զարգացման պրոցեսի ուսումնասիրմանը զուգահեռ անհրաժեշտ էր տալ տնտեսական կյանքի ծանր, հաճախ ողբերգական պայմանների վերլուծությունը, պայմաններ, որոնք փաստորեն կայսրության վերնախավի քաղաքականության ուղղակի արդյունքը և անկման հիմնական պատճառներից մեկն են եղել։

Մյուս կողմից, սակայն, գրքի առանձին դրույթներն ու հետևությունները բնորոշում են ոչ միայն Թուրքիայի, այլև Արևելքի բազմաթիվ այլ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը։

Ինչպես ասվեց, աշխատության հիմնական խնդիրները Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական և, որոշ շրջանակներում, քաղաքական ներքին պրոբլեմների լուսաբանումն է։ Եվ այդ օրինաչափ է։ Բազմաթիվ մասնագետներ իրավացիորեն գտնում են, որ դեռևս Թուրքիայի ներքին կյանքը և նրա հետ կապված շատ հարցեր անբավարար են ուսումնասիրված։ Միաժամանակ պետք է նշել, որ սովետական շատ հեղինակներ (Ի. Ալիբեկով, Պ. Մոիսեև, Ա. Նովիչև, Յու. Ռոզալիև) իրենց մենագրություններում, որոնց մասին դեռևս կխոսվի, անդրադարձել են Թուրքիայի տնտեսական վիճակին և նրա-

նում կապիտալիստական հարաբերությունների զարգացման յուրահատկություններին։ Սակայն դեռևս չկան աշխատություններ, որոնք նվիրված լինեն հատկապես Օսմանյան կայսրության անկման սոցիալ-տնտեսական պատճառներին։

Օսմանյան կայսրության տնտեսական պատմության ամենաուսումնասիրված խնդիրներից մեկը հողային խնդիրն է։ Այս պատճառով (չնայած դրա մեծ կարևորությանը) գրքում այն արծարծվում է միայն անհրաժեշտ դեպքերում, երբ կարիք է զգացվում ցույց տալու ֆեոդալական կարգերի տրանսֆորմացիան, հողատերերի և գյուղացիների հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները, առևտրական կապիտալի և փողի ազդեցությունը հարկային սիստեմի վրա, կառավարության կենտրոնական և տեղական մարմինների միջամտությունն ագրարային հարաբերություններին, ինչպես նաև այդ բոլոր երևույթների ազդեցությունը՝ երկրում կապիտալիզմի զարգացման և ռազմաֆեոդալական կայսրության անկման վրա։ Արևելքի երկրներում ագրարային պրոբլեմը և նրա յուրահատկությունները մեկնաբանելու համար վճռական նշանակություն ունեն «Մ. Կովալևսկու գրքի կոնսպեկտի»[1] վերաբերյալ Կ. Մարքսի մտքերն ու դիտողությունները։

Հարուստ տեղեկություններ ենք քաղել նաև նախասովետական հետևյալ հեղինակների ուսումնասիրություններից՝ Դ. Բաքրաձե, Ա. Կոլյուբակին, Ն. Լենսկի, Յա. Մալամա, Ա. Ռուպպին, Ռ. Տերմեն և հայ հեղինակներ Ա-դոի, Ատոմի, Մուրադյանի, Խաժակի, Գ. Տեր-Կարապետյանի և ուրիշների գործերից։

Ագրարային պրոբլեմի ուսումնասիրությունը հետագայում շարունակվել է, և այն բազմաթիվ ասպեկտներով ու հատուկ աշխատություններում ներկայացվել է գիտական հասարակայնությանը։ Հիշյալ աշխատությունների թվին են պատկանում Ա. Ս. Համբարյանի, Ե. Ղ. Սարգսյանի, Դ. Արսլանյանի, Պ. Ժուկովսկու և այլոց աշխատությունները։

---

[1] Маркс К., «Конспект книги М. Ковалевского «Общинное землевладение, причины, ход и последствия его разложения»», «Советское востоковедение», 1958, №№ 3, 4, 5, «Проблемы востоковедения», 1959, № 1.

Հողային հարցին նվիրված են առանձին ժողովածուներ[1] և բազմաթիվ էջեր՝ Թուրքիային վերաբերող տարբեր աշխատություններում։ Մեր հատուկ ուշադրության առարկա են եղել թուրք հեղինակներ Հ. Ավնիի, Ս. Աքսոյի, Ք. Բուլութօղլու, Է. Ձ. Կարալի, Ի. Հյուսրևի, Դողան Ավչըօղլուի, Իսմայիլ Ջեմի և այլ պատմաբանների ու սոցիոլոգների տեսակետները, որոնց անդրադարձել ենք սույն գրքում։

Անցումը իմպերիալիզմին, համաշխարհային շուկայի ստեղծումը ամենուր, նաև Թուրքիայում, ուժեղացրին ֆեոդալական կարգերի քայքայումը։ Արդեն անցյալ դարի վերջերին կապիտալիզմի ներթափանցումը տնտեսության ու հասարակական փոխհարաբերությունների մեջ դարձել էր իրականություն։

Հասարակական առաջընթացի, զարգացման օրինաչափությունների ընդհանրությունը հնարավորություն է տալիս ամփոփելու նմանօրինակ երևույթները և համեմատության եզրեր գտնելու ոչ միայն Արևելքի թույլ զարգացած երկրների, այլև, օրինակ, Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Գոյություն ունեն հեղափոխական ու դեմոկրատական պայքարի փորձից բխող և կոմունիստական ու բանվորական կուսակցությունների կողմից մշակված սկզբունքային տեսակետներ՝ Արևելքի երկրների, նրանցում կապիտալիզմի ու բուրժուազիայի զարգացման վերաբերյալ։ Այս տեսակետից կարևոր են կոմունիստական ու բանվորական կուսակցությունների 1969 թ. Մոսկվայում կայացած միջազգային համաժողովում Թուրքիայի ներկայացուցիչների ելույթները, որտեղ նշվում է, որ այն եղել է «իմպերիալիստական քաղաքականության թե՛ զոհը և թե՛ գործիքը»[2]։ Թուրքիայի դերի այս սահմանումը բնականորեն վերաբերում է որոշակի ժամանակաշրջանի՝ սկսած անցյալ դարի վերջին քառորդից մինչև մեր օրերը։

Աշխատությունում օգտագործված են Սովետական Միության բազմաթիվ արխիվների նյութերը։ Հիշատակության արժանի են Ռուսաստանի արտաքին քաղաքականության, կենտրոնական

---

[1] Տե՛ս «Аграрный вопрос и крестьянское движение». Справочник. т. IV, М., 1937.

[2] «Международное совещание коммунистических и рабочих партий». Документы и материалы, М., 1969, стр. 234.

պետական ռազմապատմական, ռազմածովային նավատորմի, Մոսկվայի, Լենինգրադի, Վրաստանի և Հայաստանի պետական պատմական արխիվների ֆոնդերը, ինչպես նաև Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանի և Ե. Չարենցի անվան արվեստի ու գրականության թանգարանի նյութերը։

Օգտագործել ենք արխիվային փաստաթղթերի մի շարք ժողովածուներ և առանձին հրատարակված փաստաթղթերը։ Դրանց մեջ մեծ կարևորություն ունեն Ռուսաստանի ռազմական և ծովային գործակալների ուսումնասիրությունները, առանձին հաղորդումներն ու նկարագրությունները, ռուսական բանակի գլխավոր շտաբի տեղեկագրերը, «Թուրքական ժողովածուի», «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև 1895 թվականին մեծ տերությունների միջամտությունը», «Դիվան հայոց պատմության» (գիրք ԺԳ), «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» և այլ ժողովածուների նյութերը։

Անշուշտ, հաշվի է առնված, որ հիշյալ ժողովածուների ու պաշտոնական փաստաթղթերի մեջ բերված փաստերն ու տվյալները հաճախ մեկնաբանվում են՝ ելնելով արևմտյան տերությունների և ցարական Ռուսաստանի շահերից։ Սակայն դրանք պարունակում են չափազանց հարուստ փաստական նյութ, մասնավորապես վիճակագրական տեղեկություններ, ինչպես նաև առանձին երևույթների օբյեկտիվ վերլուծություն։

Գրքում լայնորեն օգտագործված են սովետական հրատարակությունների ստուգված տվյալները։ Դրանց թվին են պատկանում Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության գաղտնի փաստաթղթերի Ե. Ա. Ադամովի խմբագրությամբ լույս տեսած ժողովածուն՝ «Ասիական Թուրքիայի բաժանումը», ՍՍՀՄ և Բուլղարիայի գիտությունների ակադեմիաների համատեղ հրատարակած «Բուլղարիայի ազատագրումը թուրքական լծից (1875—1879)» փաստաթղթերի եռահատոր ժողովածուն, ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ՝ պրոֆ. Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն և բազմաթիվ այլ հրատարակություններ։

Օգտակար տվյալներ ենք քաղել «Արևելքի երկրներում կապիտալիզմի գենեզիսի մասին (XV—XIX դդ.)», «Անհավասար պայքարի դարեր», «Ազգային պրոցեսները Մերձավոր ու Միջին արևելքի երկրներում» և այլ ժողովածուներից։ Սովետական

հետազոտողների ջանքերի շնորհիվ հիմնականում մշակված են երկրի ընդհանուր պատմության և նրանում բնակված առանձին ժողովուրդների զարգացման մի շարք կարևոր պրոբլեմներ։

Օսմանյան կայսրության պատմության և սոցիալ-տնտեսական խնդիրների լուրջ վերլուծությամբ հանդես են եկել Ա. Ֆ. Միլլերը («Մուստաֆա փաշա Բայրակտար», «Թուրքիայի համառոտ պատմություն»), Ա. Դ. Նովիչևը («Թուրքիայի էկոնոմիկան առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում», «Թուրքիայի տնտեսության պատմության ակնարկներ մինչև առաջին աշխարհամարտը», «Թուրքիայի նոր շրջանի պատմությունը» և այլն)։

Սովետական բազմաթիվ հեղինակների գրքերում ու հոդվածներում կան չափազանց հարուստ նյութեր, փաստական և վիճակագրական տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են մենագրության հիմնական խնդիրներին։

Քիչ չեն նաև մինչհոկտեմբերյան շրջանին վերաբերող մասնագիտական հոդվածները, ճանապարհորդական նոթերը, կոնկրետ ուսումնասիրությունները և պարբերականներում հրապարակված տեղեկությունները, որոնք առաջ են հանդիսացել այս կամ այն հարցը մեկնաբանելիս, մասնավորապես, Թուրքիայի տնտեսության և նրանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման առանձին խնդիրներ պարզաբանելիս։ Մեզ համար չափազանց կարևոր նշանակություն ունեն հեղափոխական ու առաջադեմ գործիչների հոդվածները Թուրքիայի մասին։ Լինելով ազգային շարժումների և երիտթուրքական հեղաշրջման ժամանակակիցներ, Ռոզա Լյուքսեմբուրգը, Վ. Վ. Վորովսկին, Բ. Մ. Կնունյանցը, Ա. Գ. Զուրաբյանը և ուրիշներ այդ շարժումները գնահատել են որպես երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման արդյունք, ցույց են տվել երիտթուրքերի նպատակների վերնախավային բնույթը՝ դրանք կապելով Թուրքիայում տիրող իրավիճակի, առանձին դասակարգերի, սոցիալական խավերի և հետզհետե սրվող ազգային հարաբերությունների հետ։

Ժամանակակից թուրքագիտության զարգացման մեջ ծանրակշիռ ավանդ են ներդնում բուլղար գիտնականները։ Ուսումնասիրելով իրենց ժողովրդի պատմությունը, նրանք լուսաբանում են նաև Օսմանյան կայսրության պատմության առանձին

փուլերը, կամ պատմական առաջընթացի առանձին կողմերը, հատուկ ուշադրությամբ վերլուծելով Բալկաններում թուրքերի տիրապետության ժամանակաշրջանը և նրանց ազդեցությունը բալկանյան ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման վրա։

Այս իմաստով չափազանց բարձրարժեք են ակադեմիկոս Ն. Տ. Տոդորովի՝ Բալկանների տնտեսական ու սոցիալական զարգացման վերաբերյալ աշխատությունները։ Հենց թուրքական արխիվների հարուստ նյութերի հիման վրա նա ցույց է տալիս այդ զարգացման հասարակական հիմքերը, հաճախ տալով այնպիսի ամփոփումներ, որոնք կարելի է ընդունել որպես օրինաչափությունների հայտնաբերում կայսրության ամբողջ տարածքի համար։ Այդպիսին են, օրինակ, նրա «Բալկանյան քաղաքը XV—XIX դդ.» կապիտալ աշխատության եզրակացությունները։ Նա այդ գրքում հանգամանորեն մեկնաբանել է քաղաքների սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական խնդիրները նշված ժամանակաշրջանում և հանգել է այն չափազանց կարևոր եզրակացությանը, ըստ որի մինչև XVIII դ. վերջը «տիրապետող ժողովուրդը արտադրողական ուժերի ընդհանուր զարգացումից դուրս էր մնում» և այդ հանգամանքը «իր կնիքն է դրել Օսմանյան կայսրության ամբողջ սոցիալական ու քաղաքական կյանքի վրա»[1]։

Ն. Տոդորովի այլ աշխատություններում ներկայացված է կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Բուլղարիայում XIX դարում և ընդգծված, որ այն եղել է գլխավորապես ներքին տեղաշարժերի արդյունք։ Հեղինակը առարկում է բուլղար պատմաբան Դ. Կոսևին և մի շարք թուրք պատմաբանների, որոնք կապիտալիզմի մուտքը Թուրքիա կապում են միայն արտաքին ազդեցության հետ։ Խոսելով Եվրոպայի դերի մասին, Ն. Տոդորովը գտնում է, որ «խաղաղ» զարգացման առանձին փուլերում այն իրապես եղել է դրական՝ Բալկաններում կապիտալիստական հարաբերությունների ամրապնդման իմաստով։ Մյուս կողմից, սակայն, Թուրք կառավարության քաղաքականությունը խաղացել է իրեն առանձնահատուկ բացասական գործոնի դեր։

---

[1] Тодоров Н., Балканский город XV—XIX веков, М .,1976, стр. 410.

Բուլղար գիտնականները խիստ քննադատության են ենթարկում Ի. Խ. Ուզունչարշըլըի և Է. Զ. Կարալի բազմահատոր «Օսմանյան պետության» էջերում և այլուր արտահայտված այն տեսակետը, որ իբր «թուրքերը ազատագրել են» Բալկանները, և որ նրանց տիրապետությունն այնտեղ ունեցել է «առաջադիմական» նշանակություն...[1] Միանգամայն համոզիչ են ակադեմիկոս Ի. Սնեգարովի եզրահանգումները բալկանյան ժողովուրդների տնտեսության, կուլտուրայի, կենցաղի և կենսական բազմաթիվ այլ խնդիրների վրա թուրքական տիրապետության բացասական ազդեցության վերաբերյալ։

Վերջին տասնամյակներում երկրի սոցիալ-տնտեսական պրոբլեմներին լրջորեն անդրադառնում են նաև թուրք պատմաբանները, սոցիոլոգներն ու տնտեսագետները։ Մեզ ծանոթ աշխատություններից նշենք թուրք մարքսիստ Խալիս Օկանի գիրքը՝ Թուրքիայում կապիտալիզմի զարգացման մասին, որտեղ դրված խնդիրները լուսաբանվում են միանգամայն ճիշտ դիրքերից։ Դժբախտաբար, նման ուսումնասիրությունների կամ նույնիսկ հոդվածների թիվը չափազանց սահմանափակ է։ Սակայն բավական մեծաքանակ են թուրք բուրժուական հետազոտողների աշխատությունները, որոնք, որպես կանոն, զուրկ են լուրջ աղբյուրագիտական հիմքերից, մասնավորապես սոցիալ-տնտեսական պրոբլեմները քննարկելիս։ Այդ հրատարակություններին բնորոշ են ընդհանուր դատողությունները, շատ հաճախ կոնկրետ նյութի և գիտական վերլուծության բացակայությունը։ Համարյա բոլոր թուրք հեղինակներն աշխատում են շրջանցել ազգային խնդիրն ու տիրող խավերի ազգային քաղաքականությանը վերաբերող հարցերը, կամ չեն լուսաբանում նվաճված ժողովուրդների մասնակցությունը երկրի տնտեսական, կուլտուրական ու քաղաքական կյանքին, առաջընթացի պատմական պրոցեսին։ Այդ հեղինակներից ամենաառաջադեմներն անգամ չեն կարողանում երբեմն հաղթահարել ազգային սահմանափակվածության արտահայտությունները։ Անբավարար ուշադրություն է դարձվում հատկապես երկրի տնտեսական պատմությանը, որի ընթացքում թուրք բուրժուազիան այլազգի բուրժուազիայի համեմատությամբ

[1] Տե՛ս «Исторически преглед», 1963, № 3, էջ 89—99, «Народы Азии и Африки», 1964, № 3, էջ 154—155.

կատարել է երկրորդական դեր։ Այս իրողությունն անընդունելի ու անհամատեղելի է երկրում տարվող ազգայնական քաղաքականության ու տիրապետող գաղափարախոսության հետ, որը իր հերթին խիստ ազդում է գիտության զարգացման վրա և որի հետևանքով օսմանյան պատմագիտության մեջ տնտեսական և սոցիոլոգիական ուսումնասիրությունները դեռ իրենց պատշաճ տեղը չեն գրավել։ Ելույթ ունենալով Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված կոնֆերանսում, Մերձավոր և Միջին արևելքի տնտեսական պատմության խոշոր մասնագետ, Կոլումբիայի համալսարանի պրոֆ. Ճ. Իսսավին ստիպված էր ընդգծել, որ կայսրության 1600—1914 թթ. տնտեսական կյանքի մասին իր զեկուցման մեջ ավելի շատ հարցեր կային բարձրացված, քան եզրակացություններ, որովհետև Թուրքիայի վերաբերյալ հսկայածավալ գրականության մեջ չափազանց քիչ է տնտեսական ինֆորմացիան[1]։ Հիշյալ պրոբլեմի շրջանցումը հետևանք է ոչ միայն ազգայնական մոտեցման, այլև արտացոլում է հետևյալ օբյեկտիվ պրոցեսը։ Զարգացող երկրներում բուրժուական հարաբերությունների հաստատումը և ազգային կուլտուրայի հետագա զարգացումն առաջ են բերում մաքուր ազգային պատմություն, մշակույթ և լեզու ունենալու թե՛ ձգտում և թե՛ քաղաքականություն։

Թուրքական իրականությունը նման երևույթի դասական օրինակ է։ Հիշենք, որ այս երկրում կուլտուրայի զարգացումը տեղի է ունեցել իրանա-արաբական և ապա եվրոպական մշակույթի ազդեցության պայմաններում։ Պուրիզմի նշանաբանով տարվող պայքարն ուղղված էր այդ երկու ազդեցությունների դեմ, քանի որ նրանք չէին կարողանալու հանդիսանալ զարգացման նոր փուլի հիմքը։ Մյուս կողմից, ոչ քեմալական շըրջանի բուրժուադեմոկրատական ռեֆորմները, ոչ էլ արևմտյան երկրների հետ հետագա մերձեցումը չլուծեցին երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական ու քաղաքական կարևորագույն խնդիրները։ Դրա հետևանքը եղավ այն, որ Թուրքիայում ուժեղացավ պատմական անցյալում ելք փնտրելու ձգտումը։ Հատկապես 1960 թ. մայիսի 27-ի և մանավանդ 1980 թ. սեպտեմբերի 12-ի հեղաշրջումներից հետո այն դարձավ մոդայիկ։ Գրականագետ Ջեմիլ Մերիչի արտահայտությամբ Թուրքիա-

[1] Տե՛ս «Народы Азии и Африки», 1977, № 4, էջ 206.

յում «մասսաները եվրոպականանում էին, իսկ մտավորականները ավելի ու ավելի էին դառնում թուրքեր»[1]։ Հետզհետե և նորից (քանի՞երորդ անգամ) ձևավորվում էր թուրքերի առաջընթացի ինքնատիպության «տեսությունը»։ Ըստ այդ տեսության «Թուրքիան իր զարգացման ընթացքում պահպանել էր սոցիալական կյանքի ավանդական ձևը և պետք է հրաժարվեր Արևմուտքի առաջարկած արդիականացումից»[2]։ Այդ տեսության էությունը և նպատակը՝ Օսմանյան կայսրության սոցիալական կառուցվածքի իդեալականացումն է։ Մինչդեռ, եթե բարձրացվեր պատմության վարագույրը և գիտականորեն մշակվեր կապիտալիզմի ու բուրժուական հարաբերությունների զարգացման պրոբլեմը, պետք է ցույց տրվեր ու գնահատվեր սլավոնական, հունական, հայկական, հրեական և այլ կապիտալների անհամեմատ ակտիվ և դինամիկ գործունեությունն ու ազդեցությունը երկրի տնտեսական և կուլտուրական կյանքի վրա։ Մյուս կողմից, անհրաժեշտ կլիներ լուսաբանել թուրք վերնախավի, նրա տնտեսական քաղաքականության բացասական դերն իր գոյության ամբողջ շրջանում, մի բան, որ չէր համապատասխանի հիշյալ տեսության ոգուն ու նպատակին։ Դեռևս մոտ կես դար առաջ Թուրքիայում ագրարային խնդիրն ուսումնասիրող առաջին սովետական գիտնականներից մեկը՝ Կազիմիր Վասիլևսկին, իրավացիորեն նկատել է, որ թուրք հետազոտողների մեծամասնության համար ընդհանուր է «Թուրքիայում ազգային հարցի բացասումը ու կոծկումը և ամեն ինչ «ազգային», «թուրքական» ներկայացնելու ձգտումը...»։ Նա նշում է, որ այդ նկրտումը չափազանց «անբարենպաստ է անդրադառնում ինչպես գիտական մակարդակի, այնպես էլ թուրքական իրականությունն իմացող ընթերցողի հոգեբանության վրա...»[3]։

Դժբախտաբար, այդ երևույթը շարունակում է գոյատևել և այն հաղթահարելու ջանքերը դեռևս չափազանց թույլ են։ Այսուհանդերձ, վերջին տասնամյակներում լույս տեսած գրականության մեջ առկա են մի շարք լուրջ ուսումնասիրություններ,

---

[1] 1978 edebiyat yıllığı, Ist., s. 456

[2] «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 73.

[3] Казимир В-ий, Турецкая экономика в описании самих турок, «Новый восток», 1930, № 8, стр. 241.

որոնցում քննվում են այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝ Օսմանյան կայսրության սոցիալական կարգը, կապիտալիզմի զարգացման պատմությունը, հողային հարաբերությունները, գյուղացիության ու բանվոր դասակարգի պատմությունը և այլն։ Նշված աշխատություններից են Թուրքիայի բանվորական կուսակցության նախագահ Բեհիջե Բորանի «Թուրքիան և սոցիալիզմի պրոբլեմները», Մուզաֆֆեր Սենջերի «Օսմանյան հասարակական կարգը», Օյա Սենջերի «Թուրք հասարակության պատմական զարգացումը», Հ. Ծոզգենի «Թուրքիայի տնտեսական պրոբլեմները», Կ. Ֆիչեկի «Կապիտալիզմի զարգացումը Թուրքիայում և բանվոր դասակարգը», «Օսմանյան պետությունը և նրա տեղը համաշխարհային պատմության մեջ» ժողովածուն և մի շարք այլ գրքեր ու մենագրություններ։ Եթե ընդհանրացնենք նշված հեղինակների տեսակետները, ապա կտեսնենք, որ դրանք փորձեր են գտնելու երկրի զարգացման օրինաչափությունները ու յուրահատկությունները։ Նրանց մեծ մասի կարծիքով, «ասիական արտադրաեղանակի» և հողի պետական սեփականության առկայությունը ստեղծեցին պայմաններ, որոնք արգելակեցին, մի կողմից, օսմանյան ֆեոդալական հասարակարգի քայքայումը, իսկ մյուս կողմից՝ կապիտալիստական հարաբերությունների ձևավորումն այդ հասարակարգի ընդերքում։ «Մեր պատմաբանները,— գրում է Մ. Սենջերը,— որոնք ուսումնասիրել են օսմանյան հասարակության կառուցվածքը, ոչ միայն չեն ձգտել նմանեցնելու այն ընդհանուր որոշակի տիպի, այլ ընդհակառակը, հայտնաբերել են առանձնահատկություններ, որոնք նրան բաժանում են ընդհանուր տիպերից»[1]։

Ընդունելով երկրի տնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների առկայությունը, Կ. Ֆիչեկը, Մ. և Օ. Սենջերները և ուրիշներ դրանք համարում են Արևմուտքի ազդեցության արդյունք, դրսից ներածված երևույթ։ Փաստորեն այդ տեսակետն են արտահայտում նաև Է. Կարալը, Թ. Տունայան, Օ. Կոնկերը, Թ. Մյումթազը և ուրիշներ։ Նշված հեղինակների մեծագույն մասը զարգացման եվրոպական ուղին, այսպես կոչված «եվրոպականացումը» Թուրքիայի համար, և անշուշտ, որոշ յուրահատկություններով համարում է բնական ու անխու-

[1] Sencer M, Osmanlı toplum yapısı, Ist. 1969. s. 44

ափնելի։ Ահա հենց այս պատճառով էլ նրանք իրենց երկրի վիճակը համեմատում են միայն եվրոպական երկրների հետ և Թուրքիայի հետամնացության պատճառը համարում այն, որ քիչ թե թուրքերի «եվրոպականացման» ցանկությունները չընդունվեցին կայսրության հպատակ այլ ժողովուրդների, մասնավորապես արաբների կողմից, որոնք չհասկացան հիշյալ պրոցեսի կարևորությունը (Թ. Մյումթազ)։ Այդ դեռ բոլորը չէ։ Թանզիմաթից սկսած մինչև կայսրության անկումը բոլոր բարեփոխումների փորձերի ձախողումը առանձին հեղինակների կարծիքով հետևանք է բազմազգ պետության և հպատակ ժողովուրդների ու ցեղերի զարգացման տարբեր աստիճանների առկայության (Յու. Աբադան, Բ. Սավչի)[1]։ Երբեմն էլ Թուրքիայի հետամնացությունը դիտվում է որպես շարիաթի օրենքներից և իսլամի դոգմաներից հեռանալու կամ դրանք մոռացության տալու արդյունք։ Նման տեսակետների կողմնակիցների շարքերում, հոգևորականներից բացի, կան պետական գործիչներ և մտավորականության ներկայացուցիչներ։ Այսուհանդերձ, կան հեղինակներ, ի թիվս որոնց նաև երիտթուրքերի ներկայացուցիչներ, որոնք կայսրության հետամնացությունը փորձում են բացատրել սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությամբ և հնարավոր են համարում զարգացման ռեալ այլ ուղիներ (Սաբահեդդին և ուրիշներ)։ Կան նաև այնպիսիները, որոնք առաջարկում են ուղղակի օգտվել եվրոպական երկրների տնտեսական փորձից և օգտագործել, օրինակ, կոոպերացիան, որպես զարգացման հնարավոր ուղի (Մուստաֆա Սուբհի, Ահմեդ Ջևդաթ)։ Թվարկված տեսակետները, սակայն, քննության չառնեցին թուրքական իրականության մեջ և բնականաբար չէին կարող լրացնել խնդրի առարկա պրոբլեմի գիտական մշակման բացը։ Մեզ դեռ հայտնի չեն սոցիոլոգիական ու տնտեսագիտական այնպիսի աշխատություններ, որոնցում թուրք հեղինակները կարողանային լրջորեն վերլուծել երկրի հետամնացության գլխավոր, ներքին պատճառները, այն գործոնները, որոնք իրապես խանգարել են կապիտալիզմի ուղիով նրա առաջընթացին, արգելակել են բուրժուական հարաբերությունների զարգացումը։ Սա-

---

[1] Abadan Y., Savci B., Türkiye 'de Anayasa gelişmelerine bir bakış, Ankara, 1959, s. 29—30

կայն Թուրք պատմագիտությունը մեծ ջանքեր է գործադրում իդեալականացնելու անցյալը, գովաբանելու նույնիսկ սուլթան Աբդուլ Համիդի, երիտթուրքերի և վերնախավի բազմաթիվ ներկայացուցիչների գործունեությունը։ Հայտնի պատմաբան Է. Զ. Կարալը արդարացնում է երիտթուրքերի քաղաքականությունը, հայտարարելով, որ նրանց «բարենորոգումների ծրագրում առկա էին նաև սոցիալական ու տնտեսական խնդիրներ, որոնք՝ ապստամբությունների, պատերազմների ու տարբեր տեսակի ճգնաժամերի հետևանքով չէին կարող իրագործվել»[1]։ Ինչպես, մենք ի նկատի ենք առել բազմաթիվ Թուրք մտավորականների աշխատություններում տեղ գտած՝ կայսրության վերնախավի տնտեսական քաղաքականության, երկրում տիրող սոցիալական անհավասարության, կամայականության, կաշառակերության, քայքայող հարկային սիստեմի քննադատությունը, գյուղի աղքատացման պատճառները, երկրի տնտեսության վրա օտար կապիտալի խորտակիչ և այլ բացասական երևույթների բացահայտումը։ Հիշյալ աշխատություններում ևս չկա գիտական մոտեցման ամբողջական սիստեմ, չեն վերլուծված կայսրությունում տիրապետող սոցիալական կարգի բնորոշ կողմերը և ծանր հետևանքները երկրի զարգացման վրա։ Հետաքրքրական են Թուրք պատմագիտության փորձերը (Աֆան Հիքմեթ և ուրիշներ) տնտեսական ռեֆորմների ձախողումը կապել գլխավորապես արտաքին քաղաքականության անհաջողությունների՝ կապիտուլյացիոն ռեժիմի, երիտթուրքերի եվրոպականամետ կողմնորոշման և նման այլ արտաքին հանգամանքների հետ, քողարկելով դրանց հիմնական, ներքին պատճառները[2]։ Չի կարելի չասել նաև Թուրք պատմագիտության մեջ տեղի ունեցող մի արտառոց երևույթի մասին։ Դա Օսմանյան կայսրության, նրա պատմության և այլ պետությունների ու ժողովուրդների վրա ունեցած ազդեցության իդեալականացման փորձերն են։ Որպեսզի դրանք հասնեն միջազգային գիտական շրջաններին, մի շարք հեղինակներ աշխատում են իրենց գործերը հրատարակել եվրոպական լեզուներով, կամ Արևմուտքում լույս տեսնող տարբեր գիտական կազմակերպությունների ժողովա-

[1] Economie et Sociétès dan l'Empire Ottoman (Fin du XVIII-e-Debut du XX-e siècle), Paris, 1983, p. 12.

[2] Տե՛ս Yeni Çağ, 1964, N 11—12, s. 654.

ծունների, ամսագրերի և հանդեսների էջերում։ Դրանցից է արդեն հիշատակված «Օսմանյան պետությունը և նրա տեղը համաշխարհային պատմության մեջ» ժողովածուն[1], Քեմալ Կարպատի «Ներածություն» և «Օսմանյան պետության կապերը», ինչպես նաև Հ. Ինալչըքի «Թուրքական ազդակը արդի եվրոպայի զարգացման գործում» աշխատություններում Օսմանյան կայսրությունը ներկայացվում է ոչ թե դեպի անկում գնացող պատմական երևույթ, այլ մի գործոն, որը համարյա իր գոյության ամբողջ ընթացքում (XVI—XIX դդ.) դրական ազդեցություն է ունեցել ոչ միայն կայսրությանը ենթակա հսկայական տարածքի վրա, այլ նաև հարևան երկրների փոխհարաբերությունների հավասարակշռման և զարգացման գործում։

Նախապես իրենց ապահովելու նպատակով թուրք հեղինակները, և մասնավորապես Ք. Կարպատը, նախահարձակ լինելով գնահատական են տալիս արևմտյան խոշոր օսմանագետների մի շարք կապիտալ աշխատություններին, որոնցում իբրև թե դժվար է գտնել օբյեկտիվ եզրահանգումներ, քանի որ նրանք «օսմանյան» հասարակությանը դատապարտել էին անխուսափելի կործանման[2]։ Հենվելով այս տեսակետի վրա, նա բալկանյան ժողովուրդների պատմագիտությունը ևս համարում է գիտական բովանդակությունից զուրկ՝ թելադրված ազատագրված ժողովուրդների սուբյեկտիվ զգացմունքների պահանջներով։ Նման գնահատական է տրվում նաև թուրքական լծից ազատագրված ասիական և աֆրիկյան ժողովուրդների պատմագիտությանը։ Մասնավորապես, արաբ հեղինակների գործերը նա համարում է բալկանյան հետազոտություններից ազդված և հակաթուրքական կրքով գրված աշխատություններ։

Սակայն գիտական լուրջ ու անկողմնակալ մոտեցումն այլ պատկեր է բացում ընթերցողի առջև։ Ավելի քան հինգ հարյուր տարի գտնվելով օսմանյան լծի տակ, արաբ ժողովուրդների ներկայացուցիչները չէին կարող չնշել թուրք կառավարողների ռեակցիոն քաղաքականության ծանր հետևանքները հպատակ ժողովուրդների վրա։ Էմիլ Թուման իր «Ազգային-ազատագրական շարժումը և արաբական միասնության պրոբլեմը» կապի-

---

[1] Տե՛ս ԳԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորի գիտաինֆորմացիոն բյուլետենի № 2 (29), 1978 թ.։

[2] Նույն տեղը, էջ 11։

տալ աշխատության մեջ գրում է, որ ազգային զգացումը արաբների մոտ ձևավորվել է «օսմանյան տիրապետության հանդեպ զարգացող ատելության հողի վրա, տիրապետություն, որն իր հետ բերում էր կամայականություն, գյուղացիության քայքայում, առևտրի ու արհեստների անկում»[1]։

Այդ մասին բազմաթիվ էջեր կան նաև եգիպտական պրոգրեսիվ պատմաբան Ամին Սաիդի «XX դարի արաբական ապըստամբությունը» գրքում։ «Թուրքիան և նրա արաբական քաղաքականությունը օսմաններից մինչև Աթաթյուրքը» կոլեկտիվ աշխատության հեղինակներ Ամին Շաքերը, Սաիդ ալ-Արյանին, Մուհամմեդ Մուստաֆա-Աթան ընդգծում են՝ «Առանց չափազանցելու կարելի է ասել, որ այն բոլոր թերությունները, որոնք ներկայումս երևան են գալիս արաբների անձնական ու հասարակական կյանքում, օսմանյան գաղութատիրության հետևանք են, գաղութատիրություն, որը մի քանի դար անընդմեջ իր ատելի ծանրությամբ սեղմում էր արաբների կուրծքը»[2]։ Կան նաև ուրիշ տեսակետներ։ Դրանց կողմնակիցները գտնում են, որ օսմանյան ֆեոդալական մեծ պետության ստեղծումը կարևոր ու առաջադեմ քայլ էր՝ համեմատած փոքր ու մասնատված տիրույթների հետ։ Այդ պետության հովանավորության տակ եղել են շրջաններ, երբ բարելավվել են առևտրի պայմանները, աշխուժացել են տեղական արդյունաբերությունը և արհեստները, ստեղծվել են շուկաներ, նոր թափ է ստացել հասարակական կյանքը։ Այդ կարծիքն է հայտնում մեկ այլ եգիպտացի պատմաբան՝ Թոֆիկ Բըրրոն «Արաբները և թուրքերը օսմանյան սահմանադրության ժամանակաշրջանում» (1960 թ., Կահիրե) աշխատության մեջ[3]։

Նշված տեսակետը լրջորեն քննադատում է է. Թոման, որն արաբական առանձին երկրների միացումը Օսմանյան կայսրու-

---

[1] Тума Э., Национально-освободительное движение и проблема арабского единства, М., 1977, стр. 12.

[2] شاكر امين سعيد الغريان ، محمد مصطفى عطا ،تركيا والسياسة العربية من خلفاء العثمان الى خلفاء اتاتورك ، ص ٤٥

[3] برو توفيق ، العرب والترك فى العهد الدستورى العثمانى ، القاهرة ، ١٩٦٠

թյան տարածքին, նրանց վերաբաժանումը էյալեթների ու վիլա-յեթների և դրանց ինքնուրույն զարգացումը համարում է ֆեոդալական մասնատվածության ամրապնդում։ Հետևանքն այն էր, որ ցանվեցին ռեգիոնալիզմի սերմերը, «որոնք իրենց զգալ տվեցին ավելի ուշ՝ XIX դարի վերջին և XX դ. սկզբներին, երբ արաբական երկրներում սկիզբ առավ ազգային շարժումը»[1]։ Պրոբլեմի ուսումնասիրությունը շարունակվում է, և արաբ պատմաբանները դեռևս շատ անելիք կունենան։

Արևմուտքի բուրժուական պատմագիտությունը հարյուրավոր հատորներ է նվիրել Օսմանյան կայսրության պատմությանը։ Մ. Ուբիչինին, Ե. էնգելհարդտը, Վ. Քիննեն և ուրիշներ կայսրության XIX դարի պատմությունը շարադրելիս ամեն կերպ գըրվատում են Եվրոպայի ու, մասնավորապես, Ֆրանսիայի ազդեցությունը։ Ֆ. Գրինը, Էմ. Դիլոնը, Խ. Ֆ. Լինչը, Մ. Մակ-Կոլը աշխատում են ցույց տալ Անգլիայի բարերար միջամտությունը Թուրքիայի գործերին։ 30 տարի Օսմանյան կայսրությունն ուսումնասիրող և երիտթուրքական շրջաններին շատ մոտ կանգնած է. Ֆ. Նայտը իր «Հեղափոխական հեղաշրջումը Թուրքիայում» աշխատության մեջ, որպես թուրքամետ գործիչ, չափազանց մեծ հարգանքով ու գովասանքով է խոսում երկրում կատարվող հասարակական տեղաշարժերի մասին, արդարացնում է թուրքական ռեժիմի կամայականություններն ու տիրապետությունը այլ ժողովուրդների վրա, որը Անգլիայի իմպերիալիստական շահերը ներկայացնող է. Նայտի արտահայտությամբ հիմնված է «իրավունքներից ամենալավի՝ նվաճման իրավունքի վրա»։ Առանց քաշվելու, է. Նայտը երիտթուրքերին անվանում է անգլոֆիլներ և հայտարարում, որ նրանց պետք է պաշտպանել, որովհետև երբ անգլո-բուրական պատերազմի ժամանակ «ամբողջ Եվրոպան հայհոյում էր մեզ, միայն թուրքերը, և հատկապես երիտթուրքերին հարած ու այժմ երկիրը կառավարող կրթված դասակարգերի ներկայացուցիչներն էին, որ համակրում էին մեզ»[2]։

Նույնպիսի մոտեցում են ցուցաբերում նաև գերմանացի, ամերիկացի և ռուս որոշ հեղինակներ։ Եվրոպական ճանապար-

---

¹ Тума Э., указ. произв., стр. 13.

² Найт Э. Ф., Революционный переворот в Турции. СПб., 1914, стр. 43.

հորդները, դիվանագետները, միսիոներները, լրագրողները և ուրիշներ կողմնակալ վերաբերմունքին զուգընթաց, և ելնելով հենց իրենց պետությունների կամ առևտրական ու այլ կազմակերպությունների շահերից, աշխատել են տալ այն երկրների նկարագիրը, ուր այցելել են կամ մեկնել են հատուկ նպատակներով։

Ընդհանուր է այն թեզը, որով արդարացվում է արևմտյան խոշոր պետությունների իբր դրական, «առաջադիմական» դերն Արևելքում և մասնավորապես Օսմանյան կայսրության տարածքում։ Մյուս կողմից, ամեն կերպ սքողվում է դրանց քաղաքականության գաղութատիրական ու իմպերիալիստական բնույթը։ Հաճախ նկատելի է ընթերցողի ուշադրությունը շեղելու մի փորձ ևս՝ Եվրոպայի ազդեցությունը և մանավանդ դրա հետ կապված բացասական երևույթները վերագրել այսպես կոչված կոմպրադորական (միջնորդ) բուրժուազիային, որը, սկզբնական շրջանում, ընդգրկում էր հույն, հրեա, հայ, լևանտացի (Արևելքում բնակություն հաստատած եվրոպացիներ և նրանց ժառանգները) բուրժուազիայի ներկայացուցիչներին, որոնց կապերն Արևմուտքի երկրների հետ անցյալ դարում ընդլայնվում և գնալով սերտանում էին։ Այս տեսակետը ոչ այնքան եվրոպական, որքան թուրք հեղինակների կարծիքների և երկրի հետամնացության համար մեղավորներ գտնելու փորձերի արդյունք է։ Նշված բոլոր տեսակետները հաշվի են առնված գրքում։ Մյուս կողմից, մեր ուժերի սահմաններում արել ենք ամեն ինչ, որպեսզի օբյեկտիվ, անկողմնակալ գրքերից լուսաբանենք ուսումնասիրվող խնդիրները։ Ահա այս պատճառով էլ ամենայն ուշադրությամբ հետազոտվել են թեմային վերաբերող աղբյուրներն ու գրականությունը։ Մասնավորապես հիշատակության արժանի են՝ սոցիոլոգ և պրոգրեսիվ լրագրող Դողան Ավջըօղլու «Թուրքիայի հասարակարգը (երեկ, այսօր, վաղը)» երկհատորանոց աշխատությունը, Իսմայիլ Ջեմի «Թուրքիայի հետամնացության պատճառները» խորագրով մի քանի անգամ վերահրատարակված գիրքը և այլն։ Երիտթուրքերի տնտեսական քաղաքականությունը լուսաբանող երկերի մեջ նշենք Ֆիրուզ Ահմեդի «Երիտթուրքեր...», Պոլ Ֆեշի «Կոստանդնուպոլիսը Աբդուլ-Համիդի վերջին օրերին», Ա. Սարրուի «Երիտթուրքերը և հեղափոխությունը», Ա. Մանդելշտամի «Օսմանյան կայսրության ճակատագիրը» և ուրիշ աշխատություններ, որոնք կարևոր փաստաթղթեր և նյու-

թեր են պարունակում երիտթուրքերի քաղաքականության, նրանց ընդունած օրենքների ու որոշումների վերաբերյալ, մանրամասն տեղեկություններ են տալիս Թուրքիայի ֆինանսների, տնտեսության առանձին բնագավառների, տնտեսական կապերի և կարևոր այլ հարցերի մասին։

Արծարծվող պրոբլեմի վերաբերյալ չափազանց հարուստ նյութ են պարունակում հայկական աղբյուրները, գրականությունը և բազմաքանակ պարբերականները։

Պատմական Հայաստանը թուրքերի բռնագրավման հետևանքով իր մեծ մասով մնաց օսմանյան լծի տակ, իսկ հայերը դարձան կայսրության հպատակ ու հարստահարվող ժողովուրդներից մեկը։ Լինելով նույն պետության հպատակներ, նրանք, Արևմտյան Հայաստանից բացի, ցրված էին կայսրության ամբողջ տարածքի վրա՝ մի մասը որպես պանդուխտ, իր պապենական հայթայթելու նպատակով, առևտրականներն ու արհեստավորները իրենց շահերի ու գործի բերումով, մի մասն էլ տեղափոխվեց վարչական ու քաղաքական նկատառումներով՝ կառավարության կողմից։ Իսկ Կ. Պոլսի, Զմյուռնիայի, ծովափնյա մի շարք քաղաքների ու տնտեսական կենտրոնների հայ ազգաբնակչությունը հիշյալ վայրերում ապրում էր դեռևս մինչև թուրքական գրավումը։ Այսպիսով, հայերը Օսմանյան կայսրության այն ժողովուրդներից էին, որոնք (ինչպես հույները, հրեաները և ուրիշներ) ակտիվորեն մասնակցում էին երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքին, շահագրգռված էին կայսրության զարգացման և իրենց հայրենիքների առաջընթացի խնդիրներում։

Նշված դրույթների պերճախոս հաստատումն է հայ ժողովրդի կուլտուրական կյանքի կենտրոններում հրատարակված պարբերականների, և հայաշատ վայրերի պատմական և նյութական կուլտուրայի հուշարձանների աշխարհագրությունը։ Տարիներ առաջ Սովետական Հայաստանի՝ Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը հրատարակեց «Հայ պարբերական մամուլի մատենագիտությունը (1794—1920)», որտեղ ի մի են բերված մոտ 4 հազար պարբերականների տվյալները։ Դրանք սկսվում են Մադրասում լույս տեսած առաջին տպագիր թերթից և ավարտվում են Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու տարեթվով։

Ըստ այդ մատենագիտության, հայ պարբերականներից մոտ

800 անուն հրատարակվում էր Ասիայի և Աֆրիկայի երկրներում։ Ռուսաստանում, Եվրոպայում և Ամերիկայում նույն ժամանակաշրջանում լույս էին տեսնում ավելի քան 680 հայերեն թերթեր ու ամսագրեր։ Արևելքում հրատարակվող պարբերականների 80 տոկոսը կազմում էին Օսմանյան կայսրությունում տպագրվող թերթերն ու ամսագրերը[1]։ Կայսրության ավելի քան 25 նահանգներում, ներառյալ արաբական երկրները, մինչև 1920 թ. հրատարակվել են ավելի քան երկու հարյուր քսան անուն պարբերականներ և միայն Իզմիրում (Զմյուռնիա)՝ 53։ Խոշորագույն հրատարակչական կենտրոն էր Կոստանդնուպոլիսը։ Անցյալ դարի վերջին տասնամյակներից մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ըստ Թորոս Ազատյանի հաշվումների, «Ամենեն շատ թերթ արտադրող վայրը կհանդիսանա Թուրքիո նախկին մայրաքաղաքը՝ Իսթանպուլ (324 թերթ), հետո կուգան Թիֆլիս (196 թերթ) և այլ վայրեր։ Եթե «Մշակի» և «Նոր դարի» տիրաժը Կովկասում հասել էր 1200—1500 օրինակի, Պոլսո «Արևելքն» ու «Բյուզանդիոնը» 1908—1914 թթ. ունեցել են 7—8000 տիրաժ»[2]։

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում լույս տեսնող հայ պարբերականները, աշխարհագրական նման տեղադրման հանգամանքով կարող էին լուսաբանել ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև ամբողջ երկրի կյանքը, ներառյալ նաև գավառները։ Դրանք արտահայտում էին սոցիալական բոլոր խավերի՝ հայ բուրժուազիայի, մանրբուրժուական-դեմոկրատական տարրերի, գյուղացիության, ինչպես նաև պահպանողական-հոգևորական շրջանների, ամիրաների, կոմպրադորների և վերնախավի այլ շերտերի շահերը։

Հիշյալ պարբերականները բնույթով և ձևով հասարակական-քաղաքական, գրական-մշակութային, հոգևոր-եկեղեցական, բայց նաև առևտրաարդյունաբերական ուղղություն ունեցող հրատարակություններ էին։ Դրանք մեծ մասամբ համապատասխանում էին կապիտալիզմի ուղիով ընթացող, բուրժուական զարգացման փուլն ապրող և ֆեոդալական կարգերի, հին քարացած սովորույթների, տիրող կամայականությունների ու բռն-

---

[1] Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794—1920), Համահավաք ցանկ. Երևան, 1970, էջ 527—571։

[2] «Ժամանակ», Քառասնամյա հիշատակարան, պատրաստեց Թորոս Ազատյան, Իսթանպուլ, 1948, էջ 3։

նությունների և ռազմաբյուրոկրատական վերնախավի քմահաճ վերաբերմունքի դեմ պայքարող նոր հասարակարգի պահանջներին։ Բնականաբար, մամուլն իրերի վիճակը արտացոլում էր հնարավորին չափ օբյեկտիվորեն, քանի որ այն պետք է ծառայեր հիշյալ նպատակների և ընթացիկ գործունեության կամ առօրյա կյանքի առաջադրած խնդիրների իրականացմանը։ Հետևաբար, ժամանակի հայ պարբերականներն ու գրականությունը, իրավամբ, Արևմտյան Հայաստանի, որոշ իմաստով նաև ամբողջ Օսմանյան կայսրության, պատմության չափազանց կարևոր աղբյուր են։ Սակայն դրանք դեռևս անբավարար են օգտագործվում Օսմանյան կայսրության պատմությունն ուսումնասիրողների կողմից և միայն հայ և մասամբ քուրդ ժողովուրդների պատմությամբ զբաղվողներին է, որ հիշյալ աղբյուրը, առ այսօր տալիս է անկրկնելի ու չափազանց կարևոր նյութեր։ Հիշենք, որ իրերի բերմամբ հայ հեղինակները հաճախ էին հանդես գալիս որպես լավատեղյակ և օբյեկտիվ ուսումնասիրողներ, մասնագետներ ու կայսրության պատասխանատու գործիչներ։ Քիչ չեն փաստերը, երբ նրանք իրենց նկարագրած դեպքերի մասնակիցներն են կամ ականատեսները։ Որպես տնտեսական կյանքին ակտիվորեն լծված ժողովրդի զավակներ, նրանք հատկապես զբաղվել են սոցիալ-տնտեսական երևույթների ուսումնասիրմամբ ու վերլուծմամբ։ Համապատասխանորեն, հրատարակված պարբերականներն արտացոլում էին նման գործունեության այս կամ այն կողմը, որը և երևում է թերթերի, շաբաթաթերթերի ու ամսագրերի անուններից։ Այսպես, արդյունաբերության և առևտրի խնդիրները լուսաբանում էին «Առևտրական լրագիրը» (հայատառ թուրքերեն՝ «Ջերիդիի Թիջարեթ թերջումանը»), որ լույս էր տեսնում Պոլսում, 1850-ական թվականներին, «Առաջնորդ վաճառականաց», «Առևտուր», «Տնտես», «Գանձ արհեստից» և հետագա տասնամյակներին հրատարակվող այլ թերթեր։ Գյուղատնտեսության վիճակը և զարգացման ուղիները ներկայացվում էին «Երկրագործական հանդեսի», «Հայ հողագործի», «Գյուղատնտեսի», «Գյուղատընտեսի տարեցույցի» և ուրիշ պարբերականների էջերում։ Կայսրության ընդհանուր դրության ու տնտեսական կյանքի, վերջինիս առանձին բնագավառների վիճակի, ներքին ու արտաքին տնտեսական կապերի ու սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների

մասին հարուստ նյութ ենք գտնում այնպիսի բազմատիրաժ օրաթերթերի ու շաբաթաթերթերի էջերում, ինչպիսին էին «Արևելյան մամուլ», «Մասիս», «Բյուզանդիոն», «Սուրհանդակ», «Ժամանակ», «Ազատամարտ», «Բյուրակն» և այլ պարբերականներ։

Հայ պարբերականների մեջ, բազմաթիվ հարցերի լայն ու բազմակողմանի լուսաբանման ասպարեզում, իրենց պատվավոր տեղն ունեն ամսագրերը։ Սկսած անցյալ դարի 70-ական թվականներից «Փորձ», «Հանդես ամսօրյա», «Արաքս», «Բազմավեպ», «Մուրճ», «Արոր», «Նոր հոսանք», «Գործ» և այլ ամսագրեր լրջորեն անդրադարձել են Արևմտյան Հայաստանի և, ընդհանրապես Օսմանյան կայսրության քաղաքական ու տնտեսական վիճակին, արդյունաբերության, կապի, ճանապարհաշինության, ոռոգման, նավահանգիստների ու նավաշինարարության, երկաթուղիների կառուցման և այլ հարցերին։ «Մուրճի» խմբագիր, տնտեսագետ Ա. Արասխանյանը հաճախ է հոդվածներ տպագրել Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի տնտեսական հետամնացության մասին, փորձելով վերլուծել այդ երևույթի պատճառները։

Անհրաժեշտ է նշել, որ ազգային լեզուներով լույս տեսած պարբերականները մեծ չափերով արտահայտում էին իրենց ժողովուրդների նիստ ու կացը, նրանց պայքարի պատմությունը և ազգային պահանջները։ Հենց այս տեսանկյունից էլ դրանք պետք է ցուցաբերեին քննադատական վերաբերմունք դեպի տիրող անիրավահավասարությունը և, վերլուծելով իրերի վիճակը, փորձեին ցույց տալ տվյալ դրությունից դուրս գալու ինչ-որ ելք։ Երիտթուրքական հեղաշրջումը և նրա հետևանքը հանդիսացող որոշ քաղաքական ազատությունները դարձան մամուլի գործունեության ակտիվացման նոր խթան։ Թուրքական պարբերականներին զուգընթաց ավելացան ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող թերթերի և ամսագրերի թիվն ու հաճախականությունը։ Ընդլայնվեցին մասնավորապես հայ մամուլի էջերում արծարծվող խնդիրների շրջանակները։ Դրանցում պատշաճ տեղ գտան այնպիսի երևույթների մասին սիստեմատիկ և վերլուծական նյութերն ու ինֆորմացիաները, ինչպիսին են՝ կառավարական կենտրոնական ու տեղական մարմինների

կարևոր միջոցառումները, պառլամենտի նիստերի օրագրերը, բանկերի, առևտրական ու արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը, արտաքին առևտուրն ու քաղաքական և տնտեսական կապերը և այլն։

Բացի պարբերականներից, Օսմանյան կայսրությունում, տարբեր ժամանակներում գործող 155 հայկական տպարաններում, որոնք գտնվում էին Կ. Պոլսում (104-ը), Իզմիրում, Վանում, Ադանայում, Տրապիզոնում և այլուր[1], տպագրվում էին առանձին ուսումնասիրություններ, ուսումնական ձեռնարկներ, ճանապարհորդական հուշեր և այլ կարգի գրականություն, որ արոշակի արժեք ունի առաջադրված խնդիրների ուսումնասիրության համար։

Այդ գրականությունից հիշատակության արժանի են Գ. Սրվանձտյանցի «Թորոս աղբարը» և այլ աշխատությունները, որոնք երկու մասերով լույս էին տեսել Կ. Պոլսում 1879 թ. և 1884 թ.[2] Ա. Նաթանյանի «Տեղեկանք Բաղեշի, Խարբերդի... և այլ գավառների մասին» աշխատությունը (Կ. Պոլիս, 1883), Հ. Գ. Մ (ըրմըրյանի) ի՝ «Թուրքահայոց հին վաճառականությունն ու վաճառականք 1740—1890» և «Մասնական պատմություն հայ մեծատուններու» (Կ. Պոլիս, 1908, 1909), Տոքտ. Ն. Տաղավարյանի «Երկրագործության, անտառաց և հանքաց զարգացումն ու շահագործումը» (Կ. Պոլիս, 1909), Գրիգոր Օտյանի «Սահմանադրական խոսքեր ու ճառեր» (Կ. Պ. 1910), Հ. Շահրիկյանի (Ատոմ) «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը», «Բարենորոգումներու հարցը...», «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» (Կ. Պոլիս, 1910, 1914, 1913), Խանճյանի «Աշխարհագրություն օսմանյան պետության» (Կ. Պոլիս, 1912) և մի շարք այլ հեղինակների աշխատություններ։ Դեռևս չուսումնասիրված, բայց չափազանց կարևոր, ներքին կյանքը ներկայացնող յուրահատուկ աղբյուր են այսպես կոչված հայատառ թուրքերեն մամուլն ու գրականությունը։ Դրանք, ըստ մասնագետների, կազմում են հազարից ավելի անուն հրատա-

---

[1] Տե՛ս Հայ պարբերական մամուլի մատենագիտություն, էջ 613—615։

[2] Դրանք, նոր հրատարակությամբ, վերջերս լույս է ընծայել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը։

րակված թերթեր, ամսագրեր և գրքեր։ Կան հատուկ ուսումնասիրություններ և գրքեր, որոնք նվիրված են առանձին սոցիալ-քաղաքական և տնտեսական խնդիրների։

Այսպես՝ Գ. Խաժակը 1903 թ. Բաքվում հրատարակեց մի կարևոր ուսումնասիրություն Թուրքիայում գոյություն ունեցող հարկերի մասին, Ռ. Բերբերյանը՝ մի հոդվածաշարք ֆինանսների, իսկ Ա. Մուրադյանը՝ հողային հարցի մասին և այլն։ Բազմաթիվ հայ հեղինակներ նկարագրել են երիտթուրքերի շարժման զարգացման փուլերը, արժեքավորել նրանց գործունեությունը, տվել պետական որոշ գործիչների ու մտավորականների կերպարները։

XIX—XX դարերի ընթացքում աշխարհի տարբեր երկրներում հայրենակցական միություններին կից կազմակերպվել են հրատարակչություններ, որոնց գլխավոր նպատակն է եղել տպագրել գրքեր, հոդվածներ, հուշեր, վեպեր ու պատմվածքներ հայ ժողովրդի կյանքի, նրա վիճակի, հարևանների հետ նրա փոխհարաբերությունների, թուրքական իշխանությունների կամայականությունների մասին և նրանց կազմակերպած սիստեմատիկ ջարդերի ու առաջին աշխարհամարտի տարիների գենոցիդի վերաբերյալ։

Հիշյալ հարցերի ուսումնասիրման և լուսաբանման պատվավոր գործում արժանի մասնակցություն են ունեցել Սովետական Հայաստանի և սփյուռքի պատմաբանները, գրողներն ու մտավորականները։ Դժվար է գերագնահատել նշված և չնշված հայկական աղբյուրների նշանակությունը։ Դրանց արժեքը չափազանց մեծանում է, եթե ի նկատի առնենք, որ թերթերի, ամսագրերի ու թուրքերեն և Օսմանյան կայսրության հպատակ բազմալեզու մյուս ժողովուրդների պարբերականների լրիվ հավաքածուներ չկան Սովետական Միության գրադարաններում և արխիվներում, իսկ եղածները կիսատ են ու կարիք ունեն համալրվելու։ Ինչ վերաբերում է հայալեզու պարբերականներին ու գրականությանը, ապա դրանք ամենից բազմաքանակն են և լրիվ, մի հանգամանք, որն ունի մեծ կարևորություն և հաճախ արդյունք է հայրենիք-սփյուռք կապերի գոյության ու ընդլայնման։ Հայ գրականությունն ու մամուլը զգալիորեն լրացնում են նշված բացը նաև այն պատճառով, որ նրանք շարունակաբար իրենց էջերում զետեղել են եվրոպական ու թուրքական պարբե-

ցականներից կարևորագույն նյութեր և տվյալներ՝ Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող խըն-դիրների մասին։ Անշուշտ, հնարավոր չէր ընդգրկել մամուլում, գրականության մեջ եղած, արխիվներում գտնվող և արծարծ-վող խնդիրներն ընդգրկող բոլոր նյութերը։ Ահա այս պատճա-ռով էլ աշխատությունը չենք համարում սպառիչ, այլ մի քայլ առաջ այս մեծ պրոբլեմի ուսումնասիրության ճանապարհին և շնորհակալությամբ կընդունենք ընթերցողների դիտողություն-ները։

ՕՍՄԱՆՅԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄ ԿԱՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ

Թուրքական կարգեր... Վ. Ի. Լենինի կողմից դրանք բնութագրվել են որպես «բռնապետական» և «զազրելի ռեժիմ»[1]։ Սոցիալ-տնտեսական առումով, այդ կարգերի հետևանքն են հանդիսացել պատմական հետամնացությունը, զարգացման դանդաղ ընթացքը և երկրում տիրող ու դեռևս գոյություն ունեցող բազմակացութաձև տնտեսությունը։ Նշված երևույթների կայուն և դարեր շարունակ գրեթե անփոփոխ վիճակը իր հերթին պայմանավորված էր տիրող ռազմամիապետական վարչակարգով, ճորտատիրական իրավունքի ուժեղ մնացուկների, հողատերերից գյուղացիների կախման միջնադարյան ձևերի առկայությամբ։

Լենինյան սույն բնորոշումները XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող իրավիճակի մասին, տալիս են բոլոր հիմքերը տեսական ընդհանրացումների և երկրի սոցիալ-տնտեսական ուղիների ճիշտ պատկերացման համար։

Օսմանյան կայսրության միջնադարյան ու նոր շրջանի պատմության, ինչպես նաև պատմական առանձին երևույթների ու զարգացման փուլերի վերաբերյալ հանգամանալից գնահատականներ են տվել Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Մասնավորապես, օսմանյան պետության և նրանում տիրապետող ֆեոդալական հարաբերությունների գոյությունը նրանք համարել են «լուրջ արգելք եվրոպական պրոգրեսի համար»[2]։

Անշուշտ, նրանց սահմանումները՝ այսպես կոչված «ասիական արտադրաեղանակի», արևելյան ֆեոդալիզմի առանձնահատկությունների մասին, վերաբերում են Արևելքի բոլոր երկրներին, ի թիվս որոնց նաև Օսմանյան կայսրությանը։

---

[1] Լենին Վ. Ի., *Երկ, հատ. 17, էջ 227, 297։*

[2] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 239.

Քաջ ծանոթ լինելով միջնադարյան և ժամանակակից աղբյուրներին, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը բարձր են գնահատել հատկապես ֆրանսիացի ճանապարհորդներ Ժ. Բ. Տավերնյեի և Ֆ. Բերնյեի աշխատությունները։ Ուսումնասիրելով վերջինիս գիրքը «Մեծ մողոլի» տիրապետության մասին, Կ. Մարքսը, այն համարել է «փայլուն, աչքի ընկնող, անխոցելի»[1], իսկ Ֆ. Էնգելսը գրել է. «Ծերունի Բերնյեն իսկապես շատ լավն է։ Միշտ ուրախանում ես, երբ պատահում ես այդպիսի տարեց, լրջմիտ, պայծառամիտ ֆրանսիացու, որը միշտ ասում է իսկությունը»[2]։

Իսկ ի՞նչ է ասել իր ժամանակին այդ ականավոր բժիշկն ու փիլիսոփան, որը XVII դարի 50—60-ական թթ. 12 տարի ապրել ու ծառայել է Արևելքի երկրներում, գլխավորապես Հնդկաստանում, բայց նաև՝ Օսմանյան կայսրությունում և Իրանում։ Իր հիմնավոր աշխատասիրության մեջ նա գտնում է, որ տիրապետող ֆեոդալական փոխհարաբերությունների հետևանքով այդ երկրները «ուշ թե շուտ և անհրաժեշտորեն կապրեն միևնույն աղետը, միևնույն բռնատիրությունը, միևնույն քայքայումը, միևնույն ամայացումը»[3]։ Այնուհետև, Ֆ. Բերնյեն, նշելով Արևելքում հողի պետական սեփականություն լինելու հանգամանքը, այն համարում է բռնատիրության հաստատման պատճառը, որից բխում են՝ «ճորտությունը, անարդարությունը, խարդախությունը, բարբարոսությունը...»[4]։ Այս բոլորը համեմատելով Արևմուտքում տիրապետող ֆեոդալական փոխհարաբերությունների հետ, որտեղ կա հողի և այլ հարստությունների մասնավոր սեփականություն, կա «իմը» և «քոնը», Ֆ. Բերնյեն այս սկզբունքը համարում է առաջադիմության կարևոր գործոններից մեկը։ Եվ, ընդհակառակը, հողի ու ընդերքի հարստությունների պետական սեփականությունը, նրա կարծիքով, պատճառ են հանդիսանում հողերի ամայացման, արհեստների և առևտրի քայքայման։ «Ահա թե ինչու,— գրում է նա,— այդ ասիական պետությունները մեր աչքի առջև խղճալի անկման

---

[1] Կ. Մարքսի նամակը Էնգելսին 2.06.1853 թ., Երկ., հ. 28, էջ 214—215։

[2] Ֆ. Էնգելսի նամակը Մարքսին 6.06.1853 թ., նույն տեղը, էջ 222։

[3] Бернье Франсуа, История последних политических переворотов в государстве Великого могола, М.—Л., 1936, стр. 206.

[4] Նույն տեղը, էջ 211։

վիճակի են հասնում»[1]։ Վերլուծելով Ֆ. Բեռնյեի տվյալները և պատմական փաստերն ու հավաքած տեղեկությունները Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը եզրակացնում են հողի պետական սեփականության հարատևությունը Արևելքում։

1853 թ. հունիսի 2-ի նամակում Մարքսը գրում է Էնգելսին. «Բեռնյեն միանգամայն իրավացիորեն նկատում է, որ Արևելքում բոլոր երևույթների հիմքում (նա նկատի ունի Թուրքիան, Պարսկաստանը և Հնդկաստանը) ընկած է ճողի մասնավոր սեփականության բացակայությունը: Ահա իսկական բանալին նույնիսկ արևելյան երկնքի համար»[2]։

Նույն թվականի հունիսի 6-ին Էնգելսը պատասխանում է. «Հողի մասնավոր սեփականության բացակայությունը իսկապես հանդիսանում է Արևելքը հասկանալու բանալին։ Դրանում է նրա ամբողջ քաղաքական և կրոնական պատմության հիմքը»։ Եվ նա այդ երևույթը բացատրում է կլիմայական պայմաններով, հողի բաղադրությամբ և ջրի պակասությամբ։ «... Այստեղ հողագործության առաջին պայմանը,— շարունակում է նա,— դա՝ արհեստական ոռոգումն է, որը կարող է լինել կամ համայնքի, կամ տվյալ մարզի կամ կենտրոնական կառավարության գործը»[3]։ Այլ խոսքով, այդ գործը հնարավոր է կազմակերպել միայն ընդհանուր, հասարակական ուժերով և պետության ղեկավարությամբ։ Այսպիսին է եղել իրերի վիճակը համարյա բոլոր աֆրո-ասիական երկրներում։

Սակայն արևելագիտության ժամանակակից մակարդակը և զարգացման խնդիրները պահանջում են ընդհանուր օրինաչափություններին զուգահեռ գտնել ամեն մի երկրի զարգացման առանձնահատկությունները և ցույց տալ նրանց տեղը տվյալ երկրի կամ ժողովրդի պատմության մեջ։ Այս պահանջը հատկապես կարևոր է մի այնպիսի հսկայական, բազմազգ ու բազմալեզու պետության համար, ինչպիսին Օսմանյան կայսրությունն էր։ Ամենից առաջ պետք է նշել այն կարևոր առանձնահատկությունը, որ վաչկատուն թուրք ցեղերը իրենց գրաված երկրներին, որոնք որոշակիորեն զարգացած ֆեոդալիզմի շրջան էին ապրում, երկու անգամ վերադարձրին սկզբնա-

[1] Бернье Франсуа, նշվ. աշխ., էջ 203։
[2] Маркс К. и Энгельс Ф., Соч. т. 28, стр. 215
[3] Նույն տեղը, էջ 221։

կան, ցածր զարգացման վիճակին։ «XI դ. այդ բանը արեցին սելջուկները՝ բյուզանդական ֆեոդալիզմը վերադարձնելով ռազմառավատական հողատիրության սիստեմին, և XVI դ.՝ օսմանցիները, որոնք վերականգնեցին այդ սիստեմը սելջուկյան զարգացած ֆեոդալիզմի փոխարեն»[1]։ Նշված փոփոխությունները, կամ ավելի ճիշտ, ահարկու ցնցումներն, անկասկած, շատ թանկ նստեցին տեղաբնակ ժողովուրդների վրա, քայքայելով տիրող տնտեսական համակարգը, ոչնչացնելով կուտակված հարստությունները, նյութական և կուլտուրական արժեքները։ Ահա իրենց տիրապետության հենց սկզբից թուրք նվաճողները ստեղծեցին կայսրությունում յուրահատուկ վիճակ, որը և անդրադարձավ երկրի հետագա զարգացման ամբողջ ընթացքի վրա։ Բայց զարգացման առանձնահատկություններն ավելի պարզ ու որոշակի դրսևորվեցին հատկապես տվյալ հասարակարգի հասունացման շրջանում, երբ ի հայտ եկան հաջորդ ֆորմացիային անցնելու գործոնները, սկսեցին ձևավորվել նոր հասարակական հարաբերություններ։ Հիշյալ պրոցեսն օսմանյան պետության մեջ սկիզբ էր առել դեռևս XVI դարի վերջերին։ Ֆեոդալական կարգերի ճգնաժամը հետզհետե խորանում էր և XVIII դարի վերջին— XIX դարի սկզբներին ընդգրկեց ամբողջ երկիրը, արտահայտվելով թե սոցիալ-տնտեսական և թե քաղաքական ոլորտներում։ Հողի և ընդերքի պետական սեփականությունն ու դրանով պայմանավորված հասարակական փոխհարաբերությունները, ինչպես նաև ֆեոդալների ժառանգական իրավունքների բացակայությունը այլևս չէին համապատասխանում ժամանակի պահանջներին և ըստ էության կրում էին ձևական բնույթ։ Հողատիրության ռազմառավատական սիստեմի քայքայումը մոտենում էր ավարտին, հետզհետե ընդարձակվում էին հողի մասնավոր սեփականության սահմանները, զգալի չափերով ուժեղանում էր գյուղացիների շահագործումը։

Քաղաքական և պետական ոլորտներում տիրող կարգերի ճգնաժամն արտահայտվում էր անջատողականության, տեղայնության և ֆավորիտիզմի բուռն աճի, կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից կայսրության օրենքները արհամարհելու մեջ։ Ոչ մի պայքար չէր մղվում կաշառակերու-

[1] «Народы Азии и Африки», 1981, № 2, стр. 67.

թյան, շորթելու անհամար ու բազմաթիվ ձևերի, վարչական ու դատական մարմիններում տիրող և ահավոր չափերի հասած կամայականությունների դեմ։

Այդ ամենը տեղի էր ունենում կենտրոնական բյուրոկրատական ապարատի ուռճացման պայմաններում։ Ամերիկյան թուրքագետ Կ. Վ. Ֆինդլեյի հաշվումներով, եթե XVI դարի 30-ական թվականներին մեծ վեզիրի ղեկավարած հիմնարկում աշխատում էին ընդամենը 50 քարտուղարներ (քյաթիբ) և 23 աշակերտներ (շագիրդ), ապա XVIII դարի վերջին կենտրոնական կառավարության գրասենյակներում աշխատում էին 1000—1500 մարդ։ Իսկ Աբդուլ-Համիդ երկրորդի շրջանում պետական հիմնարկներում զբաղված ծառայողների թիվը հասավ 50—100 հազարի։ Չարիք էր ոչ միայն բյուրոկրատիայի թվական աճը, այլև այն հանգամանքը, որ պաշտոնյան ծառայում էր կառավարչին, ոչ թե հասարակությանը։ «Այդ բանը,— շարունակում է հեղինակը,— էականորեն սահմանափակում էր կառավարական գրասենյակների էֆեկտիվությունը, պահպանում հնամոլությունը»[1]։

Թուրքիայի ռազմաբյուրոկրատական վերնախավը սեփական ժողովրդին թալանելուց զատ, հսկայական եկամուտներ էր կորզում նվաճած երկրներից, որոնք փաստորեն հանդիսանում էին նրա գաղութները։ Վ. Ի. Լենինը «Տետրեր իմպերիալիզմի մասին» աշխատության մեջ նշելով, որ Թուրքիան պատկանում է սակավ այն երկրների թվին, որոնց իմպերիալիստները հատուկ եռանդով ծվատում են առանձին մասերի, միաժամանակ գրում էր, որ նրա տիրապետության տակ ևս կան գաղութներ ու կախյալ երկրներ[2]։ 1914 թ. իմպերիալիստական և գաղութատեր պետությունների և նրանց տիրույթներին նվիրված իր կազմած աղյուսակում կախյալ երկրների շարքում Վ. Ի. Լենինը թվարկել է Սիրիան, Արաբիան, ինչպես նաև Հայաստանը, Քրդստանն ու Միջագետքը[3]։ Հիշյալ երկրները, որոնք մինչև առաջին աշխարհամարտը մտնում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ, բավական որոշակի կերպով Վ. Ի.

---

[1] Р. Ж. Общественные науки за рубежсм, Серия 9, 1932, № 3, стр. 122—123.

[2] Տե՛ս Լենին Վ. Ի., ԵԺ, հատ. 28, էջ 342։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 347։

Լենինը դասում է գաղութային կամ կախյալ երկրների շարքը։ Իրապես, դրանք դեռևս անցյալ դարի 70-ական թթ. համարվում էին կայսրության «հարկատու երկրներ» և որպես այդպիսիք ունեին չափազանց կարևոր նշանակություն։ 1876 թ. Թուրքիայի առաջին սահմանադրությունը հռչակվելուց հետո հրապարակվեց կայսրության ազգաբնակչության վերաբերյալ առաջին պետական փաստաթուղթը՝ սալնամեն, ըստ երկրի վարչական բաժանումների, ծխերի ու բնակիչների քանակության։ «Բազմավեպում» տրված ամփոփումներից երևում է, որ «աշխարհիս երեք մասանց մեջ (Ասիա, Աֆրիկա և Եվրոպա— Հ. Ի.) անմիջական հպատակք Թուրքիո իբր 23 միլիոն են. իսկ առնելով հարկատու երկրներն ալ՝ 47 միլիոնեն ավելի բնակիչ կունենա Թուրքիա»[1]։ Ուրեմն երկրի բնակչության կեսից ավելին բնակվում էր բուն Թուրքիայից դուրս և կայսրությունում գանձվող հարկերի մեծ մասը գալիս էր հպատակ երկրներից։ Նշված հանգամանքը միանգամայն համապատասխանում էր թուրքական տերության քաղաքականությանը։ Ինչպես ցույց է տվել Կ. Մարքսը, ըստ մահմեդական, մասնավորապես թուրքական օրենքների «շարժական սեփականությունը ճանաչվում էր ամբողջապես նվաճողներին պատկանող, իսկ անշարժ գույքի համար հպատակ բնակչությունը վճարում էր խարաջ»[2]։ Սովետական խոշոր թուրքագետ ակադեմիկոս Վ. Գորդլևսկին, խոսելով թուրքական նվաճումների և գրավված երկրներում վարած քաղաքականության մասին, նշում է, որ այդ քաղաքականության «հիմքում ընկած էր ղեկավարելու հանրահայտ ու հին սիստեմը՝ ժառանգած հենց մոնղոլներից՝ ում ուզում եք հավատացեք, ինչպես ուզում եք ապրեցեք, միայն թե կանոնավոր վճարեցեք հարկերն ու տուրքերը։ Այս է ամենը»[3]։

Ֆինանսական այդ կարևորագույն աղբյուրի նշանակությունը երկու կողմերի համար կարելի է հասկանալ, եթե հաշվի առնենք, որ զավթած երկրների ազատագրվելու պրոցեսը եղավ շատ երկար, տանջալից և ավարտվեց միայն առաջին աշխարհամարտի վերջերին։ Այդ ամբողջ ժամանակաշրջանում, որը

---

[1] «Բազմավեպ», Վենետիկ, 1877, հ. լե (35), էջ 192։

[2] Маркс К., «Конспект книги М. Ковалевского «Общинное землевладение...»», «Советское востоковедение», 1958, № 4, стр. 15.

[3] Гордлевский В. А., Избр. соч., том 3, М., 1962, стр. 126.

տևեց ավելի քան 500 տարի, Թուրքական լծի տակ գտնվող ժողովուրդները ենթարկվում էին դաժան շահագործման, կեղեքումների, կամ պարզապես թալանի։

Կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների վիճակը ավելի ծանրացավ, երբ անցյալ դարի կեսերից Թուրքիան դարձավ իմպերիալիզմի կիսագաղութներից մեկը։ Թուրք վերնախավին մեծագույն դժվարությամբ, բռնությամբ ու զինված ուժի օգնությամբ հաջիվ էր հաջողվում զսպել ազատագրական շարժումները և պահպանել իր տիրապետությունը։ Հպատակ երկրներում մշտապես պահվում էին հատուկ կայազորներ, իսկ ազատագրական պայքարի հաճախակի բռնկումների ժամանակ անհրաժեշտ էր լինում դրանք ամրապնդել նոր զորամասերով։ Մյուս կողմից, կայսրությունում սովորություն դարձած, տեղական ղեկավարներին, ցեղապետերին կամ բարձր պաշտոնյաներին նվերներով ու պաշտոններով կաշառելը հետզհետե ավելի ու ավելի մեծ միջոցների պահանջ էր առաջադրում։

Այսպիսով, կայսրության պահպանման հարցը, մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում, դարձել էր ամենակարևոր և հրատապ խնդիրը։ Տիրող շրջանները ելքը տեսնում էին միայն զինված ուժերի ամրապնդման և երկրի կյանքում նրանց ազդեցության ուժեղացնելու մեջ։ Երևի այդ էր թելադրում կայսրության պատմական փորձը, որը հյուսվել էր ենիչերական բանակի XV—XVII դդ. հաղթարշավներից, իսկ ավելի ուշ՝ նահանջի ժամանակաշրջանում, ազատագրական պայքարի ելած ժողովուրդների հարձակումներին դիմակայելու համար մեծաքանակ զինված ուժեր ունենալու անհրաժեշտությունից։

Ավելի մոտիկից քննենք պատմական այդ երևույթները, քանի որ դրանք վճռական ու բախտորոշ նշանակություն ունեցան կայսրության հզորացման ու անկման պրոցեսում։ Կ. Մարքսն իր «Ժամանակագրական քաղվածքներում» ցույց է տալիս Ասիայում տեղի ունեցող տեղաշարժերը և հատկապես նշում, որ դեռևս XIII դարում «Թուրք-օսմանների հորդաները մուտք են գործում Փոքր Ասիա, որտեղ նրանք, ամենից առաջ հիմնում են ավազակային պետություն կառանիսար»[1]։ Այնուհետև նա ընդգծում է, որ այդ պետությունն ուժեղ էր իր կարգապահությամբ և, կազմակերպված լինելով «դեմոկրատական-բռնապետական

[1] Маркс К., Архив, т. 5, ст. 223.

հիմունքներով», հանդիսանում էր «Միջնադարի միակ իսկական ռազմական պետությունը»[1]: Իր քաղաքականության մեջ այն ղեկավարվում էր Ղուրանի և մահմեդական օրենքների համաքածուի՝ շարիաթի պահանջներով։ Ղուրանը պահանջում էր. «Կռվեցեք նրանց հետ, ովքեր չեն հավատում ալլահին... մինչև այն ժամանակ, քանի նրանք թուլացած և ոչնչացված չեն տալիս փրկագին իրենց կյանքի համար»[2]։

Այնուհետև Ղուրանը ստիպում էր «անհավատներից» չվերցնել «բարեկամներ, քանի դեռ նրանք չեն տեղափոխվել ալլահի ճանապարհի վրա։ Իսկ եթե նրանք հեռու կպահեն իրենց (իսլամից— Հ. Ի.), ապա բռնեցեք նրանց և սպանեցեք, որտեղ որ նրանց գտնեք։ Եվ նրանցից չվերցնեք ոչ բարեկամներ, ոչ էլ օգնականներ»[3]։

Վ. Գիրգասը վերլուծելով Ղուրանի և շարիաթի դրույթները, ճիշտ կերպով ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Մուհամմեդը իր կրոնը հաստատեց սրով և հանուն նրա տարածման անհավատների դեմ պատերազմը հայտարարեց իր հետևորդների համար պարտադիր, այնպես, ինչպես պարտադիր էին աղոթքը, պասը և մուսուլմանների այլ պարտականությունները»[4]։

Հեղինակը վկայակոչում է Ղուրանի վերևում ցիտված համապատասխան մասը «անհավատների» մասին և շարունակում մեկնաբանել՝ «... անհավատությունը սպանությունից վատ է... կռվեցեք նրանց հետ մինչև այն ժամանակ, երբ չի լինի անհավատություն և (իսկական) կրոնը (կդառնանի) միակ աստծունը»[5], անշուշտ, ալլահին։ Եվ օրենքը իմամից պահանջում է տարին մեկ կամ երկու անգամ պատերազմել «անհավատների» դեմ։

Զարմանալին այն է, որ ժամանակավրեպ թվացող այս բարբարոս պահանջները դեռևս արտահայտվում են պատմական ու գեղարվեստական գրականության մեջ։ Այսպես, օրինակ, թուրք գրող Քեմալ Թահիրը «Դեվլեթ մայրիկ» խորագրով իր վեպում

---

[1] Маркс К., Архив, т. 6, стр. 177, 189.

[2] Массэ А., Ислам, М., 1961, ст. 30.

[3] Коран, перевод И. Ю. Крачковского, М., 1963, сура 4, бейт 91.

[4] Гиргас В., Права христиан на Востоке по мусульманским законам, СПб, 1865, ст. 52.

[5] Նույն տեղը, էջ 53։

իդեալականացնում է թուրքերի միջնադարյան պատմությունը։ Գրքի հերոսներից մեկը կրկնում է վերևում նշված պահանջները. ասված է՝ «դու պետք է գյավուրներին ջարդես անդադար»։ Եվ ասված է՝ «Թույլ չտաս գյավուրին աչքերը բանալու»։ «Սուրը որ չի կտրում, ժանգոտում է, իսկ սուրը, որը կտրում է, փայլում է»[1]։ Այնուհետև, խաղաղությունը համարելով չարիք, նա պահանջում է՝ «ինչպես առաջներում, թող զինվորական շուկաները լցվեն թշնամուց խլված բարիքներով»[2]։

Շարիաթի բազմաթիվ մասեր և հատուկ բաժիններ նվիրված են պատերազմելու կանոններին, պատերազմից առաջ ու հետո վարվող բանակցություններին։ Պատերազմը համարվում էր մահմեդականությունը հաստատելու գլխավոր միջոց և ամեն մի մահմեդական պարտավոր էր այդ հիմնական նպատակին նվիրել իր անձը և գույքը։ Ոչ մահմեդական ժողովուրդների ու պետությունների դեմ մղվող պատերազմը համարվում էր «սրբազան» («ջիհադ») և ամեն մի չափահաս տղամարդ պարտավոր էր անձամբ մասնակցելու պատերազմական գործողություններին, անկախ նրանից զինվորական է, թե քաղաքացի։ Շարիաթի համապատասխան բաժնում խոսվում է այն մասին, որ իրավացի չի լինի պատերազմ հայտարարել այն ժողովրդին, որին դեռևս չեն դիմել իսլամի կրոնը ընդունելու կոչով, կամ եթե նա համաձայնել է ընդունել հպատակություն և վճարել համապատասխան տուրք՝ ջիզյե։ Եթե «անհավատները» այս երկու պայմաններից հրաժարվում են, ապա շարիաթը պահանջում է «նրանց դեմ սկսել պատերազմ... պտղատու ծառերը և ցանքերը ոչնչացնել, անհավատների տները քանդել...»[3]։ Շարիաթը պարտադրում է չթաքցնել ավարը, չսպանել գերիներին և պատերազմին չմասնակցող ժողովրդին, այլ ուղարկել գերիներին թիկունք, որտեղ նրանք կաշխատեն «մահմեդականների հարստությունը ավելացնելու համար»[4]։ Եվ այսպես, ամենայն մանրամասնությամբ ու օրենքով սահմանվում են այն գործոնները կամ պայմանները, որոնք ուղղված են ընդլայնելու իսլամի տիրապետության տարածքը ու ամրապնդելու նրա ֆեոդալական-թեոկրատական պետականությունն ամենուր։

---

[1] Тахир Кемаль, Глубокое ущелье, М., 1971, стр. 109.

[2] Նույն տեղը, էջ 110։

[3] Гиргас В., Права христиан на Востоке..., стр. 13.

[4] Նույն տեղը, էջ 14։

Բնականաբար, զորքի վրա հենված և նրա հաղթանակներից օգտվող պետությունն իր ուշադրության կենտրոնում էր պահում հեծյալական բանակը և աշխատում էր լիովին բավարարել նրա աճող պահանջները։ Դրա համար և հենց նույն բանակի օգնությամբ նա ձգտում էր իր ձեռքում պահել կուտակման բոլոր աղբյուրները՝ պատերազմական ավարը, թալանի միջոցով դիզված հարստությունները, հարկերն ու տուրքերը։

Ռազմական ծառայության դիմաց բանակի հրամկազմին տրվում էին համապատասխան հողամասեր, որոնք կոչվում էին թիմար կամ զիամեթ։ Սրանք կազմում էին նոր գրավված հողերի կեսը, իսկ արքունիքին և հոգևորականությանը հատկացվում էր հիշյալ հողերի մեկ հինգերորդ մասը, որոնք կոչվում էին խասս և վակֆ։ Հողերի մեկ տասներորդ մասը տրամադրվում էր տեղական կալվածատերին[1]։ Սակայն գրավողի իրավունքով բաժանված հողերի ընդհանուր տարածության 80 %-ի վրա էլ շարունակում էին մնալ նրանց նախկին տերերը՝ գլխավորապես քրիստոնյա գյուղացիները կամ «ռայաները», որոնք մշակում, ցանում, քաղում էին և սահմանված տուրքը, սկզբում մթերքների ձևով, ավելի ուշ նաև դրամի, տալիս էին համապատասխանորեն թիմար և զիամեթ ստացած զինվորականներին և հողատեր դարձած կրոնական կազմակերպություններին։ Քանի տիրապետող ֆեոդալական խավերի հիմնական զբաղմունքը պատերազմն էր և այն կերակրում ու հարստացնում էր նրանց, հողի նման վերաբաժանումը, կամ այդպիսի հողային հարաբերությունները բավարարում էին ռազմաֆեոդալական վերնաշերտին։

Սակայն XVI դարի վերջերից պատերազմական ավարը զգալիորեն պակասում է։ Սկսվում է նախկինում հզոր օսմանյան բանակի պարտությունների շրջանը։ Ինչպես նշում է Օյա Սենջերը, «XVI—XVIII դարերի պատերազմները չէին կարող առաջվա նման ունենալ լուրջ ազդեցություն և տալ տնտեսական օգուտներ։ Եթե առաջներում պատերազմը հանդիսանում էր դրսից հավելյալ հարստություն ձեռք բերելու միջոց, ապա այժմ այդ ճանապարհը փակվում է և կորչում է եկամուտի կարևոր աղբյուրը»[2]։

---

[1] Տե՛ս Миллер А. Ф., Мустафа-паша Байрактар, М.—Л, 1947, стр. 29.

[2] Sencer Oya, Türk Toplumunun Tarihsel evrimi, Ist, 1969, s. 34.

Մյուս կողմից, արագորեն աճում էր հողի շահավետությունը։ Այս երևույթների հետևանքով սկսվում էր ավատական հողաբաժինների կենտրոնացումը ոչ միայն առանձին զինվորական, այլև վարչական գործիչների, առևտրականների, վաշխառուների և այլ մեծահարուստների ձեռքերում։ Ինչպես նշել է XVII դարի հեղինակ Կ. Գյոմուրջինսկին, «մինչև 992 (1584 թ.) գյուղերը և վարելահողերը գտնվում էին սուսերի ասպետների և օջախի զավակների ձեռքում և ուրիշներն ու այլ սրիկաները չունեին դրանք ստանալու հնարավորություն»[1]։ Այդ երևույթը միաժամանակ ցույց էր տալիս կենտրոնացված պետության թուլացումը։ Միջին դարերում պետության ուժը, Ն. Թոդորովի կարծիքով, կայանում էր նրանում, որ նա ամենուր կարգավորում էր արտադրությունը և բարիքների բաժանումը։ Եվ մասնագետը դա համարում է «օսմանյան ֆեոդալիզմի ամենաբնորոշ ցուցանիշներից մեկը»[2]։ Արտաքնապես ճիշտ այս գնահատականը հաճախ չէր արտացոլում ամբողջ իրականությունը։ Պատմական անցյալին ավելի մոտ է թվում Ն. Իվանովի սահմանումը։ Նրա կարծիքով, «օսմանյան պատմության բոլոր փուլերում պետության միասնությունը և կենտրոնացվածությունը զգալի չափով ունեին մակերեսային և նույնիսկ ձևական բնույթ։ Դրանք ընդգրկում էին գլխավորապես գաղափարախոսության, քաղաքականության և իրավունքի ոլորտը։ Տնտեսական կյանքում գերակշռում էին լրիվ ապակենտրոնացումը և փակ, ինքնամփոփ տնտեսությունը... Օսմանյան կայսրության համար բնորոշ էին նրա առանձին տնտեսական կենտրոնների խիստ տընտեսական անջատվածությունը և թույլ կապը... Կայսրությունում չձևավորվեց միասնական շուկա»[3]։ Խոսքը վերաբերում է XVIII դարին։ Դրանից հետո ավելի ևս արագացավ ապակենտրոնացման տենդենցը և պետությունն ընկավ խոր ճգնաժամի մեջ։

Լեոն ևս անդրադառնում է ֆեոդալական նշված փոխհարաբերությունների քայքայման պրոցեսին և ցույց է տալիս, որ

---

[1] Смирнов В. Д., Кочубей Гёмурджинский и другие османские писатели 17 в. о причинах упадка Турции, СПб, 1873, стр. 121.

[2] Тодоров Н., Балканский город XV—XIX веков, стр. 112.

[3] Иванов Н. А., О типологических особенностях арабо-османского феодализма. «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 59.

այդ կապակցությամբ կալվածատերերի ու հողատերերի մի զգալի մասը պակասեցնում էր օսմանյան բանակին պահանջվող քանակով ձիավոր կամ հետևակ զինվորականներ տրամադրելը։ Եթե Անատոլիան, գրում է նա, առաջներում դուրս էր բերում 70 հազարանոց հեծելազոր, ապա նշված փոփոխությունների հետևանքով այդ թիվը իջավ 3—4 հազարի[1]։

Անշուշտ, նշված երևույթները չէին նշանակում, որ կայսրությունում թուլացել էր ռազմական գործոնի ուժը կամ դերը։ Այն շարունակում էր ծառայել քայքայվող, սակայն դեռևս հզոր ֆեոդալական պետությանը։

Պրոֆ. Վ. Սմիռնովն անցյալ դարի 70-ական թթ. Օսմանյան կայսրության ռազմական ուժին տվել է հետևյալ գնահատականը. «Թուրք-օսմաններն իրենց ամբողջ էներգիան տրամադրել էին բանակ ստեղծելուն և իրենք էլ ասում էին, որ իրենց պետությունը սրով է ձեռք բերված և միայն սրով էլ կարող է պահպանվել»[2]։ Իսկ անգլիացի հեղինակ Ա. Լիբայերը, ամփոփելով կայսրության անցած ուղին, նրա անկման նախօրեին գրում էր, որ օսմանյան պետությունը, թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառներում, միշտ էլ ղեկավարվել էր ռազմական գործիչների միջոցով, նրանց կամքով ու թելադրանքով, որ այդ պետությունը «ծնվել էր պատերազմում և պատերազմի համար»[3]։

Չափազանց հետաքրքիր էր քննվող հարցի գնահատականը մեկ այլ տեսանկյունից, որ տալիս է թուրք ականավոր պատմաբան Ինալչիքը։ Նա նշում է, որ ռազմական նպատակին ենթարկվում էր ամեն ինչ։ Այսպես՝ «XVI դարում օսմանյան կառավարիչները խալիֆաթին տվեցին նոր իմաստ, այն կապելով անհավատների դեմ սրբազան պատերազմ մղելու գաղափարին»[4]։ Այդպիսով, պատերազմական ոգին դարձել էր ամենուր տիրապետող ու թելադրող։ Բայց այդ ոգին ևս ճգնաժամ էր ապրում և նրա ազդեցությունը հետզհետե սկսում էր թուլանալ։

Հողերի կենտրոնացման հետևանքով ուժեղացան անջատո-

---

[1] Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, Եր., 1969, էջ 39։

[2] Смирнов В. Д., նշվ. աշխ., էջ 211։

[3] Lybyer A. H., The Government of the Ottoman Empire in the Time of Suleman the Magnificent, Cambridge, 1913, p. 90.

[4] Р. Ж., Общественные науки за рубежом, серия 9, «Востоковедение и африканистика», 1975, № 3, стр. 165.

ղական ձգտումները, գյուղացիների շահագործումն ու նրանց պայքարը։ Պակասեց կենտրոնական իշխանության հզորությունը, լայն ծավալ ստացան ազգային-ազատագրական շարժումները, ծայրամասային առանձին երկրներ սկսեցին ձեռք բերել ինքնուրույնություն կամ դառնալ անկախ։

Սկսած մանավանդ XVIII դարից բանակի հզորությունն անհրաժեշտ էր գրավված հողերը պահպանելու և ընդվզող ժողովուրդների շարժումները ճնշելու համար։ Այդ երևույթը նշված ժամանակաշրջանից դարձավ ներքին քաղաքականության գլխավոր խնդիրը։ Սելիմ 3-րդի, Մուստաֆա Բայրաքտարի, Մահմուդ 2-րդի ժամանակ և ավելի ուշ իրագործված ռազմական ռեֆորմները հաստատում են քաղաքականության նման բնույթը։ Այսպես, եվրոպական բանակների ձևով նոր զինված ուժեր (Նիզամ-ի Ջեդիդ) ստեղծելու նպատակով սուլթան Սելիմ 3-րդը կազմակերպում է հատուկ ֆինանսական գերատեսչություն, բացում վառոդի գործարաններ, զորքին սպասարկող արհեստանոցներ, ռազմաինժեներական ուսումնարան, քարտեզներ հրատարակելու տպարան և ձեռնարկում մի շարք այլ միջոցառումներ։ Անցյալ դարի սկզբին նույն գործը շարունակում է մեծ վեզիր Մուստաֆա Բայրաքտարը։ 1826 թ. Մահմուդ 2-րդը ֆիզիկապես ոչնչացրեց արդեն այլասերված ու քայքայված ենիչերիների բանակը՝ ճանապարհ հարթելով ժամանակակից զինված ուժեր կազմակերպելու գործին։ Այնուամենայնիվ, զորահավաքի հին ձևերը գոյություն ունեցան մինչև XIX դ. կեսերը, երբ մահմեդականների համար մտցվեց պարտադիր զինվորական ծառայություն և բանակը վերակազմելու նպատակով հրավիրվեցին եվրոպացի սպաներ։ Այս փոփոխությունները, սակայն, թուրքական բանակը չդարձրին ժամանակակից մակարդակի ռազմական կազմակերպություն։ 1854—1856 թթ. Ղրիմի պատերազմում նրա պարտությունները ցույց տվեցին, որ երկրում տիրող փտած կարգերը և Թուրքիայի եվրոպական դաշնակիցների օգնությունը չէին կարող բավարար պայմաններ ստեղծել օսմանյան բանակը հզոր ռազմական ուժ դարձնելու համար։ Բացի նշված հանգամանքներից, ինչպես թուրքական բանակում, այնպես էլ մնացած բնագավառներում դեռևս տիրում էին պահպանողականությունն ու տգիտությունը, շովինիզմն ու կրոնական մոլեռանդությունը։ Ֆ. Էնգելսը ռազմական գործի ու բանակի վերաբերյալ իր ուսումնասիրությունների մեջ տալիս է

նաև թուրքական բանակի գնահատականը։ Նա ամենից առաջ թուրքական բանակի վիճակը կապում է երկրի դրության ու նրա տնտեսության ցածր մակարդակի հետ, որի հետևանքով զինված ուժերը մշտապես զգում էին «զենքի, հանդերձանքի, զինամթերքի և սննդամթերքի պակաս...»[1]։ Այնուհետև Ֆ. Էնգելսը նշում է, որ այդ բանակի հիմնական տարրը կազմում են թուրքերը, որոնցից ամեն մեկն «ինքնին վատ զինվոր չէ»։ Բայց, օտարերկրացի հրահանգիչները լինելով անհավատ՝ «գյավուրներ», զինվորների համար մնում էին օտար, և այս պատճառով էլ չէին կարող ազդել իրերի դրության վրա ու լավացնել այն։ Հետևապես, գրում է Էնգելսը, «քանի թուրքերը կմնան երկրում ղեկավարող ազգ, նրանք չեն ենթարկվի այն մարդկանց, որոնց հոգու մեջ արհամարհում են, նրանց համարելով իրենցից շատ ցածր»[2]։

Բերված բնութագիրը որոշ չափով օգնում է պատասխանելու այն հարցին, թե ինչո՞ւ երբեմնի զորեղ թուրքական բանակը, կայսրության ավելի քան երկուս ու կես դար շարունակվող ճգնաժամի պայմաններում և հաճախ մղվող բազմաթիվ պատերազմներում չտարավ ոչ մի հաղթանակ։

Առանց վարանելու կարելի է ասել, որ նշված ամբողջ ժամանակաշրջանում կանոնավոր և անկանոն զինված ուժերը, որոշ իմաստով, բացասական ազդեցություն ունեին երկրի ներքին, հատկապես տնտեսական կյանքի վրա։ Թուրքիայի կառավարիչներից մեկը՝ Ալի փաշան, որն իր 30 տարվա գործունեության ընթացքում յոթ անգամ նշանակվել էր արտաքին գործերի մինիստր և հինգ անգամ եղել էր սադրազամ (մեծ վեզիր) ու հանդիսացել Հաթթը Հումայունի (1856) գլխավոր հեղինակներից մեկը, նույնպես կանգնած է եղել այդ տեսակետին։ Նկարագրելով երկրի ներքին և արտաքին վիճակը 1850—1860-ական թթ. նա հայտնում է այն կարծիքը, որ Թուրքիան ստիպված է զենքի տակ պահել զինվորների, որոնք պետք են տնտեսությունը և հողագործությունը վերականգնելու համար, և այդ նպատակին նա (Թուրքիան— Հ. Ի.) ծախսում է իր ամբողջ եկամուտները, այնպես որ երկրի կուլտուրայի համար չի

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 11, стр. 490.

[2] Նույն տեղը։

մնում ոչ մի դուրուշ և ոչ մի րոպե՝ մշակելու լավ օրենքներ հանուն պետության և ժողովրդի բարօրության...»[1]։

Ավելի ուշ, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, քաղաքական կյանքի ու ազատագրական շարժումների աշխուժացման պայմաններում իշխանությունները աշխատում էին զինվորական կայազորներ ունենալ ամեն մի քաղաքում և եթե հնարավոր էր՝ գյուղաքաղաքներում ու խոշոր գյուղերում։ Ըստ գեներալ-մայոր Պ. Ավերյանովի տվյալների, մեր դարի սկզբում Թուրքիան բաժանված էր 491 զումարտակային օկրուգների, որոնցից 322-ը կամ երկու երրորդը տեղավորված էին Թուրքիայի ասիական մասում, որը հեղինակը համարում է կայսրության ծանրության կենտրոնը և նրա ռազմական հզորության միջոցների աղբյուրը»[2]։

Հաշվումները ցույց են տալիս, որ կայսրության ընդհանուր տարածքի ամեն մի վեց հազար քառ. կիլոմետրի վրա կազմակերպված էր կանոնավոր զորքերի մեկ զումարտակային օկրուգ։ Բացի այդ, ութ բանակային կորպուսների տարածքներում ստեղծված էին նաև անկանոն զորքի՝ ռեդիֆների վարչություններ։ Երկրի արևելյան շրջաններում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում հսկում էին անկանոն հեծելազորի՝ համիդիեի գնդերը։ Այսպիսով, կարելի է ասել, որ երկրի ամբողջ տարածքը հագեցված էր զինված ուժերով, նույնիսկ խաղաղ ժամանակաշրջանում, իսկ պատերազմի կամ արտակարգ պայմանների առկայության դեպքում, դրանց թիվը երեք անգամ կարող էր բազմապատկվել։ Մինչև 1908 թ. հեղափոխությունը տեղական կայազորներ կային համարյա բոլոր գավառակներում (կազա) և նույնիսկ առանձին գյուղերում։ Օրինակ, Բայազետի գավառի (սանջակ) Դիադին գավառակի Ուչքիլիսե գյուղում, որտեղ բնակվում էր ընդամենը 27 ընտանիք, տեղադրված էր 20 զինվորներից բաղկացած կայազոր, որն ամբողջապես սնվում էր գյուղացիների հաշվին, նրանցից ստանալով

---

[1] Տե՛ս Новичев А. Д., Али-паша — лидер движения за реформы в Турции (танзимата) в 50—70 годах 19 в., Вестник ЛГУ, 1977, № 8, էջ 60.

[2] Аверьянов П. И., Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912, стр 5.

«յուղ, պանիր, թռչուններ, ձու, կաթ, մածուն, յուղուրդ և բոլոր անհրաժեշտ բաները»[1]։

Պաշտոնապես զորքի դրամական և նյութական ամբողջ սպասարկումը կատարվում էր պետության հաշվին, սակայն ո՛չ դրամը, ո՛չ հագուստեղենը և ոչ էլ սննդամթերքը չէին հասնում զինվորներին, այլ մնում էին շտաբներում և կամ հրամանատարների մոտ։ Կրտսեր հրամանատարներն ու զինվորներն էլ կա՛մ մի կերպ յոլա էին գնում, կա՛մ իրենց գլխի ճարը տեսնում էին թալանի, բռնագրավման և այլ ճանապարհներով։ Պետք է նշել, որ հրամանատարներին դեպի այդ ուղին էր մղում հենց իշխանության անպատասխանատու վերաբերմունքը, որը նրանց ամիսներով աշխատավարձ չէր վճարում, իսկ վճարելու դեպքում էլ դրա զգալի մասը հալվում էր բարձր հրամանատարության կամ վարչական բյուրոկրատիայի գրպաններում։ Որպեսզի այս բոլորը դժգոհության չառաջացներ, կայսրության հենարանը համդիսացող բանակում իշխանության մարմինները դիմում էին ամեն մի միջոցի, օգտագործում էին տեղական բոլոր հնարավորությունները՝ բավարարելու զինվորականների պահանջները։ Այսպիսով, զինված ուժերի խնամքի ծանրությունը ընկնում էր ժողովրդի վրա ո՛չ միայն նրանց ֆինանսական ու նյութական պահանջները բավարարելու իմաստով։ Հաճախ ձմեռային շրջանում նրանք մնում էին առանց վառելափայտի և ոչնչացնում էին պտղատու այգիները։ Թուրքական բանակի ասկյարներն այդպես վարվեցին Զեյթունում, երբ 1890-ական թթ. վերջերին կոտրատեցին և որպես վառելիք օգտագործեցին հայոնի մրգատուների պտղատու ծառերը և խաղողի թփերը, որոնք տեղական ազգաբնակչության ապրուստի հիմնական աղբյուրն էին։

Ավելի վատ վիճակի առաջ էին կանգնում այն շրջանների բնակիչները, որտեղ տեղակայված էին անկանոն զորքերի միավորումները, մասնավորապես մուսուլմանական անկանոն հեծելազորը՝ համիդիեն։ Վերջինս սկսեց կազմակերպվել սուլթան Աբդուլ-Համիդ 2-րդի հատուկ կարգադրությամբ, անցյալ դարի 90-ական թթ. սկզբներին, գլխավորապես քրդերից։

1899 թ. համիդիեն կազմված էր 63 գնդից, տորոնցից 50-ի շարքերում ծառայում են քրդեր, 9-ի՝ արաբական ծագում ունե-

[1] Ա-դո, Հուշեր Տաճկահայաստանի ճանապարհորդությունից, «Նոր Հոսանք», 1913, № 45, էջ 794։

ցող ցեղեր, 3-ի՝ կարափափախներ, 1-ի՝ Թուրքմեններ»[1]։ Համիդիեի շարքերի արագ աճը բացատրվում էր նրանով, որ զինվորներ տրամադրող բոլոր ցեղերին խոստացել էին ոչ միայն պահպանել ու հայերի հաշվին ընդարձակել նրանց հողային տարածությունները, այլև չեղյալ համարել պարտքերը, զինվորական ծառայության մեջ եղողներին ազատել աշարից և աղնամից (անասնահարկ)։ Ցեղապետներին և սպայական կազմին տրվում էին աստիճաններ, շքանշաններ, դրամական պարգևներ և ազատ ու արտոնյալ վիճակ։

Համիդիեի կազմակերպումը հետապնդում էր երկու հիմնական նպատակ։ Առաջինը՝ նա պետք է Արևմտյան Հայաստանում կատարեր ոստիկանական պարտականություններ, կասեցներ ու ճնշեր վերելք ապրող հայ ազգային-ազատագրական շարժումները։ Երկրորդ՝ պահպաներ և, եթե հնարավոր լիներ, ամրապնդեր ֆեոդալական կարգերը, որոնք իրենց հերթին դանդաղեցնում էին դեմոկրատական տարրերի ու բանվոր դասակարգի աճը և համախմբումը, նորից արգելակում ազատագրական պայքարը։

Իրենց պարտականությունների կատարումը համիդիեի խըմբերը զուգակցում էին կարավաններն ու հայկական գյուղերը թալանելու և ավազակության հետ։ Կամայականությունն ու անօրինականությունը շուտով դարձան նրանց գործունեության հիմնական ձևն ու բովանդակությունը։ Ահա այս պատճառով էլ համիդիեի գոյության երկրորդ շրջանը (1899—1906) հանդիսացավ նրա քայքայման, ռազմունակությունը կորցնելու և կազմալուծվելու շրջան։ Այդ տարիներին կազմակերպվեց ընդամենը երեք նոր գունդ, բայց ոչ տեղացի քրդերից[2]։ Շուտով համիդիականները սկսեցին թալանել նաև թուրքական գյուղերը, հրաժարվել պետական տուրքերը վճարելուց։ Այսպես, Վանի վիլայեթի (նահանգի) համիդիականները չէին վճարել 1891—1898 թթ. իրենց տուրքերը։ Նրանք հաճախ յուրացնում էին նաև հավաքած տուրքերի գումարները և դրանք չէին հանձնում պետական գանձարկղ։ Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի են իշխանության ներկայացուցիչների և կանոնավոր բանակի հրամանատարների արհամարհանքը և բացասական վերաբերմունքը

---

[1] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1006, л. 4.

[2] Տե՛ս նույն տեղը, թ. 6։

դեպի համիդիեի զորամասերը։ Էրզրումի բերդի պես և յոթերորդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Արուկ-փաշան, ինչպես նշվում է արխիվային մի փաստաթղթում, շատ լավ տեղյակ լինելով համիդիականների գործերին՝ «բացարձակ արհամարհանքով էր վերաբերում դրանց նկատմամբ և բազմաթիվ հայտարարություններ էր արել այն մասին, որ դրանք նույնիսկ ավազակներ էլ չեն, այլ պարզապես գողեր...»[1]։

Զինված ուժերի վերակառուցման փորձերը չտվին սպասվող արդյունքը, բայց ավելացրին ծախսերը, որոնք մնայուն կերպով կազմում էին տարեկան բյուջեի մեկ երրորդ մասը։ Այս բոլորն ավելի ևս թուլացրին ռազմաֆեոդալական վերնախավի դիրքերը երկրում և խորացրին կայսրության ճգնաժամը։

Բնութագրելով արևելյան պետությունների հիմնական ֆունկցիաները, իր նամակներից մեկում Ֆ. Էնգելսը գրել է Կ. Մարքսին. «Կառավարություններն Արևելքում միշտ ունեցել են միայն երեք գերատեսչություն՝ ֆինանսների (իր երկրի կողոպտում), պատերազմի (իր երկրի և ուրիշ երկրների կողոպտում) և հասարակական աշխատանքների (խնամք վերարտադրության համար)»[2]։ Տեսնենք թե ինչպե՞ս են իրագործվել առաջին գերատեսչության ֆունկցիաներն Օսմանյան կայսրությունում։ Մենք արդեն նշեցինք, որ երկրի ֆինանսական վիճակը բարելավելու կարևորագույն ուղիներից մեկը պատերազմի ճանապարհով հարևան «անհավատ» ժողովուրդներին իրենց ենթարկելն էր։ Հարկային քաղաքականության գործում մահմեդական և ոչ մահմեդական ժողովուրդները դրված էին տարբեր պայմանների մեջ։ Այդ տարբերություններին տրվում էր հատուկ նշանակություն և շարիաթի օրենքներում դրանք ընդգծվում էին որպես սկզբունքային դրույթներ։ «Ըստ շարիաթի,— գրում է Գ. Քերիմովը,— այլադավաններից գանձվում են հետևյալ հարկերը՝ ջեզյե, խարաջ, խումս և ուշր։ Զեքյաթ հարկը գանձվում է միայն մահմեդականներից, իսկ ջիզյեն՝ միայն այլադավաններից։ Հարկերի մնացած տեսակները գանձվում են ինչպես մահմեդականներից, այնպես էլ այլադավաններից, բայց տարբեր չափերով...»[3]։

---

1 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1006, л. 15.

2 Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 28, стр. 221.

3 Керимов Г. М., Шариат и его социальная сущность, М., 1978, стр. 187.

Ինչպես տեսնում ենք, անհավասար իրավունքների համար հիմք էր սահմանվել կրոնը և միանգամայն որոշակի ձևերով արտոնություններ էին տրվում իսլամի հետևորդներին։ Գ. Քերիմովը նշում է տվյալ հարցում տարվող քաղաքականության հետևողականությունը և այն համարում է վաղ միջնադարում «քրիստոնյաների, հրեաների և հեթանոսների կողմից իսլամը մասսայաբար ընդունելու գլխավոր պատճառներից մեկը»[1]։ Սակայն բազմաթիվ են փաստերը, որոնք ցույց են տալիս, որ մահմեդականություն ընդունելու խնդրում, ֆինանսական ու նյութական գործոնին զուգընթաց, իրենց վճռական ազդեցությունն են ունեցել քաղաքական ու վարչական ճնշման ձևերը, որոնք գործադրվում էին Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ժամանակաշրջանում։

Հարկային քաղաքականության իրավական ու օրինական կողմը ներկայացնելիս անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, որ ըստ շարիաթի «մահմեդական երկրներում այլադավաններից ստացվող հարկը դիտվում էր, ամենից առաջ, որպես պետության նյութական եկամուտի կարևոր աղբյուր, և օրենքով հպատակ-այլադավանների իրավունքների և գույքի պաշտպանությունը սահմանվում էր ոչ թե հանուն նրանց բարօրության, այլ մահմեդական գանձարկղի այդ կարևոր աղբյուրը պահպանելու համար»[2]։ Օրինականությունը պահպանելու դեպքում, հիշյալ բոլոր հարկերը, կամ պետության պահանջները, ինչքան էլ որ նրանք ծանր լինեին ժողովրդի համար, այնուամենայնիվ, տանելի էին։ Դրանց մասին ճիշտ պատկերացում տալու համար նշենք, որ ըստ պաշտոնական տվյալների, դրանք երկու կարգի էին՝ շարիաթական, որոնց թիվը հասնում էր 350-ի և պետական, որոնք 97-ն էին։

Առաջինների մեջ, բացի հիմնականներից՝ ջեզյե, խարաջ, աշար, զեքյաթ, մտնում էին նաև հարկեր՝ հողագործության, անասնապահության, առևտրի, անշարժ գույքի, կենցաղային սովորույթների և այլնի համար։ Պետական հարկերը նշանակվում էին սուլթանի կողմից և հատկացված էին կառավարական ծախսերը ծածկելու համար[3]։

[1] Керимов Г. М., նշվ. աշխ., էջ 188։

[2] Նույն տեղը, էջ 189։

[3] Տե՛ս Թարիխ-ի-Լյուբվի. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. 7, Թուրքական աղբյուրներ, հատ. Դ, Երևան, 1972, էջ 230։

Իհարկե, պետական գանձարկղ մտնելուց հետո բոլոր գումարները ծախսվում էին սուլթանի և նրա մերձավորների հայեցողությամբ և աղբյուրների մեջ օրենքով նշված բաժանումը խիստ պայմանական բնույթ ուներ։ Ամեն պարագայում, դրանք հարցի, կարելի է ասել, ձևական կողմն էին։ Իրականում, հարկերի գանձման ձևերն ու միջոցները, հատկապես օսմանյան կառավարության պրակտիկան միշտ ժողովրդական մասսաների համար հանդիսացել են իսկական հասարակական աղետ։

Ֆ. Բերնյեն արդեն արմատացած սովորույթ էր համարում Ռյանխիկ դրամով վարչական պաշտոնների՝ նահանգների, գավառների և այլ կարևոր ծառայությունների պետերի պաշտոնների վաճառքը։ Այդ երևույթը նա արձանագրել է Հնդկաստանում և Պարսկաստանում, նշելով, որ «ավելի հաճախ է հրապարակայնորեն» այն տեղի ունենում Թուրքիայում։ Բերված փաստերից նա հետևեցնում է, որ Հնդկաստանում և Իրանում «նահանգապետերի զավակները երբեմն ժառանգում են իրենց հայրերի պաշտոնները, որի հետևանքով ժողովուրդը չի գտնվում այնպիսի ճնշման տակ, ինչպես Թուրքիայում»[1]։

Ըվ իսկապես, Թուրքիայի ղեկավարները վաճառում էին վարչական պաշտոնները, կապալով էին տալիս հարկերի գանձումը և այդ պաշտոնները ստանձնողներից պահանջում, որ պետական դրամարկղ մուծեն որոշակի կանխիկ գումար։

Կառավարությունը երբեք չէր հետաքրքրվում, թե ինչ միջոցներով ու ձևերով էին գանձվում հարկերն ու տուրքերը։ Բնականաբար, Թուրքիայում ժողովուրդը մշտապես դժգոհ էր հարկահավաքներից։ Երկրում տիրող անտանելի վիճակը սուլթաններին նույնիսկ ստիպեց հրապարակել հատուկ «արդարության հրամանագրեր» (adeletname), որոնք պետք է արգելեին վարչական ու ֆինանսական չարաշահումները և հայտարարեին «նոր ժամանակաշրջանի՝ արդարության ժամանակաշրջանի սկիզբը»[2]։

Սակայն իրերի վիճակը չէր փոխվում և արդարությունը ոչ մի կերպ չէր կարողանում մուտք գործել դաժան իրականության մեջ։ Նույնիսկ կառավարության այն հաղորդումից հետո, որ «1254 (1838 թ.) մուհարրեմ ամսից հարկերի գանձումը հանձ-

[1] Բեռնյե Ֆ., նույն աշխ., էջ 205, 206։

[2] „Belleten", 1964, cild 12, s. 629.

ձարարվում է հարկահավաքներին», որոնք նշանակվելու են պետության կողմից[1], չարաշահումների թիվը չպակասեց, այլ ավելացավ։ Իսկ հնում սահմանված ավանդական հարկերը ձևականորեն շարունակեցին գոյություն ունենալ, սակայն անհետացին նրանց չափերն ու բացարձակ գումարները։ Բայց այս միջոցը ևս երբեք «չբավարարեց կառավարության կարիքները»,— նշում է Ք. Բուլութօղլուն[2]։ Համապատասխան պաշտոնյաները և պետական մարմինները շարունակում էին ելք փնտրել, ընտրելով մեծ մասամբ նոր հարկեր ու տուրքեր սահմանելու, հների անվանումը փոխելու, գանձումների գումարներն ավելացնելու կամ անօրինական գանձումներ կատարելու ուղին։ Այսպես, 1856 թ. գլխահարկի («խարաջ») փոխարեն, քրիստոնյաներից սկսեցին վերցնել ռազմական տուրք՝ «բեդել ի ասկերի», որը դրվում էր չափահաս դարձած բոլոր տղամարդկանց վրա։ Համաձայն այդ օրենքի, «զինվորական հարկը պետք է վճարեին միայն զենք կրելու կարողություն ունեցող անձինք, այսինքն՝ 20-ից մինչև 40 տարեկան հասակ ունեցողները։ Բայց հարկահանների համար օրենք ասած բանը չկա, նոքա մինչև կաթնակեր մանուկներից զինվորական հարկ են առնում։ Նոքա կանոն են շինել իրենց համար, որ ամեն գյուղ 5000 ղուրուշ պիտի հատուցանե յուրաքանչյուր 180 բնակչի համար, առանց հասակի խտրության»[3]։ Մյուս ականատեսն արձանագրում է, որ հարկը «լրիվ» հավաքելու նպատակով, «հարկահավաքը վերցնում էր տերտերներից ծնունդների ցուցակը, ըստ այնմ հաշվում բոլոր այրերի՝ ծերերից մինչև նորածինները, թիվը և ամեն մեկից վերցնում 37 ղուրուշ»[4]։

Այդպիսով, հարկատու քրիստոնյա բնակչության վիճակը ոչ թե կարգավորվեց, ինչպես հայտարարում էին թուրքական պետական գործիչները և գրում էին թերթերը, այլ նոր օրենքը դարձավ նոր շորթումների ու չարաշահումների միջոց։ «Եվրոպական բոլոր երկրների մեջ,— գրել է ռուս հայտնի ճանապարհորդ ու գիտնական Պ. Չիխաչևը,— հատկապես Օսմանյան կայսրությունն է իր բնակչությանը (մասնավորապես ոչ մահ-

---

1 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ 7, էջ 54։

2 Dr. Bulutoğlu Kenan, Türk vergi sistemi, Ist. 1967, s. 2.

3 «Փորձ», 1876, № 1, էջ 375։

4 Համբարձումյան Վահան, Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 38։

մեղական), ենթարկում ամենամեծ նյութական զոհաբերությունների, որովհետև օրինականացված տուրքը՝ միայն աննշան մասն է կազմում կամայական հարկումների, որոնցով տեղական իշխանությունները սիստեմատիկորեն հարկադրում են բնակիչներին»[1]։

Ինչպես նշվեց, ամբողջ չարիքը գալիս էր հարկերի գանձման սիստեմից, քանի որ բոլոր կարգի ու տեսակի հարկահավաքների պաշտոնը վաճառվում էր ամենուր։ Ամեն տարի վիլայեթի կենտրոնում հավաքվում էին այն մարդիկ, որոնք ցանկություն և հնարավորություն ունեին գնելու «վաճառքում» հայտարարված հարկահավաքի (մյուլթեզիմի) պաշտոնը։ Ձևականորեն «վաճառքին» մասնակցելու իրավունք ունեին բոլոր հպատակները, անկախ սոցիալական պատկանելությունից, կրոնից, ազգությունից ու այլ հանգամանքներից։ Սակայն տեղական իշխանությունների ներկայացուցիչներին «նախապես հայտնի էր, թե ում ինչ տեղամաս կտրվի, որովհետև նրանք միշտ էլ գտնվում էին «գնորդների հետ սերտ հարաբերության մեջ»[2]։ Այսպես, օրինակ, Մուշի «Խասգյուղի տասանորդը՝ կառավարության կողմե 300 լիրայի կհայտարարվի։ Այդ գյուղը կգտնվեր Փայրաքտարենց Հաճի Մուստաֆայի գոտիին մեջ և Հաճի Մուստաֆան կգներ այդ գյուղին տասանորդը։ Մյուս թուրքերը գիտենալով հանդերձ, որ 6—7000 լիրայի շահ մը կզրկվին, բայց և այնպես չեն մոտենար այդ գյուղին...»[3]։ Շորթումների ու թալանի ծավալը անասելիորեն ընդլայնվում էր, երբ ավելի փոքր տեղամասերում տեղի էր ունենում հարկերի գանձման պաշտոնի վաճառք այսպես կոչված «երկրորդական մյուլթեզիմներին»[4]։ Նման երևույթները Թուրքիայում դարձել էին սովորական և կառավարական շրջանները դրանք կասեցնելու համար որևէ միջոց չէին ձեռնարկում։ Իսկ եթե փորձեր էին կատարվում առանձին շրջաններում կարգավորելու հարկեր հավաքելու՝ ժողովրդի համար ծայրահեղ կենսական նշանակություն ունեցող գործը, ապա իշխանությունները միջամտում էին։ Այս իմաստով չափազանց բնորոշ

---

[1] Чихачев П. А., Великие державы и восточный вопрос, М., 1970, стр. 194.

[2] Инсаров Г. Х., Турция и Македония, журн. «Вестник Европы», кн. 4, апрель, 1903, СПб., стр. 678.

[3] Տարոնցի Աղաճ, Հարաչաս պատմություն Տարոնո, Կահիրե, 1962, էջ 28։

[4] Buluto$\check{g}$lu K., Türk vergi sistemi, s. 141.

է հետևյալ դեպքը։ Ռակյուբի վալի Խալիլ Ռիֆաաթ փաշան, 1890-ական թթ. վերջերին, փորձեց բարելավել տասանորդ հավաքելու կարգը։ Նա հասավ այն բանին, որ հարկահավաքի պաշտոնների վաճառման ժամանակ հաղթանակ տարան գյուղական համայնքների խորհուրդները, որոնք երկու տարվա ընթացքում կարողացան գանձել հարկերը։ Հետևանքը՝ աճեցին պետական գանձարկղ մուծվող գումարները և որոշ չափով թեթևացավ հարկատու բնակչության վիճակը։ Իշխանություններին դուր չեկավ այդ երևույթը և նրանք արձանագրեցին, որ դա որոշակի վնաս է բերում տիրող հասարակական հարաբերություններին։ Շուտով Խալիլ Ռիֆաաթ փաշային տեղափոխեցին այլ պաշտոնի և կամայականություններն ու չորթումները նորից դարձան սովորական։ Հարկային սիստեմն ուսումնասիրող բոլոր հեղինակները հատկապես նշել են անօրինական ու լրացուցիչ հարկադրությունների քայքայիչ ազդեցությունը տնտեսության բոլոր բնագավառների վրա[1]։ Եթե մենք փորձենք ինչ-որ կերպ կարգավորել դրանք ու կատարել անհրաժեշտ ընդհանրացումներ, ապա կստացվի մոտավորապես հետևյալ պատկերը։

Հարկերը գանձելիս, որպես կանոն, մյուլթեզիմները գյուղացիներին ստացականներ չէին տալիս կամ երբեմն դրանց փոխարեն թողնում էին այսպես կոչված հաշվեփայտիկներ։ Այդ կարգը հնարավորություն էր տալիս նորից գանձելու նույն տուրքը, եթե գյուղացին չէր ներկայացնում այն մուծած լինելու որևէ ապացույց։ Իսկ հաճախ, օգտվելով հարկատու հպատակների անգրագիտությունից, մյուլթեզիմները պակասով էին ցույց տալիս ստացած գումարները և երկրորդ ու երրորդ անգամ գանձելով, իբր լրացնում ու մարում էին «պակասը» կամ «պարտքը»։ Ցանկանալով երևալ օրինականության պաշտպան և իբր հաշվի առնելով տվյալ ընտանիքի կենսամակարդակը, ունեցվածքը,

[1] Տե՛ս Խաժակ, Հարկերը Տաճկաստանում, Թոփչյան Ե., Երիտասարդ թուրքերը և հայերը, Թիֆլիս, 1909, Համբարյան Ա. Ս., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը XIX դ. վերջին, Եր., 1968, Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ. Եր., 1967, Саркисян Е. К. Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине 19 в., Ер., 1957, Его же, Политика Османского правительства и державы в последней четверти 19 и начала 20-го вв., 1973, Инджикян О. Г. Буржуазия Османской империи, Ер., 1977, և ուրիշներ։

հազուստներով և ուրիշ իրերով ապահովված լինելը ու այլ հանգամանքներ, մյուլթեզիմները հաճախ տոն օրերին էին այցելում իրենց հարկատուներին։ Հասկանալի պատճառներով մարդիկ այդ օրերին հագնում էին տոնական շորեր, աշխատում էին ունենալ տոնական սեղաններ, հատուկ գնումներ էին կատարում և այլն։ Այս բոլորը այցելուն հաշվի էր առնում և ներկայացնում էր նորանոր պահանջներ։ Բացի այդ, հարկահավաքները սովորություն էին դարձրել ցանկացած առիթով առանձին անձնավորություններից պահանջել ցույց տալ հարկերի ստացականները։ «Այս պատճառով,— գրում է Վ. Գիրգասը,— ամյան պարտավոր էր իր մոտ ունենալու անցյալ տարվա վճարած խարաջի ստացականը և տվյալ տարվա հարկի լրիվ գումարը, հակառակ դեպքում նա կարող էր ձերբակալվել»[1]։

Հարկի գումարը կամ հարկի փոխարեն վերցվող գյուղատնտեսական մթերքների գինը իրենք հարկահավաքներն էին որոշում, այստեղ ևս խաբելով գյուղացիներին։ Աշարը, կամ տասանորդը, ինչպես թելադրում է հարկի անվանումը, պետք է կազմեր բերքի 1/10 մասը։ Որոշ փոփոխություններից հետո այն բարձրացել էր և անցյալ դարի վերջին քառորդին գանձվում էր բերքի 1/8 մասը։ Սակայն բերքահավաքի օրերին մյուլթեզիմներն իրենց մարդկանցով աշխատում էին կորզել բերքի 1/7-ը՝ «հօգուտ պետության»։ Հարկերի մի մասը պահանջվում էր մուծել կանխիկ դրամով, որը, որպես կանոն, գյուղացու մոտ համարյա միշտ բացակայում էր։ Այդ դեպքում պետական հարկահավաքներն անխղճորեն բռնագրավում էին պարտք ունեցողների շարժական ու անշարժ գույքը և ապա այդ ամենը ցածր գներով վաճառելով՝ գումարի մի մասը յուրացնում էին, իսկ մյուս մասը՝ հանձնում պետական գանձարկղին։ Վանի մերձակայքում գտնվող Ծվաստան գյուղի բնակիչներից, այդ կարգով, բռնագրավել և վաճառել էին 70 ոչխար՝ 2251 ղուրուշով, երբ դրանց արժեքը կազմում էր 4360 ղուրուշ։ Բռնագրավված անասունները, հացահատիկը և նույնիսկ պտղատու ծառերը ևս վաճառել էին դրանց գների 50 %-ով միայն։ Նույն բախտին էին արժանացել գյուղացիներից խլված գույքը, գործիքները ու այլ իրեր[2]։

---

[1] Гиргас В., նշվ. աշխ. էջ 92։

[2] Տե՛ս «Երկրի ձայնը», 1907, № 18, էջ 13։

Գոյություն ուներ գյուղացիներին թալանելու մեկ այլ միջոց։ Կալը վերջանալուց հետո ցորենը կիտվում էր դեզերով, հատուկ ձևով ու նշաններով, որը խախտելու իրավունք ուներ միայն հարկահավաքը (շահնան)։ Այդ արվում էր հարկ վերցնելու նպատակով բերքը չափելու համար, որը կատարվում էր հատուկ պատրաստված խոշոր կոտով։ «Շահնան ավերակ ու մոխիր կցաներ ամենքի գլխին։ Եվ հեք գյուղացին, որ յուր չեներուն (դեզ) չափ քրտինք էր թափած, կդիտեր օր-ցերեկով իր թալանն ու նահատակությունը։ Շահնայի խմբեն վերջ կուգար հովիվը, նախրորդը, քահանան, տիրացուն, վանահայրն ու փոքրավորը, գզիրը, զուռնաչին ու դավուլչին, աղքատն ու փերեզակը (չարչին), բոլորը, բոլորը իրենցը տանելու Հասնողը, թըռչուններու պես, բան մը բռնած կտուցին, կառներ ու կտաներ»[1]։ Խեղճ գյուղացու չարքաշ աշխատանքի արդյունքը հալվում ու ոչնչանում էր նրա և թշվառ ընտանիքի աչքերի առջև և ոչ ոք ի վիճակի չէր, կամ չէր ցանկանում պաշտպանել նրա իրավունքն ու շահը։

Նման մի ծանր պատկեր է իր «Խենթը» ներկայացնում Րաֆֆին։ Հայազգի կապալառու Թոմաս էֆենդին պարծենում էր հարկերը հավաքելու ժամանակ իր ցուցաբերած հնարագիտությամբ։ Ալաշկերտի գյուղերից մեկում «մի գյուղացի հունձը հնձել էր, կալը կալսել էր և ցորենի մաքուր շեղջը կիտել էր կալումը։ Ինձ կանչեց, որ չափել տամ և տասանորդը վեր առնեմ։ Ես պահանջեցի, որ տասանորդի փոխարեն զուտ փող տա։ Նա պատասխանեց, թե փող չի կարող տալ, և ավելացրեց, թե դուք ցորյան ստանալու իրավունք ունեք և ձեզ պատկանող ցորյանը ստացեք... Մտքումս ասացի, ես քո հերը կանիծեմ և քեզ ցույց կտամ, թե ինչ բան է իրավունքը։ Կալի ցորենը չչափեցի և թողեցի այնպես մնաց։ Անձրևները եկան, և ցորենը խոնավությունից ծլեց, այրվեցավ, փտեց և ոչնչացավ։ Այն ժամանակ գնացի և ասացի, թե իմ իրավունքից չեմ անց կենա, տուր ցորենը։ Բայց որտեղի՞ց պիտի տար, ցորենը դարձել էր մի բորբոսած մոխրի կույտ։ Հիմա տասանորդի փոխարեն փող տուր, ասացի նրան։ Փող չուներ, մի լավ ծեծ տվեցի, հրամայեցի եզները ծախեցին և փողը ստացա»[2]։ Բերված փաստերը չափազանց

[1] Համբարձումյան Վ., Գյուղաշխարհ, էջ 180։

[2] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. երրորդ, Եր., 1955, էջ 151։

բնորոշ են տարբեր տեսանկյուններից իրականությունը ցույց տալու համար։

Անօրինականությունները գործադրվում էին անողոքաբար, հատկապես քրիստոնյաների նկատմամբ։ «Էրզրումում,— գրում է Էմ. Դիլոնը,— որտեղ կա 8000 տուն մահմեդական, նրանք վճարում են 395 հազար պիաստր (դուրուշ), մինչդեռ քրիստոնյաները, որոնց տնտեսությունների թիվը կազմում է միայն 2000, մուծում են 430 հազար պիաստր»[1]։ Ընդհանուր եզրակացությունն ըստ Խաժակի և այլոց ուսումնասիրությունների այն է, որ անցյալ դարի վերջերին Թուրքական կառավարությունը «ուզում էր տնտեսապես հալումաշ անել քրիստոնյա տարրը, քայքայել նրա նյութականը և դրանով ստիպել կամ մահմեդականանալու, կամ թողնելու հայրենի հողը, գաղթելու»[2]։ Ամենամեծ չարիքը, ինչպես ասվեց, անօրինական հարկադրումներն էին, որոնք պետական հարկերից դուրս և նրանցից անկախ, կատարվում էին բոլոր այն անձանց, կամ մարմինների կողմից, որոնք ի վիճակի էին այդ անել։ Տեղական իշխանությունները, վաշխառուները, գործելով սուլթանի անունից և հանուն շարիաթի, ավազակաբար ու ինքնակամ գանձում, թալանում ու քայքայում էին աշխատավոր ժողովրդի տնտեսությունը։ Այդ երևույթների քաղաքական ու բարոյական հետևանքների հետազոտումը թողնելով այլ ուսումնասիրողների, նշենք միայն դրանց ազդեցությունը երկրի տնտեսական կյանքի վրա։ Մեծ ու փոքր պաշտոնյաները, որոնք Վարուժանի արտահայտությամբ «երկյուղից ձուլված բռնակալներ» էին, իրենց ծառայությունը կատարում էին, սակայն չէին ապահովվում պետության կողմից։ Ամիսներ, երբեմն տարիներ չստանալով իրենց աշխատավարձը, նրանք օգտագործում էին պաշտոնական դիրքը, ոչ միայն կենսական կարիքները բավարարելու, այլև հարստանալու համար։ Դողան Ավչըօղլուն բերում է տեղական զորքայի «գործունեության» հետևյալ պատկերը։ Այդ մարդը 200 լիրայով ձեռք էր բերել մի աշիրեթի տասանորդը հավաքելու իրավունքը, որը իրականում, այսինքն՝ տուրքը հավաքելուց հետո, պետք է կազմեր հազար

---

[1] Проф. Диллон Эм., Положение дел в Турецкой Армении, Сборник «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», изд. II, М., 1896, стр. 339.

[2] Խաժակ, նշվ. աշխ., էջ 68։

լիրա։ Բայց նա կորզել էր 1400 լիրա։ Ստացվում է, որ այդ հրոսակը 800 լիրա պետական գանձից, 400 լիրա հարկատուից, ընդամենը 1200 լիրայի կողմնակի եկամուտ է ապահովել իրեն»[1]։ Ինչպես տեսնում ենք, հավաքված գումարների զգալի մասը նրանք յուրացնում էին և մի շարք հիշեցումներից հետո միայն մնացածն ուղարկում պետական գանձարկղին։

Վիտալ Քինեյի հաշվումներով, 1888 թ. հավաքված հարկերի գումարը եղել է այնքան շատ, որ տեղական ծախսերը դուրս գալուց հետո էլ Տրապիզոնի վիլայեթում մնացել էր 20 միլիոն, իսկ Էրզրումի վիլայեթում՝ 14 միլիոն պիաստր, որոնց մի մասը ևս չէր հասել պետական գանձարան[2]։

Ֆրանսիական փոխհյուպատոս Վալլոնը հաղորդել էր, որ Բալկանյան մի գավառում, ճանապարհների վերանորոգման համար 1896 թ. հավաքել էին 1.700 լիրա (40 հազ. ֆրանկ)։ Սակայն հավաքված գումարը իր նպատակին չծառայեց։ «Դրամը ծախսել են ուրիշ կարիքների համար, իսկ ճանապարհները մնում են այն վիճակում՝ ինչպիսին ստեղծել է բնությունը և փչացրել են մարդիկ»[3]։ Երբեմն իշխանությունների գործելակերպը չէր տարբերվում ավազակախմբերի արածից։ Այսպես, կառավարությունը որոշել էր նյութական օգնություն ցույց տալ 1903 թ. մակեդոնական ապստամբության ճնշման հետևանքով տուժած ժողովրդին։ Օգնության չափերը որոշելու համար նշանակվել էին հանձնաժողովներ։ Վերջիններս ձգձգում էին կամ պարզապես չէին վճարում առանձին ընտանիքներին հասանելիք չնչին դրամը։ Հաճախ էլ, թուրքական զինված խմբերը շրջագայում էին հանձնաժողովների անդամների հետ, երբ վերջինները դուրս էին գալիս բնակավայրերից, զինված ավազակները բնակիչներից խլում էին որպես օգնություն ստացած դրամը՝ «չենթարկվողներին խստորեն ծեծելով»[4]։

Հարկահավաքների ամենասովորական և վնաս հասցնող զեղծումներից մեկը հետևյալն էր։ Տեղական իշխանությունների համաձայնությամբ մուխտարը «յուրացնում է հարկի մի մասը

---

[1] Avcıoǩlu Doǧan, Türkiye' nin düzeni (Dün, Bugün Yarın) Onuncu basım, İst. 1976, birinci kitab, s. 177.

[2] Cuinet Vital, La Turquie d'Asie, Paris, 1891, t I, p. 35, 176.

[3] «Вестник Европы», 1903, кн. 4, стр. 681.

[4] Նույն տեղը, № 12, էջ 811։

և այն ցույց է տալիս իր ապառիկ պանդխտության գնացած անձերի վրա»[1]։ Այսինքն՝ գյուղից դուրս գտնվող պանդուխտներին համարում էին ժամանակին հարկը չմուծող, որը դառնում էր իր պարտք պետական գանձարանին։ Երբ վերջիններս վերադառնում էին հայրենիք, որպեսզի աղի արցունքով ու տանջանքով հավաքած դրամով որոշ չափով բարելավեն իրենց քայքայված տնտեսության վիճակը, նրանց դրամը գրավվում էր «պարտքի դիմաց»։ Իսկ եթե մնում էր ինչ-որ գումար, այն էլ յուրացնում էին մյուս պաշտոնյաները, իբր այն բանի համար, որ նրանք «ծածկել են» գրում եղած ժամանակ դրամատիրոջ «կոմիտաճին» (հեղափոխական) դառնալու հանգամանքը։

Շարիաթի օրենքների համաձայն ամեն մի բարձրաստիճան պաշտոնյա կամ մահմեդական ճանապարհորդ իրավունք ուներ իր ուղևորության ընթացքում, հանգստյան և սնվելու համար կանգ առնել քրիստոնյաների բնակարաններում, որոնք, ըստ պահանջի, պարտավոր էին երեք օր պահել «հյուրին», կերակրել նրան ու նրա ուղեկիցներին, խնամել նրանց ձիերին։ Այս պարտականությունը բնակչության համար դարձել էր իսկական չարիք։ «Հյուր» էին գալիս ոչ միայն պաշտոնական անձինք, այլև ճանապարհորդելու կամ զվարճանալու դուրս եկած կալվածատերեր, ցեղապետեր, շեյխեր, բեկեր, զինվորական ու ոստիկանական աստիճանավորներ։ Քիչ չէին դեպքերը, երբ այս կամ այն հողատերը, ցեղապետը կամ աստիճանավորը գյուղ էր գալիս մեծ խմբով, օրերով ու շաբաթներով ապրում այնտեղ, որտեղ սնվելուց զատ նրանք թույլ էին տալիս կամայականություններ, բռնաբարում էին կանանց, իրենց հետ տանում աղջիկներին, բռնությամբ քշում անասուններին, գողանում կամ վերցնում էին թանկարժեք իրեր և այլն։ Այդպիսի «հյուրասիրությունը» կարող էր քայքայել նույնիսկ հարուստ գյուղացու տնտեսությունը։ Այս պատճառով էլ հյուրընկալողն աշխատում էր շատ առաջ ճանապարհել իր «հյուրերին», նույնիսկ եթե պետք էր դրա համար վճարել «ատամի վարձ» («դիշ քիրեսի»), կամ որպես նվեր տալ փող, արժեքավոր իրեր, զարդեր և այլն։ Ուշադրության արժանի է, օրինակ, հետևյալ փաստը։ Մակեդոնիայի սանջակներից մեկում մյութեսարիֆը ժանդարմների հետ հավաքելիս է եղել ճանապարհային տուրք։ Սակայն սա նրան չի

[1] Թոփչյան Ե., նշվ. աշխ., էջ 51։

բավարարել և նա որոշել է գործել այլ կերպ։ Հաջորդ տարին, որպես ճանապարհաշինարար բանվորներ, նա այդտեղ է ուղարկում ավազակներին։ Սրանք մի ամբողջ ամիս ապրում են տեղացիների հաշվին՝ «ցերեկը հանգստանում էին, իսկ գիշերը կողոպտում գյուղացիներին»։ Թալանած իրերը նրանք կիսում էին ժանդարմների հետ։ Եվ քանի որ վերջիններս ամիսներով աշխատավարձ չէին ստանում, իսկ դրամի կարիքը մեծ էր, նրանք սիրով ընդունում էին «իրենց բաժինը»։ Գյուղացիներն այդ կողոպտողներից ազատվելու համար ստիպված եղան կաշառել մյութեսարիֆին և միայն դրանից հետո ավազակներն ու ժանդարմները հեռացան գյուղից[1]։

Այդպիսի դեպքեր տեղի էին ունենում ամենուր։ Չափն անցած օրինազանցություններից մեկը՝ դրամ կորզելու նպատակով անմեղ, բայց հարուստ մարդկանց ձերբակալումն էր։ Նման պարագաներում պահանջվում էր խոշոր փրկագին, առանց որի ձերբակալվածների հարազատները չէին կարող ազատել իրենց բարեկամին։ Շորթելու այս ձևը կարող էր մեծահարուստին դարձնել աղքատ, իսկ նրան թալանողներին հարստացնել։ Ե. Օտյանն իր հուշերում պատմում է կամայականության նման մի զոհի՝ Սեբաստիայի գյուղերից մեկի նախկին «չոջիի» մասին, որը «օր մը ձերբակալվեր ու տարիներով բանտը մնալե ետքը, կրցեր էր ազատիլ՝ իր ամբողջ հարստությունը մաս առ մաս կերցնելով պաշտոնյաներուն։ Գյուղը՝ իր տունը վերադառնալով՝ թափուր գտել էր զայն»[2]։ Կորցնելով ամբողջ հարստությունը և բոլոր հարազատներին, նա հեռացել էր գյուղից, Կ. Պոլսում դարձել բեռնակիր։ Ավելի ուշ, հայ փախստականների ճամբարներում, որոնք ստեղծվել էին Թուրքիային հարևան երկրներում 1895—1896 թթ. կոտորածներից հետո, նա տերտերի պարտականություններ էր կատարում։ Էմ. Դիլոնի վկայությամբ, Բիթլիսի բանտապետ Աբդուլկադիրը, նման մի շարք գործողություններից հետո, նոր տուն էր կառուցել, որի վրա ծախսել էր «500 ֆունտ, և ըստ տարածված լուրերի, երկու կամ երեք թուրք վաճառականներ առևտուր են անում նրա դրամագլխով, մինչդեռ նա ամսական ստանում է ընդամենը հիսուն շիլլինգ աշխատավարձ»[3]։

---

[1] Տե՛ս «Вестник Европы», 1903, кн. 4, стр. 685.

[2] Օտյան Երվանդ, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 254։

[3] Диллон Эм., Положение дел в Турецкой Армении, сборник «Положение армян...», стр. 358.

Օսմանյան բանտը սարսափելի էր քրեական և մանավանդ քաղաքական հանցավորների համար։ Բայց այն սոսկալի էր հատկապես այն անմեղ մարդկանց համար, որոնց, թալանելու նպատակով, ենթարկում էին անասելի տանջանքների, ծաղր ու ծանակի, մինչև դահիճները չէին ստանում իրենց սպասելիքը, կամ մինչև տանջահար զոհը մահանում էր։ Չարչարանքները, ծեծը հաճախ կազմակերպվում էին քրեական հանցագործների օգնությամբ, որի հետևանքով բանտարկյալների համար անտանելի վիճակ էր ստեղծվում։ Այդ նույն նպատակով օգտագործվում էին նաև չարչարանքի գործիքներ, որոնց մեջ տխուր հռչակ էր վայելում հանրահայտ ֆալախկան։ Ըստ ականատեսների պատմածի, պատժվողի մերկ ոտքերը դրվում էին երկու հատուկ սարքած փայտերի արանքում, սեղմվում էին, բարձրացվում վերև և սկսում էին թաց ճիպոտներով, կամ նույնիսկ մահակներով, հարվածներ հասցնել զոհի ոտքերի կրունկներին ու թաթերին, մինչև ուշագնաց լինելը։ Ապա արյունաթաթախ ոտքերն իջեցվում էին աղաջրի մեջ և տանջանքը շարունակվում էր... «Երբ շատ ուշ, վերջին ժամանակներս,— գրել է Րաֆֆին,— կարդացի ինկվիզիցիայի հնարած գործիքների նկարագրությունը և նրանց տեսակները, զարմացա, թե ինչպես է պատահել, որ կաթոլիկ եկեղեցու հանճարը, որ այնքան զորավոր էր տանջանքի մեքենաներ ստեղծելու մեջ, բոլորովին ի նկատի չի առել ֆալախկան...»[1]։

Վերևում բերված համառոտ նկարագրություններից հետո զարմանալի չի թվա, եթե ասենք, որ գրականության մեջ չեն արձանագրված դեպքեր, երբ կայսրության որևէ հարուստ քրիստոնյա հպատակ դուրս գար բանտից, պահպանելով իր բարի անունը և հարստությունը։ Դա հնարավոր էր միայն երկու դեպքում՝ եթե նա ընդուներ մահմեդականություն, կամ դառնար իշխանությունների գործակալը, մատուցեր նրանց հատուկ ծառայություններ։

Այդպիսով, չափազանց բազմերանգ ու բազմաթիվ էին կողոպտելու և գռփելու ձևերն ու մեթոդները։ Դրանք ուղղակիորեն ազդում էին երկրի տնտեսական զարգացման և նրա տեմպերի վրա։

Մյուս կողմից հողի պետական սեփականությունը և հողօգ-

---

[1] Րաֆֆի, Երկեր, հատ. 4, Եր., 1956, էջ 254։

տագործման եղանակները չէին նպաստում հողագործության զարգացմանը։ Զինվորականների ձեռքում գտնված հողի անմիջական արդյունքը քիչ էր հետաքրքրում տերերին, քանի որ նրանք միանգամայն բավարարվում էին իրենց հողամասերից ստացած հարկերով։ Բանակում իր ամբողջ կյանքն անցկացնող թուրք գյուղացին զինվորական ծառայության համար ստանում էր վարձ, ցանելու սերմ, ձի, զենք և համաձայն օրենքի ազատված էր որոշ հարկերից։ Խնդրի բացասական կողմն այն էր, որ նա չէր կարող իրեն նվիրել հողագործությանը։ Ուրեմն, հաճախ բացակայում էր հիմնական աշխատավորը, իսկ կանայք, երեխաներն ու ծերերը ի վիճակի չէին որակով կատարելու պահանջվող աշխատանքները։ Հետևաբար, մահմեդական գյուղացուն պատկանող հողը քիչ արդյունք էր տալիս։ Այս պատճառով էլ նա նախընտրում էր զբաղվել անասնապահությամբ, որը համեմատաբար նվազ աշխատատար էր ու ավելի թեթև։ Իրենց դերն էին խաղում այստեղ նաև թուրքերի քոչվոր լինելու դարավոր ավանդույթն ու ձգտումները, որ պակաս կարևոր գործոն չէր նրանց կյանքում։ Այս ամենը հանգեցնում էր գյուղատնտեսության հետամնացությանը և քայքայմանը։ Տիրող վերնախավը ստիպված դիմում էր ռայային, որը մեծ դեր էր կատարում նաև տնտեսության կարևոր մասը հանդիսացող գյուղատնտեսության զարգացման ասպարեզում։

Ֆ. Էնգելսի նշած «երրորդ գերատեսչության», հասարակական աշխատանքների գերատեսչության, գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ օսմանյան պետությունը շատ քիչ էր մտածում այդ բնագավառն աշխուժացնելու մասին։

Վերարտադրության խնդիրը չէր հուզում երկիրը կառավարողներին։ Բարենորոգումները վերաբերում էին վարչական մարմինների ֆունկցիաներին, իսկ սոցիալ-տնտեսական կարգերի վրա նրանք որևէ լուրջ ազդեցություն չունեցան։ Մինչդեռ երկրի զարգացման հիմնական նախապայմանը վերնաշենքի ակտիվ ու դրական քաղաքականության անհրաժեշտությունն էր։ Քեմալ Աթաթյուրքը կայսրության կործանումից հետո անդրադառնալով նշված պրոբլեմին, ասել է. «Ով կռվում է սրով, ի վերջո հաղթվում է նրանց կողմից, ովքեր կռվում են արորով, և զիջում է իր տեղը նրանց։ Այդպես պատահեց Օսմանյան կայսրության հետ։ Բուլղարները, սերբերը, հունգարները, ռումինացիները կապվեցին արորին, նրանք ապահովեցին իրենց կեն-

ցաղը, ամրապնդեցին իրենց ուժերը, իսկ մեր ազգը քարշ էր գալիս ահա այդպիսի ֆաթիհ-նվաճողների հետևից, չէր աշխատում իր հայրենիքում և ի վերջո, հաղթվեց նրանց կողմից»[1]։

Այս իրավացի եզրակացությունը բխում էր կայսրությունում տիրող տնտեսական փոխհարաբերությունների ճիշտ վերլուծումից։ Օսմանյան պետությունը, Արևելքի շատ երկրների նման, մեր ներկայացրած ժամանակաշրջանում ուներ չափազանց հետամնաց տնտեսություն։ Նրա բնորոշ կողմը՝ տնտեսաձևերի բազմազանությունն էր, որն ինքնին արգելակում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացումը։ Այսպես, կայսրության հսկայական տարածքի վրա միաժամանակ գոյություն ունեին համայնական-ցեղային հարաբերություններ՝ արաբների մոտ և Քրդստանում, ամենուր տիրապետող էին ֆեոդալական կախվածության փոխհարաբերությունները, հարկերը և ռենտան վճարում էին բնատուրքով, կոռի կամ աշխատանքային այլ ձևով, դրամով և այլն։ Մյուս կողմից, կային արդեն մասնավոր հողատիրություն, տնայնագործություն, որի արտադրությունը ոչ միայն ներքին գործածության համար էր, այլ նաև շուկայի։ Կար առևտրականների շոշափելի խավ և կապիտալիստական արտադրության բավական զարգացած մակարդակ։

Տնտեսագետ Ա. Լևկովսկու ուսումնասիրությունները նրան հանգեցրել են այն եզրակացության, որ «բազմակացութաձև տնտեսության գոյությունը մի ֆորմացիայից մյուսին անցնելու շրջանի գլխավոր սոցիալ-տնտեսական ցուցանիշն է»[2]։

Բազմաթիվ փաստերի առկայությունը Օսմանյան կայսրությունում ևս հաստատում է բերված հետևության ճշմարտությունը։ Թուրքիայի համար XIX դարը իրապես հանդիսացավ անցման շրջան՝ մի հասարակարգից դեպի մյուսը։ Սակայն հիշյալ պրոցեսն այնքան էր դանդաղ ու տանջալից, ֆեոդալական փոխհարաբերությունները՝ այնքան տիրապետող, որ նոր կարգերի երևան գալը և նրանց զարգացումը հաճախ չէր նկատվում կամ հաշվի չէր առնվում։ Առանձին վայրերում՝ հողի բռնագրավումները, գյուղացիներին ուժով հողին ամրացնելը այնպիսի տպա-

---

[1] Ататюрк К., Избранные произведения и речи М., 1966, стр. 269.

[2] Левковский А. Н., Мелкая буржуазия: облик и судьбы класса, М., 1978, стр. 105.

վորություն էին թողնում, որ երկրում տեղի է ունենում ֆեոդալացման նոր պրոցես։

Պետք էր հաշվի առնել նաև արտաքին գործոնների՝ կապիտալիստական Արևմուտքի ազդեցության ուժեղացումը և Թուրքիայի կիսագաղութ դառնալու ընթացքը։

Այս վերջին պրոցեսը ուղղակի անդրադարձավ տեղական արտադրության վրա, զգալիորեն քայքայեց նրան, տեղական շուկան հեղեղեց կապիտալիստական երկրների էժան, գեղեցիկ ու որակով ապրանքներով։ Հետզհետե ավելացավ գյուղատնտեսական հումքի և մթերքների արտահանումը երկրից, ուժեղացավ գյուղացիության շահագործումը։ Միաժամանակ, նշված տեղաշարժերի հետևանքով, աճեցին ու ընդլայնվեցին առևտրական կապերը խոշոր տերությունների հետ, խտացան միջնորդ կամ կոմպրադորական բուրժուազիայի շարքերը։

Ստեղծվեց մի իրավիճակ, երբ կայսրության տիրող խավերի և արևմտյան խոշոր տերությունների շահերը համընկան և երկու կողմերի նպատակը դարձավ պահպանել Օսմանյան կայսրության ամբողջությունն ու նրանում տիրող փոխհարաբերությունները: *Ամենախիստ քննադատության ենթարկելով եվրոպական երկրների քաղաքականությունը Թուրքիայում, Կ. Մարքսը գրում էր, որ նրանք մինչև իրենց դիրքերը ամրապնդելը չէին մտածում օգնության մասին։ «Միայն այժմ, երբ Օսմանյան կայսրությանը հասցրին վերջին աստիճանի խարխուլ վիճակի, գտնում են, որ կարելի է պահպանել փլչելու պատրաստ այդ պետությունը՝ եվրոպական հավասարակշռությունը պահպանելու պատրվակով...»[1]։ Անցյալ դարի 50-ական թթ. կեսերին գրած բազմաթիվ հոդվածներում Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն անդրադարձել են գոյություն ունեցող իրավիճակը պահպանելու խնդրին և ցույց տվել նրա երկու կողմը։ Որպեսզի կասեցնեն ցարական Ռուսաստանի առաջխաղացումը, եվրոպական մեծ տերությունները տևականորեն հայտարարում էին իրենց վճռականությունը՝ ամեն գնով պաշտպանելու իրենց արտաքին քաղաքականության հիշյալ սկզբունքը։ Հարցի մյուս կողմը այն է, որ* status quo-*ի պահպանումը քրիստոնյա հպատակների համար «նշանակում է պարզապես հավերժականացնել Թուրքիայի կող-*

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 10, стр. 83.

մեջ նրանց կռիվներում»[1]։ Պարզ է, որ այդ ժողովուրդները պետք է փնտրեին իրենց ազատագրման ուղիները, իրենց դաշնակիցներին ու պայքարեին մինչև վերջնական ազատագրումը։

Անընդհատ պատերազմների ժամանակաշրջանը վերջանալու կապակցությամբ, աճեց քրիստոնյա ժողովուրդների աշխատանքային գործունեության նշանակությունը երկրի տնտեսության բոլոր բնագավառներում։ Դրանք XIX դարի երկրորդ կեսին զգալի վերելք ապրեցին կապիտալիստական հարաբերությունների հիմքի վրա։ Զուգահեռաբար ընթանում էր քրիստոնյա ժողովուրդների բուրժուական խավերի ձևավորումը, որը չէր կարող չազդել երկրի ընդհանուր առաջընթացի վրա։ Այդ բոլոր երևույթներն իրենց արտահայտությունը գտան քաղաքական կյանքում, այսպես կոչված ռեֆորմատորական շարժման մեջ։ Հանրահայտ է, որ բարեփոխություններ մտցնող պետական որոշումներն ու ակտերը հանդիսանում են երկրի ներքին, հասունացած պահանջների և ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող տեղաշարժերի հետևանք։ Սակայն նշված օրինաչափությունը մասամբ միայն կարելի է ընդունելի համարել Թուրքիայի համար։ Ա. Միլլերը նշում է, որ բարենորոգումների առաջին շրջանը Թուրքիայում չէր կապված երկրի առաջընթացի հետ։ Նրա կարծիքով, «ռեֆորմների հիմնական, եթե ոչ միակ պատճառը՝ տիրող դասակարգի փոքրիկ, բայց լուսավորյալ խմբի ձգտումն էր՝ ռեֆորմների միջոցով փրկել կայսրությունը վրա հասնող կործանումից»[2]։

Անշուշտ, նման նպատակ էին հետապնդում Թանզիմաթի շրջանի բարեփոխումները։ Բայց, Գյուլհանեի հաթթը շերիֆում և Հաթթը Հումայունում անպայման հաշվի են առնվել ներքին որոշակի ու կոնկրետ տեղաշարժերը և ժամանակի արտաքին պայմանները։ Տիրող սոցիալ-տնտեսական փոխհարաբերություններում չփոխելով որևէ բան, դրանք, այնուամենայնիվ, արտացոլում էին վերնախավի որոշ շերտերի ձգտումը՝ ինչ-որ չափով բարելավել կայսրության վարչական մարմինների գործունեությունը և գոնե արտաքին տվյալներով ետ չմնալ եվրոպական երկրներից։

1830-ական թթ. վերջերին հիմնվեցին ֆինանսների, ներքին

---

[1] Маркс К. и Энгельс Ф. Соч., т. 9, стр. 31.

[2] Миллер А. Ф., Мустафа-паша Байрактар, стр. 73.

և արտաքին գործերի մինիստրություններ, 1847-ին՝ լուսավորության մինիստրություն, 1868-ին՝ հասարակական աշխատանքների և այլն։ Բայց մինչև XIX դարի վերջը վարչական ապարատը հիմնականում մնաց նույն մակարդակի վրա, որովհետև տեղերում օրենքի ուժ ունեցող հին սովորությունները ու կարգը հնարավոր չէր վերակառուցել առանց լուրջ և արմատական փոփոխությունների։

Իսկ տնտեսության հիմնական ճյուղը՝ գյուղատնտեսությունը, վարչական ղեկավարություն ստացավ միայն դարավերջին, երբ 1894 թ. կազմակերպվեց երկրագործական մինիստրությունը։ Նրան հանձնարարված բնագավառների և ուղղությունների թիվն այնքան մեծ ու լայն էր, որ կասկածելի էր, թե նորաստեղծ գերատեսչությունը կարող էր ընդգրկել այդ ամենը։ Մեր միտքը հաստատելու համար թվարկենք մինիստրության վարչությունները. երկրագործական, անտառների, հանքերի, արհեստների, անասնաբուծական, գյուղատնտեսական բանկի, առևտրական, վիճակագրական և մի շարք ուսումնական հաստատությունների[1]։

Ինչպես տեսնում ենք, կենտրոնական իշխանության մարմինները դարավերջին դեռևս չունեին համապատասխան մասնագիտական ուղղություն։

Ռեֆորմատորական շարժման ամենակարևոր իրադարձությունը պետք է համարել Թուրքիայի սահմանադրության հռչակումը՝ 1876 թ. դեկտեմբերի 11 (23)-ին։ Այն մշակվել էր Միդհատ փաշայի և նրա մերձավորների ջանքերով (նրանց թվին էր պատկանում նաև հայ հասարակական գործիչ Գրիգոր Օտյանը)։ Սահմանադրության որոշ հիմնական դրույթներ կրկնում էին Անգլիայի, Շվեյցարիայի և եվրոպական այլ երկրների սահմանադրությունների առանձին հոդվածներ։ Սակայն թուրքական իրականությունն իր ծանր կնիքը դրեց սահմանադրության հոդվածների մեծ մասի վրա։ Ըստ կայսրության այդ հիմնական օրենքի, նրա տարածքում բնակվող բոլոր ժողովուրդները հայտարարվում էին «օսմանցիներ» (հոդվ. 8)։

Միանգամայն իրավացի կերպով Ի. Ֆադեևան նշում է, որ կայսրության բոլոր ժողովուրդներին հայտարարելով «օսմանցիներ» և կայսրությունը՝ ամբողջական միասնություն, որը եր-

---

[1] Տե՛ս Առամյանց Հ., Գյուղատնտեսի տարեցույցը, 1914, Կ. Պոլիս, էջ 125։

ընք չպետք է բաժանվի մասերի, սահմանադրությունը «հավերժացնում էր թուրքերի տիրապետությունը հպատակ ժողովուրդների վրա»[1]։ Հռչակվում էին նաև բուրժուադեմոկրատական որոշ ազատություններ՝ անձի (հոդվ. 10), խղճի և սեփականության (հ. 21) և այլն։ Արգելվում էին գույքի բռնագրավումը, անօրինական տուգանքները, հարկադիր աշխատանքը (հ. 24), ինչպես նաև՝ օրենքով չնախատեսված տուրքերով հարկադրելը (հ. 96)։ 115-րդ հոդվածի համաձայն արգելվում էր սահմանադրության որևէ հոդվածի գործադրության դադարեցումը։ Սակայն 113-րդ հոդվածը սուլթանին իրավունք էր վերապահում հայտարարելու պաշարողական դրություն և այդ պայմաններում դադարեցնելու սահմանադրության գործողությունը, մանավանդ, եթե «կայսրության տարածքի որևէ մասում նկատվել են ապստամբության նշաններ»[2]։ Հիմնական օրենքն ընդունելու կապակցությամբ պառլամենտի հանդիսավոր նիստում սուլթան Աբդուլ-Համիդը հանդես եկավ հատուկ ճառով։ Նա հավաստիացրեց բոլորին, որ իրեն տրված իշխանության ամբողջ ուժով կպաշտպանի սահմանադրական կարգերը։ Միաժամանակ նա հայտարարեց, որ սահմանադրության հիմնական սկզբունքները «համապատասխանում են շարիաթի դրույթներին, ելնում են մեր ակնկալություններից, հակումներից և մեր մեծ ցանկությունից՝ ապահովել բոլորին բարօրություն և երջանկություն»[3]։

Հանրահայտ է սահմանադրության և պառլամենտի կողմնակիցների ծանր պայքարի պատմությունը ներքին ռեակցիոն ուժերի դեմ, նրա հռչակումից հետո։ Պայքարն ավարտվեց առաջինների պարտությամբ։ 1878 թ. փետրվարի 2(14)-ին մեծ վեզիր Ահմեդ Վեֆիկ փաշան պառլամենտի նիստում ընթերցեց սուլթանի ֆերմանը՝ պառլամենտն անսահմանափակ ժամկետով արձակելու մասին, կապված, իբր, երկրում տիրող քաղաքական բարդ իրավիճակի հետ[4]։ Այդ ժամկետը շարունակվեց ավելի քան 30 տարի։ Խոստացված ազատությունները մնացին թղթի

---

[1] Фадеева И. Е., Мидхат-паша, жизнь и деятельность, М., 1977, стр. 88.

[2] «Փորձ», 1877, № 3, էջ 60—76։ Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ սահմանադրության տեքստի առաջին թարգմանություններից մեկը հայերեն թարգմանությունն էր, որը և ցիտվում է այստեղ։

[3] Նույն տեղը, էջ 57—58։

[4] Տե՛ս «Արոր», 1911, № 9, էջ 56—63։

վրա և երկիրը ընկավ ծանր, մղձավանջային վիճակի մեջ։ Սկըսվեց Աբդուլ-Համիդի բռնատիրության ժամանակաշրջանը, որը պատմության մեջ հայտնի է «զուլում» որակմամբ։ Մինչդեռ ժողովուրդները և շատ գործիչներ ու քաղաքագետներ հավատացել էին սուլթանի կեղծ հայտարարություններին, որ նա իբր համոզված է, թե կայսրության «միակ փրկությունը սահմանադրությունը գործադրելու մեջ է»[1]։ Սակայն անկախ Աբդուլ-Համիդի և նրա նախորդների քաղաքականությունից, XIX դ. 60—70-ական թթ. այդ շարժումն ընդգրկեց քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի բազմաթիվ բնագավառներ։ Ինչ-որ չափով հաշվի առնվեցին նաև ոչ թուրք ժողովուրդների ազգային շահերը։ Կառավարությունն ընդունեց հույն պատրիարքի նոր, ավելի ճշտված իրավունքները (1864)։ Նույնը կատարվեց բուլղարական էկզարխի և հրեական համայնքի խախամբաշիի իրավունքների հետ (1870)։ 1861—1864 թթ. ընթացքում Լիբանանին տրվեց ինքնավարություն։

Թուրքահայերի ազգային սահմանադրությունը մշակելու համար դեռևս 1854 թ. կազմվել էր սահմանադրական հանձնաժողով։ Նրա մշակած նախագիծը երկար ու սուր վեճերի մթնոլորտում քննարկվել էր ազգային ժողովում։ 1860 թ. մայիսի 24-ին այն վերջապես ընդունվեց։ Կառավարության կողմից վավերացվեց 1863 թ. մարտին։ Ընդ որում հոդվածների թիվն իջեցվեց 150-ից 99-ի, մասնավորապես, գավառների բնակչության իրավունքների վերաբերյալ հոդվածների հաշվին։ Սակայն տրված սահմանափակ հնարավորությունները դիտվեցին չափազանց և 1870-ին առաջարկվեց դրանք վերանայել։

Կառավարությունը թուրքահայերի սահմանադրությունը կըրկին հաստատեց 1874 թ. մայիսին, իսկ համիդյան շրջանում այն փաստորեն չէր գործադրվում[2]։ Հայերի հասարակական կյանքում կարևոր այդ փաստաթղթի նախապատրաստման և իրականացման շրջանում տեղի ունեցան զգալի տեղաշարժեր։ Աշխատավորությունը շահագործող վերնախավից՝ ամիրաներից, վաճառականներից, հողատերերից, առևտրականներից ու հոգևորականներից պահանջում էր հաշվի առնել իր պահանջները։ Սահ-

---

[1] Said paşanın hatratı, Ist., 1910, t. 1, s. 14.

[2] Տես Սարուխանյան Ա., *Օսմանյան հայերի ազգային սահմանադրությունը*, «Արոր», 1910, № № 1, 2, 3, 5։

մանադրության ընդունումը և ժամանակավոր գործադրումը, անշուշտ, այդ պայքարի դրական արդյունքներից մեկն էր։

Այս բոլոր կիսատ-պռատ բարենորոգումները կամ դրանք իրականացնելու փորձերը կարելի է համարել ֆեոդալական պետության զիջումներ՝ ժամանակի պահանջներին, ձևավորվող բուրժուական խավերին, մասնավորապես, քրիստոնյա ժողովուրդների բուրժուազիային։ Նույն կարգի երևույթներից են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ լիցեյների ու կոլեջների հիմնադրումը, որտեղ ընդունվել կարող էին ձևականորեն բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները։ Պետական խորհրդի աշխատանքներին մասնակցելու իրավունք ստացան բուլղարները, հույները, հայերը, հրեաները և ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչներ։ Սակայն նրանք կարող էին կազմել խորհրդի անդամների մեկ երրորդ մասը միայն և, հետևաբար, չէին կարող վճռական ազդեցություն ունենալ խորհրդակցական այդ մարմնի աշխատանքների վրա։ Նշանակալից երևույթ էր նաև այլազգի թուրքահպատակ գործիչներին ու մտավորականներին պատասխանատու պետական պաշտոններ հանձնարարելը։

1868 թ. հայ տնտեսագետ Գրիգոր Աղաթոնը մտնում է կառավարության կազմի մեջ որպես հասարակական աշխատանքների մինիստր։ Իր պաշտոնական գործունեության մեջ զգալի հաջողությունների հասավ մեկ ուրիշ երևելի հայ՝ Արթին փաշա Դադյանը։ 1868 թ. նա ընտրվեց պետական խորհրդի անդամ, 1870-ին՝ ֆինանսների մինիստրության խորհրդական, 1872-ին՝ հանքաց և անտառաց խորհրդի կառավարիչ, 1875-ին՝ արտաքին գործերի մինիստրության խորհրդական և մինիստրի տեղակալ։ 1860—1870-ական թթ. խոշոր դիվանագիտական դեմք էր նաև Գրիգոր Օտյանը[1]։ Հայ և այլազգի ղեկավար գործիչների ցուցակը կարելի է շարունակել։ Մեր ուսումնասիրության համար, սակայն, կարևորը հիշյալ փաստերն արձանագրելն է, որպես վերնախավերի ստիպված նահանջ՝ նոր կարգերի դժվարին, բայց համառ հարձակման պայմաններում։ Համիդյան ռեժիմը դանդաղեցրեց, բայց ի վիճակի չեղավ կասեցնել այդ պրոցեսը։ Հետապնդումները և ճնշման քաղաքականությունն ավելի ևս խո-

[1] «Արօր», № 6—7, էջ 103—104։

բացրին ներքին հակասությունները և մոտեցրին ու արագացրին կայսրության անկումը։

Հակասությունների խորացման չափազանց ցայտուն օրինակ է ազգային հարցի ծայրահեղ սրումը և ազգային շարժումների աճը երկրում։ Քաղաքական այս երևույթը մեծապես բարդանում էր սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման ֆոնի վրա։ Օսմանյան կայսրության իրականության հիշյալ յուրահատկությունը, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, բացատրվում է նրանով, որ «քաղաքակրթության առաջընթացի» կրողը հանդիսանում են ոչ թե թուրքերը, այլ մյուս ազգերի ներկայացուցիչները։ «Հենց սլավոնական և հունական բուրժուազիան է հանդիսանում բոլոր քաղաքներում և առևտրական կենտրոններում հենարանն ամեն մի տեսակի քաղաքակրթության, որն իսկապես թափանցում է երկրից ներս»[1]։

Գլխավորապես քրիստոնյա ժողովուրդներն էին տոն տալիս տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը, որը թուրք վերնախավը դիտում էր որպես այդ ժողովուրդների դիրքերի ամրապնդում ի հաշիվ Օսմանյան կայսրության թուլացման։ Ինչպես նշում է Ֆ. Էնգելսը, թուրքերը, օգտագործելով «քաղաքացիական և ռազմական պաշտոնում իրենց մոնոպոլիան»[2], ձգտում էին խեղդել հպատակ ժողովուրդների կողմից ինքնուրույնություն ցուցաբերելու ամեն մի փորձ՝ թե՛ քաղաքականության և թե տնտեսության բնագավառներում։ Դեռ ավելին, թուրք վերնախավն անում էր ամեն ինչ, որպեսզի ձուլի, թուրք և մահմեդական դարձնի իր հպատակ այլադավան ժողովուրդներին։ Դժբախտաբար այս հարցում նա հասավ որոշ հաջողությունների։ Այդ բանը վկայող փաստերը չափազանց շատ են և հաճախ դրանք ունեցել են ողբերգական երանգ։ Բերենք միայն մի կարևոր փաստաթուղթ, որը բազմակողմանիորեն բնութագրում է տիրապետող շրջանների ազգային քաղաքականությունը։ Այն պատկանում է թուրք հայտնի ռեֆորմատորներից մեկի, երբեմնի մեծ վեզիր և արտաքին գործերի մինիստր Ֆուադ փաշայի գրչին։ 1869 թ. նա գրում է իր քաղաքական կտակը, որը հասցեագրված էր սուլթան Աբդուլ Ազիզին՝ Աբդուլ-Համիդի հորը։ Այդ կտակում, արձանագրելով իր հարևաններից Օսմանյան

---

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 25.

[2] Նույն տեղը։

կայսրության ետ մնալու հանգամանքը և նրա անկման ռեալ վտանգը, Ցուադ փաշան գտնում էր, որ «զարհուրելի աղետը հեռացնելու համար» սուլթանը պետք է «անցյալից անջատվելով մեզ դեպի մի նոր կյանք առաջնորդի»։

Այդ նոր կյանքի ուղին նա տեսնում էր Եվրոպային մերձենալու, մեծ պետությունների օգնության վրա հենվելու, Ռուսաստանին չեզոքացնելու մեջ։ Ներքին քաղաքականության բնագավառում նա խորհուրդ էր տալիս փոխել բոլոր «քաղաքական և քաղաքացիական հաստատությունները»։

Այնուհետև նա «վերածնության մեծ գործը» իր ավարտին հասցնելու և «իսլամությունը փրկելու» համար առաջարկում էր ամրապնդել կայսրությունը՝ բարենորոգումների միջոցով։ Վարչական և տնտեսական կարգի ռեֆորմներից բացի, նա չափազանց կարևոր էր համարում հետևյալը. «Ներքին գործերի մասին մեր բոլոր ջանքերը պետք է ձգտեն մի նպատակ միայն, այն է՝ մեր ցեղերի համաձուլումը։ Առանց այս համաձուլման մեր կայսրության միությունը ինձ անկարելի է թվում»։

Այնուհետև, Ցուադ փաշան մեծապետական օսմանիզմի դիրքերից ելնելով, գնահատում է առանձին հպատակ ժողովուրդների պատմական դերը և յուրովի տալիս է նրանց ազգային պայքարի նշանակությունը։ «Պետք չէ,— գրում է նա,— որ մոռանանք Հունաստանը՝ ինքնին անկարևոր մի երկիր, բայց ձանձրացուցիչ գործիք մի (որևէ) թշնամի պետության ձեռքում... Մեր քաղաքականության նպատակը պետք է լինի, հնարավոր չափով անջատել հույները մեր մյուս քրիստոնյաներից։ Ամեն բանից ավելի՝ մենք պարտական ենք բուլղարներին հեռացնել հույն եկեղեցու տիրապետությունից՝ առանց նրանց կցելու ռուս կամ հռոմեական կղերականության»։ Նույն ոգով նա շարունակում է թվարկել բոլոր այն ցավոտ խնդիրները, որոնք կապված են փոքր ժողովուրդների պատմական բախտի ու պայքարի հետ։ «Մի Մոնթենեգրո (Չեռնոգորիա— Հ. Ի.), մի սերբիական իշխանություն, մի հայկական թագավորություն, չունենալով ամենափոքր օգուտ ոչ իրենց և ոչ մարդկության, կարող են առավել կամ նվազ ցնորական պետություն լինել...»։ Նրա կարծիքով, չափազանց վտանգավոր են ինքնուրույն դառնալու ձգտումները, որ ցուցաբերում են փոքրաքանակ ժողովուրդները։

«Մասնավորապես հայերը,— կարդում ենք «Կտակում»,—

հակումն են ցույց տալիս դեպի ոտնձգություն, և խելացիություն է նրանց եռանդը չափավորել, ասպարեզ տալով միայն նրանց, որոնք պարկեշտորեն ընդունում են մեր կայսրության միավոր սկզբունքը»[1]։ Այս փաստաթուղթը պետք է դիտել ոչ միայն որպես գործունեության ծրագիր, այլև պրակտիկ քաղաքականության, կոնկրետ իրավիճակի ամփոփում։ Անշուշտ, իրականությունը շատ ավելի մռայլ ու անողոք է եղել, քան որևէ արձանագրություն կամ հիշատակություն։ Հետևաբար, ազգային իդեալը ներկայացնող և բարենորոգումները բնութագրող այս և նման բազմաթիվ փաստաթղթեր թեև բացարձակ կերպով արտահայտում էին ֆեոդալական վերնախավի ձգտումները, սակայն երկրի դրության իրական պատկերը չէին տալիս նույնիսկ մոտավոր չափով։ Պարզ է միայն, որ բոլոր թուրք ռեֆորմատորները, տասնյակ տարիներ ձգտել են մի հիմնական նպատակի՝ ամեն գնով պահպանելու ռազմաֆեոդալական կայսրությունը, եթե ոչ զենքի ուժով, ապա բարենորոգումների ճանապարհով։ Նրանց պատկերացումների մեջ տեղ չի տրվել ոչ մի ժողովրդի ազգային ձգտումների և բոլոր ոչ թուրք ժողովուրդների պայքարն իրենց ազատագրման համար դիտվել է որպես տիրապետող թուրք ժողովրդի հանդեպ թշնամական ոտնձգություն։

Բերված միտքը ցայտուն կերպով ապացուցվում է Բալկանների նկատմամբ վարվող կենտրոնացման քաղաքականությամբ։ 1864 թ. վերջերին բալկանյան համարյա բոլոր երկրները միավորվեցին այսպես կոչված «Դանուբի վիլայեթի» մեջ։ Այդ քայլն ուղղված էր բալկանյան ժողովուրդների բարձրացող ազգային-ազատագրական շարժումների դեմ։ Սակայն թուրք կառավարողների ջանքերը ոչ միայն Բալկաններում, այլև նվաճված բոլոր երկրներում, ապարդյուն էին, քանի որ իրար արմատապես հակասող՝ տիրապետող և կեղեքվող ժողովուրդների շահերը չէին կարող համընկնել։ Խոսքը, անշուշտ, վերաբերում է ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական ժողովուրդներին՝ արաբներին, ալբանացիներին, լազերին և ուրիշների, որոնք անցյալ դարի երկրորդ կեսերին սկսել էին ապրել իրենց ազգա-

[1] Ֆուադ փաշայի քաղաքական կտակը, «Արոր», 1910, № 6—7, էջ 173—185։

յին զարթոնքը։ Հենց այդ ժամանակ են ասվել Կ. Մարքսի հանճարեղ, ապագան կանխատեսող, հետևյալ խոսքերը. «Քանի դեռ կենսունակ ժողովուրդը կաշկանդված է օտարերկրյա զավթողի կողմից, նա անհրաժեշտաբար իր բոլոր ձգտումները, իր ամբողջ եռանդը ուղղում է արտաքին թշնամու դեմ, և քանի նրա ներքին կյանքը կմնա այդ ձևով ջլատված, նա ի վիճակի չէ պայքարելու հանուն սոցիալական ազատագրման»[1]։ Այդպիսով, ազգային ազատությունն ու անկախությունը սոցիալական պրոբլեմները լուծելու նախապայման են հանդիսանում։ Մինչդեռ հանրահայտ է, որ ազգային հարցի առանցքը Օսմանյան կայսրության վերնախավի քաղաքականության մեջ եղել են մեծապետական շովինիզմի գաղափարախոսությունն ու հոգեբանությունը, որոնցից չկարողացան ձերբազատվել անգամ թուրք առաջադեմ գործիչներն ու ռեֆորմատորները, ինչպես նաև՝ ռեֆորմատորական շարժումն ամբողջապես։

Կանգ չառնելով ազգային քաղաքականության այլ խնդիրների վրա, անհրաժեշտ է նշել, որ նրա բոլոր սկզբունքային հարցերը գրեթե միատեսակ էին հասկացվում ու մեկնաբանվում թե՛ ռեակցիոն և թե առաջադեմ թուրք գործիչների կողմից։ Հասարակական նման երևույթի բացատրությունը հավանաբար պետք է փնտրել թուրք ժողովրդի դարավոր տիրապետությունից եկող հոգեբանության մեջ, որի համար պարարտ հող էին հանդիսանում ոչ միայն հաղթական արշավանքների և նվաճումների արդյունքը ու պատմությունը, այլև մահմեդական կրոնն ու շարիաթը։ Այդ գործոնների ազդեցության նոր արտահայտությունների առկայությունը մեր օրերում և մեծապետական նկրտումների երևան գալը որոշ շրջաններում՝ ցույց են տալիս դարերից եկած գաղափարների ու սովորույթների կենսական ուժը, որի հետ չի կարելի հաշվի չնստել։

Վ. Ի. Լենինը խոսելով Բալկաններում Օսմանյան կայսրության տիրապետության ու ազդեցության մասին, հատկապես նշել է, որ ազգային ճնշումը միշտ էլ հանդիսացել է մեկը «միջնադարի հզոր այն մնացորդներից, որոնք խիստ կասեցնում են հասարակական զարգացումը և պրոլետարիատի աճը»[2]։

Զարգացման ցածր աստիճանին գտնվող ու ետ մնացող եր-

---

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 18, стр. 555.

[2] Լենին Վ. Ի., Երկ., հատ. 22, էջ 188։

կրոնները և ժողովուրդները կապիտալիզմի և ապա իմպերիալիզմի շրջանում, որպես կանոն, դառնում էին առաջավոր ու բարձր զարգացած տերությունների գաղութը, կիսագաղութը, կամ նրանց ազդեցության ոլորտը։ Պատմության տրամաբանական այս ընթացքը հասկանալի է եղել իրենց ինքնուրույնության համար պայքարող ժողովուրդների առաջավոր մասին և հաշվի չի առնվել թուրք վերնախավի կողմից։ Որպես օրինակ բերենք հայ մտավորական Հովհ. Հակոբյանի «Օտար միջամտությունը» խորագրով քննադատական հոդվածը Կ. Պոլսի առաջադեմ թերթերից մեկի՝ «Հայրենիքի» էջերում։

Վերլուծելով թուրք կառավարողների ներքին քաղաքականության հետադիմական էությունը և դրա հետևանքները, հեղինակն ընդգծում է, որ այդ բոլորից տուժել են ոչ միայն հպատակ ժողովուրդները, այլև իրենք՝ թուրքերը։ Կառավարության կողմից գործադրվող բռնություններն ու կամայականություններն արտաքին միջամտության առիթ տվեցին։ Հարստահարությունները, ապստամբություններն ու ջարդերը ֆիզիկապես ոչնչացրին քրիստոնյա ժողովուրդների մի մասին։ Սրա արդյունքը եղավ տնտեսության մեջ գլխավոր ակտիվ տարրի թուլացումը և օտար կապիտալի ազդեցության ուժեղացումը երկրի ներսում, «...Հույները տարր մը էին այս երկրին մեջ,— շարունակում է հեղինակը,— աշխատասեր ու քաղաքակիրթ, կողոպտվեցան, ջարդվեցան, մինչև որ Թուրքիո մեկ մասը իրենց բաժին հանվեցավ։ Թուրքիան կորսնցուց։ Հրեաները նույն պատճառներով աշխարհիս ամեն կողմ սփռվեցան։ Թուրքիայեն գացին և ուր որ հաստատվեցան՝ անհունապես նպաստեցին իրենց նոր հայրենիքին քաղաքակրթությանը...»։

Հոդվածագիրն այնուհետև նշում է Բուլղարիայի ազատագրման կարևորությունը նրա ժողովրդի համար։ Անկախ գոյության «33 տարվա մեջ Դանուբի եզերքները այլևս արյուն ու թալան տեղի չունեցան... Թուրքիա կորսնցուց։ Ու կորսնցուց Բեսարաբիան, Մոլդավիան, Վալաքիան, Սերբիան, Մոնթենեգրոն և Բոսնիա-Հերցոգովինան»։ Հեղինակը հատկապես ծանրանում է հայկական հարցի վրա, ցույց տալով անօրինականությունների ու ջարդերի բացասական հետևանքները։ «Հայերը աշխատասեր ու արտադրող ժողովուրդ մ՚ էին, իրենց բախտին հետ հաշտված ու օսմանյան հայրենիքը յուրացուցած։ Կառավարությունը տարվե տարի ընդարձակ շահ մ՚ ուներ հայկական

տուրքն, առևտրն և ձեռնարկներն։ Տարր մը վերջապես երկրին մեջ ու երկրին մասը, որ կարող էր աստիճանական առաջխաղացմամբ պատվար մը դառնալ օտար տնտեսական արշավանքին ու մրցումին դեմ։ Այս կարևոր հետևությունը և իրական գնահատականը երբեք հաշվի չառան կայսրության կառավարիչները։ Նրանք շարունակեցին և ավելի հաճախ դիմեցին բռնի միջոցների՝ իրենց հպատակների հանդեպ։ «Հայերը կոտորվեցան։ Անոնց հարստությունը, որ երկրին արտադրող դրամագլխին մեկ մասը կկազմեր, կողոպտվեցավ՝ ոչնչացվելու համար։ Ու հետևա՞նքը։ Հետևանքը պարզ է։ Օտարը առանց դրամագլխի, կամ աննշան դրամագլխով Թուրքիա մտավ, ու օտար տնտեսական տիրապետության շրջանին Թուրքիա տարվետարի հայկական արյունին տուգանքը վճարեց։ Ու իր իսկ ժողովուրդին խեղճությունն ու խաղքությունը մնաց ու կմնա»[1]։

Այսպիսի համարձակությամբ ու հեռատես մեկնաբանությամբ «հուրրիեթի»-«ազատության», օրերին, թուրքական իրականության պատկերն էր գծագրում՝ Վահան Թեքեյանի, Երվանդ Օտյանի, Լևոն Բաշալյանի, Արփիար Արփիարյանի և ուրիշների խմբագրությամբ լույս տեսնող «Հայրենիք» լրագիրը։ Համարյա նույն ժամանակաշրջանում գրած «Թուրքիայի իրադարձությունների շուրջը» հոդվածում, Բ. Կնունյանցը ողջունելով երիտթուրքերի հաղթանակը, դրա պատճառներից մեկը համարում էր սուլթանական Թուրքիայի կառավարողների ազգային սխալ քաղաքականությունը։ «Հին ռեժիմը,— գրում էր նա,— բորբոքելով ստրկացված ազգերի ատելությունը, թուլացնում էր պետությունը, որի պահպանմամբ առանձնապես շահագրգռված էին թուրքերը։ Պետության թուլացումը առաջ էր բերել տերությունների միջամտությունը կայսրության ներքին գործերին»[2]։

Բազմազգ, հսկայածավալ կայսրության մեջ ազգային հարցը դարձել էր ամենադժվարին ու հիվանդոտ խնդիրներից մեկը։ Միջնադարյան ձևերով ուժի ու կամայականությունների գործադրումը ավելի էր սրում այն, քանի որ հետզհետե կազմակերպված էին դառնում ազատագրական պայքարի ուժերը և ավելի սիստեմատիկ ու նպատակասլաց՝ դրանց ելույթները։

Թուրքիայի քաղաքական կյանքին քաջածանոթ Գ. Տամի-

1 «Հայրենիք», 4/17, օգոստոսի, 1909, Կ. Պոլիս։
2 Կնունյանց Բոգդան, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 542։

լովը մեր դարասկզբին գրում էր, որ ազգային քաղաքականությունը երկրի համար ուներ «վճռական ազդեցություն ոչ միայն ուրիշ պետությունների հետ նրա պայքարի ելքի, այլև նույն իսկ Օսմանյան կայսրության գոյության համար»[1]։ Վերջինիս բարեկամները և ցավակիցները միանում էին այդ կարծիքին, միջոցներ էին փնտրում, խորհուրդներ տալիս, ամեն կերպ մեղմելու ազգամիջյան հակասությունները, թուլացնելու շովինիստական քաղաքականությունը, զգալով այդ բոլորի հասցրած մեծ վնասները Թուրքիայի առաջընթացին[2]։ Ուղղակի կործանարար էր նրա ազդեցությունը հպատակ ժողովուրդների պատմական զարգացման վրա։ Ինչպես իրավացի կերպով նշել է բուլղարացի գիտնական Ի. Սնեգարովը «Թուրքական ֆեոդալական պետությունը նվաճված ժողովուրդների տնտեսական և կուլտուրական զարգացման ճանապարհին հանդիսացել է **ամենամեծ արգելքը** (ընդգծումը մերն է— Հ. Ի.)։ Հենց այդ պատճառով նրանք երբեք չհաշտվեցին թուրքական տիրապետության հետ, զենքը ձեռքին անընդհատ պայքարում էին հանուն իրենց ազատության»[3]։

Հայ և բալկանյան ժողովուրդների ներկայացուցիչների կարծիքներից հետո բերենք նաև արաբ հեղինակի տեսակետը քըննարկվող հարցի վերաբերյալ։

«Արաբների պատմությունը XX դարում» աշխատության մեջ Ամին Սաիդը թուրքերի տիրապետության ժամանակաշրջանը որակում է որպես հետադիմության ու նահանջի շրջան, երբ «առևտուրը լճացում էր ապրում, գյուղատնտեսությունը հասավ իր անկման, խեղճությունն ու աղքատությունը բարձրացան ահավոր չափերի։ Ավելի վատ բան չէր կարելի հնարել, քան թուրքերի մտցրած կարգը, այսինքն՝ պետական հարկերը գանձելու համար ստեղծած կապալային (իլթիզամ) սիստեմը»[4]։

---

[1] Томилов П. А., Отчет о поездке по Азиатской Турции в 1904 г. СПб., 1907, стр. 4.

[2] Տե՛ս Шахтахтинский М., Кризис мусульманской жизненной способности, Турецкий сборник, СПб., 1909. Шуейби Ахмед, Административное право, Мир ислама, т. I, 1912, и др.

[3] Снегаров И. С., Турското владичество — пречка културното развитие на българския народ и другите балкански народи. София, 1958, стр. 201.

[4] Амин Саид, Восстание арабов в 20 веке, пер. с араб. М., 1964, стр. 15.

Ռեֆորմների փորձերը ոչինչ չտվին։ Եվ միայն այն ժամանակ, շարունակում է հեղինակը, երբ արաբական երկրները բաժանվեցին Թուրքիայից, կարճ ժամկետում հասան ավելի բարձր աստիճանի, քան նրանք գտնվում էին թուրքական տիրապետության շրջանում, իսկ նրանցից մի քանիսը, բոլոր բնագավառներում, հատկապես լուսավորության և արտադրության բնագավառում, հասան ու անցան թուրքերին»[1]։

Կապիտալիստական հարաբերությունների հաղթանակի կողմնակիցները հատկապես լավ էին պատկերացնում ազգային հարցի լուծման անհրաժեշտությունը, թեկուզ բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում։ «Մուրճ» ամսագիրը 1906 թ. իր համարներից մեկում, կանգ առնելով Թուրքիայում տեղի ունեցող դեպքերի, ազգամիջյան բախումների և քաղաքական վիճակի վրա, օրինակ բերելով ռուսական առաջին հեղափոխության փորձը, գրում էր. «Ռուսաստանի մեծ հեղափոխությունը ցույց տվեց նոր ուղի։ Նա ապացուցեց, որ խառն ազգաբնակչություն ունեցող պետություններում առանձին ազգերի կյանքի բարելավումը կախված է ամբողջի ռեֆորմներից և բարելավումից, եթե նրա առանձին մասերը հնարավորություն չունեն բաժանվել և պահպանել իրենց անկախ վիճակը»[2]։ Կյանքը ցույց տվեց, որ ամբողջ կայսրությունում կատարվող բարեփոխումների փորձերը չստեղծեցին ցանկալի առաջընթաց, կամ նորմալ զարգացման պայմաններ։ Ամբողջը, իր հերթին, խանգարեց մասերի, կամ հպատակ ժողովուրդների ու երկրների զարգացումը։ Դեռևս 1858 թ. Պ. Չիխաչևը գրել է. «Թուրքական ազգային արդյունաբերության ներկայիս անկումը բացատրվում է ոչ թե ազգաբնակչության անընդունակությամբ, այլ ավելի շուտ կառավարության հանցավոր անփութությամբ, կառավարություն, որը չկարողացավ խթանել աշխատանքն արդյունաբերության բնագավառում կամ թեկուզ հեռացնել այն արգելքները, որոնք խանգարում էին նրա զարգացմանը»[3]։ Այս տեսակետը բաժանում են ոչ միայն Թուրքիայում տիրող կարգերին քաջածանոթ օտար հեղինակները, այլև իրենք՝ թուրք գործիչներն ու մտավորականները, որոնք իրենց հայրենիքի ետ մնալը համարում էին իշ-

---

1 Амин Саид, նշվ. աշխ. էջ 18.

2 «Մուրճ», 1906, № 7, էջ 119։

3 Чихачев П. А., Великие державы и восточный вопрос, стр. 104.

խանությունների բռնատիրական քաղաքականության և անշնորհքության հետևանք։

Անցյալ դարի վերջի և մեր դարասկզբի հայտնի գործիչներից «Միզան» թերթի տնօրեն և խմբագիր Մուրադ բեյը («Միզանջի Մուրադ») երիտթուրքերի հեղաշրջումից հետո երկրի վիճակը բնութագրում է այսպես. «Աղեկ գիտենանք, որ բռնակալությունը և զուլումը մեռցուցած էին ազգային կյանքը և շարունակ խոադիմելու վրա էինք»[1]։

Աբդուլ-Համիդի ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ ծավալուն աշխատության հեղինակ Օ. Նուրին բոլոր դժբախտությունների աղբյուրը և հետամնացության պատճառները ևս համարում է ներքին գործոնները։ Նրա կարծիքով, հիվանդագին երևույթները թուլացրին կայսրությունը և պայմաններ ստեղծեցին օտարների ներթափանցման համար։

«Ազգը հյուծվում էր,— գրում է Օ. Նուրին,— անիրավություններին, անարդարության, զուլումի և բռնակալության տակ։ Բոլոր պետական հիմնարկությունները գործում էին գողության, բռնության և դաժանության սկզբունքներով։ Բանակի հոգին հանդիսացող սպաների շրջանում կարգապահության նշույլն անգամ չէր մնացել...։ Թե զինվորականության շրջանում և թե այլուր իրավունքը և արդարությունը առանց կաշառքի կամ մեկի բարձր հովանավորության չէր կարող գոյություն ունենալ»[2]։

Թուրքիայի բանվորական կուսակցության նախագահ տիկին Բեհիչե Բորանի կարծիքով, Թուրքիան չկարողացավ առաջավոր երկրների հետ համընթաց քայլել հետևյալ պատճառներով. առաջինը՝ երբ Արևմուտքն ընթանում էր կապիտալիստական հարաբերությունների հաստատման ուղիով, «օսմանյան հասարակությունը ջանքեր էր գործադրում կենտրոնացված ֆեոդալիզմ կառուցելու համար», և երկրորդ, աշխարհագրական հայտնագործումների ու առևտրական հիմնական ճանապարհների տեղափոխման հետևանքով Թուրքիան և Միջերկրականի այլ երկրներ կորցրեցին «անցյալ առևտրական նշանակությունը» և «Անատոլիայի խոշոր առևտրական և արհեստագործական կենտ-

---

[1] «Ազատարար շարժումը բանակին հաղթական մուտքը Ի. Կ. Պոլիս», Գրակ առաջին, Կ. Պոլիս, 1909, էջ 91։

[2] Nuri Osman, Abdulhamid sani ve devri saltanatı. Ist., 1911, s. 11 :3

բոնները հանգեցին և մնացին ետ»[1]։ Ներքին և արտաքին գործոնների միացյալ ազդեցության վերաբերյալ իր կարծիքի մեջ Բ. Բորանը մենակ չէ։ Նրա տեսակետները բաժանում են ուրիշ թուրք հեղինակներ, որոնց մեծ մասը հակված է երկրում բուն դրած չարիքների համար մեղավոր ճանաչել գլխավորապես արտաքին ազդեցությունը։ Այդ համոզմունքն ունի նաև Թուրքական հանրապետության առաջին մարդը»՝ Ք. Աթաթյուրքը։ «Վայրէջքի ու այլասերման ուղիով» կայսրության անկումային երթը նա բացատրում է այն հանգամանքով, որ պետության ղեկավարները կառավարում էին, լսելով իբր դրսի խորհուրդները և երբեմն իրենց քաղաքականությունը կապում էին արտաքին թշնամիների շահերի հետ։ Հետևանքը եղել է այն, որ «Թուրքիան ամեն դար, ամեն օր և ժամ գնում էր վայրընթաց ուղիով և այլասերվում»։ Այնուհետև Ք. Աթաթյուրքը ամփոփում է. «Եթե այդ հետադիմությունը տեղի ունենար միայն նյութական արժեքների բնագավառում, ապա այն չէր ունենա որևէ նշանակություն։ Դժբախտաբար, անկումը դիտվում էր նաև բարոյական ոլորտում։ Անկասկած, այն մեր մեծ երկիրը և մեծ ժողովրդին կորստի հասցնող հիմնական գործոնն էր»[2]։ Թուրքական հանրապետության առաջին պրեզիդենտին կարելի է հասկանալ այսպես, որ երկրի անկումը կապված է եղել վերնախավի բարոյական վարքագծի, կամ նրա քաղաքականության հետ։ Ուրիշ ենթադրություն անելը դժվար է, քանի որ զուտ բարոյական գործոնները առանց հասարակական վերնաշենքի ակտիվ միջամտության, կամ պետական քաղաքականության, չէին կարող այդպիսի լուրջ ճգնաժամի առաջ կանգնեցնել մի հսկայական կայսրություն և նրանում ապրող ժողովուրդներին։ Հետևաբար Ք. Աթաթյուրքը ևս հանգում է այն եզրակացության, որ վճռական է, այնուամենայնիվ, ներքին գործոնների ազդեցությունը։ Ժամանակակից Թուրքիայի տնտեսության պրոբլեմների մասնագետ, սովետական տնտեսագետ Ի. Ալիբեկովը, վերլուծելով կայսրության զարգացման տեմպերը և ընթացքը, նույնպես գտնում է, որ «հենց միայն ներքին գործոնները ինքնին այնքան բազմաթիվ և նշանակալից էին, որ բավական էին ուժեղ

---

[1] Boran Behice, Türkiye ve Sosyalizm Sorunları, Ist, 1968, s. 9.

[2] **Кемаль Мустафа,** Путь новой Турции, т. IV, М.—Л., 1934, стр. 56.

կերպով արգելակելու Թուրքական արդյունաբերության (մենք կավելացնեինք նաև ամբողջ տնտեսության— Հ. Ի.) զարգացումը, եթե նույնիսկ բացակայեին արտաքին ազդեցության գործոնները»[1]։

Այդպիսով, միանգամայն տարբեր ժամանակների, տարբեր դասակարգերի ու տեսակետների ներկայացուցիչներ չարիքի արմատն իրավացիորեն փնտրել են տիրապետող կարգերի և Օսմանյան կայսրությունում դարերով ամրապնդված հասարակական փոխհարաբերությունների մեջ։ Մարդիկ, որոնք կոչված էին կենսագործելու ընդունված օրենքները, կատարելու նշված բարեփոխումները, հենց իրենք էլ խախտում էին, կամ իրենց կամայական գործողություններով պետական այդ փաստաթղթերի արժեքը հավասարեցնում էին դրանց վրա ծախսած թղթի արժեքին։

Թուրքական բռնապետության կողմնակիցներն ու պաշտպանները չափազանց լավ գիտեին իրենց ուժը և լայն հնարավորությունները՝ գործելու ցանկացած ձևով և առանց վարանելու խախտում ու անտեսում էին կառավարական օրենքները։ Դա միանգամայն համապատասխանում էր երկրի տիրապետող խավի շահերին և հաճախ ելնում էր սուլթանի անձից, նրա մերձավորներից, ցեղապետերից, հողատեր-ֆեոդալներից ու իշխանավորներից։ Նախատումները թելադրում էին, առաջին հերթին, Բարձր դռան պաշտոնյաները։ Անթիվ ու անհամար են նման փաստերը ու նրանց նկարագրությունները՝ պատմական և գեղարվեստական գրականության, պալատականների ու պալատի այցելուների հուշագրությունների և պարբերականների էջերում։

Ներենք միայն մեկ պատմական փաստաթուղթ։ Դա Աբդուլ-Համիդի խոստովանությունն է մերձավորներից մեկին, որն արձանագրվել է ցարական Ռուսաստանի ռազմական գործակալ գնդապետ Պեշկովի զեկուցագրում։ «Ես գիտեմ,— ասել է սուլթանը,— որ իմ շուրջը բոլորը թալանում են և նույնիսկ հսկայական հարստություն են դիզում՝ շորթումներով ու կաշառքով։ Բայց Թուրքիայում չկան մարդիկ, որոնք, եթե հանգամանքները նրանց թույլ տան, չեն թալանի. ես նախընտրում եմ իշխանության ղեկին թողնել հին թալանչիներին։ Նրանք արդեն հարուստ

[1] Алибеков И. В., О причинах промышленной отсталости полуколониальной Турции; «Etudes Balkaniques», 1975, № 3, p. 86.

են, գիզել են իրենց հարստությունը և եթե շարունակում են թալանել, ապա այնպիսի չափերով, որոնք ինձ հայտնի են։ Փոքր կաշառք նրանք չեն վերցնի։ Իսկ նոր անձնավորությունները քաղցած են, չբավարարված ախորժակով և, իհարկե, թալանելու են ավելի շատ, մինչև որ չկշտանան։ Սրանց տեղափոխումը ահա այս պատճառով կվատթարացնի ստեղծված իրավիճակը, և միաժամանակ ինձ համար կլինի անպատ, որովհետև հներին ես իմ ձեռքում եմ պահում հենց նրանով, որ դրանց անցյալը ինձ հայտնի է և որևէ բան պատահելու դեպքում նրանք չափազանց շատ բան կկորցնեն։

Իրենց կամքից անկախ նրանք ինձ հավատարիմ են։ Մինչդեռ նոր մարդկանց հավատարմությանը, եթե նրանք կորցնելու բան չունեն, ես վստահել չեմ կարող...»[1]։

Բացարձակ իրականությունն արտահայտող և դրանով էլ ոչ սովորական այս հայտարարությունն ունի իր ներքին տրամաբանությունը։ Կայսրության առաջին դեմքը, առանց ծածկելու, բնութագրում է իր ղեկավարած պետական վարչական սիստեմը և իր վերաբերմունքը դեպի նմանօրինակ բարքերը։

Օգտվելով սուլթանի հովանավորությունից, բարձրաստիճան պաշտոնյաները բացարձակ չարաշահում էին իրենց դիրքը՝ գողանալու, շորթելու և հարստանալու նպատակով։

1905—1908 թթ. աղմկալից գործարքներով հայտնի դարձան սուլթանական կառավարության երեք մինիստրներ։ Դրանցից մեկը Զիհնի փաշան էր, որը զբաղեցնում էր ֆինանսների և հասարակական աշխատանքների մինիստրների պաշտոնները ու եղել էր նահանգապետ մի շարք վայրերում։ Նա «փոքր կաշառք» իսկապես չէր վերցնում ու «կաշառքի նվազագույն չափ էր սահմանել 500 հազար ֆրանկը»։ Ինչպես նշեցին թերթերը, Զիհնի փաշան միայն «Բաղդադի ճանապարհի համար ստացել էր մոտ մեկ միլիոն ֆրանկ»[2]։ Իսկ ծովային մինիստր Ջելալ փաշան նավատորմում և գերատեսչության սիստեմում այնպիսի բարքեր էր մտցրել, որ ծառայողները բացարձակ կերպով գողանում ու վաճառում էին պետական միջոցները և այդ ասպարեզում մրցում իրար հետ։ Վաճառքի էր հանվում ամեն բան, սկսած «կոչումներից, պաշտոններից, հոմքից և վերջացրած

[1] АВПР, ֆ. 178, թ. 28։
[2] «Երկրի ձայնը», 1906, № 10, էջ 8։

շոգենավերի ծխնելույզներով»։ Գնումներ կատարելու և պատվերներ տալու համար մինիստրությանը հատկացված միջոցների ինը տասներորդ մասը յուրացվում էր պատվիրատուների և պատվերներն ընդունողների կողմից, և ինչպես, մինիստրը իր անձնական շահի համար ոչ մի հարմար առիթ բաց չէր թողնում[1]։ Ռազմական արհեստանոցների՝ Թոփհանեի պետ մարշալ Զեքի փաշան պատվերներ էր տալիս և զենքի ու զինամթերքի գնումներ էր կատարում այն երկրներում կամ ընկերություններից, որտեղից առավել կաշառք՝ «բախշիշ» ստանալու հնարավորություններ կային[2]։ Իսկ սուլթանը, հենց Զեքի փաշայի ասելով, շատ լավ տեղյակ էր այդ ամենին և երբեք չէր պատժում իր հավատարիմ անձանց մինչև այն պահը, քանի դեռ համոզված էր այդ հավատարմության առկայության մեջ։ Ընդհակառակը, նա ինքն էր իր մերձավորներին նշանակում ավելի բարձր պաշտոնների, նվիրում նոր ագարակներ, մեծ գումարներ, պարգևատրում շքանշաններով, կոչումներով և այլն։

Իր արբանյակներին եկամտաբեր պաշտոններով առաջխաղացնելու համար սուլթանն ընդլայնեց պետական խորհրդի և ոստիկանության խորհրդի կազմը, առաջինի անդամների թիվը հասցնելով 30-ից 300-ի, իսկ երկրորդինը՝ 20-ից 150-ի[3]։

Հսկայական գումարներ էին ծախսվում սուլթանի պալատի ու պալատականների վրա։ Թագավորական ընտանիքի անդամների հետ միասին վերջիններիս թիվը հասնում էր մոտ 12 հազարի, և դրանց ապրուստի համար ամսական ծախսվում էր կես միլիոն ռուբլի։

Թուրք առաջադեմ գրականության հայտնի դեմքերից Թեֆիկ Ֆիքրեթի հետևորդ և «զուլումի» վերջին տարիների ականատես գրող Խալիդ Զիա Ուշագլըգիլը այդ շրջանը բնութագրել է հետևյալ խոսքերով. «Ամբողջ երկիրը՝ վիլայեթներից մինչև կազաները, ներսից ու դրսից ուտում էին որդերը։ Երկրի բոլոր հարստությունները կառավարությունն ուղղում էր պալատի անկուշտ երախը։ Տառանները ընտրվում էին դավաճաններից, մինիստրները՝ գողերից, ստոր մարդկանց ու սրիկաներին շնորհ-

[1] Տե՛ս «Երկրի ձայնը», 1906, № 5, էջ 5։
[2] Տե՛ս նույն տեղը, № 8, էջ 9։
[3] Տե՛ս նույն տեղը, № 5, էջ 8։

վում էին բարձր պաշտոններ, շքանշաններ էին կախվում համազգեստներից, որոնց ներսում կեղտից բացի ոչինչ չկար...»[1]։

Համաձայն Պ. Չիխաչևի հաշվումների, անցյալ դարի կեսերին սուլթանի և նրա ընտանիքի ծախսերը կազմում էին կայսրության եկամուտների մեկ յոթներորդ մասը, մինչդեռ բոլոր մեծ պետությունների նման ծախսերը շատ ավելի նվազ էին։ Օրինակ, Ռուսաստանում դրանք կազմում էր պետության եկամուտի 1/20, Ավստրիայում՝ 1/30, Ֆրանսիայում՝ 1/50, իսկ Անգլիայում՝ 1/200 մասը[2]։ Վարչական ապարատի չափազանց կարևոր մասն էր կազմում լրտեսների բանակը։ Լրտեսների քանակը Աբդուլ-Համիդի օրոք անցել էր քառասուն հազարից։ Գերմանացի լրագրող Բ. Շտերնը «Հիվանդ մարդը» հոդվածաշարում, նկարագրելով Թուրքիայի իրականության մութ ծալքերը, հատուկ տեղ է հատկացնում ոստիկանության և լրտեսների գործունեությանը։ «Իլդըզ Քիոսկի գաղտնի ծախսերի վերջին ցուցակում,— գրում է նա,— «սուլթանի ապահովության» վրա հսկող 43.000 լրտեսների համար նշանակված է մի քանի միլիոնի հասնող պատկառելի գումար։ Այդքան լրտեսներից 3000-ը միայն պալատի՝ Իլդըզ-Քիոսկի համար են գործում, իսկ մնացած 40.000-ը ցրված են ամբողջ տերության մեջ»[3]։ Հեղինակը նշում է, որ Թուրքերից բացի լրտեսություն են անում հրեաները, հույները, հայերը, ծվրոպացիները և բոլոր նրանք, ովքեր ունակ են նման ստոր և մութ գործերի։ «Այդ մարդկանց պարտականությունն է հսկել մինիստրների, զինվորականների, շեյխերի, սուլթանների, մասնավոր մարդկանց և օտարազգիների վրա, մեքենայություններ հնարել, դավադրություններ սարքել, մեկը մյուսի դեմ գինել, դեսպանատներից լուրեր բերել կամ նրանց տեղեկություններ հաղորդել...

Սատան մատնում է իր տիրոջը, որդին՝ հորը, տերը ծախում է իր ծառաներին, իսկ հայրը՝ որդիներին»[4]։

Նման բարքերը ծաղկում էին հատկապես «զուլումի» տարիներին, թեև լրտեսի աշխատանքը ծանր չէր, բայց ստորացուցիչ էր, այդ պատճառով էլ այն գնահատվում էր բավական բարձր։

---

[1] Фиш Р. Г., Турецкие дневники, М., 1977, стр. 46.

[2] Տե՛ս Чихачев П. А., Великие державы и восточный вопрос, стр. 191.

[3] «Մուրճ», 1905, № 9, էջ 98։

[4] Նույն տեղը։

Եթե Թուրքիայում կար մի պաշտոն, որի համար տերությունը վճարում էր կանոնավոր ու ժամանակին, դա լրտեսությունն էր։ Ե. Օտյանը տվել է լրտեսի արգահատելի կերպարը, որից «ամեն մարդ կվախենար ու կրցածին չափ խույս կուտար, որովհետև գիտեին, թե վայելած կայսերական ամեն մեկ շնորհները անլուր մատնության մը կամ ստորին լրտեսության մը վարձքն էին»։

Այդ տիպի մարդը «գիտենալով իր աղդած սարսափը, ինքզինք կը պարտադրեր ամեն ընտանիքներու, որոնց տունը կմըտնար կնլլեր անպատկառ աներեսությամբ մը և ամենքը ստիպված էին կեղծ մեծարանքով պատվել զինքը»[1]։

Ահա այսպիսին էր թուրքական վարչական ապարատի կարևոր պաշտոնեություններից մեկի պատկերը, որի գործելակերպը բնորոշ էր ամբողջ հիերարխիայի համար։ Լրտեսների կողքին և նրանցից բացի, գոյություն ուներ ժողովրդական մասսաների ճնշման ու անիրավությունների մի ուրիշ օղակ՝ օրենքի պահապանների ու գործադրողների, ժանդարմների (զապթիե) ու ոստիկանների բազմությունը։ Քիչ չէին անօրինական գործառնությունները, որոնք տեղական իշխանությունները հանձնարարում էին կատարելու հենց ոստիկանին, գիշերվա պահապանին, կամ թաղայինին։ Սրանք կանոնավոր կերպով ռոճիկ չէին ստանում և որպես կանոն կապված էին գողերի, ավազակների ու տարբեր տիպի հանցագործների հետ, որոնց օգնելու համար, հաճախ ունեին ավարի ու թալանի իրենց բաժինը։ Ստեղծվել էր բավական սերտ ու միայուն ընկերակցություն՝ քրեական հանցագործների, ոստիկանության և այսպես ասած «սպասարկողների» միջև։ Վերջինները՝ գիշերապահ-բեկչիները, հրդեհաշեջ-թուլումբաջիները, նավակների տերերը կամ քայըքչիները, հըռչակավոր համբալները, բոլորը օգտագործում էին յուրաքանչյուր առիթ, որպեսզի ապահովեն իրենց նյութական շահը։

Բ. Շտերնը հենց նման գործողությունների համար էլ դրանց բոլորին անվանել է «կես ոստիկանություն»։ Նրա տեղեկությունների համաձայն «սպասարկողների» ամեն մի խումբ Կ. Պոլսում բաղկացած էր մի քանի հազար մարդկանցից։ Անհրաժեշտության դեպքում դրանք գործում էին փոխադարձ համաձայնությամբ, և որովհետև սպասարկման վարձատրությունը

[1] Օտյան Երվանդ, Երկերի ժողովածու, հատոր հինգերորդ, Երևան, 1962, էջ 42—43։

շատ չնչին էր, նրանք աշխատում էին գողանալ, հրդեհել և ապա թալանել, որպեսզի ձեռնունայն տուն չվերադառնան։ Բնակչության այդ ցածր խավի կատարած դերը Թուրքիայի քաղաքների առօրյա կյանքում, նրա ազդեցությունն այնքան նշանակալից է եղել, որ անցյալ դարի կեսերին դրան անդրադարձել են նույնիսկ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ «Օսմանյան Թուրք ազգաբնակչության գլխավոր պատվարը...,— գրել են նրանք,— հանդիսանում է Կ. Պոլսի և մի քանի խոշոր այլ քաղաքների խաժամուժը։ Մեծ մասամբ թուրքական ծագում ունեցող այդ խաժամուժը, չնայած այն հանգամանքին, որ իրենց աշխատանք տվողները գլխավորապես քրիստոնյա կապիտալիստներն են, նա խանդոտ կերպով պաշտպանում է իր երևակայական գերազանցությունը և անպատիժ կերպով վայրագություններ կատարելու իր ռեալ իրավունքը»[1]։ Կ. Մարքսի կարծիքով, կայսրության մայրաքաղաքում և մյուս կարևոր կենտրոններում արևելյան բարբարոսության և ժամանակակից քաղաքակրթության համակեցության հետևանքով է, որ «Թեոկրատական կայսրության այդ կենտրոնը եվրոպական պրոգրեսի համար դարձավ լուրջ արգելք»[2]։

Կենտրոնի օրինակով էին գործում տեղական իշխանությունները։ Նրանք ևս կողոպտում էին պետական դրամարկղը, թալանում ժողովրդին, բացարձակ կերպով զբաղվում կաշառակերությամբ, կատարում անօրինականություններ, բայց երբեք չէին պատժվում։ Միայն պետք էր կատարել իրենց պետերի և բարձրաստիճան իշխանավորների կամքը, աշխատել նրանց գոհացում տալ և հավատարիմ լինելու տպավորություն թողնել։

Եթե նման գործելակերպը բավարարում էր ավելի բարձր իշխանավորներին, նրանք մնում էին։ Իսկ եթե չափն անցած կամայականությունների համար ժողովրդի դժգոհությունը այնպիսին էր, որ պետք էր պաշտոնյային տեղափոխել, ապա, որպես կանոն, նրան առաջ էին քաշում և տալիս ավելի բարձր պաշտոն։

Այսպիսի ուղի էր անցել, օրինակ, բազմաթիվ վայրերում նահանգապետի կամ վալիի պաշտոններ վարած Քյամիլ փաշան։ Իր գիրքը չարաշահելու, կաշառք վերցնելու, ցոփ ու շվայտ կյանք վարելու համար 1879 թ. նա հանվեց հերթական պաշտո-

[1] Маркс К., Энгельс Ф., Соч. т. 9, стр. 6—7.

[2] Նույն տեղը, էջ 239։

նից։ Աբդուլ-Համիդն այդ պատիժը համարեց չափազանց և մի քանի ամիս հետո նրան կարգեց պաշտոնյաներ նշանակող հանձնաժողովի նախագահ և ապա վակուֆային տիրույթների մինիստր։ Այդ բոլորից հետո նա չորս անգամ նշանակվեց մեծ վեզիր։ Քյամիլ փաշան եղել է հայահալած քաղաքականության հեղինակներից ու գործադրողներից մեկը և, հավանաբար, այդ պատճառով էլ համարյա մինչև իր կյանքի վերջը (1915 թ.) շոյվել ու խրախուսվել էր թե սուլթանների և թե երիտթուրքերի կողմից։

Մամուլը նշում էր, որ «ավազակությունը կարծես թե տիրապետող ժողովրդի պաշտոնապես ճանաչված արտոնությունն է, որը չի համարձակվում ոնչացնել կառավարությունը, վախենալով, որ կդիտվի ոչ ժողովրդական»[1]։

Մակեդոնիայում 1895 թ. գործում էին 150 ավազակախմբեր, որոնք կատարել էին մոտ 4 հազար զինված գործողություններ, որոնց ժամանակ թալանվել էին մեծ հարստություններ, եղել էին զոհեր։ 1903 թ. մակեդոնական ապստամբությունը ճնշելուց հետո, իշխանությունները սկսեցին ավելի ևս խրախուսել այդ երեվույթը։ 6 ամսում դրանք թալանել ու հրկիզել էին 76 գյուղ[2]։ Արևմտյան Հայաստանի համարյա բոլոր գավառներում ևս գործում էին նման ավազակախմբեր։ Փոխվում էր նրանց կազմը կամ ավազակապետը։ Բայց նրանք մշտապես կային, որպես աշխատավորության ֆիզիկական գոյությանը սպառնացող և նրա հյութը ծծող տզրուկներ։ Դիարբեքիրի վիլայեթի Պալու գավառի 17 գյուղերում միայն 1877 թ. հարստահարություններից, ավազակություններից, գույքի բռնագրավումից, հրդեհներից, անասուններին քշելուց և այլ հետապնդումներից տուժել էին ավելի քան 4 հազար մարդ, գլխավորապես հայեր։ Տուժածների թվում կային ուրիշ քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչներ, ինչպես նաև աշխատավոր քրդեր ու թուրքեր[3]։

Փաստերը վկայում են, որ ռեֆորմների հռչակումը և նոր օրենքների ընդունումը չամրապնդեցին օրինականությունը և չբարելավեցին իշխանության մարմինների գործունեությունը։ Երկրում տիրող սովորույթները ավելի անմիջական ու խոր ազ-

[1] «Вестник Европы», 1903, кн. 4, стр. 694.
[2] Տե՛ս նույն տեղը, գիրք 5, էջ 182։
[3] Տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԴ, էջ 289—337։

գեցություն ունեին տնտեսության բնագավառը հսկելու և ղեկավարելու կարևոր գործում։ Ժամանակակից բազմաթիվ թուրք հեղինակներ քննադատում են իրենց հայրենիքում տիրող նման դրությունը։ Այսպես. Թուրքիայում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը վերլուծող մի աշխատության մեջ նշված է. «Թուրքերի սովորույթների համաձայն ապրելու և մասամբ էլ պետության կառուցվածքի պատճառով, դրամատիրական և առևտրական ասպարեզը օտար էր մնում թուրքերի համար»[1]։

Նման երևույթի ծագումը հիմնավորելու, թերևս և արդարացնելու նպատակով հեղինակը գրում է. «Թուրքերն իրենց տաղանդը զինվորական ասպարեզում էին ցուցաբերում։ Այս մարզում ուղղակի մրցում էին իրար հետ... Իսկ արդյունաբերության և գիտության մարզերում նորություն բերող մարդիկ համարյա թե չունեինք»[2]։

Տիրող խավերի ներկայացուցիչների զավակները նախընտրում էին դառնալ զինվորական, պաշտոնյա, կառավարիչ, բայց չէին ցանկանում աշխատել, տքնել ու չարչարվել դժվարին ու միշտապես բարձր դիրք չերաշխավորող տնտեսական ու կուլտուրական կյանքի ոլորտում։ Մյուս կողմից, ժողովրդի ստորին շերտերի կրոնական ֆանատիզմը, երկրի խոշոր կենտրոններում կշիռ ունեցող խաժամուժի սանձարձակ ու անպատիժ գործողությունները մշտապես բարենպաստ պայմաններ էին ստեղծում պահպանողական ու հետադիմական տարրերի համար։ Այս բոլորի հետևանքով, ինչպես նշում է Ֆ. Էնգելսը, «քաղաքակրթության ուղու վրա կանգնելու թուրքական կառավարության բոլոր փորձերը հանգում էին անփառունակ կործանման...»[3]։

Թուրքական իրականությանը և երկրին քաջածանոթ Պ. Չիխաչևը, որը երկրում իր գործունեությունը սկսել էր 1838 թ. ռուսական դեսպանատան կցորդի պաշտոնում և ավարտել այն 1858 թ., որպես գիտնական ու ճանապարհորդ, Թուրքիայում տեղի ունեցած բարեփոխությունների փորձերը գնահատում է հետևյալ կերպ. «Եթե 20 տարվա ընթացքում,— գրում է նա,— չնայած ամենավճռական դեպքերի թելադրանքին, չնայած ամե-

[1] Türkiye'de sermaye piyasasının kurulması, Ist., 1964, s. 54.

[2] Նույն տեղը, էջ 55։

[3] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 6.

նահանդիսավոր խոստումներին, Թուրքական կառավարությունը չկատարեց ոչ մի քայլ՝ քաղաքակրթության խոշոր հարցերի լուծման և սոցիալական կարգավորման ճանապարհին, այդ տեղի ունեցավ ոչ այնքան այն բանի հետևանքով, որ «չէր ցանկանում», այլ նրա համար, որ «չէր կարողանում» և երբեք չի կարողանա...»[1]։

Թանզիմաթի հետևանքով երկրի ղեկավարման մեջ բուրժուական տարրերի թափանցումը որոշ դրական ազդեցություն ունեցավ պետական գործերի վրա։ Թանզիմաթի հիմնական օրենքներից հետո սկսվեց մի ժամանակաշրջան, երբ իրար հետևից լույս աշխարհ եկան պաշտոնական փաստաթղթեր, որոնք ամենից առաջ ընդլայնեցին մասնավոր սեփականության սահմանները և օրինական տեսք տվեցին նրա ապահովության գործին։ Այսպես, 1858 թ. ընդունվեց հողային կոդեքսը, որը չափազանց կարևոր էր գյուղատնտեսական մեծ երկրի համար։

Կոդեքսը որոշակի դարձրեց մասնավոր սեփականատերերի իրավունքները, զգալիորեն ավելացնելով դրանց թիվը։ Մեկ տարի անց օրենք ընդունվեց հողի և անշարժ գույքի վերաբերյալ ժառանգական իրավունքի մասին։ 1871 թ. օրենքը սահմանեց անշարժ գույքի վաճառքի կանոնները։ Այս օրենքները և մի շարք որոշումներ ու կարգադրություններ հետզհետե ամրապնդեցին բուրժուական փոխհարաբերությունները ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական (թուրքերի, արաբների և այլն) ժողովուրդների մոտ։ Թանզիմաթից հետո, հատկապես երկրի խոշոր կենտրոններում, բավական հզորացած այլազգի բուրժուազիայի կողքին սկսում է ձևավորվել թուրք ազգային բուրժուազիան և տարբեր խավերից սերված թուրք մտավորականությունը։

Այդ տեղաշարժերի քաղաքական հետևանքներից մեկն էր «Երիտասարդ օսմաններ»* ընդհատակյա կազմակերպության երևան գալը։ Այդ կազմակերպությունն ընդգրկեց թուրք մտավորականության առաջավոր ներկայացուցիչներին։ Նրա ղեկավարներն էին թուրք առաջին «լուսավորիչներ» Իբրահիմ Շինասին, Նամըկ Քեմալը, Զիա բեյը, Ալի Սուավի էֆենդին և ուրիշ-

[1] Чихачев П. А., նշվ. աշխ., էջ 12։

* Այժմ ընդունված է նրանց կոչել «երիտասարդ թուրքեր»՝ շարժման հենց սկզբից, տե՛ս Петросян Ю. А., Младотурецкое движение, М., 1971.

ներ։ Շարժման հոգևոր հայրը հանդիսացավ ժամանակի խոշոր պետական գործիչ Ահմեդ Միդհատ փաշան։

Ցու. Պետրոսյանը գտնում է, որ Օսմանյան կայսրությունում XIX դ. «երկրորդ կեսից սկսվում է բացարձակ քաղաքական պայքար՝ ֆեոդալամիապետական ռեժիմի դեմ։ Պայքարի նպատակն էր՝ ստեղծել քաղաքական այնպիսի անհրաժեշտ պայմաններ, որոնք կապահովեին երկրի տնտեսական ու կուլտուրական առաջընթացը և նրա զարգացումը կապիտալիստական ուղիով»[1]։

Այսուհանդերձ, նման զարգացման հնարավորությունները, ինչպես վերևում նշվեց, չափազանց սահմանափակ էին, հենց մահմեդական ռազմաֆեոդալական թեոկրատական պետության առկայության և նրա հետադիմական բնույթի հետևանքով։ Այդ պետության քաղաքացիական պատմությունը «հիմնված էր կրոնական դոգմաների վրա», որոնք արգելում էին այլադավան ժողովուրդներին դնել «մահմեդականների հետ նույն պայմանների մեջ»։ Այս պահանջից հեռանալը նշանակում էր «իսլամի հավատամքի խորհրդանիշի հիմնական սկզբունքի խախտում»[2]։ Այսպես է որակում մահմեդական օրինականությունից դուրս գալու անգամ մտայնությունը թուրքական իրականության քաջածանոթ անգլիացի հոգևորական Մ. Մաքքոլը։ Մասնագետների կարծիքով, նույնիսկ սուլթանը՝ մահմեդականների հոգևոր և քաղաքական միահեծան պետը, պետության ու եկեղեցու ղեկավարը, իրավասու չէր խախտելու իսլամի հիմնական սկզբունքը։ Սովորույթ և միաժամանակ օրենք հանդիսացող այս կարգը և մահմեդականների ու քրիստոնյաների բախտը հավասարապես տնօրինող սուլթանի կառավարության քաղաքականությունը՝ տնտեսական, քաղաքական և կուլտուրական ասպարեզներում, մշտական բախումներ էին ստեղծում տարբեր կրոնների պատկանող ժողովուրդների շահերի միջև, մշտապես դանդաղեցնելով ամբողջ երկրի զարգացման ընթացքը։ Բոլոր դեպքերում իսլամը հանդես էր գալիս որպես իր հետևորդների տիրապետությունն ապահովող զենք, որը, Կ. Մարքսի արտահայտությամբ, «անհավատներին հայտարարում է օրենքից դուրս և ստեղծում է մահմեդականների ու անհավատների միջև անընդհատ թշնամության վիճակ»[3]։

---

[1] Պետրոսյան Ցու. Ա., նշվ. աշխ., էջ 309։

[2] Макколь М., Султан и державы, СПб., 1897, стр. 156.

[3] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 10, стр. 167.

Իրերի նման դրությունը ֆրանսիացի արևելագետ-պատմաբան Պ. Ժանտիզոնը համարում է «մահմեդական իրավունքի խոշոր թերությունը», որը «բոլոր սոցիալական խավերին պետության մեջ միավորելու փոխարեն, անց է կացնում սահմանափակումներ՝ հավատացյալների ու անհավատների միջև։ Այնուհետև նա հայտնում է այն համոզմունքը, որ վերջինները «երբեք չեն կարող դառնալ քաղաքացիներ, բառիս բուն իմաստով։ Նրանք կմնան ստրուկներ (ilotes)»[1]։ Իրականում օսմանյան Թուրքիայի հպատակ ժողովուրդների վիճակի մեջ համարյա ոչինչ չփոխվեց մինչև կայսրության անկումը։ Գործին չօգնեցին ո՛չ աշխարհի առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչների բազմաթիվ բողոքները, ոչ էլ պետությունների միջամտությունը։ Այդ միջամտությունները, ընդհակառակը, հետըզհետե վատացրին ոչ թուրք ժողովուրդների դրությունը։ Կրոնական հողի վրա տեղի ունեցող հետապնդումներից բացի, նրանք ենթարկվեցին քաղաքական ճնշումների, որոնց հաջորդեցին հալածանքները նաև տնտեսական, մշակութային ու կենցաղային բնագավառներում, իսկ դրանց տրամաբանական ավարտը հանդիսացան կոտորածները։

Իրականությունը հաստատեց Կ. Մարքսի այն դրույթը, որ մահմեդականների, քրիստոնյաների ու այլ կրոնների ներկայացուցիչների իրավունքների հավասարեցման փորձերը ֆեոդալական ուժերի տիրապետության պայմաններում չեն կարող դրական վախճան ունենալ։ Նա գտնում էր, որ դա կարելի կլինի միայն այն դեպքում, եթե մահմեդական պետությունը հնարավոր լինի անջատել եկեղեցուց, իսկ կրոնը՝ քաղաքականությունից։ «Թուրքական պետությունը,— գրել է Կ. Մարքսը,— ինչպես բոլոր արևելյան պետությունները, իր հիմքում ունի պետության ու եկեղեցու, քաղաքականության ու կրոնի չափազանց սերտ միահյուսում, համարյա թե նույնացում։ Թուրքական կայսրության և նրա կառավարողների համար Ղուրանը միաժամանակ հանդիսանում է թե՛ հավատի և թե՛ օրենքի աղբյուր»։

Նման պայմաններում օրենքի առջև բոլոր ժողովուրդների հավասարության պահանջն «անպայման կնշանակեր իրականության մեջ՝ Ղուրանը փոխարինել նոր քաղաքացիական օրենս-

[1] Gentizon Paul, Mustapha Kemal ou L'Orient en marche, Paris, 1929, p. 203.

գրքով, այլ խոսքով կնշանակեր՝ քանդել Թուրք հասարակության կառուցվածքը և նրա փլատակների վրա ստեղծել նոր իրավիճակ»[1]։ Իսկ դա բոլորովին ընդունելի չէր օսմանյան կառավարողների համար։ Նրանց անհամաձայնությունը հաստատող բազմաթիվ փաստերից նշենք մեկը միայն։ Վերջինիս արժեքը պայմանավորված է նրանով, որ այն դուրս է եկել «ռեֆորմատոր» սուլթան Աբդուլ Մեջիդի գրչի տակից։ Ցանկանալով հանգստացնել ռեակցիոն շրջաններին, որոնք վախեցած էին Գյուլհանեյի հաթթը շերիֆի՝ 1839 թ. հրովարտակի հռչակման փաստով, սուլթանը հատուկ ֆերմանում գրում էր. «Մենք լսեցինք, որ մարդիկ, որոնք չեն հասկացել մեր ցանկությունների իմաստը, երևակայում և ենթադրում են, որ մեր պետության ներքին կարգը և քաղաքական վիճակը պետք է փոփոխվեն։ Նման սխալ հավատացումները նպաստում են հասարակական կարծիքը մթագնելուն»[2]։ Ավելի պարզ չես ասի։ Միապետը, որը ղեկավարում էր երկիրը Թանզիմաթի ժամանակաշրջանում, հավատացած էր, որ բարեփոխումները կայսրության կայնքում առանձին փոփոխություններ չէին մտցնելու։

Այդ տեսակետը բաժանում էին բոլոր փոքր ու մեծ կառավարիչները, կայսերական բոլոր պաշտոնյաները և հատկապես իսլամ հոգևորականությունը։ Կ. Պոլսի ռուսական դեսպանատան երկար տարիների թարգման Ա. Մորդտմանը գրել է, որ իմամները, մոլլաները, մյութեվելլիները, խոջաները, դերվիշները, մեդրեսեների ուսանող-սոֆթաները բացարձակ կերպով դեմ էին դուրս գալիս Թանզիմաթին, և նրանց համար հատկապես անհամատեղելի էր մահմեդականների և «գյավուրների» իրավահավասարության դրույթը[3]։

Միգուցե հենց այդ պատճառով էլ բազմաթիվ, մանավորապես մայրաքաղաքից հեռու գտնվող վայրերում Թանզիմաթի ռեֆորմների վերաբերյալ ոչինչ չէր հաղորդվում ժողովրդին՝ գլխավորապես մահմեդական հասարակությանը։ Թանզիմաթի հակառակորդների շարքերում էին գտնվում նաև քրիստոնյա ժողովուրդների վերնախավը և հոգևորական ղեկավարները։ Այսպիսով, բոլոր նրանք, որոնց շահերին համապատասխանում էր

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 10, стр. 130.

[2] Engelhardt Ed., La Turquie et le Tanzimat..., Paris, 1884, t. I, p 5

[3] Տե՛ս Новичев А. Д., История Турции, Л-д., 1978, т. IV, часть третья, стр. 91.

կայսրությունում տիրող իրավիճակը, դեմ դուրս եկան թանզիմաթին։

Ռեֆորմների կենսագործման ճանապարհին լուրջ արգելք պետք էր համարել երկրի ղեկավարների (Մուստաֆա Ռաշիդ, Ալի և Ֆուադ փաշաներ և ուրիշներ) այն կարծիքը, որ ոչ մի բարեփոխություն չպետք է թուլացնի Օսմանյան կայսրության հիմքը հանդիսացող թուրքերի ղեկավար դերը և իսլամի ու շարիաթի ազդեցությունը։ Նույնիսկ ընդդիմադիր տարրերը և նրանց ամենածախ թևում գտնվող գործիչները չէին կարողանում ձերբազատվել ազգայնական ու կրոնական գաղափարախոսության սահմանափակ մոտեցումից։ Խոսելով «երիտասարդ օսմաններ» հոսանքի լիդերի՝ Ալի Սուավիի և նրա «Մուհբիր» թերթի մասին, սովետական թուրքագետ Ա. Ժելտյակովը գրում է. «Լուսավորության և կուլտուրայի վերափոխման օգտին ելույթ ունեցող «Մուհբիրը» միաժամանակ կոչ էր անում **խստորեն** հետևել (ընդգծումը մերն է— Հ. Ի.) իսլամի դոգմաներին, իսկ հասարակական կյանքում և կենցաղում՝ հին սովորություններին»[1]։

Նույն հեղինակը մեկ այլ աշխատության մեջ նշում է, որ Ալի Սուավիի քաղաքական տեսակետների բնորոշ կողմը այն էր, որ նշված բարենորոգումները մտցնելու և դրանք հիմնավորելու անհրաժեշտությունը քարոզելիս նա պահանջում էր «ելակետ ունենալ իսլամի պատմությունը, հենվել Ղուրանի ու շարիաթի դոգմաների վրա»[2]։

Մինչդեռ, բազմաթիվ աշխատությունների մեջ խոսվում է Օսմանյան կայսրության տնտեսության ու կուլտուրայի զարգացման դժվարությունների մասին և շրջանցվում կամ անբավարար ուշադրություն է դարձվում գաղափարական-կրոնական գործոնի ազդեցության վրա։ Մեր նկարագրած ժամանակաշրջանից նույնիսկ մեկ դար հետո էլ Արևելքի մի շարք երկրներում մենք ականատես ենք այդ գործոնի հաճախ վճռական նշանակությանը՝ հատկապես սոցիալական ու քաղաքական խնդիրների լուծման բնագավառներում։ Այդպիսով, վերնաշենքի ազդեցության վերաբերյալ մարքս-լենինյան տեսությունը նորից ու նորից հաստատվում է հասարակական կյանքի պատմության անցյալի ու մեր օրերի փաստերով։

---

[1] Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции, М., 1972, стр. 109.

[2] «Народы Азии и Африки», 1972, № 3, стр. 136.,

Այդ երևույթի ցայտուն օրինակ է հենց Օսմանյան կայսրությունը, որի վերնաշենքի բացասական ազդեցության մասին խոսվեց բավական հանգամանալից։ Նորից հիշենք, որ Կ.Մարքսը բնութագրելով կայսրությունում տիրող փոխհարաբերությունները և առանձին ժողովուրդների դերը քաղաքակրթության առաջընթացի գործում, նշում է, որ թուրքերի քաղաքացիական ու ռազմական մենաշնորհը երկրի կառավարման մեջ «կդառնա ապագայում անհնար ու թուրքերի ուժը կվերածի թուլության, պահպանվելով միայն որպես արգելք՝ առաջընթացի ճանապարհին»[1]։

Վ. Ի. Լենինն իր հերթին Թուրքիայի անցած պատմական ուղին դիտել է որպես «տևական տանջալից անկում և քայքայում, տանջալից մանավանդ ժողովրդի բոլոր աշխատավոր և շահագործվող մասսաների համար»[2]։ Օսմանյան ռազմաֆեոդալական կայսրության պատմական դերի ու ազդեցության վերաբերյալ կա նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի «Համաշխարհային պատմություն» հրատարակության մեջ տեղ գտած շատ կարևոր ու խտացված հետևյալ գնահատականը. «...Թուրքական լծի տակ ընկած բալկանյան, կովկասյան, արաբական և այլ ժողովուրդների համար այն հանդիսացավ պատմական աղետ (ընդգծումը մերն է— Հ. Ի.), երկար ժամանակ կասեցնելով նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման պրոցեսը։ Թուրք ֆեոդալների նվաճողական քաղաքականությունը, միաժամանակ, ուներ ծայրահեղ բացասական հետևանքներ հենց իր՝ թուրք ժողովրդի համար։ Աջակցելով միայն ֆեոդալական ընտրանիի հարստացմանը, այդ քաղաքականությունն ուժեղացրեց վերջինիս տնտեսական ու քաղաքական իշխանությունն իր սեփական ժողովրդի վրա։ Թուրք ֆեոդալները և նրանց պետությունը, հյուծելով ու քայքայելով երկրի արտադրողական ուժերը, թուրք ժողովրդին դատապարտեցին հետամնացության՝ տնտեսական և կուլտուրական զարգացման ասպարեզներում»[3]։

Ամփոփենք։ Օսմանյան ռազմաֆեոդալական կայսրության վերնախավն իր ձեռքում կենտրոնացնելով ամբողջ իշխանու-

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч. т. 9, стр. 25.
[2] Լենին Վ. Ի., Երկ., հ. 10, էջ 373։
[3] «Всемирная история», М., 1958, т. IV, стр. 544.

թյունը, հենվելով իսլամի գաղափարախոսության ու շարիաթի օրենքների, հին սովորույթների վրա, հետևողականորեն պայքարում էր ֆեոդալական հարաբերությունները պահպանելու համար, ամեն կերպ արգելակելով կապիտալիստական կարգերի զարգացումը։ Մինչդեռ օսմանյան ֆեոդալիզմը, սկսած XVII դարից, ապրում էր հետզհետե խորացող ճգնաժամ և մոտենում էր իր անկմանը։ Հիշյալ երևույթներն արտահայտվում էին թե սոցիալ-տնտեսական, և թե հասարակական-քաղաքական կյանքի բնագավառներում։ Նախ, կայսրության հարստության հիմքը կազմող հողը և նրա ընդերքը միայն իրավական իմաստով ու ձևականորեն էր համարվում պետական սեփականություն։ Փաստորեն հողը գտնվում էր ժամանակին իրենց ծառայության համար այն ստացած զինվորականների, պաշտոնյաների, ռազմաբյուրոկրատական ապարատի այլ ներկայացուցիչների, կալվածատերերի, առևտրականների, վաշխառուների և այլոց ձեռքում։

Քայքայվում էր կայսրության հզորության հիմքը հանդիսացող մեծաթիվ ենիչերական բանակը։ Այլասերված ու կարգապահությունից զուրկ նրա զորագնդերը անցյալ դարի սկզբներին ֆիզիկապես ոչնչացվեցին։ Սակայն ռազմական ուժի վրա հենվելու դարավոր սովորույթը, և հսկայածավալ կայսրությունը պահպանելու խնդիրը, ստիպեցին ստեղծելու նոր բանակ։ Վերջինս շարունակեց մնալ որպես կայսրության հզորության հիմնական աղբյուրը։ Զինվորականները իրենց ձեռքում պահեցին երկրի վարչական շրջանների, պետական մի շարք մարմինների ու կազմակերպությունների ղեկավարությունը.

Այնուհետև, իրենց ազդեցիկ դիրքը պահպանեցին վարչական, մանավանդ ֆինանսական մարմինները և դարերով ստեղծված հարկային քայքայիչ սիստեմը։

Ամեն բան արվում էր կայսրության հնացած վարչական օղակները անխախտ պահելու և բոլոր փոփոխությունները, ըստ էության, կրում էին ձևական բնույթ։ Մինչդեռ կյանքը և արտադրական նոր հարաբերությունները պահանջում էին զարգացման ընթացքին համապատասխանող պայմաններ։ Կապիտալիստական հարաբերությունները դեռևս չափազանց թույլ էին ու չձևավորված և ի վիճակի չէին պատռելու տիրող փոխհարաբերությունների կեղևը։ Սակայն առաջինների բնական դաշնակիցներն էին հետզհետե աճող և սիստեմատիկ բնույթ կրող գյուղացիական և ազգային-ազատագրական շարժումները, որոնք

փրենց հերթին հանդիսանում էին ավատական կարգերի ճգնաժամի արտահայտությունը։

Այսպիսով, XIX դարը Օսմանյան կայսրության ժողովուրդների համար մի հասարակարգից դեպի մյուսը անցնելու ժամանակաշրջանն էր, որի ընթացքում բուրժուական հարաբերությունները չափազանց թույլ տեմպերով, բայց նկատելիորեն ամրապնդում էին իրենց դիրքերը։

Այնուամենայնիվ, օսմանյան ֆեոդալիզմն ու թուրքական կարգերը, որոնք հենվում էին ռազմաբյուրոկրատական բռնապետության և խլամի վրա, դեռևս չափազանց զորեղ էին ու երկրում պահպանում էին իրենց ազդեցությունը։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՀԱՐՄԱՐՎՈՒՄ Է

Օսմանյան կայսրությունը նվաճել և իր սահմանների մեջ էր առել աշխարհագրական չափազանց բարենպաստ դիրք, բնական խոշոր հարստություններ ու մարդկային մեծ ռեսուրսներ ունեցող բազմաթիվ երկրներ։ Դրանց թվին էին պատկանում հին քաղաքակրթության կարևոր կենտրոններ Առաջավոր Ասիան, բալկանյան իշխանությունները, Հունաստանը իր կղզիներով, Հյուսիսային Աֆրիկայի մեծ մասը և ժամանակավորապես գրավված մի շարք այլ երկրներ։ Կայսրության տարածքը հինգ անգամ ավելի էր այսօրվա Թուրքիայի տարածքից։ Կայսրության համար ներքին լճեր էին դարձել Սև ու Մարմարա ծովերը, իսկ Միջերկրականի կեսից ավելին գտնվում էր նրա հսկողության տակ։ Թվում էր, թե ստեղծված էին բնական բոլոր պայմանները մեծածավալ կայսրության տնտեսության ու կուլտուրայի արագ զարգացման համար։

Նշված դրական հանգամանքները ի նկատի ունենալով, Թուրքական պատվիրակության ներկայացուցիչ Օ. Կոյմենը, 1970 թ. Լենինգրադում կայացած տնտեսության պատմության միջազգային 5-րդ կոնգրեսում հայտարարեց. «Զուտ տնտեսական հայեցակետից ելնելով, Օսմանյան կայսրության տնտեսության զարգացման հեռանկարները ոչ վատ էին, ոչ էլ լավ, համեմատած այն երկրների պայմանների հետ, որոնք մինչև 1830 և 1870 թթ. հետո կարողացան դրանք հաջողությամբ իրացնել»[1]։

Ինչո՞ւ Թուրքիան չկարողացավ իրացնել այդ բարեհաջող պայմանները։ Կապիտալիզմն իր զարգացման ընթացքում, ըստ մարքս-լենինյան ուսմունքի, պետք է անցնի երկու շրջան.

---

[1] Коймен О., Империализм свободной торговли. Оттоманская империя, изд. «Наука», М., 1970, стр. 10.

Ց Հ. Գ. Մեհիկյան

«1. Անմիջական արտադրողների բնատնտեսության փոխարկումը ապրանքային տնտեսության և 2) ապրանքային տնտեսության փոխարկումը կապիտալիստական տնտեսության»[1]:

Ընդհանուր ձևով այս ուղին անցել են թե՛ զարգացած և թե՛ բազմաթիվ նախկին գաղութներ ու կախյալ երկրներ, բնականաբար նաև Օսմանյան կայսրությունը: Նշված վերափոխումները տեղի են ունեցել թե՛ գյուղատնտեսության, և թե արհեստների ու արդյունաբերության բնագավառներում:

ա. Ֆեոդալական հարաբերությունների քայքայումը

Կայսրության տնտեսության հիմնական ճյուղը հանդիսացող գյուղատնտեսությունը հարուստ փաստական նյութ է մատակարարում անցման երկու փուլերի պատկերը լիարժեք ներկայացնելու համար:

Հանրահայտ է, որ Արևելքի մի շարք երկրների, ի թիվս որոնց նաև Թուրքիայի, զարգացման վրա վճռական ազդեցություն է ունեցել հողի պետական սեփականությունը:

Մասնագետների կարծիքով, այդ հանգամանքը զարգացման որոշ փուլում սկսում է արգելակել նոր տնտեսական ձեռնարկատիրության տարրերի աճը»[2], կամ բուրժուական հարաբերությունների ձևավորումը:

Հողի պետական սեփականության պայմաններում, ամենից առաջ, ստեղծվել էր այնպիսի վիճակ (միգուցե և հոգեբանություն), երբ նրա խելացի ու նպատակահարմար օգտագործման մեջ հաճախ շահագրգռված չէին ոչ նրա անվանական տերերը, ոչ էլ նրա մշակողները: Այդ բանը ցույց կտրվի կոնկրետ օրինակներով: Այստեղ ուզում ենք միայն նշել, որ կայսրությունում հողի հսկայական տարածություններ մնում էին անօգտագործելի: «Այս երկրին մեջ,— գրում է Ա. Ալպոյաջյանը,— վերլուծելով Վան Լեննեփի նկարագրությունները հողային հարցի վերաբերյալ,— ուր նույն հողին վրա տարբեր ցանք մը կատարելու գրությունը անծանոթ է, ուր հողը առատ է և աշխատող ձեռքե-

[1] Վ. Ի. Լենին, Երկ., հ. 1, էջ 101:

[2] О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.), М., 1962, стр. 367.

րը սակավ, մշակելի հողին մեկ մեծ մասը անհրաժեշտաբար անմշակ կմնա»[1]։

Ըստ 1908 թ. վերջերին ռուսական ռազմական գործակալի ներկայացրած զեկուցագրի, Թուրքիան ի վիճակի էր հացահատիկի միջազգային շուկայում մրցել Ամերիկայի ու Ռուսաստանի հետ։

Մինչդեռ տարաբական հողերի երեք-քառորդը չի մշակվում և նույնիսկ Ստամբուլի մոտակայքում կան ընդարձակ ու ազատ (անմշակ— Հ. Ի.) դաշտեր»[2]։ Հայտնի տնտեսագետ Վ. Թոթոմյանցի կարծիքով, մշակվում էր կայսրության հողերի միայն 10 %-ը[3]։ Գ. Ջիխաչևի հաշվումները հիմք ընդունելով, Ե. Թոփչյանը գտնում է, որ Փոքր Ասիայի օգտագործվող հողերը կազմում էին ընդհանուր տարածության 40 %-ը[4]։ Ռուս լրագրողուհի Ա. Տիրկովան բերում է հողագործության մինիստրության տվյալները, որոնց համաձայն «եվրոպական Թուրքիայի բարեբեր հողերի 3 %-ն է մշակվում», իսկ Տրիպոլիում՝ միայն 0,06 %-ը[5]։

Մեկ ուրիշ ռուս տնտեսագետ գրում է, որ արաբական երկրների, մասնավորապես Միջագետքի ռեսուրսները «իրապես ֆանտաստիկ են, ի նկատի առնելով գլխավորապես դրանց պոտենցիալ հզորությունը, քանի որ այժմ մշակվում է կուլտուրաների համար պետքական հողերի միայն 1/20 մասը»[6]։ Այս տվյալները հաստատում է նաև Բասրայի ռուսական հյուպատոս Ա. Ադամովը[7]։

Բազմաթիվ աղբյուրների ընդհանուր գնահատականն այն է, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը կայսրության գյուղատնտեսության մեջ օգտագործվում էր պիտանի հողային

---

[1] Ալպոյաճյան Արշակ, Պատմություն Եվդոկիո հայոց, Գահիրե, 1952, էջ 1317։

[2] ЦГАВМФ, ф. 898, оп. 1, д. 6, л. 47.

[3] Տե՛ս «Современный мир», 1908, № 10, стр. 20.

[4] Տե՛ս Թոփչյան Ե., Երիտասարդ թուրքերը և հայերը, էջ 38։ Նույնը հաստատում է Խանճյանը իր՝ «Աշխարհագրություն օսմանյան պետության» գրքում, Կ. Պոլիս, 1912, էջ 179։

[5] Տե՛ս «Вестник Европы», 1912, кн. 5, стр. 316.

[6] Кечеджи-Шаповалов М. В., Экономическая Турция, Пг., 1915, стр. 31.

[7] АВПР, Новый турецкий стол, д. 7643, 1904, л. 3, Адамов А., О положении земледелия в Ираке Арабском.

տարածությունների 5—7 %-ը։ Այդ նույնը հաստատում է ակադեմիկոս Պ. Ժուկովսկին, որը Թուրքիայում իրերի վիճակը ուսումնասիրելուց բացի, հենվում է 1927 թ., այսինքն՝ հանրապետական Թուրքիայում անցկացված հողերի պաշտոնական հաշվառման արդյունքների վրա և նշում է, որ օգտագործվող տարածությունները կազմում էին պիտանի հողերի միայն մոտ 5 %-ը[1]։

Այսպիսով, երկրի հիմնական հարստությունը հանդիսացող հողը չափազանց վատ էր օգտագործվում, իսկ դա տնտեսության ցածր մակարդակի արտահայտություններից մեկն էր։

«Օսմանյան ֆեոդալները,— գրում է Խալիս Օքանը,— տնտեսական գործունեությամբ՝ հողի շահագործմամբ և առևտրով չէին զբաղվում։

Հողը հանդիսանում էր տուրքերի աղբյուր։ Իսկ հարստացման գլխավոր աղբյուրը՝ պատերազմներն էին և դրանց հետ կապված ավարը, հարկերը և ստրկությունը...»[2]։

Հողի հարկը սահմանելիս հողատիրոջը երբեք չէր հետաքրքրում, թե հողի որ մասն է մշակվում։ Նա, ամենայն հետևողականությամբ, պահանջում էր որոշակի հողատարածության տուրքը, կամ իրեն հասանելիք գումարը։ Հողային սահմանները մեծ մասամբ հաշվի չէին առնվում, որովհետև մինչև 1913 թ. գոյություն չուներ հողերի սահմանագծում կամ հողաչափություն։ Միայն առաջին աշխարհամարտի նախօրյակին Թուրքիայի Մեջլիսը հայ դեպուտատների առաջարկով օրենք ընդունեց երկրում հողաչափություն մտցնելու, այդ օրենքի կիրառման, հողերի ցուցակագրման և դրանց գնահատման կարգի մասին[3]։

Սակայն պատերազմը խանգարեց իրագործելու այդ օրենքը։

Հողատիրության և հողագործության ձևերը, ինչպես ամենուր, համապատասխանում էին ռազմաֆեոդալական, բյուրոկրատական վերնախավի շահերին։

Ամենախոշոր հողատերերը սուլթաններն էին, նրանց հարա-

---

[1] Տե՛ս Жуковский П. М., Земледельческая Турция, М.—Л., 1933, стр. XXIII.

[2] Окан Халис, Развитие на капитализма в Турция, София, 1961, стр. 18.

[3] Տե՛ս Ленский Н. А., О правовом положении землевладения в Турецкой Армении, Пг., 1916, стр. 13.

ղատները, բարեկամները և մերձավորները։ Ա. Համբարյանի տվյալներով, օրինակ, Աբդուլ-Համիդի արքունական հողերը (սենիէ) կազմում էին 37 միլիոն դյոնում կամ մոտ 3.458 դեսյատին։ Սրանք գտնվում էին Բաղդադի, Բասրայի, Մոսուլի, Հալեպի, Դամասկոսի, Ադանայի, Բեյրութի և Երուսաղեմի վիլայեթների ամենաարգավանդ շրջաններում[1]։ Անցյալ դարի երկրորդ կեսին ընդունված օրենքներն ու կառավարական որոշումները, այնուամենայնիվ, սկսում են հաշվի առնել նաև մյուս հողատերերի իրավունքները։ Քաղաքացիական ընդհանուր օրենսգրքի (մեջելլե) մեջ ձևակերպվում են սեփականության իրավունքների կարևոր դրույթները (գնման ու վաճառքի կարգը, գրավ դնելու, պահպանության հանձնելու, ժառանգականության խնդիրների մասին և այլն), սեփականության պաշտպանության սկզբունքները։ Հրատարակվել էին առանձին օրենսդրական ակտեր, սուլթանի հրամաններ ու կարգադրություններ, որոնք վերաբերում էին հողային օրենսդրությանը։ 1867 թ. ընդունված օրենքով, ժառանգության իրավունքը տարածվում էր տղամարդկանց արյունակից բարեկամների ութ սերունդների վրա։ Ժառանգները ճանաչվում էին սեփականատերեր և վճարում էին պետական հարկեր ու կարող էին վաճառել կամ ուրիշներին հանձնել իրենց պատկանող հողերը։ Այս ամենը, նաև իրավական տեսակետից, արձանագրում էր ֆեոդալական հողատիրության ճգնաժամը։ Նոր հողատիրությունը ծավալվեց գլխավորապես «էրազի միրիե» (ավելի ճիշտ «էմիրիե») կոչվող հողերի վրա։

Անցյալ դարի վերջերին այդ հողերի մեծ մասը պատկանում էր մասնավոր մարդկանց կամ կազմակերպություններին։ Հողային հարաբերությունների խոշոր մասնագետ Դ. Բաքրաձեն նշում է, որ «էրազի միրիե հողերին տիրապետելը Թուրքիայում հողատիրության ամենատարածված ձևն է»[2]։

Վիլայեթների հողային վարչություններին իրավունք էր տրըված որոշել հողակտորի գինը, վաճառքի ենթակա հողակտորները մտցնել կադաստրի (հողային մատյանների) մեջ և վաճա-

[1] Համբարյան Ա. Ս., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, էջ 55։

[2] Бакрадзе Дм., Исторический очерк турецкой системы землевладения, Тифлис, 1889, стр. 20.

ունին, նոր տիրոջը տալ փաստաթուղթ՝ «քոչանս»։ Տեղական իշխանությունների տված հիշյալ փաստաթուղթը պետք է ապագայում փոխարինվեր վերջնական փաստաթղթով՝ քաբուլով, որը տրվում էր Կոստանդնուպոլսի պետական կենտրոնական հիմնարկից «Դեֆտերհանեից»[1]։ Բազմաթիվ տեղերում արձանագրված այս կարգը, որն ըստ ամենայնի ձևակերպված էր թղթի վրա, իրականում ազդեցություն կամ իրավական ուժ չուներ, քանի որ տեղական իշխանությունները, հողատերերը և զանազան «զոռբաններ» հաշվի չէին նստում ոչ մի փաստաթղթի հետ, մանավանդ, եթե այն պատկանում էր ոչ մահմեդականի։ Բավական էր մեկ-երկու կեղծ վկա, որպեսզի նախապես կաշառված դատավորը վճիռ հաներ հօգուտ որևէ ցեղապետի, շեյխի կամ աղայի և ոչ թե հողակտորի անպաշտպան տիրոջ։

Գ. Սրվանձտյանցը վկայում է, որ Խարբերդի «հողերն մեծավ մասամբ բեկերու սեփականությունն էին և թափուն իրենց վրա ըրած քիչ բացառությամբ... Խարբերդի բեկեր կամ հողատերեր կատարյալ ավատներ են... իրենց երկրագործներն ալ կատարյալ ստրուկներ, այնքան ստրկացած էին, որ չէին գիտեր, օգտվում էին արդյոք որևէ իրավունքից»[2]։ Այնուհետև նա գրում է, որ Չարսանճագի 25 աղաներից ամենահարուստը՝ Իսա բեկը, ունի 36 գյուղ և մազրա (մշակելի արտեր, դաշտեր, գյուղից դուրս գտնվող գոմ, փարախ)։ «Անկեց վար ունեցողներ կան՝ 12, 10, 6, 4 և այլն կտոր գեղեր։ Ասոնք բոլորը իրենց գեղերու հողերը իրենց անվան թափու ըրած են առանց բնակիչներին հարցվելու...» Իսկ այնտեղ, որտեղ հողատերերը կամ գյուղացիները թափու ունեն և հարկ են վճարում, միևնույն է, այդ բոլորը «կը գրվին ի հաշիվ աղաներուն, և անոնց անվան քոչանները կը տրվին...»[3]։

Դողան Ավչըօղլուն նույնպիսի վիճակ է նկարագրում «Ուրֆայի և նրա հարավարևելյան վիլայեթներին» մասին խոսելիս։ Այստեղի գյուղերը «դերեբեյների սեփականությունն են թափուով,— գրում է նա։— Ամենաաղքատ դերեբեյն տեր է 3—4 գյուղի։ Կան դերեբեյեր, որոնք ունեն 30—40 գյուղեր և հավա-

[1] ЦГВИА, ф. 400, оп. 1890, д. 36, л. 47.
ЦГИАЛ, ф. 1405, оп. 77, д. 5876, лл. 21—23.

[2] Սրվանձտյանց Գարեգին, Երկեր, հատ. 2, Եր., 1982, էջ 362։

[3] Նույն տեղը, էջ 393—394։

քում են այդ գյուղերի համարյա ամբողջ եկամուտը։ Գյուղացին աշխատում է մի կտոր չոր հացի համար»[1]։

Ա. Ալպոյաճյանը ագարակատեր Պողոս աղա Ասլանյանի ունեցվածքը գրավելու մասին հետևյալն է պատմում. «Թոգատի և Փազար Քէօյի իշխանությունները մեր բարեկամին հողերուն ամենէն արժեքավոր դաշտերը ընտրեցին, հիմնավորելով մահմեդական կեղծ վկաներու վկայության վրա, թե (իբր) երեք տարին ի վեր չէին մշակված, սպառազեն և հաղթանդամ խումբ մը չերքեզներ ղրկեցին, որ այդ դաշտերուն տիրանան։ Այս չերքեզները Պողոս աղայի բնակած տունեն մղոն մը հեռու հաստատվեցան»[2]։ Դրան հետևում են գողությունները, կեղեքումներն ու բռնությունները, որոնց հետևանքով ագարակատերը ստիպված թողնում է իր հողերն ու գույքը և հեռանում։

Այդպիսով, սեփականության իրավունքի հաստատման արշալույսին բուրժուական հարաբերությունների նոր բարձրացող և չափազանց թույլ ծիլերը անմիջապես ենթակա էին դեռևս ամուր ֆեոդալական կարգերի կամայական և անօրինական վերաբերմունքին։ Դրա հետևանքով նրանք ոչնչանում էին, ապագայում նորից երևալու համար, կամ ապրում էին առանց էապես զարգանալու, վտիտ ու անգույն, հաճախ դառնալով հին կարգերի կցորդը։

Հատկապես ծանր էր քրիստոնյա արդյունաբերողի, արհեստավորի, վաճառականի ու հողագործի վիճակը։ Իշխանությունները նրանց համար ստեղծում էին հատուկ դժվարություններ։ Օրինակ, աշխատում էին արհեստականորեն սահմանափակել հողատիրությունը բուլղարների, սերբերի, հույների, հայերի, հրեաների և այլ ոչ մահմեդական ժողովուրդների մոտ, կասեցնել նրանց տնտեսական զարգացումը, կամ կապիտալիստական հարաբերությունների ծավալումը գյուղատնտեսության մեջ։

Ս. Կոլյուբակինը իր ուսումնասիրություններում նշում է, որ Արևմտյան Հայաստանի ու Քրդստանի շրջանների քրիստոնյա բնակչությունը, հատկապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, հետզհետե զրկվում էր իր սեփական հողերից ու գույքից։ Այդ շրջաններում մահմեդականների տնտե-

---

[1] Avcıoǧlu Doǧan, Türkiyenin düzeni, onuncu baski, birinci kitap, s 179.

[2] Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 1317։

սությունների հողաբաժինները կազմում էին միջին հաշվով 60—80 դյոնում, որը 6,5 անգամ ավելի էր, քան քրիստոնյա ընտանիքներն ունեին։ Վերլուծելով հայ հողատերերի և ընդհանրապես գյուղացիների վիճակը, նա գրում էր, որ նրանց հարևան մահմեդականներն «ունեն 10 անգամ ավել հերկվող հողեր, քան հայերը։ Իսկ եթե ըստ ազգային պատկանելության միացնենք հողատերերի խմբերը, ապա նշված հարաբերությունը մեծ չափով կաճի հօգուտ մահմեդական տարրի»[1]։

Հողազրկման ու գույքազրկման պրոցեսը անասելի կերպով արագացավ, հատկապես Արևմտյան Հայաստանում, «համիդիե» գնդերի կազմակերպումից և Սասունի ջարդերից հետո։ Անցյալ դարի 90-ական թթ. երևան եկան քուրդ ֆեոդալների նոր կալվածքներ և ընդլայնվեցին ու ամրապնդվեցին աղաների, բեկերի, շեյխերի և ցեղապետերի տնտեսությունները։

Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքին նվիրված իր բազմահատոր աշխատության մեջ Ս. Յերասիմոսը արձանագրում է մշտապես տեղի ունեցող այդ երևույթը՝ «լավ կազմակերպված և համեմատաբար ավելի զորավոր քուրդ ցեղապետերը թալանում էին հայկական գյուղերը»։ Այնուհետև նա նշում է, որ թուրքական իշխանությունները այդ շրջանների հարկերի գանձումը դրել էին քուրդ վերնախավի վրա։ «Արդյունքն այն եղավ, որ քրդերը պետության հանձնած տուրքի դիմաց, բազմապատիկը հայերից էին հափշտակում»[2]։ Իսկ հայը վճարում էր թե քրդերին և թե թուրք իշխանություններին, որի հետևանքով նրա տնտեսությունը հետզհետե քայքայվում էր և կախյալ վիճակը ուժեղանում։

Ռուսական վերաբնակեցման վարչության պետի օգնական Ա. Տատիշչևը ստեղծված դրությունը գնահատել է որպես «հողային լրիվ խառնաշփոթություն, որը ծագել է թուրքական կառավարության սիստեմատիկ ձգտումով՝ գրավել հայերի հողերը՝ հօգուտ քրդերի»[3]։ Միշտ և ամենուր՝ «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը, ի վնաս ժողովուրդների մերձեցման ու բարեկամության։ Այդ պրակտիկան իրացվում էր նաև հողը բաժա-

[1] Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. 1, ч. 1, стр. 380.

[2] Yerasimos Stephanos, Azgelişmişlik süründe Türkiye, t. III, s. 1007.

[3] ЦГИАЛ, ф. 31, д. 305, л. 43.

նելիս և վերաբաժանելիս։ Իշխանությունները աշխատում էին ցրել քրիստոնյաների հողաբաժինները՝ ամեն մեկին մի քանի հողակտոր հատկացնելով տարբեր վայրերում և համարյա միշտ մահմեդականների հողերի միջև։ Վերջիններիս համար պայմաններ էին ստեղծվում հեշտությամբ յուրացնելու իրենց հարևանների բաժինը, օգտագործելով ամեն պատեհ առիթ։

Ինչպես նշվում է կառավարությանը Կ. Պոլսի պատրիարքի ներկայացրած պաշտոնական դիմումի (Թաքրիր) մեջ, չարդերից հետո հայկական համայնքի ընդհանուր վնասը, մոտավոր հաշվումներով, կազմում է 7000 կտոր հափշտակված հողեր, արոտավայրեր (100 դյոնում և ավելի տարածությամբ), տարբեր տիպի շինություններ ու անշարժ գույք (ավելի քան 100 հազար լիրա արժողությամբ)։ Այնուհետև Թաքրիրում նշված է, որ երկու ամսում պատրիարքարանի կատարած սահմանափակ քննությունները ցույց են տվել, որ միայն Անատոլիայում գրավված են «13 վանք (մի քանիսը իրենց կալվածքներով), 27 եկեղեցի, 16 գերեզմանատուն, նմանապես հայ ժողովրդին պատկանող 18 մեծ և փոքր կալվածներ...»[1]։

Քրիստոնյա ժողովուրդների դեմ պատերազմելիս կամ նրանց շարժումները ճնշելիս, մասնավորապես հայերին կեղեքելիս քուրդ վերնախավի և աշիրեթների օգնության դիմելը եղել է Թուրք ղեկավարների քաղաքականության բնորոշ կողմերից մեկը։ Կ. Պոլսում ռուսական դեսպան Մ. Գիրսը, ամփոփելով Թուրքիայի կառավարության դիրքը Արևմտյան Հայաստանի խնդիրների վերաբերյալ, իր 16.11.1912 թ. զեկուցագրում նշում է, որ սկսած 1890-ական թթ. «Հողային հարցն օրըստօրե սուր կերպարանք է ստանում. հողերի մեծամասնությունը գրավել ու գրավում են քրդերը, իսկ կառավարությունը ոչ միայն չի արգելում, այլև նույնիսկ հովանավորում և աջակցում է այդ գրավումներին»[2]։ Թուրքերի դրդմամբ քրդերի գործելը արձանա-

---

[1] Անատոլուի ռամանյան վիլայեթներում հողային հարցի մասին հայկական պատրիարքարանից 1909 թ. սեպտեմբերի 7 թվով բարձր սադրազամության, ներքին, արդարադատության և դավանանքների մինիստրություններին ներկայացված և մատուցված Թաքրիրի պատճեն, ձեռագիր, էջ 5, ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ։

[2] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)։ Պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 152։

գրված է ոչ միայն փաստաթղթերում, կամ պատմական ուսումնասիրություններում, այլև գեղարվեստական գրականության մեջ։ Հայ և օտարազգի գրողների բազմաթիվ երկերի մեջ նշենք Վ. Պիկուլի «Բայազետ» վեպը, որտեղ նկարագրված են 1877—1873 թթ. ռուս-թուրքական պատերազմի դրամատիկական դեպքերից մի քանիսը։ Ռուս կազակը դիմելով իր սպային, ասում է. «Ճանապարհը հիմիկվա ժամանակներում ծանր է՝ թուրքը մեր դեմ նորից քրդին է կատաղեցնում»[1]։ Իսկ մահմեդական քուրդն իր պարտքն էր համարում կատարելու օսմանյան պետության կարգադրությունները թե պատերազմի պայմաններում և թե խաղաղ ժամանակ, քանի որ դրանց իրագործումն իրեն ևս լայն հնարավորություններ էր ընձեռում վերցնելու, հափշտակելու, թալանելու՝ ստանալու «իր բաժինը»։ Հատկապես ծանր էր աշխատավոր գյուղացիների դրությունը լեռնային շրջաններում և այն դաշտավայրերում, որտեղ գտնվում էին քոչվոր կամ կիսանստակյաց քրդերի ղշլաղներն ու յայլաները։ Այստեղ քուրդ ավագանին գործում էր ավելի ազատ։ Ցեղապետի, բեկի, աղայի, շեյխի կամքը օրենք էր, հակառակ դեպքում նրանք հրաժարվում էին ռայայի հանդեպ իրենց ցուցաբերած «հովանավորությունից» և խեղճերը ենթարկվում էին ավելի սարսափելի կամայականությունների։ Այդ «կարգը» կայսրության գոյության վերջին տասնամյակներին, սկսած հատկապես 1870—1880-ական թթ., բոլորի համար դարձել էր բնականոն երևույթ և ինչպես կենտրոնական ու տեղական իշխանությունները, այնպես էլ հողատերերն ու գյուղացիները համակերպվել էին ստեղծված դրությանը։ Որպես հազվագյուտ օրինակ, Գ. Սրվանձտյանցը նշում է առանձին գյուղեր, որտեղ երիտասարդները զինված պաշտպանում էին իրենց ազատությունը, անձը և ինչքը, իրենք էին հավաքում ու հանձնում պետության հարկերն ու տուրքերը։

Բայց քրդական ցեղերը մեծ մասամբ իրար մեջ բաժանել էին գյուղերը և «յուրաքանչյուրն իր գեղերեն տարեկան տուրք կերթա կառնու, նույնիսկ Ակնա վանքն, և բոլոր գյուղորայք Ակնա, Արաբկիրի Չմշկածագի և այլն»[2]։ Երբ Գ. Սրվանձտյանցը փորձել է բողոքել հարկահավաքների անսանձ գործողությունների դեմ,

---

[1] «Дорога по нонешним времепам не легкая: турка опять противу нас курда бесит». См. Пикуль В. «Баязет»,Л., 1961, стр. 17.

[2] Սրվանձտյանց Գարեգին, Երկեր, հ. 2, էջ 397։

նրանցից մեկը, տվել է իրենց մտածելակերպին շատ բնորոշ պատասխան. «Մենք կը պաշտպանենք և զոհ կուտանք մեր անձը ամուր վճարողներուն, բայց չվճարողներին կողոպտելով, սպանելով սատծո կամքը կը կատարենք»[1]։

Գյուղացիները, այդ «հովանավորության» փոխարեն, պարտավոր էին տուրքերն ու հարկերը մուծելուց բացի, մշակել քուրդ ավագանու հողերը, խնամել անասուններին, կատարել տան ծառայի պարտականություններ։ Այդ ամենից զատ, նրանք հարկադրվում էին սննդամթերքներ, վառելիք և այլ անհրաժեշտ նյութեր հանձնելու պարտավորություններով։ Տիպիկ օրինակ կարող են ծառայել երկու հայ գյուղերի փոխհարաբերությունները երկու քուրդ աշիրեթների հետ։ Վանի վիլայեթի Կյավաշ գավառակի Խորթենց գյուղը ուներ 25 ծուխ և «իր» աշիրեթին տալիս էր տարեկան «50 ոչխար, 625 փութ թխված հաց, 5 փութ յուղ, 120 զույգ բրդյա գուլպա»[2]։ Հարևան Մշկանց գյուղի 13 ծխերը տալիս էին մյուս աշիրեթին՝ «26 ոչխար, 126 փութ հաց, 3 փութ յուղ և 80 զույգ գուլպա։ Իսկ երկու տնտեսություններ, ամառվա ամիսներին, պարտավոր էին հավ և ձու մատակարարել գլխավոր աշիրեթապետին»[3]։ Տարիներով հաստատված վերոհիշյալ փոխհարաբերությունները համարվում էին արդեն բնականոն և ստեղծել էին համապատասխան հոգեբանություն թե՛ քրդերի և թե հայերի մոտ։

Խ. Դաշտենցը «Խոդեդան» վեպում գունեղ ու ճշմարտացի ներկայացնում է նման մի պատկեր։ Քրիստոնյա բնակչության բարեկամ քրդական շեկո ցեղի մեծավոր Ավեսի հաչին Խոդեդանին հովիվ ընդունելիս նրան ասում է. «— Բայց պայման եմ կապում, դու պետք է ընտանիք կազմես։ Քո կինը և երեխաները շաբաթական երկու օր պարտավոր են աշխատել իմ արտերում։ Կինդ պետք է գարնանը և ամռանը քաղհանի իմ արտերը, անծեղներից ու ճնճղուկներից պաշտպանի իմ ցանքը։ Աշնանը նա պետք է գաղպա քաշի ինձ համար, դդում չերտի, շաղգամ հորի, ձմռանը բուրդ գզի ու թել մանի։

— Համաձայն եմ, աղա։

— Դու կլինես իմ հովիվը, բայց, երբ կարիք զգացվի, պար-

---

[1] Սրվանձտյանց Գարեգին, *Երկեր, հ. 2, էջ 397։*

[2] Колюбакин А. М., *նշվ. աշխ, էջ 132—133։*

[3] *Նույն տեղը, էջ 134։*

տավար ես սարից իջնել գյուղ իմ արտերը ջրելու և իմ հունձը արջերից պաշտպանելու համար։ Իսկ ձմռանը դու պետք է իմ տանիքների ձյունը թափես, իմ թավը (տերև) սարից բերես տուն։ Այդ բոլորի դիմաց ես պարտավոր եմ քո կյանքը պաշտպանել վտանգներից։

— Իսկ վա՞րձը։

— Վարձ էլ կստանաս։ Բայց ամենամեծ վարձը էն կլինի, որ ազատ ման կգաս քո պապերի հողի վրա»[1]։

Եվ հային իրավունք է տալիս խոդեդանին հավաքելու հինգ ընկուզենու ծառերի բերքը ու անտառի բարիքները։ Ահա այսպիսին էին ձիավորի և ձիու միասնության պայմանները։ Հային կամ քրիստոնյային մահմեդական մեծամեծները պետք է թույլ տային ապրելու իր հայրենիքում։

Սակայն չպետք է կարծել, որ քրիստոնյա գյուղացիների վիճակից շատ ավելի լավ էր քուրդ ռայաների, թուրք և ընդհանրապես մահմեդական գյուղացիների դրությունը։ Խոսելով արևելյան վիլայեթներում քուրդ ավագանու կողմից գործադրվող բռնությունների ու սոցիալական ճնշման մասին, Դողան Ավչըօղլուն ընդգծում է, որ նրա տիրապետության տարածքում «բնակվող գյուղացին համարվում էր բեյերի հպատակը։ Այդ շրջաններում հողը և գյուղացու արտադրության միջոցները հանդիսանում են աշիրեթի ռեիսների, բեյերի, աղաների սեփականությունը։ Գյուղացին չունի ոչ տուն, ոչ էլ մի թիզ հող։ Որպես մարաբա նա ապաստանում է աղայի, բեյի, աշիրեթապետի հողում...»[2]։ Կայսրության վերնախավն անխնա կեղեքում էր բազմազգ երկրի բոլոր գյուղացիներին։

Վերջիններս, ըստ էության, մինչև XVIII դարը պետական գյուղացիների վիճակում էին գտնվում, քանի որ նրանց դրությունը կարգավորվում էր պետության կողմից։ Այդուհանդերձ, Ն. Տոդորովը հարկ է համարում ընդգծել «գյուղացիների անձնական կախվածության բացակայությունը այն ձևով, որը կարող էր լրջորեն սահմանափակել գյուղացու հնարավորությունը՝ տնօրինելու իր անձը»[3]։ Իրավական առումով այս կարծիքը հիմնավորված է, քանի որ կայսրությունում գոյություն չունեին

---

[1] Դաշտենց Խաչիկ, Խոդեդան, երկր. հրատ. Եր., 1960, էջ 64։

[2] Avcıoǧlu Doǧan, նշվ. աշխ., էջ 178—179։

[3] Тодоров Н., Балканский город, стр. 180.

ճորտատիրական հարաբերություններ։ Սակայն քաջ հայտնի է և այն, որ անձի ազատությունը գյուղացու համար չափազանց պայմանական էր, քանի որ փաստորեն նրա բախտի տերը, ի վերջո, մեծ ու փոքր իշխանավորներն էին։ Երկրի և նրա գյուղերի սոցիալ-քաղաքական իրավիճակն էր որոշում նաև գյուղացու անձնական ազատության խնդիրը։ Այս իմաստով էլ ճիշտ է ցիտվող աշխատության քննադատ, ակադեմիկոս Վ. Գորդլևսկու այն դիտողությունը, որ «ազգաբնակչության իրավական և փաստական դրության մեջ գոյություն ուներ զգալի հակասություն, որ արտահայտվում էր ամենուրեք»[1]։

Գյուղացիությունը գրեթե բոլոր երկրներում ամենաբազմամարդ դասակարգն է։ Օսմանյան կայսրությունում կային ազատ գյուղացիներ, բատրակներ և զանազան աստիճանի կախվածության մեջ գտնվող գյուղացիներ։ Վերջիններիս մեծ մասը կիսրար (օրթակչի) և մարաբա (մարաբա, մըրաբա) գյուղացիներն էին, որոնք որոշ ժամանակով վարձակալում էին կալվածատերերի վարելահողերը։ Մարաբան, ելնելով իր հնարավորություններից, հողատերերից վերցնում էր նաև լծկան անասուններ, գործիքներ, սերմ և նույնիսկ դրամ։ Նա պետք է հողատիրոջը վերադարձներ ստացածի վարձը և հարկերն ու տուրքերը մուծելուց հետո բերքի 1/5-ը, 2/5-ը, 3/5-ը կամ 4/5-ը հանձներ նրան։ Այդ մասերը որոշվում էին հողից բացի գյուղացու վերցրած լծկանով, սերմով և այլն։

«Կիսրար-մարաբաները,— գրում է Ա. Համբարյանը,— այդ բոլոր դեպքերում կալվածատիրական հողի մշակման հետ մեկտեղ կատարում էին նաև նրա տնային ու դաշտային բոլոր աշխատանքները»[2]։ Ա. Համբարյանը ցույց է տալիս գյուղացիների ֆեոդալական կախվածության մյուս ձևերը, որոնք որոշակի կերպով գոյություն ունեին Թուրքիայում։ Այդ ձևերը այսպես կոչված ղաֆիրությունն ու կչլաղությունն էին, և որոշ տեղերում՝ ճորտության դեպքերը։

Ամփոփենք։ Ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով, գյուղացին հիմնականում անձնապես ազատ էր, սակայն սոցիալ-տնտեսական պայմանները, քաղաքական իրավիճակը և գոյություն ունեցող կամայականությունները փաստորեն սահմանա-

[1] «Вопросы истории», 1974, № 11, стр. 191.

[2] Համբարյան Ա. Ս., Ագրարային հարաբերությունները..., էջ 70—71։

փակում էին նրա իրավական ազատությունը։ Վերլուծելով այս բոլոր հասարակական երևույթները և գյուղում տիրող փոխհարաբերությունները, Ն. Բերքեսը գտնում է, որ գոյություն ունեցող սեփականության իրավունքի և հողատիրության խառնաշփոթության, «հարկերի ու պարտքերի առկայության պայմաններում վերացված էր գյուղացիների մեծամասնության տնտեսական վերականգնման հնարավորությունը։ Միջակ հողատերն անգամ չուներ ո՛չ պարտքից ազատվելու, ոչ էլ վարկ ու տեխնիկական օժանդակություն ստանալու հնարավորություն։ Նման պայմաններում երազել անգամ չէր կարելի ժամանակակից գյուղատնտեսական մեթոդների կիրառման մասին»[1]։

Ն. Բերքեսի հաշվումների համաձայն մեր դարասկզբին չիֆտլիկչիները և աղաները, որոնք կազմում էին գյուղատնտեսությամբ զբաղվողների 5 %-ը, տիրապետում էին մշակելի հողերի երկու երրորդին»։ Իսկ գյուղական տնտեսությունների «87 տոկոսին պատկանում էր հողերի 35 տոկոսը միայն»։ Հեղինակի կարծիքով, գյուղացու մեկ շնչին ընկնող հողատարածությունը, միջին հաշվով, կազմում էր կես հեկտար։ Իսկ ստացվող «բերքի մոտավորապես կեսը, հողային ռենտայի ձևով, մարաբաների և օրթակչիների կողմից» տրվում էր հողատերերին[2]։ Արձանագրված են բազմաթիվ դեպքեր, երբ բարեբեր ու մշակելի հողերը դառնում էին անօգտագործելի ու անապատային տարածություններ։ Այսպես, Հայդարանլի քուրդ ցեղապետ Հուսեին փաշան անգլիացի հայտնի ճանապարհորդ Լինչ եղբայրներին բացատրել է, որ իրենց հողերի մի մասը չի մշակվում, որովհետև բերքը դժվար է տեղափոխել կամ արտահանել՝ ճանապարհներ, հաղորդակցության միջոցներ և շուկաներ չլինելու պատճառով[3]։ Իսկ երբ Լինչ եղբայրները Վանա լճի ափին տեղավորված Սաչ գյուղի բնակիչներին հանդիմանում են նրանց աղքատիկ ապրուստի, ցնցոտիներ կրելու, բարեբեր հողերը երեսնիվայր թողնելու մեջ, գյուղացիները պատասխանում են. «Անօգուտ է աշխատելը, քանի որ գյուղացուն թույլ չի տրվում օգտվելու իր աշխատանքի արդյունքներից»[4]։

---

[1] Berkes Niyazi, Iki yüz yıldır neden bocalıyoruz? „Yon", № 1, s. 57
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 56։
[3] Տե՛ս Линч Х. Ф. Б., Армения, Тифлис, 1910, т. II, стр. 27.
[4] Նույն տեղը, էջ 184։

Տասնյակ տարիներ իրերի վիճակը մնացել է անփոփոխ, իսկ առանձին միջոցառումներ լուրջ ազդեցություն չէին կարող ունենալ երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա։

«Կառավարությունը յուր պարտքերի բացը ծածկելու համար,— գրել է Րաֆֆին,— այն պատճառն է հարստահարում նրանց (գյուղացիներին— Հ. Ի.), որ ժողովուրդը շատ չէ ցանում, որովհետև արդյունքը չէ կարողանում լրացնել այն հարկերը, որ պետք է վճարէ կառավարությանը»[1]։ Այդպիսով, և՛ պետությունը, և՛ կալվածատերը, և՛ վանքն ու հոգևորականը՝ բոլորը տանում էին իրենց բաժինը։ Արդյունքի բաժինը՝ բերքի 75—85 %-ը ընկնում էր հողատիրոջը։ Գյուղացին անգամ բերքառատ տարիներին հազիվ էր կարողանում ապահովել իր ընտանիքի մի քանի ամսվա ապրուստը, ապա ստիպված էր լինում կրկին դիմել աղային կամ որևէ վաշխառուի։

Գյուղացու թշվառ վիճակը աղային չէր կարող ստիպել ազատել նրան իր հանդեպ ունեցած պարտականությունների կատարումից։ Անհրաժեշտության դեպքում նա դիմում էր ուժի, ստիպում էր կատարելու իր կամքը։ Վարդո գավառակում մի քուրդ կալվածատեր 10—12 զինված հրոսակներով տասնյակ գյուղացիների քշել էր իր հանդերը և ստիպել հնձել ու հավաքել խոտը։ Երեք օր գյուղացիները ձրի աշխատել էին և բացի այդ կերակրել կալվածատիրոջն ու նրա մարդկանց[2]։

Մշեցի մի մարաբայի վկայությամբ պարտքերն այնքան շատ էին, որ նա ոչ միայն չէր կարողանում փակել դրանք, այլև ստիպված գրավ էր դրել իր ինչքը։ Պարտատերը նրանից պահանջում էր ապագա բերքի կեսը, աղոր գյուղացին մինչև քաղաք փոխադրել պարտի, և ձմեռն փոխատուի (պարտատիրոջ— Հ. Ի.), ձիերն, գոմեշներն դարմանելու, խնամելու հոգը։ Ասոնցմե զատ, գյուղացին ամառը՝ 2—3 ամիս փոխատուն իր ծառաներով ու մանչերով իր տունն տի հյուրընկալե, և նորա ստեստն ու պետքերն տի հոգա, որպեսզի հունձքի բաժանման ատեն արտը գա և հսկե, որ գողություն չլինի»[3]։

1879 թ. Կարսից դեպի Էրզրում, Մուշ ճանապարհորդելիս, հայ անվանի գրող Աստրպետը նկարագրել է գյուղերում տիրող

---

[1] Րաֆֆի. Երկեր, հատ. 9, 1958, Եր., էջ 91։

[2] Տե՛ս «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԳ, էջ 91։

[3] Հանդես գրական և պատմական, Մոսկվա, 1888, գիրք 1, էջ 288։

աղքատությունը, գյուղացիների չափազանց ծանր կյանքի պայմանները, նրանց կախյալ վիճակը։

Ատրպետը դա բացատրում է այն անասելի թշվառությամբ, որը ստիպում է «ամբողջ ընտանիքով, 10—15 հոգով» աշխատել աղայի հողի վրա, որ գոնե արդյունքի կեսը հասնի իրեն[1]։ Անշուշտ, ավելի զարգացած շրջաններում երկու կողմի համար էլ վճարելիքը որոշակի էր և գյուղացու շահը որոշ չափով պաշտպանվում էր։ Այսպես, Տրապիզոնի վիլայեթում ռենտան (իջար) վճարվում էր մշակվող կուլտուրայի համապատասխան ու պայմանավորված չափով՝ բնատուրքի ձևով։ Բացի այդ, ամեն ընտանիք պարտադիր կերպով, շաբաթական երեք օր աշխատում էր կալվածատիրոջ հողերում։ Ով լծկան անասուն ուներ, պարտավոր էր մեկ օր հերկել, իսկ մյուս օրը ցանել։ Ձի ունեցողը պետք է աղայի ընտանիքը տաներ յայլա և վերադարձներ տուն և այլն[2]։

Ֆեոդալական վերնախավն օգտագործում էր շահագործման բոլոր ձևերը՝ կոռն ու բեգյարը, այսպես կոչված անգարիան, որը Հ. Աճառյանը մեկնաբանում է որպես «ձրի կամ բռնի աշխատություն»[3], հարկադիր ու վճարովի աշխատանքը՝ զուգահեռաբար և այլն։ Հետզհետե երևան էին գալիս վարձու աշխատանքով ապրող մշակներ՝ բատրակներ։

Այս բոլորի կողքին ամրապնդվում ու ընդլայնվում էր կրոնական կազմակերպություններին պատկանող հողատիրությունը՝ վակֆը։ Մահմեդական երկրներում լինելով ավատական կարգերի սյուներից մեկը, նա շարունակում էր իր բացասական ազդեցությունը գործել կայսրության գյուղատնտեսության զարգացման վրա։ Այդ ազդեցության նշանակությունը կդառնա ակնառու, եթե հիշենք, որ երկրի առանձին շրջաններում վակֆին էին պատկանում հողերի 40—70 %-ը։

Հսկայածավալ վակֆային հողերը բաժանվում էին երեք կարգի։ Առաջինն այն հողերն էին, որոնք ուղղակի պատկանում էին մզկիթներին, ջամիներին և տարբեր տիպի կրոնական կազմակերպությունների։ Երկրորդն այն հողերն էին, որոնց

[1] Ատրպետ— 1878—1928—50-ամյակ, ռեկյա Հորեկյան հայ հեղափոխության, Լենինական, 1927, ձեռագիր, էջ 12։

[2] Տե՛ս «Մուրճ», 1899, № 10, էջ 1214։

[3] Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 183։

եկամուտները ծախսվում էին դպրոցների, գրադարանների և մասամբ հիվանդանոցների, ճանապարհների, ջրամատակարարման և այլ հասարակական կարիքների վրա։ Երրորդը մասնավոր կամ ընտանեկան հողերն էին, որոնք բազմաթիվ ֆեոդալական հարկերից ազատվելու նպատակով հանձնվում կամ վաճառվում էին վակֆներին, հոգևոր կազմակերպություններին վճարելով միայն բերքի 3 %-ը[1]*։*

Առաջին երկու ձևերը գոյացել էին սուլթանի և այլ երևելիների նվերներից, իսկ վերջինն ուներ տիրող կամայականություններից պաշտպանվելու բնույթ, սակայն ձևով նվիրաբերության նման էր։ Ինչպես ճշտորեն մեկնաբանում է օրենսգիրքը, այստեղ «սեփական օգուտն ավելի մեծ դեր էր խաղում, քան կրոնապաշտությունը»։ Տվյալ դեպքում հողատերը կորցնում էր «սեփականատիրության իրավունքը, բայց և իր երեխաների համար ապահովում էր հարկերից ազատված սեփականության անձեռնմխելիությունը»[2]*։ Տեղին է նշել, որ այս իմաստով Կ. Մարքսը վակֆը բնորոշել է որպես «մշտական մասնավոր սեփականություն»*[3]*, որը ենթակա չէ պատահականության ու կամայականությունների և ինչ-որ չափով ապահովում է հողի անվանական տիրոջ կյանքի պայմանները։ Հետաքրքրական է, որ հաճախ այդ միջոցին էին դիմում նաև քրիստոնյա հողատերերը։*

«Այս բոլոր կեղեքումներից հետո,— գրում է Ռ. Լյուքսեմբուրգը,— քրիստոնյա գյուղացուն այլ փրկություն չէր մնում, քան մի կտոր հող per oblationem *(կամավոր նվիրաբերում— Հ. Ի.) փոխանցել մահմեդական եկեղեցուն և ապա տոկոս վճարելով վերցնել այն՝ որպես վարձակալական, բայց գոնե տասանորդական տուրքից զերծ, հող»*[4]*։*

Հողօգտագործման այս ձևը շահագործման ու կեղեքման դեմ գյուղացիության բողոքի արտահայտություններից մեկն էր։

Կասկածից վեր է, որ նրան նույնչափ անողոք և հետևողա—

---

[1] *Տե՛ս «Մուրճ», 1893, № 5, էջ 777։ Ըստ որոշ տվյալների՝ 1 %-ը։*

[2] Das Ottomanische Ymmobiliarrecht. Von dr. Emricli Fryda von Kaurimsky. Journal Weltwirschafticbes Archiv, 9 Band, Yeмa Januar 1917, Heft I, p. 40—41.

[3] «Советское востоковедение», 1958, № 4, стр. 15.

[4] *«Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2 (14), էջ 140։ Տե՛ս նաև Գ. Ղարիբջանյանի՝ «Ռոզա Լյուքսեմբուրգի հոդվածը արևելյան հարցի մասին» հրապարակումը, էջ 137—147։*

կան կնքալով շարունակում էին շահագործել նաև հողնորականները։ Ընդհանուր հետևանքն այն էր, որ վակֆային հողատիրությունը ծավալվում էր և ամրապնդում ֆեոդալիզմի դիրքերը երկրում։ Նրա տիրապետությունը գյուղերից և անծայրածիր հողերից բացի տարածվում էր նաև որոշ քաղաքների վրա։

Սովետական ականավոր մասնագետներից Մ. Մեյերը «Վակֆի դերը Օսմանյան կայսրության քաղաքներում» իր ուսումնասիրության մեջ ցույց է տալիս, որ վերջիններում տեղական ինքնավարության մարմինների (մունիցիպալիտետների) բացակայությունը վակֆերին հնարավորություն էր ընձեռել կատարելու դրանց պարտականությունները։ Նրանք քաղաքներում կառուցում էին տներ, շուկաներ, ջրատարներ, բաղնիքներ և այլն, ստանալով դրանց եկամուտները։ Վակֆը քաղաքներում տիրապետում էր առևտրական օբյեկտների, զբաղվում էր վաշխառությամբ և ուրիշ շահավետ գործառնություններով։ Հեղինակի եզրահանգումը այն է, որ վակֆի ուժի ցուցաբերումը, նրա գործնական ակտիվությունը և պետական մարմինների ֆունկցիաներին խառնվելը, «Օսմանյան կայսրության ներքին թուլության պատճառներից մեկն էր, պատճառներ, որոնք հասցրին նրա անկմանը»[1]։

Սուլթանական կառավարությունները սկզբնական շրջանում օգնում էին վակֆային հողատիրության ամրապնդմանը։ Սակայն որոշ ժամանակից հետո սահմանափակում էին նրանց իրավունքները, գրավում դրանց գույքը։

Նման քայլերից մեկը հանդիսացավ 1863 թ. հատուկ մինիստրության ստեղծումը, որը իբր կանոնավորելու էր փոխհարաբերությունները, թերևս ավելի շատ պաշտպանելով կրոնական կազմակերպությունների շահերը, ի վնաս երկրի առաջընթացի։

Ֆեոդալիզմի գոյության և ազդեցության արտահայտությունները բազմաթիվ ու բազմապիսի են։ Սակայն սոցիալ-տնտեսական առումով դրանք ունեն որոշակի սահմաններ։ «Ֆեոդալիզմը,— գրել է Վ. Ի. Լենինը,— հենվում էր հողագործական կենցաղի և բնատնտեսության տիրապետության վրա»[2]։ Որքա՞ն և ինչպե՞ս էին փոխվում դրանք կայսրության տարած-

---

[1] «Вопросы истории», 1979, № 12, стр. 125.
[2] Լենին Վ. Ի., *Երկ*, *հատ. 21*, *էջ 495*։

քի վրա անցյալ դարում և մեր դարասկզբին։ Նախ անհրաժեշտ է ընդգծել, որ երկրի տարբեր շրջաններում չափազանց տարատեսակ էին կատարվող փոփոխությունները՝ թե իրենց բնույթով և թե զարգացման տեմպերով։

Հողագործական կենցաղը և բնատնտեսական փոխհարաբերությունները կապիտալիստական կարգերի առջև ամենից շուտ ընկրկեցին բալկանյան երկրներում։ Այնուհետև տնտեսության նոր ձևերը սկսեցին զարգանալ Միջերկրական ու Սև ծովերի մերձափնյա շրջաններում։ Այդ պրոցեսի վրա անմիջական ազդեցություն ունեցան այնպիսի առևտրաարհեստավորական խոշոր կենտրոններ, ինչպիսիք էին Կ. Պոլիսը, Իզմիրը, Բուրսան, Բեյրութը, Բաղդադը, Մոսուլը, Հալեպը, որոնց հետ սերտ տնտեսական կապեր ունեին մերձակա բնակավայրերն ու շրջանները։

Բուրժուական փոխհարաբերությունների ազդեցության արտահայտությունը երևան եկավ հատկապես մասնավոր, որպես կանոն, կապիտալիստական, հողատիրության մեջ։

Հիշյալ շրջաններում անցյալ դարի երկրորդ կեսերին այն ձևավորվեց և արագ կերպով ընդլայնեց իր սահմանները։

«Խոշոր հողատերերից շատերը,— գրել է Ա. Ռուպպինը,— իրենց հողերը ձեռք բերեցին վերջին տասնամյակների ընթացքում։ Կարծես թե ընդառաջելով այս երևույթին պետությունը բավական էժան գներով վաճառում էր հողակտորները։ Դրանք գնում էին «մեծ մասամբ քաղաքի կապիտալիստները»[1]։ Այս բանը տարբեր չափերով տեղի էր ունենում ամենուր։ Մասնավոր հողատիրությունը անցյալ դարի երկրորդ կեսին հատկապես ամրապնդվեց բալկանյան երկրներում։ Նրա հիմնական ձևը այսպես կոչված չիֆտլիկությունն* էր։ «Մակեդոնիայի համարյա բոլոր հողերը կազմում են թուրք «չիֆտլիկչիների» սեփականությունը»,— գրել է Գ. Ինսարովը մեր դարասկզբին[2]։ Նրա հաշվումներով չիֆտլիկների ընդհանուր թիվն այս շրջանում կազմում էր 15 հազար, որոնց մեծ մասը պատկանում էր թուրքերին[3]։

---

[1] Руппин А., Современная Сирия и Палестина, Пг., 1919, стр. 62.

* Ցիֆտ բառից՝ մեկ զույգ լծկան, որով օրվա ընթացքում կարելի է որոշակի տարածություն վարել։

[2] Տե՛ս «Вестник Европы», 1903, кн. 4, էջ 668.

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 674։

Կայսրության ասիական մասում դրանք նոր էին կազմավորվում, բայց, ինչպես նշվեց, մասնավոր հողատիրությունը այստեղ ևս զարգանում էր արագ կերպով։ Կարևորն այն է, որ այդ զարգացումը երկրի տարբեր վայրերում ընթանում էր կապիտալիստական ուղիով։ Այսպես, Սիրիայի Համա քաղաքի շրջակա հողերը պատկանում էին «Հինգ խոշոր գերդաստանների», որոնք ունեին մի քանի հազար անդամներ և որոնք ապրում էին վարձակալներից ստացած հողային ռենտայի կամ քաղաքային գույքերից գանձվող վարձի հաշվին։ Հյուսիսային Սիրիայի շատ քաղաքների մոտ գտնվող «համարյա բոլոր գյուղերը» պատկանում են քաղաքային հարուստ ընտանիքներին[1]։

Կ. Պոլսի խոշոր բանկիրներից հույն Լ. Զարիֆին Բաղդադի վիլայեթում գնել էր 50 հազար հեկտարից ավելի հող, որտեղ ցանվում էին բրինձ ու բամբակ[2]։ Անցյալ դարի վերջերին արդեն Անատոլիայում ևս քիչ չէին այն կալվածքները, որտեղ արտադրվում էին ապրանքային հացահատիկ, զանազան տեխնիկական կուլտուրաներ և այլն։ Սակայն կային հազար և ավելի հեկտար տարածությամբ կալվածքներ, որոնք «ավելի լավ տընտեսական պայմաններում կարող էին տալ տասնյակ և հարյուր հազարավոր ռուբլիների տարեկան եկամուտ»[3]։ Երկրի արևելյան շրջաններում, մանավանդ հայերի հողերը խլելուց հետո, ստեղծվել էին հսկայական տարածություններ միացնող հողատիրություններ, որոնք ընդգրկում էին երբեմն մի ամբողջ գավառ։ Գրականության մեջ և մամուլում այդպիսի հողատերերից հայտնի էին Հաջի Իզզեթ փաշան վերին Մեզրայում, վաշխառու Թեմիր օղլու ընտանիքը Վանում և այլն։ Հարստացող մահմեդական հողատերերն աշխատում էին ձեռք բերել գլխավորապես անշարժ գույք՝ տներ, կարվան-սարայներ, բաղնիքներ, պտղատու այգիներ ու մշակելի հողեր։ Նույնիսկ տնտեսական զարգացման ավելի ցածր աստիճանի վրա գտնվող քուրդ ավատատերերը տիրում էին լայնարձակ կալվածների, մեծ չափերով զբաղվում էին հողագործությամբ և ոչխարաբուծությամբ։ Այդ նպատակի համար նրանք իրենց տրամադրության տակ ունեին մի քանի հարյուր քուրդ ընտանիքներ, որոնք չէին պատկանում որևէ աշի-

1 Տե՛ս Руппин А., նշվ. աշխ., էջ 63։
2 Տե՛ս «Турецкий сборник», էջ 139.
3 ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3049, л. 353.

տնքի, երբեմն էլ քրիստոնյաներ, որոնք գտնվում էին բառիս բուն իմաստով նրանցից մշտական կախման մեջ...»[1]։

Արձանագրելով այս առանձին երևույթները, անհրաժեշտ է ընդգծել, որ կապիտալիստական կարգերի զարգացմանը Թուրքիայում տեղ էին տալիս ոչ մահմեդական ժողովուրդները նաև գյուղատնտեսության մեջ։ Երկրի բոլոր շրջաններում գոյություն ունեին սլավոն, հույն, հայ, հրեա, ասորի խոշոր հողատերեր, որոնք կապված էին շուկաների հետ։ Մակեդոնիայում գտնվող 15 հազար չիֆթլիկներից 200-ը պատկանում էր քրիստոնյաների ու հրեաների և հենց դրանք էլ հանդիսանում էին ապրանքային, կապիտալիստական տնտեսություններ՝ կենտրոնացված Սալոնիկ, Կաստորիա և այլ խոշոր քաղաքների շրջակայքում։ Հույներով բնակեցված շրջանների կենտրոններում ստեղծվել էին բազմաթիվ հույն հողատերերի խոշոր ագարակներ, որոնք իրենց մթերքները վաճառում էին մոտակայքում գտնվող քաղաքների շուկաներում։ Արևմտյան Հայաստանում ոչ բոլոր խոշոր հողատերերն էին թուրք կամ քուրդ։ Կային հայ ագարակատերեր, որոնք մրցում էին իրենց խավի մահմեդական ներկայացուցիչների հետ։ Ա. Կոլյուբակինի կարծիքով, նրանց թիվն աճեց առանձնապես անցյալ դարի 80—90-ական թթ.։ Մինչև 1877—1878 թթ. պատերազմը, գրել է նա, հողի սեփականատերեր էին, գլխավորապես քրիստոնյա վանքերը, գյուղական համայնքները, իսկ մեծահարուստ քաղաքացիներն ունեին անշարժ գույք միայն քաղաքներում, չհամարձակվելով հողեր ձեռք բերել երկրի ներքին շրջաններում և պարապել հողագործությամբ ու անասնապահությամբ... Այժմ մեզ հայտնի են մոտ 30 գյուղեր, որտեղ քաղաքացի հայերը, ի թիվս որոնց 43 ընտանիքներ, տիրապետում են քիչ թե շատ նշանակալից վարելահողերի և խոտադաշտերի»[2]։

Պալու գավառակում հայտնի էին երկու հայ խոշոր կալվածատերեր՝ Խաչմատյան և Արփաչյան։ Նրանք անողոք կերպով շահագործում էին ամբողջ շրջանի գյուղացիությանը և հատկապես հայերին։ Այդպիսին էր վիճակը նաև Բիթլիսում, Մուշում, Բուլանըխում։ Գյուղացիների հանդեպ իրենց դաժանությամբ Բուլանըխի գավառում հայտնի էին «երկու հարուստներ՝ Գևորգ

[1] ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3049, л. 85.

[2] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 355։

Մելիքյան Յոնջալու գյուղից և Մանուկ Մկրտչյան Թըղութից»[1]։ Քիչ չէին դեպքերը, երբ, ելնելով իրենց դասակարգային շահերից, տարբեր ազգերի ներկայացուցիչներ շահագործելու նպատակով միանում էին և ստեղծում ժամանակավոր միություններ։ Ա. Կոլյուբակինը նշում է. «Այն դեպքերում, երբ հայ կուլակներն ինչ-որ պատճառով չէին կարողանում գործել ինքնուրույն կերպով, նրանք համաձայնություն էին կնքում ազդեցիկ թուրքերի կամ քրդերի հետ։ Այսպես, օրինակ, Վանում Թեմիր օղլի հզոր թուրք ընտանիքն ուներ իր կողմնակից հայերը, որոնք թուրքերի հետ միասին թալանում էին իրենց հայրենակից գյուղացիներին»[2]։ Հայ և մյուս քրիստոնյա ժողովուրդներին պատկանող մեծահարուստները հաճախ էին օգտագործում թուրքական բյուրոկրատիայի թույլ կողմերը։ Փողի ու կաշառքի օգնությամբ նրանք ձեռք էին բերում հող և գույք, դառնալով օսմանյան ֆեոդալական կարգերի կողմնակիցներն ու պաշտպանները։ Այս ճանապարհով, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, մեծ քանակությամբ հույներ, հրեաներ ու հայեր դարձել էին ագարակատերեր կամ հողատերեր։ Այսպիսով, մի կողմից բազմաթիվ քրիստոնյա հողատերեր հողազրկվում էին, իսկ մյուս կողմից առաջ էին գալիս ժամանակի պահանջներին համակերպվող և նոր պայմանների ծնունդ հանդիսացող նոր հարուստներ։ Վերջիններս շատ հաճախ հենց թուրքերից էին գնում գույքն ու հողը։ Մեր դարասկզբին Բալկաններում թուրք չիֆթլիկչիները հաճախ էին նրանց վաճառում իրենց ունեցվածքը և տեղափոխվում երկրի թուրքական շրջանները։

Ռուս դիվանագետ Ս. Տուխոլկան 1910 թ. իր հաշվետվություններից մեկում գրում էր. «Թուրք խոշոր հողատերերի թիվը վերջին տարիներին պակասում է այն բանի հետևանքով, որ նրանց հողերը գնում են քրիստոնյաները, հատկապես, Ամերիկայից վերադարձող բուլղարները։ Սկսած 1903 թ. ապստամբության ժամանակաշրջանից, թուրք բեյերը վստահ չլինելով վաղվա օրվա համար և վախենալով Մակեդոնիայում քաղաքական բարդություններ ծագելուց, հոժարությամբ վաճառում են իրենց տիրույթները...»[3]։ Երիտթուրքերի շարժման ժամանակա-

---

[1] Колюбакин А. М., նշվ. աշխ., էջ 143։

[2] Նույն տեղը, էջ 144։

[3] АВПР, Новый турецкий стол, д. 7601, л. 4.

շրջանում, ինչպես նշում է Վահե Հայկը, Արևմտյան Հայաստանում ևս «Հայերի տնտեսական վիճակը քիչ մը բարելավվեց շնորհիվ Ամերիկայի գաղթականներեն հասած տոլարներուն։ Այդ կերպով բազմաթիվ հողեր գնվեցան հայ գյուղացիին կողմեն», առաջ եկան «փոքր կալվածատերեր»...[1]։

Երկրի տնտեսապես ավելի զարգացած մասերում այս երևույթները հավաստում էին բուրժուական հարաբերությունների ամրապնդումը և նույնիսկ հաղթանակը։ Իսկ ավելի հետամնաց և թուրք տիրապետության ծանրության տակ տառապող շրջաններում (Արևմտյան Հայաստան, Քրդստան) քրիստոնյա նուվոտիչների՝ նոր սեփականատերերի առաջ գալը ժամանակավոր երևույթ էր միայն՝ անդարձ կերպով վերացված գենոցիդի տարիներին։ Այսուհանդերձ, կայսրության գոյության վերջին 50—70 տարիների պատմության մեջ կարելի է արձանագրել երկու հակասական երևույթների գոյությունը Թուրքիայում՝ ինչպես ֆեոդալական, այնպես էլ կապիտալիստական խոշոր հողատիրության աճը։ Առաջինն արդյունք էր հին դերեբեյների զանազան կարգի հողատերերի ու նրանց ժառանգների հսկայական ֆեոդալական կալվածների առկայության ու նորերի ստեղծման պրոցեսի։ Հին ու նոր ավատատերերը պահպանում ու ընդլայնում էին իրենց հարստությունները՝ շնորհիվ սուլթանական կառավարությունների ու տեղական և կենտրոնական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի, գոյություն ունեցող անօրինականությունների, կամայականությունների, ավազակության ու թալանի, որոնց ենթակա էին մահմեդական աշխատավորությունը և, հատկապես քրիստոնյա ժողովուրդները։

Հողատիրության մյուս՝ կապիտալիստական, ձևը նոր, բուրժուական արտադրական հարաբերությունների զարգացման օրինաչափ և օբյեկտիվ հետևանքն էր։ Անցյալ դարի վերջերին ընդլայնվում էր նաև ֆեոդալական միջին հողատիրությունը։ Այստեղ հողօգտագործման ձևերը հար և նման էին խոշոր հողատիրության մեջ տիրապետող փոխհարաբերություններին։ Ինչպես նշում է խնդրի խոշոր մասնագետ Տ. Արսլանյանը, տերերը չեն ապրում իրենց ագարակներում, լավագույն դեպքում, իրենց բավականության համար, գալիս են միայն քաղի ժամանակ[2]։

[1] Վահե Հայկ, Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 32։

[2] Арсланиан Дикран, Система сельского хозяйства в Оттоманской империи, Л-д., 1932, стр. 33.

Նա հարկ է համարում նշել, որ միջին ու խոշոր հողատիրությունը տարածված չէր ամբողջ երկրով մեկ, այլ խմբված էր մեծ քաղաքների շուրջը»։ Իսկ երկիրը հանդիսանում էր փոքր տնտեսությունների մի ծով, որը և աննպաստ պայմաններ էր ստեղծում նրա տնտեսական զարգացման համար։

Խոշոր ու միջին տնտեսությունները ևս հաճախ էին կտորակվում ու քիչ էր պատահում, որ հողը մշակվեր ամբողջական մեծ տնտեսությունների ընձեռած առավելություններով։

Գյուղացի վարձակալների միջև բաժանված մեծ ագարակներն ու տիրույթները փաստորեն փոխակերպվել էին «գյուղացիական ծխերի մի կոնգլոմերատի», որը գյուղատնտեսության մեջ դարձել էր մեծ ու տիրապետող ուժ։ Թուրքիայի պայմաններում դրանց զարգացումը չէր կարող դրվել նորմալ հունի մեջ, ահա այդ պատճառով էլ տնտեսությունների այդ ծովը երկրի համար «մեծ չարիք»[1] հանդիսացավ։ Ներկայացվող հողօգտագործման ձևերը, որոնց մեծ մասը իրենց բնույթով կամ էությամբ ֆեոդալական էին, ինչպես նշվեց, խանգարում էին կապիտալիստական հարաբերությունների առաջընթացին։ Սակայն վերջիններս կարողանում էին գտնել սողանցքեր, մի կացութաձևից մյուսին անցնելու, փոխանցվելու միջոցներ, աճել ու համակերպվել։

Այդ սողանցքերից մեկը ապրանքադրամային հարաբերությունների մուտքն էր գյուղ, գյուղատնտեսության մեջ։

Հայ հասարակական գործիչ ու հրապարակախոս, «Մշակ» թերթի խմբագիր Գ. Արծրունին բազմիցս անդրադարձել է Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի տնտեսական դրությանը։ Այսպես, օրինակ, 1879 թ. նա կարդացել է մի շարք դասախոսություններ՝ «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» թեմայի շուրջը։ Որպես լիբերալ բուրժուազիայի գաղափարախոս, նա ցավով է նշում կապիտալիստական կարգերի համար չափազանց անձուկ վիճակը Թուրքիայում, որի տիրող շրջանները հաճախ ուղղակի արգելակում էին դրանց զարգացումը։ Իր ելույթներում Գ. Արծրունին հրապարակախոսի ու գեղագետի վարպետությամբ ցույց է տալիս, թե ինչպիսի դժվարություններ են հաղթահարում և շրջանցող միջոցներ ձեռնարկում նոր հասարակարգին ձգտող խավերը, որպեսզի կարողանան պահպա-

[1] Арсланиан Дикран, նշվ. աշխ., էջ 33.

ճել իրենց գոյությունը, զարգացնել իրենց տնտեսությունը և կատարել պետության օրինական և անօրինական պահանջները։ «Հայ գյուղացին,— գրել է Գ. Արծրունին,— բացի գլխահարկից, վճարում է տերությանը իր բերքերից տասանորդն էլ։ Վալին տասանորդի հավաքելը հանձնում է մի որևէ կապալառուի, որ ինհարկե, խարդախորեն տասանորդից ավելի է պահանջում, մանավանդ որ ինքը վալին նպաստում է այդ զեղումներին։ Փաշան մի պայմանով միայն հանձնում է կապալառուին տասանորդի հավաքելը, որ սա պարտավորվի հավաքածի մի մասն իրեն տալ։ Հայ քաղաքացին մի առևտրական գործ, մի արդյունագործական ձեռնարկություն է սկսում, մի արքունի կապալ է հանձն առնում,— փաշան, կայմակամը, մյուդիրը, փաշայի օգնականը, նրա քարտուղարը... ամենքը իրենց մասն են պահանջում...»[1]։ Ավելի քան հարյուր տարի առաջ կատարած այս ամփոփումների ճշմարտացիությունը հաստատվել է բազմաթիվ նոր փաստերով՝ նոր ուսումնասիրությունների մեջ։ Մեզ հետաքրքրող հարցի իմաստն այն է, որ չնայած այդ ամենին, զարգացումը կապիտալիստական ուղիով, այնուամենայնիվ, տեղի է ունեցել։ Հենց այդ դասախոսությունների մեջ Գ. Արծրունին նշում է, որ դրամը արդեն կարևոր դեր է կատարում ոչ միայն քաղաքում, այլև գյուղում։ Հարկերի, ռենտայի, պարտքերի և այլ վճարումների մի մասը, անցյալ դարի կեսերից, սկսել էին պահանջել դրամով։ Քանի որ վերջինս շատ հաճախ էր արժեզրկվում, բնականորեն աճում էին հարկերի գումարները, որոնք գանձվում էին պետական ամուր կուրսով։

Մյուս կողմից, պաշտոնյաներն ու հարկահավաքներն աշխատում էին տուրքը կամ ռենտան գանձել «երբեմն բնամթերքով, հաճախ դրամով, քանի որ պահանջարկը փոքր էր, իսկ ճանապարհները վատ»[2]։ Ուրեմն մթերքը տեղում վաճառելը հնարավոր կամ ձեռնտու չէր, իսկ դուրս ուղարկելը դժվար էր և ոչ միշտ ապահով։ Այդ պատճառով ավելի հարմար ու հեշտ էին դրամական գանձումները։ Փողի դերի վրա կանգ է առնում Հ. Մուրադյանը իր «Հողատիրությունը Թուրքիայում» շահեկան ուսումնասիրության մեջ։ Նա գրում է, որ Թուրքիայում, «բացի

---

[1] Արծրունի Գրիգոր, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 32։

[2] ЦГВИА, ф. 82, д. 3053, л. 134, ընդգծումները մերն են։

ոսկուց կտրվում ու գործադրվում է նաև արծաթե դրամը, բայց պետական բոլոր տուրքերը, բացի աշարից, կառավարությունն ստանում է ոսկու հաշվով, զեղչելով արծաթ դրամների արժեքի տարբերությունը»[1]։

Ըստ բոլոր տվյալների, փողի անհրաժեշտությունը մուտք է գործել գյուղ՝ կապված առաջին հերթին հարկերի վճարման և ապա առևտրական, տնտեսական կապերի ու այլ կարիքների հետ։

«Չքավորությունը անասելի է,— նշել է Ատրպետը,— բնակչությունը դրամի երես չի տեսնում, հարկերը վճարելու հնարավորություն չունի, պիտի պանդխտին կամ անասունները պիտի տանին քաղաքները ծախելու, որ սև փող ճարեն և հարկահանի ճիրաններից ճողոպրեն»[2]։

Դրամ աշխատելու արմատացած ձևերից մեկը պանդխտության գնալն էր՝ աշխատանք ճարելու համար թափառելը կայսրության մեջ ու նրա սահմաններից դուրս։ Պանդխտության կամ գաղթականության պատճառները, անշուշտ, շատ ավելի խոր են, քան միայն փող աշխատելու կարիքը, ինչքան էլ այն լիներ ծայրահեղ։ Այստեղ հիմնականը՝ տեղի տնտեսական հնարավորությունները տարբեր հանգամանքներով օգտագործել չկարողանալը և հաճախ սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործոնների ազդեցության հետևանքով արտադրական միջոցներից զրկվելն էր։

Օսմանյան կայսրության տարածքում քրիստոնյաների և ընդհանրապես ռայայի ունեցվածքը խլելու, նրա աշխատանքի արդյունքը յուրացնելու և այլ սոցիալական ու տնտեսական կամայականությունների ֆոնի վրա անասելի ծանր էին ազգային ու կրոնական հանգամանքներով տեղի ունեցող քաղաքական հետապնդումները, չարչարանքներն ու ֆիզիկական հաշվեհարդարը։ Ահա թե ինչու Օսմանյան կայսրության մեջ գաղթականությունը միայն նոր տնտեսական փոխհարաբերությունների արդյունք չէր։

Ժամանակակից հեղինակը «Արաքս» ամսագրի 1889 թ. համարներից մեկում, գաղթականությունը մեծ չարիք անվանելով, այսպես է նկարագրում այդ երևույթը. «Ամբողջ վիլայեթներ

---

[1] Մուրճ, 1899, № 10, էջ 1212։
[2] Ատրպետ, նշվ. աշխ., էջ 13։

հազարներով դատարկվում են երիտասարդ աշխույժ ուժերից, որոնք թշվառ վիճակի մեջ թողնելով իրենց ընտանիքը, երկիրը, նորա արդյունաբերությունը ցրվում են հեռավոր վայրեր ու նոցա, վերջ ի վերջո, կորուստ է սպառնում։ Այսօր այդ պանդըխտության և գաղթականության հոսանքը տանում է իր հետ ոչ միայն մի գյուղի, մի ավանի, մի նահանգի երիտասարդական և այրական ուժերը, այլև Կեսարիայից սկսած մինչև Բայազետի վերջին գյուղի արդյունաբերող ուժերը»[1]։

Այնուհետև հոդվածում կոնկրետ թվերով ցույց է տրված պանդըխտության բերած ավերը։ «Մշո Խասգյուղը, հազիվ 250 տնից է բաղկացած, ունի մոտ 400 պանդուխտ, Նորշենը՝ 200 տուն, ունի 300 պանդուխտ, Բերրակը՝ 120 տուն, ունի 200 պանդուխտ»։ Ընդհանուր հաշվումներով, Արևմտյան Հայաստանի գյուղական ամեն մի ընտանիք անցյալ դարի 80—90-ական թթ. ուներ իր պանդուխտը[2]։ Նրանք, որպես կանոն, իրենց երիտասարդ տարիներից 5—10-ը անց էին կացնում օտարության մեջ, իսկ երբեմն էլ չէին վերադառնում։ Ընդհակառակը, նրանց թիվը գնալով ավելանում էր։ Որևէ մեծ քաղաքում հաստատված պանդուխտը կանչում էր հորը, եղբորը, բարեկամին, ընկերոջը։ Օրինակ, եթե 1880-ական թթ. սկզբներին Մշո գավառից փող վաստակելու էր գնում տարեկան 200 մարդ, ապա 1885-ին գավառից հեռացել է 500, հաջորդ տարին՝ 1500 մարդ և այլն։ Այդ թիվը աճելով տարեկան հասել էր 2—3 հազարի[3]։

Խնդրի մյուս կողմն այն էր, որ գյուղի երիտասարդությունը գնալով Կ. Պոլիս, Իզմիր, Տրապիզոն, կամ արտասահմանյան որևէ երկիր՝ աշխատանք էր գտնում մեծագույն դժվարությամբ, քանի որ մասնագիտություն չուներ և ստիպված էր կատարել ծանր ու սև աշխատանք։ Իհարկե, հողազրկված գյուղացիների մի մասը մնում էր գյուղում և դառնում վարձու աշխատավոր, բատրակ։ Բայց, ինչպես ճիշտ նշում է Ա. Համբարյանը, Արևմտյան Հայաստանում և ասիական Թուրքիայի շրջաններում բատրակի աշխատանքը դեռևս քիչ էր օգտագործվում, քանի որ շատ կային կախյալ գյուղացիներ[4]։ Կաստամոնիից մի ագարա-

---

[1] «Արաքս», 1889, գիրք Ա, էջ 2—3։

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Տե՛ս Տարոնցի Աղան. Հարազատ պատմություն Տարոնո, էջ 27։

[4] Տե՛ս Համբարյան Ա. Ս., նշվ. աշխ., էջ 7։

կատեր գտնում էր, որ իրեն ձեռնտու չէ դրսից մարդ վարձել, քանի որ կիսարար աշխատանքն իր ագարակում ամենաընդունված և ցածր վարձատրվող աշխատանքի ձևն է[1]։ Ահա այս պատճառով էլ երկրի ասիական մասում նոր փոխհարաբերությունները ապրում էին չափազանց աննկատելի առաջընթաց և հաստատում Տ. Արսլանյանի այն միտքը, որ կիսարարությունն ու պրոցեսը միանգամայն հակադիր երևույթներ են[2]։

Ինչ վերաբերում է Թուրքիայի արևմտյան շրջաններին, ապա այստեղ կապիտալիստական հարաբերությունները զգալիորեն ավելի զարգացած էին։ Այստեղ ավելի շատ և հաճախ էր օգտագործվում վարձու աշխատանքը. ռենտան, որպես կանոն, գանձվում էր դրամով, գյուղացուց բոլոր հարկերը պահանջում էին նույնպես դրամով, գյուղացու աշխատանքի արդյունքի գնահատականը կատարվում էր շուկայի միջոցով, լայն թափ էր առացել առևտրայնացումը, որի արտադրանքը նույնպես շուկա էր հանվում։

Նշված շրջաններում գյուղացիները զրկվելով հողից և այլ արտադրամիջոցներից, դառնում էին վարձու աշխատող կամ պրոլետար։ Սակայն ազատված բանվորական ուժը ոչ միշտ էր օգտագործվում՝ երկրում կապիտալիզմի զարգացման ցածր մակարդակի պատճառով։ Այսպես, սկսած անցյալ դարի 80-ական թթ. Ադանայի վիլայեթի և հարևան շրջանների տարեկան ռեալ պահանջը կազմում էր մոտ 100 հազար սեզոնային բանվոր, մինչդեռ առաջարկը ավելին էր երկու-երեք անգամ։

Բնորոշ է, որ Ադանայի բնակիչների ընդհանուր թիվը հաշվելիս (որը մեր դարասկզբին հավասար էր մոտ 45 հազարի), մտցվում էր նաև 12—15 հազար արտագնաց բանվորների քանակը, որոնք տարեկան երեք-չորս ամիս ապրում էին քաղաքում և շրջակայքում՝ բամբակի բերքը հավաքելու և այն զտելու համար[3]։

Այս վիճակը Թուրքիայում շարունակվեց տասնամյակներ։

Մեր նկարագրած ժամանակից 20—30 տարի անց, 1909 թ.

---

[1] Տե՛ս «Аграрный вопрос и крестьянское движение», Справочник, т. IV, стр. 175.

[2] Տե՛ս Арсланиан Д., նշվ. աշխ., էջ 47։

[3] Տե՛ս Էփրիկյան Հ. Ս., Բնաշխարհիկ բառարան, 2-րդ հրատ., Վենետիկ, 1903—1905, էջ 370։

մայիսին, Սեբաստիայի (Սըվաս) երեսփոխան Ն. Տաղավարյանը Մեջլիսի նիստում հանդես է գալիս մի հանգամանալից ճառով։ Մանրամասն նկարագրելով երկրում տիրող ծանր վիճակը, վերլուծելով տնտեսության տարբեր բնագավառների հետ մնալու պատճառները, նա ընդգծել է ժողովրդի անելանելի դրությունը։ «Վերոհիշյալ աննպաստ պայմաններու մեջ գտնվող գավառներու երկրագործները,— ասել է նա,— ստիպված են կարենալ ապրելու համար իրենց ընտանյաց գոնե երիտասարդ մի անդամն ղրկել ի Պոլիս, և կամ մի այլ ծովեզրյա քաղաք, ուր իբրև բեռնակիր և կամ այլ նմանօրինակ ստոր արհեստներով կչանան գոցել իրենց ընտանյաց պյուտճեի բացն...»[1]։

Հ. Ավնին ևս ներկայացնելով գյուղացիական տնտեսության քայքայման և գյուղի շերտավորման պրոցեսը, հատկապես նշում է աշխատավոր գյուղացիների անելանելի դրությունը։ Ընչազուրկ գյուղացին, գրում է նա, «Բանվորությունն էր անում գյուղատնտեսության մեջ, հանքահորերում և անցնում էր մեկ վիլայեթից մյուսը։ Այդ մասսան հնարավորություն չունեցավ տևական կերպով աշխատելու նույն գործի մեջ և դառնալու մասնագետ բանվոր»[2]։

Այդպիսով, բանվորական ուժը կենտրոնանում էր նավահանգիստներում, ծովեզրյա և ընդհանրապես, խոշոր քաղաքներում ու բնակավայրերում, որտեղ այն օգտագործվում էր սեզոնային աշխատանքներում, իսկ հաճախ մնում էր անգործ։ Հետևաբար, նշված վայրերը դարձել էին յուրահատուկ կենտրոններ, որտեղ հավաքվում էին աղքատ և հողազուրկ, գյուղից փախած կամ վռնդված գյուղացիներ՝ պատրաստ առաջարկողի պայմաններով կատարելու ամեն մի աշխատանք։ Նման երևույթի գոյությունը Վ. Ի. Լենինը համարել է զարգացող կապիտալիստական հարաբերությունների ցուցանիշ, երբ «բազմաթիվ բանվորական շուկաներ» են ստեղծվում, «որտեղ հազարավոր բանվորներ են հավաքվում և որ վարձողներ են գալիս»[3]։

Այնուհետև նա տարբեր ձևերի աշխատանքի օգտագործումը համարում է միանգամայն բնականոն և հատուկ ամեն մի ան-

---

[1] Տոքտ. Տաղավարյան Ն., Երկրագործություն, անտառաց և հանքաց զարգացումն ու շահագործումն, Կ. Պոլիս, 1909, էջ 9։

[2] Avni Hüseyin, Bir yarim müstemleke olus tarihi, Ist, 1932, s. 60.

[3] Լենին Վ. Ի., Երկ., հատ. 3, էջ 289։

ցումային ժամանակաշրջանի»[1] համար։ Իսկ Ֆ. Էնգելսը գրել է. «Ամեն տեղ, ուր անձնական հարաբերությունը դուրս է մղվում դրամական հարաբերությամբ, բնապարհակը՝ դրամական վճարով, այնտեղ ֆեոդալական հարաբերության տեղը բռնում է բուրժուականը»[2]։

Բուրժուական հարաբերությունների զարգացման կարևոր ցուցանիշներից մեկը հողը առուծախի առարկա դարձնելն է և նրա գնի շարունակական աճը։ Այդ բանը Թուրքիայում սկսվում է անցյալ դարի 60-ական թթ. և հետզհետե թափ է առնում ու մինչև առաջին համաշխարհային պատերազմը հողի գինը բարձրանում է շուրջ 10 անգամ։ Անշուշտ, հողի գնի այդպիսի արագ աճը բացատրվում էր ոչ միայն նրա արդյունավետության բարձրացմամբ, օգտագործելու հնարավորությունների ընդլայնմամբ և տեղական պահանջարկի մեծացմամբ։ Այս ամենի վրա պետք է ավելացնել օտար մեծահարուստների ու կապիտալիստների կողմից, տարբեր նպատակներով, հող ձեռք բերելու աճող ցանկությունը և պրակտիկ գործունեությունը՝ Հետևանքը եղավ այն, որ հողը դարձավ փոխանակային արժեք, որի գինը որոշվում էր կապված նրա որակի, տեղի, օգտագործման հնարավորության և այլ հանգամանքների հետ։ Այսպես, մեր դարասկզբին Միջին Անատոլիայում (Բալըքեսիր) հողի դյոնումը արժեր 15 ֆրանկ[3]։ Դեպի արևելք ընկած շրջաններում նրա գինը տատանվում էր 44—66-ից մինչև 880-1760 ֆրանկ կամ 2—3-ից մինչև 40—80 թուրքական լիրա[4]։ Սիրիայում դյոնումը գնահատվում էր 5-ից մինչև 30—50 ֆրանկ (նայած երկաթուղու և ծովի հեռավորությանը, բեդուինների հարձակումների վտանգին և այլն)։ Լիբանանում նրանք բարձր էին 10—20 անգամ[5]։ Երկրի արևմտյան շրջաններում խաղողի այգիները վաճառվում էին դյոնումը 100—400 ֆրանկով։ Արմավենու պլանտացիաները արժեին նույնքան և ավելին, ձիթապտղինը երբեմն՝ 2000-ից ավելին։

---

[1] Լենին Վ. Ի., Երկ., հատ. 3, էջ 225։

[2] Маркс К. и Энгельс Ф., Соч., изд. I, т. XVI, ч. I, М., 1937, стр. 442.

[3] Տե՛ս «Գյուղատնտեսի տարեցույցը», էջ 40։

[4] Տե՛ս «Кавказское хозяйство», 1918, № 1—2, էջ 21. լիրան = 22 ֆրանկի = 8 ռ. 60 կ.։

[5] Տե՛ս Руппин А., նշվ. աշխ., էջ 98։

Չզալիորեն ավելացել էին կուլտուրական բույսերով (բամբակ, ծխախոտ, քնջութ և այլն) և պտղատու ծառերով զբաղեցված տարածությունները։ «Բյուրակն» շաբաթաթերթը 1908 թ. համարներից մեկում զետեղել էր մի թղթակցություն Խարբերդից, որից տեղեկանում ենք, որ վերջին 20—25 տարիների ընթացքում շերամապահությունն այնքան էր զարգացել, որ նրա արդյունքը ավելացել էր մոտ 20 անգամ։ «Խարբերդի մեջ,— կարդում ենք այնուհետև,— օրըստօրե հառաջացող զբաղումն է շերամապահությունը... երկրագործը իր ամենաընտիր արտը կ՚հատկացնե թթենիին։

Նշանավոր հողատեր մը կ՚ըսեր,— «1000 ոսկիի մոտ արտեր ունիմ և այս արտերեն ոմանց շուրջ մեկ-երկու կարգ թթենի տնկված են։ Այս թթենիներեն ավելի հասույթ կստանամ քան ամբողջ արտերենս»[1]։ Հեղինակի հաշվումներով ցորենի ամենաընտիր արտը, ուր մեկ չարեք ցորեն կարելի է ցանել և ստանալ 4 թուրք. լիրայի արդյունք, եթե օգտագործվի թթենիների համար, 5—8 տարուց հետո օգուտը կկազմի 50—60 լիրա։

Նման հեռանկարը և հողի ավելի նպատակահարմար օգտագործման ձգտումը խիստ բարձրացրեց հողի գինը։ Այս բանը հասկացան թե՛ ազատ գյուղացի սեփականատերերը, թե՛ հողատեր-աղաները, շեյխերն ու ագարակատերերը։

Այդ նշանակում էր նաև, որ այն հիմքը, որի վրա հաստատված էր թուրքական ֆեոդալական հողատիրությունը և հողային օրենքը, անցյալ դարի վերջին սկսեց տեղի տալ դրամի աճող ազդեցության և ուժի հանդեպ։ Հիշյալ պրոցեսին ակտիվորեն օգնում էին գյուղում հաստատուն դիրքեր գրաված առևտրական կապիտալը և վաշխառուները։

Խանութպանը և վաշխառուն, որոնք հաճախ հանդես էին գալիս մեկ անձի մեջ, դարձել էին գյուղի պարտադիր կերպարները։ Գյուղացիների անասելի կարիքն ու չքավորությունը, հաճախակի տեղի ունեցող բնական աղետները, աներերի տարիները, շուկաների հեռավորությունը, տեղում գյուղատնտեսական մթերքները փողի վերածելու դժվարությունը և այլն, գյուղի բնակիչների համար այդ երկու անձնավորություններին դարձրել

[1] «Բյուրակն», 1908, № 8, էջ 265—266։

ժին «ցանկալի»։ Գյուղացիները փող, կամ սերմ էին խնդրում հարկերն ու պարտքերը մարելու, ամենամյա ցանքը կատարելու համար, պարտք էին վերցնում հարսանիքի, կնունքի, մահվան դեպքերում և կենսական բազմաթիվ այլ կարիքների համար։ Եվ նրանք, որպես կանոն, երբեք չէին կարողանում պարտքը մարել ու ստիպված էին համաձայնվել պարտատիրոջ ստրկացուցիչ պայմաններին։ Տոկոսի չափերը որոշում էր վաշխառուն և հնում կամ սովորությամբ հաստատված ոչ մի սահման չէր ընդունում։

Համապատասխան ուսումնասիրությունների, ճամփորդական նոթերի, ժամանակի մամուլի տվյալներով տոկոսի ընդունված չափը կազմում էր 100-ից 50—60, երբեմն այն հասնում էր 200—300-ի[1]։ Համաձայն Կ. Մակ-Քոանի, վաշխառուները կորզում էին 30—100 %[2]։Բերվում են նաև այլ թվեր։ Կողոպուտը հասնում էր անասելի չափերի, երբ գյուղացին պարտավորվում էր իր պարտքը և տոկոսները վճարել բերքահավաքի ժամանակ՝ բնամթերքով։ Այդ դեպքերում պարտատերը պահանջում էր մթերքների գինը, համեմատած շուկայականի հետ, իջեցնել 25—50 %-ով։ Այդ տղրուկներն ու գյուղի ցեցերը այնքան արագորեն էին հարստանում, վաշխառությունը այնպիսի շահաբեր գործ էր դարձել, որ նրանով զբաղվում էին ոչ միայն առևտրականներն ու հողատեր-աղաները, այլև շեյխերը, հոգևորականներն ընդհանրապես, վանքերը, զինվորականներն ու պաշտոնյաները։ Մի խոսքով, պարտք էին տալիս բոլոր նրանք, ովքեր կարող էին այդ անել։

Գրականության մեջ և մամուլում հաճախ կարելի է հանդիպել դարեր շարունակ կրկնվող այն կարծիքին, որ իբր Ղուրանը և շարիաթը մահմեդականներին արգելում են զբաղվել վաշխառությամբ։ Այդ կարծիքը, անշուշտ, ունի որոշ ձևական հիմքեր։ Ա. Մասսեն գրում է, որ «Վաշխառությունը կատեգորիկ կերպով արգելված է Ղուրանի բազմաթիվ կետերով»[3]։ Նույնը կրկնում են շատ ուրիշներ։ Մեր կարծիքով, այս հարցում առավել հիմնավոր ու գիտական մոտեցում էր ցուցաբերում սովետական

---

[1] Տե՛ս «Մշակ», 1880, № 253?։

[2] Տե՛ս Мак-Коан Карлайл, Наш новый протекторат, М., 1884, стр. 102.

[3] Массэ А., Ислам, стр. 128.

իսլամագետ Գ. Քերիմովը։ Նշված երևույթին տալով պատմական և սոցիալական բնույթ, նա գրում է. «Նահապետաֆեոդալական չզարգացած տնտեսական կապերի արտացոլման հետևանքով պետք է բացատրել վերցրած պարտքի դիմաց տոկոսային հավելում ստանալու խստիվ արգելումը շարիաթում»[1]։ Տոկոսը այդպիսով, հայտարարվում է «հարամ», արգելվում է, սակայն թողնվում են բազմաթիվ սողանցքեր։ Թվարկենք դրանց մի մասը։ Պարտապանը կարող է ինչ-որ, անշուշտ, նյութական արժեքի որևէ ձևով՝ շնորհակալություն հայտնել պարտքատերերին, հրավիրելով ճաշի, նվերներ տալով և այլն։ Առաջինը մի քաղաքում հատուկ նպատակով կարող է շատ գումար հանձնել, մի այլ վայրում երկրորդից ստանալով ավելի քիչ՝ փաստորեն վճարելով տոկոս։ Վաշխառուն իրավունք ունի տրված գումարի դիմաց որևէ իր, անշարժ գույք և այլն պահանջել որպես գրավ։ Եթե պարտքը չի վերադարձվում, գրավ դրված հարստությունը կարող է յուրացվել կամ վաճառվել, և այլն։ Շարիաթի նման ձևական մեկնաբանումը չափազանց շատ ուղիներ էր բացում ապահովելու հարուստ վերնախավի շահերը և հնարավորություն էր ընձեռում օգտագործել հարստություն դիզելու այս կարճ ու հաստատուն ուղին։

Գ. Քերիմովը եզրակացնում է, որ «ֆեոդալական, և ապա կապիտալիստական հարաբերությունների հետագա զարգացումը լուրջ ուղղումներ մտցրեց փոխառության հարաբերությունների պրակտիկայի մեջ։ Ինչքան էլ որ շարիաթը իսլամի գոյության ամբողջ պատմության ընթացքում պայքարեց վաշխառության դեմ՝ նա չկարողացավ այն արմատախիլ անել մահմեդական հասարակության միջից։ Դեռ ավելին, շարիաթի օրենքներն իրենք էին նպաստում վաշխառության ծլել-ծաղկելուն, հօգուտ վերջինիս ուղիներ բացելով տարբեր իրավական հնարքների համար»[2]։

Վերնախավի ներկայացուցիչների անձնական շահերի պահանջով, ամեն ինչ կատարվում էր բացարձակ, առանց քաշվելու։ Իզուր չէ Թուրքիայում չափազանց հաճախ օգտագործվում ժողովրդական ասացվածքը՝ «Գրողը դու, ջնջողը դու, ով քեզ կասի՝ սխալ ես դու»*։

---

[1] Керимов Г. М., Шариат и его социальная сущность, стр. 26—27.

[2] Նույն տեղը, էջ 27, ընդգծումը մերն է։

* Yazan sen, bozan sen, kim diyor ki yalansın?

Ի վերջո, իբր արգելված կենսական որոշ երևույթների օրինական տեսք տալու նպատակով, խալամի բուրժուական ռեֆորմատոր Մուհամմեդ Աբդոն, անցյալ դարի վերջին պաշտոնապես հայտարարեց և մահմեդականներին իրավունք տվեց իրենց կապիտալներից տոկոսներ ստանալու և դրամը բանկերում ներդրվելու։ Սակայն մինչև այդ էլ, մեր ուսումնասիրության ամբողջ ժամանակաշրջանում, համենայն դեպս անցյալ դարի սկզբից հարուստ մահմեդականը մեծ եռանդով ու հետևողականությամբ զբաղվում էր վաշխառությամբ։ Արևմտյան Հայաստանում հողային իրավունքն ուսումնասիրող Ն. Լենսկին վաշխառությունը համարում է Անատոլիայում ապրող աղա-կուլակի «միակ զբաղմունքը» ու նրա «միակ իդեալը»[1]։ Ինչքան քիչ էր զարգացած շրջանը, գավառը կամ գյուղը, այնքան վաշխառուն ագահ էր և անողորմ։

Նիազի Բերքեսը Անատոլիան կոչում է «դրախտ վաշխառուների համար»[2]։

Դրամաապրանքային հարաբերությունների զարգացումը, իր հերթին, ընդլայնեց դրամական գործողություններ կատարողների շրջանակը։ Հետզհետե պաշտոնյաները, մահմեդական հողատերերը, ցեղապետերն ու շեյխերը հարկահավաքության գործին զուգահեռ բացարձակ կերպով իրենց ձեռքն առան նաև վաշխառությունը։

Ա-դոն պատմում է, որ գամըսկեցի քրդերի ցեղապետի որդի և համիդիե գնդերի ղեկավարներից Մամեդ բեկը Վանի շրջակայքում ուներ երեք գյուղ, 1300 սոմար հող, 2000 ոչխար, 70—80 եզ, կով, գոմեշ և 20 ձի։ Այդ բոլորը նա ձեռք էր բերել Սասունի ջարդերից հետո ու կիտելով հսկայական հարստություն՝ դարձել էր շրջանի խոշոր վաշխառուներից մեկը։ Ա-դոին ասել էին, որ «բեկի ոսկիները շատ-շատ են, գնա մինչև 10 հազար։ Նա իր ոսկիները տոկոսով է տալիս, 40—50 գյուղ էլաթ ունի, չկա մեկը, որ պարտ չլինի բեկին»[3]։

Շարունակելով իր ճանապարհը դեպի Բիթլիսի գավառը, Ա-դոն կանգ է առնում Ջրհոր գյուղում։ Նա նկարագրում է գյուղի բնակչության վիճակը, որ կամայականությունների հետե-

[1] Ленский Н. А., указ. произв. стр. 19.

[2] Berkes Niyazi, Iki yüz yildır.., s. 58.

[3] «Նոր հոսանք», 1913, № 6, էջ 1045։

վանքով «հալածանքների ու ծանր տուգանքների պատճառով ժողովուրդն ընկավ վաշխառուների թոռը. վաշխառուները հանդիսանում էին Բիթլիսի հարուստ քրդերը...» Գյուղի 60 տնից միայն 5 տուն էր ազատ պարտքից։ «Վերջին 15 տարիների ընթացքում պարտքի տեղ կորցրել էին իրենց հողերի կեսը 30 ընտանիք, միանգամայն զրկվել էին հողից 25 ընտանիք»։ Վերջիններիս ընդհանուր պարտքը կազմում էր 1700 ռուբլի։ Չկարողանալով վճարել պարտքը, նրանք կորցրեցին իրենց հողերը, «բայց դարձյալ պարտքից չազատվեցին»[1]։ Վաշխառուն, անկախ ազգից ու կրոնական պատկանելությունից, իսկական ցեց էր գյուղացու համար։

Վանի նախապատերազմյան վիճակին նվիրված հոդվածաշարում Ա. Դարբինյանը (Մերուկ) «Մուրճ» ամսագրի էջերում մի քանի առիթով հիշատակում է հայ վաշխառուներին, «որոնք ո՛չ ստոված ունեին, ո՛չ խիղճ, ո՛չ գութ, նրանք անվախ կողոպտում, ծծում, արյունաքամ էին անում իրենց ճանկը ընկնողին»[2]։

Հոդվածաշարում ցույց է տրված, որ անցյալ դարի 80-ական թթ. նրանք շատ ամուր դիրքեր էին գրավում Վանի վիլայեթի տնտեսության մեջ։ 1894—1896 թթ. ջարդերը նրանց մեծ մասին հասցրեցին մահացու հարվածներ, ոչնչացնելով նրանց եթե ոչ ֆիզիկապես, ապա տնտեսապես։ Սակայն արհավիրքի տարիներից շատ քիչ ժամանակ անց նորից վերակենդանացան հները և բարձրացան ու ամրապնդվեցին նորերը։ Ուսումնասիրելով մեր դարասկզբի իրերի վիճակը, հեղինակը գրում է. «Վանում կարելի է ցույց տալ հարյուրներով տներ, այգիներ, արտեր, չհաշված կահ-կարասիները, որոնք այս ու այն պարտապանից խլել են վաշխառուները, իբրև իրենց արդար իրավունքը»[3]։ Բերած փաստերից կարելի է եզրակացնել, որ տզրուկների այդ խավը միշտ էլ իր շարքերում ունեցել է տարբեր ազգերի ներկայացուցիչներ։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կամաց-կամաց իշխանությունների հովանավորությունը վայելող վաշխառու մահմեդականների թիվը մեծացավ։ Խաժակը հարկերի մասին գրած իր հետաքրքիր հետազոտության մեջ ուղղակի ասում է. «Առաջ աչար գնող վաշխառուների մեջ կային

---

[1] «Նոր հոսանք», 1914 թ., № 6, էջ 946—947։

[2] «Մուրճ», 1904, № 9, էջ 32։

[3] Նույն տեղը, էջ 33։

հայեր, թուրքեր, հույներ, հրեաներ։ Իսկ վերջին 10—11 տարիների ընթացքում բոլոր վաշխառուները **բացարձակապես մահմեդականներ են՝** թուրքեր, քրդեր»[1]։ Վաշխառուն, նշում է այնուհետև Խաժակը, հետապնդում է իր պարտապաններին ամենուր։ Պանդուխտ գնացածներին իրենց ձեռքից բաց չէին թողնում վաշխառուների գործակալները։ Նրանք իրենց ձեռքին ունենալով համապատասխան փաստաթուղթ (պոլիս) հետևում էին, որ պարտքերը գանձվեն ամենուր և անհրաժեշտ հավելումով։ Այդպիսով, «փոլխաճիները կամ վաշխառուները, որ երկրում փող են տալիս 100—160 %-ով, Պոլսում ստանում են պարտք առնողի եղբորից, զավակից կամ հորից։ Այդ փոլխաճիների 9/10-ը թուրքեր ու քրդեր են և միմիայն 10 %-ը հազիվ հայեր»[2]։

Այս ասպարեզից քրիստոնյաներին վտարելու պրոցեսը տեվեց տասնամյակներ և, ինչպես մյուս բնագավառներում, ավարտվեց մահմեդական վերնախավի հաղթանակով։ Պատճառը այն քաղաքական ու սոցիալ-տնտեսական տեղաշարժերն էին, որոնք բնորոշում էին երկրի ներքին կյանքը։

«Երկրի ձայնը» շաբաթաթերթում զետեղված հոդվածաշարում Ճեմիլը մանրամասնորեն կանգ է առնում մեր դարասկզբին տեղի ունեցած փոփոխությունների վրա և նշում, որ քրիստոնյաների համար ստեղծված անապահով վիճակը նրանց ստիպում էր «քիչ-քիչ ասպարեզեն քաշվիլ» և տեղը զիջել ուժ և հարստություն ունեցողին։ Հեղինակը գտնում է, որ կարողությունից զրկվելուց բացի, քրիստոնյան չէր կարող հարկահավաք մնալ նաև այն պատճառով, որ նա «կվախենար գյուղերը պտտիլ և երկրորդ, որ կարևոր է, եթե նույնիսկ վերցներ (հարկահավաքի պարտականությունները— Հ. Ի.) չէր ստանար պետք եղածին չափ։ Հրամայել գյուղացուն, մանավանդ թուրքին, չէր կարող»[3]։

Գրականության մեջ և մամուլում ցույց է տրված նաև խնդրի մյուս կողմը։ Կուտակված հարստությունը մահմեդական տարրերի մոտ հաճախ էր վերածվում անշարժ ու անօգուտ գանձի, չէր դառնում կապիտալ, հասարակական զարգացման գործոն։ Այն օգտագործվում էր գլխավորապես որպես տոկոսով տրվող դրամ, վաշխ, և այդ ճանապարհով էր կատարում իր շրջանա-

---

1 Խաժակ, *Հարկերը Տաճկաստանում*, էջ 66, ընդգծումը մերն է։
2 Նույն տեղը, էջ 67։
3 «Երկրի ձայնը», 1906, № 8, էջ 14։

ռությունը։ Ահա այդ դեպքում, նա հետզհետե քայքայում էր հին հողատիրությունը, զրկելով ունեցվածքից թե խոշոր և թե մանր հողատերերին։ Կ. Մարքսը վերլուծելով վաշխառության ազդեցությունը հին կացութաձևը քայքայելու վրա, գտնում էր, որ այդ պրոցեսի էֆեկտն «ամբողջապես կախված է պատմական զարգացման աստիճանից և դրանով պայմանավորված հանգամանքներից»[1]։ Միաժամանակ, Կ. Մարքսն ընդգծում է Արևելքի երկրներում վաշխառուի և նրա ցանցն ընկած մարդկանց հարաբերությունների առանձնահատկությունները։ «Վաշխառությունը ասիական ձևերի առկայության դեպքում,— գրել է նա,— կարող է գոյություն ունենալ շատ երկար ժամանակ, առաջ չբերելով ոչ մի ուրիշ բան, բացի տնտեսական և քաղաքական կոռուպցիայից»[2]։ Հենց այդպիսի դեր էլ կատարեց և մինչև այսօր շարունակում է կատարել վաշխառուական կապիտալը Թուրքիայում։

Կայսրությունում տնտեսական անկումը չափազանց ակնառու էր, մասնավորապես, գյուղատնտեսության մեջ։ Վերևում բերած և բազմաթիվ այլ օրինակներ, դարեր ի վեր բնորոշ էին օսմանյան տիրապետության տակ հեծող գյուղի և կեղեքվող գյուղացիության համար։ Նորն ի հայտ եկավ XIX դարում, երբ կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում առևտրային ու վաշխառուական կապիտալն սկսեց որոշ դեր խաղալ որպես նոր արտադրաձևի նախադրյալ։ Սակայն դրանց փոխազդեցությունը կախում ուներ նոր կարգերի զարգացման աստիճանից։ «Որքան ավելի ուժեղ է զարգացած առևտրային ու վաշխառուական կապիտալը,— գրել է Վ. Ի. Լենինը,— այնքան ավելի թույլ է արդյունաբերական կապիտալի (կապիտալիստական արտադրության) զարգացումը և, ընդհակառակն»[3]։

Իսկ կապիտալիստական արտադրության զարգացումն անխուսափելիորեն առաջ է բերում գյուղացիական տնտեսության քայքայում, գյուղացիության պրոլետարացում, կուլակության, որպես դասակարգի, ձևավորումն ու ամրապնդումը։ Մինչդեռ Թուրքիայում այդ ամենը կատարվում էր չափազանց դանդաղ,

---

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 25, ч. II., стр. 143.

[2] Նույն տեղը, էջ 146։

[3] Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 3, էջ 211։

Թշվառ վիճակի առջև կանգնեցնելով հողից զրկված գյուղացուն, որի աղքատված ձեռքերը հաճախ մնում էին առանց աշխատանքի և նա, բանվոր դասակարգի շարքերը լրացնելու փոխարեն, դառնում էր լյումպեն։ Տեղի էր ունենում այն, ինչ արձանագրել էր Վ. Ի. Լենինը Ռուսաստանի զարգացման պրոցեսն ուսումնասիրելիս՝ «առևտրային ու վաշխառուական կապիտալի ինքնուրույն զարգացումը մեր գյուղում կասեցնում է գյուղացիության քայքայումը»[1]։ Ահա այդպիսին է առևտրային ու վաշխառուական կապիտալի երկակի բնույթը։ Թուրքական գյուղում տիրող պատկերը հենց և նման էր այստեղ նկարագրած պրոցեսին։ Առևտրային ու վաշխառուական կապիտալը մեծ ու փոքր արտադրողներին ներգրավում էր շուկայական հարաբերությունների մեջ, արագորեն քայքայում էր նրանց տնտեսությունը։ Շահագործման ֆեոդալական ու նախաֆեոդալական ձևերի հարատևումը և նույնիսկ ուժեղացումը, այնուամենայնիվ, ի վիճակի չէին բոլորովին արգելակելու նոր արտադրաեղանակի զարգացումը։ Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային մասը հետզհետե ավելանում էր։ Թուրքիան դառնում է միջազգային շուկա հացահատիկ, թարմ ու չորացած մրգեր, բանջարեղեն արտահանող կարևոր երկրներից մեկը։ Ըստ 1910 թ. տվյալների, նրա արտահանության 30 %-ը կազմում էին մրգերն ու բանջարեղենը։ Միաժամանակ, մեծ թափով աճում էին բամբակի, ծխախոտի, այլ տեխնիկական կուլտուրաների, ձիթապտղի պլանտացիաների և շերամապուծության համար օգտագործվող հողային տարածությունները։ XIX դարի վերջին տասնամյակում գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից անասնապահությունը ևս սերտ կապեր է հաստատում ներքին և արտաքին առանձին շրջանների շուկաների հետ։ Իսկ Օսմանյան կայսրության համար, որտեղ որոշ ժողովուրդներ ու ցեղեր զբաղված էին գլխավորապես անասնապահությամբ, այդ հանգամանքն ուներ մեծ նշանակություն։ Հենվելով պաշտոնական տվյալների վրա, «Բյուրակն» շաբաթաթերթը հաղորդել է, որ միայն «Ասիական Թուրքիո մեջ 45 միլիոն ոչխար, 7 միլիոն հասարակ այծ, 2 միլիոն էնկյուրիի (Անգորայի) այծ և 3 միլիոն եզ, կով և այլն կգտնվեն»[2]։ Եթե անասունների ընդհանուր

[1] Լենին Վ. Ի., Երկ., հ. 3, էջ 213։
[2] «Բյուրակն», 1907, № 5—6, էջ 113։

քանակը բաժանենք երկրի ազգաբնակչության թվի վրա, կստացվի, որ մեկ մարդուն ընկնում էր երկու գլուխ անասուն։ Սա բավական բարձր տվյալ է, որ չունեին բազմաթիվ երկրներ։ Սակայն անասնապահական տնտեսությունը վարվում էր հին, պապենական ձևով, նրա հիմնական շրջանները գտնվում էին երկրի հետամնաց լեռնային մասերում և Արաբիայի անապատներում։ Մյուս կողմից, Թուրքիայի խոշոր քաղաքների շուրջը նոր էր միայն հիմք դրվում եվրոպական իմաստով ինտենսիվ անասնաբուծությանը։ Այսպես, Կ. Պոլսի մերձակայքում գտնվող Զաթալջա, Իզմիտ և մի քանի այլ գավառակներ մայրաքաղաքին մատակարարում էին կաթ, միս, բանջարեղեն, ձու, մեղր, փայտի ածուխ, տեղական արդյունաբերության և արհեստավորների արտադրանք և այլն ապրանքներ[1]։ Իզմիրը, Տրապիզոնը, Բեյրութը, Բաղդադն ու Դամասկոսն ունեին իրենց մատակարարող քաղաքամերձ շրջանները։ Երկու դարերի սահմանագծում, կայսրության ամբողջ տարածքի վրա կային Վ. Ի. Լենինի արտահայտությամբ «քաղաքամերձ տնտեսություններ», որոնք ևս նշանավորում էին կապիտալիստական հարաբերությունների մուտքը Թուրքիա։ Հիշյալ տնտեսությունների տեր մանր հողագործն առևտուր էր անում իր ամեն ինչով քիչ-քիչ, և՛ տնով՝ վարձու տալով այն ամառանոցավորներին ու տնվորներին, և՛ իր բակով, և՛ իր ձիով..., հացամթերքով, անասնակերով, կաթով, մսով, բանջարեղենով, թփապտղով, ձկնով, փայտեղենով և այլն...»[2]։

Քաղաքային աճող բնակչության պահանջների համեմատ աճում էին կաթնատու անասունների տված մթերքների քանակը, թռչնաբուծական տնտեսությունների թիվը։ Միսը, կաթը, ձուն, բուրդը, կաշին դառնում էին նաև արտահանության ապրանքներ։ 1910 թ. երկրի արտահանության 10 %-ը կազմում էր բուրդը։

Կապիտալիստական արտադրության հետագա զարգացումը իր հետ բերեց ագրոտեխնիկական միջոցների և մեքենաների ավելի լայն օգտագործում, ստեղծվեցին ֆերմերների առանձին տնտեսություններ։ Հետևաբար, նոր խթան ստացան շուկայի համար արտադրվող մթերքների արտադրությունը, տնտեսու-

---

[1] Տե՛ս Խաճնյան, Աշխարհագրություն..., էջ 219, 252—253։

[2] Լենին Վ. Ի., Երկ., հատ. 3, էջ 376—377։

թյունների մասնագիտացումը և հետագա զարգացման հեռանկարները։

Ժամանակի պահանջին ընդառաջելով, նույնիսկ պետական իշխանությունները անհրաժեշտ գտան դյուրացնելու երկրի տընտեսության մեքենայացումը։

1874 թ. նոյեմբերին սուլթանը հրապարակեց հատուկ իրադե, որով մաքսային հարկերից ազատվում էին ներմուծվող մեքենաները և գյուղատնտեսական գործիքները։ Օրենքում նշված էր, որ արտոնությունը տարածվում է բոլոր այն «մեքենաների ու գործիքների վրա, որոնք գործի են դրվում շոգու կամ որևէ այլ ուժի միջոցով...»[1]։

Մեքենաների ներմուծումը արագորեն աճեց։ Դրանք ուղարկվում էին Ռուսաստանից, Եվրոպայից ու Ամերիկայից։ Շուտով ստեղծվեցին հատուկ առևտրական հիմնարկներ, որոնք զբաղվում էին միայն գյուղատնտեսական գործիքների ու մեքենաների ներմուծմամբ և վաճառքով։

Անցյալ դարի վերջերին այդ ասպարեզում առաջնակարգ դիրք գրավեցին Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Իզմիրի ԱՄՆ-ի հյուպատոսը 1900 թ. իր հաշվետվության մեջ հայտնում էր, որ այդ քաղաքի շրջակայքում շատ տնտեսություններ հրաժարվել են արորից և անցել նորագույն ամերիկյան գութանների օգտագործմանը։ Վերջիններից Թուրքիայում վաճառվում է տարեկան մինչև 2000 հատ։ Հնձող մեքենաները թանկ են, այդ պատճառով դրանք ներմուծվում են մոտ 300 հատ»[2]։ Ամերիկյան արտահանողները հետզհետե խորանալով երկրի ներքին շրջանները, հաջորդ 1901 թ., արդեն Խարպուտում (Խարբերդ) հիմնեցին գյուղացիական գործիքներ ու մեքենաներ վաճառող ընկերություն։

Իհարկե, նկարագրվող փոփոխությունները հեշտ ու հանգիստ չէին ընթանում։ Տեղական բնակչությունը դժվարությամբ էր հրաժարվում հին սովորություններից ու մշակման ձևերից և նրա պահպանողականությունը հաղթահարելու համար անհրաժեշտ էին զգալի ջանքեր։

Տեղի էին ունենում մեքենաներ փչացնելու, կամ ուղղակի

---

[1] АВПР, Новый турецкий стол, д. 3701, л. 11.

[2] «Вестник финансов, промышленности и торговли», 1901, № 2, стр. 113.

ջարդումփշուր անելու դեպքեր։ Ե. Լեփսիուսը օրինակներ է բերում նման գործողությունների մասին։ 1909 թ. Ադանայում երիտթուրքերի կազմակերպած ջարդերից հետո, գրում է նա, «առաջին բանը, զոր թուրք գյուղացիները ըրին, ուրիշ բան չէր, բայց եթե խորտակել հարյուրավոր շոգեշարժ կամնակները (կալսիչ մեքենա) և արորները, զորս հայ գյուղացիները Եվրոպաեն բերել տված էին, շահագործելու համար Կիլիկիո դաշտը»[1]։

Նման դեպքեր շատ էին պատահում հատկապես արևելյան շրջաններում, որտեղ ամեն մի նորը, առաջավորը կապվում էր հայերի, հույների ու հրեաների հետ, որոնց դեմ հաճախ էին սուր ճոճում երկրի հետադիմական տարրերը և կառավարության ու վերնախավի ներկայացուցիչները։ Ծովափնյա և արևմտյան ավելի զարգացած մասերում նորամուծությունները դառնում էին սովորական և խոշոր հողատերերը բազմաթիվ գյուղատնտեսական աշխատանքներ կատարում էին մեքենաներով։

«Ատանայի լայնածավալ դաշտերեին մեջ,— գրում էր «Բյուրակն» շաբաթաթերթը 1906 թ.,— 150 քլմ. երկարության և 40 քլմ. լայնության միջին տարածության մը վրա 58—60 մեծ կալի մեքենաներ օրը 850—900 թոնո ապրանք կ'արտադրեն... կան նաև 5—600 հնձող մեքենաներ»[2]։ Մի քանի շաբաթ հետո նույն թերթը Ամասիայի, Մարզվանի և Հարևան գավառներից տպագրում է հաղորդում, որտեղ խոսվում է առատ բերքի մասին և ապա նշվում, որ «առատ հունձք մը կալ ընել վերցնելը ամիսներու կը կարոտի, և շատ անգամ վերջացնելե առաջ ձմեռը վրա հասնելով, կալին մեկ մասը բացօդյա կը մնա անձրևի և ձյունի տակ։ Հնձելու և կալի մեքենաներու պակասությունը այս տեսակ առատության տարիներուն մեջ ալ ավելի կը շեշտվի»։ Թղթակիցը զարմանք է արտահայտում, որ «Պոլսի և Իզմիրի երկրագործական գործիքներ ծախող կարևոր վաճառատուններըв չեն կարողանում իրենց ապրանքը հասցնել գավառները»[3]։ Երկրի զարգացման ցածր մակարդակը, այդպիսով, պատճառ էր հանդիսանում զգալի կորուստների և տնտեսական անապահով վիճակի, նույնիսկ այն դեպքերում, երբ կային բնության բարիքներից օգտվելու բարենպաստ պայմաններ։

---

[1] Լեփսիուս Սոհաննես, *Հայաստանի ջարդերը*, Կ. Պոլիս, 1919, էջ 258։

[2] «Բյուրակն», 1906, № 19, էջ 453։

[3] Տե՛ս նույն տեղը, № 24, էջ 575։

Որպես գրական երևույթ, անհրաժեշտ է նշել գյուղատնտեսության համար կադրեր պատրաստելու առանձին փորձերը։ 1880-ական թթ. մոտ երկու տասնյակ դպրոց-ուսումնարաններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին հայրուրավոր երիտասարդներ։ Նշված հաստատություններից հիշատակության արժանի էին բարձրագույն երկրագործական (Ադանա, Հալեպ, Կ. Պոլիս), անասնաբուժական և անտառաբանական (Կ. Պոլիս) դպրոցները։ Գործում էին նաև այգեգործական, կաթնատնտեսական, շերամապահական և գործնական վարժարաններ, նահանգական կենտրոններում կային շորս ագարակ-դպրոցներ (չիֆթլիկ մեքթեպլեր) և այլն։ Այս ուսումնական հաստատությունները, որոնց ղեկավարները մեծ մասամբ այլազգի մասնագետներ էին, հանդիսացան թե կադրերի պատրաստման և թե գիտական նորույթների ու գրական փորձի կուտակման ու տարածման յուրահատուկ կենտրոններ։

«Գյուղատնտեսության գիտության մեջ,— գրում է Հ. Արամյանցը,— մասնավոր տեղ և նշանակություն ունի շերամապահությունը, որուն նվիրված է Գևորգ էֆ. Թորգոմյանը, Պրուսայի շերամապահության բարձրագույն վարժարանի մեծանուն տնօրենը»[1]։ Գ. Թորգոմյանը իր հերթին ցույց տալով վարժարանի դերը հիշյալ բնագավառի զարգացման մեջ, գտնում է, որ գիտական նվաճումների պրոպագանդան օգտագործելով մրցման միջոցը, զգալի դեր է կատարում երկրի շերամապահության առաջընթացում։ «Կրնամ պարծենոք խոստովանիլ,— գրում է նա,— թե շերամի մրցումները, շերամապահական վարժարանիս նպատակին լրացուցիչ մասը կազմեցին։ Եթե այսօր օսմանյան երկրի շերամ բռնելու համար տեղերու մեջ վանդակներու (քերեվեթ) վրա շերամ սնուցնելու լավագույն կերպը ըստ բավականի ընդհանրացած տեսնվի, աս մրցմանց անվիճելի արդյունքն է»[2]։

Ակնհայտ է սակայն, որ հաճախ, տեղում և եվրոպական երկրներում պատրաստված բարձրորակ կադրերը չէին օգտագործվում իրենց մասնագիտությամբ, կամ անհրաժեշտ պայմաններ չէին ստեղծում նրանց նորմալ աշխատանքի համար։ Մեջլիսի դեպուտատ Ն. Տաղավարյանը 1909 թ. նիստերից մեկում ուղ-

---

[1] «Գյուղատնտեսի տարեցույցը», Կ. Պոլիս, 1914, էջ 9։

[2] Նույն տեղը, էջ 7։

դակի հայտարարեց. «Եվրոպայի մեջ երկրագործություն սովորելու համար ղրկված ուսանողներեն սամ. Հայրենիքն օգտված չէ ցարդ և այս դրությամբ չէ կարող օգտվիլ»[1]: Նա բերում է հետևյալ օրինակը. մինչև 1896 թ. Եվրոպայում այդ մասնագիտությամբ սովորած 58 հոգուց 35-ը դարձել է պետական պաշտոնյա, միայն 6-ը՝ երկրագործ, իսկ մնացած 17-ը՝ աշխատում է այլ բնագավառներում։ Ն. Տաղավարյանը փորձում է բացահայտել այդ երևույթի արմատները։ Նա այն կարծիքին էր, որ գյուղատնտեսությամբ զբաղվելը ձեռնտու գործ չէր, կապիտալ ներդնել գյուղատնտեսության մեջ՝ շահավետ չէր։ Ծախսված դրամագլուխը միայն 4 % շահ կարող էր բերել։ «Մինչդեռ, որևէ այլ եղանակով 100-ին 10 տոկոսը միշտ ապահոված կրնա համարվիլ...»[2]։ Բնականաբար, գյուղատնտեսությունից կապիտալի արտահոսք էր կատարվում դեպի առևտուրը, նպատակահարմար էր համարվում զբաղվելու վաշխառությամբ և այդպես կապվելու գյուղատնտեսության հետ, քան ուղղակի զբաղվել դրանով։ Ինչ վերաբերում է գյուղացուն, ապա նա «միանգամայն անտարբեր էր իր հողի նկատմամբ, որովհետև նա գիտեր, որ ինչքան բարձր եկամուտ էլ հողը նրան բերեր, դրանից իր սեփական վիճակը ոչ մի չափով չէր բարելավվելու»[3]։

Չափազանց աննշան էր նաև գյուղատնտեսական դրամարկղերի դերը, որոնք հիմնադրվեցին դեռևս 1867 թ., և որոնց նպատակը գյուղատնտեսական արտադրության բարելավումն էր։ 1888 թ. նրանք միավորվեցին և ստեղծվեց առաջին ազգային գյուղատնտեսական բանկը Թուրքիայում։ Բանկի գոյությամբ իբր թե պետք է վերջ դրվեր գյուղացու կախվածությանը վաշխառուից և առաջինին հնարավորություն տրվեր օգտվելու պետական օգնությունից՝ սերմացու, գործիքներ և այլն ձեռք բերելու համար։ Բայց ոչ մի նման բան տեղի չունեցավ։ Բանկը հենց սկզբից սպասարկում էր հարուստ ու միջակ հողատերերին և պետական պաշտոնյաներին։ Փոխատվությունը տրվում էր միայն նրան, ով ուներ գույք կամ կալվածքներ՝ ունեցվածքի արժեքի 50 տոկոսի չափով միայն։ Փոխատվությունը հատկացվում էր մինչև մեկ տարով՝ սերմեր և գյուղատնտեսական գոր-

---

[1] Տես. Տաղավարյան Ն., նշվ. աշխ., էջ 12, ընդգծումը մերն է։

[2] Նույն տեղը։

[3] Турецкий сборник, стр. 140.

ծիքներ ձեռք բերելու համար։ Կար փոխատվության մեկ ուրիշ ձև, որը տրվում էր 1-ից 10, նույնիսկ մինչև 15 տարով՝ պարտքի դիմաց գրավ դնելով հողը կամ գույքը և տարեկան 6 %-ի (փաստորեն 9 %) հավելումով։ Պարտքը ժամկետին չմուծելու դեպքում գրավ դրված ինչքը վաճառվում էր։

Այսպիսով, զարգացած երկրներում սովորական և նորմալ երևույթ դարձած գյուղատնտեսական բանկը և նրա վարկերը, փոխանակ ինչ-որ չափով բարելավելու գյուղատնտեսության ընդհանուր վիճակը և օգնելու գյուղացիներին ու հողատերերին նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու իրենց արտադրությունը, հանդիսացան վերջիններիս տնտեսական քայքայման նոր միջոց։ Երկրի ասիական մասում այս բոլորի հետևանքով տեղի ունեցած աղքատացման ու քայքայման դեպքերի քանակը հնարավոր չէ հաշվի առնել։ Բայց ակնհայտ է, որ այդ պրոցեսը կրում էր մասսայական բնույթ։ Իսկ Սիրիայում, Ա. Ռուպպինի հաշվումներով, հիպոթեկային պարտքի զգալի աճի հետևանքով, գյուղատնտեսական բանկն ամեն տարի իր սեփականությունն էր հայտարարում բազմաթիվ հողակտորներ, որոնք վաճառվում էին աճուրդով և կազմում էին պարտքատերերի գրավ դրած գույքի արժեքի 15—30 տոկոսը[1]։

Ըստ պաշտոնական տվյալների, բանկի գոյության առաջին տարում՝ 1889 թ., այն գրավ դրած գույքերի դիմաց տրամադրել էր 160 հազար թուրքական լիրա վարկ, 1900 թ.՝ արդեն 2923 հազար, 1910 թ.՝ 5435 հազար, իսկ 1914 թ.՝ 6123 հազար թուրքական լիրա[2]։ Նույն տվյալների համաձայն բանկի մաքուր եկամուտը աճելով՝ 1892 թ. 77885 հազար թուրքական լիրայից 1910 թ. հասել էր 192235 հազարի, իսկ 1913 թ.՝ 211 759 հազար լիրայի։ Պատերազմի տարիներին այն իջել էր մոտ 10 անգամ, իսկ 1917 թ.՝ կազմել ավելի քան 454 մլն. թուրքական լիրա[3]։ Հետևաբար, գյուղատնտեսական բանկը, իր գոյության երեք տասնամյակի ընթացքում, հետզհետե իր ձեռքում էր կենտրոնացրել երկրի հիպոթեկային ամբողջ վարկը, երկրորդ պլան մղելով մանր ու մեծ քաղաքային ու գյուղական վաշխառուներին։ «Երկրագործական բանկը,— 1914 թ. գրել է Հ. Արամ-

1 Տե՛ս Ռուպպին Ա., նշվ. աշխ., էջ 101։

2 Ystatistik yıllığı, cild 7, 1934—35, s. 448.

3 Տե՛ս նույն տեղը, էջ 451։

լանցը,— հակառակ իր նպատակին, դարձած է ներկայիս իսկական ու մարմնացած վաշխառուական կեդրոն մը և արդեն պաշտոնական հիմնարկությունները չեն կրնար սպասված օգտակարությունը մատուցանել։ Այսօր ան կօգնե անոր, որ հող ունի, որ կալվածք ունի... իսկ երբեմն իսկ չի նայիր այն գեղջուկին, որ միայն կորովի բազուկ, արտադրելու ընդունակություն, երկիրը հարստացնելու փափակ ունի...»[1]։

Վ. Ի. Լենինը կապիտալի նման ձևերով կուտակումը բնութագրել է որպես կապիտալիստական հարաբերությունների զարգացում հողագործության մեջ, որի բնորոշ գիծը հանդիսանում է «ճորտային գյուղական տնտեսատիրոջ անջատվելու պրոցեսը»[2]: Բացատրելով իր միտքը, Վ. Ի. Լենինը գրել է, որ «գյուղական տնտեսատիրոջից հողի անջատման պրոցեսն արտահայտվում է երկու ձևով՝ վարձակալական սիստեմով և հիպոթեկային պարտաբեռնվածությամբ»[3]։ Եվ իսկապես, թե Ռուսաստանում և թե Թուրքիայում այդ երկու ձևերն էլ հետզհետե հողատերերին զրկում էին իրենց արտ ու դաշտից և նրանց ստիպում դառնալու կախյալ գյուղացի, բատրակ, կամ հեռանալու քաղաքներ և այլ երկրներ՝ աշխատանք ճարելու։ Նշված երևույթն ակներև էր հատկապես տեխնիկական կուլտուրաներին հատկացված հողատարածությունների ընդլայնման և դրանց ագրոտեխնիկայի նոր միջոցներով մշակելու ասպարեզում։ Հատուկ ուշադրության առարկա էր դարձել ծխախոտը, որն ամենաշահավետ գյուղատնտեսական կուլտուրաներից էր և, մեծ մասամբ, արտահանվում էր։ 1888 թ. դրա մշակման և արտահանման մենաշնորհ իրավունքը տրվեց ֆրանսիական «Ռեժի» ընկերությանը։ Վերջինս նյութական շահագրգռվածության, համոզելու, ուժ գործադրելու և այլ միջոցներով աշխատում էր բարձրացնել ծխախոտի արտադրությունը։ Դա նրան հաջողվեց, որովհետև հետզհետե աճում էր ծխախոտի պահանջը թե ներքին և թե արտաքին շուկայում։ Այսպես, 30 տարվա ընթացքում այդ կուլտուրայի ցանքատարածություններն ավելացան երեք անգամ, համաշխարհային պատերազմի նախօրյակին հասնելով

---

[1] «Գյուղատնտեսի տարեցույցը», էջ 67։
[2] Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 4, էջ 133։
[3] Նույն տեղը, էջ 136։

մոտ 600 հազար դյոնումի[1]*։ Երկու անգամ ավելացավ ծխախոտի արտադրությունը և նույնքան անգամ՝ մեկ աշխատողի արտադրողականությունը։ Այդ ամենն, անշուշտ, արդյունք էր ոչ միայն մշակման առաջավոր մեթոդների, այլև գյուղացիների ինտենսիվ շահագործման։*

Մի շարք անբարենպաստ տարիներից հետո չափազանց բերքառատ եղավ 1899 թվականը։ Այդ տարի հացահատիկների բերքը կազմեց 200 միլիոն փթից ավելի և Թուրքիան դարձավ միջազգային շուկա հացահատիկ արտահանող երկրներից մեկը։ Զգալիորեն աճեց մրգերի, յուղատու կուլտուրաների ու համեմունքների արտադրությունը։ Այս ընդհանուր տենդենցն արտահայտում էր այն իրողությունը, որ Թուրքիայում հետզհետե ձևավորվում ու ընդլայնվում էր ներքին շուկան և զարգանում ու աճում էր արտաքին առևտուրը։ Այդ երևույթին մեծապես նպաստում էին երկաթուղային ցանցի ընդլայնումը և հաղորդակցության միջոցների բարելավումն ընդհանրապես։ Հողի շահութաբերության բարձրացումն անմիջապես արձագանք գտավ շուկայի հետ կապված կալվածատերերի մոտ։ Օրինակ, Մուսուլի շրջանում հարուստ քաղաքացի հողատերերն իրենց վարձակալ գյուղացիներից պահանջեցին բերքի 1/10-ը անջրդի և կեսը՝ ջրովի հողերից[2]*։*

Պալու քաղաքի մեծահարուստ խաչմաթյանը, Թեփենքոյ գյուղի գյուղացիներից «բերքի 50 %-ի փոխարեն պահանջում էր 60—70 %, գյուղացիներին պարտադրելով տեղափոխել այն Պալու, երբեմն էլ Խարպուտ (Խարբերդ), նայած թե որտեղ էր նա վաճառելու հացը»[3]*։ Առուծախի առարկա դարձան ոչ միայն հացն ու տեխնիկական կուլտուրաները, այլև գյուղատնտեսական մթերքները։ Վաճառողը հաճախ ինքը հողատերն էր լինում։ Քիչ չէին դեպքերը, երբ այդ բարիքները վաճառվում էին միջնորդների ձեռքով։ Շուկայական հարաբերությունների զարգացման արդյունք հանդիսացավ գյուղատնտեսության մասնագիտացումը երկրի խոշոր շրջաններում կամ վիլայեթներում, երբեմն էլ առանձին գավառներում ու գավառակներում։*

---

[1] *Դյոնումը հավասար է 913—919 քառ. մետրի, կամ մոտ 1/10 հեկտարի։*

[2] *Տե՛ս* Томилов П. А., Отчет о поездке по Азиатской Турции в 1904 г., стр. 286.

[3] ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3053, л. 135.

Մասնագիտացումը կապված էր թե արտաքին շուկայի և թե տեղական պահանջմունքների աճի հետ։ Արևմտյան Հայաստանի շրջաններից հարևան վիլայեթներն էին արտահանվում ցորեն, բրինձ, թարմ և չոր մրգեր, բանջարեղեն և այլն։ Լայնորեն հայտնի էր և Վանի վիլայեթից դուրս էր տարվում Արտամետ գյուղի խնձորը։ Խարբերդից բամբակը տեղափոխվում էր Էրզրում, Բիթլիս, Դիարբեքիր և նույնիսկ Եվրոպա։ Անցյալ դարի 90-ական թթ. մի շարք շրջաններում բամբակը դաշտերից դուրս էր վանում նույնիսկ ցորենը և հացահատիկն ընդհանրապես։ Պալուի շրջանում, օրինակ, Մուրադչայի գետափի լավագույն արտերը տրամադրվում էին բամբակի կուլտուրային, որի զբաղեցրած տարածությունները անցել էին մշակող հողերի 25 %-ից[1]։ Բամբակի մեծ մասն արտահանվում էր, բայց մնացածը մշակվում էր տեղում։ Ականատեսը արձանագրել է, որ մանածագործությունն այստեղ կատարվում է միայն արհեստավորների ձեռքերով, սակայն այն չափազանց լավ վիճակում է։ Հաշվումները հանգեցրել են այն եզրակացության, որ Պալու քաղաքում և նրա գյուղերում մոտ 140 մանարաններ են աշխատում, ապահովելով 500—700 բանվոր-բանվորուհիների բավարար վաստակը[2]։ Գյուղատնտեսության մասնագիտացումը և մթերքների, մանավանդ նրանց ապրանքային մասի աճը, նկատվել էր դեռևս մինչև արևելյան ճգնաժամը և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը։

Ա. Կոլյուբակինը գրել է, որ Մուշ—Բուլանխի դաշտավայրում, Ճապաղջուրի, Խնուսի, Քղիի, Դերջանի, Էրզրումի, Երզնկայի, Վանի, Խարբերդի, Դերսիմի շրջաններում հայերը ամիշտ ու մեծ չափերով զբաղվում էին հողագործությամբ բոլոր այն վայրերում, ուր տեղը հնարավորություն էր տալիս։ Նրանք ունեին բազմաթիվ եղջերավոր անասուններ, իսկ առանձին վայրերում՝ ոչխարի մեծ հոտեր, զբաղվում էին գյուղատնտեսության մյուս բնագավառներով՝ բանջարաբուծությամբ, պարտիզպանությամբ, մեղվաբուծությամբ, գինեգործությամբ, մշակում էին բամբակ և այլն[3]։ Իր ուսումնասիրություններում հեղինակը հողագոր-

---

1 ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3053, л. 137.

2 Տե՛ս նույն տեղը, թերթ 160։

3 Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения..., т. I, ч. 1, стр. 119.

ծության մակարդակը և արդյունավետությունը կապում է ոչ միայն հողի բերրիության, նրա տեղի ու աշխարհագրական դիրքի, այլև բնակչության սովորույթների հետ։ Այսպես, նա գտնում է, որ քրդերը, իրենց պատմական ու կենցաղային սովորույթների համաձայն, մեծ մասամբ զբաղվում են անասնապահությամբ, թուրքերը՝ անասնապահությամբ ու երկրագործությամբ։ Սակայն ամենալավ ու որակյալ հողագործները՝ հույներն ու հայերն էին։ Բոլորի վրա, անշուշտ, հսկում են «հարուստները և զանազան կուլակ-միջնորդները»։ Պարտիզպանությամբ և գինեգործությամբ զբաղվող ամենամեծ տնտեսությունները պատկանում են խոշոր սեփականատեր թուրք-աղալարներին, քաղաքացի հայերին և ղզլբաշներին ու գյուղացիները վարձակալում են դրանք։ Արևմտյան Հայաստանում համարյա ամենուր, տնտեսության տարբեր օժանդակ բնագավառները մեծ օգնություն են բերում հողագործությանը։ Այստեղ կան ամբողջ գյուղեր, որոնց բնակչությունը համարյա չի զբաղվում հողագործությամբ, ապրելով մեծ մասամբ զանազան արհեստներով՝ մանածագործությամբ, կոշկակարությամբ, դարբնությամբ և այլն»[1]։

Ազգային ու կրոնական տարբերությունները բացասական դեր էին կատարում, խանգարում էին գյուղացիների դասակարգային միավորմանը, կամ մթագնում դասակարգային գիտակցությունը, հաճախ սոցիալական բախումները վանելով հետին պլան, որ օգուտ էր միայն վերնախավին։ Այդ երևույթն իր անցանկալի ու երբեմն ճակատագրական հետքն էր թողնում տնտեսության վրա։ Բայց արձանագրված են բազմաթիվ դեպքեր, հատկապես գյուղացիական ու ազգային-ազատագրական շարժումների վերելքի շրջաններում, երբ թուրքական բռնապետության դեմ կռվի էին դուրս գալիս բոլոր կեղեքված ու հալածված խավերի մարդիկ անկախ կրոնից ու ազգությունից։ Եվ որովհետև շարունակվում էին գյուղացիական սեփականության անօրինական հափշտակումներն ու բռնությունները, ապա դրանք առաջ էին բերում ակտիվ ռեակցիա՝ բոլոր ժողովուրդների աշխատավորների կողմից։

Համաձայն մի աղբյուրի վկայության, անցյալ դարի երկրորդ կեսին, պայքարում, որ մղում էր «խաղաղ երկրագործը

[1] Колюбакин А. М., указ. произв., стр. 220.

կալվածատիրոջ դեմ, մահմեդական իսկական գյուղացիությունը (լինեն դա թուրք, թե քուրդ) չէր մասնակցում (կալվածատիրոջը օգնելու նպատակով— Հ. Ի.), այլ ընդհակառակը, շահագրգռված էր այն բանում, որ հաղթանակ տանեն հայ գյուղացիությունը, քանի որ այդ հաղթանակը կթեթևացնեն նաև մահմեդական գյուղացիության դրությունը»[1]։

Միանգամայն արդարացի է Ի. Հյուսրևը, որն օսմանյան պետությունը անվանում է «գյուղացիության շահագործմանը նպաստող ժանդարմական կառավարություն»[2]։ Վերնաշենքը հետևողական կերպով ձգտում էր պահպանել ու կոնսերվացնել գյուղում գոյություն ունեցող փոխհարաբերությունները։ Անկողմնակալ մասնագետների կարծիքն ընդհանուր է այն հիմնական խնդրում, որ հասարակական նոր կարգերի անցման ուղիներում «ամենակարևոր արգելքը... հանդիսանում էր մասնավոր սեփականության անապահովությունը սուլթանական կառավարության ու տեղական փաշաների կամայականություններից»[3]։ Իսկ թուրքական ազգային բուրժուազիան, որը պետք է գլխավորեր նոր, կապիտալիստական կարգերին կողմնակից ուժերի պայքարը ֆեոդալիզմի ու նրա հարուցած արգելքների դեմ, ի վիճակի չեղավ իրագործելու իր պատմական առաքելությունը։ Դեռ ավելին, ինչպես նշել են Թուրքիայի կոմունիստական կուսակցության ղեկավարները, հետագայում էլ նա չցանկացավ «օգնել խոշոր ֆեոդալական հողատիրությունը ինչ-որ չափով սահմանափակելու և հողային ռեֆորմ անցկացնելու ուղիով, որը և հանդիսացավ գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների դանդաղ զարգացման և նրանում ֆեոդալական ու կիսաֆեոդալական հարաբերությունների զորեղ մնացուկների պահպանման պատճառներից մեկը»[4]։

Մինչև այժմ էլ ամեն մի նորընտիր Մեջլիս ու նոր նշանակված բուրժուական կառավարություն, անկախ կուսակցական պատկանելությունից, իր պարտքն է համարում փոշիների տակից դուրս բերել ագրարային հարցը, քննարկել ու վիճարկել

[1] ЦГИАЛ, ф. 408, оп. 77, д. 270, л. 5—6.

[2] Husrev Y., Türkiye köy iktisadiatı, Ankara, 1934, s 131.

[3] Еремеев Д. Е., Энтогенез турок, М., 1971, стр. 176, ընդգծումը մերն է։

[4] Демир Якуб, Окан Халис, Турция: пути развития. «Проблемы мира и социализма», 1965, № 5, стр. 68.

այս կամ այն նախագիծը, չկատարելով սակայն ոչ մի գործնական քայլ դեպի վերջնական նպատակը։ Ֆեոդալական հարաբերությունների կայուն վիճակը, կալվածատերերի և նրանց շահերը պաշտպանող իշխանությունների հզորությունը, կապիտալիստական հարաբերությունների անասելի դանդաղ առաջընթացը, գյուղացիների ցածր կենսամակարդակը, հետամնացությունը, անտարբերությունն ու քաղաքական պասսիվությունը հասցրին այնպիսի դրության, որ գյուղացիությունն ակտիվորեն չէր էլ ձգտում լուծելու հողային հարցը։ Օբյեկտիվորեն ստեղծված պայմանները, չնայած առանձին շրջանների ու տնտեսությունների զարգացման բարձր մակարդակին, նույնիսկ ամերիկյան տիպի ֆերմաների գոյությանը, կարող էին ապահովել գյուղատնտեսության զարգացումը միայն պրուսական ուղիով։ Այդպես էլ եղավ և այդ հանգամանքն իր կնիքը դրեց երկրի հետագա զարգացման վրա։

Նշված բոլոր երևույթների առկայությունը, անշուշտ, չի նշանակում, որ Թուրքիան, ինչպես փորձում են պնդել առանձին հեղինակներ, զարգացել է ինչ-որ ուրույն ընթացքով։

Թուրքիայի հողային հարաբերություններն ուսումնասիրող Սուադ Աքսոյը գտնում է, որ իր հայրենիքում կատարվել է հողային սեփականության տրանսֆորմացիա՝ կիսաֆեոդալական ու ֆեոդալական ձևերից դեպի բուրժուականը, դեռևս անցյալ դարի վերջերին[1]։ Կան նաև բոլորովին հակառակ կարծիքներ, որոնք ընդհանրապես չեն տեսնում ոչ մի զարգացում գյուղատնտեսության մեջ կամ տեղաշարժեր նկատում են միայն քաղաքներում։ Այդպիսին է խոշոր տնտեսագետ Վ. Թոթոմյանցի կարծիքը։ Երիտթուրքերի շարժման կապակցությամբ բնութագրելով երկրի տնտեսական վիճակը, նա գրել է. «Թուրքիան կապիտալիստական է միայն իր գլխավոր քաղաքային կենտրոններում։ Իսկ Փոքր Ասիայի ներքին մասն ամբողջապես գտնվում է բնատնտեսության վիճակում»[2]։ Իհարկե, հեղինակավոր մասնագետը սխալվում էր։ Այնտեղ ևս զարգանում էին բուրժուական հարաբերություններն ու ծլարձակում կապիտալիստական կարգերը։ Դա անկասկած է։ Վեճի առարկա է այն պրոբլեմը, թե այդ պրոցեսը ներքին զարգացման հետևանք էր, թե արտաքին

---

1 Տե՛ս Suad Aksoy, Türkiye'de toprak meselesi, Ist , 1969, s. 40—43.
2 «Современный мир», 1908, № 10, стр. 17.

ազդեցության՝ առևտրի, կուլտուրական ու տնտեսական կապերի և այլ գործոնների։ Արևմտյան հեղինակների մեծագույն մասը երկրորդ կարգի գործոնների կողմնակիցն է։ Նրանց ազդեցության տակ մի շարք ժամանակակից թուրքագետներ արտաքին կապերին և հատկապես արտաքին առևտրին վերագրում են վճռական նշանակություն կայսրության տնտեսական կյանքում, որի մասին դեռևս կխոսվի ներքևում։ Մինչդեռ հարուստ աղբյուրների, գրականության և մամուլի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական էական տեղաշարժերը՝ նոր հարաբերությունների ծնունդը և նրանց դանդաղ զարգացումն արգասիք էին հիմնականում տեղական գործոնների, որոնք կայսրության ժողովուրդների ամբողջ պատմական ընթացքի վրա ունեցել են բախտորոշ նշանակություն: Իհարկե, չի կարելի ժխտել նաև արտաքին ազդեցության կարևորությունը կիսագաղութային երկրի համար։ Այդ մասին կխոսվի իր տեղում։ Առայժմ հիշենք Վ. Ի. Լենինի դրույթները ներքին և արտաքին առևտրի ազդեցության մասին՝ կապիտալիստական հարաբերությունների օրինաչափ զարգացման վրա։ Ելնելով Կ. Մարքսի իրացման տեսությունից, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ ներքին ու արտաքին շուկաների ազդեցության խնդիրը անհրաժեշտ չէ հասկանալու համար, «թե ինչպես է տեղի ունենում ամբողջ հասարակական կապիտալի վերարտադրությունն ու շրջանառությունը, այսինքն՝ արդյունքի իրացումը կապիտալիստական հասարակության մեջ»[1]։ Շարունակելով իր մեկնաբանությունները, Վ. Ի. Լենինը գրել է, որ արտաքին շուկայի հարցը պատմական հարց է «այս կամ այն երկրում. այս կամ այն ժամանակաշրջանում կապիտալիզմի զարգանալու կոնկրետ պայմանների հարցը»[2]։ Ուրեմն, Վ. Ի. Լենինը գտնում էր, որ որևէ երևույթի էությունը հասկանալու համար անհրաժեշտ է կոնկրետացնել և պարզեցնել իրավիճակը, վերցնել խնդրի գլխավոր, կարևոր կողմը, որպեսզի հնարավոր լինի հաստատել այս կամ այն դրույթը։ Ահա այս իմաստով էլ ներքին և արտաքին շուկաների համատեղ ազդեցության խնդիրը կապիտալիզմի զարգացումը հասկանալու համար նա համարում էր ոչ պարտադիր։ «Խստորեն տեսական

[1] Լենին Վ. Ի., Երկ., հատ. 4, էջ 85—86։

[2] Նույն տեղը, էջ 101։

առումով սնանկ այդ բաժանումը,— գրել է Վ. Ի. Լենինը,— հատկապես քիչ պետքական է այնպիսի երկրների համար, ինչպիսին է Ռուսաստանը»[1]։ Ուզում ենք նորից կրկնել, որ Օսմանյան կայսրությունը բազմաթիվ հասարակական երևույթներով և, մասնավորապես, տնտեսական կյանքի որոշ կողմերով նման էր Ռուսաստանին և լենինյան այս սահմանումները կարելի է տարածել նաև Օսմանյան կայսրության վրա։

Վ. Ի. Լենինի համոզմամբ, այդ հասկացողությունը կարելի է փոխարինել մեկ ուրիշ բաժանումով, այսինքն՝ «Կապիտալիզմի զարգացման պրոցեսի մեջ զանազանելով, օրինակ, հետևյալ կողմերը. 1) Կապիտալիստական հարաբերությունների կազմավորումն ու զարգացումը (լիովին բնակեցված և զբաղեցրած տվյալ տերիտորիայի սահմաններում). 2) Կապիտալիզմի ընդլայնումն այլ տերիտորիաների վրա (մասամբ բոլորովին չզբաղեցրած և հին երկրից եկածներով բնակեցվող, մասամբ զբաղեցրած համաշխարհային շուկայից և համաշխարհային կապիտալիզմից հեռու կանգնած ցեղերով)։ Պրոցեսի առաջին կողմը կարելի էր անվանել կապիտալիզմի զարգացում դեպի խորքը, երկրորդը՝ կապիտալիզմի զարգացում լայնքով։ Այդպիսի բաժանումը կընդգրկեր կապիտալիզմի պատմական զարգացման ամբողջ պրոցեսը...»[2]։

Մեր կարծիքով, Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական զարգացումն ունեցել է նման պատկեր։

բ. Կապիտալիզմի դանդաղ առաջընթացը

Սոցիալ-տնտեսական վերոհիշյալ տեղաշարժերի պատկերը, որը գյուղում զգալիորեն քողարկված էր, չափազանց ակնառու կերպով հանդես էր գալիս առևտրի և արդյունաբերության բնագավառում։

Դարերով աշխույժ առևտրի ուղիներով հայտնի Արևմտյան Ասիան թուրքերի գրավումից հետո կորցրեց իր այդ նշանակությունը։ Սակայն մի քանի խոշոր քաղաքներ ու նավահանգիստներ՝ Կ. Պոլիսը, Իզմիրը, Տրապիզոնը, Հալեպը, Բեյրութը, Բաղդադը, Բասրան, Ալեքսանդրիան և ուրիշներ, պահեցին տնտե-

---

[1] Լենին Վ. Ի., Ելժ, հատ. 4, էջ 109։

[2] Նույն տեղը։

տական ու մշակութային կենտրոնների իրենց դերը նաև թուրքական օկուպացիայի առաջին շրջանում։ XVIII—XIX դարերի ընթացքում, երբ ռազմական հաղթարշավները դադարեցին կուտակման աղբյուր լինելուց, կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը համընթաց, ուժեղացավ կապն այդ կենտրոնների և ներքին շրջանների միջև, շնորհիվ առաջին հերթին քրիստոնյա ժողովուրդների գործունեության։

Թուրք խոշոր քաղաքական գործիչ կոմս Սաբահեդդինը «Թուրքերը և առաջադիմությունը» խորագրով իր հոդվածաշարում անդրադառնում է պատմական անցյալին և փորձում է ցույց տալ առանձին ժողովուրդների դերը կայսրության տնտեսական կյանքում, հիմնավորվելով նաև նրանց գործունեության ուղղության պատճառները։ Միջին դարերում թուրքերի մղած «հաջող պատերազմներու պտուղը,— գրել է նա,— սուրի ծայրով գրավված հարստությունները, ավարը, մեղկացման պատճառ կդառնային, ազատ կացուցանելով զանոնք գոյության համար անհրաժեշտ բաները հայթայթելու որևէ ճիգե և իրենց ապրուստը ձեռքով հողեն քաղելու ամեն մտահոգութենե»[1]։ Գրավման սկզբնական շրջանում լինելով խաշնարած ու վաչկատուն, թուրքերն ավելի ուշ սովորեցին հողագործություն, բայց միշտ մնացին զինվորական, կառավարիչ ու պաշտոնյա՝ իրենց գրաված հողերի վրա և շարունակեցին պատերազմել։ Նման գործելակերպը, կամ զինվորական հաղթարշավները, գրում է այնուհետև Սաբահեդդինը, թուրք տարրի համար ունեցան «սոցիալական շատ ծանրակշիռ հետևանքներ։ Մինչդեռ նվաճված ազգերը կրնային զբաղվիլ իրենց հողագործական, ճարտարապետական և առևտրական աշխատանքներով, թուրք տարրը կլքեր իր օջախը, թողուր իր հողերը, ցան ու ցրիվ կլլար ամեն կողմ, թե իբրև զինվորական և թե իբրև պաշտոնյա և հասարակականապես կկորսվեր անսահման կայսրության մեջ»[2]։ Իրականորեն ներկայացրած այս պատկերին որևէ բան ավելացնելը մեզ թվում է ավելորդ։ Բայց երբ «նվաճված ազգերի» ջանքերի շնորհիվ արտադրողական ուժերը զգալի առաջընթաց ապրեցին և երկրի տնտեսությունը դարձավ եկամուտների և պետական ծախսերի

---

[1] Սաբահեդդինի հոդվածաշարը տպագրել է «La Revue» հանդեսը, որտեղից այն արտատպել է «Երկրի ձայն» շաբաթաթերթը, 1907 թ., № 10, էջ 4։

[2] Նույն տեղը։

գլխավոր աղբյուրը, տիրող շրջաններն սկսեցին անմիջական հետաքրքրություն ցուցաբերել տնտեսական խնդիրների վերաբերյալ, աշխատելով կարգավորել արտադրության ու առևտրի հետ կապված հարաբերությունները։ Առաջնակարգ ու կարևոր դարձան սեփականության հարցերը։ Դադարեց գործելուց սովորության այն դատարանը, «որ զբաղած էր մասնավոր կալվածների և սեփականությանց գրավելովը»[1]։

Վաճառականությունը զարգացնելու և առևտրական կայքերը կանոնավորելու նպատակով, անցյալ դարի 20-ական թվականներին, դեռևս չունենալով սեփական առևտրական օրենսդրություն, թարգմանվեցին ֆրանսիական օրենքները։ Այսուհանդերձ, շարունակեցին գործել սովորույթների հետ կապված հարաբերությունները ու շարիաթի օրենքները և դրանից մտցված օրենքները առևտրի զարգացման վրա չունեցան որևէ ազդեցություն։ 1847 թ. առևտրի ու երկրագործության մինիստրությունը ևս չկարողացավ կատարել իր դերն առևտրի կարգավորման ասպարեզում։ Տարիներ անց, երբ հաստատվեց քաղաքացիական օրենսդրությունը կամ ստեղծվեց կայսրության օրենսգիրքը (մեջելլե), նրա 36-րդ և 44-րդ հոդվածներն առևտրի վերաբերյալ առաջարկում էին միայն ընդհանուր դրույթներ։ Ահա այս պատճառով էլ առևտրական կյանքը մինչև կայսրության վերջը չունեցավ իր կարգ ու կանոնը և երկրում շարունակեցին գործել հին սովորույթներն ու պրակտիկայի մտցրած նորմերը։ «Բյուրակն» առևտրական շաբաթաթերթը դեռ 1908 թ. անհրաժեշտ էր համարում պրոպագանդել այդ սովորույթները։ «Սովորությունները,— կարդում ենք այնտեղ,— երկու մասի կբաժանվին՝ 1. Ընդհանուր սովորություն (ուրֆը ամ.), 2. մասնավոր սովորություն (ուրֆը խաս), այսինքն՝ ընդհանուր վաճառականության կամ մասնավորապես անոր այսինչ կամ այնինչ ճյուղին հատուկ, ուրիշ տեսակետով մ'ալ առհասարակ ամեն երկրի, կամ այսինչ երկրին ամբողջության կամ թե միմիայն անոր մեկ մասին մեջ գործադրել կրնան ըլլալ»[2]։ Այնուհետև հոդվածում նշվում է, որ սովորույթներում հակասություններ ծագելու դեպքում միշտ նախընտրելի է տեղական կամ տվյալ բնավայրին հատուկ սովորույթը։

---

1 «Փորձ», 1876, № 1, էջ 281։

2 «Բյուրակն», 1908, № 19, էջ 586։

Փաստերը ցույց են տալիս, որ առևտրի զարգացմանը զուգընթաց անհրաժեշտ պայմաններ՝ օրենքներ, ընդհանուր չափեր, միասնական ֆինանսներ և այլն, որոնք պետք է ապահովեին առևտրի անվտանգությունը և մատուցեին տարրական հարմարություններ, չեն ստեղծվել ու շատ երևույթներ զարգացել են իներցիայով, պատահական դեպքերին ու ցանկություններին ընդառաջելով։ Անշուշտ, պետական շրջաններն ամեն կերպ աշխատում էին կարգավորել առևտրի ու արդյունաբերության վիճակը։ Այդ ջանքերն ակներև են թեկուզ մի շարք անհրաժեշտ օրենքներ ընդունելու մեջ։ Դրանցից կարևորները հետևյալներն են։ 1860 թ. օրենքներ հրապարակվեցին առևտրական և խառը դատարաններ հիմնելու մասին։ Տեղական առևտրական դատարանները կազմվում էին նախագահից և չորս անդամներից, որոնցից երկուսը պետք է լինեին մահմեդականներ, իսկ երկուսը՝ քրիստոնյաներ։ 1863 թ. օրենք ընդունվեց ծովային առևտրի վերաբերյալ։ Բազմաթիվ օրենքներ ընդունվեցին մաքսային տուրքերի մասին, որոնցից էր 1874 թ. օրենքը՝ մաքսային ներքին հարկադրումները վերացնելու վերաբերյալ, որը չափազանց կարևոր էր առևտրի ազատ ծավալման տեսակետից։ Բայց այդ օրենքը մինչև 1900 թ. մնաց թղթի վրա[1]։

Նշանակալից միջոցառում էր առևտրական գրասենյակների ստեղծումը մայրաքաղաքում (1878) և ապա առևտրական խոշոր կենտրոններում։ Առաջինի կազմում կային առևտրական խավերի 24 ներկայացուցիչներ, վիլայեթներում դրանց թիվը հավասար էր 12-ի, գավառներում՝ 8-ի, իսկ գավառակներում՝ 4-ի։ Դրանց ազդեցությունը գործնական կյանքում կախված էր նախագահի կամ անդամների ազդեցիկ լինելուց, իշխանավորների հետ ունեցած հարաբերություններից ու այլ պարագաներից։ Բոլոր դեպքերում գրասենյակների երևան գալը հաստատում էր անցյալ դարի վերջին քառորդին բավական զարգացած առևտրական կապերի գոյությունը։ Իհարկե, զարգացումն այս բնագավառում ևս ընթացել էր չափազանց ծանր, մի քանի տասնամյակ առաջ ունենալով պարզունակ ձևեր։ Օրինակ, Վանը մինչև անցյալ դարի կեսերն ունեցել է միայն ներքին պահանջները բավարարող առևտուր, իսկ արտաքին կապերը սահմանա-

[1] Տե՛ս Петросян Ю. А., «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958, էջ 23.

փակված են եղել Բիթլիս քաղաքում։ 1870-ական թթ. այն ընդլայնվել է՝ ընդգրկելով Կարինը, Այնթապը, Դիարբեքիրը, Խարբերդը, Թոքատը, Սղերդը և այլ քաղաքներ։ 1876 թ. դեկտեմբերին Վանում բռնկված հրդեհի հետևանքով այրվել էր մոտ հազար խանութ, որոնց տերերի մի զգալի մասը սնանկացել էր։ Մյուս մասը իր գործը շարունակել էր վարկի օգնությամբ և քիչ մասը միայն, ունենալով կուտակումներ, նորից էր բացել առևտրական իր կետերը Վանում և այլուր։ Փոքր-ինչ կենդանացած առևտրին նոր հարված են հասցնում 1894—1896 թթ. դեպքերը։ Տնտեսական կյանքը այս անգամ էլ ապրում է նոր վերելք, բայց առևտրականների և արհեստավորների խավը կորցրել էր հավատը իշխանությունների նկատմամբ։ Ահա թե ինչու «Վանի նահանգը ներկայումս» հոդվածաշարի հեղինակ Ա. Դարբինյանը, որից քաղված են վերևում բերված փաստերը, արձանագրում է. «Այժմ թե վաճառականները և թե հասարակ խանութպանները ավելի վարկով են գործում, քան թե դրամագլխով. պետք է ասել, որ Վանի առևտրականները խիստ զգուշությամբ են վերաբերվում դեպի իրենց վարկը, որովհետև եթե վարկի վստահությունը մեջտեղից վերացվի, կարելի է ասել՝ առևտրով զբաղվողների 90 %-ը անգործ կմնա և սովածության կմատնվի»[1]։ Նման աննախանձելի վիճակը երկրի կառավարողների ներքին քաղաքականության ուղղակի արդյունքն էր ու հետևանքը։

Առևտրի զարգացման պատկերն ավելի ամբողջական ներկայացնելու համար բերենք մեկ օրինակ ևս։ Անցյալ դարի կեսերին Մուշի մեջ կար ընդամենը 10—15 խանութ, որոնք ի վիճակի էին բավարարելու «մշեցիի ու դաշտեցի համայնքի» պահանջարկը։ Նկարագրվող ժամանակահատվածում «խանութպանին անծանոթ էր Սև ծովի եղերքը, Տրապիզոնի և Կարնո վաճառաշահությունը։ Իր առևտրի հրապարակը քույր Բաղեշ (Բիթլիս) քաղաքն էր...»։ Առևտուրը ավելի շատ նման էր ապրանքափոխանակության։ Ժամանակակից առևտրի պայմաններ, չափեր ու ձևեր գոյություն չունեին։ «Փոխանցումը քիսով (քիսեն— 500 ղրշ.) էր, պայմանները շատ տարբեր էին այժմեն, տուրևառի գործառնությունք փոխադարձ վստահության վրա

[1] «Մուրճ», 1904, № 8, էջ 20—21։

հիմնված էին. միամիտ և անկեղծ հավատարմությամբ մը և առանց վկայի, մուրհակի ու երաշխավորի»[1]։

Այդպիսի պարզ ձևերը հատուկ էին գավառական կենտրոններին։ Նույն պայմաններում չէր գտնվում, անշուշտ, առևտուրը վիլայեթների գլխավոր քաղաքներում։ Վերևում արդեն նշվեց, որ Կարինում ու Տրապիզոնում և նման այլ վայրերում առևտուրը մեծ շահ էր բերում։ Իսկ մայրաքաղաքը, Իզմիրը, Բեյրութը, Դամասկոսն ու Բաղդադը եղել ու մնում էին ներքին, արտաքին ու տարանցիկ կամ տրանզիտային առևտրի կարևորագույն կենտրոններ։ Հենց նույն խոշոր, տրանզիտային առևտրի կենտրոններ հանդիսացող քաղաքները դարձան այսպես կոչված կոմպրադորային բուրժուազիայի ծննդավայրերը։ Այդ բուրժուազիան հարստացավ միջնորդ առևտրի օգնությամբ և ապա իր ձեռքում կենտրոնացրեց ֆինանսական տարբեր տեսակի գործառնությունները, դառնալով սարաֆ, դրամափոխ։ Մեծաքանակ առևտուրն ամբողջապես նրանց մենաշնորհ իրավունքն էր։ Կ. Պոլսի մի քանի տասնյակ խոշոր առևտրական մասնագիտացված տներ ապրանքներով ապահովում էին հարյուրավոր ու հազարավոր միջին վաճառականների, որոնք իրենց հերթին դրանք փոխանցում էին ավելի մանր խանութպաններին ու կրպակատերերին, իսկ վերջիններս՝ շարջիկներին։ Անցյալ դարի կեսերին հաստատված այս սիստեմը հետագա հիսնամյակում կրեց որոշակի փոփոխություններ։ Առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչ և մտավորական Յ. Մըրմըրյանը այսպես է նկարագրում հիշյալ պրոցեսը։ Խոշոր վաճառատուների շուքի տակ երկար տասնամյակներ գոյություն ունեն «երկրորդական վաճառողներու խումբ մը՝ օտաճի ըսված, որոնց ձեռն էր հատորով (թոփով) վաճառելը տեղացի ու գավառացի վաճառողներուն, մինչ հակով վաճառումն՝ առանձնաշնորհումն էր վերոհիշյալ մեծ վաճառականներուն։ Այս խտրանքը տևեց մինչև 1880, երբ մեծ վաճառականք ալ սկսան հատորով բաց վաճառել ու այսպես օտաճիությունը, որ բանուկ ու զատ արհեստ մըն էր հրապարակին միջակ դրամագլխի և միջասահման կարողության տեր անձերու մեջ, հետզհետե նվազեցավ և անհետ եղավ՝ մեծ վաճառականներու ագահության և շահադի-

[1] «Երկիր ձայնը», 1907, № 27, էջ 12—13։

տության պատճառով»[1]։ Իսկ պատճառը բավականին լուրջ էր, քանի որ մեծածախ առևտուրը զգալիորեն ավելի պակաս շահ էր բերում, քան մանրածախը։ Ասածը կարելի է հաստատել մի շարք օրինակներով։ Orosdi Bak արտահանող ընկերությունը 1899—1914 թթ. իր փայատերերին տարեկան շահ էր վճարում 10—14 %[2]։ Մինչդեռ երկրի ներքին շրջաններում՝ Բիթլիսում, Խարբերդում, Վանում, Քղիում, և այլուր, շահի տոկոսը «եվրոպական ապրանքների վաճառքից կազմում է 75 և 100»։ Այնուհետև նշվում է, որ ծովեզրյա քաղաքներում բարձր եկամուտ էր բերում ոչխարի և բրդի վաճառքը[3]։ Նույնիսկ գավառական խանութպանների շահը հասնում էր մինչև 20 %-ի։ Այս երևույթներին զուգընթաց տեղի էր ունենում հետզհետե աճող ձգտում՝ կապերը խզելու մայրաքաղաքի մեծածախ առևտրականների հետ, որը և վերջիններիս ստիպում էր զբաղվել նաև մանր, առօրյա վաճառքով։ Բանն այն էր, որ երկրի մյուս կենտրոններում՝ Իզմիրում, Տրապիզոնում, Սամսոնում, Բեյրութում և ուրիշ քաղաքներում հետզհետե կազմակերպվում էին մեծածախ առևտրական տներ և ընկերություններ։ Գավառի խանութպանին ավելի ձեռնտու էր կրճատել իր ճանապարհը ու այցելել մոտակայքում գտնվող վաճառատունը, քան թե ժամանակ կորցնել մայրաքաղաք հասնելու համար։ Ամփոփելով 1906 թ. առևտրի տվյալները, «Բյուրակնը» նշում է՝ «Տրապիզոնի, Սամսոնի, Իզմիրի, Սելանիկի հրապարակները սկսել են մրցել Պոլսո հրապարակին հետ... ոչ միայն այս նավահանգիստներու հաճախորդները Պոլսեն չեն հայթայթեր իրենց տեսակները, այլ նաև սկսած են սաստիկ մրցում մը ընել։ Գարասուի, Այտընի, Գոնիայի վաճառականները Իզմիրեն կը հայթայթեն իրենց ապրանքը և Երզնկայի, Էրզրումի վաճառականները Տրապիզոն կդիմեն, ուրկէ կրնան ավելի աժան կերպով հայթայթել իրենց պետքերը»[4]։

Ամփոփման մեջ ուշադրություն է հրավիրվում նաև այնպիսի փաստերի վրա, որ Պոլսի խոշոր առևտրականներն աշխատում են մասնաճյուղեր բացել այս նոր կենտրոններում, իսկ

---

[1] Թուրքահայոց հին վաճառականությունն ու վաճառականք 1740—1890, գրեց Մ (բժմոյան) Ց. Գ., Կ. Պոլիս, 1908, էջ 34։

[2] Տե՛ս Ռուպպին, նշվ. աշխատ., էջ 167։

[3] Տե՛ս ЦГВИА, ф. 82, оп. 24, д. 3049, л. 115.

[4] «Բյուրակն», 1906, № 51—52, էջ 1203։

Բուրսայի, Էրզրումի ու այլ մեծ քաղաքների քիչ թե շատ ունևոր վաճառականները փորձում են ուղղակի կապեր հաստատել նաև եվրոպական առևտրական տների ու առանձին արտասահմանյան ընկերությունների հետ։ Շաբաթաթերթը իր հաջորդ տարվա հունվարի տեսության մեջ այս բոլոր երևույթները դիտում է որպես փոփոխություններ, որոնք հետզհետե դառնում են որոշակի, որը նման է «առևտրական կատարյալ ապակենտրոնացման»[1]։ Մինչդեռ, հենց շաբաթաթերթի նյութերը, հարուստ փաստական տվյալները, առևտրի հետագա զարգացման և առաջավոր եվրոպական ձևերի՝ Թուրքիա մուտք գործելու ապացույցն են։ Մեծ վաճառատների հաջողությունները, միջին ու մանր վաճառականների սնանկացումը և մրցումն ու պայքարի ուժեղացումը միանգամայն բնականոն են հենց կապիտալիզմի զարգացման պրոցեսի համար։ Այնուամենայնիվ, ինչպես երկրի տնտեսության մյուս բնագավառներում, այստեղ էլ կային զարգացումը դանդաղեցնող և խանգարող հանգամանքներ։ Դրանցից մեկը գոյություն ունեցող վարկային սիստեմն էր, որն արգելակում էր առևտրական կապիտալի արագ շրջանառությունը։

Ց. Սըրմըյանի տվյալների համաձայն, վարկի ժամկետը պայմանավորված էր ապրանքը վերցնող վաճառականի բնակավայրով։ «Պայմանաժամերը,— գրում է նա,— շատ անգամ առանց թուղթի և ստորագրության, Ռումելիի և Անատոլուի համար մինչև 120—140 օր կերկարատևեին, իսկ Կ. Պոլսի և շրջակայից համար՝ մինչև 61—91 օր»[2]։ Նշված ժամկետի ավարտին վարկով ապրանք վերցրած վաճառականը գալիս էր պարտատիրոջ մոտ, վճարում էր տարած ապրանքի գինը և վերցնելով նորը, վերադառնում էր իր բնակավայրը։ Այս փոխհարաբերությունները երկու-երեք տասնամյակների ընթացքում այնքան սովորական էին դարձել, որ գրականության մեջ և մամուլում արձանագրվել է, որ երկու դարի սահմանագլխին առևտրականների փոխադարձ կապերի հիմքը դարձել էր վարկը։ Ըստ «Բյուրակնի» բնորոշման, «գավառներու մեջ առևտրականները երեք կարգի կըբաժանվին։ Առաջին դասակարգը մաղաղաճի կկոչվի...»։ Սրանք տեղացի վաճառականներին ապահովում էին ապրանքով, կատարում գլխավորապես մեծաքանակ առևտուր։

---

[1] «Բյուրակն», 1907, № 5—6, էջ 99։

[2] Ս (ըրմըյան) Ց. Գ., նշվ. աշխ., էջ 59։

«Երկրորդ դասակարգը թաղերու կամ գյուղերու խանութպաններ են, որոնք տեղական սպառումի համար փոքրաքանակ կծախեն։ Երրորդ դասակարգը պոխճաճի կկոչվի։ Ասոնք շրջուն առևտրականներն են, որոնք մաղազաճիններեն ու խանութպաններե կգնեն և գյուղերու մեջ կծախենն»[1]։ Վերևում նշված ժամկետները մեծաքանակ առևտուրը կատարելիս հաստատվում էր մաղազաճիններին, կամ գավառական կենտրոններում առևտրական տուն ունեցողներին։ Խանութպանները, վերջիններից իրենց ապրանքները ձեռք բերելուց հետո, պարտավորվում էին գումարը վերադարձնել շաբաթվա վերջին, «կամ 31, 61, 91 օրվան մուրհակներ կուտան։ Ասոնց վարկի սահմանն է սովորաբար 100—150 ոսկի»[2]։ Ամենածանր վիճակում էին գտնվում պոխճաճինները, շրջող մանրածախ առևտրական-չարչիները, որոնք սովորաբար դրամ բոլորովին չունեին և առևտուր էին անում միայն վարկով։ Իրենց ապրանքը, մոտ 500 լիրայի արժեքի, սրանք հայթայթում էին առաջին երկու կարգի խանութներից և գյուղերում վաճառում ավելի թանկ գնով։ Վարկի ժամկետը 160—180 օր էր, որովհետև նրանք «գարնան միջոցին գյուղերու մեջ ապառիկ կծախեն հողագործներու, աշնան գանձելու պայմանով»։ Աշնանը նրանք տվյալ ժամանակի շուկայական գներով ապրանքի փոխարեն վերցնում էին գյուղատնտեսական մթերքներ, բուրդ, ոլֆոիկ և այլն։ Այս բոլորը պոխճաճինները հանձնում էին վարկատիրոջը, որը զգալի շահով դրանք վաճառում կամ ուղարկում էր ավելի խոշոր կենտրոններ։ Իսկ պոխճաճի՞ն։ Նրանց տաժանակիր աշխատանքը տալիս էր տարեկան միջին հաշվով 20—40 լիրա, ու նրանք կարող էին ընտանիք պահել «եթե միևնույն ատեն արտ մը, այգի մը ունենան...»[3]։

Լինում էին դեպքեր, երբ վերցրած վարկը ուշացվում, կամ չէր վերադարձվում պարտատիրոջը։ Պատճառները, որպես կանոն, անբարենպաստ պայմաններն էին, երբեմն՝ սնանկացումը։ Առևտրական գրասենյակների հաշվետվություններում բերված են ոչ միայն փաստերը, այլ նաև սնանկացման պատճառները, որոնց մի մասը մտացածին էր։ Կ. Պոլսի ռուսական գլխավոր հյուպատոսը 1903 թ. հուլիսի 31-ի իր զեկուցագրում նշում է,

[1] «Բյուրակն», 1906, № 8, էջ 171։

[2] Նույն տեղը, էջ 172։

[3] Նույն տեղը, էջ 173։

որ մանավանդ թուրք առևտրականների «սնանկացման» դեպքերը բազմաթիվ չէին դարձել։ Այդ «սնանկացումները» և անկարող հայտարարելը տեղական առևտրականների մեջ վերջին ժամանակներս օգտագործվում են որպես հեշտ եկամուտի և սպեկուլյացիայի միջոց։ Ապացուցվել է, որ թուրք վաճառականներից շատերը մեծ քանակությամբ ապառիկ ապրանքներ են գնում արտասահմանյան առևտրականներից, հետո արագ կերպով դրանք վերավաճառվում են, ձեռք են բերում անշարժ գույք, որը հաստատում են իրենց բարեկամների կամ ծանոթների անունով»[1]։ Դրանից հետո նրանք նորից են վերցնում ապրանքներ, ավելացնում իրենց պարտքը, միաժամանակ պարտավորվելով մյուս անգամ վճարել ճիշտ ժամանակին։ Բայց խոստումը մնում էր լոկ խոսք։ Այդ երևույթն ավելի շատ էր կրկնվում, երբ վարկով ապրանք տվող վաճառականը հայ, հույն կամ հրեա էր լինում։ Նրանցից թուրք վաճառականները ոչ մի վախ չունեին։ Պարզ է, որ թուրքական իրականությանը հատուկ այս երևույթն ուղղակի իմաստով մեծ հարված էր հասցնում առևտրի զարգացմանը, ինչպես նաև անվստահություն սերմանում առևտրականների միջև՝ մանավանդ մահմեդական վաճառականների նկատմամբ։

Առևտրի ծավալմանը զուգընթաց տեղի էր ունենում նրա հետագա մասնագիտացում։ Զափազանց շահավետ գործ էր դարձել առևտրական միջնորդությունը, որն ուներ բազմաթիվ ուղղություններ և այլազան բնույթ։ Էգեյան ծովամերձ շրջաններում, օրինակ, որպես միջնորդ հանդես էին գալիս գյուղացիներից հավաքած միրգը, և հատկապես թուզը տեղափոխող ուղտապանները։ Մրգեր հանձնելու վայրը Իզմիրն էր, գնորդները՝ կոմիսիոներ կամ միջնորդ առևտրականների մեկ այլ խումբ։ «Մրգերի շուկայում վաճառելով ապրանքը և ստանալով դրամը (ուղտապանները— Հ. Ի.) անմիջապես հաշիվը փակում էին գյուղացիների հետ, ինքնակամ կերպով որոշելով գինը, որի հետ գյուղացիները ստիպված էին համակերպվել»[2]։ Այնուհետև, Իզմիրի միջնորդ վաճառականը տեսակավորում էր միրգը կամ թուզը և այն վերավաճառում արտահանող առևտրականին։ Այս-

---

[1] АВПР, Политархив, д. 1638, л. 1.

[2] Tacalan Nurdoğan, Ege'de Kurtuluş Savaşi başlarken, „Milliyet", 11.10.1970.

պես, մրգեղենն անցնելով գյուղացուց ուղտապանին, նրանից միջնորդ վաճառականին և ապա խանութպանին կամ արտահանող անձնավորությանը, հետզհետե թանկանում էր, հավելյալ ծախսերը բարձրացնում էին նրա գինը։ Անհրաժեշտ էր վճարել ապարկի, նրա ծայրերը կարելու կամ քանդելու համար, տեղափոխող բանվորներին, պահեստապետին և այլն»[1]։ Այս պայմաններում, բնականաբար, միջնորդ բոլոր օղակներն օգտվում էին հանգամանքից և արագորեն հարստանում։

Միջնորդներ ունեին համարյա բոլոր խոշոր առևտրական տները, ընկերությունները, արտադրական միավորումները և այլն։ Միջնորդների մի խումբը զբաղվում էր միայն ապրանքներ տեղափոխելով։ Մյուսը ներկայացնում էր արտահանող կազմակերպությունների շահերը (տեղական մթերքներ ու ապրանքներ էր գնում և ուղարկում համապատասխան հասցեներով)։ Երրորդ խումբը կատարում էր ներմուծվող ապրանքների ընդունումը և այլն։ Կոնիայում նման հանձնարարություններ էին կատարում 30 խոշոր առևտրականներից մի քանիսը։ Այսպես, ապրանքներ տեղափոխելով էին զբաղվում Գ. Աչճյանը, Հ. Մագոսսյանը և ուրիշներ։ Տեղական ապրանքներ հայթայթում և արտահանում էին Բ. Կյուսենյանը, Ս. Մեյմուրյանը, Կ. Տիրացույանը, Հ. Դանիելյանը, Սարաֆյան եղբայրները, Հաջի Նազար Պալթայանը, Ալայբեյզադե Սաադք բեյը, Զիյերզադե Հաջի Ալի և Դերվիշ էֆենդիները, Փարլագզադե Հագգը էֆենդին, Վասիլաքի Լուքիտիսը, Սերաֆիմ Գոգոնիս օղլուն և ուրիշներ։ Ներմուծվող ապրանքների հանձնառու էր Գրիգոր էֆենդի Քետիճյանը և այլն[2]։ Անցյալ դարի վերջերին այս պատկերն ուներ կայսրության քաղաքների մեծագույն մասի առևտրական կյանքը, քանի որ հիշյալ քաղաքներում ազգաբնակչությունը բազմազգ էր և մահմեդականների կողքին բոլոր քիչ թե շատ հոծ բնակավայրերում ապրում էին հույներ, հայեր և հրեաներ, որոնք այդ գործում գլխավոր դեր էին կատարում։ Մյուս կողմից, քանի որ միջնորդ առևտուրը չափազանց շահավետ էր, նրանով զբաղվում էին բոլոր նրանք, ովքեր հնարավորություն և կարողություն ունեին՝ անկախ ազգությունից ու կրոնական պատկանելությունից։ Հիշյալ զբաղմունքը հանդիսացավ առևտրական և

---

[1] „Milliyet," 11. 10. 1970.

[2] Տե՛ս «Բյուրակն», 1906, № 15, էջ 359—360։

կոմպրադորային բուրժուազիայի ձևավորման կարևոր ուղիներից մեկը։ Այդ պրոցեսին նպաստեց կամ դրա զարգացման փուլը հանդիսացավ առևտրի մասնագիտացումը, այս կամ այն ապրանքների կենտրոնացումը առանձին առևտրական տների ու ընկերությունների ձեռքում։ Օրինակ, Հալեպում կային առանձին վաճառատներ, որոնք զբաղված էին միայն բրդի և բրդյա ապրանքների առուծախով, ուրիշները վաճառում էին միայն գորգեր, ճոթեղեն, կաշիներ, ներկեր, երկաթեղեն, կոշկեղեն և այլն։ Թ. Գույումճյանի և Յ. Թյուրապյանի առևտրական տները կատարում էին բրդի, բամբակի, այծի մորթու և գորգի մեծաքանակ արտածում, Պ. Պապիկյանը և Մ. Սահակյանը վաճառում էին մանած, լեղակ և օճառ, Վարդերես Ռկավոյը կատարում էր Անատոլիայի առևտրականների հանձնարարությունները, Գ. Ջիերչյանը և եղբայրները՝ նույնպես, Հ. Մինասը զբաղված էր մանուֆակտուրայի մեծաքանակ վաճառքով, Վ. Մարքորոլին և ընկ.՝ բրդի, Կարլ Կոխ, Ջոլինկեն և ընկ. և ուրիշներ՝ հանձնակատար վաճառականությամբ, Ա. և Ն. Հոմսի, Ժ. Անտրեա՝ բանկիրներ էին և այլն[1]։ Առևտրական գործի այս խոշոր ներկայացուցիչներն ունեին իրենց միջնորդները, գործակալները, ներկայացուցիչները երկրի տարբեր վայրերում ու տնտեսության բնագավառներում։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ անցյալ դարի 80-ական թթ. սկսած առևտուրը զարգանում էր թե խորությամբ և թե լայնքով, մեծանում էր ապրանքափոխանակության ծավալը և Թուրքիա էին մուտք գործում առևտրի նոր միջոցներ ու ձևեր։ Սակայն երկրում շարունակում էին գոյատևել առևտրի հին ձևերը։ Անհավասարաչափ զարգացումը եղել և մնում էր բնական այս ասպարեզում ևս։ Դրա լավագույն ապացույցը զարգացած առևտրին զուգահեռ տրանզիտային կամ տարանցիկ առևտուրն էր, որը դարեր շարունակ և իր նախնական ձևերով կատարվում էր կայսրության տարածքում և նրա համար ուներ կարևոր նշանակություն։ Այդ առևտրի հայտնի ուղիներից մեկը՝ Տրապիզոն—էրզրում—Թավրիզ ճանապարհն էր, որը երկու հարևան երկրներ կապում էր իրար հետ։ Բացի այդ, Ֆ. էնգելսի արտահայտությամբ, Կոստանդնուպոլիսը և Տրապիզոնը իրենց աշխարհագրական դիրքի շնորհիվ հանդիսացել են «ներքին

[1] Տե՛ս «Բյուրակն», № 16, էջ 381—382։

Ասիայի, Տիգրիսի ու Եփրատի հովիտների, Պարսկաստանի ու Թուրքեստանի հետ» քարավանային առևտրի գլխավոր կենտրոններ[1]։ Դրանց վրայով արտահանվում և ներմուծվում էին արդյունաբերության ու արհեստագործության արտադրանքներ, սննդամթերք, հումք, դեղորայք, համեմունքներ և այլն։ Պ. Չիխաչևը ընդգծում է, որ «տարանցիկ առևտուրը Էրզրումի համար կենսական կարևորություն ունեցող հարց է, և նրա դադարումը Օսմանյան կայսրության համար կլիներ լուրջ աղետ»[2]։ Այս գնահատականը ճշմարիտ է հատկապես այն շրջանների համար, որոնք գտնվում էին տարանցիկ առևտրի ուղիների վրա։ Գրականության և մամուլի բազմաթիվ էջեր են նվիրված Տրապիզոն—Թավրիզ կարավանային առևտրի ճանապարհի նկարագրությանը և նշանակությանը։ «Բյուզանդիոն» թերթի թղթակիցը խոսելով այդ ճանապարհի լավ ու վատ կողմերի մասին, ընդգծում է, որ դրա վրա տեղավորված բոլոր բնակավայրերը, որոնք հանդիսանում էին կարավանների կայաններ, հենց այդ պատճառով էլ ունեին աշխույժ, գործնական կյանք. «Միայն այդ կարավանաց երթևեկության շնորհիվն կանգուն կմնան, ոմանք ալ միայն այդ պատճառով ծնունդ առած են։ Որպես օրինակ, թղթակիցը ցույց է տալիս, Կարաքիլիսե և Դիադին բնակավայրերը, «որոնք պարզ գյուղային վիճակե քիչ ժամանակի մեջ քաղաքի վերածվեցան։ Ընդհակառակն, այդ գծեն դուրս մնացած բազմաթիվ շեներ իսպառ անշքացան կամ անհետացան...»[3]։ Թղթակիցն ավելորդ չի համարում նշել, որ «բովանդակ այդ ուղղությամբ գտնվող գյուղերուն մեջ չկա բան մը, որ դրամ չընե, ոչ միայն մարդոց և կենդանաց ուտելիքներն, այլ մինչև իսկ անասնոց աղտոտություններն, զի պարսիկ ուղտապաններն կգնեն զանոնք վառելու համար»։ Անշուշտ, դրամ էին բերում գիշերելու վայրերը, անասունների ու մարդկանց սպասարկումը, որոշ դեպքերում նաև պահեստներ դառած շենքերը և այն ամենը, որ պետք էին կարավաններին, նրանց վարողներին, պահապաններին և տերերին։

Թեև ճանապարհը երկար էր ու դժվարին, սակայն տաք եղանակներին չափազանց բանուկ էր։ Ճանապարհորդն իր ուղևորության ընթացքում իրար ետևից տեսնում էր «երկայնատա-

[1] Տե՛ս Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 12.
[2] Чихачев П. А., указ. произв., стр. 102—103.
[3] «Բյուզանդիոն», 9. 12. 1896։

րած կարավաններ ուղտերու, որք մեկ-մեկ կենդինար (180 օխա)* բեռներ շալակած կանցնին ու կերթան...»։ Կարավանները բաղկացած էին լինում 300—500, երբեմն 800—1000, և նույնիսկ 1500 ուղտերից, որոնց տողանցքը ձգվում է մեծ տարածության վրա, անցնելով «լեռ ու ձոր ու կգրավեն տասնյակ կիլոմետր երկարություններ»[1]։

Ուղևորությունը տևում էր 30 օր։ Որպեսզի կարավանները հանգիստ առնեին, ճանապարհը բաժանված էր երեք տեղամասերի՝ 10-ական օր էր տևում ճանապարհը Տրապիզոնից մինչև Էրզրում, այնտեղից՝ Դիզե, որը սահմանագլխին մաքսային մեծ կայան էր, և Դիզեից մինչև Թավրիզ։ Մեկ ամսվա ընթացքում, միջին հաշվով, երեք կարավան էր անցնում Տրապիզոնից Թավրիզ և նույնքան էլ վերադառնում էր։ Համաձայն հաշվումների, 5—6 օրը մեկ նրանք այցելում էին իրենց կայանները և այդպես՝ տարվա 6—8 տաք ամիսների ընթացքում։ Արևմուտքից եկող կարավանները Պարսկաստան էին տանում եվրոպական ապրանքներ, այնտեղից վերադարձողները՝ գորգեր, պարսկական արտադրության այլ ապրանքներ, մանավանդ, չոր մրգեր, արմավ, պիստակ, նուշ և այլն։

Չոր մրգերի մեծ մասը՝ 66 %-ը Թուրքիայի վրայով արտահանվում էր Արևմուտք[2]։ Կարավանային աշխույժ առևտուրը եկամուտ էր բերում ոչ միայն առևտրականներին, այլև բոլոր նրանց, ովքեր ինչ-որ մասնակցություն ունեին առևտրին կամ աջակցում ու սպասարկում էին դրան։ Սպասարկման գործը հատկապես շահավետ էր ուղտատերերի համար, որոնք ապրում էին Թավրիզում, Ուրմիայում, Խոյում կամ Սալմաստում, վարձում էին հատուկ ուղտապաններ և նրանց ուղարկում կարավանների հետ։ Մեկ ուղտի համար, որի վրա բարձում էին 180—230 օխա բեռ, պետք է վճարվեր 600—800 ղուրուշ։ Ճանապարհային որոշ ծախսեր (կերի, գիշերելու և այլն) հանելով, ապրանքատերերը տեղափոխման վճարը տալիս էին ուղտատերերին, որոնք և հաշվարկում էին իրենց վարձու աշխատավորներին։ «Բյուզանդիոնի» թղթակիցը գրում է, որ առաջինների եկա-

* Օխան քիչ ավելի է 3 ֆունտից։

[1] «Բյուզանդիոն», 7.12.1896։

[2] Տե՛ս Хащаб А., Экономическое положение современной Персии и ее торговля с прочими странами, «Мир ислама», 1912, № 2, стр. 178.

մուտը բավական մեծ էր, քանի որ նրանց մեջ կային այնպիսիները, որոնք պահում էին 1000—1500 ուղտ[1]։ Այդ մարդիկ հաճախ զբաղվում էին նաև առևտրով կամ ունեին որևէ արդյունաբերական ձեռնարկություն։ Տրանզիտային առևտուրը կատարվում էր նաև ձիերի, եզների ու գոմեշների միջոցով, որոնք ապրանքները սայլերով տեղափոխում էին մի կայանից մյուսը, երբեմն էլ սկզբից մինչև վերջ։ Ականատեսը գրում է, որ 1889 թ. նոյեմբերին Կովկասից Էրզրում ճամփորդելիս տեսել էր սայլերի մի մեծ կարավան։ Հակերի վրա ֆրանսերեն գրված էր «Տրապիզոն»։ Այդ ապրանքները Եվրոպայից Տրապիզոն—Կարին—Բայազետով Պարսկաստան էին ուղղվում։ Կարավանի հետ նրա պաշտպանության համար գնում էին մի քանի ձիավոր ու հետևակ տաճիկ զափթիեներ...»[2]։

Կարավանի ճանապարհները ապահով չէին ավազակային հարձակումներից, այդ պատճառով էլ կարավաններին, որպես կանոն, ուղեկցում էին զինված մարդիկ՝ զինվորներ, ժանդարմներ, տեղական պահակներ և հաճախ այս կամ այն ցեղապետի քուրդ հեծելազորը, որն իրենն էր համարում ճանապարհի որոշյալ հատվածը։ Այս վերջինները հենց իրենք էլ երբեմն թալանում էին կարավանները։ Անշուշտ, այս բոլորը հավելյալ ծախսեր էին պահանջում։ Եվ քանի որ շահը շատ մեծ էր, առևտուրը կատարվում էր մեծացող չափերով և ներքաշում նորանոր քաղաքներ։ Կ. Պոլսի կողքին տրանզիտային առևտուր էին անում Զմյուռնիան ու Ալեքսանդրետը, Մերսինն ու Բեյրութը, Սինոպն ու Սամսունը։ Կայսրության ներքին շրջաններում կարավանային առևտրի կարևոր կենտրոններ էին Հալեպը և Անկարան, Կոնյան և Դամասկոսը, Այնթապը և Կայսերին և բազմաթիվ այլ քաղաքներ։ Ա. Կոլյուբակինի ուսումնասիրություններում նշվում է, օրինակ, որ Խարբերդը (Խարպութ)՝ իր 30 հազարանոց բնակչությամբ, անցյալ դարի վերջին քառորդին, չափազանց կարևոր առևտրական կենտրոնի դեր էր կատարում «Ասիական Թուրքիայի ամբողջ հյուսիսարևելյան մասի համար, ունենալով Էրզրումին հավասար նշանակություն և հետ թողնելով Վանը և նույնիսկ Բիթլիսը։ Խարպութում և Մեզրեում կան մոտ 200 խոշոր և 400-ի հասնող փոքր ֆիրմաներ։ Առաջինները կատարում են ամբողջ

[1] Տե՛ս «Բյուզանդիոն», 9. 12. 1896։

[2] «Մուրճ», 1889, № 5, էջ 732։

մեծածախ առևտուրը՝ ինչպես ներմուծման, այնպես էլ մանավանդ արտահանման գծով, իսկ վերջինները զբաղվում են մանրածախ առևտրով»[1]։ Նման քաղաքներից կարելի է բերել նաև երկրի արևմուտքում գտնվող Իզմիրի օրինակը, ուր տասպառածեն շատ ավելի մեծ քանակությամբ մանած, որ կներածվի, Անատոլուի ներքին քաղաքները՝ Էնկյուրի, Քեոթահիա, Պիլեճեկ, Էսկիշեհիր և այլն ղրեկլու դըրանգիդ-ով, որու գործողությունները կկատարեն տեղացի հանձնակատար-վաճառականները»[2]։ Առևտրական գործառնությունների ծավալումը հետզհետե ավելի անհրաժեշտ էր դարձնում նրանց վարկավորման գործը և XIX դարի վերջին քիչ չէր առևտրական այն տների թիվը, որոնք ֆինանսավորվում էին բանկերի կողմից։ «Առևտրային կապիտալի զարգացումը,— նշել է Կ. Մարքսը,— կազմում է ֆեոդալական արտադրաձևից կապիտալիստականին անցնելուն նպաստող գըլխավոր մոմենտներից մեկը»[3]։

Թուրքիայում կազմավորվում էին երկրի խոշոր առևտրական կենտրոնները, ստեղծվում ընդարձակ պահեստային տնտեսություններ, բարելավվում ուղիները, կառուցվում էին երկաթուղագծեր, նոր նավահանգիստներ, ընդարձակվում էր առևտրավարկային կազմակերպությունների ու բանկերի ցանցը, կազմակերպվում էին բաժնետիրական ընկերություններ, առևտրական միավորումներ։ Առևտրական կապիտալը սկսում էր կենտրոնանալ որոշ մեծահարուստների և նշված ընկերությունների ու միավորումների ձեռքերում։

Երկու դարերի սահմանագլխին զգալիորեն աճել էր քաղաքների թիվը։ Դրանցից 8-ը ուներ 100 հազարից մինչև մեկ միլիոն և ավելի ազգաբնակչություն, 15-ը՝ 50—100 հազար և մոտ 120 քաղաքներում ապրում էր 10 հազարից ավելի մարդ[4]։ Հիշյալ քաղաքները առևտրական, տնտեսական, քաղաքական, կուլտուրական, վարչական և բազմաթիվ այլ կապերով կապված էին ավելի փոքր բնակավայրերի և գյուղերի հետ։ Այդ կապերը ստեղծել էին բարենպաստ պայմաններ հսկայածավալ երկրում ներքին

---

[1] ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3053, л. 452.

[2] *«Բյուրակն», 1907, № 23—24, էջ 560։*

[3] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 25, ч. I, стр. 365.

[4] *Տե՛ս* Annuair Oriental, Commerce, Yndustrie, Administration, Magistrature de L'Empire Ottoman, Constantinople, 1912, p. p. 40—48.

շուկան կազմավորելու համար։ Դրանք մեծ չափով նպաստում էին այսպես կոչված առևտրային հողագործության զարգացմանը։ Իսկ այդ գործոնները միասին վերցրած, վճռական դեր էին կատարում ներքին շուկայի ձևավորման ամբողջ պրոցեսում։ Վերջինը, ըստ Վ. Ի. Լենինի, ուներ մի շարք հատկանիշներ։ Դա ամենից առաջ, հողագործության մասնագիտացումն էր, որը «առաջ է բերում փոխանակություն՝ հողագործական տարբեր շրջանների միջև, հողագործական տարբեր տնտեսությունների միջև, հողագործական տարբեր արդյունքների միջև»[1]։ Մյուս հատկանիշը՝ հողագործության ներքաշումն էր ապրանքային շրջանառության մեջ։ Ինչքան արագ էր տեղի ունենում ներքաշումը, «այնքան ավելի արագ աճում է գյուղական բնակչության պահանջարկը» սպառման առարկաների նկատմամբ։ Մյուս կողմից «առևտրային հողագործության» զարգացումը ավելացնում էր արտադրության միջոցներ ստանալու պահանջարկը։ «Վերջապես, չորրորդ՝ առաջ է գալիս աշխատանքային ուժի պահանջ», քանի որ գյուղացիության քայքայումը և կապիտալիստական տնտեսության ամրապնդումը «ենթադրում է գյուղատնտեսական բատրակների և օրամշակների կոնտինգենտի առաջացում»[2]։

Այնուհետև, զարգացնելով Կ. Մարքսի դրույթը գյուղի դասակարգային շերտավորման վերաբերյալ, Վ. Ի. Լենինը գրում է, որ գյուղացիության տրոհումը տարբեր դասակարգերի՝ ներքին շուկայի կազմավորման կարևոր նախապայման է։ Նա իր միտքն ամփոփում է հետևյալ կերպ. «... հողագործական կապիտալիզմի յուրաքանչյուր քայլը դեպի առաջ նշանակում է ներքին շուկայի աճ, շուկա, որ ըստ Մարքսի տեսության, հատկապես հողագործական կապիտալիզմի միջոցով էլ ստեղծվում է»[3]։ Վերևում մենք փորձեցինք ցույց տալ, որ Օսմանյան կայսրությունում ևս զարգանում էր հողագործական կապիտալիզմը, տեղի էր ունենում գյուղատնտեսության մասնագիտացում։ Այսպես, սկսած 1880-ական թթ. գոյացել էին հացահատիկ, բամբակ, ծխախոտ, անասուններ, մրգեղեն, բանջարեղեն արտահանող շրջաններ։ Այդ հիմքի վրա էին զարգանում կապիտալիստական

---

[1] Լենին Վ. Ի., Երկ., հատ. 3, էջ 381։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, հատ. 1, էջ 596։

Հարաբերությունները երկրի ներսում, ստեղծվում էին տեղական շուկաներ, ընդլայնում էին իրենց կապերն ու ազդեցությունը դոնալ շուկաները, որոնք սպասարկում էին աշխարհագրական ամբողջ գոտիներ։ Խոշոր կենտրոնների տնտեսական կյանքի աշխուժացումը որոշակի կերպով ազդում էր փոքր քաղաքների ու մեծ գյուղերի տնտեսական զարգացման վրա։ Բազմաթիվ օրինակներից բերենք մի քանիսը։ Բալըքեսիրը, որը մեր դարասկզբին ուներ ընդամենը 13 հազար բնակիչ, հայտնի էր դարձել իր աբա կոչված գործվածքով, որն օգտագործվում էր վերնազգեստների համար։ «Բյուրակն»-ի տեղական թղթակցի հաղորդման համաձայն Բալըքեսիրի աբան «իր տոկունությամբ և անեղծ գույներով մեծ ընդունելություն գտած է թե Պալըքեսիրի շրջակա գավառներուն և թե Պրուսայի, Դարտանելի, Ռոտոստոյի և մինչև անգամ Իզմիրի և շրջակայից մեջ։ Տարին անգամ մը այդ կողմերեն վաճառականներ գալով, մեծաքանակ գնումներ կընեին, բայց այս տարի (1906 թ.) գրեթե անպակաս եղան հիշյալ վաճառականները մեր հրապարակին վրա»[1]։ Թղթակցությունն արդեն ցույց է տալիս հետզհետե ամրացվող տնտեսական կապերը, որոնք մինչ առաջին աշխարհամարտը դարձել էին մշտական։ Նույն ժամանակաշրջանում Խարբերդը եվրոպական ապրանքներ ստանում էր Կ. Պոլսից և Հալեպից, մանուսա (գործվածք)՝ Այնթապից և Արաբկիրից, մետաքսի գործվածքներ՝ Հալեպից և Դիարբեքիրից, յազմա (քող)՝ Թոքատից, Մալաթիայից, Ակնից, շալեր՝ Կյուրինից և այլն[2]։ Մեր միտքը հաստատելու համար բերենք նաև Վանի օրինակը։ Ծերունը (Ա. Դարբինյան) իր հոդվածաշարում գրում է, որ եվրոպական, ամերիկյան ու պարսկական ապրանքներից բացի «Վանն ստանում է թուրքական ապրանքներ թե Պոլսից և թե ներքին քաղաքներից։ Այս կարգի քաղաքներից ամենակարևորն են՝ Հալեպ, Այնթապ, Դիարբեքիր, Էրզրում, Խարբերդ, Բիթլիս, Սղերդ և այլն և այլն»[3]։ Այնուհետև նա նշում է, որ Այնթապից Վանը ստանում է մետաքսե գործվածքներ և մանուսա, Դիարբեքիրից՝ բամբակ, բրինձ, չարսավ և այլն, Էրզրումից՝ քաթան, կաշվեղեն, գործվածքներ, երշիկ, ապուխտ, Խարբերդից ու Թոքատից՝ բամբա-

[1] «Բյուրակն», 1907, № 3—4, էջ 88։

[2] Տե՛ս նույն տեղը, № 25, էջ 612։

[3] «Մուրճ», 1904, № 8, էջ 17։

կեղեն և յաղմա, Բիթլիսից՝ շամիչ, դոշաբ, մեղր և այլն, Սղերդից՝ կաշի, շամիչ, բրդյա գործվածքներ և հագուստներ։ Վանը Ռուսաստան և Պարսկաստան է ուղարկում ձուկ, բորակ, սխտոր և չորթան, իսկ Պոլիս, Տրապիզոն, Կարին, Հալեպ, Դիարբեքիր, Բիթլիս և այլ քաղաքներ՝ կաշի, մեղր, ձուկ, յուղ, արծաթյա զարդեր, սխտոր, բուրդ, կտավատի ձեթ և այլն։ Վանի նահանգից ոչխար է արտահանվում Հալեպ, Դամասկոս, Ուրֆա, Այնթապ, Եգիպտոս, մասամբ Պոլիս և այլ քաղաքներ[1]։ Սըվասն այնտեղ արտադրած տարեկան 60 հազար զույգ բրդե գուլպաներն ուղարկում էր Հալեպ, Դիարբեքիր, Այնթապ և ուրիշ տեղեր[2]։ Իզմիրի յաղման վաճառվում էր Այդընի վիլայեթի բոլոր քաղաքներում և գյուղերում, «Յաղմայի մեծաքանակ գնորդներ կուգան Գոնեայեն, Սպարթայեն, Ուշաքեն, Արշիպելագոսի բոլոր կղզիներեն»[3]։ Կաշվի վաճառքը կենտրոնացված էր Բեյրութում և Հալեպում։ Վերջինս կաշիներով սպասարկում էր Դիարբեքիրը, Մուշը, Այնթապը, Ուրֆան, Սևերեկը, Մալաթիան։ Խարբերդը, իր հերթին ստանալով տարեկան 5000 չմշակված կաշի, մշակելուց հետո դրանք ուղարկում էր՝ Պալու, Քղի, Բերկրի, Ակն, Արաբկիր, Տիվրիկ, Չմշկածագ և այլուր[4]։

Մարզվանի գործվածքեղենը տարածվում էր «Թուրքիո գրեթե բոլոր կողմերը, մասնավորաբար Էնկյուրիի, Խուտավենտիկեարի, Գոնիայի կուսակալությունները և անոնց շրջականները»[5]։

Կարելի էր թվարկել բազմաթիվ տնտեսական ու առևտրական այլ կապեր, որոնք ցույց են տալիս սպառողական ապրանքների թե պահանջարկի և թե արտադրության աճը, որն իր հերթին խորությամբ ու լայնքով արդյունք էր արտադրողական ուժերի զարգացման ու կապիտալիստական հարաբերությունների տարածման։ Այսինքն՝ տեղի էր ունենում ներքին շուկայի ձևավորման պրոցես, որը սակայն, ինչպես նաև երկրի զարգացումն ամբողջապես, ընթանում էր չափազանց անհավասար։

Նշված պրոցեսում կարևոր դեր էին կատարում տարվա ընթացքում հաջորդաբար կազմակերպվող բազմաթիվ տոնավաճառները։ Մամուլի տվյալներով, չորս հարևան վիլայեթներում՝

---

1 Տե՛ս «Մուրճ», 1904, № 8, էջ 17—18։

2 Տե՛ս «Բյուրակն», 1907, № 26, էջ 1035։

3 Նույն տեղը, № 19—20, էջ 465։

4 Նույն տեղը, № 39, էջ 1431։

5 Նույն տեղը, 1908, № 8, էջ 229։

Կաստամոնիում, Սեբաստիայում, Տրապիզոնում և Անկարայում, մեր դարասկզբին գործում էին ավելի քան տասը այդպիսի տոնավաճառներ։ Դրանք դարձել էին մեծածախ վաճառական տների ներկայացուցիչների հանդիպման կարևոր վայրեր։ Այսպես, Նիքսարի մոտ գտնվող Ջերմուկի տոնավաճառը տեղի էր ունենում մայիսի 15-ին, Ծափրազլում՝ սեպտեմբերի սկզբին, Զանկըրիինը՝ 13-ին, Ջերքեշում՝ 22-ին, Ամասիայում նոյեմբերի 10-ին և այլն[1]։ Եթե առևտրական գործառնությունները մի տոնավաճառում անհաջող էին, առևտրականն իր ապրանքներով տեղափոխվում էր հաջորդը և աշխատում այստեղ վերջացնել իր գործերը։ Նկատելիորեն ամրապնդվել էին փոխադարձ կապերը, կայունացել մեծածախ վաճառքի պատվերները, որոշակի էին դարձել առանձին խոշոր վաճառականների և ընկերությունների հարաբերությունները։ Այս ամենը որոշ չափով էժանացրել, հեշտացրել ու մոտեցրել էին անհրաժեշտ հանդիպումները, գործնական կապերը, թեթևացրել շատ հոգսեր։ Առևտրական ընկերություններն ամեն կերպ աջակցում էին իրենց համար ձեռնտու տոնավաճառների կազմակերպման գործին։ Նրանք աշխատում էին բոլոր տոնավաճառներում ունենալ իրենց գործակալներին, եթե նրանցում չէր մասնակցում պատասխանատու ներկայացուցիչներից մեկը։

Հետզհետե մնայուն ու մշտական էր դառնում գործակալների ներկայությունը գավառներում, որտեղ հիմնվում էին խոշոր առևտրական տների կամ փոքր առևտրի համար բաժանմունքներ։

Ժամանակակից պահանջներով առևտրական գործի բարձր կազմակերպվածության օրինակ կարող էր հանդիսանալ ծագումով սեբաստացի Իբրանոսյան եղբայրների ձեռնարկության հսկայական ցանցը։ Գրականության մեջ այն ներկայացվում է «Թուրքիո մեջ երբեմնի հայ առևտրական տուներուն մեծագույնը, որ իր կեդրոնը ուներ մայրաքաղաքին և հիսունե ավելի մասնաճյուղեր գավառի կարևոր կեդրոններուն մեջ»[2]։

Նույն աղբյուրներից իմանում ենք, որ առևտրական այդ տունը հաշվում էր 45-ից ավելի մեծ մասնաճյուղեր, որոնցից յու-

---

[1] Տե՛ս «Բյուրակն», 1906, №№ 35, 39, 42, 44։

[2] Սիմոնյան Ց. Գ., Հուշամատյան պոնտական Ամասիո, 1966, Վենետիկ, էջ 503։

րաքանչյուրն ուներ մեկից ավելի ենթամասնաճյուղեր՝ գավառի ավելի փոքր քաղաքներում։ Բացի այդ, կենտրոնական քաղաքների շուկաներում կային դրանց առևտրական կետերը, փոքրաքանակ առևտուր կատարելու համար։ «Մի քանի քաղաքներու մեջ ունեին իրարմե անկախ զույգ մասնաճյուղեր, մին Մանիֆաթուրայի և մյուսը՝ մանածի ճյուղը»[1]։ Չափազանց կանոնավոր էր դրված հաշվետվության և հաշվապահության գործը։ Իբրանոսյան եղբայրներն ունեին նաև մանուսայի, մետաքսի հյուսվածքների և մետաքսաթելի գործարաններ, որոնց բանվորների ու ծառայողների ընդհանուր թիվը անցնում էր 5000-ից։ Մինչև 1915 թ. նրանց դրամագլուխը կազմում էր 500 հազար թուրքական լիրա։ Ջարդերի տարիներին նրանք կորցրին գավառներում գտնված իրենց ամբողջ հարստությունը։ Կ. Պոլսում եղածը փրկելու համար փոքր եղբայրը՝ Մարուքեն, ստիպված էր մինչև դաշնակիցների կողմից մայրաքաղաքի գրավումը առերես ընդունել մահմեդականություն։ Շարունակելով իր գործը, նա տան դրամագլուխը պատերազմի վերջին հասցնում է մինչև 16 միլիոն լիրայի։ Իբրանոսյանների ազդեցությունը հասարակական կյանքում ևս բավական մեծ էր։ Նրանք հիմնել էին առևտրական դպրոց, աղջիկների վարժարան, մասնակցում էին դպրոցական, եկեղեցական և մշակութային որոշ հիմնարկների շինարարությանը։ Մեծ եղբայրը՝ Եփրեմը, մինչև պատերազմը գործը ղեկավարում էր մայրաքաղաքում։ «Ամբողջ Անատոլուի նորընտիր գավառագլուխներ և նահանգապետներ իրենց պաշտոնատեղիները մեկնելե առաջ կայցելեին իրեն. անոնք գիտեին, թե երթալիք տեղերնին Իբրանոսյան եղբարք մեծագույն մասնաճյուղեր ունեին։ Անոնք կհայտնեին համակրանք և տրամադրություն՝ ամեն կերպ ծառայելու, և կխնդրեին ճամբու ծախուց համար իբր թե փոխառություն։ Մեծ հաճաղան չէր մերժեր զիրենք, մինչ հիսուն ոսկի կուտար»[2]։ Իսկ տեղերում, երբ սրանք այցելում էին մասնաճյուղերը, ապա վերջիններիս կառավարիչները խնդրում էին դիմել իրենց՝ բոլոր պակասները (կահույք, իրեղեններ, երբեմն կանխիկ գումար և այլն) լրացնելու համար։ Այս «ժամանակավոր փոխառությունը» կամ պարտքը, իհարկե, երբեք չէր մարվում, քանի որ տրվում էր անվերադարձ։

---

[1] Սիմոնյան Ց. Գ., նշվ. աշխ., էջ 509։

[2] Նույն տեղը, էջ 506։

Ամենայն մանրամասնությամբ ներկայացված այս պատկերը անհրաժեշտ համարեցինք զետեղել գրքում, քանի որ այն չափազանց բնորոշ էր Օսմանյան կայսրությունում տիրող փոխհարաբերությունների համար։ Այն միաժամանակ ցույց է տալիս, թե կայսրության գոյության վերջին տասնամյակներին, իրոք, զարգացում էր ապրում առևտրական գործը, նույնիսկ երկրի ասիական նահանգներում։ Անշուշտ, երկրի եվրոպական մասերում և մասնավորապես Բալկաններում, առևտուրն ուներ ավելի բարձր մակարդակ։ Այստեղ որոշ չափով կիրառվում էին եվրոպական առևտրի կազմակերպման առաջավոր ձևերը։ Ամեն ինչից բացի, հետզհետե իրենց զգալ էին տալիս ինքնուրույն զարգացման հնարավորությունները, հատկապես անցյալ դարի վերջին քառորդին։ Իհարկե, բալկանյան բոլոր երկրները կամ շրջանները չէ, որ վայելում էին առանց կամայականությունների ու թալանի ապրելու իրավունքը։

Ինչպես նշում է Դ. Կոսևը՝ «Հունաստանը, Սերբիան և Ռումինիան գտնվում էին ավելի բարենպաստ պայմաններում, քան Բուլղարիան»։ Վերջինս անցյալ դարի առաջին կեսին փաստորեն հանդիսանում էր «Թուրքիայի ներքին պրովինցիան», որի պատճառով կապիտալի կուտակումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը այստեղ «սկսվեց ուշ և ընթանում էր դանդաղ»[1]։ Բայց թուրքերի հեռանալուց հետո զարգացման տեմպը զգալիորեն արագացավ։ Ազատագրված հողերում թուրք ֆեոդալներին փոխարինեցին և «առաջին պլան դուրս եկան բուլղարական բուրժուազիան և բուրժուական մտավորականությունը, որոնք ձևավորվել էին ֆեոդալական ռեժիմի պայմաններում»[2]։ Վերջին հանգամանքը, այնուամենայնիվ, ունեցավ իր արգելակող ազդեցությունը և ավատականության մնացուկները դեռ երկար ժամանակ իրենց զգալ էին տալիս։ Նման մեկ ուրիշ հանգամանքի վրա մեր ուշադրությունն է հրավիրում ֆրանսիացի խոշոր պատմաբան Ռոժե Պորտալը։ Բուլղարիայի ազատագրումից հետո թուրքերը հեռացան քաղաքներից ու նրանց փոխարինեցին տեղացիները, քաղաքները այսպես ասած «բուլղարացան»։ Երկաթուղիների և ճանապարհ-

---

[1] «Исторически преглед», 1956, № 3, стр. 30—31.

[2] «Освобождение Болгарии от турецкого ига», Сборник документов, т. III, 1878—1879, М., 1967, стр. 9.

ների վրա շինվեցին նոր փոքր քաղաքներ։ Վերջիններիս թիվը ավելացավ, բայց գյուղերում շարունակում էր ապրել ազգաբնակչության մեծագույն մասը։ 1885 թ. հաջորդած 50 տարիների ընթացքում Բուլղարիայում «քաղաքային ազգաբնակչության համամասնությունը (հարյուրից՝ 20 %) չէր փոխվում»[1]։ Նշանակում է, որ կես դարի ընթացքում թույլ էր մնում քաղաքի ազդեցությունը գյուղի վրա՝ իր բոլոր հետևանքներով։

Արծարծվող խնդրի մեծ մասնագետ ակադեմիկոս Ն. Տոդորովը իր «Բալկանյան քաղաքը XV—XIX դարերում» արժեքավոր աշխատության մեջ ևս նշում է, որ երկրամասի քաղաքների զգալի մասը անցյալ դարում կազմում էին փոքր և միջին քաղաքները։ «Այդ տեսակետից,— գրում է նա,— Դանուբի վիլայեթը տարբերվում էր Սերբիայից և Հունաստանից, որոնք ունեին զարգացած քաղաքների ավելի փոքր ցանց և քաղաքային ազգաբնակչության, բացարձակ և հարաբերական իմաստով, փոքր թիվ։ Միաժամանակ, այդ պետությունների մայրաքաղաքների բնակչության թիվը մի քանի անգամ մեծ էր մյուս քաղաքների ազգաբնակչությունից, այն դեպքում, երբ Դանուբի վիլայեթում չկար ոչ մի քաղաք, որն աչքի ընկներ իր մեծությամբ»[2]։ Այդպիսով, կապիտալիստական հարաբերությունների զարգացման կարևոր ցուցանիշներից մեկը՝ քաղաքների մեծացման պրոցեսը, ևս խոսում էր թուրքական տիրապետության բացասական ազդեցության մասին։ Մի խոսքով, նորմալ զարգացման ընթացք ունեին կայսրության կենտրոններից հեռու երկրները, և ընդհակառակը, այդ կենտրոնների ուժեղ ազդեցությունը համակողմանի բացասական հետքեր էր թողնում դրանցից ավելի մոտ գտնվող շրջանների վրա։

Այսուհանդերձ, ապրանքադրամային հարաբերությունները դանդաղ, բայց հետևողականորեն թափանցում էին ամենուր։ Դրա անհերքելի վկայության մասին են խոսում թե՛ ներքին, տնտեսության զարգացման փաստերը, թե՛ սահմանամերձ երկրների հետ աշխուժացող առևտրական կապերը։ Անցյալ դարի 70-ական թթ. Արևմտյան Հայաստանի և նրա հարևան շրջանների մասին գրած իր հետազոտության մեջ Յա. Մալաման նշում էր. «Էրզրումը հանդիսանում է կաշվի առևտրի կենտրոն,

[1] Roger Portal, Les Slaves. Peoples et nations, Paris, 1965, p. 368

[2] Тодоров Н., Балканский город..., стр. 414.

ուր բերում են չմշակված կաշիները Կովկասից՝ ալեքսանդրապոլցի և մասամբ ախալցխացի հայերը, և որտեղ դրանց փոքր մասը վաճառվում է հենց տեղում, իսկ մեծ մասը գնում են Դիարբեքիրից և Խարպուտից եկած վաճառականները»[1]։ Հաճախ էրզրումում հումքը և բուրդը կուտակում էին Տրապիզոնի վրայով Եվրոպա ուղարկելու նպատակով։

Առևտրական նման գործողությունները կատարվում էին ոչ միայն հայերի և թուրքերի միջոցով։ Մեր նկարագրած տարիներին նաև հարուստ քրդերը, շեյխերն ու ցեղապետերը, բավական մտածված ձևերով, մասնակցում էին հատկապես անասունների առուծախին։ «Ամեն գարուն,— կարդում ենք «Արարատ» հանդեսի էջերում,— քրդերը հայ գյուղացիներից գնում են նոցա մի տարեկան ծնած գառները 10—15 ղրուշով (80 կ.— 1 ռ. 20 կ.), որոնք մի տարի ճոխ մարգագետիններում արածեցնելուց հետո, քաղաքներն են տանում և Հալեպից եկող ոչխար գնողներին ծախում են յուրաքանչյուր ոչխարը 80—100 ղրուշով (6—8 ռուբլով)»[2]։

Անցյալ դարի վերջերին անասնավաճառությունը հիմնականում անցավ թուրք, քուրդ, արաբ հարուստների ձեռքը։ Երկրի տարբեր ծայրամասերից նրանք ուղևորվում էին անասնապահական շրջանները և մեծ քանակով գնում էին անասուններ։ «Գարնան սկզբներումն,— գրում էր «Բյուրակն» շաբաթաթերթը,— վաճառականն իր գործակալները կղրկե (ընդհանրապես քուրդ կամ չերքեզ) գյուղերն ու յայլաները և ոչխարին մոտ 3—3,5 ռուբլի, իսկ եզին 8—9 ռ. վճարելով կգնե առնվազն 2—3 հոտ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 700—1000 գլուխեն։ Կան այնպիսիները, որոնք 50—60 ջոկ կգնեն»։ Դրանից հետո անասնատերերը վարձում էին հովիվներ, որոնք կերաշատ վայրերում երկու-երեք ամիս պահում և գիրացնում էին հոտերը։ Այնուհետև «կուգան հաճախորդները, կամ իրենք (անասնատերերը) կսկսին շարժիլ իրենց ոչխարների բանակները դեպի Սև ծովի ափերու նավահանգիստները՝ Տրապիզոն, Սամսոն և ապա դեպի Պոլիս»։ Այստեղ ոչխարը «կծախեն 5—7 ռուբլի, իսկ եզը՝ 13, 14, 15 մինչև 20 ռ.»[3]։

---

[1] ЦГВИА. ф. 450. л. 107. л. 45—46.

[2] «Արարատ», 1869, գիրք Ա., էջ 12։

[3] «Բյուրակն», 1906, № 9, էջ 13։

Գերմանացի ճանապարհորդ Էդմոնդ Նաումանը ևս, իր ճանապարհորդական նոթերում, գրում էր, որ Էրզրումը առևտրի աշխույժ կենտրոն է և նրանում ծաղկում է ոչխարի մեծաքանակ առևտուրը։ Նա արձանագրել է այդ առևտրի հետևյալ փուլը. «Ոչխարը քրդերից գնում են թափառական վաճառականները, որոնք հետո, տասնյակ հազարից բաղկացած հոտերը՝ Տրապիզոնի, Սամսոնի, Հալեպի, երբեմն մինչև անգամ Յաֆայի վրայով Եվրոպա կամ Եգիպտոս են ուղարկում»[1]։ Իսկ «Թյուրքիկ» առևտրական քրոնիկում նշվում է, որ տավարի առևտուրը վանեցի ամեն քանի թուրք վաճառականների հետո, ամփոփված է մանավանդ հալեպցի հարուստ թուրք թեճիրների ձեռքը, և տարեկան հազարավոր ոսկիի գործ կդառնա այս ամենաշահավոր ճյուղին վրա»[2]։

Տարերային աղետների և հողի մշակման պարզունակ ձևերի առկայությամբ քիչ չէին տարիները, երբ անասնակերի բացակայության պատճառով անասուններ անհնար էր լինում պահել և դրանք վաճառվում էին մեծ քանակությամբ։ Այսպես, 1896—1897 թթ. կերի պակասը հասցրեց անասունների գնի անկմանը 2—5 անգամ։ 40—50 ղուրուշով վաճառվող ոչխարն այդ տարիներին արժեր ոչ ավելի, քան 10—12 ղուրուշ։ Այդ երևույթը հաջորդ տարիներին հանգեցրեց կաթնամթերքների և գյուղատնտեսական մի շարք ապրանքների խիստ թանկացմանը։ Գները մեկ տարվա ընթացքում բարձրացան երկու անգամ[3]։ Առևտրի զարգացման համար ընդհանուր բարենպաստ պայմանները չէին օգտագործվում ոչ միայն իշխանությունների կամայական վերաբերմունքի, կամ տարերային աղետների հետևանքով։ Կային այլ, օբյեկտիվ ու լուրջ հանգամանքներ ևս։ Ամենից առաջ, դրանք ժամանակակից հաղորդակցության միջոցների բացակայությունն էր և գործող ճանապարհների անապահով լինելը։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը երկրի տիրող շրջաններին ստիպեց լրջորեն խորհել այդ մասին։ 1881 թ. սկսվում է խճուղիների շինարարությունը։ Դրանք կառուցվում

---

[1] Նաումաճ Էդ., Էրզրում, թարգմ. գերմ., Թիֆլիս, 1898, էջ 30։

[2] «Թյուրքիկ», 1906, № 44, էջ 1050։

[3] Տե՛ս «Вестник финансов, промышленности и торговли», 1899, № 33, էջ 263.

Հին բավական արագ տեմպերով, բայց չափազանց ցածրորակ։ Վատ էին շինվում նույնիսկ այնպիսի կարևոր կենտրոններն իրար միացնող խճուղիները, ինչպես Տրապիզոն—Էրզրում—Վան ճանապարհը։ Էրզրում—Վան ուղեմասի երկարությունը հավասար էր 400 վերստի, և չոր ժամանակ բեռնված գրաստներն այն անցնում էին ութ օրում։ Իրականում, տարբեր պատճառներով «գրաստների կարավանը հազիվ 13 օրվան մեջ է անում ճանապարհը, իսկ գարնանը՝ 18 օրվան... մոռանալու չէ և այն հանգամանքը, որ շատ անգամ ապրանքները շաբաթներով դարսված են մնում այս կամ այն քաղաքում՝ ջորեպաններ գտնելու համար»[1]։

Վանի ռուսական փոխհյուպատոսի մի քանի տարի անց ուղարկած հաղորդումից երևում է, թե ինչ դանդաղությամբ է փոխվում իրերի վիճակը։ «Առևտրական հարաբերությունները Վանի հետ,— գրում էր նա 1909 թ.,— կարելի է անել միայն մայիսի սկզբից մինչև հոկտեմբերի վերջը և հազիվ նոյեմբերին։ Ապրանքները փոխադրվում են գլխավորապես գրաստի միջոցով, որ անկարելի է դառնում ձմեռը՝ խոր ձյունի պատճառով»[2]։ Նրա հաղորդման համաձայն, կարավանները Տրապիզոն—Ալճավազ ամենաբարեհաջող հանգամանքներում հասնում են 15—18 օրվա մեջ, որտեղից նրանք Վանի ծովով տեղափոխվում են քաղաքը նահապետական նավերով»[3]։ Այսուհանդերձ, ժամանակների պահանջի համաձայն, ճանապարհները շինվում էին և 1880-ական թթ. վերջերին խճուղիների երկարությունը անցավ 10 հազար կիլոմետրից։ Հաջորդ 20 տարիների ընթացքում այն ավելացավ ևս 12 հազարով ու առաջին աշխարհամարտի նախօրեին Թուրքիան ուներ ավելի քան 22 հազար կիլոմետր խճուղիներ[4]։

Ծովային պետություն հանդիսացող երկրի համար չափազանց կարևոր նշանակություն ուներ ճանապարհներով ներքին շրջանների հետ կապված նավահանգիստների թվի ավելացումը, նավերի քանակի աճը և համապատասխան առևտրական նավատորմ ունենալու խնդիրը։ Մինչդեռ, 1878 թ. Օսմանյան

---

1 «Արարատ», 1889, գիրք Ա, էջ 7։

2 «Մշակ», 1.09.1909։

3 Նույն տեղը։

4 Տե՛ս Խաճնյան, Աշխարհագրություն օսմանյան պետության, էջ 165։

կայսրությունն իր 300 առագաստանավերով 20 պետությունների մեջ գրավում էր 15-րդ տեղը, իսկ շոգենավերը (եգիպտոսի հետ միասին) 33-ն էին, այն էլ չափազանց հնացած։ Բավական է ասել, որ Բելգիայի 25 նավերի տարողությունը դրանցից շատ ավելի բարձր էր[1]։

Հաջորդող 30 տարիների ընթացքում Թուրքիայի նավատորմը աճեց։ Խաճեյանի տվյալներով, 1912 թ. «Օսմանյան դրոշին տակ գտնվող» առևտրական նավերի թիվը հասավ 110 շոգենավի և 936 առագաստանավի, որոնց ընդհանուր տարողությունը հավասար էր 241 472 տոննայի[2]։ Ըստ թուրք աշխարհագրագետ Բ. Դարկոտի, այդ վերջին թիվը չէր անցնում 110 հազարից[3]։ Թվական տարբերությունները, սակայն, չեն փոխում տեղի ունեցած աճի բնորոշ կողմը՝ միավորների թիվն ավելանում էր, իսկ նավերի տարողությունը պակասում։ Այդ նշանակում է, որ ավելանում էր ոչ մեծ նավատերերի քանակը, որոնք իրենց հարստությամբ ի վիճակի չէին ունենալու ավելի մեծ տարողությամբ նավեր։ Հենց այդ վերջինների միջոցով է, որ Թուրքիան հարևան ծովափնյա երկրների հետ կատարում է աշխույժ մերձափնյա (կաբոտաժային) առևտուր։ Կայսրության ափերը ողողող ծովերում գտնվում էին մոտ 45 մեծ ու փոքր նավահանգիստներ, որոնցից 24-ը՝ Միջերկրականում, 9-ը՝ Մարմարայի և 10-ը՝ Սև ծովերում[4]։

Լոցմանական (նավարարային) ծառայությունը կատարում էին գլխավորապես հույները։

Օտար կապիտալի ակտիվ մասնակցությամբ XX դարի սկզբում բուռն աճ էր ապրում ծովային առևտուրը։ Մեծ չափերով ավելանում էին հիշյալ նավահանգիստները մտնող նավերի թիվն ու տարողությունը։ Այսպես, 1900 թ. հետ համեմատած, 1910 թ. մոտ երկու անգամ ավելացավ Կ. Պոլիս այցելած նավերի տարողությունը[5]։

Երկրի ներքին զարգացման շատ ավելի կարևոր գործոն հանդիսացավ երկաթուղային շինարարությունը։ Այն սկսվեց

---

[1] Տե՛ս «Բազմավեպ», 1978, հատ. 36, էջ 199։
[2] Տե՛ս Խաճեյան, նշվ. աշխ., էջ 200։
[3] Տե՛ս Даркот Б. География Турции, М., 1959, էջ 160.
[4] Տե՛ս Խաճեյան, նշվ. աշխ., էջ 200—201։
[5] Տե՛ս Avni Hüseyin. Bir yarım müstemleke oluş tarihi, s. 58.

1856 թ. և կատարվում էր օտարերկրյա ընկերությունների միջոցով ու չափազանց դանդաղ տեմպերով։ 1880 թ. հրապարակվեց կառավարական հայտարարություն, որտեղ վերամբարձ տոնով հայտնվում էր իշխանությունների ցանկությունը՝ երկիրը դուրս բերելու դժվար դրությունից, անհրաժեշտ չափերով օգտագործելով սեփական աղբյուրները, ավելացնելու նրա հարստությունը, նրա եկամուտները, մի խոսքով, անելու ամեն ինչ, որպեսզի նա նորից կարողանա ունենալ նախկին հզորությունն ու հեղինակությունը»[1]։ Իրականում ստացվեց միանգամայն հակառակ պատկերը։ Կայսրության հարստության աղբյուրները, տնտեսական զարգացման լծակներն ու հսկողական ֆունկցիաները հետզհետե անցան օտար տերությունների ձեռքը։ Եվրոպական կոնցեսիաները սկսեցին երկաթուղիները կառուցել փոքր հատվածներով։ Եվ, ինչպես ճշտորեն նշում է Ա. Սաֆրաստյանը, «Այդ կարճ հատվածները անգլիական և ֆրանսիական շոգենավային ուղիների շարունակությունն էին Թուրքիայի տարածքի վրա։ Այդ գծերի շինարարության նպատակն էր ապահովել անգլիական և ֆրանսիական ապրանքների մուտքը թուրքական մերձծովյա գոտիները և արտահանել թուրքական հումքը»[2]։

Երկաթուղային շինարարության դանդաղ տեմպերն օտար կոնցեսիաներին ձեռնտու էին նաև այն պատճառով, որ պետությունը նրանց վճարում էր ամեն մի կիլոմետրի համար (կիլոմետրային ապահովություն)։ Միջին հաշվով տարեկան կառուցվում էր 50 կմ երկաթուղի[3]։ Այդպիսով, 1856—1918 թթ. ընթացքում կառուցվել էին մոտ 4100 կիլոմետր երկաթուղիներ, որոնք Բ. Դարկոտի որակմամբ, «չէին համապատասխանում Թուրքիայի ոչ ռազմական, ոչ էլ տնտեսական կարիքներին։ Դրանք Թուրքիային չբերեցին համարյա ոչ մի օգուտ, չնայած որ դրանց շահագործումը չափազանց թանկ էր նստում, որովհետև վարկավորող ձեռնարկատերերը շահույթ չստանալու դեպքում ծախսերը ծածկում էին կառավարության հաշվին»[4]։

---

[1] «Вестник финансов...», 1896, № 8, стр. 419.

[2] Сафрастян А. Х., Размещение и развитие железных дорог Турции (рукопись диссертац.), 1948, стр. 29.

[3] Տե՛ս Новичев А. Д., Очерки экономики Турции до мировой войны, էջ 132.

Даркот Б., География Турции, стр. 154—155.

Այսուհանդերձ, երկաթուղիներն անցկացվեցին մեծ մասամբ կայսրության եվրոպական մասերում, Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում ու ծովամերձ գոտիներում և արագացրին համեմատաբար ավելի զարգացած հիշյալ գոտիների առաջընթացը։ Երկաթուղին ներքին շրջաններն ամուր կերպով կապեց կենտրոնների հետ և արագացրեց հին հարաբերությունների քայքայումը։ Միաժամանակ երկաթուղային շինարարությունը Կ. Մարքսի արտահայտությամբ, ուժեղացրեց ժողովրդական մասսաների աղքատությունը և հարկերի բարձրացումը այն երկրներում, «որոնք արտահանում էին գլխավորապես հում նյութ»։ Պարզաբանելով իր միտքը, Կ. Մարքսը նշում է, որ սկսած այն պահերից, երբ տեղական արտադրության ամեն մի արդյունք հնարավորություն է ստանում դառնալու կոսմոպոլիտիկական ոսկի, շատ ապրանքներ, որոնք առաջներում էժան էին լայն սպառում չլինելու պատճառով, ինչպես, օրինակ, մրգերը, գինին, ձուկը, որսը և այլն, թանկացան և այդպիսով դուրս մղվեցին ժողովրդի սպառումից»[1]։

Եթե մեր դարասկզբի պարենամթերքների գները համեմատելու լինենք անցյալ դարի կեսերի գների հետ, ապա կտեսնենք, որ նույնը տեղի է ունեցել նաև Թուրքիայում։

Այսպես, փափուկ ցորենի մեկ քիլեն (240 օխան) 1857 թ. արժեր 25—26, իսկ ամուր ցորենինը՝ 25—30 ղուրուշ[2]։ 50 տարի անց, այսինքն՝ 1907 թ., դրանց գինը համապատասխանորեն բարձրացավ և հասավ 38 և 38—39 ղուրուշի[3], մեկ փութ եգիպտացորենինը՝ 21-ից 26,06 ղուրուշի, իսկ Թզինը՝ 25—30-ից հասավ 50 ղուրուշի։ Լոբեղենի գները 1,5-ից բարձրացան մինչև 4 ղուրուշի, իսկ հում կաշվինն ավելացավ 50—100 %-ով[4]։ Անշուշտ, գների ավելացման վրա ազդում էին նաև այլ գործոններ։ Օրինակ, մեքենաների և փոխադրման ժամանակակից միջոցների բացակայությունը թանկացնում էին որոշ ապրանքների (ձիթապտղի յուղ, չոր միրգ և այլն) գները։ Սկզբնական շրջանում երկաթուղիներով փոխադրելը չափազանց մեծ ծախսերի հետ էր կապված։ Այդ պատճառով էլ ապրանքատերը, իր

---

1 Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 34, стр. 292.

2 Տե՛ս Հայատառ թուրքերեն „Ceridie Ticaret tercumesi", 5.12 1857.

3 Տե՛ս «Բյուրակն», 1907, № 36, էջ 1231։

4 Տե՛ս նույն տեղը, № 59, էջ 1783։

ցանքների դեպքում։ Մայրաքաղաքի փոստը 1897 թ. փակվեց հայկական հեղափոխական կոմիտեներից մեկի թռուցիկները հասցեատերերին ուղարկելու համար[1]։ Մինչև անցյալ դարի վերջերը երկրի լեռնային շրջանների փոստային կապն իրականացվում էր զինված ժանդարմների միջոցով շաբաթական մեկ անգամ։ Սակայն կային շրջաններ, որոնք զրկված էին նույնիսկ նման անբավարար կապի միջոցներից։ Այդպիսիների թվին էին պատկանում Դերսիմը, Պալուն, Ջապախչուրը և այլ վայրեր, որի հետևանքով անբավարար էին տնտեսական կապերն այդ շրջանների հետ»[2]։ Կապի միջոցների զարգացումը ևս ընթանում էր չափազանց դանդաղ։ Երիտթուրքերի հեղաշրջման նախօրեին երկրում գործում էին ընդամենը 1024 փոստային կայան և 188 հազար կիլոմետրից քիչ ավելի հեռախոսային ու հեռագրային գծեր։ Համեմատության համար ասենք, որ տարածությամբ հարյուր անգամ փոքր Շվեյցարիան ուներ 3—4 անգամ ավելի կապի միջոցներ[3]։

Հեղաշրջումից հետո վիճակը որոշ չափով բարելավվեց։ 1912 թ. փոստային կայանների թիվը անցավ 1300-ից, հեռագրային բաժիններինը հասավ 1017-ի։ Բայց դրանք աշխատում էին թերբեռնվածությամբ։ Ըստ Խանճյանի տվյալների, մի մարդը տարեկան միջին հաշվով ստանում էր՝ Շվեյցարիայում 95 նամակ, Անգլիայում՝ 65, Գերմանիայում՝ 41, Ֆրանսիայում՝ 27, իսկ Թուրքիայում՝ ընդամենը մեկ նամակ և չորս հոգին մեկ հեռագիր[4]։

Կապի միջոցների զարգացմանը խանգարում էին ոչ միայն կայսրության փտած կարգերը, այլև օտար ընկերությունները։ Վերջիններն անցյալ դարի 80-ական թթ. այստեղ հիմնեցին իրենց փոստ-հեռագրային բաժանմունքները և խանգարում էին թուրքական կապի մարմինների գործունեությանը։ Այդուհանդերձ, վերջինները հետզհետե ամրապնդվում էին, ձեռք բերում ժամանակակից տեխնիկական սարքավորումներ և բարելավում կապի միջոցների աշխատանքը։ Այդպիսով կապիտալիստական զարգացման համար ստեղծվում էին բավարար պայմաններ՝

---

[1] Տե՛ս «Вестник Европы», 1903, кн. 4, էջ 687.

[2] ЦГВИА, ф. 82, д. 3053, л. 68.

[3] Տե՛ս «Ընդարձակ օրացույց», 1908, էջ 106։

[4] Տե՛ս Խանճյան, Աշխարհագրություն..., էջ 176։

Առևտրական բուրժուազիայի դիրքերի ամրապնդման մասին է խոսում երկրում կազմակերպվող բազմաթիվ ընկերությունների, միավորումների, առևտրական նոր տների ծավալած և մեծ չափերի հասած մասնագիտացված առևտուրը։ Գործում էին ճոթեղենի, երկաթեղենի, պարենամթերքների, պատրաստի հագուստների և այլ ապրանքների հատուկ վաճառատներ։ Գոյություն ունեցող առևտրական օրենքների համաձայն կազմակերպվում էին երեք տեսակի առևտրական ընկերություններ։ Կոլեկտիվ ընկերությունը կազմվում էր գույքերի միավորման և ընդհանուր պատասխանատվության հիմունքներով։ Այսպես կոչված կոմանդիտ ընկերությունը միավորում էր առանձին փայատերերի, որոնք անդամավճարները մուծելով մասնակցում էին ընկերության գործունեությանը։ Սակայն նրանց մի մասն իր վրա էր վերցնում առևտրի կազմակերպումն ու ղեկավարումը և կրում էր ինչ-որ անձնական ու նյութական պատասխանատվություն։ Երրորդը՝ անանուն ընկերություններն էին, որոնց «դրամագլուխները ներկայացնող բաժնեթուղթերը իրարու կփոխանցվին միշտ, ձեռքեձեռք կշրջարերին, որով ընկերությունը կազմող անդամներուն և ոչ մեկուն անունը կհիշվի...»[1]։

Վերջիններիս ղեկավարությունը հանձնվում էր 5—11 հոգուց բաղկացած վարչությանը, որն իր հերթին նշանակում էր ժամանակավոր կամ մշտական տնօրեն։

Չափազանց հետաքրքրական են «Բյուրակնի» հոդվածագրի բացատրությունները անանուն ընկերությունների առաջացման պատճառների մասին։ Նա արձանագրում է, որ տարբեր աստիճանավորներ և մասնավորապես իրավաբանները, հոգևորականները և ուրիշներ, օրենքով իրավունք չունեին առևտրով զբաղվելու։ Իսկ դրամը, երբեմն մեծ չափերով, կուտակվում էր այդպիսի անձնավորությունների մոտ, որը Արևելքի պայմաններում կապիտալի կուտակման արտահայտություններից մեկն էր։ Նրանք անանուն ընկերության միջոցով շրջանառության մեջ էին դնում իրենց կապիտալները։ Մյուս հանգամանքը «հանրային մեծ ձեռնարկներն եղած են, ինչպես ջրանցք, երկաթուղի և այլն»[2], որոնց շինության համար հարկավոր են

[1] «Բյուրակն», 1907, № 19—20, էջ 108։
[2] Նույն տեղը, էջ 110։

մեծ գումարներ. դրանցից ստացվող շահույթը միշտ չէ, որ ապահովված էր։

Եվրոպական ձևերից ընդօրինակած և տեղական պայմաններին համարմարեցրած այս ընկերությունները կազմակերպվեցին ոչ միայն առևտրի, այլև արդյունաբերության, շինարարության, բնական հարստությունների մշակման մեջ և այն բոլոր բնագավառներում, որտեղ դրանք շահաբեր էին և նպատակահարմար։ Ինչպես հաղորդում են ժամանակի պարբերականները, սկսած անցյալ դարի 80-ական թթ. առևտրական ընկերություն-ներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել մեծածախ առևտուրը։ Մեր դարասկզբին նրանք համարյա մշտական կապ ունեին տեղական և արտասահմանյան արդյունաբերական ձեռնարկությունների հետ, որոնց մեծաքանակ պատվերներ էին տալիս այս կամ այն ապրանքն արտադրելու և իրենց հանձնելու որոշակի պայմանաժամով։ «Բյուրակնը» նշում էր, որ արդյունաբերողները «7—8 ամիս միջոց կուզեն ապրանքը հանձնելու համար»[1]։ Առևտուրն ու արտադրությունը կարգավորելու համար Թուրքիայի շատ վայրերում ստեղծվում էին անտառում ընկերություններ։ Իզմիրի երեք գործավաճառ տները ստեղծեցին «Սինտիկա» անունով միավորում[2]։ 1904 թ. կազմակերպվեց շերամի սերմերի և մետաքսի վաճառականների ընկերություն՝ դրանց արտադրությունը և վաճառքը կարգավորելու նպատակով[3]։ Ատաբազարի առևտրականներն իրենց կապիտալներն ու ջանքերը միավորեցին երկու առևտրական կոլեկտիվ ընկերությունների մեջ[4]։ Այնուհետև, մեծահարուստ վաճառականները խոշոր կենտրոններում և գավառներում աշխատում էին կենտրոնացնել և ուղղություն տալ կարևոր արհեստների արտադրությանը։ Ստեղծելով տարբեր տիպի ընկերություններ, նրանք ձգտում էին ձեռք բերել վաճառելու մենաշնորհ իրավունք՝ գորգի, մանուսայի, յաղմայի, շալերի և արտադրանքի այլ տեսակների բնագավառներում։

Մշտական առևտրական կապեր հաստատվեցին, ինչպես տեսանք, բազմաթիվ գավառների, դրանց և կենտրոնական քա-

---

1 «Բյուրակն», 1906, № 45—46, էջ 1095։
2 Տե՛ս նույն տեղը, 1907, № 21, էջ 857։
3 Տե՛ս նույն տեղը, № 9—10, էջ 199։
4 Տե՛ս նույն տեղը, 1906, № 45—46, էջ 1102։

ղաքների և նույնիսկ գյուղերի միջև։ Որպես գյուղի զարգացման օրինակ կարելի է բերել Իզմիտի սանճակի (գավառակի) Արսլանբեկ գյուղը, որի բնակչությունը 1909—1910 թթ. անցել էր երեք հազարից։ Անցյալ դարի վերջին քսանամյակին Արսլանբեկը հետզհետե զարգանում է ու դառնում առևտրական պզտիկ կեդրոն մը մերձակա լազ, կյուրճի, չերքեզ, թուրք և հույն բնակչության համար, որ կուգար այնտեղ գնելու նպարեղեն, հյուսվածքեղեն, կոշիկ, խողակի սերմացու և այլն»[1]։ Գյուղը նաև արհեստագործական կենտրոն էր, որտեղից հարևան գյուղացիներն իրենց պետքերը հոգալու համար ձեռք էին բերում անհրաժեշտ թիթեղյա կամ այլ իրեր և հրավիրում տեղի արհեստավորներին՝ զանազան գործեր կատարելու։ Այստեղ կային վաճառականներ, որոնք յուրահատուկ տեղական բանկիրներ էին և փոխատվություններ էին կատարում։ Նույնպիսի դեր էին կատարում նաև գավառակի Պարտիզակ և Օվաշըք և շատ այլ գյուղեր։ Այն բոլոր քիչ թե շատ մեծ և ճանապարհներով ապահովված գյուղերը, որոնք գտնվում էին առևտրական ու տնտեսական խոշոր կենտրոններից ոչ հեռու, դարավերջին ապրում էին նման կյանքով։ Ակներև էր մի կարևոր երևույթ ևս։ Գյուղական ազգաբնակչության մի մասը տեղափոխվում էր գյուղից քաղաք, իսկ քաղաքների բնակիչները գալիս էին աշխատելու և ապրելու ավելի մեծ կենտրոններում և ծովափնյա քաղաքներում։ Ըստ Ա. Նովիչևի հաշվումների, «12 գլխավոր քաղաքների բնակչությունը պակասել էր 340 000-ից հասնելով 256 213 մարդու, այսինքն՝ 15,7 %-ով։ Ծովափնյա նույնքան գլխավոր քաղաքների բնակիչների թիվը աճել էր 1.196 000-ից մինչև 1350 267-ի, այսինքն՝ 12,5 %, իսկ առանց Ստամբուլի՝ 305000-ից մինչև 476702 մարդու, կամ 56%-ով»[2]։ Այս տեղաշարժերի ընթացքում, հարուստ քաղաքացիների մի մասն աշխատում էր դառնալ խանութների տեր, կամ առևտրական տների փայատեր, որպեսզի շրջանառության մեջ դնի գյուղում կամ փոքր քաղաքներում կուտակած դրամը։ Տեղաշարժերը, ունենալով սոցիալական բնույթ, արագացնում էին ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և, այսպես ասած, «բուրժուականացնում» կայսրության քաղաքները։ Սակայն այս երև-

[1] Ֆէնէրճեան Գ., Պատմութիւն Արսլանպէկի, Փարիզ, 1971, էջ 110։
[2] Новичев А. Д., Очерки экономики Турции..., стр. 117.

վույթը ևս չէր ընթանում բնականոն ուղիով։ Գործող օրենքները, իշխանության կենտրոնական և տեղական մարմինները, երկրի զարգացմանն օժանդակելու համար ստեղծված կազմակերպությունները ու նրանց պաշտոնյաները հաճախ խանգարող գործոնի դեր էին կատարում։ Որպեսզի շորթեն ու հարստանան, նրանք դժվարացնում ու արգելակում էին հիշյալ տեղաշարժերը և նոր հարաբերությունների ամրապնդման ընթացքը։— Թրքաց օրենքներով,— գրել է Ռ. Բերբերյանը,— վաճառականը կամ գյուղացին մի վիլայեթից մյուս վիլայեթն իր ապրանքները անձամբ տեղափոխելու համար պետք է գրավոր համապատասխան թույլտվություն վերցներ համայնքի կամ գյուղի մուխտարից, քաղաքացիական վարչությունից, երկրագործական բանկից, որ ինքը հողատեր է, պարտքեր չունի և վճարել է հարկերը, ոստիկանատնից կամ ժանդարմական վարչությունից տեղեկանք, որ նրանք դեմ չեն տվյալ անձնավորության, նրա ապրանքի կամ գույքի տեղափոխվելուն[1]։ Ոչինչ առանց իշխանության ներկայացուցիչների կամ տեղական ղոռբաների հնարավոր չէր անել։

1904—1905 թթ. Թուրքիայում առևտրի դրության վերաբերյալ ռուսական դեսպանատուն ուղարկված հաշվետվության մեջ նշվում է առևտրի զարգացմանն արգելակող և լրջորեն խաթարող մեկ այլ հանգամանք ևս։ Դա մաքսատան աշխատողների անզգույշ և անպատասխանատու վերաբերմունքն էր ապրանքների նկատմամբ և դրանց գների խախտումները, որոնց նպատակն էր ցույց տալ, որ ապրանքը ցածր տեսակի կամ որակի է[2]։ Ընդհանրապես մաքսատունը, ավելի փոքր չափերով, երկրում տիրող բարքերի արտացոլումն էր։ Համիդյան շրջանի մաքսատան աշխատանքների մասին չափազանց հետաքրքիր հոդված է զետեղել «Մուսուլմանին» հանդեսը, հոդված, որը պատկանում էր այդ հիմնարկի նախկին աշխատակցի գրչին։ Այդ պաշտոնյայի հայտարարության համաձայն մաքսատանը բոլոր գործողությունները կատարվում էին միայն «բախշիշ» ստանալուց հետո, որը տրվում էր բացեիբաց։ Այստեղ տիրող խառնաշփոթության պայմաններում հաճախ կորչում էին ամբողջ կապոցներ կամ մեծ չափերի հասնող գույք, իրեղեններ և այլն։

---

[1] Տե՛ս «Մուրճ», 1905, № 8, էջ 36։

[2] Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 38, № 8, л. 352.

վորչելու պատճառը, գլխավորապես, այդ ապրանքների անօրինական վաճառքն էր, որի համար ոչ ոք անձնական պատասխանատվություն չէր ենթարկվում։ Այդ նույն պատճառով հոգ չէր տարվում փչանալուց, գողանալուց ապրանքը պահպանելուն և այլն[1]։ Չկար պահեստավորելու և ըստ տեսակի դասավորելու կարգ։ Յուղը դրվում էր ալյուրի, բարձրորակ թեյի կամ նավթի կողքին։ Ինչ-որ բանից դժգոհ որևէ պաշտոնյա, գնահատող, կշռող կամ ուղղակի բեռնակիր, որը նյութական պատասխանատվություն չէր կրում, կարող էր անպատիժ կերպով փչացնել որևէ շատ թանկարժեք ապրանք։ Այդպես պատահեց, օրինակ, Կ. Պոլսի մի առևտրական ֆիրմայի հետ, որն ինչ-որ պատճառով առաջացրել էր մաքսատան պաշտոնյաների դժգոհությունը։ Վերջինները, այդ ֆիրմային Վիեննայից ուղարկած բարձրարժեք ապակեղեն իրերը ջարդուփշուր էին արել, պատճառաբանելով, որ դրանք փաթաթված էին հին լրագրերի մեջ, որոնք չէր կարելի մաքսատնից դուրս բերել «գրաքննչական նկատառումներով»։ Մեկ ուրիշ անգամ, ֆրանսիական առևտրական ֆիրմային պատկանող սեյֆերից հանվել էին պողպատյա թերթեր. դա, իբր, տեղի էր ունեցել իշխանությունների պահանջով՝ դինամիտ փնտրելու կապակցությամբ[2]։ Իր հերթին ապրանքատերը, որպեսզի մաքսի գումարը իջեցներ նվազագույնի, հաճախ էր կաշառում պաշտոնյաներին, որոնք կաշառքի գումարին համապատասխան նվազեցնում էին մաքսատնից դուրս բերվող ապրանքի գինը։ Նման բոլոր մեքենայությունները, իհարկե, մեծ վնաս էին հասցնում պետությանը։ Բայց դրա համար որևէ մեկը պատասխանատվության չէր կանչվում։ Սովորական երևույթ էր մաքսատնից ուշացումով վերցվող իրերը մաքսատան աշխատողների կողմից ապօրինի վաճառքի հանվելը։ Նման անօրինական գործարքները «Կ. Պոլսում սկիզբ դրեցին յուրահատուկ խանութների և կրպակների ստեղծմանը, որոնք առևտուր էին անում մաքսատանը էժան գնված հատուկ ապրանքներով»[3]։

Հետևաբար, թուրքական մաքսատները ինչպես հարկն է չէին

---

[1] Տե՛ս «Мусульманин», Париж, 1911, № 6, էջ 293.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 296։

[3] Добровольский И. А. Турция, Сербия и Болгария, СПб., 1912, стр. 37.

օժանդակում արտաքին առևտրի կարգավորման գործին։ Ընդհակառակը, նրանք ինչ-որ չափով խանգարում էին ներքին առևտրի զարգացմանը։

Համապատասխան վերադաս մարմիններն առանց հսկողության էին թողել ոչ միայն առևտուրը կազմակերպող օղակների աշխատանքը։ Նրանք չէին էլ մտածում երկրում ստեղծելու բավարար պայմաններ առևտրական կապերն ընդլայնելու, ապրանքներն ապահով տեղափոխելու և տեղերում առևտրի կազմակերպման համար կարգ ու կանոն սահմանելու ուղղությամբ։

Գոյություն չուներ ապրանքները բեռնաթափելու և պահելու ժամկետների համար որևէ գնացուցակ, և հարցը լուծվում էր պաշտոնյաների կամ նույնիսկ բեռնակիրների պահանջի համաձայն։ Հաճախ, միանգամայն կամայական ձևով, ապրանքները հարկադրվում էին։ Չկային երկաթուղով տեղափոխման վճարների չափեր, ծանրության և երկարության ընդհանուր միավորներ, այլ չափերի և դրամի արժեքների միատեսակություն և այլն։ Առևտրի վիճակի վերաբերյալ վերը բերված հաշվետվությունն ամփոփվում է հետևյալ խոսքերով. «Ծառայողների կամայականություններն այստեղ բուն են դրել հիմնավոր կերպով, նպատակ ունենալով առևտուրը օգտագործել իրենց անձնական շահի համար։ Վարչությունը երբեմն ցուցաբերում է բարի կամք՝ ցանկանալով կրճատել չարիքը, սակայն այն շուտով նորից երևան է գալիս մի այլ ձևով»[1]։

Այսպիսով, որևէ միջոցառում ձեռնարկողի առաջին քայլը Թուրքիայում պետք է լիներ պաշտոնական անձնավորությանը կաշառելը՝ «բախշիշ» կամ «ռիշվեթ» տալը։ Դա հաջողության միակ գրավականն էր 100-ից 99-ի դեպքում։ Եթե այդ քայլը կատարված էր, կարելի էր ներմուծել «արգելված իրեր և խոտանված ապրանքներ», կարելի էր «զինվորներին հագցնել հին շորեր և ապահովել կասկածելի ֆինանսական ձեռնարկումների հաջողությունը»[2]։ Միանգամայն իրավացի էր տնտեսագետ Ի. Ցլերովսկին, որն իր «Ազգային ու տնտեսական հարաբերությունները Թուրքիայում» հոդվածում նշում էր, թե այդ երկրի առևտուրը «դրված է այնպիսի պայմանների մեջ,

[1] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 38, № 8, л. 353.
[2] «Вестник Европы», 1903, кн. 4, стр. 688.

որոնք անհնար են դարձնում նրա զարգացումը։ Անտեղի հսկողությունը, սուլթանի հատուցած ուղղակի արգելքները թուրքերին՝ կազմակերպելու ֆինանսական ձեռնարկություններ, հատկապես կոլեկտիվ-փայատիրական ձևով, հաղորդակցության միջոցների բացակայությունը և այլն, այդ բոլորը քիչ էին նպաստում թուրքական առևտրի զարգացմանը»[1]։

Տասնյակ տարիներ, մինչև առաջին աշխարհամարտը, օտար ապրանքների վրա դրվող ներմուծման հարկը կազմում էր դրանց արժեքի ընդամենը 5—11 %-ը։ Հարկերն ավելացնելու սուլթանի կառավարության կրկնվող փորձերը հաճախ էին ձախողվում։ Սակայն, երբ հանգամանքները ստիպում էին, ոչ մի արտաքին ճնշում չէր խանգարում բարձրացնելու ներմուծման հարկը։ Ինչպես արդեն նշվեց, հարկերն ու մաքսային արգելքները ներքին առևտրի ասպարեզում պահպանվեցին մինչև XX դարի սկիզբը։ Իսկ դրանք առաջիններից զգալիորեն ավելի բարձր էին։ Կայսրության եվրոպական մասում դրանք հասնում էին ապրանքի գների 12[2], իսկ մյուս շրջաններում՝ նույնիսկ 15—50 %-ի[3]։ Հիշյալ տոկոսների անվանական վերացումից հետո էլ, դրանք փաստորեն երկար տարիներ դեռևս գանձվում էին, մասնավորապես քրիստոնյա վաճառականներից։

Մինչև 1870-ական թթ. Թուրքիայում գոյություն չուներ ոչ մի ապահովագրություն, և ոչ քիչ դեպքերում կրկնվող տարերային աղետները հասցնում էին սնանկացման։ Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ թալանը, ավազակությունները կամ հրդեհները կազմակերպում էին իշխանությունները՝ հատկապես քրիստոնյա բնակչությանը վնասելու և երկար ժամանակ աշխատավարձ չստացած պաշտոնյաներին ու զորքին թալանի միջոցով բավարարելու համար։

Գալացի ռուսական հյուպատոս Ա. Ռոմանենկոն իր զեկուցագրերից մեկում հաղորդում էր, որ 1877 թ. տեղական բաշիբոզուկները կենտրոնից հրահանգ էին ստացել հրդեհների մի-

---

[1] «Современник», 1915, кн. 3, стр. 191.

[2] Տե՛ս «Ученые записки Ин-та Славяноведения», 1958, т. XVI, стр. 147.

[3] Տե՛ս Сб. «Раздел Азиатской Турции», М., 1924, стр. 6.

ջոցով տնտեսապես քայքայել Սուլինի և Տուլչայի նահանգների որոշ բնակավայրեր[1]։

Սովորական երևույթ էր աղքատ ընտանիքից վերցրած զինվորներին ժամկետից 2—3 անգամ ավելի, առանց ռոճիկի, կանոնավոր սննդի ու հագուստի ծառայեցնելը։ Իրենց պետերից կողոպտված, հակասանիտարական կենցաղային ծանր պայմաններից հյուծված ու տանջված թուրք զինվորները հաճախ էին խռովություն բարձրացնում։ Նման դեպքերում «թուրք գավառապետներն այնպես էին գործը կարգադրում, որ Մակեդոնիայի մեծ քաղաքների շուկաները (եթե միայն սրանք քրիստոնյաներին են պատկանում) ժամանակ առ ժամանակ հրդեհի ենթարկվեն»[2]։ Իսկ Մակեդոնիայի օրինակը կրկնվում էր ամենուր։ Սովորաբար, հրդեհը ծագելուց հետո, համաձայն օրենքի, հրդեհի վայրն էին ուղարկվում զինվորներ, այն «հանգցնելու և ապրանքները ազատելու համար»։ Իսկապես, զինվորները «ազատում էին» շուկայի ապրանքները, բայց այն կողոպտելով ու սեփականելով։ «Մակեդոնիայում, Սանինայից մինչև Պրեստինա քաղաքը՝ չկա քրիստոնյաներին պատկանած մի մեծ շուկա,— գրում էր «Մուրճը»,— որ երկու կամ երեք անգամ ստիպված չլինի վերջին տարիներս կերակրել և զգեստավորել ալբանացի և թուրք զինվորներին»[3]։

Մամուլում լայն արձագանք գտավ 1876 թ. դեկտեմբերի մեկի գիշերը Վանի շուկայում թուրք զինվորների, ոստիկանների ու քաղաքի խաժամուժի կազմակերպած հրդեհը։ Հայ համայնքի հոգևորական և հասարակական դեկավարների դիմումը այդտեղ ներկա եղող թուրք իշխանավորներին՝ չունեցավ ոչ մի նշանակություն։ «Մշակի» էջերում տպագրված «Նամակ Վանից» թղթակցության մեջ նշված է, որ նյութական կորուստների հետ եղել էին բազմաթիվ խեղազարության դեպքեր, վիրավորներ ու սպանվածներ[4]։ Հրդեհի ժամանակ այրվել էր մոտ 1000 խանութ և կրպակ, որը տասնյակ տարիներ իր բացառական կնիքը դրեց առևտրի աշխույժ կենտրոն հանդիսացող

---

[1] Տե՛ս Сб. «Освобождение Болгарии от турецкого ига», М., 1964, т. II, стр. 64.

[2] «Մուրճ», 1905, № 8, էջ 37։

[3] Նույն տեղը։

[4] Տե՛ս «Մշակ», 24. 02. 1877։

Վանի տնտեսական կյանքի վրա[1]։ 1850—1890 թթ. տեղի են ունեցել մոտ 30 նման խոշոր հրդեհներ, որոնց հետևանքով ոչնչացվել են մի քանի ոչ մեծ բնակավայրեր, կամ մարդաշատ քաղաքների առանձին թաղամասեր։ Այդ նույն ժամանակ երկրում յոթ անգամ տեղի էին ունեցել երկրաշարժեր[2]։ Նման աղետներին պետք է գումարել նաև հաճախ տեղի ունեցող տարբեր բնույթի զինված բախումները, որոնք քայքայող ազդեցություն էին գործում կայսրության տնտեսության վրա։ Հաշվի առնելով նշված տարերային աղետները և այլ բացասական պատճառները, Յ. Մըրմըրյանը գրում է, որ 150 տարվա ընթացքում Թուրքիայի հայ վաճառականների ամեծագույն մասը չէ կրցած ունենալ տևական հաջողություն և հաջողություն որդոց-որդի։ Ամենեն մեծ տունն անգամ 50 տարին անցուցած չէ»[3]։ Թերևս հայ վաճառականության պատմության հետազոտողը քիչ ավելի խտացրած գույներով է ներկայացնում իրականությունը։ Ընդհանուր պատկերը, սակայն, ճշմարտացի է։ Այդպիսով, կապիտալիստական հարաբերությունների ամենաճկուն ճյուղը հանդիսացող առևտուրը Օսմանյան կայսրությունում զարգանում էր չափազանց դժվարին ու ծանր պայմաններում, որոնք արդյունք էին երկրում տիրող կարգերի։ Այդ կարգերի արդյունք էին նաև երկրի տնտեսության ցածր մակարդակն ու նրա զարգացման դանդաղությունը բնորոշող արդյունաբերությունն ու արհեստները։

Օսմանյան կայսրության տնտեսական զարգացման նոր շրջանի ընդհանուր բնութագիրն այն է, որ Արևելքի շատ երկրների նման այստեղ ևս XVIII դ. երկրորդ կեսից սկսում են վերելք ապրել արտադրողական ուժերը, որոնք ընթանում են կապիտալիստական ուղիով։ Այդ ընթացքը խաթարվեց անցյալ դարի 30—50-ական թթ., երբ ուժեղացավ օտար կապիտալի ներթափանցումն ու մրցությունը տեղական, դեռևս չամրապնդված արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների հետ։ Հետևանքը եղավ այն, որ ափլուզումը ծովեզրյա քա-

[1] Տե՛ս «Մուրճ», 1904, № 8, էջ 21։

[2] «Բյուրակն», 1907, № 42, էջ 1529—1531։

[3] Մ(ըրմըրյան) Յ. Գ., Թուրքահայ հին վաճառականությունն և վաճառականք..., էջ 139։

ղաքներից սկսվեց և տարածվեց դեպի երկրի խորքերը»[1]։ Նույն Ռահիմը նշում է, որ Ստամբուլում և Ուսկյուդարում անցյալ դարի սկզբին գործում էին կերպասեղեն արտադրող 3160 հաստոցներ, որոնք բանեցնում էին 4320 բանվորներ։ 30—40 տարի անց դրանց թիվը իջնում է համապատասխանաբար 37-ի և 62-ի[2]։ Ճիշտ նույն տվյալներն է բերում Դողան Ավչըօղլուն իր աշխատության մեջ։

Ռահիմի տվյալներով 1836 թ. կերպասեղենի արտադրությունը Անկարայում նվազել էր հինգ անգամ, իսկ Բուրսայի ավելի քան 25 հազար օքքա մետաքս մշակող 1000 դազգահների թիվը իջել էր 75-ի[3]։

Վերլուծելով իր ձեռքի տակ եղած հարուստ փաստական նյութերը, Ա. Ալպոյաճյանը ևս եկել է այն եզրակացության, որ Թուրքիայում XIX դարի կեսերին մի շարք տնտեսական կենտրոններ լուրջ ու երկարատև անկում ապրեցին։ «Տնտեսական անկումեն ի վեր,— գրում է նա,— Եվդոկիո արվեստները Եվրոպայի արվեստական արտադրությանց մոտ գտնելով հետըզհետե մարիլ սկսան»[4]։ Այդ վիճակը Թոքատում և մի շարք ուրիշ քաղաքներում շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, որին հաջորդեց երկար տարիների տնտեսական քայքայումն ու ճգնաժամը։

Արդեն նշվել է, որ արտասահմանյան կապիտալի ճնշմանը զուգահեռ պահպանվում և արդյունաբերության զարգացման վրա լրջորեն ազդում էր ֆեոդալական պետության անմիջական միջամտությունը։ Այդ միջամտության օրինակներից մեկը միջնադարյան ցեխային կազմակերպությունների պաշտպանությունն էր պետության կողմից։ Ցեխերը օգտագործվում էին որպես հարկահավաք մարմիններ, հաճախ էլ բանակին զանազան ապրանքներ ու մասնագետ-արհեստավորներ մատակարարող ձեռնարկություններ։ Սկզբունք դարձած այդ կարգի մասին կան բազմաթիվ տվյալներ։ Արհեստները ռազմական նպա-

---

[1] Dr. Râim Sabahaddin, Istanbul mensucat sanayiinin bünyesi ve ücretler, Ist. 1956, s. 26.

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Տե՛ս Dr. Râim S. նշված աշխ., էջ 25։

[4] Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1269։

տակներով օգտագործելու հետաքրքիր օրինակ է բերում XV դարի սերբական սկզբնաղբյուրը՝ «Ենիչերիի հիշատակարանը» խորագրով։ Հեղինակը՝ Կոնստանտին Միխայլովիչը Օստրովիցայից, մասնակցել էր Մահմուդ 2-րդի կողմից 1453 թ. Կոստանդնուպոլսի գրավմանը։ Դրանից մեկ տարի առաջ սուլթանը, խարեությամբ անցնում է Բոսֆորը և քաղաքի մոտ կառուցում Ռումելի Հիսար ամրոցը։ Դեպքը նկարագրվում է այսպես. «Սուլթան Մահմուդը հավաքեց զորքը և շարժվեց այնպես, որ իբր ցանկանում էր հարձակվել Կարամանի վրա և վերցրեց իր հետ վարպետներ՝ հյուսներ, շինարարներ, դարբիններ, գաջ պատրաստող վարպետներ և այլ, տարբեր արհեստավորներ իրենց անհրաժեշտ ամբողջ սարքով...»[1]։

Քանի որ կապիտալիստական հարաբերությունների կրողները հանդիսանում էին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ապա նրանք, նշում է Ն. Տոդորովը, ստիպված էին պայքարել ցեխերի դեմ «ոչ միայն որպես տնտեսական կազմակերպության, այլև ֆեոդալական պետության հիմնարկության դեմ, որոնք, 19-րդ դարում օգտվում էին թուրքական միապետության հովանավորությունից»[2]։ Փաստորեն հաստատելով այդ տեսակետը, պրոբլեմի հատուկ ուսումնասիրողներ Ա. Հաչյանը և Մ. Զուլալյանը հայտնում են այն կարծիքը, որ «պետական մարմինների միջամտությունն արտադրության և առևտրի ասպարեզը հետապնդում էր ոչ միայն հարկերի գանձման նպատակը, այլև ձգտումը ամբողջ արտադրությունը ենթարկելու ռազմական բյուրոկրատիային»[3]։ Նման փոխհարաբերությունները շարունակվեցին մինչև կայսրության անկումը՝ հանդիսանալով արհեստների զարգացմանը խանգարող ներքին կարևոր հանգամանքներից մեկը։ 1913 թ. ամռանը «Բյուզանդիոն» հրապարակեց «Թայմս» թերթի Կ. Պոլսի թղթակցի ծավալուն հոդվածը էսնաֆների մասին։ Նշելով, որ դրանք եվրոպական արհեստավորական ցեխերի նման «կազմակերպված և զորավոր» չէին, թղթակիցն ընդգծում էր ուրիշ մի երևույթ։ «Իրավ է,— գրում էր նա,— թե էսնաֆների

---

[1] «Записки янычара», М., 1978, стр. 68—69.

[2] Тодоров Н., Балканский город..., стр. 412.

[3] См. сб. «Страны и народы Ближнего и Среднего Востока», Ер., 1979, т. X, стр. 196.

պետերը նույնիսկ Աբդուլ Համիդի գահակալության սկզբներին իրենց էսնաֆին անդամներում անդամակցության վկայականներ կուտային, որով կարող կլլային ճամփորդություններ կատարելու առանց դժվարության հանդիպելու կառավարության կողմեն»[1]։ Ինչպես արդեն ցույց տրվեց, կառավարության կամ նրա պաշտոնյանների հարուցած դժվարությունները երբեմն հասցնում էին մեծ վնասների և նույնիսկ սնանկացման։ Ունենալով կառավարական մարմինների օգնությունը, առանձին ցեխեր կարողանում էին բոյկոտի ենթարկել քրիստոնյա արհեստավորների նորամուծությունները կամ նրանց որոշ միջոցառումներ։ Երբեմն էլ տարբեր ցեխեր միավորվում էին՝ պետական և քաղաքական միջոցառումներին մասնակցելու համար։ Այդպիսի մի դեպք է նկարագրում «Թայմսի» թղթակիցը. նավավարները միանալով բեռնակիրների էսնաֆին, Կ. Պոլսում և Սելանիկում «1910-ին խստորեն առաջ տարան հակահելլեն բոյքոտը»[2]։ Ցեխերի գործունեությանը տալով քաղաքական երանգ, Թուրքիայի վերնախավը հաճախ էր նրանց օգտագործում իր հետադիմական մտահղացումներն իրագործելիս։

Կասկածից վեր է, որ Թուրքիայի պայմաններում պետական հովանավորությունից օգտվելը տնտեսական կազմակերպությունների ոչ միայն գոյության, այլև հետագա զարգացման կարևոր նախապայմանն էր։ Օգտվելով դրանից, շատ արհեստավորական ցեխեր զարգացան և նրանց ղեկավարները կարողացան հետզհետե համակերպվել բուրժուական հարաբերությունների հետ, առևտրի կամ արտադրության ընդլայնման միջոցով դանդաղորեն ընթանալ կապիտալիզմի ուղիով։ Անհրաժեշտ է նշել, որ արտադրության հին ձևերի կամ կապիտալիստական զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող կազմակերպությունների գոյատևումը ձեռնտու էր թե՛ ցեխային վերնախավի և թե երկրի ֆեոդալական տիրող շրջանների համար։ Որպեսզի պատմական պատկերը ներկայացվի իր ամբողջ բարդ հյուսվածքով և երկրի կյանքի վրա նրա ունեցած ազդեցությամբ, բերենք XVII դարում գոյության և արտադրության ու վաճառքի մոնոպոլ իրավունքներ ունեցող, խիստ մասնագիտացված ցեխերի ներքին կարգերի ու բաժանումների խիտ

[1] «Բյուզանդիոն», № 5067, 24. 6. 1913։
[2] Նույն տեղը։

ցանցը ներկայացնող մի քանի թվեր։ Ի դեպ, դրանք աննշան փոփոխությունների ենթարկվեցին XVIII և XIX դարերի ընթացքում։ Այսպես, Կ. Պոլսի կաշեգործների ցեխերը բաժանված էին 35 մասնագիտությունների, կար անողներինը՝ 19, զինագործներինը՝ 36, մետաղագործներինը՝ 36, ոսկերիչ-ակնագործներինը՝ 29, շինարարներինը՝ 44, հաց-հրուշակեղեն արտադրողներինը՝ 29 և այլն[1]։ Այստեղ նշված ու չնշված ցեխերի բոլոր իրավունքները պաշտպանվում էին պետական օրենքներով և ի հարկին զենքի ուժով։ Դարերով ձևավորված այդ սիստեմն ու փոխհարաբերությունները հանդիսանում էին ներքին ու լուրջ խոչընդոտներ առաջընթացի ուղիներում։

Արհեստներից և արդյունաբերական ձեռնարկություններից ամենատարածվածը տեքստիլ արտադրությունն էր։ Օսմանյան կայսրության իրականությանը ևս համապատասխանում են Կ. Մարքսի այն խոսքերը, որ «ջուլհակությունը՝ մանուֆակտուրաների մեջ առաջինն էր և մնաց դրանց մեջ գլխավորը»[2]։ Մանածագործությունն իր տարբեր ճյուղերով զարգացում էր ապրում և դիմանում օտարերկրյա ապրանքների մրցմանը համարյա մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Սակայն եղան առանձին բնագավառներ, որտեղ եվրոպական արդյունաբերությունը քայքայեց տեղական արտադրությունը։ Անցյալ դարի երկրորդ կեսին արտասահմանյան թելերին ու ներկերին արդեն տրվում էր նախապատվություն։ Այնուամենայնիվ, քիչ չէին բարձրորակ այնպիսի արտադրանքները, որոնք կարողացան իրենց գոյությունը պահպանել դեռևս երկար ժամանակ։ Տրապիզոնի իտալական հյուպատոս Սոլանելլին, 1881 թ. տպագրած իր գրքում, որոշ արհեստների հարատևության պատճառը համարում է արհեստավորների անկրկնելի վարպետությունը։ Էրզրումի արհեստավորների արտադրած կանանց գլխի ծածկոցի՝ չարսավի մասին նա ասում է, որ տեղացի բոլոր կանայք այն են օգտագործում։ Նա նշում է նաև, որ հայ և հույն կանայք նախընտրում են սպիտակ և գորշագույն չարսավները, իսկ մահմեդականները՝ ավելի կենդանի գույներ, ինչպես կարմիր, դեղին և այլն։ Դրանք գործվում էին մետաքսից ու բամբակից

[1] Տե՛ս «Страны и народы Ближнего и Среднего Востока», т. X, էջ 181.

[2] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 3, стр. 55.

և այնքան թանկ էին, որ հյուպատոսը դժվարացել է նմուշներ ուղարկել Միլանի միջազգային ցուցահանդեսին։ Զարդալի նկարագրությունը նա ավարտում է հետևյալ գնահատականով. «Այն թելը, որով գործված են, այնքան բարակ է, որուն Եվրոպիո ոստայնակներն դեռ չի կրցան նմանիլ»[1]։ Այնուհետև, խոսելով արհեստավորների ուրիշ արտադրանքների մասին, հեղինակն անհրաժեշտ է գտել նկարագրել դրանցից մեկը. «Եվրոպայեն եկած թելով բամբակե ճերմակեղեններ եւ կհյուսեն, և զանազան երանգով գծված դիպակներ, որոնք մանուսա կկոչվին...»։ Դրանք արտադրվում էին Արաբկիրի, Ակնի, Երզընկայի, Էրզրումի, Տրապիզոնի և այլ շրջաններում։ Ճաշակով գույներով ու որակով արտադրված մանուսան «մեծ քանակությամբ կծախվի բոլոր Արևելքի մեջ և նույնիսկ Եվրոպա կղրկվի»[2]։

Մանուսայի արտադրությամբ Կայսերիի սանջակում զբաղված էին 3000[3], Այնթապում՝ 6000 բանվոր-բանվորուհիներ[4]։ Մանուսագործությունը տարածված արհեստ էր նաև այլուր։ Մարզվանի տնտեսական կյանքը պատկերող մի հոդվածում նշված է, որ այնտեղ գործում էին մոտ 3000 դազգահներ և նրա բնակչության 1/6 մասը ոստայնանկությամբ էր զբաղվում։ «Կընանք ըսել,— գրում է հոդվածագիրը,— թե յուրաքանչյուր տունի մեջ տեզկեահ մը կգտնվի...»[5]։ Ռուսական ռազմական գործակալ Յա. Մալաման 1876 թ. նկարագրելով արևելյան ռազմական թատերաբեմի նյութական հնարավորություններն ու ռեսուրսները, գտնում էր, որ այնտեղ մահուդի արտադրությանը զգալի վնաս էր հասցրել եվրոպական մրցակցությունը։ Չնայած ներմուծվող էժան ապրանքը շատ էր վաճառվում, սակայն «թուրքական մահուդը,— նշում էր նա,— Արևելքում բարձր է գնահատվում և ոչնչացնել այդ հիանալի, մանավանդ Սիրիայում, արտադրությունը, կլինի չափազանց դժվար»[6]։ Ըստ նրա տվյալների, հիշյալ երկրի արդյունաբերության միայն այդ բնագավառում աշխատում էին 6000 բանվորներ։ Եղած պա-

[1] «Բազմավեպ», հատ. Խ (40), 1882, էջ 297։
[2] Նույն տեղը, էջ 298։
[3] Տե՛ս «Տարեցույց սփյուռքահայության», Բուխարեստ, 1939, էջ 152։
[4] Տե՛ս «Բյուզանդիոն», 5/17.11.1898։
[5] «Բյուրակն», 1908, № 8, էջ 231։
[6] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3818, л. 349.

համչարկը բավարարելու համար Բաղդադում բացվել էր հատուկ մահուդի ֆաբրիկա։ Իրենց գործվածքեղենով հայտնի էին Բիթլիսը, Վանը, Բասրան, Խարբերդը, Տրապիզոնը, Էրզրումը և բազմաթիվ այլ քաղաքներ։ Հետաքրքրական է նշել, որ եվրոպական ապրանքների ներխուժումն ունեցավ մեկ այլ հետևանք ևս։ Շատ բարձրորակ վարպետներ, բազմաթիվ վայրերում, աշխատում էին իրենց արտադրանքը ներմուծվող ապրանքներին նմանեցնել թե արտաքնապես և թե որակով։ Եվ այդ բանը նրանց հաջողվում էր։ Այսպես, որոշ գործվածքների և թելերի տեսակների արտադրությունը ոչ միայն դիմացավ մրցությանը, այլև ընդլայնվեց։ Եդիկուլեի, Սալոնիկի, Տարսուսի և այլ մանածագործարաններ ավելացրին իրենց համախառն արտադրանքը՝ հասնելով մինչև 12 համար թելեր արտադրելու բարձր մակարդակին։ Դրանց որակն այնքան լավացավ, որ թելերի առանձին տեսակներ «գտնվեցին մրցակցությունից դուրս, նույնիսկ անգլիական մանածագործների մոտ»[1]։ Պայքարը հանուն տեղական արտադրողների դիրքերի ամրապնդման ծավալվել էր բոլոր արտադրությունների գծով, բայց, անշուշտ, ոչ հավասար հաջողությամբ։ Այսպես, կաշվի արդյունաբերության բնագավառում հնարավոր եղավ ստեղծել բարենպաստ պայմաններ։ Նախ, հում կաշին մշակվում էր տեղում, և դրա մի մասն արտահանվում էր։ Սակայն զգալի քանակությամբ պատրաստի կաշի էր ներմուծվում խոշոր կաշեգործարանների համար, որոնք արտադրում էին կոշիկ, կաշվե բաճկոններ ու վերարկուներ։ Բայց այս բնագավառում տեղական գործարար շրջանները ևս աշխատում էին սահմանափակել ներմուծումը։ Հետևանքը եղավ այն, որ սկսած 1890 թ., 15 տարվա ընթացքում ներմուծվող կաշվի ծավալը մնաց նույնը։ Մյուս կողմից, կաշի մշակող և պատրաստի արտադրանք տվող ձեռնարկությունների թիվը աճում էր և նրանք ի վիճակի էին մշակելու ոչ միայն տեղական հումքը, այլև 400 հազար թուրքական լիրայի Հարավային Ամերիկայից, Չինաստանից ու Հնդկաստանից գնվող կաշիները[2]։ Այդ ձեռնարկություններից էին վեց խոշոր գործարաններ Կ. Պոլսում, ֆաբրիկաններ ու ցեխեր Իզմիրում, Ալեքսանդրիա-

[1] «Вестник финансов...», 1897, № 28, стр. 64.
[2] Տե՛ս «Բյուրակն», 1906, № 16, էջ 262։

յում, Ադաբազարում, Դիարբեքիրում, Սպարտայում, Անկարայում և այլուր։

Մեր դարասկզբում, շնորհիվ տեխնիկական միջոցներով ապահովված որոշ գործարանների, բարձրորակ կոշկի համար Ֆրանսիայից ստացվող կաշիների փոխարեն «Բյուրակնի» վկայությամբ սկսեցին օգտագործել «տեղական (Սաքըզ, Իզմիր) խաղախորդարաններու մեջ պատրաստվածները»[1]։ Դեռ ավելին։ Տեղական հումքով պատրաստած կոշիկները սկսել էին արտահանել և դրանք դարձել էին Փարիզի «մեծ վաճառատուններու ցուցափեղկերուն մեջ զետեղվող առարկաներ»[2]։

Շաբաթաթերթը հույս է հայտնում, թե «որքան ավելի առաջ երթա այս ճարտարարվեստը մեր երկրին մեջ, հետզհետե այնքան նվազ պիտի ըլլան մորթիի ու կաշիի օտար երկրներե ներածությունը»։ Ամփոփելով տվյալ բնագավառում 1907 թ. նվաճումները, «Բյուրակնը» արձանագրում է. «Մեր գործարանները իրենց նախանյութին մեծ մասը տեղական արտադրություններեն կհայթայթեն, և կան ինչ-ինչ տեսակներ, որ երկրին մեջ մշակելով օտար երկրներ կղրկվին»[3]։ Այս հաջողությունները մասամբ կարելի է վերագրել կաշվի արտադրության մասնագիտացմանը, որը տեղի էր ունենում ամբողջ երկրում։ Այսպես, խոշոր եղջերավոր անասունների կաշին մշակվում էր Բեյրութում և Զիլեում, ոչխարի և այծի մորթիները՝ Դամասկոսում, Կ. Պոլսի որոշ ձեռնարկություններում, Հոմսում, Համայում։ Այնթապում մշակվում էին միայն այծի մորթիներ։ Հիշյալ ձեռնարկությունները հումքը ստանում էին Բիթլիսից, Խարբերդից, Սըվասից, Դիարբեքիրից և ուրիշ վայրերից[4]։

Փաստերի համադրումից կարելի է եզրակացնել, որ չնայած արտասահմանյան էժան ապրանքների աճող մրցմանը, մի շարք արհեստներ շարունակեցին գոյատևել և նույնիսկ վերելք ապրեցին։ Դրանք այն արհեստներն էին, որոնք բավարարում էին տեղական սպառողի կենսական, ամենօրյա պահանջները լայնածիր կայսրության հատկապես ներքին շրջաններում։ Նշվածներից բացի, դրանցից էր սննդամթերքների, մասնավո-

1 Տե՛ս «Բյուրակն», 1906, № 16, էջ 263։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Տե՛ս Руппин А., նշվ. աշխ., էջ 152։

րապես հացի, կաթնեղենի ու մսի արտադրությունը։ Հանրահայտ է, որ, օրինակ, բացի թարմ մսից, տեղական բնակիչները սպառում էին ղավուրմա, բաստուրմա, սուջուխ և տարբեր տեսակի չորացրած կամ ապխտած միս, որն արտադրվում էր նաև շուկայի համար։ Հաջողությամբ զարգանում էին դժվար տեղափոխվող և շուտ փչացող մթերքներ (մրգեր, ձիթապտուղ, խաղող, մետաքսի կոկոններ, համեմունքներ և այլն) վերամշակող ձեռնարկությունները։ Վերջապես, զարգանում էին տեղական հատուկ արտադրանք տվող այնպիսի արհեստները, ինչպիսիք էին գորգագործությունը իր բազմաթիվ տեսակներով և արևելյան զարդարանքներ, զենքեր, տարբեր նյութերից կենցաղային յուրահատուկ իրեղեններ և նման այլ առարկաներ պատրաստող արտադրությունը։

Տեղի էր ունենում բազմակողմանի, բարդ ու հակասական մի պրոցես, որը բնորոշ էր կիսագաղութային երկրում ֆեոդալական հարաբերությունների քայքայման ու կապիտալիստական հարաբերությունների առաջընթացի պայմաններին։ Այդ ամենի վրա թուրքական իրականությունը դնում էր իր յուրահատուկ կնիքը, դանդաղեցնելով նշված բոլոր պրոցեսները։ Այնուամենայնիվ, սոցիալ-տնտեսական տեղաշարժերն առկա էին, թեև ինչ-որ չափով համարվում էին ներքին պայմաններին։ Հ. Ղազարյանն այդ մասին գրում է. «Արհեստագործության ճյուղերը դարասկզբին համախմբվել էին ըստ քաղաքների, առաջացնելով մի պրոցես, որը փնալով ավելի էր խորանում, քանի որ եվրոպական ապրանքների ներմուծի հոսքի ուժեղացման պատճառով հարկադրական պահանջներ էր առաջանում կատարելագործումներ անել ձեռագործության ասպարեզում, դիմագրավել մեքենայի հրաշքին»[1]։ Ինչպես արդեն նշվեց, դիմագրավել կարողացավ տեղական արդյունաբերության մի մասը միայն։ Բայց եղան այնպիսի քաղաքներ և արհեստներ, որոնց անկումը շարունակվեց երկար տասնամյակներ։ Դրանց թվին էր պատկանում Թոգատը (Եվդոկիա), իր բարձր աստիճանի հասած պղնձագործությամբ։ Ս. Սապահգյուլյանի գնահատմամբ, «Թոգատի պղնձեղենի արդյունագործությունը գովական է ամբողջ Թուրքիո մեջ, արհեստը այստեղ

[1] Ղազարյան Հ. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը 1800—1870 թթ., Եր., 1967, էջ 202—203։

արդեն նրբության է հասել, կաթսայեղենները, խոհանոցի ամանները, կերակուրի ամեն տեսակ անոթները գեղարվեստական կատարելություն ունեին»[1]։ Թոքատում կային մոտ 150 պղնձագործական արհեստանոցներ և խանութներ, որոնցում աշխատում էր 800—1000 մարդ։ Սակայն դարի վերջին այդ թվերը կրճատվել էին՝ առնվազն տասն անգամ։ Բանն այն էր, որ Եվրոպայից ներմուծվող ցինկից, էմալից և այլ նյութերից պատրաստված ամանեղենը և՛ էժան էր, և՛ գործածելու համար հարմար։ Ահա այս պատճառով էլ պղնձեղենի արտադրությունը երբեք չհասավ իր նախկին ծաղկած վիճակին։ Ա. Ալպոյաճյանը մեջ է բերում «Մասիս» թերթի 1898 թ. համարներից մեկի Թոքատի հետևյալ նկարագրությունը. «Մեծ ու փոքր բազմաթիվ խաներ, որոնք հիմա թափուր են գրեթե, տեղացի և պանդուխտ վաճառականներով լեցուն էին երբեմն... Հիմա կարևոր արվեստներու կարգն են պղնձագործությունը և յաղմաճիությունը, առաջինը իր հոգեվարքին հասած է գրեթե, իսկ վերջինը դեռ կապրի, և կերևա թե տակավին երկար է կյանքը»[2]։ Պղնձագործությունը և մի քանի այլ արհեստներ նույն վիճակին հասան նաև Կեսարիայում, Մարզվանում, Սեբաստիայում, Ամասիայում և մի շարք այլ քաղաքներում։

Տեղի էր ունենում առևտրական կապիտալի ներթափանցում արտադրության բնագավառը, որի հետևանքով ևս միացվում էին նույն բնագավառի արհեստանոցներն ու ձեռնարկությունները։ Այսպես ստեղծվեց Ադանայի գուլպայի գործարանը, որի երեք փայատերերը, օգտագործելով ժամանակակից տեխնիկական միջոցները, գուլպայի օրական արտադրանքը հասցրել էին 800—1000 զույգի։ Այն արտածվում էր «Իզմիր, Բեյրութ, Դեդեաղաչ, Կեսարիա, Տարսոն, Մերսին, Հաճն և ներքին այլ գավառներ, ուրտեղ ընտիր ու դիմացկուն գուլպայի հռչակ հանած էին սույն կոկիկ գործարանին գուլպաները»[3]։ «Բյուրակնը» արձանագրում է կապիտալիստական կարգերին բնորոշ մի երևույթ։ Գոյություն ունեցող ձեռնարկությունները չէին բավարարում տեղական պահանջարկը և դարասկզբին կարիք էր զգացվում ստեղծելու նոր գործարաններ։ «Շրջակա և տեղա-

---

[1] Ստեփանգյուլյան Ս., Փոքր Հայքի հիշատակներ, Չիքագո, 1917, էջ 223։
[2] Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1266։
[3] «Բյուրակն», 1907, № 9—10, էջ 237։

կան անսպառ ապսպրանք,— գրում է շաբաթաթերթը,— չեն կրնար օրը օրին հանձնվիլ, որով երրորդ և չորրորդ մանարանի պետք կտեսնվի։ Ըստ այսմ դրամատեր մը Տարսոն եկած է ավելի մեծ մանարան մը հաստատելու համար, և Սիմեոնօղլու որդիք ալ Ատանայի մեջ հիմնեցին նոր մանարան մը»[1]։ Ընդլայնվում էր ոչ միայն գործվածքների ու կտորեղենի, այլև պատրաստի հագուստեղենի, կոշիկների և սպառման այլ ապրանքների պահանջարկը, որի հետևանքով Կ. Պոլսում, Իզմիրում, Սալոնիկում և այլ կենտրոններում ստեղծվում էին կանանց և տղամարդկանց վերարկուներ, զգեստներ և այլ հանդերձանք արտադրող խոշոր արհեստանոցներ։ Աշխույժ առևտրական գործունեություն ծավալեցին հիշյալ ապրանքները վաճառող և տեղում «հազըրճի» կոչվող վաճառատները, որոնք իրենց ապրանքներն ուղարկում էին Բեյրութ, Դամասկոս, Հալեպ և բազմաթիվ այլ քաղաքներ[2]։

Արաբկիրում տեղական վաճառականները միավորել էին մանուսայի արտադրությունը, որը կատարվում էր 1600 գործող դազգահների վրա[3]։ Կեսարիայում տարբեր ազգության երկու տասնյակից ավելի վաճառականներ կառուցել էին գորգի մի քանի գործարաններ, որոնց արտադրանքը սպառվում էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում[4]։ Իզմիրում երեք գործարանատեր իրենց ձեռքում էին կենտրոնացրել ծաղկավոր ճոթեղենի արտադրությունը և վաճառքը։ Բացի Իզմիրից այն սպառվում էր Այդընի, Կոնիայի վիլայեթներում, ինչպես նաև Սպարտայում, Ուշաքում, Աֆիոն Կարահիսարում և էգեյան կղզիներում[5]։

Խոշոր ձեռնարկությունները և տեխնիկական նորույթները նոր մասնագիտությունների պահանջ էին առաջադրում։ Ընդլայնվող արտադրությունը կարիք ուներ մեխանիկների, էլեկտրիկների, քիմիկոսների, դեղագործների, տպագրիչների, նկարիչների և մի շարք այլ սպասարկող բնագավառների աշխատողների։ Դրանց երևան գալը բնականոն էր բուրժուազիայի

---

1 «Բյուրակն», 1907, № 9—10, էջ 237։
2 Տե՛ս նույն տեղը, № 1—2, էջ 10։
3 Տե՛ս Սովաճճյանց Գ., Երկեր, հատ. 2, էջ 295։
4 Տե՛ս «Բյուրակն», 1907, № 13—14, էջ 333—334։
5 Տե՛ս նույն տեղը, № 19—20, էջ 465։

զարգացման պայմանների համար։ Մասնագետներ պատրաստելու անհրաժեշտությունը հանգեցրեց մասնագիտական ուսումնարանների և արհեստագործական դպրոցների կազմակերպմանը։ Արհեստներ սկսեցին սովորեցնել որոշ դպրոցների ու որբանոցների երեխաներին։ «Արևելյան մամուլ» լրագիրը, բացի հին արհեստներից, պահանջում էր 2—3 տարվա ընթացքում աշակերտներին սովորեցնել մեխանիկի, դարբնի, ձուլողի, քանդակագործի և այլ մասնագիտություններ[1]։

Կապիտալիստական հարաբերությունների առաջընթացը որոշ ազդեցություն ունեցավ երկրի վերնախավի ներքին քաղաքականության վրա։ 1860-ական թթ. պետությունը ստիպված էր ձեռնարկել որոշ քայլերի երկրի արդյունաբերությունը զարգացնելու նպատակով։ 1862 թ. ստեղծվեց կառավարական հանձնաժողով արդյունաբերության զարգացման միջոցառումներ մշակելու համար։

1864 թ. հիմնադրվեց արդյունաբերության բարեփոխման կոմիտե։ Այն գործեց ընդամենը տասը տարի։ Նրա վերացման պատճառը եղավ կառավարական շրջանների այն տեսակետը, որ իբր «կոմիտեի իրավասությունները փաստորեն ոտնձգություն են արհեստավորների, քաղաքային իշխանության և առևտրական նախարարության գործերին»[2]։ Իր գոյության ընթացքում կոմիտեն կարողացավ կազմակերպել միայն ցուցահանդեսներ և արհեստագործական դպրոցներ։ Այս խնդրին նվիրված իր ուսումնասիրության մեջ դոկտոր Նիզամեդդին Ալիսավը անհրաժեշտ է գտնում նշել, որ պետական այդ դպրոցները հիմնադրվել էին ոչ բուն Թուրքիայում։ «Դպրոցներից առաջինը,— գրում է նա,— կառուցվեց Հարավսլավիայի Նիշ քաղաքում, երկրորդը՝ Բուլղարիայի Ռուսճուք քաղաքում և երրորդը՝ Սիրիայի Հալեպ քաղաքում»[3]։ Պատճառը երկրում ուսուցիչների պակասն էր։ Իսկ այդ քաղաքներում կային մասնագետներ և հնարավոր էր հեշտությամբ հրավիրել ուսուցիչներ հարևան երկրներից։ Մյուս դժվարությունը, դա «զանգվածային մեծամասնության տգիտությունն» էր[4]։ Բայց հանրահայտ

---

[1] Տե՛ս «Արևելյան մամուլ», Կ. Պոլիս, 1904, էջ 825։

[2] Karal Enver Ziya, Osmanlı tarihi, Ankara, 1956, cilt 7, s. 257.

[3] Dr. Alisav N Sanayı iktisadi..., s. 152.

[4] Տե՛ս նույն տեղը։

է, որ բազմաթիվ գյուղատնտեսական, արհեստագործական և նույնիսկ արդյունագործական ուսումնարաններ անցյալ դարի 80-ական թթ. գործում էին կայսրության ամբողջ տարածքում։ Նրանց մեծագույն մասում տնտեսական գործերում ավելի հմուտ ազգային փոքրամասնությունների երեխաներն էին սովորում։ Մահմեդականների զավակները, որպես կանոն, իրենց արժանապատվությունից ցածր էին համարում հաճախել այդ ուսումնարանները։ Դոկտոր Ն. Ալիսավը, անշուշտ, գրում է վերջիններիս համար բացված դպրոցների մասին։ Արդյունաբերության դանդաղ զարգացումը, իհարկե, միայն կադրերի պակասության հետևանք չէր, այլ մի շարք ուրիշ լուրջ գործոնների, որոնց մասին մասամբ խոսվեց։ Սակայն, երբ պետությանն անհրաժեշտ էր լինում ապահովել այս կամ այն արտադրությունը կադրերով, հումքով, մեքենաներով, ապա տվյալ ձեռնարկությունը հաջողությամբ կարողանում էր գործել։ Ահա այդ բնույթն ունեն պետական գործարանների ցանցը, որը XIX դարի սկզբին Թուրքիայի մասշտաբներով բավական խոշոր գործարաններից ու ֆաբրիկաներից էր կազմված։ Դրանք մեծ մասամբ կառուցվում էին, ելնելով օսմանյան նորաստեղծ բանակի պահանջներից և, որպես կանոն, ռազմամթերք, զինվորական հագուստներ և զինվորականներին անհրաժեշտ այլ պարագաներ էին արտադրում։ Առաջին պետական գործարանը, որ կառուցվել էր 1810 թ. Բեյքոզում, վառոդի գործարանն էր, որի շինարարությանն ու ղեկավարությանը մասնակցել էր Հովհաննես ամիրա Դադյանը[1]։ Այնուհետև մինչև 1860-ական թթ. կառուցվեցին ալյուրի, ծխախոտի, գարեջրի, օճառի, թղթի, կաշվի, հյուսվածքեղենի, կտորեղենի, հանդերձանքի և այլ անհրաժեշտ արտադրանք տվող մոտ երեք տասնյակ գործարաններ երկրի տարբեր վայրերում։ Թուրք հեղինակները իրավացիորեն նշում են պետության կողքին մասնավոր անհատների կարևոր դերը արդյունաբերության այս ճյուղի ստեղծման և զարգացման գործում։ «Առանձին անձնավորությունների ջանքերով,— ընդգծում է Ս. Ռաիմը,— հիմնվեցին որոշ գործարանային արդյունաբերության կետեր։ Նման հիմնարկները, սակայն, ստեղծվեցին օտարների ձեռքով, շնորհիվ կապիտու-

---

[1] Տե՛ս Գողոսյան Ե., Տատյան գերդաստանը, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1968, էջ 51։

լյացիաների և այլ մենաշնորհումների»[1]։ Այդ տարիների մեծ մասը, սակայն, կայսրության հպատակ ժողովրդի ներկայացուցիչներն էին։ Կառավարությանը նրանք պետք էին ոչ միայն, երբեմն ոչ այնքան, որպես փողատերեր, այլև որպես մասնագետներ, վարպետներ ու արդյունաբերության կազմակերպիչներ։ Ն. Տոդորովը բավական մանրամասնությամբ է ներկայացնում մի խոշոր ձեռնարկության պատմությունը։ Դա բուլղարական արդյունաբերական կենտրոններից մեկում՝ Սլիվենում, 1836 թ. կառուցված մահուդի գործարանն էր։ Նրա տերն ու կառուցողը՝ վարպետ Դոբրի Ժելյազկովը, կանչվում է Բարձր դուռը, ցույց տալիս իր արտադրանքի որակը և կառավարության հատուկ կարգադրությամբ սկսում է արտադրել բարձրորակ մահուդ։ Անհրաժեշտ քանակով ստանալով գործարանի արտադրանքը՝ կառավարությունը հրաժարվում է բանակի համար մահուդ ներմուծելուց։ 1840-ական թթ. գործարանը պետության հաշվին երկու անգամ վերանորոգվում և ընդլայնվում է։ Այսպես, 1841 և 1842 թթ. կատարված հիշյալ ծախսերը ծածկվում են Տրնովոյի հարկային վարչության և գավառապետարանի միջոցներով։ Դ. Ժելյազկովը գործարանը ղեկավարում է որպես դիրեկտոր և վարպետ, իսկ կառավարիչները, որոնք նշանակվում են թուրք մեծամեծերից, փոխարինում են միմյանց[2]։ Սակայն այս ձեռնարկության կողքին հեղինակը ցույց է տալիս մեկ ուրիշը՝ Գյումուշգերդան եղբայրների տեքստիլ ֆաբրիկան Պլովդիվի մոտ, որը թեև կատարում էր պետության պատվերները, մինչև վերջ էլ մնաց մասնավոր կապիտալիստական ձեռնարկություն։ Նա հետզհետե ընդլայնվեց, զարգացավ և պետական պատվերներից ստացած շահի շնորհիվ գոյատևեց մինչև Բուլղարիայի ազատագրումը[3]։

Դադյան գերդաստանի մասնագետների ու հարստության օգտագործումը ևս ցույց է տալիս, որ պետության համար գործող արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը իր գոյությունը պահպանում էր պետական վարկերի միջոցով, մյուսները՝ թե՛ վարկերի և թե տերերի կապիտալի օգնությամբ,

---

[1] Dr. Râim. Istanbul Mensucat... s. 22. Տե՛ս նաև, Türkiye'de sermaye piyasasının kurulması, s. 17.

[2] Տե՛ս Тодоров Н., Балканский город..., стр. 257—269.

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 269—274։

իսկ մի մասն էլ սկզբից մինչև վերջ գործում էր որպես մասնավոր ձեռնարկություն, ունենալով պալատի, կամ սուլթանի մերձավորների հովանավորությունը։ Այսպես, Հովհաննես ամիրայի զավակները՝ արքունի վառոդապետ Առաքելը և Ներսես-Խոսրովը 1845 թ. հրավիրվում են սուլթան Աբդուլ Մեջիդի պալատը, որտեղ «մարդասիրական ոգով ընդունելով զանոնք, քառորդի մը չափ (սուլթանը— Հ. Ի.) բարեհաճեցավ խոսելու անոնց հետ Իզմիտու (մահուդի) գործատանը վրայոք բաներ հարցնելով... վերոհիշյալ գործարանի հոգաբարձությունն ալ որդոց-որդի հաջորդական ժառանգությամբ հաստատեց»[1]։

Պետական գործարաններից ու ֆաբրիկաներից յոթն արտադրում էին ռազմամթերք։ Դրանցից մի քանիսը միավորվեցին նշանավոր Թոփհանեի մեջ, որը Թուրքիայում դարձավ հրանոթներ ու հրացաններ, իսկ 1881 թ. նաև վառոդ արտադրող միակ ձեռնարկությունը։ Մյուս ձեռնարկությունները նույնպես մեծ մասամբ կատարում էին ռազմական նշանակություն ունեցող պատվերներ։ Դրանք բոլորն էլ կառավարության հատուկ ուշադրության առարկա էին, հատկապես Ղրիմի և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների տարիներին և դրանց հաջորդող ժամանակաշրջանում։ Մանավանդ, երբ հիշյալ պատերազմները ցույց տվեցին թուրքական բանակի թուլությունը մյուսների համեմատությամբ, ակնառու դարձավ ռազմական արդյունաբերությունն ընդլայնելու անհրաժեշտությունը։

1888 թ. կառուցվեց պողպատաձուլման մի մեծ ձեռնարկություն, որտեղ պատրաստում էին նավերի մետաղյա սարքավորումներ, թնդանոթներ և զենքի այլ մասեր։ Ռուսական ռազմական գործակալը նշված ձեռնարկությունները այցելելուց հետո գրում էր, որ դրանցից ուշադրության արժանի էին Կրուպի հաստոցներով սարքավորված զինագործարանը, չուգունի և բրոնզի ձուլարանը, զրահի թերթեր պատրաստող չորս շոգեմուրճերով երկաթեղենի գործարանը, մոտորներ հավաքող մեքենաշինական խոշոր արհեստանոցը, կաթսայի գործարանը և 1884—1889 թթ. հիմնված էլեկտրատեխնիկական և ականների արհեստանոցները, ինչպես նաև նավաշինարաններն ու

---

[1] **Պողոսյան Եփր.**, *Տատյան գերդաստանը, Բ. հատոր, Բեյրութ, 1970, էջ 82։*

նավերի վերանորոգման կայանները։ Հիշյալ գործակալի կարծիքով, ռազմական գերատեսչությունն ուներ ժամանակի պահանջներին համապատասխանող արդյունաբերական բազա, որն ապահովված էր անհրաժեշտ քանակությամբ մասնագետներով, վարպետներով և որակյալ բանվորներով, որոնց թիվը 3000-ից ավելի էր[1]։ Իսկ ամբողջությամբ վերցրած արդյունաբերության այս բնագավառում աշխատում էր մոտ 10 հազար բանվոր[2]։ Ինչպես տեսնում ենք, ցանկության կամ կարիքի դեպքում, պետությունն ընդունակ էր արդյունաբերության համապատասխան ճյուղերն ինչ-որ չափով ապահովել հումքով, սարքավորումներով և աշխատուժով։

XIX դարի երկրորդ կեսին վերելք էին ապրում արդյունաբերության մի շարք այլ բնագավառներ ևս, որտեղ օտար կապիտալի կողքին, կամ նրան համատեղ ակտիվորեն գործում էր տեղական կապիտալը։

Դրանցից առաջնակարգը գորգագործությունն էր, որի արտադրանքը սպառվում էր թե ներքին և թե արտաքին շուկաներում։

Եթե անցյալ դարի 30-ական թթ. երկրում կային գորգագործության միայն երեք կենտրոններ (Ուշագ, Կուլցե, Կըրշեհիր), ապա 70—75 տարի հետո դրանց թիվն անցել էր 25-ից։ Սկըզբնական շրջանում, նշված երեք կենտրոններում արտադրվել էր 50—70 հազար քառ. մետր գորգ[3]։ Իսկ 1890-ական թթ. միայն չորս խոշոր կենտրոններ (Ուշագ, Գյորդեզ, Դեմիրջի և Կուլցե) տալիս էին մոտ 370 հազար քառ. մետր գորգ[4], կամ յոթ անգամ ավելի։ Այդ կենտրոններից միայն Ուշագը արտադրում էր 250 հազար քառ. մետրից ավելի գորգ։ Դեռևս 1882 թ. այստեղ արտադրվել էին մոտ 180 հազ. քառ. մետր տարբեր տեսակի գորգեր, որոնցից 100 հազ. քառ. մետր արտահանվել էր, իսկ 40 հազարը՝ վաճառվել Թուրքիայում ու Եգիպտոսում[5]։

Մամուլի տվյալների համաձայն, 1907 թ. Թուրքիայի գորգագործության բնագավառում աշխատում էին մոտ 20 հազար

---

[1] ЦГВИА, ф. 401, оп. 1890, д. 3, лл. 53—56.
[2] Տե՛ս «Ученые записки ЛГУ», вып. 14, 1962, стр. 3.
[3] Տե՛ս Новичев А. Д., Очерки экономики Турции... стр. 270.
[4] Cuinet Vital, La Turquie d'Asie, Paris, t. III. p. 408.
[5] Dulaurier Ed., En Turquie d'Asie, Paris, 1888, p. 224.

հաստոցներ, որոնց սպասարկում էին 40 հազար երկսեռ բանվորներ։ Արտադրության կենտրոնացման և տարբեր շրջաններում խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ճյուղեր ստեղծելու պրոցեսը շատ հստակ երևում է Սըվասի (Սեբաստիա) ձեռնարկատերերի օրինակից՝ բերված Զ. Թաշչյանի հետաքրքրական հոդվածում։ Նա գրում է քաղաքում 1907 թ. գործող ութ միավորումների մասին, որոնք զգալի շահ էին բերում ազգաբնակչությանը։ «Սա երկու տարվան մեջ,— գրում է նա,— գործավորաց թիվը եռապատկվեցավ և օրըստօրե ավելնալու վրա է։ Հուսալի է, որ երկու տարի վերջը ներկա թիվն ալ կրկնապատկվի։ Այժմ 3000 չափ գործավորներ, 1000—1500 բուրդ մանող կիներ և 200 չափ պաշտոնյաներ կաշխատին այդ գործարաններու մեջ...»[1]։ Խոշոր արտադրություններ կազմակերպողների թվում հիշատակվում է «Իզմիրցի վաճառական տիար Թ. Սպարթալիի գորգի մասնաճյուղի ընդհանուր տնօրեն Մարգար էֆենդի էքիզլերը, որ եկած է Սվազի մեջ ալ գորգի գործարան հաստատելու։ Այս գործարանը հիմա կհռչակվի Ալպեռ Ալիոթի անվան տակ»[2]։

Հոդվածում ցույց են տրված հայ խոշոր ֆինանսիստ և արդյունաբերող Թ. Սպարթալիի կապերը մի կողմից օտար կապիտալի, իսկ մյուս կողմից՝ տեղական արդյունաբերական կենտրոնների հետ։ Այնուհետև նշվում է, որ «տարեգլխուն արդեն հիշատակված գործի սիդիկատը «Արևելյան գորգերու ընկերություն» պիտի կոչվի»[3]։ Այդ անունով ընկերությունն իր գոյությունը պահպանեց երկար տարիներ, թեև չէին հիշատակվում նրա հիմնադիրների և ղեկավարների անունները։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ըստ Օրհան Կոնկերի, գորգերի արտադրությունը և վաճառքն իրենց ձեռքում կենտրոնացրել էին «յոթ մեծ ընկերություններ՝ որոնցից չորսը թուրքական (իրականում թուրքահպատակ հույն, հայ, հրեա ձեռնարկատերեր էին— Հ. Ի.), երկուսը անգլիական և մեկը ամերիկյան ընկ. էին»[4]։

---

[1] «Բյուրակն», 1907, № 52, էջ 1844։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

[4] Orhan Conker, Redressement Economique et Industrialisation de la Nouvelle Turquie, Paris, 1937, p. 96.

Կենտրոնացման և առևտրական կապիտալը արդյունաբերականին միավորելու ձգտումը նկատվում էր նաև երկրի մյուս կարևոր արտադրության բնագավառում։ Դա մետաքսի իր զարգացմամբ երկար ուղի անցած արտադրությունն էր։ Անցյալ դարի կեսերին այն ուներ բավական բարձր մակարդակ։ Ինչպես մետաքսագործության մասին իր ուսումնասիրության մեջ նշում է ռուս հայտնի մասնագետ Ն. Շավրովը, 1845 թ. Բուրսայում արդեն կառուցվել էր շոգեմեքենաներով աշխատող և «60 կարժառ ունեցող առաջին մանարանը, որը պատկանում էր Բադիկյան էֆենդիին, Ֆալկշտայնի ընկերակցությամբ»[1]։ Հաջորդ տարի այնտեղ սկսեցին գործել ևս երկու մետաքսի ֆաբրիկաներ։ 1859 թ. Թուրքիայում կային 4200 կարժառ ունեցող 69 ֆաբրիկաներ և խոշոր արհեստանոցներ, իսկ վեց տարի հետո այդ թվերը հասան համապատասխանաբար 5000-ի և 85-ի։

1870-ական թթ. վերջերից մետաքսի արտադրությունն ապրեց մի նոր բուռն վերելք, երբ ավանդական շրջաններից (Բուրսա, Իզմիտ, Գեյվե, Բանդըրմա, Հալեպ, Բեյրութ, Սալոնիկի) բացի, շերամապահությամբ սկսեցին զբաղվել Անատոլիայում (Կեսարիա, Ամասիա, Ադաբազար) և Արևմտյան Հայաստանում (Խարբերդ, Էրզրում, Վան, Դիարբեքիր) և այլ շրջաններում։ «Բյուզանդիոնի» տվյալներով 1898 թ. Բուրսայում կար 41 ձեռնարկություն, 1890 թ. քաղաքում և նրա շրջանում դրանց թիվը հասավ 88-ի, իսկ 1906 թ.՝ 131-ի[2]։ Ն. Շավրովի հաշվումների համաձայն, Բուրսայից մինչև Իզմիտ ընկած շերամաբուծության հիմնական շրջանում 1901 թ. գործում էին 96 ձեռնարկություն 5000 կարժառով, որոնց թիվը 1907 թ. հասավ համապատասխանաբար 165-ի և 9200-ի։ Երկրի ամբողջ տարածքում 1906 թ. կային «310 մետաքսի մանարաններ 20200 կարժառով, որոնք մշակում էին 985 հազար կիլոգրամ կամ 61,5—62 հազար փութ կոկոններ»[3]։

Մեր դարասկզբին մետաքս արտահանող երկրների մեջ Օսմանյան կայսրությունն աշխարհում առաջիններից էր։ Ճապոնիայից, Չինաստանից, Հնդկաստանից ու նրանց հարևան և

[1] Шавров Н. И. Шелководство и шелковая промышленность в Турции, Тифлис, 1907, ч. I, стр. 285.

[2] «Բյուզանդիոն», 12. 09. 1906։

[3] Шавров Н. И., указ. произв., стр. 240.

եվրոպական երկրներից հետո նրա արտադրանքը զգալի տեղ ուներ միջազգային շուկայում։ Նա առաջ էր անցել Ռուսաստանից և բալկանյան երկրներից։ Այսպես, եթե վերջին, երրորդ խմբի երկրներում 1906 թ. արտադրվել էր 18371 տոննա թարմ խոզակ (կոկոն) և 2624 տոննա կիսաֆաբրիկատ, այս ընդհանուր թվերի մեջ կայսրության մասը համապատասխանաբար կազմում էր 14 371 և 1281 տոննա[1]։ Արդյունաբերության այս բնագավառում տեղի էր ունենում լուրջ տեխնիկական առաջընթաց։ Անշուշտ, Ն. Շավրովն այս ամենը ի նկատի առնելով է գրել, որ «Թուրքիայում մետաքսագործական արդյունաբերությունը պատկանում է ֆաբրիկային արդյունաբերության այն քիչ թիվ կազմող բնագավառներին, որոնք իրենց մակարդակով հասնում են եվրոպականին»[2]։

Այսպես կոչված թեթև արդյունաբերության բոլոր ճյուղերին զուգահեռ զարգանում էր նաև լեռնահանքային արդյունաբերությունը։ Այս բնագավառը, ի տարբերություն բանակին և պետությանը ենթակա արդյունաբերական ձեռնարկությունների, սկզբնական շրջանում պատկանելիս է եղել առանձին անհատների։ Պետական առանձնաշնորհումներով Գափըր Մադենի, Կապան Մադենի և մի շարք այլ վայրերի ընդերքում գտնվող հարստությունների արդյունահանումն ու մշակումը հանձնարարվում էին տեղական մեծահարուստներին։ Օրինակ՝ վերևում նշված հանքավայրերի պղնձի ու արծաթի հանույթը կատարվում էր Ակնի և Արաբկիրի հայ ամիրաների կապիտալով։ 1830—1850 թթ. Կապան Մադենը նշանավոր քաղաք էր, «բարգավաճ, արծաթի հանքերուն շնորհիվ, ուրկե մեծ քանակությամբ արծաթ կհանեին, Ակնա Արփիարյան հայ ամիրաներու տեսչությամբ և ղեկավարությամբ»[3]։

Գափըր Մադենի պղնձահանքերի հանքանյութը տեղափոխում էին տեղական ձուլարանները, որտեղ կատարվում էր նախնական մշակումը, և ապա 12—14 օրվա ճանապարհ անցնելով այն հասցվում էր Թոքատ՝ նորից զտվելու պետական ձուլարանում։ Սկզբնական շրջանում մաքուր պղնձի փոքր մասը վաճառվում էր տեղի պղնձագործներին, իսկ մեծ մասը արտա-

---

[1] «Բյուրակն», 1908, № 29, էջ 918։
[2] Шавров Н. И., указ. произв., стр. 239.
[3] Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը, էջ 659։

հանվում։ Մինչև ժամանակակից ճանապարհներ բացվելը, պղինձը տեղափոխում էին եղած միջոցներով, մասնավորապես ուղտերով, որոնք «ամիսներու դանդաղ քայլերով կհասցնեին եղեր Կ. Պոլիս և անկե Եվրոպա»[1]։ Մշակումը կատարվում էր ամենապարզունակ ձևով։ Ձուլարաններում օգտագործվում էր մերձակա անտառների փայտը, որի հետևանքով հանքերին շրջապատող լեռների անտառները 20—25 տարուց հետո իսպառ ոչնչացվեցին։ 1870-ական թթ. հանքերը դարձան անօգտագործելի՝ վառելիքի պակասության, աշխատուժի հոսունության, ճանապարհների բացակայության և այլ պատճառներով։ Սակայն դարավերջին, իշխանությունների ջանքերի շնորհիվ նրանք նորից սկսեցին գործել՝ տալով տարեկան 8—10 հազար տոննա պղինձ։ Բայց մշակման ձևերը մնացին պարզունակ, որի պատճառով Թուրքիայի մետաղագործությունը կորցնում էր «արծաթի՝ 32 %-ը, պղնձի՝ 12 %-ը և անագի՝ 40 %-ը։ Եվ քանի որ Փոքր Ասիայում արտադրվում էին մոտ 2 միլիոն կիլոգրամ զանազան տեսակի մետաղներ, ապա տարեկան ընդհանուր կորուստը հավասար է 400 հազ. կգ. մետաղի...»[2]։ Նման վիճակից դուրս գալուն չէր օգնում նաև պետական մարմինների ակտիվ միջամտությունը։ Հաճախ այն նույնիսկ ունենում էր բացասական ազդեցություն։ Ակադեմիկոս Վ. Գորդլևսկին գտնում է, որ այդ միջամտությունը տեղական աշխատողներին զրկում էր ամեն տեսակ նախաձեռնությունից։ Ուսումնասիրելով 1931 թ. Ստամբուլում հրատարակված «Թուրքիայի հանքերը օսմանյան դարաշրջանում» փաստաթղթերի ժողովածուն, նա եկել էր այն եզրակացության, որ պետական պաշտոնյաներին չափազանց լայն իրավունքներ էր տրվում միջամտելու տեղական, երբեմն առօրյա, գործերին։ Օրինակ, «դեֆտերդարը՝ ֆինանսական գերատեսչության ղեկավարը, իրավունք ուներ «որոշելու,— գրում է Վ. Գորդլևսկին,— իմաստ ունի՞ արդյոք մշակել հանքը և, որպեսզի թույլատրի, պահանջում էր հանքի նմուշներ, որոնք ուղարկում էր Ստամբուլի Թոփհանեն՝ ուսումնասիրելու համար»[3]։ Գործի բոլոր խնդիրները նրան վերաբերում էին և նա ամեն առիթ օգտագործում էր իր օգտին որևէ բան կորզելու։

---

[1] Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը, էջ 659։

[2] ЦГАВМФ, ф. 898, оп. 1, д. 6, л. 47—48.

[3] Гордлевский В. А., Избр. соч., т. III, стр. 232.

համար։ «Կենտրոնը խորամուխ էր լինում և մանրուքների մեջ, օրինակ, ինչպիսին են հանքի տեղափոխման պայմանները և արժեքը, իր տեղից մինչև մոտակա նավահանգիստը»[1],— գրում է Վ. Գորդլևսկին։ Բանը հասնում էր երբեմն այնտեղ, որ նույնիսկ «գյուղական ճանապարհին մի ինչ-որ կամրջի շինարարությունը պարտադիր էր ներկայացնել կենտրոնական իշխանության որոշմանը»[2]։ Կապիտալիզմի զարգացման ժամանակաշրջանում նման խնամակալության պատճառով երկրի տնտեսությանը հասցրած վնասները չափազանց մեծ էին։ Դրանք վկայող փաստերը բազմաթիվ են ու բազմապիսի։

Օսմանյան կայսրությունը հանքերով հարուստ երկիր էր։ Երկաթից, պղնձից, կապարից, ոսկուց ու արծաթից զատ երկրի ընդերքը պարունակում էր քրոմ, մագնեզիում, բորաքս, սնդիկ, ծծումբ, քարածուխ, նավթ, մարմար և այլն։ Այս բոլորն արդեն հայտնի էին առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին։ Նկարագրելով նշված և այլ բնական հարստությունները, Խանճյանը գրում է, որ դրանք «դժբախտաբար չեն շահագործվում մեծ մասամբ և... կրնային մեծագույն հասույթներեն մին ըլլալ»[3]։ Անշուշտ, պետությունը որոշ փորձեր կատարեց կարգավորելու բնական հարստությունների հետախուզումը և շահագործումը։ Սկսած 1860-ական թթ. մի շարք օրենքներ ընդունվեցին հողի, նրա ընդերքում գտնվող հարստությունների, անտառների և այլ բարիքների օգտագործման կարգի վերաբերյալ։ Այդ օրենքները ձևականորեն պաշտպանում էին կայսրության հպատակների իրավունքները և արտաքնապես ուղղված էին հօգուտ կապիտալիստական տարրերի զարգացման։ Ըստ այդ օրենքների հողի և ընդերքի մշակումը հանձնվում էր միայն թուրքահպատակներին։ Այդ բանը պետք է արտահայտվեր զանազան ընկերությունների և միավորումների կանոնադրության և այլ փաստաթղթերի մեջ։ Օրինակ, «Շիրքեթ-ու հայրիե» նավագնացության բաժնետիրական ընկերության կանոնադրության երկրորդ կետում շատ որոշակիորեն ասված է, որ «բաժնետոմսերը պետք է լինեն անվանական և պատկանեն միայն թուրքահպատակների... բացի օտարահպա-

[1] Гордлевский В. А., Избр. соч., т. III, стр. 232.

[2] «Вестник Европы», 1909, кн. 4, стр. 835.

[3] Խանճյան, *Աշխարհագրություն օսմանյան պետության*, էջ 191։

տակ այն այրիններից, որոնք մինչև ամուսնանալը թուրքահպատակ էին։ Կանոնագրության խստագույն պահանջներից մեկն այն էր, որ «Ճիրքեթ-ուլ հայրիեի» ոչ մի բաժնետոմս, չպետք է անցնի օտարահպատակների ձեռքը»[1]։ Սակայն իրականում այդ օրենքները շրջանցվում էին, հենց իշխանության ներկայացուցիչների գիտությամբ, որոնք սեփական շահն ապահովելուց հետո աչք էին փակում ամեն ինչի վրա։ Պաշտոնյաների դանցառումները շատ հաճախ կատարվում էին մեկ այլ օրենքի օգտագործմամբ։ Այսպես, օրինակ, մասնավոր հողատերն իրավականորեն համարվում էր նաև իր հողամասի ընդերքում եղած հարստությունների տերը։ Այնուհետև, հողային օրենքի կրճատ համակարգի 107 կետի համաձայն վակֆ և հասարակական օգտագործման ենթակա հողերի ընդերքի շահագործման իրավունքը տրվում էր այն անձնավորությանը, որը հայտնաբերել էր հանքը։ Այդ անձնավորությունը միայն պարտավոր էր հանքանյութի կամ նրա արժեքի մեկ հինգերորդը հանձնել պետությանը[2]։ Միաժամանակ մտցվել էր այնպիսի կարգ ըստ որի սեփականատերը կարող էր հանքը շահագործել կամ մշակման ձեռնարկություններ կառուցել միայն պետական գանձարկղի հատուկ թույլտվությամբ, որը հնարավոր էր համապատասխան վճար մուծելուց հետո։

Սկսած հատկապես 1880-ական թթ. հիշյալ օրենքների տրամադրած սողանցքերն օգտագործելով, հողի սեփականատիրոջը դարձնելով ընկերության կամ միավորման ղեկավար, օտար կապիտալը ներթափանցում էր երկրի արդյունաբերության մեջ։ Պետությունը փորձում էր իր ֆինանսական գործերը կարգավորելու նպատակով օգտվել կապիտալի ներհոսքից, բայց արդյունքի չէր հասնում։ Մասնավորապես, կոնցեսիայի իրավունք ձեռք բերելու համար սահմանվել էր 50—200 լիրա վճար։ Բացի դրանից, ամեն մի կոնցեսիոներ պարտավոր էր վճարել տարեկան 5-ական փարա* ամեն մի դյոնում շահագործվող հանքավայրերի հողատարածություններից և ընդհանուր եկամուտի 5 %-ը մուծել գանձարկղ, որպես հարկ[3]։

[1] ЦГВИА, ф. 401, оп. 1889, д. 3, л. 24—25.
[2] ЦГИАЛ, ф. 1405, оп. 77, д. 5876, л. 302.
* Լիրայի մեկ հարյուրերորդը։
[3] АВПР, Новый турецкий стол, д. 3701, л. 19.

Իսկ եթե հանքանյութը տեղադրված էր զանգվածներով, այսինքն՝ հեշտ էր նրա շահագործումը, այդ տոկոսը բարձրանում էր մինչև 16—20-ի[1]։ Այդքան ցածր հարկադրումը չէր կարող արգելք հանդիսանալ օտար կապիտալի ներկայացուցիչներին ընդլայնելու իրենց գործունեության ոլորտը։ Սկզբնական շրջանում նրանք ընկերություններին մասնակցում էին որպես հասարակ փայատերեր, խորհրդականներ կամ համագործակիցներ։ XIX դարի վերջերին արդեն նրանք հանդես էին գալիս որպես կոնցեսիայի ղեկավարներ, ձեռնարկության տերեր և այլն, իրենց ձեռքում կենտրոնացնելով հիմնական փայատերերի բոլոր իրավունքները։

Սակայն օտար կապիտալի մրցումը չկարողացավ կասեցնել արհեստների և արդյունաբերության զարգացումը։ Էնվեր Ջիա Կարալի հաշվումներով մեր դարասկզբին Թուրքիայում կային ավելի քան 1500 արդյունաբերական մեծ ու փոքր ձեռնարկություններ։ Դրանցից միայն 60-ը ունեին ժամանակակից տեխնիկական սարքավորում[2]։ Իսկ 1913 և 1915 թթ. արդյունաբերական հաշվառման ոչ լրիվ տվյալներով, որոնք ընդգըրկում էին Կ. Պոլիսը և արևմտյան մի շարք արդյունաբերական կենտրոններ, քիչ թե շատ խոշոր ձեռնարկությունների թիվը կազմում էր ընդամենը 269[3]։

Այսպիսով, մեր ուսումնասիրության ժամանակահատվածում Օսմանյան կայսրության առևտուրը, արհեստները և արդյունաբերությունն ընդհանուր առմամբ զարգանում էին կապիտալիստական ուղիով։ Այդ զարգացման ճշմարիտ բնութագիրն իր «Թուրքական հանրապետության տնտեսական պատմությունը» գրքում տվել է հայտնի թուրքագետ-տնտեսագետ Յու. Ռոզալիևը։ «Զարգացած կապիտալիստական երկրներից Թուրքիայի աճող կախվածությունը,— գրել է նա,— նրա կիսագաղութային վիճակը, ֆեոդալիզմի կայունությունը, որը պահպանվում էր օտար կապիտալի և քայքայվող սուլթանական կառավարության կողմից, հանդիսացան երկրի դանդաղ զարգացման, նրա հետամնացության գլխավոր պատճառները։ Չնայած ապրան-

---

[1] Տե՛ս «Вестник финансов...», 1906, № 23, стр. 405.

[2] Karal E. Z. Osmanli tarihi, c. VIII, s. 455.

[3] Տե՛ս Новичев А. Д., Экономика Турции в период мировой войны, էջ 51.

քաղաքական հարաբերությունների աճին, սոցիալ-տնտեսական առումով, Թուրքիայի էվոլյուցիան կարծես թե կանգ առավ. ստեղծված պայմաններում երկար ժամանակ երկրում տիրապետող կապիտալիզմի ցածր ձևերը չէին կարողանում վերաճել արտադրության ավելի զարգացած ձևերի»[1]։ Վերոհիշյալ ձևակերպումների հետ համաձայնվելով հանդերձ անհրաժեշտ է նշել, որ պատմականորեն ավելի ճիշտ կլիներ շեշտը դնել ներքին գործոնների վրա, պատշաճը մատուցելով նաև ոչ պակաս կարևորության ունեցող արտաքին ազդեցությանը։

---

[1] Розалиев Ю. Н., Экономическая история турецкой республики, М., 1980, стр. 10.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՈՒՂԻՆ

Օսմանյան կայսրությունում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ ձևավորվեցին նոր հասարակարգի երկու հիմնական դասակարգերը՝ պրոլետարիատը և բուրժուազիան։

Դրանց սկզբնավորումը, ընդհանուր գծերով, նման էր զարգացած երկրների նույն դասակարգերի գոյացման պրոցեսին։ Այստեղ ևս հողազուրկ և ընչազուրկ գյուղացիները, տնտեսապես քայքայված արհեստավորներն ու մանր վաճառականները, մի խոսքով, գլխավորապես մանրբուրժուական տարրերն էին բանվոր դասակարգի սնող աղբյուրները։ Բնականաբար, կայսրության բուրժուազիան ևս սերում էր տեղի հողատերերից ու կուլակներից, առևտրական բուրժուազիայից, ռազմաֆեոդալական պետական ապարատի պաշտոնյաներից։

ա. Նոր հասարակարգի դասակարգերի ձևավորման յուրահատկությունները

Նշված ընդհանրություններից ավելի բնորոշ էին այդ պրոցեսի առանձնահատկությունները և Թուրքիայի պայմաններից բխող յուրահատկությունները։ Նախ, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «միջնադարի հզոր մնացորդները... խիստ կասեցնում են հասարակական զարգացումը և պրոլետարիատի աճը»[1]։ Այդ մնացորդների ազդեցության հետևանքով չափազանց դանդաղ էր ընթանում նշված երկու դասակարգերի ձևավորման պրոցեսը։ Երբեմն թվում էր, թե հասարակական առաջընթացը Թուրքիայում ընդհանրապես կանգ է առել։ Սակայն իրականությունն այն էր, որ երկրի խոշոր կենտրոններում և ծովափնյա

[1] Լենին Վ. Ի., *Երկ., հ. 22, էջ 188։*

շրջաններում զարգացումն ընթանում էր արագ, իսկ երկրի ներքին մասերում այն համարյա աննշմարելի էր։ Հետևաբար, այստեղ ևս զարգացման չափազանց դանդաղ տեմպերն ու զգալի անհամաչափությունն օրինական երևույթներ էին և կազմում էին կայսրության ներքին կյանքի առաջընթացի առանձնահատկություններից մեկը։

Երկրորդ, կարևոր առանձնահատկությունը՝ այդ երկու դասակարգերի բազմազգ լինելն էր։ Տվյալ դեպքում, ազգային պատկանելությամբ պայմանավորված էր նաև հասարակական ակտիվությունը կամ արտադրության մեջ կատարած նրանց դերը։ Հանրահայտ է, որ թուրք, և ընդհանրապես, մահմեդական տարրերը, սկզբնական շրջանում, համարյա չէին մասնակցում բուրժուական կարգերի հաղթանակի համար մղվող պայքարին։ Այսպես, թուրք և մահմեդական բանվորները, գտնվելով զարգացման չափազանց ցածր մակարդակի վրա, որպես կանոն, օգտագործվում էին սև ու ծանր աշխատանքներում, իսկ նրանց այլազգի գործընկերները կատարում էին բարձրորակ աշխատանքներ։ Հետևաբար, արտադրողական ուժերի և հասարակական զարգացման մեջ վերջինները հանդես էին գալիս որպես առաջատարներ։

Բազմազգ էր նաև Օսմանյան կայսրության բուրժուազիան։ Նրա շարքերում մենք տեսնում ենք թուրքերի, արաբների, մահմեդականություն ընդունած սլավոնների, ավելի ուշ նաև ալբանացիների, քրդերի և մահմեդական այլ ժողովուրդների ներկայացուցիչների։ Բուրժուազիայի մեծագույն մասը, սակայն, մինչև անցյալ դարի վերջը քրիստոնյա ժողովուրդների՝ հույների, սլավոնների, հայերի, տեղաբնակ եվրոպացիների (լևանտինցիներ), ինչպես նաև հրեաների ներկայացուցիչներն էին։ Էթնիկական և կրոնական տարբերությունները զգալի, երբեմն էլ վճռական, ազդեցություն ունեին կայսրության բուրժուազիայի ազգային խմբերի տնտեսական ու քաղաքական դրության վրա։

Այստեղից էլ բխում է երկրի հասարակական առաջընթացի երրորդ կարևոր առանձնահատկությունը. մահմեդական ժողովուրդների թե բուրժուազիան և թե բանվոր դասակարգը իրենց քաղաքական, սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացման մակարդակով ետ էին մնացել կայսրության հպատակ այլադավան ժողովուրդներից։

Նշված առանձնահատկություններին դեռևս կանդրադառնանք։ Այժմ նշենք, որ դրանց առկայությունը բացատրվում է կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների տնտեսական կացութաձևերի տարբերությամբ, հասարակական արտադրության մեջ ունեցած մասնակցությամբ և թուրք զավթիչների դարեր շարունակվող քաղաքականությամբ։ Լինելով ֆեոդալ-խաշնարածների ու քոչվոր ցեղերի շահերի ներկայացուցիչ, թուրք վերնախավը շարունակեց զբաղվել գլխավորապես անասնապահությամբ և մասամբ՝ հողագործությամբ, արհեստներով ու առևտրով։

Հասարակական արտադրության հիմնական ծանրությունը, որով պայմանավորված էր երկրի արտադրողական ուժերի զարգացումը, թուրք կառավարիչները թողեցին հպատակ ժողովուրդներին։ Աշխատանքի նման բաժանումը գոյատևեց դարեր և տիրապետող ժողովրդի առաջադեմ ներկայացուցիչները տնտեսական բնագավառի ղեկավարության անհրաժեշտությունը ինչ-որ չափով զգացին միայն Թանզիմաթին հաջորդող շրջանում։

Օսմանյան կայսրության բուրժուազիայի պատմությանը նվիրված մենագրության[1] մեջ մենք եկել ենք այն եզրակացության, որ վերևում նկարագրած ժամանակաշրջանը կարելի է համարել բազմազգ օսմանյան բուրժուազիայի զարգացման առաջին փուլը:

Այդ փուլում կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ընթացել է առանց թուրքերի մասնակցության։ Ֆ. Էնգելսը 1853 թ. լույս տեսած «Թուրքական հարցը» խորագրով իր հոդվածում նշում է, որ թուրքերն իրենց նախնական քոչվորական վիճակում առևտրին մասնակցում էին «քարավանները թալանելով։ Այժմ, երբ նրանք դարձան քիչ ավելի քաղաքակիրթ, մասնակցությունը արտահայտվում է՝ հնարավոր կամայական ու հարկերի բռնի գանձման մեջ»[2]։ Այնուհետև, Ֆ. Էնգելսն ընդգծում է այն կարևոր պատմական իրողությունը, որ «հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիները, որոնք հաստատվել են ծովային խոշոր նավահանգիստներում, իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...»[3]։

---

[1] Инджикян О. Г., Буржуазия Османской империи, Ереван, 1977.

[2] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 9, стр. 25.

[3] Տե՛ս նույն տեղը։

Թանզիմաթից մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ընկած ժամանակաշրջանում շարունակվում էր օտար կապիտալի ներխուժումը երկիր, որի հետևանքով տեղական արդյունաբերությունը լուրջ վնասներ էր կրում։ Սակայն տևական անկում տեղի չունեցավ ո՛չ արտադրության և ոչ էլ առևտրի բնագավառներում։ Առևտուրը զգալիորեն ընդլայնեց իր ազդեցության ոլորտը երկրի ներսում, և նոր թափ ստացավ միջնորդ առևտուրը։ Այն հետզհետե ընդգրկեց նաև մահմեդական ժողովուրդների ներկայացուցիչներին և, մասնավորապես, թուրքերին։

Յ. Մըրմըրյանը ցույց է տալիս, որ անցյալ դարի 60-ական թթ. զգալիորեն աճեց արտասահմանի հետ կապեր հաստատած վաճառականների թիվը։ Դրանցից ամեն մեկի հետ գործակցում էին, միջին հաշվով, երկուական տեղական վաճառականներ։ Դրանց բոլորի գործունեությունը կենտրոնացած էր նավահանգիստներում և այլ մեծ բնակավայրերում՝ «մարդախիտ և շահընծա, կիսով չափ կանխավճարք և վստահելի հանձնակատարք՝ թուրք, հայ, հույն, հրեա, բուլղար, կյուրճի, չերքեզ, առնաուտ»[1]։ Սա մահմեդական և թուրք տարրերի, քիչ թե շատ մասսայական առևտրական գործունեության սկիզբն էր։ Իսկ երբ 1876 թ. ավարտվեց Բուլղարիայի ազատագրումը և օսմանյան պետության տնտեսական կյանքում զգալիորեն պակասեց սլավոնական բուրժուազիայի ազդեցությունը, սկսեց հետզհետե աճել նշված տարրերի մասնակցությունն առևտրի ու արդյունաբերության մեջ։ Դրան նպաստեց նաև կայսրության քաղաքների և գյուղատնտեսական մի շարք շրջանների ներգրավումը զարգացող ապրանքադրամային փոխհարաբերությունների մեջ։ Հիշյալ շրջանը կարելի է համարել կայսրության բուրժուազիայի զարգացման երկրորդ փուլը, երբ ամբարպնդվում են նրա ոչ մահմեդական ու մահմեդական խմբերի դիրքերը և նրանք ձգտում են ձեռք բերել նաև քաղաքական իրավունքներ։ Այդ փուլի արդյունք են Միդհատ փաշայի սահմանադրության հռչակումը, առաջին պառլամենտի գործունեությունը և կառավարության կողմից ազգային սահմանադրությունների հաստատումը։

[1] Մ(ըրմըրյան) Յ. Գ., *Թուրքահայոց հին վաճառականությունն և վաճառականք*, էջ 46։

XIX դարի 80-ական թթ. մինչև երիտթուրքերի հեղաշրջումը կայսրության բուրժուազիան ապրում է իր զարգացման երրորդ փուլը: Չնայած ֆեոդալական կարգերը շարունակեցին մնալ տիրապետող, բուրժուազիան, այնուամենայնիվ, կայունացրեց իր վիճակը։ Ընդունվում են մասնավոր սեփականության իրավունքներն ընդլայնող մի շարք օրենքներ, ավարտվում է երկաթուղիների, կապի ու հաղորդակցության այլ միջոցների շինարարության առաջին շրջանը, շատ թե քիչ բարելավվում են երկրի ներքին գավառների տնտեսական կապերը, արագանում է երկրի ներքին շուկայի ստեղծման պրոցեսը։ Մեծանում է նոր ձևավորվող թուրք և ընդհանրապես մահմեդական բուրժուազիայի տեսակարար կշիռը կայսրության տնտեսական կյանքում։ Հույն, հայ, հրեա բուրժուազիան որոշ բնագավառներում զիջում է իր դիրքերը։

Բազմազգ բուրժուազիայի զարգացման չորրորդ փուլն ընդգրկեց երիտթուրքերի հեղաշրջումից մինչև կայսրության անկումը տևող ժամանակահատվածը։ Չնայած քանակական զգալի աճին, թուրք ազգային բուրժուազիան ի վիճակի չեղավ տընտեսության բնագավառում տիրապետող դիրք գրավելու։ Սակայն զգալիորեն ուժեղացավ նրա ազդեցությունը կառավարության և երկրի քաղաքականության վրա։ Օգտագործելով այդ հզոր լծակն ու վերահաս պատերազմի պայմանները, նա սկսեց նեղել այլազգի իր մրցակիցներին ու նախապատրաստեց, ապա և գործադրեց ֆիզիկական ոչնչացման միջոցներ և հատկապես ցեղասպանությունը, որն առաջինը եղավ XX դարի համար։ Սակայն մինչև այդ, տնտեսության մեջ ձեռնարկված միջոցառումներն ու կենսագործվող տեղաշարժերը «չփոխեցին ընդհանուր պատկերը, և կայսրության տնտեսության մեջ առաջատար դերը, ինչպես նախկինում, պատկանում էր քրիստոնյա և հրեա բուրժուազիային»[1]։

Որոշակի տեղաշարժ էր կատարվում նաև բանվոր դասակարգի շարքերում։ Բազմաթիվ հետազոտողներ, տասնյակ տարիների նյութերն ուսումնասիրելով, արձանագրել են, որ «որակյալ բանվորների մեծագույն մասը» կազմում էր այլազ-

[1] Инджикян О. Г., Буржуазия Османской империи, стр. 144—145.

գի բանվորությունը[1]։ Որոշ հեղինակներ իրերի նման վիճակը փորձում են վերագրել սուբյեկտիվ հանգամանքների, որ իբր ձեռնարկատերերը և օտար կապիտալի ներկայացուցիչները լինելով քրիստոնյա, բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում դեպի քրիստոնյա բանվորները։ Բայց իրականությունն այն է, որ թուրք ժողովրդի զարգացման ցածր մակարդակը նախապայման էր թուրք բանվորների անկազմակերպվածության և ցածրորակ լինելու։ Բերենք մի քանի օրինակ։ Ա. Ալպոյաճյանը, տարբեր աղբյուրներից քաղելով, նկարագրում է Թոքատի պղնձաձուլարանի աշխատանքը, որտեղ ձուլած սալիկները «ջուրին մեջ ձգելով կպաղեցնեին և անոնց վրայի ավազը կմաքրեին, յուղով, աղով և նաշադիրով։ Այս աշխատանքը կկատարեին թուրքերը, իսկ անկե վերջ հայերն էին, որ պղինձը կգործածեին զանազան առարկաներու շինության համար»[2]։

Ամասիայի վերաբերյալ իր հուշագրության մեջ Գ. Սիմոնյանը թվարկելով բազմաթիվ արհեստներ ցույց է տալիս, որ թուրքերը գլխավորապես զբաղվում էին պայտառությամբ և ոռոգման համար տակառներով ջուր էին կրում[3]։ «Բյուզանդիոն» օրաթերթն անցյալ դարի վերջի իր համարներից մեկում նշում էր, որ Բուրսայի մետաքսի գործարաններում հիմնական «գործողները գլխավորապես հույն կանայք ենք»[4]։ Սակայն ավելի քան տասը տարի անց, նույն թերթն արձանագրում էր, որ Բուրսայի ջուլհակուհիների «կեսը հիմա իսլամ են, 70 %-ը եկած գյուղերից։ Հայերը և հույները թողնում են այդ ծանր աշխատանքը և իրենց գիտելիքները օգտագործում են այլ տեղ»[5]։ Այսպիսի տեղաշարժերը բնորոշ են արդյունաբերության բոլոր բնագավառներում։

Կայսրության բանվոր դասակարգը սկսել էր ձևավորվել անցյալ դարի երկրորդ կեսին։ Այդ բանի խթան հանդիսացավ հատկապես երկաթուղիների շինարարության համար բանվորական ուժի անհրաժեշտությունը։ 1860—70-ական թթ. հիմ-

---

1 Ученые записки ЛГУ, 1962, вып. 14, стр. 7.

2 Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1276։

3 Տե՛ս Սիմոնյան Գ. Յ., Հուշամատյան Պոնտական Ամասիո, էջ 636, 638։

5 «Բյուզանդիոն», 18/30. 04. 1898։

4 Նույն տեղը, 13. 09. 1909։

նըվեցին նաև մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ։ Բայց մինչև այդ շահագործվող բոլոր հանքերում, ռազմական ձեռնարկություններում և պետական գործարաններում աշխատանքները կատարվում էին բռնի ուժով հավաքագրված բանվորների միջոցով։ Բանվոր դասակարգի սկզբնավորման շրջանի պայմաններն իրենց ծանր կնիքն էին դրել հավաքագրվածների վրա։ Ինչպես նշում է Վ. Գորդլևսկին, ամենուր «բնակիչներն ատում էին հանքերը։ ... Ով կարող էր փողով ազատագրվում էր և փախչում այդ սարսափելի դժոխքից»[1]։

Էրեգլիի և Զոնգուլդաղի հանքերի շահագործման սկզբնական շրջանում ածխահատներ հավաքագրում էին նույնպես բռնությամբ՝ շրջակա գյուղերից։ Հանքերի շահագործումը կարգավորելու նպատակով 1863 թ. մշակվում է հատուկ կանոնադրություն, որի երրորդ գլուխը նվիրված էր բանվորներ հավաքելու և աշխատեցնելու ձևերին ու միջոցներին։ Համաձայն այդ կանոնադրության, «Կաստամոնիի վիլայեթի 14 կազաների գյուղացիներին ստիպում էին աշխատել 15 օր արտում և 15 օր հանքում»[2]։ Նշվում էր նաև, որ բանվորներին չէին տրամադրում ապրելու նվազագույն պայմաններ։ Ստեղծված դրության հետևանքով, գրում է այնուհետև Հ. Ավնին, բանվորները տեղափոխվում էին մի տեղից մյուսը և հնարավորություն չէին ունենում մնալու «նույն գործի մեջ և դառնալու մասնագետ բանվորներ»[3]։ Անվճար ու պարտադիր աշխատանքների մասին են գրել անգլիացի ճանապարհորդներ Համիլտոնները, որոնք 1835—1836 թթ. այցելել են Թոգատ, Արղնա Մադենի և Կապան Մադենի պղնձահանքերը։ Օգտագործելով իրենց իրավունքները, տեղական իշխանությունները, որպես անգարիա՝ տարապարհակ աշխատանք, գյուղացիներին ստիպում էին «պղինձը գյուղեգյուղ փոխադրել, առանց որևէ վարձք ստանալու»[4]։ Բացի այդ, նշում են հեղինակները, «այն գյուղերը, ուր ածուխը (ձուլարանի մեջ վառելու համար— Հ. Ի.) և աշխատանքը ձրի կհայթայթեն, ընդհանրապես՝ զերծ են պետական տուրքերն, բայց այս պարհակությունը զիրենք զերծ չի կացուցաներ ար-

---

[1] Гордлевский В. А., Избр. соч., т. III, стр. 258.

[2] Avni Hüseyin. Bir yarım müstemleke oluş tarihi, s. 47.

[3] Նույն տեղը, էջ 60։

[4] Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1272։

տակարգ տուրքերեն կամ փաշայի մը քմահաճ կեղեքումներեն»[1]։ Բանվորների վիճակը ծանր էր նաև մասնավոր սեփականատերերի ձեռնարկություններում, արհեստանոցներում և մանր ու մասնավոր աշխատանքներ կատարողների մոտ։ Չնայած նկարագրված պայմաններին, անցյալ դարի կեսերին դեռևս չկար դասակարգային միասնություն և կազմակերպվածություն, կային միայն առանձին բանվորական խմբեր։ Կուրտհան Ֆիշեկը խոսում է, իբր դրանից առաջ գոյություն ունեցած կազմակերպված բանվորական շարժման մասին, հենվելով 1845 թ. հրատարակված օսմանյան մի հրահանգի վրա։ Այդ հրահանգի մեջ խոսվում է «բանվորների կազմակերպությունները ու ընկերությունները փակելու միջոցով ապստամբությունները կանխելու անհրաժեշտության մասին...» և պատժելու «այն որակյալ բանվորներին ու աշխատավորներին, որոնք գաղտնի կերպով պատրաստվում են թողնել իրենց բանվորական տեղերը»[2]։ Հակառակ այս մեջբերումին, Կ. Ֆիշեկը իր գրքում ցույց է տալիս, որ բանվորական ելույթներն սկսվել են միայն անցյալ դարի 60-ական թթ. հետո։ Նրա տվյալներով 1872—1906 թթ. երկրում տեղի են ունեցել քսանհինգ գործադուլներ։ Իսկ 1909—1914 թթ., այսինքն՝ հինգ տարում, նրանց թիվը հասել է 22-ի[3]։ Անշուշտ, տպագրված ցուցակները չեն կարող լրիվ համարվել, քանի որ դրանք արտահայտում են մայրաքաղաքում և մի քանի խոշոր կենտրոններում տեղի ունեցած դեպքերը։ Մինչդեռ նման երևույթներ կային նաև գավառական կենտրոններում։ 1879 թ. ամռանը Արաբկիր այցելած Գ. Սրվանձտյանցը գրում էր, որ այնտեղ կար մանուսա գործող 1600 հոր (հաստոց)։ «Իմ հոն եղած օրերը,— շարունակում է նա,— բանթողս (գործադուլ) ըրած էին, իրենց օրականը թղթադրամով վճարելուն առթիվ։ Գործատերեր՝ որ վաճառականներն են, մեծ հուզմունքի մեջ էին, գործողներ երդմամբ կապված էին իրարու մինչև իրենց գինը տրվեր...»[4]։ Արժեզրկված թղթադրամներով (կաիմե) աշխատավարձ վճարել նշանակում էր ուղղակիորեն աշխատավարձը իջեցնել։ Դրա հետ, ինչպես

---

[1] Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1272—1273։

[2] Fisek, Kurthan Türkiye'de kapitalizmin gelişmesi ve işçi sınıfı. Ankara, 1969, s. 43.

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 43 և 53։

[4] Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. 2, էջ 295։

տեսնում ենք, համաձայն չէին Արաբկիրի ջուլհակները։ Այդ նույն ժամանակ գործադուլներ արձանագրված էին Մերզիֆոնում, Թոգատում, Բուրսայում և այլուր։

Կայսրության բանվորների մեծագույն մասը աշխատում էր փոքր ձեռնարկություններում։ Նրանք պայքարի էին դուրս գալիս հաճախ իրարից անջատ, առաջադրելով գլխավորապես տնտեսական պահանջներ։ Միասնությանը խանգարում էին բանվորական առանձին խմբերի (որակյալ և ցածրորակ) աշխատավարձերի տարբերությունը, որը, ինչպես նշվեց, համընկնում էր նրանց դավանանքի և ազգային պատկանելության հետ։ Ուրիշ խոսքով, թուրք և մահմեդական բանվորները ավելի քիչ էին ստանում, քան եվրոպացի, հույն, հայ, հրեա բանվորները։ Պրոլետարիատի շարքերի «ազգային անջատվածությունը,— գրում է Ռ. Կոռնիենկոն,— ցեխային սովորույթների և իսլամի դոգմաների ուժեղ ազդեցությունը բանվոր դասակարգի վրա բացասական անդրադարձան պրոլետարիատի համախմբման, նրա դասակարգային գիտակցության ձևավորման և բանվորական շարժման զարգացման բնույթի վրա»[1]։

Դրան անհրաժեշտ է ավելացնել, որ երկրում, փաստորեն մինչև կայսրության անկումը, չկար բանվորական օրենսդրություն։ Աշխատաժամերի և աշխատավարձի չափը կախված էր միայն ձեռնարկատերերի կամքից։ Արտադրության մեջ կանանց և երեխաների մասնակցությունը չափազանց մեծ էր, հետևապես, շահագործումը անողոք ու դաժան, որը բնորոշ է հատկապես կապիտալիզմի զարգացման ցածր աստիճանի ժամանակաշրջանի համար։ «Մշակի» թղթակիցը, դեռևս XX դարի սկզբին գրում էր. «Վանում ամեն մի վարպետ իր կարողության համեմատ ունի 1—8 աշակերտ, բայց միայն առաջնակարգ, մատի վրա համրվող վարպետներ կարող են պահել 8—9 աշակերտ։ Միջակ դասու վարպետները 4—5 հատ որ պահեն դեռ շատ է»[2]։ Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այստեղ խոսքը ոչ թե բանվորների, այլ միայն աշակերտների մասին է, որոնք թերթի տվյալներով 10—20 տարեկան էին։ Իսկ գորգի, մետաքսի, տեքստիլ և մի շարք այլ արտադրություննե-

[1] Корниенко Р. П., Рабочее движение в Турции 1918—1963 гг., М., 1965, стр. 10.

[2] «Մշակ», 03. 11. 1907։

րի մեջ հիմնական աշխատուժը կանայք ու երեխաներն էին, որոնց մեջ նախապատվությունը տրվում էր 6—7 տարեկան աղջիկներին։

Նույն վիճակում էին գտնվում նաև Թուրքիայի եվրոպական մասի բանվոր-բանվորուհիները։

Դիմիտրիադիի մետաքսաթելի մանարանի 160 բանվորների մեծ մասը 7—12 տարեկան երեխաներ էին։ Աշխատանքային օրը տևում էր մինչև 16 ժամ և նրանք օրական ստանում էին մեկական դուրուշ[1]։

Սեբաստիայից ստացված հոդվածում «Բյուրակնը» ևս հաստատում է կանանց ու երեխաների լայն շահագործման փաստը։ Գորգ արտադրող «կանոնավոր գործարանները,— գրում է հեղինակը,— ամեն թաղերուն մեջ հատուկ աշխատանոցներ ունեն։ Գործավորուհիները 8—20 տարեկան աղջիկներ են... Մեկ տեզգյահի վրա մեկ վարպետ և 2—7 աշակերտուհի կաշխատի»[2]։ Արհեստանոցներում չէին պահպանվում աշխատանքի պաշտպանության կամ կենսական անհրաժեշտություն ունեցող սանիտարական անգամ ամենապարզ պայմանները։ Հետևանքը լինում էր այն, որ «մեկ-երկու տարվան աշխատությունեն ետքը, գործավորուհին իր սեփական գունատ, դեղնած, թուլացած դեմքով շուտ կճանչցվի գործատուներուն մեջ»[3]։ Աննորմալ աշխատանքային պայմանները չէին միայն, որ այդպիսի վիճակի էին հասցնում բանվորներին, հատկապես կանանց ու երեխաներին։ Բուրսայի շերամագործների հաճախ կրկնվող գործադուլների ընթացքում մշակվել էին ձեռնարկատերերին և իշխանություններին ներկայացվող պահանջները։ Այդ պահանջների մեջ նաև նշվում էին՝ ծեծի, կոպտությունների և գիշերային աշխատանքի իսպառ վերացման անհրաժեշտությունը։ Թերթում զետեղված փաստաթուղթն ավարտվում էր հետևյալ պահանջով. «Բարձրացում մեր օրավարձին օրենքով։ Այս կխնդրենք մենք Պուրսայի 5 հազարեն ավելի թուրք, հայ, հույն և հրեա բանվորուհիներս»[4]։ Փաստերը ցույց են տալիս, որ դասակար-

---

[1] Velikov Stefan, Sur le mouvement ouvrier et sosialiste en Turquie après la revolution Jeune-turque de 1908. Etudes Balkaniques 1934, № 1, p. 40.

[2] «Բյուրակն», 1907, № 52, էջ 1846։

[3] «Բյուզանդիոն», 13.09.1909։

[4] Նույն տեղը, 5.03.1910։

գային միությունների, միասնական ելույթներ կազմակերպելու փորձեր եղել են հաճախ։ Սակայն քանակը որակի չի վերածվել, քանի որ դրան խանգարում էին հասարակական կարգը, երկրի օրենքները, իսլամն ու շարիաթը, դավանանքի ու ազգի տարբերությունները։ Իսկ դժվարությամբ ստեղծված կազմակերպությունները ի հայտ գալուց հետո ոստիկանության և զորքի օգնությամբ ցրվում էին։ Օրինակ, «Օսմանյան բանվորների ընկերությունը» կազմակերպվեց 1895 թ. և երկրի այդ առաջին բանվորական կազմակերպությունը ջախջախվեց արդեն հաջորդ տարին[1]։ Բանվոր դասակարգի քաղաքական ու իրավական ծանր դրությանը միանգամայն համապատասխանում էր նրա նյութական ու տնտեսական վիճակը։ Աշխատավարձը չափազանց ցածր էր, իսկ սննդամթերքի և կենսական անհրաժեշտության՝ հագուստեղենի, տնական իրերի և այլ ապրանքների գները անընդհատ բարձրանում էին։ Այսպես, համեմատած 1850—1860-ական թթ. հետ, դարասկզբին 75 կգ. մեկ պարկ ալյուրի գինը բարձրացել էր 65-ից 102 ղուրուշի, ցորենինը՝ 10—12 ղուրուշով, լոբեղենինը՝ ավելի քան երկու անգամ, համարյա նույնքան աճել էին մրգերի գները։ Աշխատավորության կենսամակարդակի վրա լրջորեն ազդում էին խոշոր կենտրոնների, որտեղ զանգվածաբար ապրում էին բանվորները, և ներքին շրջանների միջև եղած սննդամթերքների գների տարբերությունները։ Նշված հանգամանքի լրջությունը կդառնա ավելի քան ակնառու, եթե նկատի առնենք, որ «Կոստանդնուպոլսում կենտրոնացված էր գործարանների 53,7 %-ը, Զմյուռնիայում՝ 22,3 %-ը, իսկ մնացած 24 %-ը սփռված էր ողջ Թուրքիայով մեկ»[2]։ Մամուլի տվյալների համաձայն կարագի օխան (1,2 կգ.) Երզնկայում արժեր 6 ղուրուշ, իսկ Պոլսում՝ 1 կգ-ը վաճառվում էր 20—25 ղուրուշով։ Նույն քաղաքներում գների տարբերությունները կազմում էին՝ յուղինը՝ 5—6 և 10—12 ղուրուշ, պանրինը՝ 3—4 և 7—8 ղուրուշ, ձվինը՝ հատը 3—4 և 10—12 փարա և այլն[3]։

Դարասկզբին, համաձայն Ն. Տաղավարյանի տվյալների,

---

[1] Տե՛ս «Народы Азии и Африки», 1964, № 1, стр. 100.

[2] Ղազարյան Հայկ, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը, էջ 318։

[3] Տե՛ս «Բյուզանդիոն», 3.12.1896։

Սեբաստիայում և գավառական մյուս կենտրոններում տարբերությունները շարունակում էին աճել։ Օրինակ, տավարի մսի օխան գավառներում արժեր մոտ 1,5 ղուրուշ, Պոլսում՝ 5—8 ղուրուշ, ոչխարինը՝ համապատասխանաբար 2—2,5 և 6—12 ղուրուշ[1]։ 1890-ական թթ. կեսերին սննդամթերքների միջին գները ըստ Դ. Պուտյատայի ունեին հետևյալ պատկերը. հացն արժեր օխան 2—3 ղուրուշ, ալյուրը՝ 2,5, կարտոֆիլը՝ 2—3, բրինձը՝ մոտ 4, շաքարը՝ 6—7, հավը՝ 3—4,5, կաթի 3 լիտրը՝ 3,5—4,5, ծխախոտի օխան՝ 36—40 ղուրուշ և այլն[2]։

Համեմատելով նշված թվերը և աշխատավարձի ցուցանիշները, հեշտությամբ կարելի է համոզվել վերևում բերված եզրակացության մեջ։ Ամենաբարձր աշխատավարձ ստանում էին հանքափոր և ձուլող բանվորները՝ օրական 18—20 ղուրուշ։ Վարպետ գործագործները, ջուլհակները, հսկիչները և կառավարիչները ստանում էին ըստ շրջանների 5—12 ղուրուշ։ Կանանց մեջ բարձր վարձ էր տրվում նոր մասնագիտություններ յուրացրած վարպետներին։ Այսպես, Բուրսայում, միկրոսկոպի օգնությամբ բոժոժի կոկոնների որակը սահմանող աշխատակցուհիներին վճարում էին 10—18 ղուրուշ[3], մինչդեռ, գործագործ կանայք և ջուլհակուհիները ստանում էին 3—8 ղուրուշ։ Գոյություն ունեցող որոշ տարբերություններ կապված էին առանձին շրջանների, ինչպես նաև տվյալ աշխատանքի արդյունքների պահանջմունքի, արհեստների կարևորության և աշխատուժի առաջարկի հետ։ Նույն Դ. Պուտյատայի տվյալներով Խարբերդում հյուսնը օրական ստանում էր 8—20 ղուրուշ, մետաքսաթելի արհեստանոցների բանվորները՝ 12—25, քարտաշը՝ 10—20, գյուղատնտեսության մեջ վարձու բանվորը՝ 3—5 ղուրուշ[4]։ Իսկ Ադանայում, 1880-ական թթ. հացթուխը օրական վաստակում էր 3,5—6 ղուրուշ, փականագործը՝ 2—5, աղյուսագործը՝ 10—12, գյուղատնտեսական բանվորը՝ 4—8, խանութի վաճառողը՝ 1—2,5 ղուրուշ և այլն[5]։ Հետաքրքրականն այն է, որ միջին աշխատավարձի ցածր մակարդակը երկրում

[1] Տոքտ. Տաղավարյան Ն., Երկրագործություն, անտառաց և հանքաց շահագործումն, էջ 8։

[2] Путята Д. В., Записка о Малой Азии..., стр. 137—138.

[3] Տե՛ս «Вестник финансов...», 1901, № 35, стр. 373.

[4] Տե՛ս Путята Д. В.. Записка о Малой Азии..., էջ 106.

[5] Տե՛ս նույն տեղը։

ազդում էր գրասենյակային աշխատողների (օրական 5—18 ղուրուշ) և նույնիսկ նոր մասնագիտությունների ներկայացուցիչների (մեխանիկը՝ 7—10 ղուրուշ) վարձատրության վրա։ Իսկ աշխատանքների մասսայական, տարածված ձևերի ոլորտում զբաղված բանվորների օրական միջին աշխատավարձը հավասար էր 2—4 և ամենացածրը՝ 1,5—2 ղուրուշի[1]։

Բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական վիճակը Թուրքիայի ռազմաֆեոդալական ռեժիմի և իսլամի հզոր ազդեցության պայմաններում նրան դարձրել էր համեմատաբար ավելի պասիվ, քան այլ երկրներում։ Նույնիսկ երիտթուրքերի շարժումը և նրանց հաղթանակը բանվորներին ակտիվացնելու գործին քիչ նպաստեցին։

Վ. Ի. Լենինը բնութագրելով մեր դարասկզբի պորտուգալական և թուրքական հեղափոխությունները, գտնում էր, որ նրանցից ոչ մեկը ժողովրդական համարել չի կարելի, քանի որ ժողովրդի «հսկայական մեծամասնությունը, ինքնուրույն, իրենց սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով» հանդես չի գալիս[2]։ Վ. Ի. Լենինի զինակիցներից Բ. Կնունյանցը այդ դեպքերին նվիրված հատուկ հոդվածում ևս ընդգծում էր ժողովրդական զանգվածների ակտիվության բացակայությունը երիտթուրքերի հեղափոխության տարիներին։ Պատճառն այն է, գրում էր Բ. Կնունյանցը, որ Թուրքիայում «կապիտալիզմը դեռ նոր է բացում իր առաջին արահետները...։ Պետական կարգը տիպիկ ասիական բռնապետություն է...»[3]։ Այս ամենի հետևանքով ժողովրդական լայն մասսաները ոչ մի լուրջ պահանջ չեն առաջադրում։ Բ. Կնունյանցը գտնում էր, որ կատարված տեղաշարժերը կխորացնեն դասակարգային հակասությունները, ավելի որոշակի կդարձնեն պայքարի նպատակը։ Եվ այն ժամանակ «ազգի ամիասնությունը» կփոխարինվի դասակարգային պայքարով, կկրկնվի եվրոպական և մեզ՝ ռուսաստանցիներիս, լավ ծանոթ պատկերը»[4]։ Ընդհանուր առմամբ օրինաչափ ու կյանքին մոտ այս կանխատեսումը, դժբախտաբար, իրականացավ շատ քիչ չափերով՝ հենց Թուր—

---

[1] Տե՛ս «Մուրճ», 1909, № 9, էջ 27։
[2] Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 33, էջ 39։
[3] Կնունյանց Բոգդան, Ընտիր երկեր, էջ 542։
[4] Նույն տեղը, էջ 543։

քիայի պայմանների, արդեն նշված առանձնահատկությունների հետևանքով։ Այնուամենայնիվ, երկրի քաղաքական կյանքի վրա երիտթուրքերի հեղափոխության ազդեցությունը որոշակիորեն դրական էր։ Ֆուադ Թյոքինի տվյալներով, մինչև համաշխարհային պատերազմը Թուրքիայում կազմակերպվեցին մոտ երկու տասնյակ ինքնուրույն կուսակցություններ ու կազմակերպություններ իրենց բաժանմունքներով և երիտթուրքերին հարող խմբակներ[1]։ Բայց դրանք բոլորն էլ վերին խավերի շահերը ներկայացնող և այդ խավերի պայքարի արդյունքը հանդիսացող միավորումներ էին։ Համաձայն Թյոքինի գնահատականի, դրանք «որպես կանոն ձգտում էին վերականգնել Օսմանյան կայսրությունը»[2]։

Սահմանադրական միապետության կողմնակիցներ էին ոչ միայն թուրքական ազգային կուսակցություններն ու կազմակերպությունները, այլև այլազգի մի շարք միություններ։

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ բանվորական, թեկուզև թույլ, շարժումները հող պատրաստեցին դասակարգային, առաջին հերթին, արհմիութենական կազմակերպությունների ձևավորման համար։

Նորաստեղծ բանվորական որոշ արհմիություններ հաջողությամբ ղեկավարում էին աճող գործադուլային շարժումը։ Դրանցից էին ծխախոտագործների միությունը, որն ուներ չորս բաժանմունք՝ երկուսը Սալոնիկում, մեկական Գեվգելիում և Կուկեսում։ Այդ արհմիության շարքերում կային մոտ 3200 անդամներ, որոնցից 2000-ը՝ հրեա, ավելի քան 500-ը հույն, մոտ 400-ը՝ թուրք և ավելի քան 200-ը՝ բուլղար էին[3]։

Բանվորական շարժման հիմնական կենտրոնը մինչև կայսրության անկումը Թուրքիայի եվրոպական մասն էր։ Այն ղեկավարում էին գլխավորապես Դ. Բլագոևի հիմնած բուլղարական ձախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներ Ն. Ռուսեը, Վ. Գլավինովը և ուրիշներ։

«Այն ժամանակ,— գրում է Ս. Վելիկովը,— երբ Սալոնիկում, Սկոպլեում, Վելեսում, Ադրիանապոլսում և Մակեդո-

---

[1] Տե՛ս Tökin F. H., Türkiye'de siyasi partiler ve siyasi duşuncenin gelişmesi, 1893—1965, Ist. 1965, ss. 31—52.

[2] Նույն տեղը, էջ 42։

[3] Տե՛ս Վելիկով Ս., նշվ. աշխ., էջ 31։

նիայի ու Թրակիայի մյուս քաղաքներում առաջնակարգ դեր էին խաղում բուլղար ձախ սոցիալիստները, Կ. Պոլսի, Զմյուռնիայի և Թուրքիայի այլ քաղաքների բանվորական շարժումը գլխավորում էր թուրքերի, հույների, հայերի և բուլղարների միացյալ կազմակերպությունը։ Հեղինակի տվյալներով այդ կազմակերպության ղեկավարության 11 անդամից չորսը հույն էր, երկուսը՝ թուրք, մյուս երկուսը՝ հայ, երկուսը՝ բուլղար և մեկը հրեա[1]։ Բանվորական ու դեմոկրատական շարժման ինտերնացիոնալ բնույթի պերճախոս փաստերն են կազմակերպությունների ստեղծմանը զուգահեռ թերթերի և այլ պարբերականների հրատարակումը։ Բուրժուական կուսակցությունների ու միությունների օրգանների և նրանց տպաքանակի ավելացմանը համընթաց վերականգնվեց շատ հայկական, հունական, արաբական պարբերականների հրատարակությունը։ «Իզմիրում,— գրում է Վ. Շպիլկովան,— թուրքերեն լեզվով սկսեց հրատարակվել առաջին սոցիալիստական «Իրշադ» («Խրատ») թերթը..., Սալոնիկում՝ «Արշալույս սահմանադրության» ձախ սոցիալ-դեմոկրատների օրգանը և «Միություն» թերթը միավորվեցին և սկսեց հրատարակվել «Նարոդնա վոլյա» լրագիրը... Իզմիրում լույս տեսավ «Քյոյլու» («Գյուղացի») թերթը, որը գյուղական բնակիչներին բաժանում էին ձրի»[2]։

Կարևոր է նշել հայ սոցիալիստների դերը Օսմանյան կայսրության բանվորական շարժման մեջ։ Այն զգալի է եղել, մանավորապես, երիտթուրքերի հեղաշրջումից հետո։ «Արդեն 70-ական թվականներից,— գրում է Վ. Ավետիսյանը,— հայկական պարբերական մամուլում («Մշակ», «Մեղու Հայաստանի», «Փորձ», «Արձագանք», «Արևելյան մամուլ» և այլն) երևան են գալիս եվրոպական սոցիալիստական շարժումները լուսաբանող առանձին հոդվածներ։ Պարբերականներում, որոնց զգալի մասը լույս էր տեսնում կայսրության տարածքում, մեկնաբանվել են Առաջին ինտերնացիոնալի և Փարիզյան կոմունայի գործունեությունը, բանվորական հարցը և այլն։ Հեղինակը նշել է արևմտահայ թերթերի և հատկապես «Արևելյան մամուլի» ու նրա խմբագիր Մ. Մամուրյանի կատարած աշ-

---

[1] Վելիկով Ս., նշվ. աշխ., էջ 39։

[2] Шпилькова В. Н., Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977, стр. 170.

խատանքը հանուն սոցիալիստական գաղափարների պրոպագանդման[1]։

Մատերիալիստ-աթեիստ Գալուստ Կոստանդյանի՝ 1878 թ. Զմյուռնիայում լույս տեսած «Մեթոդի վրա» նշանավոր աշխատության էջերում «XIX դարի պարծանքների» շարքում հիշատակված են Կ. Մարքսը և նրա «Կապիտալը»։ Նման կարգի կարևորագույն փաստերից մեկն է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» թարգմանությունը հայերեն՝ 1887 թ.։ Այդ թարգմանության տպագրության փորձերին Ֆ. Էնգելսը անդրադարձել է «Մանիֆեստի» 1888 թ. անգլերեն և 1890 թ.՝ գերմաներեն հրատարակությունների առաջաբաններում։ Վերջինիս մեջ նա գրել էր. «Որպես կուրյոզ, հիշատակեմ նաև, որ 1887 թ. Կոստանդնուպոլսի մի հրատարակչի առաջարկված էր «Մանիֆեստի» հայերեն թարգմանության ձեռագիրը, սակայն այդ բարի մարդը քաջություն չի ունեցել տպագրելու Մարքսի անունը կրող գործը, և ավելի հարմար էր համարել, որ թարգմանիչն իրեն անվանի այդ գործի հեղինակը, որին սակայն թարգմանիչը չի համաձայնվել»[2]։

Մարքսիստական գաղափարների տարածման գործում, այլ կուսակցությունների կողքին, անցյալ դարի վերջին զգալի աշխատանք են կատարել հնչակյանները։ Միայն 1893 թ. նրանք Աթենքում հրատարակել են Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» երկի մի մասը, Պ. Լաֆարգի և Ֆ. Լասսալի գործերը։ «1894 թ. հունիսից,— գրում է այնուհետև Վ. Ավետիսյանը,— նրանք Աթենքում սկսեցին հրատարակել «Գաղափար» եռամսյա հանդեսը, որը անվանեցին «Հանդես գիտական սոցիալիզմի»»[3]։ Այդ հանդեսի էջերում էլ առաջին անգամ հայերեն հրատարակվեց «Մանիֆեստի» մի մասը։ Հնչակյաններն իրենց տեղական կազմակերպությունները հիմնեցին Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում, «1910 թ. Կ. Պոլսում,— գրում է Մ. Արզումանյանը,— հնչակյանները ստեղծեցին իրենց «սոցիալ-դեմոկրատական ուսանողների միությու-

---

[1] Տե՛ս Ավետիսյան Վ. Ա., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Եր., 1976, էջ 223։

[2] Մարքս Կ. և Էնգելս Ֆ., Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Եր., 1952, էջ 25։

[3] Ավետիսյան Վ. Ա., նշվ. աշխատ., էջ 239։

նըս», որն իր ուժերի չափով և իր ձևով ծավալում էր սոցիալիզմի գաղափարների պրոպագանդան։ Այդ միության հրատարակած «Կայծ» ամսագիրը (1911—14 թթ.) շոշափում էր սոցիալիստական մտքի ու շարժման մի շարք կարևորագույն հարցեր։ Ընդ որում, միությունը այս կամ այն չափով կրում էր Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը»[1]։

Այսպիսով, Օսմանյան կայսրության տարածքում և նրա հարևան երկրներում (մասնավորապես Բալկաններում և Կովկասում) գիտական կոմունիզմի գաղափարները պրոպագանդվում էին գլխավորապես բուլղար, հույն, հրեա և հայ սոցիալիստների, ինչպես նաև հայ առաջադեմ գործիչների կողմից։

Հայ հեղափոխականներն զգալի ակտիվություն էին ցուցաբերում սոցիալիստների պրակտիկ գործունեության տարբեր ոլորտներում։ Երբ ռուսական 1905—1907 թթ. հեղափոխության ազդեցության հետևանքով ընդլայնվեցին գործադուլային շարժումները, հայ բանվորներն ու հեղափոխական գործիչներն ընթանում էին դրանց առաջին շարքերում։ Նրանք հաճախ կայսրության տարածքում գործող սոցիալիստական, արհմիութենական և այլ դեմոկրատական կազմակերպությունների են ներկայացրել միջազգային հավաքույթներում և մասնավորապես Երկրորդ ինտերնացիոնալի կոնգրեսներում։ Որպես օրինակ, բերենք Շտուտգարտի՝ 7-րդ կոնգրեսին ազգային սեկցիաների մասնակցելու հարցը։ Կոնգրեսի աշխատանքներն սկսվելուց առաջ՝ 1907 թ. օգոստոսին, միջազգային սոցիալիստական բյուրոն որոշում է ըստ կուսակցությունների նշանակության և բանվորական շարժման մակարդակի ազգային պատվիրակություններին կամ սեկցիաներին տրամադրել վճռական ձայների որոշակի քանակ։ Որոշված տասը բաժանումների մեջ «Թուրքիայի ներկայացուցիչներին տրվել էր հինգ ձայն»[2], կամ նրանք ընդգրկվել էին ութերորդ խմբի մեջ։ Վ. Ի. Լենինի՝ «Միջազգային սոցիալիստական բյուրոյի նիստը» հատուկ հոդվածում նշվում է այն փաստը, որ կոնգրեսի աշխատանքների ընթացքում և նրանից հետո էլ թուրքական սեկցիան դեռևս չէր ձևավորվել։ Երևի այդ պատճառով էր, որ բյուրոյի նիստը (1908 թ. հոկտեմ-

---

[1] Արզումանյան Մ. Վ., Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ., Եր., 1959, էջ 228—229։

[2] «История Второго Интернационала», т. II, М., 1966, стр. 201.

բերին), ինչպես գրում է Վ. Ի. Լենինը, ընդունեց «նաև Թուրքական սեկցիայի հայկական ենթասեկցիան ավելի շուտ, քան այդ Թուրքական սեկցիայի կազմվելը, Թուրքիայի հայ սոցիալիստները որպես թե հրաժարվում են «սպասել» թուրքերին,— ընդ որում այդ ենթասեկցիային տրվեց 4 ձայն: Ցանկալի կլիներ, որ Թուրքիայում հայկական սոցիալիզմի դրությունն իմացող մեր ընկերները՝ հայ սոցիալ-դեմոկրատներն, իրենց կարծիքը հայտնեին այդ հարցի առթիվ»[1]: Արձանագրված իրողությունը ցույց է տալիս, որ մեր դարասկզբին միջազգային կազմակերպություններում հայ սոցիալիստներն արդեն ունեին որոշ հեղինակություն:

Երիտթուրքերի հեղաշրջումից հետո հավաքված Մեջլիսի կազմում հայ տասներկու դեպուտատներից հինգը և երեք բալկանյան սոցիալիստներ կազմում էին Թուրքական երկրորդ պառլամենտի «սոցիալիստական խումբը»: Նշելով այդ սոցիալիստների անունները, Ա. Նովիչևը գրում է. «Թուրք պատմաբան Թունայան ենթադրում է, որ սոցիալիստ դեպուտատների մեջ կային նաև թուրքեր և այլ մահմեդականներ, բայց անուններ չի նշում»[2]: Այդուհանդերձ, սոցիալիստների այդ փոքր խումբը ակտիվորեն մասնակցել է Մեջլիսում քննարկվող բոլոր կարեվոր հարցերին: Դ. Վլախովը խիստ քննադատել է բանվորական շարժման դեմ ուղղված օրենքները՝ գործադուլների, ընկերությունների, «թափառաշրջիկների և կասկածելի անձանց» մասին: Հ. Պոյաճյանը խոսելով բանվորական շարժումների հանդեպ պետության ձեռք առած բռնի միջոցների մասին, ընդգծել է, որ նա Սալոնիկում ականատես է եղել, թե ինչպես «թուրք, հայ, հույն, պուլկար և նույնիսկ քուրդ գործավորներ իրարու հետ եղբայրաբար ձեռք ձեռքի տված գործավարական միություն մը կազմած են: Սակայն կառավարությունը լուծեց զայն և արգելեց անոր կազմությունը: Քավալայի մեջ ալ արգելվեցավ գործավարական միությունը...»: Այնուհետև նա հակասություն է տեսնում երկիրը կառավարողների բանվորական և ազգային քաղաքականության միջև. «Մեկ կողմե,— ասում է նա,— օսմանյան զանազան տարրերու միությունը կուզենք (ակնարկ օսմանիզմի քաղաքականության վերաբերյալ— Հ. Ի.),

[1] Լենին Վ. Ի., Երկ., հ. 17, էջ 295, ընդգծումը մերն է:
[2] «Ученые записки ЛГУ», 1962, вып. 14, стр. 16.

և սակայն, մյուս կողմն կարգիլենք այդ միության համար անոնց ունեցած ձեռնարկները»[1]։

Դեպուտատ սոցիալիստները Մեջլիսում քննարկման դրեցին «աշխատանքի պաշտպանության և ապահովության» վերաբերյալ օրենքի նախագիծը։ Սոցիալիստները պահանջում էին սահմանել որոշակի աշխատանքային օր, արգելել մանուկների և ծերերի աշխատանքը, կանանց թույլ չտալ աշխատելու նրանց առողջությանը վնասող բնագավառներում, խոշոր ձեռնարկություններում ունենալ առողջապահական կետեր, սահմանել աշխատավարձի մինիմում և ընդունել աշխատանքային օրենսդրություն[2]։

Առանձնահատուկ կրքոտությամբ էին քննարկվում հողային և ազգային հարցերը։ Թուրքական կարգերը, ինչպես տեսանք, հատկապես սրել էին փոխհարաբերությունները գյուղացիության և հողատերերի, ինչպես նաև հպատակ ժողովուրդների ու ազգերի միջև։ Երիտթուրքերը սկզբունքորեն դեմ էին լուծելու ազգային հարցը և փոխելու ֆեոդալական հողատիրության կարգը։ Դա հասկանալի էր և միանգամայն սպասելի։ Երիտթուրքերը պառլամենտական ընտրությունները տարան այնպես, որ ապահովեցին ռազմաֆեոդալական վերնախավի ներկայացուցիչների մեծամասնությունը։ Ըստ Մեջլիսի դեպուտատ Վ. Փափազյանի տվյալների՝ «պատգամավորների 35 %-ը կրոնավորներ էին..., 30 %-ը՝ կալվածատերեր, 20 %-ը՝ համիդյան պաշտոնյաներ, 10 %-ը՝ ազատ արհեստի և 5 %-ը՝ անորոշ մասնագիտության անձինք»[3]։

Ստեղծված մթնոլորտում չափազանց սուր վեճեր էին ծագում կենսական անհրաժեշտություն ներկայացնող հարցեր քննարկելիս։

Բանվորների և գյուղացիների ելույթներից առավելապես ազգային-ազատագրական հետզհետե ծավալվող շարժումների առկայությունն էր անհանգստացնում թուրքական վերնախավին։ Երիտթուրքերի շովինիստական քաղաքականությունը նրանցից

---

1 «Ազատամարտ», 04. 05. 1911։

2 Տե՛ս Алиев Г. З., Турция в период правления младотурок, М., 1972, стр. 176—177.

3 Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը, էջ 14։

հեռացրել էր երեկվա դաշնակիցներին՝ մակեդոնացի, արաբ, հայ և ուրիշ ազգերի բուրժուական և մանրբուրժուական կուսակցություններին։ Այնուամենայնիվ, հեղաշրջումից հետո ստեղծված իրադրությունը և «զուլումի» ռեժիմից հետո եկած հարաբերական ազատությունը հույս էին ներշնչել տարբեր ժողովուրդների շահերը ներկայացնող դեպուտատների մեջ և նրանք երկար ու համառ ջանքեր էին թափում լուծելու Թուրքիայի կյանքում ծառացած տնտեսական, սոցիալական ու քաղաքական խնդիրները։ Դժբախտաբար, սոցիալիստական ու բանվորական շարժումները չափազանց թույլ էին և դրանք որևէ ազդեցություն չունեին հիշյալ խնդիրների լուծման վրա։ Չկար միասնություն բոլոր այդ շարժումների միջև, ինչպես նաև՝ առանձին միավորումների ու կազմակերպությունների ներսում։

Տեղին է հիշել Ա. Բեբելի խորհուրդը 1893 թ. իրեն ներկայացած հայ ուսանողներին. «Հայ ժողովրդի բախտը անբաժանելիորեն կապված է համայն Թուրքիայի ժողովուրդների բախտի հետ։ Միապետական ռեժիմի պայմանները միանման սոսկալի են ողջ Թուրքիայի համար...»[1]։ Ելնելով այս անվիճելի փաստից, Ա. Բեբելը ժողովուրդների ազատությունը կապում էր սուլթանական բռնապետության տապալման հետ։ Տեսականորեն ճշգրիտ այս եզրահանգումը, դժբախտաբար, չէր կարող իրականանալ Օսմանյան կայսրության պայմաններում։ Հեղափոխակա՛ն տարրերի միասնության ձգտումը որոշակիորեն դրըսևորվեց բոլոր բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների ծրագրերում ու գործունեության մեջ։ Նրանցից շատերը երիտթուրքերի հեղաշրջումից հետո հրաժարվեցին Թուրքիայից անջատվելու պահանջից[2]։ Նման հայտարարություններ արվեցին կամ նույնիսկ ծրագրային փոփոխություններ մտցվեցին ոչ միայն հայ, այլև արաբ քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ։ Նույնիսկ Յանե Սանդանսկու գլխավորած մակեդոնական «ձախ» սոցիալիստների ծրագրում, որը ամենադեմոկրատականն էր երկրում, նշված էր, որ նրանք կողմ են Օսմանյան կայսրության ամբողջականությանը, կամ «ընդհանուր հայրենիքի» գաղափարին։ Միաժամանակ, նրանք

[1] «Երկրի ձայնը», 1907, № 25, էջ 7։

[2] Տե՛ս Համբարյան Ա. Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը, էջ 106—126։

պահանջում էին «լրիվ դեմոկրատիա ամբողջ կայսրության համար», երկրի կառավարումը իրացնել դեմոկրատական-սահմանադրական հիմունքներով, ազգային ու տեղական բոլոր մարմինների ընտրությունները՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության հիման վրա»[1]։

Պատմությունը, սակայն, չարդարացրեց միասնական գործողությունների ձգտումները, քանի որ տիրապետող ժողովրդի առաջավոր, դեմոկրատական տարրերը լինելով թույլ և անկազմակերպ, ի վիճակի չեղան գլխավորելու կայսրության ժողովուրդների հեղափոխական ուժերի պայքարը հանուն երկրի դեմոկրատական վերափոխման։ Այդ բանն ամենից շատ վերաբերում է թուրքական բանվոր դասակարգին։ Նա ոչ միայն չէր հանդիսանում երկրի պրոլետարիատի առաջավոր ջոկատը, այլև իր պասսիվությամբ առանձին երևույթների ծախողման պատճառ էր դառնում։ Դեռ ավելին։ «Թուրք սոցիալիստները,— գրում է Հ. Ալիևը,— խեղաթյուրում էին մարքսիզմի էությունը, նրանք պնդում էին, որ մարքսիզմի և մահմեդական շարիաթի դոգմաների միջև «համարյա չկան հակասություններ» և, հետևաբար, «իսկական մահմեդականը պետք է լինի հեղափոխական սոցիալիստ»[2]։ Թուրքիայի բանվոր դասակարգի անկազմակերպվածության հետևանքը եղավ այն, որ երկրում դեռ տասնյակ տարիներ, մինչև 1960-ական թթ., փաստորեն գոյություն չունեին բանվորների շահերը պաշտպանող օրենքներ։ «Կատաղի պայքարի միջոցով,— գրում է Ա. Հուսեյինովը,— Թուրք պրոլետարիատը 60-ական թվականների սկզբին հասավ քաղաքական բանվորական կուսակցությունների (բացի կոմունիստականից) գործունեության ազատության, պրոֆմիութենական իրավունքների ընդլայնման, գործադուլների, ձեռնարկատերերի հետ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրեր կնքելու իրավունքի ճանաչմանը»[3]։ Իսկ հաճախ տեղի ունեցող զինվորական հեղաշրջումները և երկրում ռազմական վիճակ հայտարարելը, որը սովորական էր զինվորական ղեկավարության հարուստ ավանդույթներ ունեցող երկրի համար, դժվարությամբ ընդունված

[1] Տե՛ս Шпилькова В. Н., Младотурецкая революция, էջ 184.
[2] Алиев Г. З., Турция в период правления младотурок, стр. 174.
[3] Гусейнов А. А., Профсоюзы в Турции (1960—1970), М., 1975, стр. 130.

հիշյալ օրենքներն ու իրավունքները դարձնում են պայմանական։ Այսպիսով, Թուրք բանվոր դասակարգի ազդեցությունը Օսմանյան կայսրության կյանքում եղել է թույլ, և այդ վիճակը շարունակվում է մինչև մեր օրերը։

Սովետական ականավոր արևելագետներ՝ ակադեմիկոս Ա. Գուբերը և պրոֆ. Ա. Միլլերը այդ երևույթը բացատրում են մասամբ նրանով, որ «Թուրքիայի բուրժուազիան շատ ավելի ուժեղ էր պրոլետարիատից», իսկ բանվոր դասակարգը «երևան եկավ ազգային արհեստավորական արտադրության քայքայումից շատ ավելի ուշ, որով և պայմանավորվեց բանվորական կադրերի բացառապես գյուղացիական կազմը և դանդաղեցվեց պրոլետարական դասակարգային գիտակցության աճը»[1]։

Այս ճշմարիտ եզրահանգման մեջ պատշաճ տեղ չի գտել վերևում արդեն նշված հիշյալ երկու դասակարգերի բազմազգ լինելու հանգամանքը։ Մինչդեռ, կրկնում ենք, Օսմանյան կայսրության պայմաններում ազգությունը և կրոնը չափազանց կարևոր, երբեմն վճռական, սոցիալական գործոն էին հանդիսանում այդ դասակարգերի զարգացման ընթացքում։

Նշված առանձնահատկությունը հաստատող բազմաթիվ փաստեր կարող են տրամադրել կայսրության բուրժուազիայի առանձին ազգային խմբերի ձևավորման ընթացքը և գործունեության բնագավառները։ Այսպես, թուրքական բուրժուազիան ծնող ու սնող սոցիալական խավերը եղել են հողի և անասունների տեր ֆեոդալները, պետական պաշտոնյաները, զինվորականները։

Դ. Ավջըօղլուն դրանց շարքին է դասում նաև գյուղական աղաներին ու հարկահավաք-մյուլթեզիմներին։ Նա իր գրքի էջերում նկարագրում է մի «աղայի ծնունդը»։ Այնթապի մոտ գտնվող Իսլահիե կազայի 12 հազարանոց բնակչությունը հեծում էր այդ աղայի ձեռքի տակ։ «Հաջի աղան,— գրում է Ավջըօղլուն,— 20—22 տարի առաջ եղել է մի հայի հովիվ, և երբեմն զբաղվել է կողոպուտով»[2]։ Տերը օգնում է նրան ժանդարմ դառնալու։ Քիչ հարստանալուց հետո նա հասնում է տասնա-

---

[1] Губер А. А., Миллер А. Ф., Политические и экономические изменения в странах Азии и Африки в 20 веке. «Народы Азии и Африки», 1965, № 6, стр. 8.

[2] Avcıoğlu Doğan, Türkiye'nin düzeni ., s. 182.

պետի (օնբաշի) աստիճանի։ Ադանայի վալիի մոտ որոշ ժամանակ ծառայելուց հետո վերադառնում է Իսլահիե։ Այստեղ նա շարունակում է ծառայել որպես չավուշ ու ժանդարմների պետ, և հարստություն է դիզում նվերների կամ կաշառքի միջոցով։ Նա չի մոռանում իր «բարերար» Ադանայի վալիին, որին ամեն տարի ուղարկում է յուղ, մեղր, ոչխար, այլ նվերներ և մի քիչ փող»[1]։ Այլևս ոչնչից չքաշվելով նա ձեռք է բերում իր հավանած հողը, անասունը, «մասնակցում է» հասարակական շենքերի ու դպրոցների շինարարությանը, որից օգտվելով կառուցում է մի քանի առանձնատներ, որտեղ բնակվում էին պետական պաշտոնյաները։ Նա տիրանում է շուկային, ստանձնում է կազայում աշարի գանձման գործը։

Բեյբազարի շրջանում մի բեյ յուրացնում է գյուղի 140 հազար դյոնում հողերը, միաժամանակ գյուղացիներին հարկադրելով վճարել հողային տուրքը։

Իզմիրի մոտ գտնվող Գյոլուջե գյուղին տիրանում է Կոնյայից եկած մի տասնապետ՝ Հաջի Ալի անունով։ 400 ծուխ ունեցող այդ գյուղում չկային դպրոց, մզկիթ, խմելու ջուր, ճանապարհներ, բայց Հաջի Ալին գյուղացիներին որպես ստրուկներ շահագործելով հարստանում է և դառնում փաշա։ Վերջինիս մահից հետո նրա ունեցվածքը և 40—50 հազար դյոնում հողատարածությունները անցնում են թոռներին։ Դրանցից մեկն Ադնան Մենդերեսն էր, որն իր ժառանգած հողերի վրա կազմակերպեց խոշոր կապիտալիստական ֆերմերային տնտեսություն։

«Այսպիսով, բռնակալ ժանդարմները, վալիները, մյութասարիֆները, քայմաքամները և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ յուրացնելով հողերը դառնում էին մեծ կալվածատերեր»[2]։

Դ. Ավջըօղլուն այդ ենթագլուխը ավարտում է հետևյալ պարբերությամբ. «1914—1918 թթ. և ազգային-ազատագրական պայքարի տարիներին աքսորված և փախած հայերի, հույների տները, խանութները, դաշտերը և անշարժ այլ գույքը թալանի է ենթարկվել ուժեղ մարդկանց կողմից։ Կարճ ասած, օսմանյան հողային սիստեմի կործանման հետ, տարբեր ուղիներով ձևավորվել ու աճել են բեյերն ու աղաները»[3]։

[1] Avcıoğlu D. նշվ. աշխ., էջ 182։

[2] Նույն տեղը, էջ 184։

[3] Նույն տեղը, էջ 185։

Ինչպես տեսանք, այդ ուղիները գլխավորապես բռնությամբ ու թալանի ձևով գրաված հողը, գույքը և այլ հարստություններն են։ Թերթերում և մյուս պարբերականների էջերում կարելի է գտնել բազմաթիվ հար ու նման օրինակներ, երբ իրերի բերմամբ, տեղական զորքանները այս կամ այն ձևով հարստանում էին։ Կարնի դաշտում արտերի հսկիչ Մեդեթ անունով մեկն իր կուտակած 50 լիրայով գնելով «գաղթող, հալածված հայերի կալվածներ, մեկ-երկու տարիեն կդառնա արդեն 400—500 լիրայի տեր։ Նույն ձևով գործելով, նրա որդին ևս շարունակում է հարստանալ, նոր գույքեր ձեռք բերելով, զբաղվելով առևտրով ու վաշխառությամբ։ «Այսօր նա Կարնի ամենեն հարուստներեն է, ունի մոտավորապես 500.000 կարողություն կանխիկ և մանավանդ կալվածներ և ագարակներ...։ Իսկ անունը առաջ Ղորուղճի օղլի էր, այժմ եղել է Հաջի Մեդեթ աղա զադե»[1]։ Ի. Ջեմը օրինակներով ցույց է տալիս, որ Բաղդադի երևելիներից Հաջի Մահմեդ Աբդուլհասանը գնել էր 40 հազար լիրա արժողությամբ և երկաթգծի երկարությամբ ձգվող հողատարածություններ[2], որոնք մասամբ մշակվում էին, մասամբ էլ վաճառվում բարձր գներով։ Ն. Թաչալանը խոսում է երկրի խորքից դեպի կենտրոնները, կամ նավահանգիստները սննդամթերք, մրգեր և այլ ապրանքներ տեղափոխող և տեղափոխման միջոցների սեփականատեր գյուղացիների մասին, որոնք այդ ձևով էին հարստանում։ Անցյալ դարի վերջերին, գրում է նա, «գավառների առևտրականները ապրանքն ուղարկում էին Իզմիրի թուրք առևտրականին,· նա էլ վաճառում էր օտար արտահանողներին»[3]։ Թուրք վաճառականը այդ ժամանակաշրջանում ո՛չ ֆինանսական իմաստով, ոչ էլ դրսի պայմանների ու լեզուների իմացությամբ դեռևս ի վիճակի չէր լայն ու անմիջական մասնակցություն ունենալու արտաքին առևտրին։ Անշուշտ, կային փոքր թվով և այնպիսի խոշոր առևտրականներ, որոնք ինքնուրույն կապեր ունեին Արևմուտքի առևտրական ընկերությունների հետ։ Սակայն մեծ մասամբ թուրք վաճառականները մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը «միջնորդ առևտրականից այն կողմ չէին անցնում»[4]։ Այդ հանգամանքը,

---

[1] «Երկիրի ձայնը», 1906, № 8, էջ 14։

[2] Cem Ismail, Türkiye'nin geri kalmışlığın tarihi, s. 223.

[3] „Milliyet", 11. 09. 1970

[4] Նույն տեղը։

իհարկե, չխանգարեց առևտրով զբաղվողների ձեռքում հարստության կուտակմանը։ «Երբ արտադրված բերքը,— գրում է Ս. Երասիմոսը,— գյուղական շրջաններից հոսեց քաղաք, հողերի տերերի, աղաների ու կառավարիչների մի հակառակ հոսք տեղի ունեցավ և հետևանքը եղավ այն, որ այդ անձնավորությունները թափանցեցին գավառի խորքերը... և հողի մշակումից ու շահագործումից առյուծի բաժինը խլելով հարստանում էին»[1]։

Բոլոր հեղինակները Թուրք բուրժուազիայի շարքերի լրացման աղբյուրն են համարում զինվորականներին և պետական պաշտոնյաներին։ Նույն Երասիմոսը հավաստում է, որ միայն այդ տարրերն են ստեղծել ազգային բուրժուազիա, որը նրա կարծիքով, «բաղկանում էր օսմանյան բյուրոկրատներից ու զինվորականներից»[2]։ Բայց, վերջիններս իրենց եկամուտի գըլխավոր աղբյուրը համարում էին պաշտոններից ստացվող հասույթները։ Հեղինակը դրանում համոզված գրում է. «Նրանք շատ հազվադեպ էին փորձում շահույթ ձեռք բերել առևտրից կամ հողագործությունից, որովհետև այս վերջին երկու աղբյուրները, համեմատած պետական եկամուտի հետ, չափազանց քիչ էին»[3]։ Պ. Չիխաչևի տվյալներով մինիստրների, պետական ու ռազմական պաշտոնյաների եկամուտները կազմում էին պետության տարեկան եկամուտի մեկ վեցերորդից ավելին[4]։ Կայսրության քաղաքական կյանքին քաջածանոթ Ֆ. Թյոքինը գրում է, որ ֆինանսական դժվարություններից մեծ օգուտ էին քաղում վերնախավի ներկայացուցիչները, որոնք իրենց շահը տեսնում էին աբդուլհամիդյան ռեժիմը պահպանելու մեջ»[5]։ Օյա Սենչերի կարծիքով, պետական պաշտոնյաները թեև բերում էին երկրի տնտեսությանը որոշ մասնակցություն, բայց մնում էին «արտադրության պրոցեսից դուրս», և դառնում էին «մի խավ, որը արտադրությունից բաժին է ստանում»[6]։

Խոսելով բյուրոկրատիայի ներկայացուցիչներին տնտեսա-

---

[1] Erasimos S., Azgelişmişlik Süründe Türkiye, c II, s. 606.

[2] Նույն տեղը, էջ 935։

[3] Նույն տեղը, էջ 607։

[4] Տե՛ս Чихачев П. А. Великие державы и восточный вопрос, стр. 115

[5] Tökin F., Türkiye'de siyasi partiler..., s. 30.

[6] Sencer O., Türk toplumunun tarihsel evrimi., s. 38.

կան գործունեության մեջ ներգրավելու մասին, համարյա բոլոր հետազոտողները նշում են, որ այդ մասնակցությունը պորտաբույծ բնույթ ուներ։

Լինելով փայատեր, նրանք խստորեն հետևում էին իրենց եկամուտը ստանալուն և երբեք չէին հետաքրքրվում բուն արտադրության հարցերով։

Թուրք պատմագիտության մեջ փորձ է կատարվում այդ երևույթը բացատրել նաև այն բանով, որ իսլամը առևտրական շահը համարում է ապօրինի (հարամ) և այս պատճառով էլ «իշխանության գլուխ կանգնած մարդիկ իրենց խնայած փողը որպես դրամագլուխ օգտագործելու փոխարեն կամ թանկարժեք իրեր էին գնում ու պահում իրենց տներում կամ էլ կալվածներ էին ձեռք բերում»[1]։

Այնուամենայնիվ, կայսրության գոյության վերջին տասնամյակներին, նրանք չէին քաշվում դնել հետզհետե աճող չափերով կուտակած գումարի մի մասը առևտրի, բանկային գործի, արդյունաբերության մեջ։ Բայց արտադրության նկատմամբ ունեցած անտարբեր վերաբերմունքը, որպես բնորոշ գիծ, դեռևս երկար ժամանակ հատուկ էր հիշյալ խավի ներկայացուցիչներին, և հաճախ ունենում էր ոչ ցանկալի ավարտ։ Ոմն Զիա փաշա հախճապակու գործարան է հիմնում։ Չդիմանալով ներմուծվող ամանեղենի մրցմանը, նա շուտով փակում է իր գործարանը և սկսում է մոմ արտադրել։ Այս արտադրանքը ևս մրցակցության չի դիմանում և Զիա փաշան արդյունաբերական գործունեությունից դուրս է նետվում[2]։ Սակայն քիչ չեն փաստերը, երբ գործարար առանձին անձնավորություններ ամեն միջոց ձեռնարկում էին իրենց դիրքերն ամրապնդելու համար։ Մամուլում արձանագրված է այդ իմաստով չափազանց հետաքրքիր մի երևույթ։ Նեմլի օղլու անունով տրապիզոնցի մի խոշոր վաճառական «Թուրք, մահմեդական և միաժամանակ Մեջլիսի (տեղական համաժողովի— Հ. Ի.) անդամ, քաղաքի շրջակայքում հողեր է գնում և թուրքական ձևակերպումներից բացի գնման կալքագիր է ձևակերպում Բաթումի նոտարիուսի մոտ»[3]։ Ժամանակի ընթացքում և երկրում գոյություն ունեցող անպա-

---

[1] Türkiye'de sermaye piyasasinin kurulmasi, s. 54.

[2] Avcıoğlu Doğan, Türkiye'nin düzeni..., s. 86.

[3] «Военный сборник», 1891, № 6, стр. 371.

հովության պատճառով նման երևույթները դառնում են բազմաթիվ ու սովորական։ Բայց տեղի է ունենում նաև կապիտալիստական կարգերին հատուկ, կուտակման բնականոն ուղիով ընթացող, հարստացման պրոցես ևս։ Այսպես, Հ. Ավնին գրում է, որ Զոնգուլդաղն ածխահանության կենտրոնից բացի դառնում է առևտրական քաղաք։ Այստեղ «մի քանի ղուրուշ փողով եկած շրջիկ վաճառորդները, գյուղի նպարավաճառները մտան շըրջանի հարուստների շարքերը»։ Բացի թուրք վաճառականներից, նշում է հեղինակը, արագորեն հարստանում էին նաև բանվորներ հավաքագրողները, որոնք կողոպտում էին թե բանվորներից և թե ձեռնարկատերերից, ինչպես և հանքերում ու նավահանգըստում ծառայող չավուշները, քեհյաները (կառավարիչ) և այլ պաշտոնյաներ, «որոնք դարձան փողի տեր»[1]։ Տիրապետող թուրք ժողովրդի վերնախավը՝ պետական ու զինվորական պաշտոնյաները, աղաներն ու վաշխառուները հեշտությամբ էին հարստանում հատկապես հպատակ քրիստոնյա ժողովուրդների հաշվին։ Ինչպես նշվում է Էրզրումից ուղարկված մի հոդվածում, հիշյալ սոցիալական խավերը «հսկայական թալանով տիրացած են ահագին գումարներու, բայց զանոնք գործածելու, շահագործելու համար պետք եղած փորձառական պատրաստությունը չունենն»[2]։ Նշված կուտակումները հանգեցրին մի կողմից, կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, մյուսից՝ չափազանց աշխուժացրին տնտեսական կյանքն ամբողջ երկրում։ Եվ, ինչպես նշում է շաբաթաթերթը, «այսօր Փոքր Ասիայի մեջ չկա մի գյուղ, ուր կարևոր դեր չխաղա բեյերուն, աղաներուն, էֆենդիներուն՝ այդ բռնի հարստացած թուրքերուն դրամագլուխը, իսկ բազմաթիվ են այնպիսի գյուղեր, որոնք գրեթե ամբողջովին մաս կկազմեն հարուստ թուրքի դրամագլխին»[3]։ Հանուն այդ դրամագլխի մեծացման, կամ շնորհիվ նրա ազդեցության աճի, ունևոր քաղաքացիները համախմբվում էին նորաստեղծ «ազգային ժողովներին» շուրջը, որոնք մինչև երիտթուրքերի տեղական կոմիտեների առաջ գալը փորձում էին կարգավորել տեղի քաղաքական ու տնտեսական կյանքը։ Այսպես, Էրզրումում կազմակերպված «Միլլեթ մեջլիսի» բոլոր անդամները հարուստ, հազարներու տեր մար-

[1] Avni H., Bir yarım müstemleke oluş tarihi, s. 50.

[2] «Երկրի ձայնը», 1906, № 8, էջ 13։

[3] Նույն տեղը, էջ 14։

դիկ են,— 1906 թ. գրում էր «Երկրի ձայնը»,— ունեին ընդարձակ կալվածներ, այգիներ, պարտեզներ, կզբաղին վաճառականությամբ, մեկ խոսքով, թուրք բուրժուազիայի ներկայացուցիչներն են... Պետք է նկատել, որ այդ մարդիկը մեծ մասամբ 1895—1896-ի ջարդերեն հետո է, որ ասպարեզ իջան և աչքի ընկան»։ Այնուհետև շաբաթաթերթը բերում է յուրացման ու թալանի ճանապարհով հարստացած չորս «ականավոր» հարուստների անունները, որոնք կուտակել էին տասը հազարից մինչև մեկ միլիոն լիրա կարողություն[1]։ Վերևում նշվեց, որ Օսմանյան կայսրության բազմազգ բուրժուազիայի զարգացման երրորդ փուլում, այսինքն՝ սկսած 1880-ական թթ., մահմեդական ժողովուրդների և հատկապես թուրքական բուրժուազիան արդեն զգալի դեր էր կատարում երկրի առևտրի ու արդյունաբերության մեջ։ Ա. Կոլյուբակինը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս թուրքական կապիտալի մասնակցությունը տնտեսության տարբեր բնագավառներում։ Պալու քաղաքի 40 վաճառատներից 6-ը պատկանում էր թուրքերի, որոնք Խարբերդի խոշոր առևտրականների միջնորդներն էին։ «Թուրք առևտրականները զբաղվում են գլխավորապես արտահանելով, տեղերից ուղարկելով ոչխարներ, բուրդ և ցորեն»[2]։ Խարբերդի կազայում կար հարուստների մի խավ, որն ուներ «տներ, քարվանսարաներ, բաղնիքներ, խաղողի այգիներ, մշակելի հողեր և այլն։ Թուրքերից մի քանիսը հայերի հետ միասին մասնակցում են առևտրական գործողություններին, պետական կապալով կատարվող գործարքներին, աշարը գանձելուն և այլն»[3]։ Խարբերդ քաղաքի առևտուրը կենտրոնացած էր 200 համեմատաբար խոշոր, մեծածախ առևտրով զբաղվող վաճառատների և 400 փոքր խանութների ու կրպակների տերերի ձեռքում։ Առաջինների մոտ 10 %-ը պատկանում էր թուրքերին, իսկ երկրորդների մեջ նրանց մասնակցությունը հասնում էր 20 %-ի[4]։ Մոտավորապես նույն վիճակն էր տիրում նաև երկրի մյուս ներքին գավառներում։ Ինչպես գրում էր «Երկրի ձայնը», «մանուֆակտուրան, մանրավաճառությունը և նմանօրինակ առևտուրներն,

[1] Տե՛ս «Երկրի ձայնը», 1906, № 6, էջ 12։
[2] ЦГВИА, ф. 82, оп. 86, д. 3053, л. 164.
[3] Նույն տեղը, թ. 352։
[4] Նույն տեղը, թ. 353։

ուր չէին երևնար մահմեդականները, սկսած են այժմ նույնպես անոնք գրավել, շնորհիվ իրենց վայելած ավելի նպաստավոր պայմաններուն»[1]։

Այսպիսին էր պատկերն Արևմտյան Հայաստանում և երկրի արևելյան մյուս շրջաններում, իսկ արևմուտքում, թուրքերով բնակեցված Անատոլիայի շրջաններում թուրքական բուրժուազիայի մասնակցությունն ավելի մեծ էր։ Երկաթուղի անցկացնելուց հետո Կոնիայի վիլայեթի Ակշեհիր քաղաքը դարձավ կարևոր առևտրական կենտրոն, որտեղ առաջնակարգ դեր էին խաղում թուրքերը։ Այստեղից տարեկան արտահանվում էր մոտ 1000 վագոն հացահատիկ, 600—700 կողով օփիում, մեծ քանակությամբ բուրդ, տըֆտիկ, խոշոր ու մանր եղջերավոր անասունների կաշի և այլն[2]։ Տրապիզոնի ռուսական հյուպատոսի հաղորդման համաձայն 1893 թ. գյուղատնտեսական հումքի և մթերքների առևտրով զբաղվող մեծ վաճառատներից չորսը պատկանում էր թուրքերի, չորսը՝ հույների, մեկը՝ ռուսի և մեկը՝ հայի[3]։ «Կէօնենի (Գյոնեն— Հ. Ի.) վաճառականները,— գրում էր «Բյուրակնը»,— մեծ մասամբ թուրք են, որոնք գըլխավորապես մանուֆակտուրայի, արմտիքի, համեմունքների, ծխախոտի գործառնություններով կզբաղվին»[4]։ Կաստամոնիի վիլայեթի Տոսյա քաղաքի առևտրականների գլխավորը տարիներ շարունակ եղել է Խալֆազադե Ալի էֆենդին[5]։ Անկարայի վիլայեթի Կայսերիի սանջակում 18 արտահանող առևտրականներից 7-ը թուրքեր էին[6]։

Առևտրի մեջ ներգրավվում էին նաև հարուստ քրդերը՝ Ռուսական զինվորական գործակալի հաղորդման համաձայն շեյխ Մեհմեդ Սադեկը «Պարսկաստանի հետ ուներ ծխախոտի լայն առևտուր»։ Նա կուտակել էր «հսկայական գումարներ, որոնք պահում էր սնդուկների մեջ» և բանակցություններ էր վարում «օտարերկրյա բանկերի հետ՝ իր կապիտալները պահելու մասին»[7]։

---

1 «Երկրի ձայնը», 1906, № 9, էջ 13։
2 «Բյուրակն», 1906, № 32, էջ 764։
3 Տե՛ս «Вестник финансов»..., 1894, № 47, էջ 618.
4 «Բյուրակն», 1906, № 26, էջ 624։
5 Տե՛ս նույն տեղը, № 43, էջ 1027։
6 Տե՛ս նույն տեղը, 1907, № 11—12, էջ 282։
7 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, л. 267.

Նման փաստերը բազմաթիվ են և ցույց են տալիս բուրժուական հարաբերությունների մուտքը նաև կայսրության ամենախուլ անկյունները։ Անհրաժեշտ է նշել, որ թուրքական կապիտալը մինչև առաջին համաշխարհային պատերազմը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը երկրի տնտեսության մեջ։ Ն. Թաչալյանի հաշվումներով Իզմիրի շրջանում, պատերազմի նախօրեին, թուրքերին էին պատկանում 202 գործարաններ և արհեստանոցներ, իսկ օտարների հսկողության տակ գտնվող 213 ձեռնարկություններից՝ 114-ը՝ գտնվում էր հույների, 88-ը՝ օտարահպատակների և 11-ը՝ հայերի ձեռքում[1]։ Մեկ ուրիշ օրինակ։ Դեռևս 1895 թ. Սպարտա քաղաքում գորգերի ամբողջ արտադրությունն իրենց ձեռքում էին կենտրոնացրել հույն կապիտալիստները։ Արդեն տասներկու տարի անց 1100 դազգահներից 650-ը պատկանում էր թուրքերին[2]։ Որոշ բնագավառներում թուրքերի տնտեսական դիրքերի ամրապնդումը նկատելի էր դեռևս 1880-ական թթ. կեսերին։ «Բյուրակն» լրագիրը 1900 թ. արձանագրել է, որ «Մալաթիայի սանջակում վաճառականությունը թուրք տարրի ձեռքին է»[3]։ «Բյուզանդիոնն» իր հերթին նշում էր դեռևս 1896 թ. վերջին մայրաքաղաքի առևտրական հրապարակում տիրող «մասնավոր ոգևորությունը», որը հետևանք է «Փոքր Ասիո շատ մը նորակազմ, նորահաստատ առևտրական տուներու ներկայացուցիչների երևալուն։ Ասոնք մեր խուլամ հայրենակիցներուն կպատկանին, որովհետև վերջին ժամանակներս անոնց մեջ փութաջանություն մը երևցավ նորաբաց առևտրական տուներ կազմակերպելու»[4]։ Թոքատի (Եվդոկիայի) գավառի «Արաքս» հանդեսում տպագրված համառոտ տեղեկագրության մեջ ցույց է տրված բազմազգ բնակչության ու նրա տնտեսական գործունեության պատկերը նշված ժամանակահատվածում։ Քաղաքն ուներ 30 հազար բնակիչ, որոնցից մոտ 20 հազարը թուրքեր էին, 7 500-ը՝ հայեր, մնացյալը՝ հույներ, հրեաներ և այլն։ Այս տիպիկ գավառական քաղաքում, հար և նման ասիական Թուրքիայի մյուս քաղաքներին, բնակիչների հիմնական զբաղմունքը արհեստ-

---

1 „Milliyet", 13. 09. 1970.

2 «Բյուրակն», 1907, № 29, էջ 1117։

3 «Բյուրակն» թերթ, 15. 02. 1900։

4 «Բյուզանդիոն», 28. 11. 1896։

ներն ու առևտուրն էր։ Ինչպես արդեն նշվեց, պղնձագործական այս կենտրոնում կային 150 արհեստանոց-խանութներ, որոնք համարյա բոլորը պատկանում էին հայերին։ Մյուս բնագավառներում պատկերը հետևյալն էր. «Երկաթագործ՝ 50 խանութ, 40-ը թուրք և մնացյալը հայ, ատաղձագործ՝ 20 խանութ, 15 հայ և մնացյալը հույն, թիթեղագործ՝ 10 խանութ, 3-ը հայ և մյուսներն հրեա, անագագործ՝ 30 խանութ, կեսն հայ և կեսն թուրք..., որմնադիր՝ 100 անձ, հայ, հույն, թուրք հավասար թվով, ոսկերիչ՝ 10 անձ, բոլորն ալ հայ, ժամագործ՝ 20 խանութ, 17 հայ, 3-ը հույն..., արևելյան ապրանքների 50 խանութ մեծավ մասամբ թուրք, մուշտակագործ՝ 25 խանութ, բոլորն ալ հայ, թամբագործ, սանձագործ, պարանագործ և պայտառ, ընդամենը 150 խանութ, գրեթե բոլորն ալ թուրք» և այլն[1]։ Այս թվերն անհրաժեշտ գտանք բերել, որովհետև դրանք չափազանց բնորոշ էին ոչ մեծ, բայց կայսրության տնտեսական կյանքի կարևոր կենտրոններ համարվող բազմաթիվ քաղաքների։ Տ. Մըրմըրյանը տասնյակ տարիների իր դիտարկումներն ամփոփելիս թուրք վաճառականության մասին գրում էր, որ դեռևս 1880-ական թթ. նրա շարքերում տեղի ունեցան ոչ միայն քանակական, այլև որակական փոփոխություններ։ «...Մեր թուրք երկրացիները,— նշում է նա,— մանավանդ վերջին տարիներս, իրենց դատողական գիտության և տեղական պարզունակ արվեստագիտությանց վրա ավելցուցած են վաճառական ժրություն մըն ալ գործնական, զոր սերունդ մը առաջ գրեթե բնավ չունեին»[2]։

«Բերլիններ Տագեբլաթ» թերթի Պոլսի թղթակիցը, անդրադառնալով նույն հարցին, գրում է, որ մայրաքաղաքի լրագրերը տեղի ունեցող երևույթն անվանում են «իսլամ վաճառականության զարթոնք»։ Թղթակիցն իբրև Բալկանյան պատերազմում պարտության անուղղակի հետևանք է դիտում տնտեսական այդ զարթոնքը, որը «նպատակ ունի իսլամներու տնտեսական և առևտրական ազատագրումը»։ Որպես այդ նպատակի կենսագործման օրինակ, թերթը նշում է Ադաբազարում առևտրական բանկի և Այդինում ազգային բանկի հիմնադրումը[3]։

---

[1] «Արարատ», 1887, գիրք Ա, էջ 92—93։

[2] Մ (ըրմըրյան) Տ. Գ., Թուրքահայ հին վաճառականությունն..., էջ 160։

[3] Տե՛ս «Բյուզանդիոն», 28.04.1914։

1914 թ. փետրվարին Կ. Պոլսում տեղի ունեցավ 150 թուրք վաճառականների համաժողով։ Ստեղծված առևտրական ընկերությունը որոշեց «ուսումնասիրել եվրոպական նույն կարգի ընկերակցությանց կանոնագիրերը»[1] և ըստ այնմ ծավալել իր գործունեությունը։ «Բյուզանդիոնը» նաև հայտնում էր, որ մայրաքաղաքում ստեղծվել է վաճառականների կոմիտե, որի անդամների թիվը հասնում է 340-ի։ Մտադրություն կար այստեղ ևս «հաստատել առևտրական խոշոր պանքա մը։ Քոմիտեն առայժմ մայրաքաղաքին համար է, սակայն հետո ճյուղեր պիտի հաստատվի գավառային մեծ քաղաքներուն մեջ»[2]։

Առևտրական շահի հմայքը մուտք գործեց նույնիսկ խուլ կանանց շրջանը։ Սուլթանի կանանցից մեկի հովանավորության տակ կազմակերպվեց «ազգային արտադրության ու ճարտարվեստի զարգացման իգական ընկերությունը», որը Կ. Պոլսում բացեց իր վաճառատունը, ուր «թուրք արտադրությունները միայն կծախվին»։ Ընկերության աշխատանոցներում տեղավորված էին երեք հարյուր կին և աղջիկ, «միայն թրքուհիներ»[3]։

Առանձին թուրք մեծահարուստներ կամ խոշոր վաճառականներ որոշ ազդեցություն էին ձեռք բերել լեռնային և ընդհանրապես արդյունաբերության մեջ։ Բալըքեսիրի վաճառականներից ոմն Յուսուֆ Ասըմ 1882 թ. մայիսին դիմում է կառավարությանը՝ խնդրելով ֆրանսիացիների հսկողության տակ գտնվող բորացիտի հանքերը հանձնել իրեն։ Հարցը դրականորեն լուծվելու դեպքում նա խոստանում էր պետական հարկը, որը կազմում էր եկամուտի 9 %-ը, հասցնել 15—20 %-ի[4]։

Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ էրեգլիի ածխահանքերում տիրապետող դիրքեր ունենալու համար տեղական ու ֆրանսիական կապիտալիստների միջև դարավերջին սկսած վեճը 1908 թ. դեռ շարունակվում էր։ Տեղական կոնցեսիոներների թվում հիշատակվում էր սուլթանի պալատականներից մեկի՝ Ռահիբ փաշայի, անունը։ Նա ուներ մի մեծ

---

[1] Տե՛ս «Բյուզանդիոն», 15. 02. 1914։

[2] Նույն տեղը, 28. 04. 1914։

[3] Նույն տեղը։

[4] „Milliyet", 03. 05. 1975.

տեղամաս և էրեզլիի ընկերությունից պահանջում էր հինգ միլիոն ֆրանկ, որպեսզի տեղամասը զիջի ընկերությանը[1]։

Մեկ ուրիշ պալատական, նախկին մեծ վեզիր Ահմեդ Մուխտար փաշան, կազմակերպել էր Միջագետքի նավթը շահագործող ընկերություն[2]։

Թուրք վերնախավի ներկայացուցիչները սկսել էին ակտիվ մասնակցություն ցուցաբերել երկրի տնտեսական կյանքում, չթողնելով իրենց հիմնական գործունեությունը՝ որպես պալատական, բարձրաստիճան պաշտոնյա և այլն։ Նման երկվությունը նրանց հնարավորություն էր տալիս շարունակելու հարստությունների կուտակումը՝ կաշառքի, նվերներ ստանալու և իրենց պաշտոնական դիրքը նույն նպատակով չարաշահելու միջոցով։ Այդպիսով, թուրքական ազգային բուրժուազիայի գոյացման հիմնական աղբյուր հանդիսացող սոցիալական համարյա բոլոր խավերն ամուր կերպով կապված էին ֆեոդալական հողատիրության և տվյալ հասարակարգում տիրապետող հարաբերությունների բազմաթիվ ձևերի հետ։ Այդ պատճառով էլ նրանք իրենց էությամբ, գործելակերպով ու գաղափարախոսությամբ ավելի ֆեոդալական էին, քան բուրժուական: Այդ իրողությունը երկրում դրսևորվում է երբեմն նաև մեր ժամանակներում։

Թուրքական ազգային բուրժուազիան իր տնտեսական գործունեությունը սկսեց և ծավալեց անասնապահության ու անասնավաճառության, լայն առումով կաշեգործության, մետաղի ու զենքի, սննդամթերքների և որոշ չափով ճոթեղենի առևտրի բնագավառներում։ Մի խոսքով, ֆեոդալական հարաբերությունների և համապատասխան առնչություններով պայմանավորված, առևտրի ու արդյունաբերության գործունեության որոշ մասը միայն անցյալ դարի վերջին բաժին ընկավ թուրքական բուրժուազիային։

Այլազգի՝ հունական, հայկական, հրեական բուրժուազիայի գոյացման պրոցեսը, հիմնական գծերով, համընկնում էր արևմտյան երկրների պատմական ուղիով անցած դասական ձևերին։ Այն սոցիալական տարրերը, որոնք կազմեցին այլազգի բուրժուազիայի կորիզը, կապված էին արհեստների ու արդյու-

[1] Տե՛ս АВПР, ф. Политархив, оп. 482, д. 1030, л. 9.

[2] Տե՛ս «Բյուզանդիոն», 28.04.1914։

նաբերական արտադրության, ներքին ու արտաքին ընդարձակ առևտրական գործողությունների հետ։ Սակայն Օսմանյան կայսրության բազմազգ բուրժուազիայի զարգացման վրա իր կնիքն էր դրել ռազմաֆեոդալական ռեժիմը և արդեն նշված գույքի ու անձի ապահովության բացակայությունը։ Սրանով էլ պայմանավորված էր այն յուրահատկությունը, որը բնորոշ չէր Արևմուտքի բուրժուազիային։ Նոր ձևավորվող բուրժուազիան Թուրքիայում չէր ցանկանում զբաղվել միայն արդյունաբերությամբ։ Նա ձգտում էր, ինչպես ճիշտ նշում է Ն. Տոդորովը, հնարավորություն ունենալ կապիտալն ազատորեն տեղափոխելու մի բնակավայրից մյուսը և անգամ փոքր վտանգի կամ անհրաժեշտության դեպքում այն հանել արտադրությունից և նույնիսկ երկրից դուրս բերել[1]։ Անշուշտ, այստեղ խոսքը վերաբերում է գլխավորապես այլազգի բուրժուազիային, քանի որ «արհեստներով ու առևտրով, այսինքն՝ էկոնոմիկայի այն ճյուղերով, որտեղ ամենից ավելի շուտ կարող էր հասունանալ կապիտալիստական կացութաձևը, զբաղվում էին առավելապես ոչ թուրքերը և անգամ ոչ մուսուլմանները»[2]։

Այլազգի բուրժուազիան կենտրոնացած էր գլխավորապես խոշոր բնակավայրերում, ծովափնյա քաղաքներում, հատկապես մայրաքաղաքում։ Նա էր կատարում համարյա ամբողջ միջնորդ առևտուրը։ Նրա շարքերում ձևավորվեց կոմպրադորական բուրժուազիայի մեծ մասը։ Նա հետզհետե համալրվեց դրամային գործառնություններով զբաղվող մարդկանցով՝ բանկիրներով, դրամափոխներով, խոշոր վաշխառուներով։ Այդուհանդերձ, այլազգի բուրժուազիայի շարքերը խտացվում էին նաև հողատերերի, հարկահավաքների, կուլակների, տեղական վաշխառուների ու առևտրականների ներկայացուցիչներով։ Անշուշտ, այդ բոլոր տարրերի մեջ ամենաստվար մասն էին կազմում վաճառականները, որոնց մի մասն անցավ արդյունաբերական գործունեության։ Մեծ մասամբ այս միջավայրում էլ տեղի ունեցավ առևտրական ու արդյունաբերական կապիտալի միաձուլումը։ Արդյունաբերական ձեռնարկատերերից շատերը նախկինում եղել էին արհեստավորներ, վարպետներ, կառավարիչներ, ինժեներներ ու տեխնիկներ, որոնք հա-

---

1 Տե՛ս Тодоров Н., Балканский город..., стр. 413.

2 ԵՐԵՄԵՆ Գ. Ե., *Թուրքերի ծագումը*, Եր., 1975, 234։

հարստանալով դարձել էին սեփականատիրոջ ընկեր, կամ հենց սեփականատեր։ Այսպես, Բուլղարիայի ամենախոշոր արդյունաբերողը՝ Աթանաս Գյումուշգերդանը, ինչպես ցույց է տրված Ն. Տոդորովի աշխատության մեջ, եղել էր աբաջի՝ աբա արտադրող վարպետ, որը կյանքի վերջին տարիներին դարձել էր ձեռնարկատեր, իսկ նրա ժառանգները ստեղծեցին խոշոր կապիտալիստական արտադրություն։ Կայսրության ասիական մասում ևս անցյալ դարի սկզբից տեղի էր ունենում ձեռնարկատիրոջ ձևավորման պրոցեսը։ Գորգագործ վարպետները, որոնք մեծ գործ էին ձեռնարկում, «կամ իրենց տանը սենյակ մը ունեին և կամ թաղին մեջ առանձին սենյակ մը կվարձեին իբր գործատուն», որի մեջ տեղավորում էին 5—150 դազգահ, աշխատացնելով վարձու բանվորուհիներ գործատանը և իրենց սեփական տներում[1]։

Ավելի թույլ կապված լինելով ֆեոդալական խավերի հետ, այլազգի բուրժուազիան անմիջականորեն ու խիստ կերպով զգում էր օսմանյան ֆեոդալական կարգի ծանր լուծը։ Այդ է պատճառը, որ նա ավելի քիչ էր պահպանողական, ավելի շատ էր սնում ու հարում ընդդիմադիր տարրերին, քան թուրքական բուրժուազիան։ Անհրաժեշտ է նաև նշել, որ երկրում տիրող շովինիստական քաղաքականությունից ամենաշատ տուժող ոչ մահմեդական ժողովուրդների ու նրանց մանրբուրժուական խավերի աճող դժգոհությունը և ազատագրական պայքարի վերելքը ևս «իրենց» բուրժուազիային ստիպում էին չբավարարվել իշխանությունների հարկադրական զիջումներով։

Հանրահայտ է, որ բուրժուազիայի ինքնուրույն դասակարգ դառնալը, նրա ձևավորումը որպես տնտեսության ու քաղաքականության ղեկավար ուժի, ընդհանուր առմամբ, համընկնում է այս կամ այն ազգի գոյացման պրոցեսի հետ։ Հիշյալ պատմական օրինաչափությունը տարբեր երկրներում դրսևորվում է այլազան ձևերով։ XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության տարածքում բալկանյան համարյա բոլոր ժողովուրդները, հույները, հայերը ազգային բուրժուազիայի գլխավորությամբ ավարտում էին իրենց ազգերի կազմավորման շրջանը։ Մինչդեռ թուրքերն ու մյուս մահմեդական ժողովուրդներն այդ

[1] Տե՛ս «Բյուզանդիոն», 03. 03. 1902։

շրջանում դեռևս միայն նոր էին թևակոխում բուրժուական հարաբերությունների սաղմնավորման փուլը։

Նույն տարածքի վրա ապրող զարգացման տարբեր աստիճանի վրա գտնվող ժողովուրդների առաջընթացի պրոցեսը, անկասկած, չէր կարող լինել առանց փոխադարձ ազդեցությունների ու կապերի։ Առաջին խմբի ժողովուրդների ազդեցության շնորհիվ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումն օսմանյան ֆեոդալիզմի ծալքերը՝ արագացնում էր վերջինիս քայքայումը։ Ներքին այդ պրոցեսի, ապա նաև բուրժուական Արևմուտքի ազդեցության հետևանքով ձևավորվում էր բուրժուական գաղափարախոսությունը, տարածվում էին բուրժուադեմոկրատական և ազատագրական գաղափարները։

Սակայն ռազմաֆեոդալական կարգի, կրոնական ու ազգային մշտական հալածանքի պայմաններում փոխազդեցության գործոնը չէր կարող վճռական դեր կատարել։ Այդ պատճառով էլ ազգի ղեկավար ուժը հանդիսացող բուրժուազիայի կազմավորումը, որոշ իմաստով, տեղի էր ունենում սահմանափակ ազգային շրջանակներում։ Ահա թե ինչու ազգային բուրժուազիան կարողանում էր իրեն դրսևորել որպես միայն քրիստոնյա, կամ մահմեդական ազգերի տնտեսական շահերի ներկայացուցիչ։ Նման անբնական վիճակը ժամանակ առ ժամանակ ավելի էր սրվում կայսրության վերնախավի մեծապետական ու շովինիստական քաղաքականության հետևանքով՝ կապված այս կամ այն պատմական երևույթի հետ, ինչպես՝ ազատագրական պայքարի վերելքը երկրի ներսում, հաճախ տեղի ունեցող պատերազմները, կրոնական ֆանատիզմի բռնկումները և այլն։ Այդ քաղաքականությունը և ռասիզմի գաղափարախոսությունը լրջորեն խանգարում էին հպատակ ժողովուրդների ինքնուրույն զարգացմանը։ Միաժամանակ, դրանք կասեցնում էին մահմեդական ժողովուրդների առանց այդ էլ դանդաղ առաջընթացը։ Ֆ. Էնգելսը գտնում էր, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ուղղակի կապված է ազգային հարցի լուծման հետ, որ «ոչ մի երկրում հնարավոր չէ բուրժուազիայի տիրապետությունն առանց ազգային անկախության»[1]։ Կրկնենք մեկ անգամ ևս, որ որոշակի ազգի ու դավանանքի պատ-

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 22, стр. 382.

վանելը Օսմանյան կայսրությունում ունեի սոցիալական բնույթ։ Թուրք պատմագիտության մեջ այդ երևույթը մեկնաբանվում է յուրովի։ Ամենատարածված տարբերակը հետևյալն է. «Թուրքերը մասնակցելով հաճախակի տեղի ունեցող պատերազմներին, հնարավորություն չունեին աճելու քանակապես և զարգանալու տնտեսապես։ Իսկ հույները, հայերը և ընդհանրապես ոչ մահմեդականները, տիրապետել էին կայսրության առևտրական ու տնտեսական կյանքին»[1]։ Ինչպես արդեն նշվեց, այս կարգը սահմանել էր կայսրության վերնախավը և խստորեն հետևում էր, որ հիշյալ տարրերը չմիջամտեին երկրի քաղաքական կյանքին, նրա կառավարման գործին։

Երբ բուլղար ժողովուրդն անցյալ դարի վերջին քառորդում ազատագրվեց օսմանյան լծից ու դարձավ իր երկրի տնտեսության ու քաղաքականության տերը, զգալիորեն արագացավ նրա զարգացման տեմպը և նա ապրեց բուռն վերելք։ Դրանից հետո Թուրքիայում սլավոնական բուրժուազիայի ազդեցությունը զգալիորեն նվազեց և առաջնակարգ նշանակություն ձեռք բերեց հունական կապիտալը։

Հույների դիրքերն ամուր էին հատկապես մայրաքաղաքի, ծովեզրյա բնակավայրերի և Անատոլիայի կարևոր կենտրոնների տնտեսության մեջ։ Նրանք տարիներ շարունակ գլխավորում էին Արևմուտքի հետ կատարվող միջնորդ առևտուրը։ Հենց առևտրի շնորհիվ Բալկաններում առաջինը ձևավորեց հույն բուրժուազիան։ Դեռևս XVIII դարում նա Միջերկրականի շրջանից դուրս մղեց ֆրանսիացիներին և Արևելքի առևտրի կեսից ավելին կենտրոնացրեց իր ձեռքում։ Եվրոպայում և Ռուսաստանում հունական բոլոր գաղութները դարձան կարևոր առևտրական կենտրոններ։ Հունական առևտրական հզոր նավատորմը տիրապետեց ոչ միայն Միջերկրական, այլև Սև ծովում։ Երևի հույն բուրժուազիայի այդ շրջանի գործիչների մասին է նշում Յ. Մըլմըյանը, երբ գովաբանում է նրանց «հարստությունը, ընդարձակ գործունեությունը և բարեգործությունը», անվանելով նրանց «Միջերկրականի, Էգեյան կղզիների և Եգիպտոսի մեծ հույներ»[2]։ Նա գտնում էր, որ XIX դարի բուրժուազիայի

---

[1] Kocaş Sadi, Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ilişkileri, Ankara, 1967, s. 60.

[2] Մ (ըմըյան) Յ. Գ., Թուրքահայ հին վաճառականությունն... էջ 45։

ներկայացուցիչներն ավելի համեստ առևտրական գործունեություն էին ծավալել, քան նախորդները։ Այնուամենայնիվ, հույն բուրժուազիան կարևոր դեր էր կատարում կայսրության գոյության ամբողջ ժամանակաշրջանում։ Նրա ձեռքում էր կենտրոնացած սննդամթերքների, ալյուրի, չոր մրգերի և բազմաթիվ այլ ապրանքների առևտուրը։ Հույն ձեռնարկատերերը մեծ դեր էին կատարում նաև գորգերի, մետաքսի և ընդհանրապես ճոթեղենի արտադրության մեջ։ Արևմտյան Անատոլիայում նրանց էին պատկանում համարյա բոլոր ալրաղացները, վեց փայտամշակման ֆաբրիկաներից երեքը, բազմաթիվ ձուլարաններ, երկաթամշակման ձեռնարկություններ և այլն[1]։

Բնականաբար, տնտեսական բնագավառը ղեկավարող հիմնարկներում ևս մեծ էր հույների թիվը։ Օսմանյան առևտրական պալատի անդամների մեկ երրորդը հույներ էին։ Առևտրաարդյունաբերական պալատում. մինչև Բալկանյան պատերազմները նրանք ունեին մեծամասնություն[2]։

Ընդարձակ գործունեություն էր ծավալել նաև հայ բուրժուազիան։ Երկար տարիներ նա տիրապետող դիրք ուներ Անատոլիայի և եվրոպական երկրների առևտրում։ Սկսած 1840 թ. նա ակտիվորեն մասնակցում էր ծովային առևտրին։ Մանուֆակտուրայի, մանվածքի, երկաթեղենի, վառելիքի և սննդեղենի մի մասի առևտուրը կատարվում էր հայ վաճառատների միջոցով։ Հայ մեծահարուստները զգալի մասնակցություն ունեին դրամական գործառնությունների մեջ։ Հայ արհեստավորները, նշում է Սադի Քոչաշը, «լինելով շնորհքով արհեստներում, բազմաթիվ բնագավառներում համարյա չունեին իրենց մրցակիցները Օսմանյան կայսրությունում»[3]։ Դրանց թվին էին պատկանում ոսկերչությունը, կահույքի, եվրոպական հագուստի, կոշիկի, մետաղյա ամանեղենի և մի շարք այլ ապրանքների արտադրությունը։ Նկարագրված պատկերը հաճախ խախտվում էր կամայականությունների, կազմակերպված ջարդերի ու տարերային աղետների հետևանքով։ Սակայն տնտեսական կյանքն արագորեն մտնում էր հունի մեջ, որովհետև, ինչպես նշում է

---

[1] Տե՛ս Новичев А. Д., Очерки экономики Турции..., էջ 108.

[2] „Milliyet", 11. 09. 1970.

[3] Քոչաշ Սադի, նշվ. աշխ., էջ 68։

Ֆ. Գրինը, հայերը ժրաջան ու աշխատասեր են, սիրում են իրենց հայրենիքը և կոչված են խաղալու կարևոր դեր՝ Արևմտյան Ասիայի քաղաքական և նյութական վերածննդի գործում»[1]։ Զարգացման բնականոն ընթացքը պետք է ցույց տար նման կանխագուշակման իրավացի լինելը, եթե չլիներ սուլթանական կառավարության բռնի միջամտությունը։

Թուրքիայի տնտեսության մեջ զգալի դեր կատարող այլազգի բուրժուազիայի երրորդ խումբը հրեական բուրժուազիան էր։ Գրականության մեջ եղած տարբեր կարծիքների առկայությունը մեզ ստիպում է ավելի մանրամասն ներկայացնելու հրեական վերնախավի և, մասնավորապես, ազգային բուրժուազիայի դիրքորոշումը Օսմանյան կայսրության ճգնաժամի խորացման ժամանակաշրջանում։

Ազգային կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների խորհրդով հրեական բուրժուազիան աշխատում էր չմասնակցել երկրի քաղաքական անցուդարձին և ձգտում էր զբաղվել միայն տնտեսական գործունեությամբ։ Ռուսաստանի սիոնիստների օրգան «Ռասսվետ» («Արշալույս») շաբաթաթերթի 1908 թ. աշնան համարներից մեկում հրեաների նշված վարքագծի անհրաժեշտությունը մեկնաբանվում էր այսպես. «Մյուս բոլոր ազգությունները, բացի թուրքերից և հրեաներից, երազում են ոչ թե Թուրքիան բարեփոխելու և վերածնելու, այլ այն տրոհելու մասին»[2]։ Թուրք վերնախավի և հրեական բուրժուազիայի շահերի միասնության վերաբերյալ ավելի որոշակի կարծիք էր հայտնում սիոնիստական շարժման պարագլուխներից մեկը՝ Վ. Ժաբոտինսկին։ Նա գտնում էր, որ հրեաների, կամ ավելի ճիշտ սիոնիստների, ազգային քաղաքականությունը «պետք է ունենա պարզ արտահայտված թուրքամետ բնույթ։ Նրա ղեկավարող սկզբունքը պետք է լինի կայսրությունում թուրք տարրի քաղաքական գերակշռությունը պահպանելը և վերջինիս ու հրեության միջև բարի փոխհարաբերությունների ամրապնդումը»[3]։ Դիվանագիտական մի փաստաթղթում ևս խոսվում է հրեական բուրժուազիայի այդ ձգտման մասին՝ հնարավորին չափ խուսափել կայսրության այլ ժողովուրդների վե-

[1] Сборник «Положение армян в Турции...», стр. 312.

[2] «Рассвет», СПб., 1908, № 6, стр. 10.

[3] Նույն տեղը, 1910, էջ 6—7։

ճերին խառնվելուց և չխաղալ որևէ քաղաքական դեր։ «Հրեաները,— կարդում ենք այդ փաստաթղթում,— բոլորի հետ ապրում են որպես բարեկամներ և զբաղվում են միմիայն առևտրով ու արհեստներով»[1]։ Նման հավաստումների ճշմարտությանը հավատալը, անշուշտ, կլիներ պարզամտություն։

Սիոնիստ տեսաբաններից Մ. Նորդաուն «բարեկամ» լինելու անհրաժեշտությունը հիմնավորում է ուղղակիորեն նրանով, որ Պաղեստինը գտնվում է Թուրքիայում և այդ պատճառով էլ հրեաները պետք է աշխատեն ապրել «Պաղեստինում կամ գոնե Թուրքիայում», անելով ամեն ինչ, որպեսզի ապահովեն «օսմանյան ժողովուրդներում ու կառավարության բարյացակամությունը» և հեռու մնան այնպիսի գործերից, որոնք կարող են նրանց մեջ «թշնամական զգացում մը առաջացնել հրեաներուն հանդեպ»[2]։

Ուրիշ ժողովուրդների հաշվին իրենց դասակարգային և ազգային շահերի պաշտպանության այս գիծը չափազանց բնորոշ է սիոնիստական շարժմանը մինչև օրս։ Իսկ անցյալ դարի վերջին շարժման ղեկավարները օգտագործում էին ամեն միջոց, փորձելով իրականացնել իրենց երկու հիմնական նպատակները՝ ձեռք բերել Պաղեստինը և հունական ու հայկական բուրժուազիային ասպարեզից դուրս բերելու դեպքում, կայսրությունում հրեական կապիտալի համար ապահովել տիրապետող դիրքեր։

Պաղեստինում ազգային օջախ ստեղծելու համար չափազանց լայն դիվանագիտական, քաղաքական ու գործնական պայքար էին ծավալել սիոնիզմի պարագլուխները սկսած 1890-ական թթ.։ Նրանք օգտագործեցին նույնիսկ հայկական կոտորածները և կատարված բարբարոսությունների հետևանքով Թուրքերի համար Եվրոպայում ստեղծված անբարենպաստ հասարակական կարծիքը՝ Աբդուլ Համիդի և նրա կառավարության վրա ճնշում գործադրելու համար։ Ինչպես ցույց է տրված արաբ պատմաբան Մարվան Բուհեյրիի «Թեոդոր Հերցլը և հայկական հարցը» աշխատության մեջ, սիոնիզմի առաջնորդը խոստացել էր ամեն միջոց գործադրել, որպեսզի լռեցնի եվրոպական մամուլը և համոզի հայկական կոմիտեների ղեկա-

---

[1] АВПР, Новый турецкий стол, д. 7601, 1910, л. 12.

[2] *«Ազատամարտ», 1911, № 656։*

վարներին՝ համակերպվելու թուրքական ռեժիմի հետ[1]։ Փոխարենը նա ակնկալում էր հեշտությամբ լուծել Պաղեստինի հարցը։ Տարիներ շարունակ իր մոտ ու հեռու բարեկամների օգնությամբ նա ձգտում էր հասնել այդ նպատակներին։ Այնուհետև քաղաքական գործիչների ու դիվանագետների միջոցով Թ. Հերցլն աշխատում էր արժանանալ Աբդուլ Համիդի ընդունելությանը և դեմ դիմաց քննարկել իրենց հետաքրքրող խնդիրները։ Այդ նպատակով նա 1896 թ. հունիսին ժամանում է Կ. Պոլիս։ Մ. Բուհեյրիի օգտագործած աղբյուրներում ամենայն մանրամասնությամբ նկարագրվում է սուլթանի գործակալի հանդիպումը Թ. Հերցլի հետ գնացքի վագոն-ռեստորանում։ Հերցլը նրան առաջարկում է Պաղեստինի համար վճարել «20 միլիոն ֆունտ, որից երկու միլիոնը տրվելու էր անմիջապես՝ որպես ավանս..., իսկ 18 միլիոնը՝ թուրքական կառավարության պարտքերի վարչության վերահսկիչ հանձնաժողովից ձերբազատվելու նպատակով», ավելի ուշ[2]։

Սուլթանը Հերցլին չընդունեց և գործարքը չկայացավ։ Սակայն սիոնիստների պարագլուխն իր մտքից չհրաժարվեց։ Երիտթուրքերի հեղաշրջումից հետո սուլթանի հետ նորից վերսկսվեցին բանակցությունները։ Երկրորդ ձախողումից հետո սիոնիզմի ղեկավարները փորձեցին ընդհանուր լեզու գտնել երիտթուրքերի հետ։ Վերջիններիս նրանք խոստացան օգնել հունական և հայկական բուրժուազիայի դիրքերը խարխլելու գործում և հրեական բուրժուազիայի գործունեությունը ենթարկել «վերածնված Թուրքիայի» շահերին[3]։ Իհարկե, հրեաները զգալի դեր էին կատարում երկրի տնտեսության մեջ։ Նրանք որոշակի ավանդ դրեցին Պաղեստինում և հարևան շրջաններում պլանտացիոն տնտեսություններ ստեղծելու, ցիտրուսի ու խաղողի այգիներ տնկելու և գյուղատնտեսական այլ կուլտուրաներ մշակելու կարևոր գործում[4]։ Առևտրի երեք քառորդն այս շրջաններում կատարվում էր հրեաների միջոցով։

Այդպիսով, կայսրության բազմազգ բուրժուազիան իր կազ-

---

[1] Տե՛ս գիտաինֆորմացիոն բյուլետենի «գ» մատենաշար, 1979, № 7 (39), էջ 6։

[2] Նույն տեղը, էջ 25։

[3] Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 34։

[4] Տե՛ս «Плантационное хозяйство в Палестине», Пг. 1919, стр. 4—5.

մավորման ընթացքում ոչ միայն դասակարգային իմաստով միասնական ուժ չէր ներկայացնում, այլ, ընդհակառակը, տրոհված էր ազգային խմբերի։ Նրանցից ամեն մեկը, ընդհանուր դասակարգային նպատակներին զուգահեռ, ուներ իր ազգային նեղ խնդիրները և հաճախ նրա պայքարի սուր ծայրը ուղղված էր ոչ թե օսմանյան ֆեոդալիզմի դեմ, այլ հիշյալ խնդիրների իրագործմանը։ Միասնության բացակայությունը թուլացնում էր պայքարը ֆեոդալական կարգերի դեմ, դանդաղեցնում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման պրոցեսը, հնարավորություն էր ստեղծում կայսրության վերնախավի համար՝ հաջողությամբ շարունակելու «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը։

Ներկայացրած փոխհարաբերությունների պատկերն արտացոլվում էր նաև երկրի բուրժուազիայի տնտեսական գործունեության մեջ։ Եթե վերցնելու լինենք կայսրության տնտեսական ներքին կյանքը (արտաքին հարաբերությունների մասին դեռևս խոսք կլինի), ապա ինչպես ասվեց, նրանում գլխավոր դերը պատկանում էր հունական կապիտալին։ Մեր կատարած ամփոփումները, որոնք հենվում են 1912 թ. պաշտոնական տարեգրքի[1] և գրականության ու մամուլի տվյալների վրա, մեզ բերել են այն եզրակացության, որ արդյունաբերության, արհեստների և ներքին առևտրի մոտ 50 %-ը կենտրոնացված էր հույն ազգային բուրժուազիայի ձեռքում։ Նա էր կատարում ֆինանսական գործարքների ավելի քան 40 %-ը։ Երկրորդ տեղը պատկանում էր հայ ձեռնարկատերերին, վաճառականներին ու դրամատերերին, որոնք հսկում էին արտադրության ու առևտրի 26 %-ը։ Հրեաները, լևանտինցիները և այլք կատարում էին առևտրի ավելի քան 19 %-ը և արտադրության 10 %-ը։ Իսկ թուրք բուրժուազիան երկրի տնտեսության մեջ գրավում էր միայն չորրորդ տեղը։ Նրա ձեռքով կատարվում էր առևտրի մոտ 15, արտադրության՝ 12 %-ը միայն։ Թուրք առևտրականներն իրականացնում էին անասունների վաճառքի մեծագույն մասը և գորգերի վաճառքի 40 %-ը[2]։

---

[1] Annuaire Oriental, Commerce, Industrie. Administration. Magistrature de L'Empire Ottoman, fondé en 1880, Constantinople, 1912.

[2] Տե՛ս **Инджикян О. Г.**, **Буржуазия Османской империи...**, էջ **212—214.**

Հաշվումները նաև ցույց են տալիս, որ կայսրությունում աշխատող մասնագետների ավելի քան 86 %-ը կազմում էին ոչ թուրքերը։ Բայց, իրավաբանների համարյա 40 %-ը թուրքեր ու մահմեդականներ էին։ Մեր դարասկզբին վերջիններիս թիվը նկատելիորեն աճում էր ինժեներների ու տեխնիկների, բժիշկների ու դեղագործների, ֆինանսիստների ու տնտեսագետների շարքերում։

Բերված փաստական տվյալները անհերքելիորեն հանգեցնում են այն եզրակացության, որ այլազգի բուրժուազիան կայսրության տնտեսական կյանքում խաղում էր վճռական դեր։ Օբյեկտիվ ուսումնասիրողների մոտ այս բանը կասկած չի հարուցում։ Վեճի առարկա է, սակայն, հիշյալ ոլորտում երկրի բուրժուազիայի առանձին խմբերի դերի և ազդեցության խնդիրը։ Կան հեղինակներ, որոնք համարյա թե հավասարության նշան են դնում ընդհանրապես այլազգի (հույն, հայ, հրեա) բուրժուազիայի և կոմպրադորների գործունեության միջև։ Ընդգծվում է վերջիններիս ազգային պատկանելությունը և նրանց կապը օտար կապիտալի հետ։ Չինական պարսպով բաժանվում է նրանց դերը ներքին տնտեսական կյանքում և միջնորդ առևտրում։ Չնայած կայսրության բուրժուազիան բազմազգ էր ու տրոհված, նրա առանձին խմբերը, այնուամենայնիվ, որոշ կապեր ունեին գործնական ասպարեզում, մեկը մյուսի հետ ինչ-որ չափով գործակցում էին և նրանց աշխատանքային առօրյան ընթանում էր մշտական փոխազդեցությունների ու շահերի միասնությունների և հակասությունների բաշխման ու համակեցության պայմաններում։ Այս միտքը փորձենք պարզաբանել կոնկրետ օրինակներով։ Նախ, անհրաժեշտ է ընդգծել, որ կոմպրադորների շարքերում հույն, հայ, հրեա բուրժուազիայի ներկայացուցիչների կողքին, որոնք ժամանակին բացարձակ մեծամասնություն էին կազմում, շուտով երևացին նաև թուրք ու մահմեդական բուրժուազիայի ներկայացուցիչներ։ Ահա թե ինչու քննադատությունը, որն ուղղված է կոմպրադորական բուրժուազիայի գործունեությանը, չպետք է հասցեագրել միայն ոչ թուրքերին։

Ամփոփելով երիտթուրքերի տնտեսական գործունեության մասին իր տեսակետները, պրոֆ. Ա. Միլլերն ընդգծել է, որ նրանք «գլխավորապես ձգտում էին մասնակցել շահութաբեր

կոմպրադորական առևտրին»[1]։ Նրանք աշխատում էին հարըստություն դիզել՝ ձեռք բերելով հողեր, սուլթանի պալատականների և երկրից արտաքսված խոշոր պաշտոնյաների ունեցվածքը, կուտակած արժեքները՝ «նոր տերերը,— գրում էր սուլթանի նախկին գործակալներից Խաջեթլաշեն,— փնտրում էին մեծ մասամբ թաքցրած հարստություններ»[2]։ Օգտագործելով իրենց իշխանությունը և օրենքները, երիտթուրքերը հարստանալու իրենց մարմաջին աշխատում էին հագուրդ տալ։ Արխիվային մի փաստաթղթի համաձայն 1909 թ. Սուլեյմանիայի շրջանում երիտթուրքական իշխանությունները փորձ արեցին պայքարելու «քրդական շեյխերի ու աղալարների սանձարձակ գործողությունների դեմ»։ Սակայն համապատասխան ուժեր չունենալով, նրանք զիջեցին, բայց ստիպեցին ավազակներին իրենց տալ «թալանած հարստությունների մի մասը, որով ձգտում էին լրացնել սեփական գրպանը։ Այդ ձևը նրանք գործադրում էին իրենց բոլոր ախոյանների հանդեպ, առանց հաշվի առնելու ազգային պատկանելությունը»[3]։ Նույն փաստաթղթի տվյալների համաձայն, նշված ուղիով հարստանում էին մեծ մասամբ «նոր կարգի» ներկայացուցիչները, այսինքն՝ երիտթուրքերը։ «Նոր հարստացած այդ մարդիկ, նշված է փաստաթղթում, սերում են բնակչության ցածր խավերից և հարստություն են դիզում թուրքական այլասերված ու ծախու վարչության հովանավորության շնորհիվ»։ Որպես օրինակ, Բաղդադի նոր հարստացած խավից ներկայացվում են երկու անձնավորություն՝ Հաջի Մահմեդ փաշա Սապոնչին, որը եղել էր նահանգապետերի և այլ պաշտոնյաների գործակալն ու կամակատարը և ոմն Սաադուլլա՝ «նախկինում մաքսանենգ, գող, իսկ հիմա կապալառու՝ զորքի մատակարար, պետական ու քաղաքային գույքերի վարձակալ, հարուստ տնատեր»[4]։

Ստեղծված պայմաններում բացի նշված ուղիներով հարըստանալուց, վերնախավի համար ամենափորձված ու շահութաբեր ուղին օտար կապիտալի հետ ունեցած կապերն էին։ Այդ նպատակին հասնելու համար, նշում է սովետական արևելագետ

---

1 «Всемирная история», т. VII, М., 1960, стр. 357.
2 Хаджетлаше М. Б., Убийца на троне, Пг, 1919, стр. 6.
3 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, л. 233.
4 Նույն տեղը, թ. 231։

Իրանդուստը, երիտթուրքերը հիմնել էին 9 մոնոպոլիստական կազմակերպություններ[1]։ Ըստ մեր հաշվումների, նման 8 կազմակերպություններ ստեղծվել էին բանկերի և երկաթուղիների ցանցում, և մոտ 20-ը՝ օտար կոնցեսիաների սիստեմում։ Դրանցից հինգը գտնվում էր երիտթուրքական ղեկավարների անմիջական հսկողության տակ, որոնցից երեքը շոգենավային ընկերություններ էին, մեկը՝ 1909 թ. Կ. Պոլսում հիմնված գորգի արտադրություն, իսկ մյուսը՝ նույն ժամանակ կազմակերպված թուրքական ազգային բանկն էր։ Յոթ այլ ընկերություններում երիտթուրքերը ունեին մեծ ազդեցություն։ Հիշատակության արժանի է այն փաստը, որ եթե սուլթանական իշխանությունները 60 տարվա ընթացքում թույլատրել էին կազմակերպել մոտ 50 օտարերկրյա կամ խառն ընկերություններ, ապա երիտթուրքերը միայն երեք տարում հնարավորություն էին տվել ստեղծելու 25 նման կազմակերպություններ[2]։ Շուտով նրանք դարձան հիշյալ ընկերությունների, ձեռնարկությունների, բանկերի ու այլ հիմնարկների պրեզիդենտ, փոխպրեզիդենտ, կառավարիչ, դիրեկտոր և այլն, ակտիվորեն մասնակցելով կապիտալիստական գործառնություններին կամ հանդես գալով որպես կապիտալիստ-ձեռնարկատեր։ Այսպես, 1912 թ. Թուրքիայի ազգային բանկի ղեկավարության մեջ Գալուստ Գյուլբենկյանի անվան կողքին մենք տեսնում ենք Ջեմալ Ահմեդի, Հուսեին Ջահիդի (Յալչին), Ռաշիդ Սադի բեյի և ուրիշների ազգանունները։ Շինանյութերի արտադրության ընկերությունում խոշոր կոմպրադոր-կապիտալիստներ՝ հույն Ն. Մավրոկորդատոյի և հայ Ս. Սպարտալիի հետ աշխատում էր երիտթուրքերի պարագլուխներից է. Կարասոն։ «Շիրքեթ-ուլ հայրիե» շոգենավային ընկերության կառավարիչներից էին Զիա փաշան ու Թալաաթ բեյը, քաղաքային տրանսպորտի ընկերություններում՝ Ջեմալը, Նուր բեյը, Օսման Ադիլ բեյը և այլ անձնավորություններ, 1909 թ. հիմնված արդյունաբերության ու առևտրի ընկերությունում՝ Ջելալէդին Արիֆ բեյը։ Նավահանգիստների ու ծովափնյա շինարարությունների ընկերություններում փայատեր էր Սաիդ փաշան։ Ժամանակի ընթաց-

---

[1] Տե՛ս Ирандуст, Движущие силы кемалистской революции, М.—Л., 1928, էջ 192.

[2] Տե՛ս Annuaire Oriental..., 1912. p. 167—192.

քում ակցիոներական ընկերությունների 60 %-ի ղեկավարության մեջ միայն թուրք բուրժուազիայի ներկայացուցիչներ։ Վիճակագրության և փաստական նյութի պակասը առայժմ թույլ չի տալիս վերլուծելու առանձին թուրք կոմպրադորների գործունեությունը։ Սակայն կողմնակի ու բազմաթիվ այլ փաստեր ցույց են տալիս թուրքական բուրժուազիայի աճող ակտիվությունը երկրի տնտեսական կյանքում և, հատկապես, արտաքին առևտրում։ Արդեն 1907 թ. վերջին ստեղծվել էր առևտուրը կարգավորող և գործող առևտրական օրենսդրությունը վերանայող հանձնաժողով, որի մեջ միայն ութ բարձրաստիճան անձնավորություններ[1]։ Բազմաթիվ թուրք կապիտալիստներ իրենց դրամը տրամադրում էին գործարաններ կառուցելու, ճանապարհաշինության, հաղորդակցության միջոցների զարգացման և նման այլ միջոցառումներ կազմակերպելու համար։ Տրապիզոնում մի շարք թուրք մեծահարուստներ, ձեռք բերելով մոտ տասը մարդատար մեքենա, հիմնեցին տրանսպորտային ընկերություն։ Իզմիրում և շրջանում գտնվող հինգ բանկեր և առևտրաարդյունաբերական պալատը Բալկանյան պատերազմներից հետո անցան երիտթուրքական ղեկավարների հսկողության տակ[2]։ Բացի այդ, Իզմիրի թուրք և մահմեդական վաճառականները հասան այն բանին, որ գավառի առևտրականները միայն նրանց էին ուղարկում իրենց ապրանքը, նրանք էլ այն հանձնում էին օտարերկրյա արտահանողներին[3]։ Այդ տեղաշարժերին որոշ չափով նպաստեցին ներմուծվող, հատկապես հունական, ապրանքների բոյկոտի մի քանի կամպանիաները և երիտթուրքերի շովինիստական պրոպագանդան։ Թուրք կոմպրադորները հետզհետե լայնացրին իրենց գործունեության շրջանը և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին համարյա ամբողջովին իրենց մրցակիցներին դուրս մղեցին կայսրության շուկաներից։ Այդպիսով, կոմպրադորական բուրժուազիան, որի հիմնական տարրերը սկզբում հույն, հայ, հրեա առևտրականներն ու դրամատերերն էին, մեր դարասկզբին համալրվում էր թուրք և մահմեդական գործարար մարդկանցով, պաշտոնյաներով ու դրամատերերով։ Վերջիններիս քանակական աճը կա-

---

[1] Տե՛ս «Երկրի ձայնը», 1908, № 3, էջ 10։

[2] „Milliyet", 11 ve 12. 09. 1970.

[3] Տե՛ս նույն տեղը, 13. 09. 1970։

տարվում էր չափազանց արագ տեմպերով և իշխանությունների գործադրած բռնի միջոցների օգնությամբ նրանք կարողացան երկու տասնյակի ընթացքում իրենց ախոյաններին դուրս մղել նշված ասպարեզից։

Կոմպրադորական բուրժուազիայի առանձին խմբերի գործունեության և դերի մասին գրականության մեջ առկա է վիճելի մի հարց ևս։ Շատ հեղինակներ տարբերություն չեն դնում այլազգի բուրժուա և կոմպրադոր հասկացողությունների մեջ՝ Իսկ քանի որ վերջինիս շահերը դիտվում են միմիայն օտար կապիտալի շահերի հետ համակցված, ապա հաճախ մոնոպոլիստական կապիտալի շահերի պաշտպան էր հայտարարվում Օսմանյան կայսրության այլազգի ամբողջ բուրժուազիան։ Տիրապետող տեսակետը հետևյալն է. կոմպրադորական բուրժուազիայի «ամբողջ գործունեությունն ամուր կերպով կապվում էր օտար կապիտալի գործունեության հետ»[1], և նրա շահերը «միահյուսվում էին օտար կապիտալի շահերին»[2]։ Տեսականորեն այս գնահատականները ճիշտ են և համապատասխանում են իրականությանը։ Բայց դրանք արմատապես բացառում են կոմպրադորական բուրժուազիայի գործունեության մեջ եղած դրական ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման վրա, վերջինս վերագրելով միայն ազգային բուրժուազիային և, այդպիսով բուրժուազիայի առանձին խմբերը խստորեն տարանջատում են իրարից։

Փաստական և վիճակագրական նյութերի պակասը, երբեմն նաև ընդունված տեսակետների հարցում տիրող դոգմատիզմը երևի հնարավորություն չեն տալիս ավելի համարձակ մեկնաբանություններ անելու և ընդհանրացումներ կատարելու այս կարևոր գործնական ու տեսական խնդրի վերաբերյալ։

Խոսելով կապիտալի ձևավորման ուղիների մասին, Կ. Մարքսը նշում էր, որ նրա հիմքը հանդիսացել է առևտրական և վաշխառուական կապիտալը։ Կապիտալի կուտակման ձևերի ու պայմանների մասին խոսելիս Կ. Մարքսը գտնում է, որ այդ պրոցեսին կարող են մասնակցել նույնիսկ արհեստներից,

---

[1] Вдовиченко Д. Н., Национальная буржуазия Турции, М., 1962, стр. 8.

[2] Алибеков И. В., Государственный капитализм в Турции, М., 1966, стр. 14.

մանր հողատիրությունից և աշխատանքի այլ ձևերից ստացվող եկամուտները[1]։ Հիշյալ ձևերով տեղի ունեցող կապիտալի կամ դրամի կուտակումները սկզբնական շրջանում իրականանում էին մինչկապիտալիստական շահագործման հիման վրա։ Ն. Տոդորովը կուտակման աղբյուրների շարքն է դասում վաշխառուական գործառնություններից ստացվող եկամուտները, քաղաքների կարավանսարայներից, խանութներից, տներից, բաղնիքներից որպես վարձ գանձվող գումարները, առևտրական շահույթը և այլն[2]։ Արտադրողական ուժերի զարգացումը XVII—XVIII դարերում, շարունակում է Ն. Տոդորովը, հանգեցրեցին «խոշոր կապիտալների կուտակմանն օսմաններին հպատակ ժողովուրդների՝ հույների, հրեաների, հայերի, բուլղարների, սերբերի և ուրիշների նորաստեղծ հարուստ խավերի ձեռքերում»[3]։

Հարկային սիստեմը ևս այլ պայմաններում պետք է հանդիսանար կուտակման աղբյուրներից մեկը, սակայն, ինչպես ասվեց, ստացվող եկամուտները ծախսվում էին պարազիտ դարձած վերնախավի կարիքները բավարարելու համար և չէին կարող օգտագործվել արտադրության մեջ։ Ներկայացված պատմական գործոնների և կայսրության զարգացման յուրահատկությունների պայմաններում կարևոր նշանակություն ուներ կոմպրադորական կապիտալը որպես կուտակման զգալի աղբյուր։ Նրա ազդեցությունը, մեր կարծիքով, նշանակալից էր հատկապես զարգացման այն շրջանի համար, երբ Թուրքիան դեռևս կիսագաղութային վիճակում չէր գտնվում։ Միջնորդ առևտուրը կապիտալիստական հարաբերությունների հաստատման տեսակետից վճռական նշանակություն ունեցավ կայսրության հունական շրջաններում դեռևս XVIII դարում։ Հյուսիսային Հունաստանի Ամբելակի փոքրիկ քաղաքը դարձավ տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն, շնորհիվ առևտրական կապիտալի բարձր զարգացման՝ արդեն XVII դարի վերջին և XVIII դարի սկզբին, երբ այն սկսեց փնտրել արտադրության մեջ ներդրվելու հնարավորությունն[4]։

[1] Տե՛ս Маркс К., Формы, предшествующие капиталистическому производству, М., 1940, էջ 41, 43.

[2] Տե՛ս Тодоров Н., Балканский город..., էջ 181.

[3] Նույն տեղը, էջ 182։

[4] Նույն տեղը, էջ 252։

Նույնը տեսնում ենք Բալկաններում, երբ, օրինակ, առևտրական և արդյունաբերող Գյումուշգերդան հայտնի ընտանիքն անցյալ դարի առաջին կեսին ծավալել էր չափազանց լայն արդյունաբերական և առևտրական գործունեություն։ Միգուցե ուղղակի իմաստով Աթանաս Գյումուշգերդանը և նրա զավակները կոմպրադորներ չէին, բայց նրանց մոտ տեղի ուներ առևտրական ու արդյունաբերական օպերացիաների մշտական զուգորդում»[1]։

Որպեսզի ներքին շուկայում չկորցնեն իրենց ազդեցությունը, Գյումուշգերդանի ժառանգները 1850—1860-ական թթ. եվրոպական երկրներից բերեցին մեքենաներ ու սարքավորումներ և նորոգեցին իրենց հիմնական կապիտալը։ Պատկերն ամբողջացնելու համար պետք է ասել նաև, որ այդ ընտանիքը ձեռք էր բերել կալվածներ ու ագարակներ, Բալկանյան թերակղզու քաղաքներում և Ստամբուլում ուներ բնակելի շենքեր, խաներ, արհեստանոցներ, խանութներ ու պահեստներ։ Մաքուր եկամուտների մոտ 20 %-ը նա ստանում էր ալրաղացներից[2]։

Կայսրության ասիական մասի կոմպրադորական կապիտալը ևս օգտագործվում էր ոչ միայն միջնորդ առևտրում և հանուն միայն կոմպրադորական կապերի։ Անկասկած է, որ կապիտալի բնական տենդենցը շահն է և իր գործունեության սահմանների ընդլայնումը։ Ելնելով այդ հիմնական նպատակից, կոմպրադորները, անկախ ազգությունից ու դավանանքից, իրենց ջանքերն ու կապիտալը ներդնում էին տնտեսության շահավետ բնագավառներում և օբյեկտիվորեն նպաստում երկրի արտադրողական ուժերի զարգացմանը։

Հայ մեծահարուստ սարաֆ Մկրտիչ ամիրա Ճեզայիրլյանը (Ճեզայիրլի) 1850 թ. հանձն առավ Բուրսայի վիլայեթի մետաքսի մաքսերը, պայմանով, որ 1856 թ. պետական գանձարկղը մուծի 45 հազար անգլիական ֆունտ և կառուցի հինգ մետաքսամշակման ֆաբրիկաներ։ Այնուհետև, նրա տնօրինությանը հանձնվեց Իզմիրի մաքսերի գանձումը, որի գումարնե-

---

1 Тодоров Н., Зарождение капиталистических отношений в текстильном производстве Болгарии в первой половине XIX века, «Краткие сообщения института славяноведения АН СССР», 1958, № 23, стр. 86.

2 Того же автора, Балканский город..., стр. 242—243.

րը, համեմատած պալատական Հուսեին բեյի ղեկավարության ժամանակաշրջանի հետ, ավելացան երեք անգամ։ Նրան հանձնարարվեց հսկելու Կ. Պոլսի և ապա Կրետե կղզու մաքսատները։ Սակայն մահմեդական ավագանու դժգոհության և բանսարկությունների հետևանքով շուտով Մ. Ճեզայիրլյանը զրկվում է բոլոր պաշտոններից։ Խոստացած ֆաբրիկաներից նա հասցնում է կառուցել միայն չորսը։ Ի վերջո, Մկրտիչ ամիրային բանտարկում են և նրա ունեցվածքը գրավում։ Ըստ կազմած փաստաթղթերի, հարստության ընդհանուր գումարը հավասար էր մոտ 1,834 հազար լիրայի։ Այդ գումարի 8 %-ը (156, 250 լիրա) դրված էր առևտրի և 7 %-ը (147, 500) արդյունաբերության մեջ[1]։ Այդըն քաղաքի հինգ գործարաններից երկուսը՝ մեկը յուղի, մյուսը՝ բամբակի, մեր դարասկզբին պատկանելիս են եղել «պատվավոր վաճառականներեն Մ. էֆենդի Մերկերյանին»[2]։

Կոմպրադորական բուրժուազիայի խոշորագույն ներկայացուցիչներ Իբրանոսյան եղբայրներն իրենց մոտ 50 վաճառատներից բացի Ամասիայում հիմնել էին «մանարան ու մետաքսի հյուսվածքեղենի գործարան» և հանդիսանում էին «մանուսայի ամենամեծ գործարանատերերեն մեկը»[3]։

Մըրմըրյանը հիշատակում է միջնորդ առևտրի մի քանի տասնյակ խոշոր ներկայացուցիչների, որոնք Իբրանոսյանների նման զբաղվում էին դրամական-ֆինանսական գործերով, վարկավորում էին ձեռնարկատերերի ու վաճառականների, հիմնադրում էին կապիտալիստական, ֆերմերային տնտեսություններ, կառուցում ֆաբրիկաներ, գործարաններ, կազմակերպում և ֆինանսավորում էին դպրոցներ, տպարաններ, ակումբներ ու այլ մշակութային հիմնարկներ։ Հեղինակը բերում է Գյուլբենկյանների, Եսայանների, Պալյանների, Դադեյանների և այլոց անունները[4]։

Համաձայն նրա ընդհանրացումների, 7 խոշոր առևտրական տներ հիմնել էին բանկեր, 44 այլ միջնորդ առևտրականներ

[1] ԴԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, «Սարաֆ Մկրտիչ ամիրայի գործոց պատմությունը», էջ 5—3ա։

[2] «Բյուզանդիոն», 14.05.1903 թ.։

[3] Տե՛ս Սիմոնյան Գ. Ց., Հուշամատյան Պոնտական Ամասիո, էջ 634, 640։

[4] Տե՛ս Մ (ըրմըրյան) Ց. Գ., Թուրքահայոց հին վաճառականություն..., էջ 105, 116, 119։

վարկավորում էին արտադրական մի շարք ձեռնարկություններ, իսկ իրենք ունեին գյուղական ընդարձակ տնտեսություններ[1]։

Նշանակալից էր բուրժուազիայի այդ խմբի ներդրումը լեռնային արդյունաբերության, հաղորդակցության միջոցների, նավահանգիստների ու առանձին բնակավայրերի շինարարության մեջ։

«Բյուզանդիոնը» 1896 թ. վերջին հաղորդում էր Էրեյլիի ածխահանքերի շահագործման ընկերության կազմակերպման մասին, որի հիմնադիրը «կնկատվի Մ. Լեոնիտաս Զարիֆի և օսմանյան պանքային կողմե Մ. Կ. Օպուանս»[2]։ Այնուհետև թվարկված են յոթ հոգուց բաղկացած վարչության անդամները, որոնցից երեքը հույն էին, երկուսը՝ ֆրանսիացի, և երկուսը՝ իտալացի։ Ընկերությանը հանձնարարվել էր կառուցել նավահանգիստ, Էրեյլի—Զոնգուլդաղ երկաթուղագիծը և շահագործել դրանք։ «Դրամագլուխը,— գրում էր թերթը,— տասը միլիոն ֆրանկ, քսան հազար բաժիններե բաղկացած՝ յուրաքանչյուրը հինգ հարյուր ֆրանկ։ Ասկից զատ չորս միլիոն պարտաթղթեր ալ շրջաբերության պիտի հանվին երկու հազար բաժին հիմնադիրներու համար»[3]։ Շարադրվածից երևում է, որ ընկերությունը շահագործելու էր ոչ միայն երկրի բնական հարստությունները, այլև օգտագործում էր տեղական, զգալի մասով կոմպրադորական կապիտալը։ Ժամանակակից մամուլի էջերում կարելի է գտնել բազմաթիվ այլ փաստեր, երբ միջնորդ առևտրի միջոցով կուտակված դրամն օգտագործվում էր արդյունաբերության մեջ։ Երկաթեղենի խոշոր առևտրական Աստուր աղան, որին Կ. Պոլսում «Դեմիրջի բաշի» էին կոչում, իր կապիտալի մի մասը դրել էր լեռնարդյունաբերության մեջ[4]։

«Մանիսայի մեջ,— գրում էր «Բյուզանդիոնը»,— դրամատեր Հարենց էֆ. այդ քաղաքն էլեկտրականությամբ լուսավորելու համար գործարան մը պիտի հաստատե»[5]։

Մի խումբ հայ վաճառականներ, մուծելով 1000-ական լի-

---

[1] Տե՛ս «Բյուրակն», 1907, № 38, էջ 1405, № 39, էջ 1444։

[2] «Բյուզանդիոն», 19. 12. 1896։

[3] Նույն տեղը։

[4] Տե՛ս «Բյուրակն», 1907, № 35, էջ 1309։

[5] «Բյուզանդիոն», 13. 11. 1908։

րա, հիմնեցին 23.000 լիրա դրամագլուխ ունեցող ընկերություն, որը ձգտում էր «նպաստել թուրքական առևտրի և արդյունաբերության զարգացմանը»[1]։ Իսկ Կոնյայում Իլյաս Ջեխա անունով ոմն վաճառական բանկ էր հիմնել տեղական առևտրին և արտադրական հիմնարկներին օգնելու համար[2]։

Բերված օրինակները հիմք են տալիս պնդելու, որ կոմպրադորական կապիտալը չէր կարող օգտագործվել միայն միջնորդ առևտրի համար։ Նման սահմանափակ գործունեությունը, անկասկած, հակասում էր կոմպրադորական բուրժուազիայի շահերին և կապիտալի համընդհանուր տենդենցին՝ աճել և ներգրավել տնտեսության նորանոր բնագավառներ։ Ահա թե ինչու, որպես կանոն, Օսմանյան կայսրության կոմպրադորները, կառավարող շրջանների բարյացակամ վերաբերմունքի հետևանքով, և ելնելով սեփական շահերից, լայնորեն զբաղվում էին ֆինանսական ու արդյունաբերական գործունեությամբ։

Սակայն, չնայած ընդհանուր նպաստավոր պայմաններին, ոչ մահմեդական կամ այլադավան բուրժուա-կոմպրադորը, ինչպես ցույց տրվեց, ենթակա էր երկրում տիրող բոլոր կամայականություններին և կարող էր սնանկանալ մի քանի ժամվա կամ օրվա ընթացքում։ Օյա Սենջերը Թուրքիայում կապիտալի կուտակման համար անբարենպաստ պայմանների թվին է դասում կապիտուլյացիաները, մաքսային ցածր հարկադրումները, հաճախ տեղի ունեցող գույքի ու հարստությունների բռնագրավումները և անօրինականության մյուս դրսևորումները։ Այդ բոլորը, գրում է նա, «լրջորեն արգելակում էին հարստությունների կուտակումը, որը, առանց այն էլ, տնտեսական կառուցվածքի շնորհիվ, չափազանց դժվարացած էր»[3]։

Նման պայմաններում չի կարելի զանց առնել կոմպրադորական կապիտալը, որպես կուտակման կարևոր աղբյուրներից մեկը Թուրքիայում։ Խնդրի մյուս կողմը ևս չափազանց կարևոր է երկրի պատմական ճակատագրի համար։ Միջնորդ առևտրի ու տնտեսական լայն կապերի միջոցով իմպերիալիզմը խորտակում էր ամեն մի ազգային սահմանափակում։ Նա ստիպում էր սոցիալական բոլոր խմբերին, հատկապես բուրժուա-

[1] «Բյուրակն», 1906, № 7, էջ 167։
[2] Տե՛ս «Մշակ», 07. 04. 1910։
[3] Sencer Oya, Türk toplumunun tarihsel evrimi, s. 35.

գիայի ու նրա անբաժանելի մասը կազմող կոմպրադորներին՝ սպասարկել նաև միջազգային շուկան, բավարարել նրա պահանջները։

Ակտիվորեն մասնակցելով միջազգային առևտրին և անտեսական կապերին, խոշոր դրամատերերը և հարուստ վերնախավի այլ ներկայացուցիչներ, իրենց կուտակած գանձի մի մասը մտցնում էին շրջանառության մեջ։ Հետևաբար, բուրժուազիայի հիշյալ մասի կապիտալներն այս կամ այն չափով առևտրի, արդյունաբերության և հողագործության ֆինանսավորման աղբյուր էին թե երկրի ներսում և թե միջազգային առումով։ Կասկածից վեր է, որ կոմպրադորների գործունեության գլխավոր նպատակն արտաքին առևտուրն էր, երկրի ներքին բարիքների արտահանումը միջազգային շուկա։

բ. Տարբեր գործոնների ազդեցությունը

Արտաքին ուժեղացող կապերը նպաստեցին կայսրության կիսագաղութ դառնալու պրոցեսին և մեծ չափով ազդեցին նրա տնտեսական կյանքի համարյա բոլոր ոլորտների վրա։ Թուրքիան անցյալ դարի ընթացքում դարձավ հումքի աղբյուր և ընդարձակ շուկա՝ արևմտյան մոնոպոլիաների համար։ Օսմանյան կայսրության պատմության մեջ կատարված այդ վճռական շրջադարձը հանդիսացավ նրա անկման հիմնական պատճառներից մեկը։

Սակայն հսկայական կայսրության կիսագաղութ դառնալը նման չէր այլ մայրցամաքների ու խոշոր պետությունների գաղութացման պրոցեսին։ Համարյա ամենուր այն ընթացել է բռնի ուժով, զենք ու զորքով այդ երկրները գրավելու միջոցով։ Եվրոպական կապիտալը Օսմանյան կայսրության տարածքը մուտք գործեց այլ կերպ՝ այսպես ասած «խաղաղ ճանապարհով»։ Հիմնական ուղին, որով օտար կապիտալը ներհոսեց երկրի տնտեսության մեջ՝ առևտուրն էր։ Հանրահայտ է, որ դեռևս անտիկ շրջանում Փոքր Ասիան սերտ առևտրական կապերով կապված էր Միջերկրականի ու Սև ծովի կենտրոնների հետ։ Այդ ռեգիոնը յուրահատուկ կամուրջ էր Եվրոպայի և Ասիայի տնտեսական, մշակութային ու քաղաքական կապերի համար։ Վերլուծելով հին շրջանի պետությունների ու ժողովուրդների փոխհարաբերությունները՝ Կ. Մարքսը գրել է. «Փոքր

Ասիայի քաղաքները հին Հռոմին ամեն տարի դրամական տուրք էին վճարում։ Այդ դրամով Հռոմը նրանցից ապրանք էր գնում, և գնում էր բարձր գներով»[1]։ Այդ կապերը պահպանվեցին Հռոմի ու Բյուզանդիայի անկումից հետո նաև միջին դարերում։ Դրանք շարունակվեցին մինչև 1453 թ., երբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը, որից հետո առևտուրը խիստ նվազեց ու հասավ աննշան չափերի։ Վենետիկի և Ջենովայի հանրապետությունները կարողացան ինչ-որ չափով այն շարունակել։ Բանն այն էր, որ ռազմական բոլոր օկուպանտները Արևելքում, որոնց թվում նաև թուրքերը, առևտուրը համարում էին տնտեսության բնականոն վիճակը պահպանելու միջոց, առանց որի նրանք չէին կարող իրագործել իրենց առջև դրած խնդիրները։ Ահա այս պատճառով էլ օսմանյան սուլթաններն իրենց հզորության շըրջանում եվրոպական վաճառականներին տրամադրեցին հատուկ առանձնաշնորհումներ, որոնք նրանց հնարավորություն և իրավունք էին տալիս անխափան կերպով առևտուրը կատարելու կայսրության տարածքում։ Կ. Մարքսը գտնում էր, որ առևտուրը ու այլ կապերը մահմեդական երկրների հետ այդ շրջանում արիության խնդիր էին, «քանի որ ղուրանը ամեն մի օտարերկրացու հայտարարում էր թշնամի... Եվրոպական առաջին առևտրականները, որոնք ռիսկի դիմեցին առևտուր անելու այդպիսի ժողովրդի հետ, հենց այդ պատճառով աշխատում էին ապահովել անձամբ իրենց համար արտակարգ պայմաններ ու արտոնություններ, որոնք, սակայն, հետագայում տարածվեցին իրենց ամբողջ ազգի վրա։ Այսպիսին է կապիտուլյացիաների ծագումը»[2]։ Այդպես, 1535 թ. ծնվեց առաջին կապիտուլյացիոն պայմանագիրը Ֆրանսիայի հետ։ «Կապիտուլյացիաները,— շարունակում է Կ. Մարքսը,— դրանք կայսերական դիպլոմներ էին, հրովարտակներ՝ առանձնաշնորհումների մասին, որոնք Բարձր դուռը տալիս էր զանազան եվրոպական պետություններին, իրավունք վերապահելով այդ պետությունների հպատակներին՝ անարգել մուտք գործելու մահմեդական հողերը, այնտեղ զբաղվելու իրենց գործերով և կատարելու ծիսակատարություններ, համաձայն իրենց դավանանքի»[3]։ Հրովարտակները

---

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 23, стр. 173.

[2] Նույն տեղը, հ. 10, էջ 168։

[3] Նույն տեղը։

ներկայացնում էին մենաշնորհներ «միակողմանի տրամադըրված կառավարության կողմից, որը, հետևաբար, իր հայեցողությամբ կարող էր դրանք չեղյալ հայտարարել», որը Բարձր դուռը երբեմն իրագործում էր, «հրաժարվելով այնուհետև դրանք պահպանել»[1]։ Հետղհետե կապիտուլյացիաները ժամանակավոր արտոնություններից վերածվեցին օտար պետությունների ու նրանց հպատակների համար մշտական առանձնաշնորհումների և դարձան անհավասար պայմանագրեր, որոնք սուլթանը միակողմանի կերպով այլևս չէր կարող չեղյալ համարել։ Ձևական առումով հին փոխհարաբերությունները մնացին և նույնիսկ արտաքնապես ավելի կանոնավորվեցին։

Այդպիսով, սովորույթ դարձած տնտեսական կապերը խընդրո առարկա շրջանների ու ժողովուրդների միջև մի կողմից, եվրոպական երկրների տնտեսական հզորությունը և նոր շուկաներ գտնելու նրանց աճող պահանջը, մյուսից, կազմեցին «խաղաղ ներթափանցման» օբյեկտիվ հիմքերը։

Օտար կապիտալի կողմից «խաղաղ ճանապարհով» երկրի տնտեսական բարձունքները գրավելու գործում չափազանց մեծ դեր կատարեցին նաև սուբյեկտիվ գործոնները։ Ամենից առաջ, կայսրության վերնախավը շատ շուտով հասկացավ, որ արտաքին առևտուրը հարստանալու բավական կայուն և նշանակալից աղբյուր է։ Այդ պատճառով էլ սուլթանը և մյուս կառավարիչները երբեք արգելքներ չհարուցեցին արտաքին առևտրի աճի ճանապարհին և լրջորեն չմտածեցին անգամ վարելու ամենուր փորձված պրոտեկցիոնիզմի քաղաքականություն՝ հօգուտ ներքին առևտրի ու արդյունաբերության շահերի։ Ընդհակառակը, որքան ուժեղացավ օտարերկրյա կապիտալի ազդեցությունը, այնքան սուլթանը, մեծ ու փոքր իշխանավորներն ու կայսրության վերնախավն ընդհանրապես, ավելի հեշտ զիջեցին իրենց դիրքերը։ Պ. Չիխաչևն արձանագրում է, որ արդեն 1858 թ. Թուրքական կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում «ամեն անգամ դիմելու օտարերկրացիների օգնությանը՝ վարչական կամ ֆինանսական միջոցառումներ ձեռնարկելիս, որոնց իրականացումից նա հույս ունի քաղելու օգուտներ»[2]։

---

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 10, стр. 169.

[2] Чихачев П. А., Великие державы и восточный вопрос, стр. 116—117.

Թուրք մտավորական ու պետական գործիչ Ահմեդ Միդհատը իր «Հեղափոխության հիմունքները» աշխատության մեջ զետեղած բազմաթիվ փաստաթղթերում ցույց է տալիս, թե ինչպես սուլթան Աբդուլ Ազիզը «փոխառության պայմանագիր կնքելիս նվերներ էր ընդունում..., ինչպես նա կամավոր կերպով ենթարկվում էր արտաքին ազդեցությանը և այլն»[1]։ Զիջումների ուղին հասցրել էր մաքսատների տուրքերի գանձումը օտարների հսկողության տակ դնելուն, որի հետևանքով գանձվող գումարները ավելացրել էին 1,5—2 անգամ։ Փոխարենը լայնորեն բացվել էին դռները օտար կապիտալի ներհոսքի համար։

1838—1846 թթ. ընթացքում Անգլիայից ու Ֆրանսիայից հետո Թուրքիայի հետ առևտրական պայմանագրեր կնքեցին Ռուսաստանը և մեկ տասնյակից ավելի եվրոպական երկրներ։ Այդ պայմանագրերը կայսրության տնտեսական կախվածությունը պաշտոնական կերպով ճանաչելու առաջին լուրջ քայլերն էին։ Դրանց հետևեցին ներմուծվող (ինքնարժեքի 5—8 %-ը) և արտահանվող (12 %-ը) ապրանքների հարկադրումներ, որոնք անասելի ցածր էին և, կայսրության գոյության տարիներին մնացին գրեթե նույն մակարդակին։ Սկզբնական շրջանում գնումները կատարում էին տեղացի վաճառականները, որպես արտասահմանյան ընկերությունների գործակալներ կամ ներկայացուցիչներ։ Սակայն XIX դարի վերջից օտարներն իրենք էին տեղերում կատարում առուծախը և վճարում համապատասխան արժեքը։ Հաճախ բերքը գնում էին դեռևս գարնանը, երբ այն կարելի էր ձեռք բերել ավելի էժան գներով։ Երբեմն էլ օգտվում էին գյուղացու անելանելի վիճակից ու կարիքից, քիչ տալիս էին ձմռանը կամ գարնանը և շատ ստանում՝ աշնանը։ Օտար ընկերությունները հենվելով իրենց փորձի վրա, նախապես պայմանավորվում էին վաճառքի ձևի ու վճարելիքի, ապրանքի տեղափոխման մասին և աշխատում էին ձեռք բերել մենաշնորհ իրավունքներ՝ տվյալ ապրանքը գնելու և տեղափոխելու գործում։ Բանը հասել էր այնտեղ, որ տեղացի արտադրողները և վաճառականները գների մասին «իրենց խոսքն ասելու իրավունք չունեին»[2]։ Կապիտուլյացիաների ընձեռած իրավունքների համաձայն օտարերկրացիները ենթակա չէին

---

[1] ЦГВИА. ф. 401, 1886, д. 10, л. 62.

[2] „Milliyet", 12. 09. 1970.

տեղական օրենքներին ու դատարաններին։ Նրանց երկրները ներկայացնող դիվանագետներն ու համապատասխան մարմինները էին կատարում այդ պարտականությունները, որպես կանոն, պաշտպանելով իրենց պետությունների հպատակներին։ Դեռ ավելին, վերջիններիս գործունեությանն իրենց միջնորդությամբ նպաստում էին տասնյակ դիվանագիտական, տնտեսական, կուլտուրական, գիտական ու քաղաքական կազմակերպություններ, որոնք Օսմանյան կայսրությունում հիմնել էին օտար պետությունները։ Դրանք ունեին նաև իրենց հատուկ հաղորդակցության ու կապի միջոցները։ Սկսած 1870-ական թթ., այդ կազմակերպությունների շարքը մտան նաև Կ. Պոլսում կազմակերպված առևտրական պալատները։ Նրանցից առաջինը 1870 թ. հիմնեց Ավստրիան։ Դրանից ութ տարի անց միայն ստեղծվեց օսմանյան առևտրական պալատը։ Հետագա 20 տարիների ընթացքում իրար ետևից հիմնադրվեցին Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի և այլ պետությունների պալատները։ Ազգեցության ոլորտն ընդլայնելու նպատակով այդ պալատներն աշխատում էին իրենց գործունեության մեջ ներգրավել տեղացի ձեռնարկատերերի, պաշտոնյաների և, ընդհանրապես, հպատակների։ Անգլիական պալատը, օրինակ, կազմված էր անդամների ընդհանուր ժողովից և 9 դիրեկտորների խորհրդից։ Պալատի անդամ կարող էր դառնալ «ամեն մի բուն անգլիացի կամ բրիտանական հպատակ դարձած անձնավորություն, որը Թուրքիայում ունի որոշակի զբաղմունք, ինչպես նաև անգլիական առևտրական ֆիրմայի ներկայացուցիչ հանդիսացող ամեն օտարերկրացի»[1]։ Այդպիսով, օտար կապիտալի ստեղծած ու ղեկավարվող կազմակերպություններն աշխատում էին ունենալ տեղական գործակալների լայն ցանց։ Նրանց օգնությամբ այդ պալատները կապեր էին հաստատում նաև կայսրության ներքին շրջանների հետ։ Մայրաքաղաքից բացի, առևտրական պալատներ բացվեցին նաև Իզմիրում։ Այստեղ, օսմանյանի կողքին, գործում էին անգլիական, ֆրանսիական, իտալական ու հոլանդական պալատները[2]։ Դրանք իրենց հերթին ունեին գրասենյակներ, գործակալներ ու ներկայացուցիչներ բազմաթիվ այլ քաղաքներում։

[1] АВПР, Новый турецкий стол, д. 3701, л. 30.
[2] ЦГВИА, ф. 150, оп. 1, д. 409, л. 78.

Անցյալ դարում Թուրքիայի արտաքին առևտրին տոն էին տալիս Անգլիան, ապա Ֆրանսիան և այլ երկրներ։ 1880-ական թթ. գերմանական իմպերիալիզմն է դառնում այս ասպարեզում տիրապետողը։ Քառորդ դարի ընթացքում 1100 %-ով ավելանում է գերմանական ապրանքների ներմուծումը Թուրքիա և 2200 %-ով թուրքական ապրանքների արտահանումը Գերմանիա[1]։ Այդ երկրի շարունակվող մերձեցումը, ինչպես հայտնի է, Թուրքիային դարձրեց Գերմանիայի վասալը և դաշնակիցը առաջին համաշխարհային պատերազմում։

Ներքին և արտաքին առևտրի ծավալի ընդարձակումը որոշակի կերպով ամրապնդեց թուրքական առևտրական բուրժուազիայի դիրքերը։ Ընդլայնվեցին նրա և հարևան երկրների առևտրական կապերը, մեծացավ արտահանվող ապրանքների ծավալը։ Մասնավորապես, դարասկզբի տասը տարիների ընթացքում երկու անգամ ավելացավ Իրանի հետ առևտրի գումարային արտահանությունը՝ Գերմանիայի օգնությամբ Թուրքիան Մերձավոր արևելքում և Եվրոպայում վարում էր ակտիվ առևտուր, աջակցելով Գերմանիային՝ ասպարեզից դուրս մղելու նրա ախոյաններին։ Բնութագրելով իմպերիալիստական պետությունների քաղաքականությունն այս բնագավառում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Վ. Ի. Լենինը գրել է. «Պարսկաստանն այս պատերազմում ձևականորեն չեզոք է։ Իրականում թե ռուսները և թե անգլիացիները՝ մի կողմից և թուրքերն ու գերմանացիները մյուս կողմից, պատերազմում են և կողոպտում պարսկական տերիտորիայում»[2]։

Այդպիսով, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը երկրի ներսում, առևտրական և ընդհանրապես տնտեսական կապերի լայնացումը այլ պետությունների հետ, կայսրությունը դարձրին միջազգային շուկայի անցուդարձի կարևոր մասնակիցներից մեկը։ Կապիտալիզմի զարգացման օրենքները Թուրքիան այլևս չէր կարող շրջանցել։ Համաձայն այդ օրենքներից մեկի, «կապիտալիստական արտադրությունը ընդհանրապես գոյություն չունի առանց արտաքին առևտրի»[3]։

---

[1] Fesch P., Constantinople aux derniers jours d'Abdul Hamid p. 511—512.

[2] Լենին Վ. Ի., Երկ., հ. 28, էջ 884։

[3] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 24, стр. 534.

Կայսրության արտաքին առևտուրը մինչև իր անկումը շարունակում էր աճել։ Սակայն այն ուներ անհավասար բնույթ և մշտական դեֆիցիտ, այսինքն՝ շատ ներմուծվում էր և քիչ արտահանվում՝ երկրի տնտեսությանը հասցնելով զգալի վնաս։ Եթե այդ վերջինը 1880 թ. հավասար էր 9 մլն. լիրայի, ապա 1910 թ. հասավ 17 մլն. լիրայի։ «Միջին հաշվով, 1880-ից մինչև 1920 թ. ընկած ժամանակաշրջանում դեֆիցիտը տարեկան կազմում էր տասը միլիոն ոսկի լիրա»[1]։ Հետևաբար, արտաքին առևտուրը դարձավ Թուրքիայի տնտեսական կախյալ վիճակի հիմնական գործոններից մեկը։

Կայսրության հարստահարման մյուս հզոր միջոցն արտաքին փոխառություններն էին և մեծ պետությունների կողմից ֆինանսական վերահսկողության հաստատումը։ Ղրիմի պատերազմից հետո Թուրքիան սիստեմատիկ կերպով դիմում էր մեծ տերություններին՝ խնդրելով նորանոր փոխառություններ։ 1854 թ. առաջին փոխառությունը կատարելուց հետո, 1858—1872 թթ., նա ստացավ ևս տասը փոխառություն, որոնց անվանական գումարը հավասար էր մոտ 210 մլն. ֆունտ ստեռլինգի, իսկ իրականում տրվել էր 106 մլն. ֆունտից քիչ ավելին։ Եվրոպական երկրները հենց սկզբից պայմանավորվել էին, որ կայսրությունը, ելնելով անվանական գումարից, պետք է վճարի տարեկան 5—9 %[2]։ Այդպիսի մեծ վնասներով փոխառություն ստանալը նորերը խնդրելուն արգելք չեղավ։ Թուրքիայի ֆինանսների դրությունը վերլուծող ռուս զինվորական գործակալ Ի. Զիչագովն իրավացիորեն նշում էր, որ «օտար փոխառություն կնքելու համար պայմանների երևան գալը ավելացրեց ծախսերի հանդեպ եղած թեթևամտությունը»[3]։ Իսկ վերջինս հետևանք էր պալատական ծախսերի, բանակին ու պետական մարմիններին անհրաժեշտ դրամի անընդհատ աճի։ Եվրոպայի և կայսրության ֆինանսական ընդլայնվող գործառնությունները կարգավորելու համար 1856 թ. կազմակերպվեց այսպես կոչված Օտտոմանյան բանկը, որը շուտով (1863) կոչվեց Օտտոմանյան կայսերական բանկ։ Նրա ղեկավարությունն իրականացնում էին եվրոպական պետությունները։

---

[1] ЦГА Груз. ССР, ф. 613, оп. 1, д. 40, л. 60.
[2] ЦГВИА, ф. 401, 1886, д. 10, л. 20.
[3] Նույն տեղը, թ. 18։

Վ. Ի. Լենինը Թուրքիան համարում էր «ֆինանսապես ոչ ինքնուրույն, քաղաքականապես ինքնուրույն երկիր»[1]։ Իրապես, Թուրքիան իր ներքին քաղաքականության մեջ եղել է ինքնուրույն և միայն ձևացրել է, թե հաշվի է առնում իրեն տընտեսական ու ֆինանսական կախման մեջ պահող եվրոպական տերությունների տեսակետներն ու կարծիքը։

Ֆինանսական քաղաքականությունը ևս որոշ իմաստով տարվել է այնպես, ինչպես ցանկացել է սուլթանի կառավարությունը։ Ինչպես ցույց են տալիս ռուսական ռազմական գործակալների 1880-ական թթ. հաշվետվությունները, վերջինս միշտ էլ ունեցել է պետական բյուջե, բայց երբեք չի հրապարակել նրա ցուցանիշները։ Նա իբր պահանջել է բոլոր հիմնարկներից տվյալներ, կազմել է ընդհանուր հաշվետվություն, որը «Մինիստրների խորհրդի միջոցով ներկայացվում էր սուլթանի հայեցողությանն ու հաստատմանը»[2]։ Իսկ, քանի որ ընդհանուր բալանսը միշտ բացասական էր, բյուջեն երբեք չէր հրապարակվում, որպեսզի չիմանային ոչ ներքին և ոչ էլ արտաքին վարկատուներն ու կայսրության ժողովուրդները։ Նման վարքագիծն անհրաժեշտ էր ոչ միայն եվրոպական ֆինանսիստների վստահությունը Թուրքիայի հանդեպ պահպանելու, այլև սուլթանի ու նրա մերձավորների վատնումները բնակչությունից թաքցնելու համար։ Անհրաժեշտ էր բարձր պահել սուլթան-խալիֆի հեղինակությունը և հավատը դեպի նրա սրբազան անձն ու նրա գործերը։

«Ըստ շարիաթի,— գրել է Ատրպետը,— «Բեյթ-ուլ-մալը» (պետական եկամուտները) խալիֆին չեն պատկանում. նա պետական գանձարկղի պաշտպանն է միայն և դրամը պետք է ծախսի, ելնելով երկրի կարիքներից՝ Երկրորդ, խալիֆ Օմարը, որպես օրական վարձատրություն վերցնում էր միայն չորս դիրհեմ արծաթով։ Սոֆտաները (կրոնական դպրոցների՝ մեդրեսեների ուսանողները— Հ. Ի.) գոչում էին «ինչ իրավունքով Աբդուլ Ազիզ խալիֆը օրական, բացի պալատական ծախսերից, վերցնում է չորս հազար դիրհեմ ոսկով, որը վճարվում է «Բեյթ-ուլ-մալի» միջոցներից»[3]։ Ատրպետի հոդվածից երևում է, որ

---

[1] Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 28, էջ 883։

[2] ЦГВИА, ф. 450, оп. 1888, д. 106, л. 194.

[3] «Русская мысль», 1908, № 8, стр. 182—183.

խստությամբ պահվող գաղտնիքը, այնուամենայնիվ, դառնում էր հասարակության քննարկման առարկա և սուլթան Աբդուլ Ազիզը՝ տխրահռչակ Աբդուլ Համիդի հայրը, մեղադրվում էր պետական դրամը յուրացնելու մեջ։ Եվ նա միակը չէր։ Սուլթան Աբդուլ Մեջիդն իրը թե այդ երևույթի առաջն առնելու նպատակով մի հրաման է հրապարակում, որտեղ խորհուրդ է տալիս բարեկամներին՝ խնայողաբար ծախսել իրենց տրամադրված գումարները։ Զբավարարվելով այդքանով, սուլթանը իր հրամանում, առանց քաշվելու դիմում է առևտրական տներին, նրանց հայտարարելով, որ պալատի պատվերներն առանց իր ստորագրության չընդունվեն խանութպանների կողմից, հակառակ դեպքում նրանք չեն ստանա տրված ապրանքների արժեքը»[1]*։ Նման պայմաններում զարմանալի չէր, որ Ղրիմի պատերազմի ավարտից հետո դեֆիցիտը դարձավ Թուրքիայի պետական բյուջեի մշտական ուղեկիցը։ Իրար հաջորդող փոխառությունները ոչ թե թեթևացնում, այլ ծանրացնում էին երկրի վիճակը։*

Պ. Ձիխաչևը նշում էր, որ 1858 թ. Թուրքիայի բյուջեն մեծացել էր անասելի կերպով ոչ միայն պատերազմի հետևանքով, այլև իրերի բնական ընթացքով։ «Դեռևս 20 տարի առաջ,— գրում էր նա,— Թուրքիան երևի աշխարհում միակ երկիրն էր, որը կարող էր պարծենալ պարտքերի լրիվ բացակայությամբ և շրջանառության մեջ ունեցած հնչուն դրամով։ Իսկ այժմ նրա պետական պարտքը հասել է 600 մլն. ֆրանկի, կամ մի հրսկայական գումարի, եթե այն համեմատենք ոչ թե Եվրոպայի մյուս երկրների պետական պարտքի բացարձակ թվերի (ինչպես սովորաբար անում են Թուրքիայի վճարված ու անվճար փաստաբաններն), այլ նրանց եկամուտների ու պարտքերի հարաբերության հետ»[2]*։ Միավորման բազմաթիվ փորձերից ու հաշվումներից հետո Թուրքիայի պետական պարտքերը 1878 թ. ունեին հետևյալ նկարագիրը. Կոնսոլիդացված պետական պարտքը հավասար էր 191 մլն. ֆունտ ստեռլինգի, չվճարված տոկոսները կազմում էին 25 մլն. ֆունտ ստեռլինգ, շրջանառության մեջ գտնվող թղթադրամների (կաիմե) արժեքն անցնում*

---

[1] Ներսեսյան Ռ., *Թուրքիայի ֆինանսները, «Մուրճ», 1905, № 2—3, էջ 106։*

[2] Чихачев П. А., Великие державы и восточный вопрос, стр. 133.

էր 16 մլն. ֆունտ ստեռլինգից և Կ. Պոլսի մի շարք բանկերի պարտքը՝ 12 մլն. ֆունտ ստեռլինգից[1]։

Որպեսզի հնարավոր լիներ վճարել պետական պարտքի տոկոսների մի մասը, շրջանառությունից դուրս բերել 12 անգամ արժեզրկված կաիմեները և ընթացիկ ծախսերը ծածկելու համար ունենալ որոշ գումար՝ կառավարությունը հաջորդ՝ 1879 թ. նոր պայմանագիր է կնքում մայրաքաղաքի գլխավոր բանկիրի հետ։ Ստացած 120,000 ֆունտ ստեռլինգի փոխարեն բանկերի այդ խումբը իրավունք էր ձեռք բերել գանձելու հարկերը ոգելից խմիչքներից, մայրաքաղաքի շրջանում ձուկ որսողներից, որոշ շրջանների մետաքսի տասանորդից և պետական դրոշմանիշերի համար ստացվող գումարներից[2]։ Տեղացի մեծահարուստներն ու ֆինանսիստները այդ ճանապարհով վերահսկողության իրավունք ձեռք բերեցին ոչ միայն տնտեսության առանձին բնագավառների, այլև վարչական որոշ մարմինների վրա։

Այդպիսով, Գալաթայի ու մայրաքաղաքի այլ շրջանների բանկիրները մասնակից դարձան նաև պետության արտաքին ֆինանսական հարաբերություններին։ Իր հարստությամբ ու լայն գործունեությամբ աչքի էր ընկնում խոշոր հողատեր, մի շարք կոնցեսիաների կառավարիչ ու վաճառատների ղեկավար Լեոնիդիս Զարիֆին։ Գրականության մեջ հիշատակվում են նաև Մավրոկորդատոն, Լուգննիլին, Վլաստորին, Էլիասկոն՝ իր որդիների հետ, Իբրանոսյանները, Գյուլբենկյանները և ուրիշ շատերը։ Հույն, հրեա, հայ դրամատերերը, ավելի ուշ նաև թուրք մեծահարուստներն ու բանկիրները երկրի տնտեսական բոլոր կենտրոններում օգտվում էին իշխանությունների հովանավորությունից և ֆինանսավորում էին վերջիններիս առանձին քաղաքական ու տնտեսական միջոցառումները։ Մասնավորապես, պետության ծախսերի համար վերցրած փոխառությունների 12 %-ը կազմում էին տեղական ֆինանսիստների տրամադրած վարկերը։ Բայց վարկերի մեծագույն մասը, այնուամենայնիվ, տրվում էին դրսից։ «Պալատում ամենամեծ ուշադրությամբ էին վերաբերում միայն այն ծրագրերին,— գրում է Ռ. Բերբերյանը,— որտեղ այս կամ այն ձևով առաջարկվում էր նաղդ

---

[1] ЦГВИА, ф. 401, оп. 1886, д. 10, л. 19.

[2] Տե՛ս նույն տեղը։

փող կամ փոխառություն»[1]։ Փոխարենը, ինչպես հայտնի է, օտար ֆինանսիստներին, վարկավորող կազմակերպություններին, բանկերին, ընկերություններին հետզհետե ընդլայնվող ծավալով, տրվում էին լեռնային արդյունաբերության, երկաթուղիների և տարբեր կոնցեսիաների իրավունքը, հարկեր ու տուրքեր հավաքելու իրավունքը՝ ծխախոտից, աղից, վառոդից, նավթից, ոգելից ըմպելիքներից և այլն։ Ինչպես նշում է Քենան Բուլութօղլուն, ամեն մի գործողություն կատարելիս թուրքական կողմն ակնկալում էր կանխիկ գումարներ կամ վարկեր[2]։

Ի. Գոլոբորոդկոն նման գործարքների միջնորդներին թվարկելիս բերում է Աբդուլ Համիդի քարտուղար Իզզեթ փաշայի, ֆինանսների մինիստր Մելհամեի, ռազմական և ծովային մինիստր Ռահմիի և այլոց անունները[3]։ Ունենալով նշված և ուրիշ բարձրաստիճան անձնավորությունների աջակցությունը, օտար մոնոպոլիաները, առանց քաշվելու, ճնշում էին գործադրում կենտրոնական ու տեղական իշխանությունների վրա, հաճախ կնքելով բացարձակապես երկրի տնտեսությանը վնաս բերող պայմանագրեր։ Իսկ իրենք՝ պետական մարմինները, հաճախ հանդես էին գալիս, Ի. Բուտաևի որակմամբ, որպես «սեփական գյուղացիությանը շահագործող քաղաքական ապարատ»[4]։ Երբ 1888 թ. գերմանացիները Թուրքիային տրամադրեցին հերթական փոխառությունը, վերջինս, ընդառաջելով նրանց պահանջին, իր ռազմական պատվերները ձևակերպեց Կրուպի, Մաուզերի և զենք վաճառող այլ ընկերությունների հետ։ Իսկ գերմանացիները «թուրքական կառավարությանը համարյա թե ուժով էին պարտադրում իրենց արտադրանքը»[5], որը հաճախ լինում էր հնացած և ոչ լիարժեք։

Նման դեպքերը հաջորդում էին միմյանց, փոխառության միջոցով գոյացած պետական պարտքերը արագորեն աճում էին, իրենց հետ ավելացնելով հարկերն ու տուրքերը։ 1876 թ. Աբդուլ Ազիզի հրովարտակով Թուրքիան առաջին անգամ հայտարարեց իր անվճարունակության մասին։ Դրան հետևեցին

---

[1] «Մուրճ», 1905, № 2—3, էջ 108։

[2] Bulutoǧlu K., Türk vergi sistemi, s 280—281.

[3] Տե՛ս Голобородько И. И. (Южанин), Старая и новая Турция, М., 1908, էջ 174—175.

[4] Бутаев И. Проблемы Турции, Л., 1925, стр. 85.

[5] ЦГВИА, ф. 450, д. 106, л. 198.

ուրիշ հայտարարությունները։ Զհավատալով, որ Օսմանյան կայսրությունն ի վիճակի կլինի վճարել երկու միլիարդ ֆրանկի հասնող պարտքն ու նրա տոկոսները, փոխատվություն տվող երկրները որոշեցին ֆինանսների, ընդհանրապես տնտեսության, հսկողության գործը կենտրոնացնել իրենց ձեռքում։ 1881 թ. դեկտեմբերի 20-ին հրապարակվեց Մուհարրեմի հայտնի դեկրետը, որով պաշտոնապես հայտարարվում էր Թուրքիայում Ճանրային պարտքերի վարչության կազմակերպումը։ Վարչության կազմի մեջ մտան Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի ներկայացուցիչները, ինչպես նաև տեղական պարտատերերից մեկ անձնավորություն և թուրքական կառավարության ներկայացուցիչը։ Վերջինս ուներ միայն խորհրդակցական ձայնի իրավունք։ Որևէ վեճ ծագելիս կողմերն իրավասու չէին այն լուծելու և գործը հանձնվում էր միջնորդ դատարանի վճռին։ Որպես կարևոր մանրամասնություն նշենք, որ պարտքերի մեջ իրենց մասն ունեին առանձին եվրոպական պետական խոշոր գործիչներ և այդ պատճառով էլ վարչություն ստեղծելու հարցը քննարկվել էր դեռևս Բեռլինի կոնգրեսում։ Դրանց թվին էր պատկանում նաև Բիսմարկը, «որը Բլեյխրեդերի և ընկ. բանկային տան միջոցով գնել էր մեծ քանակությամբ թուրքական արժեթղթեր»[1]։ Ակներև է, որ մեծ տերությունների ու նրանց ներկայացուցիչների նաև տնտեսական շահերը պահանջում էին ամեն կերպ պահպանել Օսմանյան կայսրության ֆիզիկական գոյությունը, օգտագործելով միջամտելու բազմամյա առիթը՝ «առերես հայտարարելով իրենց քրիստոնյա ժողովուրդների պաշտպաններ»։ Վարչությունը հենց սկզբից ստեղծեց իր բաժանմունքների ու գործակալությունների լայն ցանց։ Եթե մինչ այդ գոյություն ունեցող Օտտոմանյան կայսերական բանկը ուներ 80 բաժանմունք, ապա վարչությունը երկրի գավառներում կազմակերպեց 728 բաժիններ ու գրասենյակներ։ Իր գործունեության առաջին տասնամյակում արդեն վարչությունն ստեղծեց հսկայական ապարատ «համարյա ամբողջապես թուրքահպատակ մահմեդականներից։ 4527 ծառայողից 4172-ը մահմեդականներ էին, 316-ը՝ թուրքահպատակ քրիստոնյաներ և միայն 39-ը եվրոպացիներ»[2]։

---

[1] Թերբերյան Ռ., Թուրքիայի ֆինանսները, «Մուրճ», 1905, № 5, էջ 89։

[2] АВПР, ф. Канцелярия, д. 25, л. 112.

Անհրաժեշտ է նշել նաև, որ վարչության բաժինների վարիչների, բանկերի ու վարչության ղեկավար այլ մարմինների անդամների ինը տասներորդը կազմում էին տեղացիները, գլխավորապես մահմեդականներ. առանց որոնց հնարավոր չէր հաջողությամբ ծավալել այն հսկայական գործունեությունը, որ կատարում էին վարչության կենտրոնական ու տեղական մարմինները։ Իսկ նրանք նախ՝ պետք է ապահովեին պարտքի տոկոսների ամենամյա վճարումները պարտքատերերին։ Այդ նպատակով նրանց հսկողության տակ էին դրվել մի շարք ուղղակի և անուղղակի հարկեր։ Այդ հարկերից էին՝ աղից, ծխախոտից, ալկոհոլային խմիչքներից ու մետաքսից ստացածներից բացի, «Բուլղարիայից, Մոնտենեգրոյից, Արևելյան Ռումելիից, Կիպրոսից, Սեբաստիայից ստացվելիք հարկերը»[1]։

1912 թ. վարչության մարմիններում աշխատում էր արդեն 8931 մարդ, այն դեպքում, երբ կայսրության ֆինանսների մինիստրությունն ուներ 5472 աշխատակից։ «Վարչության ծառայողների համար կատարվող ծախսերը կազմում էին 403.943 լիրա։ Բարձրաստիճան ծառայողներին տարեկան տրվում էր 80 հազար լիրա»[2]։

Նշանակալից է այն փաստը, որ թուրքական կառավարությունը հաճախ չհավատալով կամ չվստահելով տեղական մարմիններին, իր եկամուտը կազմող տարբեր հարկերի գանձումը ևս հանձնարարում էր հարկերի վարչությանը։ Իսկ վարչությունը պատրաստակամությամբ կատարում էր կառավարության հանձնարարությունը։ Վերջինս այդ միջոցով 1,5—2 %ով ավելի էր ստանում, քան իր հարկահավաքների գանձած գումարներն էին և վարչությանն էլ վճարում էր հավաքված հարկերի 5 %-ը[3]։

Կեղեքման ու շահագործման այս սիստեմը պարտքերի վարչությանը հնարավորություն էր տվել առաջին աշխարհամարտի նախօրեին իր ձեռքում կենտրոնացնելու «Թուրքիայի եկամուտների մեկ երրորդից ոչ պակասը»[4]։

1912 թ. թուրքական տարեգրքի տվյալների համաձայն

---

[1] Թերփերյան Ռ., նշվ. աշխ., էջ 91։

[2] Avni H., Bir yarım müstemleke oluş tarihi, s. 37.

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 94։

[4] Раздел Азиатской Турции, стр. 9.

երկրում գործող 16 խոշոր բանկերից միայն երեքում էր գերազանցում թուրքական կապիտալը, 15 այլ բանկերում տիրապետող դիրք ունեին տեղական մեծահարուստների ավանդները։ Կառուցվող և գործող երկաթգծերի տնօրինությունը գտնվում էր 12 օտար ընկերությունների ձեռքում[1]։ Միայն եվրոպական Թուրքիայում վերջիններիս հսկողության տակ գործում էին բնական հարստություններ շահագործող՝ 6, շինարարական՝ 5, ջրամատակարարման և կոյուղիների՝ 5, տրամվայների ու քաղաքային տրանսպորտի՝ 5, լուսավորության՝ 3, սննդամթերքների արտադրության՝ 21 և այլն ձեռնարկություններ ու կազմակերպություններ[2]։

Երկաթուղային շինարարության ու երկաթուղիների շահագործման բնագավառում առաջնակարգ տեղը պատկանում էր գերմանական (2565 կմ.), ապա ֆրանսիական (2077 կմ.) և երրորդը՝ անգլիական (610 կմ.) ընկերություններին[3]։ Բանկային գործառնություններում բացարձակ տիրապետում էր Ֆրանսիան, առևտրի մեջ, մինչև համաշխարհային պատերազմը՝ Անգլիան։ Առևտրի ընդհանուր շրջանառության մեջ վերջինս Գերմանիային գերազանցում էր հինգ անգամ, Ֆրանսիային և Ավստրո-Հունգարիային՝ երկու անգամ։ Բայց պատերազմի նախօրեին Գերմանիան կապիտալի ներդրումների գումարով արդեն գրավում էր երկրորդ տեղը, Ֆրանսիայից հետո[4]։

Կասկածից վեր է, որ տնտեսական ազդեցության գործոնով էլ մեծ մասամբ պայմանավորված էր այս կամ այն մեծ տերության ազդեցությունը Օսմանյան կայսրության քաղաքականության վրա։ Այսպես, կայսրության գոյության վերջին 70—80 տարիներին տիրապետող է եղել Անգլիայի և Ֆրանսիայի ազդեցությունը։ Անցյալ դարի 80-ական թթ. սկսում է ուժեղանալ գերմանական իմպերիալիզմի ազդեցությունը, որը և ունեցավ վճռական նշանակություն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա նա առանձնապես

---

[1] Annuaire Oriental..., p. 167—174.

[2] ЦГИАЛ, ф. 150, оп. 1, л. 76—78.

[3] Տե՛ս «Международная жизнь», 1927, № 8, էջ 41.

[4] Տե՛ս Павлович М., Империализм и мировая политика последних десятилетий, Собр. соч., т. II, Л. 1925, стр. 61.

չէր ձգտում Թուրքիայում կայծտալներ ներդնել։ Պատճառն այն էր, որ նա կողմնակից չէր բազմազգ ու հետամնաց Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելուն, ինչպես եվրոպական պետությունները։ Ելնելով իր շահերից, ցարական Ռուսաստանն աջակցում էր բուլղարներին և բալկանյան ժողովուրդներին՝ ազատագրվելու թուրքական լծից։ Ռուսական և եվրոպական առաջավոր մտավորականությունը, ռազմական ու քաղաքական գործիչները կոնկրետ և բարոյական օգնություն էին ցույց տալիս հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին։ Հետևաբար Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը տվյալ խնդրում օբյեկտիվորեն ուղղված էր և նպաստում էր կայսրության հարստահարվող ու հպատակ ժողովուրդների ազատագրմանը։ Այս տեսակետից վերջիններիս համար չափազանց կարևոր էին նաև տնտեսական կապերը Ռուսաստանի հետ։

Իսկ այդ կապերը, հատկապես առևտրական, գոյություն ունեին տասնամյակներ շարունակ։ Դրանց բնորոշ կողմն այն էր, որ Թուրքիայի շատ շրջաններ գլխավորապես ներմուծում էին ռուսական ապրանքներ և քիչ քանակությամբ արտահանում Ռուսաստան իրենց արտադրանքը։ Ա. Դ. Նովիչևը նշում է, որ մասնավորապես, ռուս-ճապոնական պատերազմում ցարիզմի պարտությունից հետո ուժեղացավ ռուսական ապրանքների հոսքը Թուրքիա, այն դեպքում, երբ վերջինիս արտահանությունը Ռուսաստան համարյա թե չէր փոփոխվում 50 տարվա ընթացքում[1]։

Նման վիճակը, անկասկած, արտահայտում էր նաև Թուրքիայի կառավարության քաղաքականությունը, որը եվրոպական պետությունների ազդեցության հետևանքով հաճախ արգելակում էր Ռուսաստանի հետ փոխադարձ հարաբերությունների զարգացումը։ Կայսրության վերնախավին ընդհանրապես դուր չէին գալիս Արևմտյան Հայաստանի և Անատոլիայի որոշ քաղաքների բազմապիսի ու անմիջական կապերը Կովկասի ու հարավային Ռուսաստանի առանձին շրջանների հետ։ Դրանք դիտվում էին որպես հայերի, և ընդհանրապես քրիստոնյաների, ռուսամետ տրամադրությունների հետևանք, որը, իհարկե, արտացոլում էր իրականությունը։

---

[1] Տե՛ս Նովիչև Ա. Դ., նշվ. աշխ., էջ 222—223։

Տնտեսական համագործակցությունը միանգամայն համապատասխանում էր կայսրության, հատկապես Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության դարավոր ձգտումներին՝ մըշտապես ու սերտորեն կապված լինել Ռուսաստանի, մասնավորապես Կովկասի հայաբնակ շրջանների, ինչպես նաև տնտեսական այլ կենտրոնների հետ։ Սակայն ցարական կառավարությունը, քաղաքական դեպքերի բերումով (ազատագրական պայքարի աշխուժացում, կոտորածներ, ներքին բախումներ և այլն), երբեմն ձեռնարկում էր սահմանափակող միջոցառումներ։ Եթե դրանք և վերևում նշված հանգամանքները չլինեին, անկասկած, փոխադարձ կապերը կունենային շարունակվող ու անխախտ հարաբերությունների բնույթ և կնպաստեին այդ շրջանների տնտեսական զարգացմանը։

Ռուս առաջադեմ գործիչներն ու մտավորականները գտնում էին, որ երկրի հարավային սահմանների բաց լինելը «չափազանց օգտակար է ռուսական առևտրի համար։ Թուրքահայերի կապերը Կովկասի մեր առևտրական ֆիրմաների հետ վերականգնըվում են և օր օրի վրա դառնում նշանակալից»[1]։ Բարձրորակ ռուսական ապրանքները, մանավանդ սննդամթերքը, այնուամենայնիվ, հաղթահարում էին արհեստական արգելքները և նպաստում ռուսական առևտրի ընդլայնմանը։ Առաջին աշխարհամարտի նախօրեին այն հասավ զգալի չափերի։ Միայն Կ. Պոլսում, 1910 թ., Ռուսաստանից ստացվող ապրանքների վաճառքով զբաղվում էին 28 խոշոր առևտրականներ, որոնցից միայն 5-ն էին ռուս։ Մնացածներից 7-ը հույն էին, 6-ը՝ հայ, 2-ը՝ հրեա և 8-ը՝ մահմեդական[2]։ Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Ադամովի տվյալների համաձայն, վիլայեթի առևտուրը Ռուսաստանի հետ 1908 թ. մոտ 517 հազար ռուբլուց աճեց ավելի քան երեք անգամ և 1912 թ. հասավ 1.638 հազար ռուբլու[3]։ Իսկ Վանի փոխհյուպատոս Թումանսկին, նշելով Արևմտյան Հայաստանի շրջանների առևտրի բուռն զարգացումը, գրում էր, որ «ոչ միայն Վանի վիլայեթի, այլև մոտակա վիլայեթների առևտրական ակտիվ ամբողջ գործունեությունը գտնվում է բացառապես հայերի ձեռքում...»[4]։ Նրանց միջոցով

---

[1] АВПР, Новый турецкий стол, 1909—1913, д. 3723, л., 19.

[2] Տե՛ս նույն տեղը, գործ 3832, թերթ 3։

[3] «Донесения российских консульских представителей...», 1913, № 29, стр. 108.

[4] АВПР, Новый турецкий стол, д. 2495, л. 37.

Էր Ռուսաստանի հարավից բերվում շաքարը, Ղարսի մարզից՝ ածուխը, փայտը, ալյուրը, ցորենն ու գարին, Թիֆլիսից՝ գյուղատնտեսական և այլ գործիքներ, Բաքվից՝ նավթը, Երևանից՝ բրինձը, գինին ու կոնյակը և այլն։ Ընդլայնվող առևտրական գործունեությունը հանգեցրեց մի շարք փայատիրական ընկերությունների կազմակերպմանը։ Այսպես, Էրզրումում ռուսական նավթը վաճառում էին «Լույս» (հիմն. 1901) և «Արարատ» (հիմն. 1906) ընկերությունները։ Երկաթեղենի առևտուրը կատարում էին Զաքարյանց և Բոյաջյանց եղբայրների ու Էմիր օղլուի վաճառատները, գյուղատնտեսական գործիքներինը՝ եղբայր Զաքարյանները և Քաֆաֆյանը։ Ռետինե ապրանքների վաճառքը գտնվում էր Օննիկ Դավիդովի ձեռքում[1]։ Բայազետում ռուսական ապրանքների վաճառքն իրականացնում էին Օհանյան և Մինասյանց եղբայրները, Բինատ և ընկ. վաճառատունը և այլն[2]։

Կայսրության արևմտյան շրջաններում ռուսական առևտրի ազդեցությունը չափազանց թույլ էր։ Ռուսաստանի նավագնացության և առևտրի ընկերության ներկայացուցիչը Զմյուռնիայից գրում էր, որ տեղի համապատասխան կազմակերպությունները իրենց ուշադրությունից դուրս են թողել այդ կարևոր կենտրոնը, մինչդեռ Եվրոպայի առևտրականները Զմյուռնիան դարձրել են իրենց գործունեության կենտրոններից մեկը։ Ռուսաստանի կապիտալիստներից, շարունակում է նա, իր ներկայացուցիչն ունի միայն նավթարդյունաբերող Մանթաշևը։ Քաղաքում կան նաև Անանովի առևտրական տունը և Գրիգոր Կեհուտիի ալրաղացները[3]։

Միայն 1910 թ. Կ. Պոլսի և Զմյուռնիայի գլխավոր հյուպատոսարաններին կից ստեղծվեցին հատուկ առևտրական կոմիտեներ, որոնք դրական դեր կատարեցին Թուրքիայի արևմտյան շրջաններում և սևծովյան քաղաքներում ռուսական առևտրի զարգացման գործում։ Ռուսաստանի առևտրական շրջանառության մեկ երրորդը կատարվում էր այս վերջիններում։ Ռուս-թուրքական առևտրի բնորոշ կողմը, այդպիսով, այն էր, որ կայսրության բազմաթիվ շրջաններ, շրջանցելով նրա գլխավոր

---

1 Տե՛ս «Допесения...», 1913, № 21, стр. 15—18.

2 АВПР, Новый турецкий стол, д. 3723, л. 37.

3 См. там же, ф. Посольство в К-поле, 1908, д. 3036, л. 78.

տնտեսական կենտրոնները, կապեր ունեին արտասահմանի հետ։

Նույնպիսի բնույթ ունեին ապրանքափոխանակությունը և առևտուրն Օսմանյան կայսրության արաբական երկրներում։ Եգիպտոսը, հատկապես Մուհամմեդ Ալիի տիրապետության շրջանում և նրանից հետո ինքնուրույն էր տնօրինում իր գործերը։ Դրան նպաստում էր Անգլիայի հետզհետե ակտիվացող քաղաքականությունը։ Իրաքը եռ անցյալ դարի կեսերից արտահանում էր հացահատիկ, արմավ և այլ ապրանքներ, որոնք համաշխարհային շուկա էին հասնում անմիջական ճանապարհով։ Իրաքի և Իրանի արտաքին առևտրի զգալի մասը, ըստ Վ. Լուցկու, կատարվում էր Բաղդադի և Բասրայի վրայով։ Իսկ վերջինս մշտական կապեր ուներ Պարսից ծոցի և Հնդկաստանի նավահանգիստների հետ[1]։

Համաձայն ռուսական հյուպատոս Ա. Ադամովի հաղորդումների, արդեն մեր դարի սկզբին «հացահատիկի առևտուրը Հնդկաստանի և Կարմիր ծովի նավահանգիստների հետ իրենց ձեռքում են կենտրոնացրել Բաղդադի և Բասրայի տեղական ֆիրմաները, իսկ արտահանումը Եվրոպա սովորաբար կատարվում է անգլիական վաճառատների միջոցով, որոնք հիշյալ քաղաքներում ունեն իրենց բաժանմունքները»[2]։

Բեյրութը, Դամասկոսը և Հալեպն ուղղակի կապեր ունեին Ֆրանսիայի և Եվրոպայի մյուս երկրների առևտրականների հետ, իսկ Եգիպտոսի վրայով՝ նաև անգլիական կենտրոնների հետ։ Արաբական երկրների միջոցով կատարվող առևտրի նշանակության կարևորության մասին են խոսում հետևյալ տվյալները. միայն Սիրիայի, Իրաքի և Պաղեստինի վրայով ստացվում էր Օսմանյան կայսրություն ներմուծվող ապրանքների մոտ մեկ քառորդը և արտահանվում՝ մեկ հինգերորդը։ Դիվանագետների հաղորդումների համաձայն, եթե սկզբնական շրջանում տեղական առևտրականները նախընտրում էին գործել արտասահմանյան ֆիրմաների ներկայացուցիչների օգնությամբ, ապա առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նրանք անմիջական կապերի մեջ էին մտել այդ ֆիր-

[1] Տե՛ս Луцкий В. Б., Новая история арабских стран, М., 1965, էջ 125—126.

[2] АВПР, Новый Турецкий стол, д. 7643, л. 8.

մանների հետ[1]*։ Սակայն Թուրքիայի օրինակը ապացուցեց, որ ուժի և քաղաքական միջոցներով զանազան երկրների ու ժողովուրդների մերձեցումը ֆեոդալիզմի շրջանում դեռևս ի վիճակի չէ միավորելու դրանց նաև տնտեսապես և ապահովելու հետագա առաջընթացի կայուն հիմքեր։*

Ձևավորվող բազմազգ բուրժուազիայի տնտեսական միասնական շահերի բացակայությունը, հետզհետե սրվող հակասությունները, ինչպես արդեն նշվեց, Օսմանյան կայսրության կանգնեցրին ճգնաժամի առջև։ Երկրի դանդաղ առաջընթացը և ճգնաժամի ատրիճանական խորացումը նրա գոյության վերջին տասնամյակներում դարձան կայսրության պատմության երկու բնորոշ գծերը։ Իսկ կիսագաղութի վերածվելն ավելի եռ ընդգծեց Թուրքիայի սոցիալ-տնտեսական կարգերի ու քաղաքական ծանր ռեժիմի ոչ բնական և անհանդուրժելի կողմերը, որոնցով և պայմանավորվեցին ու ձևավորվեցին երկրի հետամնացության ուղիներն ու գործոնները։ Լինելով քաղաքականապես անկախ, կայսրության ղեկավարները նրա գոյության ամբողջ ընթացքում այդպես էլ չկարողացան կենտրոնացնել ու ղեկավարել իրենց երկրի տնտեսության առաջընթացը։ Ընդհակառակը, այն հետզհետե, հաճախ կառավարողների կամքով անցավ օտարների ձեռքը։ Երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունը, որի հետ երկար ու ձիգ դարեր հաշվի էին նստել հարևան պետությունները, XIX դարի վերջերին ի վիճակի չէր ինքնուրույն տնօրինելու իր բախտը։ Նրա անկման հիմնական պատճառներից մեկը պետք է փնտրել այս երևույթի մեջ։

Թուրք պատմաբանների, տնտեսագետների, սոցիոլոգների, գրողների, քաղաքական գործիչների և այլ հեղինակների ուշադրության կենտրոնում է հատկապես երկրի առաջընթացի վրա արտաքին ազդեցության խնդիրը։ Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն այդ ազդեցությունն արտահայտվում էր «եվրոպականացում» կամ «արևմտականացում» տերմիններով։ 1960-ական թթ. շրջանառության մեջ մտավ «մոդեռնացում» հասկացությունը, որն արտահայտելու էր տեղի ունեցող ապագաղութացման, ներքին զարգացման, Եվրոպայի կողքին ԱՄՆ-ի ազդեցության ուժեղացման երևույթները և ավելի չեզոք տերմին օգտագործելու ցանկությունները։ Սակայն ճիշտ է այն տե-

[1] «Донесения...», 1912, № 1, стр. 45.

սակետը, որը կայսրության զարգացման ընթացքը գնահատելու համար իրականության ավելի մոտ և պատմականորեն լիարժեք է գտնում «եվրոպականացում» հասկացությունը։

Իրենք՝ թուրք հեղինակները, ներկայումս օգտագործում են բերված երեք արտահայտություններն էլ, նախապատվությունը տալով «մոդեռնացում» տերմինին։

Բայց այստեղ կարևորը երևույթի անվանումը չէ, այլ գնահատականը, որ տրվում է Արևմուտքի ազդեցությանը՝ դրական է եղել այն, թե՞ բացասական և, ի վերջո, ի՞նչ դեր է կատարել արտաքին ազդեցությունը Թուրքիայի տնտեսության և կուլտուրայի զարգացման գործում։

Հետազոտողների մի մասը, հատկապես իսլամագետները, գտնում են, որ մահմեդական երկրների զարգացման վրա արտաքին ազդեցության ներգործությունը կարող էր լինել միայն պայմանական։ Այսպես, ռուս մեծ արևելագետ Վ. Բարտոլդը քրիստոնյա երկրների օրինակով կատարվող բարեփոխումները իսլամի ազդեցության տակ գտնվող ժողովուրդների մոտ, նույնիսկ տեսականորեն, անհնարին էր գտնում, որովհետև նրանց «պետական ու հասարակական կյանքում ամեն մի նորամուծություն հանցագործություն է հավատի հանդեպ»[1]։ Իրապես, Ղուրանի ու շարիաթի մեջ, ինչպես տեսանք, պետական կարգի ու մարդկանց փոխհարաբերությունների սահմանումները, բոլոր մահմեդական ժողովուրդների համար, ներկայացվում են որպես մշտական ու անփոփոխ իրավիճակ։

Անշուշտ, քննարկվող խնդրի ճիշտ պատասխանն ունենալու համար կարևոր նշանակություն ունեն թուրք հեղինակների կարծիքները, որոնք չափազանց տարբեր են, և հաճախ, հակասական։ Թուրք հայտնի պատմաբան պրոֆ. Թ. Թունայան իր «Արևմտականացման շարժումը Թուրքիայի քաղաքական կյանքում» աշխատության մեջ գտնում է, որ մինչև XVIII դարը «կայսրությունը Արևմուտքի կարիքը չուներ։ Նրանում կային այնպիսի բաներ, որոնք կարող էին օրինակ ծառայել Արևմուտքի համար։ Համեմատած Արևմուտքի հետ, նա ավելի միաս-

[1] Бартольд, В. В., Турция, ислам и христианство, Соч., т. VI, М., 1966, стр. 143.

նական էր, ազատ ու ծաղկուն։ Նրա կուլտուրական մակարդակը բարձր էր»[1]։

Թուրք այլ հեղինակներ ևս բազմաթիվ անգամներ, ավելի ընդարձակ ու ծավալուն, հայտնել են թուրքերի մյուս ժողովուրդներից բարձր լինելու ռասայական տեսակետը, որը մինչև այժմ էլ թուրքական շովինիզմի գաղափարական անկյունաքարն է։ Այդ գաղափարախոսության ստեղծողներից մեկը՝ Զիա Գյոկալպը, դեմ արտահայտվելով թուրք ժողովրդի վրա արտաքին ազդեցությունների խնդրին, գրել է, որ նման բանը միջին դարերում հնարավոր չէր, քանի որ թուրքն ավելի առաջավոր կուլտուրա ուներ, քան նրա հարևանները։ Իր «Թրքականության հիմունքները» գրքում նա գրել է. «Թուրքական պատմությունը բարոյական առաքինությունների ցուցահանդես է։ Թուրքերը հպատակ ժողովուրդներին և նրանց ազգային ու կրոնական կազմակերպություններին կրոնական և ազգային ավտոնոմիա են շնորհել։ Դա վեր է ամեն տեսակ գնահատականից»[2]։ Այնուհետև ընդգծելով, որ մարդկային բոլոր առաքինությունները սաղմնային վիճակում առկա էին թուրքերի մոտ, նա գտնում է, որ պատմականորեն «Թուրք ժողովրդի առաքելությունն է եղել բարոյականության ամենաբարձր առաքինությունների կենսագործումը և ապացուցելը, որ հնարավոր են ամենաանհավատալի թվացող անձնազոհության և հերոսության երևույթները»[3]։ Քննելով հիշյալ տեսակետը, Ա. Ժելտյակովը, միանգամայն իրավացիորեն, անհիմն է համարում Թ. Թունայայի բերած փաստարկները, քանի որ դրանք «չեն համապատասխանում պատմական ճշմարտությանը»[4]։ Նույնը կարելի է ասել նաև Զիա Գյոկալպի ձևակերպումների մասին։

Օսմանյան կայսրությունում Եվրոպայի փորձի կիրառումը, եվրոպական ուղիով ընթանալը XIX դարում դառնում էր կենսական խնդիր։ Անհրաժեշտ էր, սակայն, հաղթահարել նաև հոգեբանական արգելքը, որը կապված էր Արևմուտքի և, ընդհանրապես, քրիստոնեական աշխարհի հանդեպ գոյություն ունեցող

[1] Tunaya T. Z., Türkiye'nin siyasi hayatı batılılaşma hâreketi Ist., 1960, s. 18.

[2] Gökalp Ziya, Türkçülüğün esasları, Ankara, 1961, s. 102.

[3] Նույն տեղը, էջ 117։

[4] Историография и источниковедение истории стран Азии и Африки, вып. II, 1968, Л-д, стр. 127.

արհամարհանքի, վստահության բացակայության, ինչպես նաև «պիղծ» քրիստոնյաների նկատմամբ թուրքերի ունեցած մեծամտության ու ամբարտավան վերաբերմունքի հետ։

Զարգացած երկրների արդյունաբերության արտադրանքի հոսքը, հարստանալու և բարեկեցիկ, եվրոպական կյանքով ապրելու վերնախավի ձգտումն ու առաջընթացի տրամաբանությունն ուղի հարթեցին երկրի «արևմտականացման» համար։ Իսկ երիտթուրքերի տիրապետության տարիներին արդեն «կայսրության եվրոպականացումը կառավարող կուսակցության ծրագրի տեսք ընդունեց»[1]։

Պատմական այս տեղաշարժերը, ինչպես նշվեց, իրենց խոր հետքերը թողեցին երկրի առաջընթացի վրա և շարունակում են ազդել նաև թուրք պատմագիտության վրա։ Մի շարք հայտնի պատմաբանների գրքեր արդեն իրենց խորագրերում ցույց են տալիս հեղինակների դրական վերաբերմունքը դեպի քննվող երևույթը։ Այսպես, Թ. Թունայայի աշխատությունը կոչվում է «Արևմտականացման շարժումը Թուրքիայի քաղաքական կյանքում», Է. Կարալինը՝ «Շարժումներ եվրոպականացման ուղիով», Թ. Մյումթազինը՝ «Արևմտյան քաղաքակրթության ո՞ր փուլում ենք գտնվում»[2] և այլն։

Թունայան եվրոպականացման շարժումն ընկալում է որպես Արևմուտքի ազդեցության ուժեղացման պայմաններում կայսրությունը վերահաս կործանումից պահպանելու միակ միջոց։ Օյա Սենչերի կարծիքով, XIX դարում բոլոր պետական գործիչները մտածում էին կայսրության հարատևության մասին և «ամենագործնական և արմատական միջոց» էին համարում «շրջադարձը դեպի Արևմուտք, արևմտյան կազմակերպությունների ընդօրինակումը և այդ ուղղությամբ բարեփոխումներ անցկացնելը»[3]։ Դոկտ. Թ. Մյումթազը Թուրքիայում իրացվող ռեֆորմները գնահատում է որպես «արևմտյան քաղաքակրթություն մտցնող» միջոցառումներ։ Դրանով է նա բացատրում այն երևույթը, որ փաստորեն «պատճենահանվում էին որպես քա-

---

[1] Историография и источниковедение истории стран Азии и Африки, вып. II, 1968, Л-д, стр. 130.

[2] Թունայա, նշվ. աշխ., Karal E. Z., Garplılaşma hâreketleri Tanzimat Kitabı, Ist. 1940, Dr. Mumtaz T., Garplılaşmanın neresindeyiz?

[3] Սենչեր Օ., նշվ. աշխ., էջ 42։

ղաքակրթության օրինակներ՝ որոշ ժողովուրդների օրենքները, կազմակերպությունները, սովորույթները և, հատկապես, հագուստը, ապրելակերպը»[1]։

Հաշվի չառնելով երկրի հնարավորությունները, կայսրության ղեկավարները ժողովրդին տարան ծանր պատերազմների ու նոր տարածություններ գրավելու ուղիով։ Իսկ դա պահանջում էր հավելյալ միջոցներ։ Պարտքերն աճեցին և թուրք ժողովուրդն ի վիճակի չեղավ դրանք մարելու։ Այս պատճառով նա խրվեցմնաց զարգացման որոշ աստիճանի վրա և սկսեց հետ մնալ ուրիշներից։

Թ. Մյումթազը այնուհետև գրում է, որ «թուրք ժողովուրդը գիտական նախաձեռնությունների մեջ չէր ցուցաբերում իսկական շահագրգռվածություն»[2]։ Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Խալյուկ Ջիլլովը երկրի հետամնացությունը բացատրում էր նրանով, որ «ժողովրդի մեջ տիրապետում էր պահպանողական մտածողությունը»[3]։ Թուրք խոշոր պատմաբան Էնվեր Կարալն իր բազմահատոր աշխատության մեջ Օսմանյան կայսրությունում արդյունաբերության զարգացման դանդաղ ընթացքը բացատրում է բանվորական ուժի, դրամի և համապատասխան գիտական մակարդակի բացակայությամբ՝ «Օսմանյան պետական գործիչները,— գրում է նա,— չունեին ժամանակակից տնտեսագիտական գիտելիքներ... Նրանք առողջ տնտեսական քաղաքականություն չէին վարում»։ Այդ քաղաքականության սոցիալական արմատները քննելիս նա ընդգծում է, որ վերնախավի ներկայացուցիչները «չէին ցանկանում, որպեսզի ժողովուրդն ամբողջովին ազատագրվեր բթացնող տգիտությունից... որովհետև, այդ դեպքում, նրանք կզրկվեին ժողովրդի թիկունքում շռայլ կյանք վարելու հնարավորությունից»[4]։ Է. Կարալի կարծիքով, իրերի նման վիճակը հետևանք էր սուլթանի ու նրա պաշտոնյաների այն համոզման, որ ծուլությունն ու անտարբերությունը համակել էին ժողովրդական մասսաներին, արմատավորվել էին հասարակության բոլոր խավերում, և այդ երևույթը հանդիսացավ «երկրի դժբախտությունների պատ-

---

1 Մյումթազ Թ., նշվ. աշխ., էջ 13։

2 Նույն տեղը, էջ 19—20։

3 Джиллов Х. З., Экономика Турции, М., 1971, стр. 30.

4 Karal E. Z., Osmanlı tarihi, cilt VII, Ankara, 1956. s. 255.

ճարը»։ Չարիքներից դուրս գալու գլխավոր ուղին նա տեսնում է ժողովրդական կրթության բարելավման մեջ¹։

Մյուս անվանի պատմաբան Օ. Լ. Բարկանը, որը ավելի քան քառասուն տարի զբաղվել է միջնադարյան հողային հարաբերությունների ուսումնասիրությամբ, հրատարակել է բազմաթիվ աշխատություններ, ի թիվս որոնց եռահատոր «Օսմանյան կայսրության գյուղատնտեսության իրավական և ֆինանսական հիմունքները XV—XVI դարերում», չի ձերբազատվել հիշյալ հարաբերությունները իդեալականացնելու փորձերից։ «Գործոնները,— գրել է Օ. Բարկանը,— որոնք քայքայեցին Օսմանյան կայսրության սոցիալական ու տնտեսական համակարգը և այլասերեցին այն, արդյունք էին ոչ այնքան ներքին, նորմալ, սեփական զարգացման հակասությունների, որքան կայսրության սահմաններից դուրս հասունացող հեղափոխական ուժերի»²։ Բալկանյան պրոբլեմներին նվիրված և Բուխարեստում 1976 թ. նոյեմբերին կայացած միջազգային կոնֆերանսում նա հանդես եկավ «Օսմանյան հողային օրենսդրությունը XVI—XVIII դարերում» թեմայով։ Զեկուցման ամբողջ պաթոսը նա ուղղեց օսմանյան տիրապետությունը գովաբանելուն։ Ագրարային հարաբերությունների «արդարացի» լինելը զեկուցողը փորձեց ապացուցել այն փաստով, որ իբր Թուրքիայում երբեք չեն եղել գյուղացիական ապստամբություններ³։ Օ. Բարկանի թեզերը ենթարկվեցին խիստ քննադատության (և ոչ միայն մարքսիստ հետազոտողների կողմից)։ Թուրք պատմաբաններ և սոցիոլոգներ Ն. Բերքեսը, Շ. Մարդինը, Ք. Կարպատը լինելով արևմտյան ուսումնական հաստատությունների աշխատակիցներ, իրենց հայացքներով և մեթոդոլոգիայով հարում են արևմտյան պատմագիտության տեսակետներին։ Նրանք առաջին պլանի վրա են դնում Օսմանյան կայսրության ներքին զարգացումը, որը ինչ-որ չափով երկիրը մոտեցրեց Արևմուտքի պետությունների մակարդակին և հնարավոր դարձրեց եվրոպականացման պրոցեսը։

Թուրք հեղինակների առաջադեմ թևին պատկանող մի խումբ

¹ Idem. cilt VIII, 1962, s. 452.

² Sencer M., Osmanlı toplum yapısı, s. 278.

³ Տե՛ս «Балканские исследования, вып. 3, Освободительные движения на Балканах», М., 1978, էջ 310.

երիտասարդ-հետազոտողներ խստորեն քննադատում են արտաքին ազդեցության դերը։ Ավելի հանգամանալից ու խոր կերպով վերլուծելով հասարակական կարգերն ու սոցիալական փոխհարաբերությունները, նրանք եկել են այն եզրակացության, որ Արևմուտքի միջամտությունն իրը խանգարել է Օսմանյան կայսրության զարգացման նորմալ ընթացքին։

Մ. Սենչերը, հենվելով ասիական արտադրաեղանակի մասին Կ. Մարքսի հայտնած տեսակետների և հողի պետական սեփականության առկայության փաստի վրա, գտնում է, որ Թուրքիայում գոյություն չի ունեցել սովորական իմաստով ֆեոդալական հասարակարգ։ Հենց այս պատճառով էլ, նրա կարծիքով, խոսել այստեղ կապիտալիզմի զարգացման պատմական ուղու մասին՝ չի կարելի՝ Երկրում տիրապետող է եղել «ասիական արտադրաեղանակը», որի պայմաններում ղեկավարվող կենտրոնը, լինի դա պետական իշխանություն, թե բանակի հրամանատարություն, «հնարավորություն չովեց սաղմնավորվելու կապիտալիզմին, որը նախապատրաստվել էր ֆեոդալական արտադրաեղանակի ներքին հակասությունների շնորհիվ»[1]։ Սենչերի կարծիքով, Թուրքիայի նման երկրներում կապիտալիզմը ոչ թե ներքին զարգացման, այլ արտաքին գործոնների արդյունք էր. Արևմուտքի ներխուժումը սկսած XVI դարից, դրսից ներմուծվող կապիտալիստական հարաբերությունները, նրա ասելով, ոչնչացրին «տեղական կապիտալիզմի զարգացման պայմանները»[2]։ Այնուհետև սոցիալական տեղաշարժերի առկայությունը նա բացատրում է ոչ թե ներքին փոփոխություններով, այլ «արևմտյան կապիտալիզմի քայքայիչ ազդեցությամբ»։ Ընդհանուր առմամբ ճիշտ մեկնաբանելով ասիական արտադրաեղանակի ազդեցությունը, Մ. Սենչերը, այնուհանդերձ, չի թափանցել նրա էության խորքը։ Նա հաշվի չի առել հողագործության համայնական բնույթը, որը արգելակում էր կապիտալիստական սեփականության և նրա վրա հենվող արտադրության ձևերի հաստատումը։ Նա անտեսել է, որ հողի պետական սեփականությունը ևս ֆեոդալական սեփականության ձևերից է և որ սոցիալական այդ կառուցվածքները ներքնապես քայքայվում էին արտադրողական նոր ուժերի զարգացման ազդեցության հետև-

[1] Sencer M., Osmanlı toplum yapısı, s. 265.

[2] Նույն տեղը, էջ 302։

վանքով։ Օ. Սենչերը Օսմանյան կայսրության ֆեոդալական տնտեսության քայքայումը նկատելի է համարում «հատկապես 1870-ական թվականներից, երբ, կարծես բռնի կերպով, դրսից մտցված կապիտալիզմից մղված տնտեսությունը տեղափոխվում էր կապիտալիստական ձեռնարկությունների ստեղծման, ցամաքային ու երկաթուղիների շինարարության և կապիտալիստական շուկայի զարգացման ճանապարհի վրա»[1]։ Այս նա զարգացնում է այն միտքը, որ կայսրությունը, եթե ի վիճակի լիներ որպես «փակ ամբողջություն» դիմակայել արտաքին ազդեցություններին, գնալու էր ուրիշ ճանապարհով։ Իսկ քանի որ նման բան տեղի չունեցավ, երկրի «ներքին զարգացումը խանգարվեց, շեղվեց բնականոն ընթացքից և մտավ մի նոր ուղու մեջ»[2]։

Թուրքիայում կապիտալիզմի զարգացման և բանվոր դասակարգի ձևավորման վերաբերյալ իր աշխատության մեջ Կուրտհան Ֆիշեկը ևս մեղադրում է Արևմուտքին՝ տեղական արտադրությունների քայքայման և տնտեսության հետամնացության համար։ Ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու սկիզբը նա համարում է թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավումը 1453 թ.։ Դրան, իբր, հետևեց առևտրի աշխուժացումը, Ջենովայի վաճառականների սիստեմատիկ այցելությունները, որոնք իրենց բերած ոսկու և արծաթի փոխարեն մեծ քանակությամբ տանում էին հումք և տեղական արդյունաբերության ապրանքներ։ «Սկսած XVI դարի կեսերից,— շարունակում է Կ. Ֆիշեկը,— երբ սկսվեց հումքի գների արագ բարձրացումը, Անատոլիան ձեռք բերեց Եվրոպայի համար հումքի կարևոր բազայի նշանակություն»[3]։

Հետագայում Թուրքիայի զարգացման ուղղությունը և որոշակի արտադրանքի անհրաժեշտությունը նա կապում է Արևմուտքի պահանջմունքների հետ՝ Նույնիսկ գյուղատնտեսության առաջընթացը Կ. Ֆիշեկը համարում է «ոչ թե ներքին պահանջմունքի..., այլ արտաքին շուկայի կարիքների հետևանք»[4]։

---

[1] Sencer O., Türk Toplumunun tarihsel evrimi, s. 43.

[2] Նույն տեղը, էջ 39։

[3] Dr. Fişek K., Türkiye'de kapitalizmin gelişmesi ve işçi sınıfı s. 40.

[4] Նույն տեղը, էջ 3։

Այնուհետև, սեփականության կենտրոնացումը, բանվորական ազատ ձեռքերի քանակական աճը, արտադրության որոշ աշխուժացումը և կախման ուժեղացումը արևմտյան պետություններից նա բացատրում է վերջիններիս հետ կնքված պայմանագրերի հետևանքով ստեղծված իրավիճակով։ Ըստ Ֆիշեկի, մասնավոր ձեռնարկատերերն ավելի կենսունակ էին, քան պետական ձեռնարկությունները, որովհետև առաջինները կապված էին օտար կապիտալի հետ։ «Մենք տեսնում ենք,— եզրակացնում է հեղինակը,— որ տնտեսության կապերն արտաքին աշխարհի հետ, XIX դարում հանգեցրին, թեկուզ դանդաղ, ֆեոդալական կարգը կապիտալիստական արտադրաեղանակով փոխարինելուն», որը, ի վերջո, նա համարում է պրոգրեսիվ երևույթ[1]։

Բազմիցս վկայակոչված «Թուրքիայի հասարակական կարգը» աշխատության մեջ Դողան Ավջըօղլուն ևս ընդունում է եվրոպական ձևով հայրենիքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական համակարգի էվոլյուցիան՝ ֆեոդալիզմից դեպի արդյունաբերական կապիտալիզմին անցնելու իրողությունը։ Բայց կայսրության և հանրապետական Թուրքիայի հետամնացության ու դանդաղ զարգացման համար նա ևս մեղավոր է ճանաչում Արևմուտքին։ Նրա պատկերացմամբ Թուրքիան միջնադարում գտնվում էր «զարգացման առավել բարձր մակարդակի վրա և անհնար չէր, որ արևմուտքից առաջ մտներ արդյունաբերական կապիտալիզմի ուղին»[2]։ Սակայն պատմական մի շարք գործոններ փոխել էին իրերի վիճակը և «Արևելքի գերազանցությունը փոխարինվել էր Արևմուտքի գերազանցությամբ»[3]։ Ահա այդ հսկայական տեղաշարժերը, հեղինակի կարծիքով, առաջացրին կայսրության ճգնաժամը, որի հետևանքով տեղի ունեցավ «կենտրոնական իշխանության փաստական փլուզումը և նրա հիմնական հենարանը հանդիսացող ագրարային սիստեմի այլասերումը»[4]։ Բոլոր պատմական ու հասարակական-քաղաքական շարժերի մեղքը Ավջըօղլուն դնում է արտաքին ազդեցությունների վրա և հայտարարում. «Ուրեմն Թուրքիան ոչ

---

[1] Dr. Fisek K., Նշվ. աշխ., էջ 38։

[2] Avcıoğlu D., Türkiye'nin düzeni..., s. 222.

[3] Նույն տեղը, էջ 223։

[4] Նույն տեղը, էջ 56։

թե հետ մնացած, այլ իմպերիալիզմի կողմից հետ թողնված մի երկիր է»[1]։

Վերոհիշյալ տեսակետի ամենահետևողական արտահայտողն ու Արևմուտքի ամենախիստ քննադատն Իսմայիլ Ջեմն է։ Երեք թե չորս անգամ վերահրատարակված, և Թուրքիայի հետ մնալու պատճառներին նվիրված իր աշխատության մեջ նա ներկայացնում է Թուրքիայի վաղմիջնադարյան հասարակարգը, այն համարելով «ամենից առաջավորը, ամենից քաղաքակրթվածը, ամենից մարդկայինը»[2]։ Նա գտնում է, որ կայսրության ծաղկման շրջանում այնտեղ չէին կարող լինել ֆեոդալական կարգեր, որ այն Եվրոպայի նման չէր անցել ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմ, այլ, ընդհակառակը, հավասարության և արդարության սկզբունքներից նահանջել էր դեպի ֆեոդալական հարաբերությունները[3]։

Օսմանյան կայսրության քաղաքական ու պետական գործիչների կատարած բարեփոխումների փորձերը նա համարում է բացասական։ Այդ գնահատականը Ջեմը հիմնավորում է նրանով, որ Եվրոպայի ազդեցության ուժեղացումը քայքայեց տեղական արհեստներն ու արտադրությունն ընդհանրապես, սարկացրեց երկիրը։ Գրքի բազմաթիվ էջեր հեղինակը նվիրել է հողային հարցին։ Նա դեմ է արտահայտվում Թուրքիայում իրար ետևից ընդունված օրենքներին, որոնք հետզհետե ամրապնդում էին հողի սեփականությունը, ի վնաս երբեմնի տիրապետող հողի պետական սեփականության։ Նրան վրդովեցնում է հատկապես կանանց ևս հողը ժառանգելու իրավունք տալը։ «Թանզիմաթը,— գրում է Ջեմը,— դարմանելու սխալ եղանակով ավելի ևս բորբոքեց տնտեսության մեջ տիրող հիվանդությունը»[4]։ Եվրոպականացման սկիզբը նա համարում է 1800 թվականը։ Դրանից ծայր առած տեղաշարժերը նա որակում է որպես տընտեսական կյանքի լիբերալացում, մասնավոր կապիտալի տիրապետության ամրապնդում, արևմտյան երկրներից ընդօրինակած քաղաքական կազմակերպությունների հաստատում։ Այս ամենի գնահատականը նա տալիս է գրքի հետևյալ տո-

---

[1] Avcıoǧlu D., նշվ. աշխ., էջ 224։

[2] Cem I., Türkiye'de geri kalmışlıǧın tarihi, Ist, 1971, s. 46.

[3] Նույն տեղը, էջ 176—177։

[4] Նույն տեղը, էջ 221։

գնում. «Արևմտականացումը, արդեն գոյություն ունեցող հասարակական և տնտեսական այլասերումն ավելի ևս արագացնելով, հանդիսացավ կայսրության փլուզման գլխավոր գործոններից մեկը»[1]։

Անհրաժեշտ ենք գտնում ընդգծել նաև, որ Արևմուտքի դեմ ուղղված, երբեմն շատ խիստ, քննադատական ու բացասական գնահատականներին զուգահեռ իրենց զարգացումն են ապրել արևմտամետ մի շարք ուղղություններ։ Մեծ մասամբ, սրանք ավելի ուժեղ ու ազդեցիկ են եղել, քան բերված քննադատական տեսակետները։

Այդ բանի վառ ապացույց կարող է ծառայել երիտթուրքական բոլոր կառավարությունների ներքին տնտեսական ու արտաքին քաղաքականության ամբողջ պատմությունը։ Իրենց պրակտիկ քաղաքականության և տնտեսական գործունեության մեջ, սկսած XIX դարի կեսերից, երկրի կառավարիչները, ինչպես նաև երիտթուրքերը մշտապես հենվել են այս կամ այն մեծ տերության, կամ պետությունների խմբի վրա և փաստորեն չեն հանդիսացել Թուրքիայի ազգային շահերը պաշտպանող ուժ։ Ընդհակառակը, նրանք կողմնակից են եղել օտար կապիտալի հանդեպ «բաց դռների» քաղաքականությանը և հենց այդ նկատառումներով մեծ պետությունների հնարավորությունների և նրանց միջև եղած հակասությունների օգտագործելն ու անհրաժեշտ դեպքերում խուսանավելը համարվել է իմաստուն քաղաքականության ցուցանիշ։

«Երիտթուրքերը,— իրավացիորեն գրում է պրոֆ. Ա. Միլլերը,— իրենց խնդիրն էին համարում ոչ թե պայքարը հանուն երկրի ազգային անկախության, այլ ընտրելը որևէ իմպերիալիստական խմբավորում, որի «հովանավորության» տակ, իրենց տեսակետով ավելի ձեռնտու կլիներ դնել Թուրքիան ամբողջապես»[2]։

Ստանձնելով երկրի ղեկավարությունը, նրանք իրենց արտաքին քաղաքականությամբ ավելի ծանրացրին նրա կիսագաղութային վիճակը։ Նույնիսկ Թուրքիայի ներքին խնդիրներին անդրադառնալիս նրանք մշտապես հաշվի էին առնում օտար կապիտալի շահերը։ Այսպես, օրինակ, երբ 1909 թ. հունիսին

---

[1] Cem I., նշվ. աշխ., էջ 218։

[2] «Всемирная история», т. VII, стр. 360.

Մեջլիսում քննարկվում էր կառավարության օրինագիծը գործադուլների մասին, ներքին գործերի մինիստր Ֆերիդ փաշան իր խոր անհանգստությունը հայտնեց այն առթիվ, որ ժողովրդական շարժումներն ու բանվորական ելույթները կարող են «վախեցնել եվրոպական կապիտալիստներին, հուզել երկիրը, խանգարել արդյունաբերության զարգացմանը, մի խոսքով՝ հասցնել խռովության»[1]։

Ընդհանրապես, իրենց ֆինանսական պետքերը հոգալու կարևորագույն ուղին, ներքին հարկերից ու տուրքերից հետո, երիտթուրքերը համարել են տարբեր տիպի ու կարգի արտաքին փոխառությունները։ Ղեկավարության տրամադրությունները ցայտուն կերպով արտահայտող փաստաթղթերից մեկը կարող է համարվել շարժման լիդերներից Ջավիդ բեյի հայտարարությունը, որը, որպես ֆինանսների մինիստր, ասել է հետևյալը. «Մենք արտասահմանյան կապիտալի կարիքն ունենք, որպեսզի ավարտենք (սկսած) աշխատանքները։ Մենք դրամը կվերցնենք այնտեղից, որտեղ կտան ավելի նպաստավոր պայմաններով... կապիտալի հայրենիքը այն երկիրը չի, որտեղ նա գոյանում է, այլ այն, ուր նա ներդրվում է։ Խոսում են, որ իբր մենք օտար կապիտալի հանդեպ ունենք թշնամանք, բայց դա ճիշտ չէ»[2]։ Իր տեսակետը համոզիչ դարձնելու նպատակով նա լսողներին հղում է դեպի երիտթուրքերի չորսամյա գործունեությունը, որը լեցուն է փոխառությունների փաստերով։

Բոլոր դեպքերում, երկրի կառավարողները, մամուլի օրգանները և պաշտոնական հիմնարկները, իբր նախապայման, ձևականորեն առաջ էին քաշում անկախության գաղափարը։

«Թասֆիրի էֆքյար» լրագիրը գրում էր, որ սկզբունքորեն թուրքերը դեմ չեն «եվրոպական կապիտալների մուտքին Թուրքիա, սակայն մենք ցանկանում ենք, որ այդ կապիտալները մուտք գործեն որպես դրամագլուխ և իրենց հետ չբերեն քաղաքական նկրտումներ մեր երկրի նկատմամբ»[3]։ Իրականում նման ցանկությունը չէր կարող փոխել իրերի դրությունը։ Երիտթուրքերը գիտակցաբար մերձենում էին գերմանական բլոկին և հետզհետե ավելի ու ավելի կախյալ վիճակ էին ստեղծում

---

[1] «Ազատամարտ», 24. 6. 1909, № 2։

[2] Восточный сборник», кн. II, 1916, стр. 32.

[3] «Санкт-петербургские ведомости», 12/25. 12. 1913.

Թուրքիայի համար։ Անշուշտ, նրանք փորձում էին իրենց քայլերն արդարացնել իբր երկրի առաջընթացն ապահովելու նպատակներով։ Երիտթուրքական պարագլուխներից Թալեաթ փաշան իր հուշերում գրել է. «Մենք բոլորս համոզված էինք, որ մեր գոյությունը պահպանել կարողանալու համար Թուրքիայի դաշինքը (Գերմանիայի) նման եվրոպական տերության հետ անհրաժեշտություն էր։ Թուրքիան կարող էր ապահովել գիտության, արհեստների, արդյունաբերության և առևտրի զարգացումը, ինչպես նաև պահպանել տարածքային ամբողջականությունը միայն այնպիսի պետության օգնությամբ, որն ուներ զարգացման բարձր մակարդակ»[1]։ Օգտվելով նման վերաբերմունքից, Գերմանիան մուտք էր գործում Օսմանյան կայսրության քաղաքականության, տնտեսական ու կուլտուրական կյանքի ոլորտները, ակտիվորեն ցուցաբերելով իր ներկայությունը բոլոր մանր ու խոշոր գործերում։ Աճում էր գերմանական կազմակերպությունների, դպրոցների, թերթերի, զանազան հիմնարկությունների ներկայացուցիչների թիվը, ամրապնդվում էր նրանց դիրքը երկրի ներսում։ Այդ ամենին նպաստեց պատերազմի նախօրյակին ստեղծված «Գերմանա-թուրքական կոմիտեի» գործունեությունը։

Թուրքական հասարակական կարծիքը մշակելու նպատակով կազմակերպվում էին ժողովներ, հանդիպումներ, հայտնի պետական ու հասարակական գործիչների ելույթներ։

Կոմիտեի հիմնադիր ժողովը բացեց Մեջլիսի նախագահ Խալիլ բեյը։ Նա հույս հայտնեց, որ արդյունաբերական Գերմանիան և երկրագործական Թուրքիան փոխադարձորեն կլրացնեն իրար։ Ապա, Մեջլիսում արտասանած իր ճառում նա գերմանամետ քաղաքականությունը հիմնավորեց այն դրույթով, որ իբր թուրք հասարակայնությունն արդեն տեսնում է այն «մեծ օգուտները, որ կարող է տալ սերտ ու երկարատև մերձեցումը» մի կողմից Թուրքիայի, իսկ մյուսից՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջև[2]։ Շատ շուտով բոլորը համոզվեցին, թե ինչ «օգուտ» տվեց այդ մերձեցումը։ Նոր փոխառությունները, տնտեսական և քաղաքական ազդեցության ուժեղացումը Թուրքիային դարձրին գերմանական իմպերիալիստների ֆինանսական վասալը, որը

---

[1] Talât paşanın hatıraları, Ist. 1946, s: 23.

[2] *Տե՛ս* «Летопись», 1917, № 5—6, стр. 290.

բազմաթիվ բնագավառներում կորցնելով իր ինքնուրույնությունը, ստիպված էր հլու և հնազանդ կատարել իր տիրոջ պահանջները։ Այս վերջիններն իրացվում էին հեշտությամբ, հաճախ կամովին, քանի որ, ինչպես նշվեց, արտաքին կապերը վերնախավի հարստացման կարևոր աղբյուրներից էին։

Հետևանքը եղավ այն, որ 1914 թ. արտաքին վարկերի գումարը հասավ 64 մլն. ֆունտ ստեռլինգի։ Այդ գումարը բաժանված էր հետևյալ կերպ. բանկերում կենտրոնացված էր 10 մլն., երկաթուղիների շինարարության մեջ՝ 39 մլն., մունիցիպալ հիմնարկներում՝ մոտ 5 մլն., առևտրի ու արդյունաբերության մեջ՝ 9 մլն., կամ ընդհանուր գումարի մեկ յոթերորդ մասը միայն[1]։

Նշված ընդհանուր գումարի 45,4 %-ը պատկանում էր Գերմանիային, 25,9 %-ը՝ Ֆրանսիային և 16,9 %-ը՝ Անգլիային։ Մնացած 12,8 %-ը բաժանվում էր ԱՄՆ-ի, Բելգիայի, Իտալիայի, Հոլանդիայի և այլ պետությունների միջև[2]։ Ահա նման կախվածության պայմաններում Թուրքիան ստիպված էր մասնակցելու առաջին համաշխարհային պատերազմին։ Փաստերը ցույց են տալիս, սակայն, որ պատերազմում նա կատարում էր ոչ միայն գերմանական իմպերիալիստների կամքը, այլև հետապնդում էր իր իսկ նվաճողական պլանների իրագործումը։ Բանն այն է, որ գերմանական բլոկի միլիտարիստական շրջաններն ամեն կերպ նպաստում էին Թուրք վերնախավի Թուրանական, պանթյուրքական ու պանիսլամական գաղափարախոսության տարածմանը և շովինիստական նկրտումների կենսագործմանը, որը միանգամայն համընթաց էր Թուրքական կառավարության պրակտիկ քաղաքականությանը։ Միաժամանակ ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ Թուրք հրամանատարներն անգամ իրենց վերադասի հրամանները ստանում էին գերմանացի խորհրդականների կամ գերմանական կապի ծառայության միջոցով։ Այսպես, 1914 թ. հոկտեմբերի 24-ին ռազմական մինիստր Էնվեր փաշան Թալեաթի և Ջեմալի հետ հանդիպում ունենալուց հետո, փակ ծրարով, ծովակալ Սուշոնին հանձնեց երկու օր առաջ իր ստորագրած հետևյալ հրամանը. «Թուրքական նավատորմի խնդիրն է՝ գրավել տիրապետու-

---

[1] Տե՛ս Окан Халис, Развитие на капитализма в Турция, стр. 23.

[2] Hüsrev Y , Türkiye köy iktisadiatı, s. 132.

թյունը Սև ծովում։ Ռուսական նավատորմի տեղակայումը և առանց պատերազմ հայտարարելու, որտեղ որ հանդիպեք, հարձակվեք նրա վրա»[1]։

Հրամանի կատարումը սկսվեց հոկտեմբերի 27-ին, իսկ հաջորդ օրերին արդեն գնդակոծվում էին Օդեսան և Սևաստոպոլը։ Այդպես սկսվեց չհայտարարված պատերազմը, որի միջոցով Թուրք վերնախավը հույս ուներ իրականացնելու իր շովինիստական նպատակները։ Բայց պատերազմին մասնակցելը բոլորովին չէր համապատասխանում հետամնաց, կիսագաղութային վիճակում գտնվող երկրի պետական և ազգային շահերին։ Դեռ ավելին։ Ն. Լուդշուվեյտը գրում է, որ մի շարք պետական ու զինվորական գործիչների կարծիքով «պատերազմում ռազմական գործողություններին և գաղտնի քայքայիչ միջոցառումներին Թուրքիայի մասնակցության հետևանքով համաշխարհային սպանդը երկարաձգվեց երկու տարով»[2]։ Դրանից էլ պատերազմող երկրներից ամենից խիստ տուժողը հենց ինքը Թուրքիան էր։ Ռազմական ծախսերի աճը պետական պարտքը հասցրին աստղաբաշխական թվերի՝ 2 200 մլն. դոլարի կամ 424 մլն. թուրքական ոսկի լիրայի։ Ուղղակի պատերազմական ծախսերը կազմում էին այդ թվերի կեսը։ Կային, սակայն, անուղղակի, բայց պատերազմի հետ կապված ծախսեր, որոնց գումարը հավասարվեց 4 800 մլն. դոլարի։ Պատերազմի տարիների ընդհանուր ծախսերը հասան պատկառելի գումարի 6 400 մլն. դոլարի[3]։ Նշվածից բացի, հսկայական էին մարդկային ընդհանուր կորուստները՝ մոտ 2,5 մլն. ճակատում և թիկունքում ու նյութական վնասը՝ թե որպես պատերազմական գործողությունների և թե որպես իշխանությունների ռազմական ու ներքին քաղաքականության հետևանք։

Անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել, որ Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքի և նրա հետագա զարգացման վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում պատերազմի տարիներին և դրա-

---

[1] Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., М., 1966, стр. 59.

[2] Նույն տեղը, էջ 309։

[3] Мирский С. К., К вопросу об определении стоимости мировой войны для Турции, «Новый Восток», 1923, № 3, стр. 472.

նից հետո կազմակերպված քրիստոնյաների և հատկապես հայ ժողովրդի ցեղասպանությունը։ Հանրահայտ է, որ այն նախաձեռնեցին ու ղեկավարեցին երիտթուրքերի պարագլուխները, հայերի բնաջնջումը հայտարարելով համապետական և համազգային խնդիր։ 1915 թ. մայիսի 23-ին այդ պարագլուխներից Բեհաէդդին Շաքիրը տվեց հիշյալ խնդրի հետևյալ պարզաբանումը». «Հայերը կանգնած են մեր համիսլամական և համաթուրքական սրբազան իդեալներու իրականացման ճամբուն վրա ու մենք անխուսափելիօրեն կբախվենք անոնց հետ։ Ասիկա վեր է և դուրս է մեր անձնական զգացմունքներեն և տրամադրություններեն։ Մենք հարկադրված ենք տարբրայնորեն ոչնչացնել մեր ճամբուն վրայեն այն ամենը, ինչ որ արգելք հանդիսանա մեր ազգային սրբազան իդեալներուն»[1]։

Անշուշտ, ոչնչացնելու մարմաջը սնվել ու նախապատրաստվել էր տասնամյակների ընթացքում և հատկապես հայկական խնդիրը միջազգային հարց դառնալուց հետո՝ Պատերազմին մասնակցելու կարևոր պատճառներից մեկն այդ պլանի իրագործումն էր։ Բացի այդ, գերմանական իմպերիալիզմի շահերը պահանջում էին բարելավել Բաղդադի երկաթուղու շահագործման պայմանները, որին կարող էր նպաստել հայերի տեղահանությունը։ Իր ելույթներից մեկում այդ շահերի ջատագովներից Պաուլ Ռոհրբախը հայտարարել է. «Միջագետքում, որով անցնում է Բաղդադի երկաթուղին, բնակչությունը շատ նոսր է և դա խիստ անհաճո է գերմանացիների համար, քանի որ բավականաչափ բնակչության բացակայությունը երկաթուղագծի շրջանում տնտեսապես թուլացնում է նրան։ Ուստի պետք է հայերին ստիպել գաղթելու Միջագետք»[2]։ Ինչպես տեսնում ենք, այս հարցում ևս, թուրք վերնախավի և իմպերիալիստական մոնոպոլիաների շահերը համընկան։ Ուստի Թուրքիայի կառավարիչները, առանց հետևանքները հաշվի առնելու, պատերազմի առաջին օրերից սկսեցին տեղահանման ու բնաջնջման պլանի իրականացումը։ Բռնագրավումները, կողոպուտն ու թալանը, տեղական իշխանությունների ցուցմունքով, սկիզբ առան, գի-

---

[1] Լեոն Վարդան, Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գույքերը, Պեյրութ, 1970, էջ 214։

[2] Արզումանյան Մ., Հայաստան 1914—1917, Եր., 1969, էջ 301։

նակոչի մասին 1914 թ. հուլիսի 30-ին շենքերի պատերին կըպցըրած հայտարարությունների հետ միաժամանակ։

Արագորեն աճում էր բանակը, որին պետք էր ապահովել հանդերձանքով, սննդամթերքով, հաղորդակցության միջոցներով։ Իսկ զինված ուժերի կորիզը կազմող սուլթանի հին բանակը «նողկալի վիճակ մը ուներ, մերկ ու անոթի էր։ Սպայությունը տարվան մեջ երկու անգամ պայրամե-պայրամ ռոճիկ կստանար ու զեղծարարությամբ, կաշառակերությամբ կերպով մը գլուխ կպահեր»[1]։ Թուրքական բանակը այդ վիճակից դուրս չեկավ նույնիսկ պատերազմական գործողությունների նախօրեին։ Կ. Պոլսում ռուսական դեսպան Ա. Գիրսը 1914 թ. հոկտեմբերի 9-ին հեռագրում էր Պետերբուրգ. «Էրզրումի գլխավոր հյուպատոսը հաղորդում է. Ստուգումը անց է կացնում Պոսելտ փաշան (գերմանացի— Հ. Ի.)։ Շրջանում հավաքվել է 300.000-ից ոչ պակաս զինվորական, որոնցից մոտավորապես 100.000-ը կանոնավոր զորքեր են, որոնք եկել են Դիարբեքիրից, Սիվասից, Խարպուտից։

Բանակը չի ապահովված հանդերձանքով, հրացաններով և սննդամթերքով։ Սկսվել է սովը և դասալքությունը։ Հայկական կոտորածը հետաձգվել է հարուստ մահմեդականների պահանջով, որոնք Ռուսաստանի կողմից ապահովության երաշխիք են սպասում իրենց անպատիժ գործունեության համար...» ստորագրությունը՝ Ադամով[2]։

Բազմաբովանդակ այս հեռագիրը պատկերում է երկրի ընդհանուր վիճակը նախապատերազմյան օրերին, երբ հրամայական անհրաժեշտություն էր դարձել բանակը դուրս բերել այդ վիճակից և նոր զորակոչված զինվորականների նվազագույն պահանջները բավարարել՝ հանուն առաջադրված շովինիստական նպատակների։ Եվ ահա պետական կարևոր խնդիր են դառնում սննդամթերքների, հագուստեղենի ու բանակին անհրաժեշտ այլ պարագաների պարտադիր հավաքն ու բռնագրավումները։

Ռազմական մինիստրությունը, 1915 թ. օգոստոսի 8-ին ծածուկ հեռագրով ստորադաս մարմիններին տեղեկացնում էր

---

[1] Սյուրմենյան Գ., Երզնկա, 1947, Կահիրե, էջ 259։

[2] Տե՛ս Архив Военно-морского флота, ф. 418, оп. 1, ед. хран. 4270. л. 93.

բանակին անհրաժեշտ նյութերի մասին։ Դրանց շարքում թվարկվում էին հետևյալները. հորթուկի կաշի, աստառի կաշի, մուճակ, կոշկակարի սեպ, գամ, պտուտակ, վրան, տեղական արտադրության կտորեղեն, կոճակ, օղակ, զանազան ընդեղեններ, ցորեն, գարի, ալյուր, ձավար, լոբի, սիսեռ, ոսպ, բրինձ, շաքար, յուղ, ոչխար, այծ, արջառ, գրաստ, դռան ու պատուհանի ծխնի, փեղկեր, կողպանք, շինափայտ, սոսինձ, կապար, կլայեկ, երկաթյա խողովակներ, բժշկական իրեր և այլն[1]։ Բայց, քանի որ նշված և այլ իրերի զգալի մասը Թուրքիայի արդյունաբերությունը չէր արտադրում, այն պետք է բռնագրավվեր ժողովրդից՝ մեծ մասամբ, քրիստոնյա ազգաբնակչությունից։

Ինչպես բնորոշել է Հենրի Մորգենթաուն՝ Ամերիկայի դեսպանը Կ. Պոլսում, «Բռնագրավումը, որ ընկերացավ զորակոչին, իրականության մեջ վերածվեց քաղաքային բնակչության կողոպուտին... Թուրքերն առին այն բոլոր ձիերը, ջորիները, ուղտերը, ոչխարները, կովերը և այլ կենդանիները, զորոնք կրնային ձեռք անցնել։ Էնվեր ըսավ ինծի, թե 150.000 կենդանի էին հավաքած»[2]։ Այդ ձևով թուրք իշխանությունները ավերեցին ամբողջ գյուղեր, թողնելով գյուղում մեկ-երկու անասուն։ Դեսպանը իր հուշերում այդ ամենը որակում է որպես միջոցառում, որը «ունեցավ անխուսափելի հետևանքը ազգին երկրագործությունը քանդելու, և վերջապես հարյուր հազարավորներ մատնեց սովի»։ Այնուհետև նա շարունակում է. «Կառավարությունը ցույց տվավ ճիշտ այս միևնույն անպատկառությունը և անխոհեմությունը առևտրականներեն և խանութպաններեն ապրանք բռնագրավելու իր ձևին մեջ ալ։ Այս արարքները քիչ տարբերություն ունեին գիտակից ավազակություններէ»[3]։ Խնդիրը մոտիկից դիտելուց հետո դեսպանը դրում է, որ այդ առևտրականների մեծ մասը հայ կամ քրիստոնյա էին և կամ հրեա ու դրանց մեջ չկար ոչ մի մահմեդական։ Խանութները բռնացիորեն թալանելուց հետո թուրք պաշտոնյաները տիրոջը հանձնում էին ստացական, կամ որևէ թղթի կտոր՝ իրենց բռնագրաված բարիքների մի մասը միայն ցույց տալով։ «Այսպիսով,— եզրակացնում է հուշերի հեղինակը,— ժողովրդին մեծագույն մասին համար

---

1 Տե՛ս Լեոն Վարդան, նշվ. աշխ., էջ 143։
2 Նույն տեղը, էջ 31։
3 Նույն տեղը։

բռնագրավումը պարզորեն տնտեսական կործանում նշանակեց»[1]։ Լեոն Վարդանը միանգամայն իրավացի է, երբ թուրքական շովինիզմի արտահայտությունը հանդիսացող (քանի որ ոչ մի մահմեդական ժողովուրդ չարձագանքեց կոչին) և նոյեմբերի 20-ին հայտարարած այսպես կոչված «սրբազան պատերազմը», համարում է թալանի և ավարառության նոր խթան՝ Պոլսի խուժանը և երկրի այլ շրջանների խաժամուժը «ընկալեց իրական և իրավական իմաստը սրբազան պատերազմին և կողոպուտի ու քանդումի ծարավ ինկավ վրան»[2]։ Սայր առավ ավազակային գործողությունների մի նոր ալիք՝ քրիստոնյաներին պատկանող խանութների և առևտրական հաստատությունների վերջնական կողոպուտը։

Թուրքիայի կառավարող շրջանները կարծում էին, որ պատերազմը տևելու է մի քանի ամիս և որ դրա ծախսերը, ինչպես հավատում էին գերմանացի դաշնակիցները, հեշտությամբ կարելի կլինի ծածկել հայերի դարերով կուտակած և նրանցից գրավված նյութական հարստությամբ։ Բայց դա միայն շովինիզմով մթագնած երևակայության արդյունք էր։

Նյութական ավերածությանը հետևեց «սեֆերբերլիքը»՝ զորահավաքը, որը Մ. Արզումանյանը որակում է որպես «արևմտահայության գլխին առաջին մեծագույն պատուհասը»[3]։ Օրենքով բանակ պետք է կանչվեին 20—45 տարեկան տղամարդիկ։

Սակայն տանում էին ֆիզիկապես առողջ և արտաքնապես կարող մարդկանց, նրանց ստորաբաժանումները խառնելով թուրքական ռազմական միավորներին։

Սկզբնական շրջանում, անտեղյակ իրենց շուրջը կատարվածին, «բանակին մեջ եղող հայերը,— գրում է Եոհ. Լեփսիուսը,— պատերազմական նախարարին վկայության համեմատ քաջությամբ կռված էին բոլոր ճակատներում։ Անոնք ամենամեծ մասով զինաթափ եղան և բանակի ծառայության մեջ գործածվեցան իբրև բեռնակիր և ճամբաներու նորոգության վրա։ Ամիսներ հետո, կազմակերպված ձևով, նրանք ոչնչացվեցին. «Իրենց մահմեդական ընկերներեն սպանվեցան, 80 կամ 100

---

[1] Տե՛ս Լեոն Վարդան, նշվ. աշխ., էջ 32.
[2] Նույն տեղը, էջ 36։
[3] Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 312։

կամ ավելի հոգիանոց ջոկատներ, սպանելու հրամանով, հրացանի բռնվեցան»[1]։

Այդպես զոհվածների ընդհանուր թիվը հասավ 300 հազարի։ Հայ ազգաբնակչությունը զրկվեց իր ամենակենսունակ, աշխատունակ և ռազմունակ մասից։ 1915 թ. ապրիլից սկսվեցին հայ հասարակական ու կրոնական գործիչների և մտավորականների ձերբակալումները։ Մինչև մայիսի 10-ը ժողովրդին անջատեցին իր մոտ 3000 առաջնորդներից և խորհրդատուներից՝ գլխատեցին նրանց։ Նշված փաստերին զուգահեռ և ղեկավարվելով 1910 թ. Սալոնիկում կայացած երիտթուրքերի համագումարի, ինչպես նաև հաջորդ տարվա հոկտեմբերին կուսակցության կենտկոմի հատուկ նիստի որոշումներով, կայսրության կառավարական շրջանները օրենքներ և միջոցառումներ էին մշակում հայ ժողովրդի պլանավորված բնաջնջման և գույքերի բռնագրավման վերաբերյալ։ Միաժամանակ կենտրոնը տեղական իշխանություններին կարգադրել էր հայերին թույլ չտալ գույքերի վաճառք և իրավունք էր վերապահել տեղահանվողներին՝ իրենց հետ վերցնել մեկ կամ մի քանի օրվա սննդամթերք միայն։ Հատկապես հսկողություն էր սահմանվել թանկարժեք իրերի և զարդեղենի վրա, որոնց տանելը խստորեն արգելված էր։ Ում որ հաջողվել էր որևէ բան ծածուկ վերցնել իր հետ, թալանվել էր և հաճախ զոհվել՝ այդ իսկ պատճառով։ Բազմաթիվ են հրամանները, հրահանգները, հեռագրերը և երիտթուրքական կառավարության ու ղեկավարների բանավոր ու գրավոր ցուցումները հայերի տեղահանման ընթացքում լքված գույքերի հաշվառման և բաժանման մասին։

Դրանցից բացի, գոյություն ունեն հիմնավոր ու մանրամասնորեն մշակած գաղտնի փաստաթղթեր, որոնք ինքնին դատավճիռ են գենոցիդը կազմակերպողների համար։ Բարեբախտաբար, նրանք հայտնաբերվել և հրապարակվել են մամուլում և գրականության մեջ։ Այսպես, Հայկազն. Գ. Ղազարյանը իր հոդվածներում և «Ցեղասպան թուրքը» աշխատասիրության մեջ հրապարակել է հիմնական «օրենքներն» ամբողջությամբ։ Դրանցից կարևորը 1915 թ. մայիսի 16-ի կանոնադրությունն է՝ հայերի «լքյալ գույքերու, անշարժ կալվածներու և հողերու» վերաբերյալ։ Այն բաղկացած է 34 հոդվածներից, որտեղ ամենայն

[1] Լեփսիուս Յոհ., Հայաստանի ջարդերը, էջ 31։

մանրամասնությամբ հրահանգվում է՝ բռնագրավումները հըսկող հանձնախմբերի կազմի, աշխատավարձի և գույքերի հաշվառման ու պահպանման ձևերի, վերադասին զեկուցելու ժամկետների, ում ինչ հանձնելու, լքված բնակավայրերում և հայերի բնակարաններում մահմեդական գաղթականներին տեղավորելու կարգի և բազմաթիվ այլ հարցերի մասին։ Չեն մոռացված նաև լքյալ գույքերի տերերի «իրավունքները»։ Համաձայն կանոնադրության երրորդ հոդվածի, գույքերի գրավումը ղեկավարող հանձնաժողովը պետք է արձանագրեր «պահպանության տակ առնված գույքերում տեսակը, քանակությունը, գնահատված արժեքները և տերերում անունները...»[1]։ Պահանջվում էր այդ ամենը պահեստավորել, նշելով դրանց պատկանելությունը և պահեստները փակել, որպեսզի հարստությունները չթալանվեն։ Գույքը և իրերը վաճառելու դեպքում գոյացած գումարները «տերերում անունով, իբր ավանդ պիտի հանձնվին ելմտական (ֆինանսների) նախարարության գանձարկղին և տեղեկագիր մը պիտի կազմվի, որուն բնագիրը պիտի տրվի տեղական կառավարչության ու վավերացյալ մեկ պատճենը՝ վարչական հանձնախումբին»[2]։

Որպես ծաղր հնչող այս փաստաթուղթը միակը չէ։ Դրան հետևեցին շրջաբերականներ, տեղափոխության վերաբերյալ օրենքներ և հրամաններ, երկու տասնյակ հեռագրեր ու հրահանգներ, որոնց կատարումը, ինչպես ասվեց, սկսվել էր պատերազմի նախօրյակին և Թուրքիայի տարածքում՝ Կիլիկիայում ավարտվեց միայն 1921—1922 թթ.։ Ոչ լրիվ տվյալներով, թալանի ու ոչնչացման ենթարկվեց 66 քաղաքների ու 2500 գյուղերի հայ ու քրիստոնյա ազգաբնակչությունը, կողոպտվեցին և քանդվեցին ավելի քան 2000 եկեղեցիներ ու վանքեր, 1500 դպրոցներ և վարժարաններ[3]։

Ըստ Ա. Համբարյանի հաշվումների, որոնք ելնում են 1845 թ. մարդահամարից, արևմտահայերի թիվը 1914 թ. պետք է կազմեր 3.883.692 մարդ։ Սակայն կայսրության իշխանությունները «1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից մինչև

---

[1] Ղազարյան Հ. Գ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968, էջ 226։

[2] Նույն տեղը, էջ 230։

[3] Նույն տեղը, էջ 420, նաև «Հուշամատյան մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 1025։

առաջին համաշխարհային պատերազմը ընկած շրջանը կոտորել, արտաքսել և ձուլել էին մոտ մեկ միլիոն, իսկ բնական աճի հետ՝ 1 300.000 հայ։ Այս երկու հիմնական տվյալներից ելնելով, հեղինակը գտնում է, որ Թուրքիայում 1914 թ. հայ ազգաբնակչության թիվը հավասար էր 2.583.692 մարդու[1]։

Երիտթուրքերի կազմակերպած սպանդի զոհ դարձան շուրջ 2 միլիոն հայեր, իսկ նյութական կորուստ ունեցավ ամբողջ հայ և քրիստոնյա ազգաբնակչությունը։

Ազգային հատուկ հանձնաժողովի տվյալներով Օսմանյան կայսրությունում, միայն հայ ժողովրդին հասցրած նյութական վնասը 1919 թ. կուրսով, կազմում է մոտ 15 մլրդ. ֆրանկ։ Իսկ եթե դրան ավելացնենք կովկասահայությանը թուրքերի պատճառած վնասի 4,5 միլիարդ ֆրանկ գումարը, այն կմոտենա 20 միլիարդին[2]։

Ինչպես իրավացի կերպով նշում է պրոֆ. Ջ. Կիրակոսյանը, Արևելյան Հայաստանը և Կովկասը, թվում էր, թե զերծ պիտի մնան Արևմտյան Հայաստանի ճակատագրից։ Սակայն «Սովետական պետության դեմ իմպերիալիստական տերությունների հրահրած ինտերվենցիայի առաջին իրականացնողներից մեկը հանդիսացավ երիտթուրքական կառավարությունը»[3]։ Հետևանքը եղավ Կովկասի հայ ազգաբնակչության մի մասի ոչնչացումը, նրա գույքազրկումը, գրավված երկրի ծանր վիճակը, որը տևեց տարիներ և վնասների հետևանքով գոյացած այն հսկայական գումարը, որ նշվեց վերևում։

Վնասը, սակայն, չի պարփակվում միայն նշված երևույթներով։ Այն շարունակեց ազդել Թուրքիայի առաջընթացի վրա, հատկապես եղեռնից հետո։ Հիշատակության արժանի են Յոհ. Լեփսիուսի արտահայտած հետևյալ մտքերը. «Հայերը, հույները և հրեաները,— գրում է նա,— իրենց մեջ բաժանած են արտածումի ամբողջ վաճառականությունը, մինչդեռ թուրքերը չեն կրցած երբեք վեր բարձրանալ պզտիկ խանութպանություններ...»[4]։ Եվ ապա հեղինակը գտնում է, որ «չափազանցություն

---

[1] Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, Բանբեր Երևանի համալսարանի, 1969, № 2, էջ 110—111։

[2] Տե՛ս «Հուշամատյան մեծ եղեռնի», էջ 1028։

[3] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1965, էջ 457։

[4] Լեփսիուս Յոհ., Հայաստանի ջարդերը, էջ 258։

չպիտի ըլլա ըսել թե թուրք առևտուրին ամբողջության վրա ներածության 60, արտածության 40 և ներքին առևտրի գոնե 80 տոկոսը կգտնվին հայերուն ձեռքին մեջ... Ներքին բովանդակ առևտուրը փճացված է իր բոլոր ապրանաց մթերանոցներով և իր արժեքներով, և ինչ որ ամենեն գեշն է, արժեքի բոլոր ստեղծագործող ուժերով»[1]։

Չնայած որոշ չափազանցությանը, այս թվերը, մոտավոր ճշմարտությամբ արտացոլում են մինչև առաջին համաշխարհային պատերազմը եղած պատկերը։ Առանձին մեծահարուստների հուսահատ փորձերը՝ ինչ-որ չափով փրկել իրենց ունեցվածքը ևս իզուր էին։ Օրինակ, Մարուքե աղա Իբրանոսյանը, որպեսզի չկորցներ հսկայական հարստությունը և շարունակեր ղեկավարել արդյունաբերական հաստատությունների և վաճառատների լայն ցանցի գործունեությունը, պատերազմի տարիներին ժամանակավորապես մահմեդականություն ընդունեց։ Սակայն երբ նա զոհվեց, չթողնելով քրիստոնյա մնացած ժառանգների օգտին որևէ փաստաթուղթ, «նրա գույքը անցավ իթթիհադական կառավարության ձեռքը», կամ պարզապես բռնագրավվեց[2]։

Վնասի պատկերն ամբողջացնելու համար բերենք Լեփսիուսի նկարագրած և ամբողջապես իրականությանը համապատասխանող իրավիճակը։ «Պարպված երկրամասերուն մեջ այլևս,— շարունակում է ականատես հեղինակը,— մի քանի բացառությունները զատ, ոչ որմնադիր, ոչ երկաթագործ, ոչ հյուսն, ոչ ատաղձագործ, ոչ բրուտ, ոչ կղմինդրագործ, ոչ դերձակ, ոչ կոշկակար, ոչ ոսկերիչ, ոչ դեղագործ, ոչ բժիշկ, ոչ փաստաբան, ոչ ալ միակ անձ մը կգտնվի, որ ազատական ասպարեզներուն պատկանի և կամ որևէ արհեստով զբաղվի»[3]։

Լեփսիուսի համոզմամբ հեռատես թուրք գործիչներն ու մտավորականները «պիտի ողբան Թուրքիո տնտեսական կործանումը և ապա եզրակացության պիտի հանգին թե Թուրքիա անբաղդատելիորեն ավելի քան կորսնցուց ներքին պատերազմով, քան ինչ որ երբեք չպիտի կրնա շահիլ արտաքին հաղթանակով»[4]։

---

[1] Լեփսիուս Յոհ., *Հայաստանի ջարդերը*, էջ 265։

[2] *Տե՛ս* «Отчет Советского торгпредства в Анкаре за 1925 г.», էջ 11.

[3] Լեփսիուս Յոհ., *Հայաստանի ջարդերը*, էջ 265։

[4] *Նույն տեղը*, էջ 267։

Համարյա նույն կարծիքն է հայտնում 1915 թ. Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանատան խորհրդական Լուիս Այնշթայնն իր օրագրի մեջ. «Թուրքերը,— գրում է նա,— կամավոր կերպով քանդեցին իրենց տնտեսական մեծ աղբյուրը (եղող հայերը)։ Երեք ամսվա մեջ շատ ավելի վնաս պատճառեցին (իրենց երկրին), քան տարիներ տևող պատերազմ մը կրնար»[1]։ Ցեղասպանության օբյեկտիվորեն տրված բոլոր գնահատականները համարյա նման իմաստ են պարունակում։ Իսկ այդ խնդրով ավելի անմիջականորեն ու խոր զբաղվողները Մեծ եղեռնը անվանել են «արմենոցիդ»[2]։ Մինչդեռ թուրք մտավորականությունը շարունակում է անտեսել երևույթի հասցրած թե տնտեսական և թե քաղաքական ու բարոյական հսկայական վնասները։ Իսկ գենոցիդն առաջացնող պատճառները ունեն անմիջական նշանակություն Թուրքիայի այսօրվա հետամնացության արմատները ի հայտ բերելու տեսակետից։ Պատահիք չէ, որ գենոցիդը արթնացրեց դարերով քնած, արյան, գերելու և թալանի ինստինկտը թուրք և քոչվոր այլ ցեղերի մեջ։ Եվ հավանական է, որ Թուրքիայում այսօր տեղի ունեցող հազարավոր սպանությունները, թերևս այդ բանի հեռավոր արձագանքն են հանդիսանում։ Թուրքիային մինչև հիմա չի ներվում մարդկության հանդեպ կատարած ծանր հանցանքը և այդ կապակցությամբ միջազգային կյանքում հաճախ տեղի ունեցող հակաթուրքական ցույցերն ու դեպքերը մշտապես բարոյաքաղաքական հարված են հասցնում Թուրքիայի հեղինակությանը և հոգսեր պատճառում նրա իշխանություններին։ Վերջիններիս մի շարք, սակայն ոչ անկեղծ, փորձերը ռեաբիլիտացիայի ենթարկել իրենց հեղինակությունը՝ զգալի արդյունքներ չեն տալիս։

Ամփոփելով ընդգծենք, որ ցեղասպանությունը որպես պատմական երևույթ բնորոշ է անկման օրհասը ապրող ամեն մի քաղաքական ռեժիմի համար։ Օսմանյան կայսրության, Կամպուչիայի կամ Հարավային Աֆրիկայի օրինակները այս մտքի ճշմարտացիության համոզիչ ապացույցն են։

Կայսրության անկումը անտառային հսկայական ծառի տապալումը չէր միայն, որն իր տակ ճզմեց հպատակ ժողովուրդների մի մասին։ Տապալման պրոցեսում կոտրվեցին նաև իր իսկ բազմաթիվ ճյուղերը...

---

1 Լեոն Վարդան, նշվ. աշխ., էջ 163։

2 Լիբանանցի առաջադեմ գործիչ և իրավաբան Մուսա Պրենսը այդպես է խորագրել վերջերս լույս տեսած իր բազմահատոր աշխատությունը։

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

(Եզրահանգումներ)

Օսմանյան կայսրության անկման պատճառները պատմական առումով չափազանց խոր են և օրգանական կապերով կապված նրա անցած դարավոր ուղիների ու դրանց կեռմանների հետ։

Կայսրության նվաճած տարածքի վրա ապրած ժողովուրդների հասարակական կյանքի և, մասնավորապես, սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափությունների ուսումնասիրող բոլոր հեղինակները եկել են այն եզրակացության, որ V—VI դարերում ֆեոդալիզմը այդ ռեգիոնում ավելի զարգացած վիճակում էր, քան Արևմուտքում։ Պատկերը միանգամայն փոխվել է, երբ քոչվոր, վաչկատուն ցեղերը սկսել են իրենց վիթխարի տեղաշարժերը դեպի Առաջավոր Ասիա՝ այստեղ հաստատելով իրենց երկարատև կամ կարճատև իշխանությունը։ VII—XIV դարերի ընթացքում այդպիսիք եղել են չորսը՝ արաբների, թուրք-սելջուկների, մոնղոլների և թուրք-օսմանների արշավանքները։ Դրանք բոլորը խորապես ազդել են իրենց գրաված երկրների ու ժողովուրդների զարգացման ընթացքի վրա, որպես կանոն, երբեմն դարերով ետ մղելով նրանց։ Գրականության մեջ նշվում է միայն, որ խաշնարած արաբ ցեղերը զբաղեցնում էին գլխավորապես ազատ հողերը[1], իսկ մյուսները տապալում էին ճանապարհին հանդիպած բոլոր արգելքները, ամենուր պարտադրելով իրենց կամքն ու կարգը։

Վ. Ի. Լենինը ի նկատի ունենալով պատմական մեծ դարաշրջանները, արձանագրել է զարգացման հետևյալ օրինաչափությունը. «... Յուրաքանչյուր դարաշրջանում լինում են և կլինեն առանձին մասնակի շարժումներ մերթ դեպի առաջ, մերթ

[1] *Տե՛ս* «Мусульманский мир», 950—1150, М., 1981, стр. 112—113.

-դեպի ետ, լինում են և կլինեն զանազան շեղումներ միջին տիպի և միջին տեմպի շարժումներից»[1]։

Քննվող պրոբլեմի համար միանգամայն բնորոշ է այդ օրինաչափությունը։ Օսմանյան կայսրության միջնադարյան պատմության մասնագետ Մ. Ս. Մեյերը «Թուրքիայի պատմության ֆեոդալիզմի շրջանի պերիոդիզացիայի մասին» հոդվածում ցույց է տալիս, որ Մերձավոր և Միջին արևելքի երկրներում, ի թիվս որոնց նաև Թուրքիայում, ֆեոդալիզմի զարգացումն ընթացել է գալարագծի ձևով։ «Ամեն մի պտույտ,— գրում է Մեյերը,— նշանավորում էր թե որոշակի հետադիմություն, վերադարձ դեպի հինը, թե որոշակի առաջադիմություն՝ համեմատած արդեն նվաճած մակարդակի հետ»[2]։

Պարզաբանելով իր միտքը, հոդվածի հեղինակն ընթերցողի ուշադրությունը բևեռում է հատկապես խաշնարած ցեղերի պատմական դերի վրա, այն չկապելով տեղաշարժերի շրջանի կամ համեմատաբար մշտական բնակավայրում գտնվելու պայմանների հետ։ «Վաշկատունները,— գրում է նա,— լուրջ ազդեցություն ունեցան ինչպես տնտեսական կյանքի (սահմանափակելով էքստենսիվ հողագործության հնարավորությունները), այնպես էլ սոցիալական զարգացման (կոնսերվացնելով նահապետական-ավատական հարաբերությունները, ցեղական-արյունակցական կապերը) և հասարակության քաղաքական կառուցվածքի վրա (նպաստելով ուժեղ կենտրոնացված տերությունների՝ բռնապետությունների հաստատմանը)»[3]։

Խաշնարած ցեղերի և ժողովուրդների հիշյալ չորս տեղաշարժերն էլ նման ազդեցություն են թողել Առաջավոր Ասիայի տարածքում և օբյեկտիվորեն դանդաղեցրել են հասարակական զարգացման տեմպերը։

Ս. Գ. Կլյաշտորնին անդրադառնալով միջնադարյան հողային հարաբերություններին, նույնպես նշում է քոչվոր-անասնապահների բացասական ազդեցությունը գրավված երկրների ու ժողովուրդների պատմական բախտի վրա։ Նա գտնում է, որ քոչվորների մոտ ֆեոդալական հարաբերությունները մինչև նոր

---

[1] Լենին Վ. Ի., Երկ., հ. 26, էջ 169։

[2] Мейер М. С., К периодизации истории Турции эпохи феодализма, «Вестник МГУ», 1977, № 4, стр. 6.

[3] Նույն տեղը, էջ 7։

շրջանը ունեին իրենց յուրահատուկ կողմը՝ ռարխաիզմը, հետամնացությունը, տոհմատիրական և ռազմական դեմոկրատիայի շրջանում ձևավորված նորմաններին զուգորդելը։ Մինչև XVIII, երբեմն XIX դ. քոչվորները քաղաքական և հասարակական հարաբերություններում մնում էին որպես այդ երկրների զարգացումը կասեցնող ուժ...»[1]։ Նշված երևույթը ընդհանուր էր և մի քանի դարերի ընթացքում միանգամայն համապատասխանում էր իրականությանը։ Այնուամենայնիվ, որոշ զարգացած կենտրոններ, առանձին ժողովուրդների չանքերի շնորհիվ ինչ-որ չափով պահպանում էին իրենց առաջատարդերը, որի համեմատ իրապես բարբարոսներ կարելի էր համարել եկվոր խաշնարած ցեղերին, որ հաճախ է արձանագրվում գրականության մեջ։ Պատճառն այն է, ինչպես նշում է Դ. Երեմեևը, որ վերջիններիս մոտ, երբ նրանք երևացին պատմության թատերաբեմում, բացակայում էին զարգացած ֆեոդալիզմին հատուկ հարաբերությունները, ռորոնք ձևավորվում էին նստակյաց հողագործական տնտեսության հիմքի վրա։ Նրանց մոտ, մինչև վերջնականապես նստակյաց դառնալը, տիրապետում էին տոհմային-ավատական հարաբերությունները»[2]։

Բնորոշ է նաև, որ այդ հարաբերություններն ամրապնդվում ու պահպանվում էին քոչվորների կողմից, օրինականացվում շարիաթի դրույթներով, քանի որ միանգամայն համապատասխանում էին վերնախավի շահերին։

Այնուհետև, Դ. Երեմեևը նման պահպանողականությանը տալիս է բավականին համոզիչ հետևյալ բացատրությունը. «Խաշնարածի պատկերացմամբ հողը արոտավայր է, իսկ արոտավայրը՝ տոհմի կամ ցեղի կոլեկտիվ սեփականությունն է։ Ահա թե ինչու և՛ սելջուկների, և՛ օսմանցիների (երկուսն էլ քոչվորական ծագում ունեն) ժամանակ Փոքր Ասիայում հողը համարվում էր պետական սեփականություն և ձևականորեն պատկանում էր սուլթանին, որը և ներկայացնում էր պետությունը»[3]։

Իսկ նշված կոլեկտիվ սեփականության վրա հաստատված

---

[1] «О генезисе капитализма в странах Востока (XV—XIX вв.)», стр. 405.

[2] Еремеев Д. Е., На стыке Азии и Европы, М., 1980, стр. 109.

[3] Նույն տեղը։

տնտեսությունը կարող էր գոյությունը շարունակել որպես ցեղային կամ տոհմային տիրույթ, ամրապնդելով սովորույթ դարձած փոխհարաբերությունները։ Եվ այդպիսի փոխադղեցությունը հինը պահպանող գլխավոր գործոններից մեկն էր։ Մյուս կողմից, ժողովուրդների և մասնավորապես վաչկատուն ցեղերի տեղաշարժերի ճանապարհին ոչ մի սահմանափակում և օրինականություն չէր կարող գործել, քանի որ արշավողները, գրավողի իրավունքով, տիրանում էին հողին, գույքին, իրենց ենթարկում տեղական բնակչությանը։ Ինչպես նշել է Կ. Մարքսը, արշավող ցեղերն իրենցն էին համարում գրաված բոլոր հողերը, և դրանց հետ վարվում էին որպես սեփականության, բայց նրանք երբեք չեն օրինականացնում այն իբր սեփականություն... Այստեղ յուրացվում և վերարտադրվում է իրականում միայն անասունների հոտը, ոչ թե հողը, որը, սակայն, օգտագործվում է ամենուր միասնաբար, որպես ժամանակավոր իջևանավայր»[1]։

Այդ պայմաններում, անշուշտ, հասարակական հարաբերությունների մեջ չէին կարող տեղի ունենալ զգալի փոփոխություններ, քանի որ տեղաշարժերը կրում էին մշտական բնույթ, իսկ նստակյաց ժողովուրդներն էլ մշտապես ենթակա էին հարձակման, թալանի, հաճախ ոչնչացման։

Բացի դարեր տևած այդ լուրջ գործոնի ազդեցությունից, հասարակական առաջընթացը խաթարող պատմական երևույթներից էին ցեղային-նահապետական հարաբերությունների երկարատև գոյությունը և նրանցով պայմանավորված համայնական կենցաղը։

Ֆ. Էնգելսն իր ուսումնասիրությունների ընթացքում եկել էր այն եզրակացության, որ հին համայնքները «հազարամյակների ընթացքում կազմել են արևելյան դեսպոտիզմի ամենակոպիտ պետական ձևի հիմքը... Միայն այնտեղ, որտեղ դրանք քայքայվել են, ժողովուրդները իրենց ուժերով շարժվել են զարգացման ուղիով»[2]։ Իսկ Օսմանյան կայսրությունում համայնքները իրենց տարբեր ձևերով պահպանվեցին ավելի քան 500 տարի, որպես գյուղական համայնքներ, ցեղային կազմակերպություններ, եղբայրություններ և այլ միավորումներ։ Դրանց

[1] Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 46, ч. I, стр. 479—480.
[2] Նույն տեղը, հ. 20, էջ 186։

երկարակեցության հիմնական սկզբունքները, գոյության առաջին շրջանից մինչև վերջը, մնացին արտադրական-մասնագիտական և կրոնական հատկանիշները, որոնք չափազանց կայուն էին հատկապես մահմեդական երկրներում և, մասնավորապես, դարեր շարունակ իսլամի պատվարը հանդիսացող Օսմանյան կայսրությունում։ Իսկ իսլամը, ինչպես ոչ առանց հիմքի նշում է ֆրանսիացի աշխարհագրագետ Կսավյե դե Պլանյոլը, սկզբնական շրջանում լայն ընդունելություն գտնելով քոչվորների միջավայրում, հանդիսացել է նոմադիզմի արժեքների տարածողը»[1]։ Իսլամը, անշուշտ, ձևավորվեց քաղաքներում ու ընդունվեց նաև քաղաքային բնակչության կողմից, բայց նրա աշխարհագրական տարածման մեջ մեծ դեր կատարեցին քոչվորների տեղաշարժերը։

Բայց, այնուամենայնիվ, պատմության անիվը կանգ չէր առնում. ավատական հարաբերություններն ինչ-որ չափով որոշ ժամանակահատվածներում զարգանում էին։ Սակայն նրանց վերընթաց ուղիների վրա բախտորոշ ու աղետալի նոր հետքեր էին թողնում քոչվոր ժողովուրդների կրկնվող արշավանքները։

Բյուզանդական զարգացած ֆեոդալիզմը քայքայվեց սելջուկների հետզհետե ուժեղացող հարվածներից։ Սելջուկյան պետության զարգացման որոշ աստիճանի հասած ֆեոդալական հարաբերությունները ոչնչացվեցին մոնղոլների և ապա թուրքօսմանների արշավանքների հետևանքով։ «Ուրեմն թուրքական պատմությունը,— գրում է Դ. Երեմեևը,— երկու անգամ անցել է առաջին, իր էությամբ նույն, ֆեոդալիզմի զարգացման փուլը։ Այլ խոսքով, թուրքերը երկու անգամ սկսել են զրոյից։ Իսկ ժամանակի իմաստով այդ սկիզբը կազմել է երեք-չորս հարյուրամյակ»[2]։ Ինչպես տեսնում ենք, զրոյից սկսելու մեղքն ամբողջապես ընկնում է հենց իրենց, թուրքական ցեղերի և ապա մոնղոլների վրա, որոնք ավեր ու թալանով չորս դարերի ընթացքում քայքայեցին խնդրո առարկա շրջաններում ապրող ժողովուրդների տնտեսությունն ու կուլտուրան, խախտեցին կյանքի բնականոն ընթացքը։

Ինչպես արդեն նշվել է գրքի էջերում, ֆեոդալիզմի դանդաղ զարգացման հիմնական պատճառներից էին նաև հողօգտագործ-

---

[1] «Мусульманский мир», стр. 112.
[2] «Народы Азии и Африки», 1981, № 2, стр. 64—65.

ման ձևերը։ Հողի պետական սեփականություն լինելու հանգամանքը, սկզբնական շրջանում միանգամայն հասկանալի ու տրամաբանական էր, խաշնարած ցեղերի համար համայնական արոտավայրերը պահպանելու միջոց ու ձև։ Իսկ դրանք անհրաժեշտաբար փոխվում էին և բնական էր, որ օգտագործած տարածությունների հետագա վիճակը քոչվորներին չէր հետաքրքրում։ Ավելի ուշ, երբ իշխանությունները ռազմական ու պետական ծառայության համար հողեր էին տրամադրում (թիմար, զիամեթ և խասս), նոր տերերը դրանք օգտագործում էին ոչ որպես հոգատար սեփականատերեր, որոնք մտահոգված էին դրանց որակն ու բերքատվությունը բարձրացնելու խնդրով։ Ռազմիկներին հողը պետք էր սոսկ որպես եկամուտի, հատկապես տուրքերի և զանազան հարկերի հավելյալ աղբյուր։ Մինչև XVI—XVII դարերը, «հարձակման շրջանի» վերջը, նրանք պատերազմն ու ավարառությունը համարում էին իրենց նյութական ապահովության գլխավոր միջոցներից մեկը։ Իսկ հողի աշխատավորից, որը կիսաբար կամ մարաբա գյուղացու իրավունքով էր մշակում այն, նրանք կորզում էին բերքի ո՛չ միայն իրենց պատկանող մասը՝ Հողի աշխատավորի և նրա ընտանիքի նվազագույն կենսամակարդակի ապահովումը կամ աշխատավորական ուժի վերարտադրումը հողատիրոջ հոգսի առարկան չեն եղել նրա ամբողջ տիրապետության ընթացքում։ Ռայան, կամ մանր արտադրողը իր հերթին, դարեր շարունակ, համարյա շահագրգռված չէր բերքատվության բարձրացման համար պայքարելու, քանի որ երբեմն չէր ստանում նույնիսկ ընտանիքին ապահովելու չափ սննդամթերք, չուներ գոնե աննշան կուտակում տեղական առևտրին մասնակցելու համար։ Ամենաանհրաժեշտ պահանջները նա բավարարում էր սեփական սուղ միջոցներով, փակ տնտեսության շրջանակում, որի հետևանքով անասելի դանդաղ էր ձևավորվում տեղական շուկան և տնտեսական կապերը դժվարությամբ էին հաստատվում առանձին տնտեսությունների և բնակավայրերի միջև։

«Ասիայում,— գրել է Կ. Մարքսը,— որտեղ հողային ռենտայի նատուրալ ձևը, որ պետական հարկերի գլխավոր տարրն է միաժամանակ, հենվում է արտադրական հարաբերությունների վրա, որոնք նույնպիսի անփոփոխ ձևով են վերարտադրվում, ինչպես բնական հարաբերությունները,—

վճարման այդ ձևը հետադարձ ազդեցությամբ ամրապնդում է, իր հերթին, արտադրության հին ձևերը։ Նա կազմում է թուրքական կայսրության ինքնապահպանության գաղտնի միջոցներից մեկը[1]։

Կայսրության հաստատվելուց հետո անհրաժեշտ եղան 300 երկար տարիներ, որպեսզի Թուրքիան ֆեոդալիզմի ցածր, «բարբարոսական» աստիճանից որոշ քայլեր կատարեր դեպի այդ հասարակարգի հասունության աստիճանը։ Հողային հարաբերությունների քայքայմանը զուգահեռ, երկրի որոշ շրջաններում միայն, տեղի էր ունենում հողերի ֆեոդալականացման պրոցես։ Հին շահագործողին՝ սիփահիին, նշում է Ա. Ֆ. Միլլերը, որի համար ամենակարևորը պատերազմն էր և ռազմական ավարը, XVI դ. վերջերից փոխարինում է նորը՝ «հողատեր, որը ավելի ագահ է դեպի փողը, որի նպատակն է գյուղացու աշխատանքը շահագործելու միջոցով մաքսիմում եկամուտ ստանալը»[2]։

Նշված որոշ փաստերն ու կարծիքները հնարավորություն են ընձեռում հայտնելու այն համոզմունքը, որ օսմանյան ֆեոդալիզմն իր զարգացման ընթացքում առանձին ռեգիոններում ինչ-որ չափով մոտենում էր արևմտյան ձևերին։ Սակայն այն, ամբողջապես վերցված, մնաց կես ճանապարհին, պահպանելով հնի ազդեցությունը, վերջնականապես չկանգնելով զարգացած ֆեոդալիզմի հիմքերի վրա։ Տնտեսության հիմնական բնագավառում՝ գյուղատնտեսության մեջ, տիրող այս երկվությունը ևս ունեցավ իր բացասական ազդեցությունը Թուրքիայի առաջընթացի վրա։

Այսուհանդերձ, հետզհետե հասունանում էին սոցիալական այն հարաբերություններն ու ուժերը, որոնք երկրի տնտեսական զարգացումը դանդաղորեն տարան դեպի կապիտալիզմի ուղին։ Առաջին հերթին, դրանք այլազգի բուրժուազիայի՝ կայսրության պայմաններում բավական կազմակերպված խմբերն էին։ Իրենց գործունեության մեջ նրանք հաճախ հենվում էին ազգային-կրոնական համայնքների (միլլեթ) աջակցության վրա։ Սակայն նրանց հիմնական պատվարը հանդիսանում էին երկրի տնտեսության մեջ գրաված դիրքերը, որոնք առանձին բնագա-

---

¹ Մարքս Կ., Կապիտալ, Երևան, 1954, հ. 1, էջ 151։

² «Всемирная история», т. V, стр. 205.

վառններում տիրապետող էին։ Այլազգի բուրժուազիան ուներ զգալի կապեր երկրի ներսում և արտասահմանի առևտրական կենտրոններում։ Առևտրի ու արդյունաբերության ասպարեզում հաստունացել էր սպառարկող անձնակազմը։ Կայսրության մեջ կային բոլոր օբյեկտիվ պայմանները, որպեսզի ոչ թուրք (և ոչ մահմեդական) բուրժուազիան հանդես գար որպես տնտեսության ղեկավար ուժ և այդպիսով խթան հանդիսանար կապիտալիզմի զարգացման ու թուրք ազգային բուրժուազիայի ձևավորման համար։ Ինքնին հասկանալի է, որ այլազգի բուրժուազիան իր գործունեության ծավալման հիմնական թատերաբեմը համարում էր Օսմանյան կայսրության ամբողջ տարածքը։ Այդ իրողությունը կարելի է հաստատել այն ծավալուն տնտեսական կապերով, որ երկրում մեկ ստեղծել էին հույն, հայ, հրեա բուրժուազիայի ներկայացուցիչները։ Մյուս կողմից, հանրահայտ է կապիտալի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունը՝ նրա արագ շրջանառության և աճի անհրաժեշտությունը, մեծանալու նրա ձգտումը՝ Նշված բնականոն երևույթները ստեղծել էին նվազագույն անհրաժեշտ պայմաններ նոր հասարակարգի քիչ թե շատ նորմալ առաջընթացի համար։ Բայց, դժբախտաբար, իրականության մեջ կապիտալի ու նրա տերերի գույքի և անձի անապահովության մասին Ֆ. Էնգելսի արտահայտած կարծիքն հաստատվում էր հաճախ և ամենուր։ Թուրք վերնախավը մոնոպոլ կերպով իր ձեռքում էր պահում պետական, ռազմական, վարչական բոլոր պաշտոնները և իր ամբողջ քաղաքականությամբ սահմանափակում, կամ ավելի ճիշտ կլինի ասել, արգելակում էր այլազգի բուրժուազիայի գործունեությունը։ Երկրում ստեղծվել էր մի հակասական վիճակ, երբ կապիտալիստական հարաբերությունների ակտիվորեն զարգացնող տարրերին խանգարում էին կատարելու իրենց պատմական առաքելությունը։ Դժբախտությունը կայանում էր նաև նրանում, որ ներկայացվող պայմանները ժամանակավոր երևույթ չէին։ Նրանք հանդիսացան կապիտալիստական հարաբերությունների զարգացման տեմպերը դանդաղեցնող գործոն՝ մինչև կայսրության անկումը արհեստական միջոցներով, իսկ վերջում հանգեցրին այլազգի բուրժուազիայի տնտեսական թուլացմանը կամ նրա ֆիզիկական ոչնչացմանը։ Մինչդեռ, ինչպես խնդրին քաջատեղյակ լորդ Է. Բրայսը առաջին համաշխարհային պատերազմի նախօրերին, իր ելույթներից մեկում, հայտարարել էր՝

ծին բարենորոգումները ներմուծվեն հայկական նահանգներում մեջ և Կիլիկիա, ուր մեծ թվով հայեր կրնակեին, առաջ գալիք առավելությանց օրինակը Ասիական Թուրքիո մյուս նահանգներուն մեջ պիտի տարածվի ու Օսմանյան կայսրության գոյությունը պիտի ամրապնդեն[1]: Անշուշտ, հնարավոր չէր բարենորոգումների միջոցով պահպանել քայքայված Օսմանյան կայսրության երկարակեցությունը, նաև այն պատճառով, որ օսմանյան պետության մեջ օրինականությունը կամ օրենսդրությունը չդարձան լուրջ գործոններ, քանի որ ամենուր օրենք էր մեծ ու փոքր իշխանավորների, ավազակի ու զոռբայի կամքը: Այդպիսի միջավայրում, Ս. Օրեշկովայի կարծիքով, չէր կարող նույնիսկ հաստատվել լիարժեք քաղաքացիական օրենսդրության գաղափարը, քանի որ իրավագիտությունը, կրոնը և բարոյական արժեքները հանդես էին գալիս հաճախ միասնաբար[2]: Իսկ Ն. Դուլինան գտնում է, որ Թուրքիայում բարենորոգումների գաղափարակիրը հանդիսացող թանզիմաթն իր էությամբ, ինչ-որ չափով նորամուծություն էր և չէր համընկնում դասական շարիաթի սկզբունքների հետ, սակայն միանգամայն համապատասխանում էր իսլամի պահանջներին: Եվ նա թանզիմաթի գործիչներին համարում է, որոշ իմաստով, իսլամի բարենորոգողներ միայն[3]:

Սուլթանական երկու լուրջ մասնագետների գնահատականների հետ չի կարելի չհամաձայնվել: Օսմանյան կայսրության պետական սիստեմի ամենաբնորոշ կողմը պահպանողականությունն է եղել և նորամուծությունները միշտ էլ ընդունվել են մեծագույն դժվարությամբ: Ձևականորեն առաջադեմ հանդիսացող օրենքները (հողի սեփականության, վարչական և իրավական խնդիրների վերաբերյալ) կամ եղել են կատարված իրականության արտացոլումը, կամ արտահայտել են առաջադեմ գործիչների ցանկությունը: Բայց դրանք, հրապարակվելուց հետո, քիչ դեպքերում են կենսագործվել: Պատճառը, էությամբ ռեակցիոն, հզոր ու կենտրոնացված պետության առկայությունն էր, իր կամայականություններով հայտնի վարչական և ֆիսկալային տարածված ցանցով:

---

[1] Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 70:
[2] Տե՛ս «Народы Азии и Африки», 1979, № 3, стр. 160.
[3] Տե՛ս նույն տեղը:

Պետական ապարատը և գործիչները միշտ էլ եղել են իրենց վիճակն անփոփոխ պահելու կողմնակիցներ և Թուրքիան դրա դասական օրինակներից է։

Խոսելով տնտեսական կյանքում պետության դերի մասին, Ֆ. Էնգելսը դա համարում է չափազանց կարևոր գործոն երկու իմաստով։ Որպես հասարակության ղեկավար ուժ, նա կարող էր միանգամայն դրական և նույնքան էլ բացասական ազդեցություն ունենալ զարգացման պրոցեսի վրա։ «Տնտեսական շարժումը,— գրել է Ֆ. Էնգելսը,— ընդհանուր առմամբ, կհարթի իր ճանապարհը, բայց նա կզգա քաղաքական շարժման հակազդեցությունը, շարժում, որին ինքն էր ստեղծել և որն ունի հարաբերական ինքնուրույնություն։ Տնտեսական շարժման վրա ազդում է, մի կողմից, պետական իշխանության շարժումը, իսկ մյուսից՝ վերջինիս հետ միաժամանակ ծնված օպոզիցիան»[1]։ Պետական իշխանության ազդեցությունը տնտեսական զարգացման վրա, ինչպես ասվեց, եղել է բացասական, մինչ կայսրության գոյության վերջին փուլը։ Երիտթուրքերի հեղափոխությանը նվիրված իր մենագրության մեջ Վ. Շպիլկովան ևս ընդգծում է այդ հանգամանքը. «Պետությունը Օսմանյան կայսրությունում,— գրում է նա,— կապիտալիստական հարաբերությունների զարգացման մեջ խաղում էր արգելակող դեր։ Նա բոլորովին չէր նպաստում կապիտալիստական հարաբերությունների ձևավորմանը»[2]։

Թուրքիայի ֆեոդալիզմի շրջանի պատմության ականավոր մասնագետ Ն. Իվանովը ևս այդ երկրի սոցիալական կարգի հիմնական գծերից մեկը համարում է «պետության բացարձակ գերակշռությունը հասարակության վրա»[3]։

Մ. Մեյերը այն համոզմունքն է հայտնում, որ արտադրության հիմնական հարցերը լուծվում էին «գյուղական համայնքի, ցեղի, թաղի կամ տոհմի»[4] կոլեկտիվ ուժերով։ Իսկ պետությու-

---

1 Маркс К. и Энгельс Ф., Соч., т. 37, стр. 417.

2 Шпилькова В. И., Младотурецкая революция 1908—1909 гг., стр. 13.

3 «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 57.

4 Նույն տեղը, 1979, № 5, էջ 187։

նը միայն ընդհանուր ձևով էր հսկում և կարգավորում տնտեսական կյանքը։ Հենց նման անորոշ վիճակի արդյունք էր անհատի սեփականության իրավունքի պայմանական լինելը։ Այդ իրավունքն ապահովված չէր ոչ կենտրոնական և ոչ էլ տեղական իշխանությունների կողմից։ Որևէ մասնավոր սեփականություն, Ն. Իվանովի ձևակերպմամբ, որպես այդպիսին անհուսալի, խախուտ վիճակում էր գտնվում և ամբողջապես կախում ուներ «իշխանության գիջողամտությունից և ամեն րոպե կարող էր անցնել պետության ձեռքը»[1]։ Հետևաբար, տնտեսական գործունեության ընդլայնումը որևէ անձնավորության համար ևս որոշակի լինել և իրականանալ չէր կարող, եթե բախտը չժպտար։ Այստեղ կապիտալի սկզբնական կուտակման և կուտակումները հասարակական արտադրության համար ծախսելու մասին խոսք անգամ լինել չէր կարող։ Ավելի ուշ, երբ դրամի կուտակումն ու ներքին միջոցների հաշվին հարստանալը դարձան նպատակ, կուտակված դրամը ծախսվում էր առևտրի ու սպեկուլյատիվ միջոցառումների վրա, օգտագործվում էր վաշխառուական գործարքներում և նորից չէր դառնում սկզբնական կուտակման միջոց։ Հարկային սիստեմը, կեղծումներն ու կամայականությունները ևս չէին կարող ծառայել այդ նպատակին, և դրանք «չկարողացան ապահովել եկամուտի կարևոր աճ, որը հանգեցներ կապիտալի կուտակմանը»[2]։

Հետաքրքրական է, որ կապիտալի կուտակմանը նվիրված հատուկ աշխատության մեջ այդ պրոցեսի բախտը նույնպես կապվում է երկրի քաղաքական ու պետական կարգերի հետ։ «Ամեն կասկածից վեր է այն իրողությունը,— նշված է գրքում,— որ պատմական պատճառների հետևանքով կապիտալի կուտակման գործը Թուրքիայում դանդաղեց և դրամագլուխը մեծացնելու մեջ լուրջ արգելքներ առաջացան։ Այս իսկ պատճառով քաղաքական վատառողջ կազմ ունեցող կայսրության մեջ կապիտալի կուտակման ու նոր արտադրական միջոցների դար-

---

1 «Народы Азии и Африки», 1978, № 3, стр. 60.

2 Bulutoǧlu K.,Türk vergi sistemi, s 2.

գացման գործը ձախողվեցս[1]։ Այնուհետև, նշվում է այն, ինչի մասին վերևում ասվեց, որ իշխանավորները հավաքված մեծ գումարները առրպես դրամագլուխ օգտագործելու փոխարեն կամ թանկարժեք իրեր էին գնում և պահում իրենց տներում կամ ձեռք էին բերում կալվածքներս[2]։ Ինչպես բոլոր մահմեդական հեղինակների մոտ, այս աշխատությունում ես ակնարկ է արվում, որ առևտրից ստացած շահը, ըստ շարիաթի և իսլամի դոգմաների, «ապօրինի է համարվում» և այս պատճառով էլ խաթարվում էր կուտակման պրոցեսը։ Սակայն հանրահայտ է, որ դրամը կրոն չի ճանաչում...

Այնուամենայնիվ, կրոնը որոշակի ազդեցություն է ունեցել քննարկվող հարցերի լուծման վրա։ Այդ ազդեցությունը եղել է ոչ միայն բարոյական և կենցաղ մտած սովորույթների միջոցով։ Կայսրության մեջ հզոր ուժ էր ներկայացնում վակֆային հողատիրությունը, որը տարբեր շրջաններում գրավել էր մշակվող տարածությունների 35—70 տոկոսը։ Բնական է, որ տընտեսական շատ խնդիրներ առնչվում էին տեղերում վակֆի ազդեցության, կամ նրա ներկայացուցիչների հետ, իսկ սրանց հսկողությունը ինքնին արգելակում էր որևէ առաջադեմ միջոցառում։ Այսպես, կայսրության քաղաքներում չկային մունիցիպալ մարմիններ։ Դրանց հաճախ փոխարինում էին վակֆային վարչությունները, որոնք կառուցում էին տներ, ջրատար ցանցեր, բաղնիքներ, շուկաներ և քաղաքներին անհրաժեշտ այլ օբյեկտներ, որոնցից կորզում էին հսկայական հարստություններ։ Նրանք լայնորեն մասնակցում էին տեղական առևտրին, վաշխառուական գործարքներին։ Ահա այս ամենը իր ծանր կնիքն էր դնում Թուրքիայի տնտեսական կյանքի վրա, դանդաղեցնելով երկրի առաջընթացը։ Միանգամայն իրավացի է Մ. Մեյերը, երբ հոգևորականության բարոյական, իրավական ու տնտեսական զգալի ազդեցությունը համարում է «Օսման-

[1] Türkiye'de sermaye piyasasının kurulması..., s. 75.
[2] Նույն տեղը, էջ 54։

յան կայսրության ներքին թուլության պատճառներից մեկը, որը նպաստեց նրա անկմանը»[1]։

Պատմական իրավիճակը, որի պայմաններում ձևավորվում էին կապիտալիստական հարաբերությունները, նպաստավոր չէր վերջիններիս զարգացման համար։ Տիրապետող թուրք ժողովրդի ազգային բուրժուազիան, ինչպես նշվեց, սերում էր ֆեոդալիզմի պատվարը հանդիսացող հողատերերից, խոշոր անասնատերերից, ցեղապետերից կամ գավառական վերնախավի ներկայացուցիչներից, պետական պաշտոնյաներից, զինվորականներից։ Վերջիններս, իրենց հերթին, սերտ կապեր էին պահպանում ֆեոդալական սեփականատիրության հետ։ Պահանջվեցին տասնամյակներ, որպեսզի թուրք բուրժուազիայի շարքերում իրենց տեղը գրավեին արդյունաբերության շահերը ներկայացնող կապիտալիստները։ Այս հանգամանքը ևս զարգացումը դանդաղեցնող գործոններից էր։

Այդպիսով, կայսրության ներքին պայմանների անբարենպաստ ազդեցությունը հանդիսացավ երկրի հետամնացության հիմնական պատճառը։ Ահա թե ինչու համոզիչ չէ արևելագետ Մ. Պավլովիչի այն կարծիքը, թե «Թուրքական ռեժիմի սարսափների գլխավոր մեղքն ընկնում է, ամենից առաջ, կապիտալիստական Եվրոպայի վրա»։ Այնուհետև նա իր տեսակետը հիմնավորում է հետևյալ փաստարկներով. «Թուրքական ռեժիմի ամբողջ դժբախտությունը, բոլոր սպեցիֆիկ մութ կողմերը, և միաժամանակ Օսմանյան կայսրության հետամնացության գլխավոր պատճառը հանդիսանում էր ոչ այնքան թեոկրատական բնույթի մահմեդական պետության իրավական կառուցվածքը, որքան, ամենից առաջ, այն տնտեսական համակարգը, որ կապիտալիստական Եվրոպան բռնի կերպով պարտադրեց Թուրքիային»[2]։

Իմպերիալիզմը դիմակազերծելու նպատակով մղվող պայքարի ընթացքում, իհարկե, պետք է հիմնական ուշադրությունը սևեռել նրա գիշատիչ բնույթի և մեքենայությունների վրա, օգտագործել ամեն մի երևույթ՝ ցույց տալու համար մարդկության նրա հասցրած հսկայական վնասները։ Այստեղ երկու

[1] «Вопросы истории», 1979, № 12, стр. 125.

[2] Павлович (Вельтман) М., Революционный Восток, СССР и Восток, М., 1927, ч. I, стр. 182.

կարծիք լինել չի կարող։ Անկասկած է նաև Օսմանյան կայսրության տնտեսության XIX—XX դդ. արտաքին գործոնի պատճառած բացասական ազդեցությունը։

Հանրահայտ է, որ նման երևույթը ճակատագրական նշանակություն է ունեցել հատկապես հետամնաց երկրների վրա։ Բացարձակ կախման վիճակ ստեղծվեց գաղութների համար։ Կոնսերվացվեցին ֆեոդալական հարաբերությունները և զգալիորեն դանդաղեց կիսագաղութների տնտեսական զարգացումը։ Արևելքում տեղի ունեցող այս համընդհանուր երևույթը միատեսակ կրկնություն չեղավ, քանի որ պատմությունը չի պատճենահանում նշված երևույթները։ Օսմանյան կայսրության կիսագաղութ դառնալու ընթացքը ևս ունեցել է իր առանձնահատկությունները։

Առաջինն այն էր, որ հզոր պետությունն ինքը ողորմածաբար ընդառաջեց օտար կապիտալի, առևտրականների ու պետությունների ցանկությանը՝ հաստատելու փոխադարձ տնտեսական կապեր, որը և ձևակերպվեց կապիտուլյացիոն համաձայնագրերի միջոցով։

Երկրորդը, երկրի կառավարիչները որպես հարստանալու կարևոր աղբյուր ընդունեցին եվրոպական երկրների «օգնությունը», որի բուն նպատակը պետք է լիներ առևտրի ու արդյունաբերության զարգացմանը սատարելը։ Արևմտյան գործիչների ջանքերը և օտար կապիտալի ճնշման փորձերը համընկան։ 1830-ական թթ. և ավելի ուշ կնքած առևտրական պայմանագրերը պաշտոնապես թույլատրեցին եվրոպական կապիտալի հոսքն առևտրի ասպարեզ։

Նույն ժամանակաշրջանում, մեկ-երկու տասնամյակի ընթացքում, օսմանյան պետության տարբեր շրջաններում «պետական վարկի օգնությամբ ստեղծվեցին մոտ 15 ձեռնարկություններ, որոնք կառուցված էին եվրոպական ոճով և կահավորված ներմուծված մեքենաներով»[1]։

Գրքի բազմաթիվ էջերում բերված են օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ պետական գործիչների անձնական շահագրգռվածությունը հաճախ կարևոր դեր էր կատարում արտաքին փոխառությունների ու վարկի ներմուծման ընթացքում։

Երրորդը, Օսմանյան կայսրությունն իր գոյության **վերջին**

---

[1] Тодоров Н., Балканский город..., стр. 256.

շրջանում՝ անցյալ դարի չորրորդ քառորդում միայն ընկավ՝ ծանր տնտեսական ու ֆինանսական կախման մեջ։ Արևմտյան տերությունների շահերը ներկայացնող պետական պարտքերի վարչությունը, որը հիմնադրվեց 1881 թ., իրապես դարձավ՝ երկրի տնտեսության և հատկապես ֆինանսները ղեկավարող համարյա միակ կազմակերպությունը։ Շատ հաճախ, թուրքական կառավարության խնդրանքով, նա ապահովում էր նաև պետական հարկերի ու տուրքերի գանձումը։

Ի. Այիբեկովն իրավացիորեն նշում է. «Կորցնելով հսկողությունը սեփական ֆինանսների վրա, Թուրքիան երկար ժամանակով խաթարեց երկրի արտադրողական ուժերի զարգացումը»[1]։

Փաստերը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ համեմատած մյուս կիսագաղութների՝ Իրանի և Չինաստանի հետ օտար կապիտալի մուտքը Թուրքիա ընթացել է «խաղաղ» ճանապարհով։ Ուրեմն, նա այդ ճանապարհին երբեք արգելքներ չունեցավ, գոնե պրոտեկցիոնիզմի քաղաքականության ձևով։ Ներքին զարգացման օրինաչափություններից մեկը տվյալ ժամանակաշրջանի քաղաքական հետադիմական այն վարչակարգն էր, որն իր ծանր կնիքը դրեց ներքին ամբողջ կյանքի վրա և պատմության մեջ մտավ «զուլումի» անվան տակ։ Այդ շրջանին նախորդող տարիներին եվրոպական էժան ապրանքների հարվածներից քայքայված արտադրության և արհեստների մի մասը վերելք ապրեց և ունեցավ նույնիսկ իր ծաղկման փուլը։ Մեծացող և նորաստեղծ որոշ քաղաքներում զարգացման նոր թափ ստացան սպասարկման ոլորտը, սննդամթերքի մշակման արդյունաբերությունը և այլ բնագավառներ։ Սակայն շատ հին կենտրոններ (Թոքատ, Մերզիֆոն և այլն) չկարողացան վերականգնել իրենց արտադրության մակարդակը, քանի որ տարեցտարի աճում էր Եվրոպայից ներմուծվող որոշակի ապրանքների քանակը։

Տնտեսական կյանքում կատարվող նշված պրոցեսները երևվի երկրին այնքան վնաս չհասցրին, որքան 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և նրանից հետո ծավալված մահմեդական մոլեռանդ տարրերի պայքարը քրիստոնյա ժողո-

---

[1] „Etudes balkaniques", 1975, No 3, p. 88.

վուրդների նոր թափ առած ազգային-ազատագրական շարժումների դեմ։ Սկսվեց մի սանձարձակ տնտեսական տեռոր ամբողջ քրիստոնյա բնակչության դեմ, որի ընթացքում վերջինս կորցրեց մշակվող հողերի խոշոր տարածություններ, մեծ քանակով անշարժ ու շարժական գույք և այլ հարստություններ։ Անօրինականության և կամայականությունների այս ալիքը հազիվ էր հանդարտվել, երբ ծայր առան 1894—1896 թթ. հայկական ջարդերը, որոնք բերին նոր ավեր, թալան ու մի շարք շրջանների առևտրական կապերի խախտում, արտադրության նվազում և տնտեսական անկում։ Այդ դեպքերին հետևեցին հույն-թուրքական պատերազմը, հունական ապրանքների բոյկոտը և քաղաքական այլ միջոցառումներ։ Այդպիսով, երկու տասնամյակների ընթացքում մի շարք ծանր հարվածներ կրեցին տնտեսական բնագավառի ակտիվ տարրերը։ Երկրի կառավարիչների վարած քաղաքականությունն ի վերջո արագացրեց անկման պրոցեսը։ Թուրքիայի առաջադեմ գործիչներն անցյալ դարի վերջերից սկսած կայսրությունը փրկելու միակ միջոցը տեսնում էին Աբդուլ Համիդ երկրորդի ռազմաֆեոդալական դիկտատուրայի վերացման մեջ։ Թուրք հայրենասերների մամուլում հրապարակված մի հայտարարության մեջ ասված էր. «Եթե Թուրքիան մի բռնավորի փոխարեն ունենար մի իմաստուն միապետ, որը հենվեր բոլոր ցեղերի ու կրոնների ներկայացուցիչներից բաղկացած պատգամավորական ժողովի վրա, ապա նա կփրկվեր»[1]։ Այսքանը միայն։ Երիտթուրքական հեղաշրջման նախօրյակին՝ 1908 թ. հունվարին, կուսակցության կենտրոնական օրգան «Մեշվերեթ» թերթի առաջնորդողներից մեկում կարդում ենք հետևյալ ծրագրային հայտարարությունը. «Հեղափոխությունը, որը կազմակերպված ու գործադրված է բացառապես հայրենիքի զավակներուն կողմե, պիտի նպատակակետ ունենա Աբդուլ Համիդի բացարձակ բռնակալ իշխանությունը (այսինքն՝ նրա տապալումը— Հ. Ի.) և ոչ թե մեր երկրի կրոնական և սոցիալական հիմնարկությունները»[2]։ Վերջին խոստումը նրանք կատարեցին հետևողական կերպով, չփորձելով որևէ փոփոխություն մտցնել երկրի սոցիալ-քաղաքական կյանքում կամ լուծել

[1] Սապահգուլյան Ս., Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 15։

[2] «Երկրի ձայնը», 1908, № 2, էջ 6. ընդգծումները կատարել է թարգմանիչը։ Շաբաթաթերթը դրանք թողել է անփոփոխ։

սոցիալ-տնտեսական որևէ պրոբլեմ։ Հենց սկզբից նրանք, ի լուր աշխարհի հայտնեցին, որ շարունակելու են «կողմնակից մնալ սահմանադրական միապետության և Օսմանի արքայատոհմի պահպանման»[1]:

Երիտթուրքերի այստեղ զետեղած երկու հայտարարությունն էլ միանգամայն համապատասխանում էին նրանց դասակարգային էությանը և ավելին սպասողները, բնականաբար, հուսախաբ եղան։ Պառլամենտի գոյությունն անգամ ի վիճակի չեղավ ստեղծելու բուրժուական դեմոկրատիային համապատասխանող տարրական պայմաններ։ Բռնատիրությունն ու կամայականությունները շարունակվեցին, այն տարբերությամբ միայն, որ դրանք կատարվում էին երիտթուրքերի ղեկավարությամբ ու ցուցումներով, ավելի կատարելագործված մեթոդներով։ Նրանք նույնությամբ պահեցին սուլթանական Թուրքիայի պետական ապարատը, երկրի ներսի կարգ ու կանոնը։ Երիտթուրքերի իշխանության առաջին ամիսներին նկարագրելով Թուրքիայի ներքին դրությունը, Կ. Պոլսում ռուսական դեսպան Ի. Զինովևն իր վերադասին հաղորդում էր. «Թուրքերը, որոնք իրենց համարում են ընտրյալ ռասա, չեն կարողանում հաշտվել հավասարության սկզբունքի հետ, որ հրապարակել է սահմանադրությունը»[2]։ Վերականգնելուց հետո էլ այն իրականում երբեք ազդեցություն չունեցավ Թուրքիայի հասարակական կյանքի վրա։ Դասակարգային և ազգամիջյան փոխհարաբերությունները ավելի ևս սրվեցին։ Տիրապետող ազգի ներկայացուցիչներն ու գործիչները մտածել անգամ չէին ցանկանում ժողովուրդների իրավահավասարության հնարավորության մասին։ «Այսպես կոչված «երիտթուրքերի» մտավոր շարժումը,— գրել է այդ օրերին Կ. Պոլսում ռուսական դեսպանատան հավատարմատար Դ. Նեկլյուդովը,— շատ հին և բուն թուրքական շարժում է, որի էությունը հանգում է թուրք-գրավողի բողոքին ընդդեմ Թուրքիայի վզին դրսից փաթաթվող բարենորոգումների և նորամուծությունների, որոնք նրանց հետզհետե զրկում են «հպատակեցված» ազգաբնակչության վրա ունեցած իշխանությունից»[3]։

---

[1] «Երկրի ձայնը»... № 2, էջ 6։

[2] АВПР, ф. политархив, д. 1034, л. 55.

[3] Նույն տեղը, թերթ 100։

Ինչպես ցույց են տալիս բերված արխիվային փաստաթղթերը, երիտթուրքերը մինչև վերջ մնում էին հինը պահպանելու կողմնակիցներ և նրանց ղեկավարությամբ տեղի ունեցած հեղաշրջումը պայմանականորեն կարելի է անվանել հեղափոխություն։ Այդուհանդերձ, տնտեսական առաջընթացը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը ներգրավեցին ոչ միայն արդյունաբերության, արհեստների և առևտրի բնագավառները, այլև գյուղատնտեսությունը։ Մասնավոր, ֆեոդալական ու կապիտալիստական խոշոր հողատիրության ընդլայնումը, լիբերալ կալվածատերերի և պետական պաշտոնյաների ու զինվորականների ներկայացուցիչներից ձևավորվող բուրժուական խավի առկայությունը, գյուղական բուրժուազիայի ծնունդը, որպես գյուղացիության քայքայման հետևանք, գյուղատնտեսության մասնագիտացումն ու կապիտալիզացիան և մի շարք այլ պրոցեսներ ցույց էին տալիս կապիտալիզմի առաջընթացը նաև գյուղատնտեսության մեջ և վերջինիս զարգացումը պրուսական ուղիով։

Այդ ամենին նպաստեցին առևտրական կապերի ընդլայնումը, հատկապես արտաքին առևտրի աշխուժացումը և ներքին շուկայի գոյացման պրոցեսը։ Տեղի էին ունենում արդյունաբերության և արհեստների կենտրոնացում, առևտրադրամական և արդյունաբերական կապիտալի միավորում։ Տեղական բուրժուազիայի ազգային խմբերը համախմբվում էին, կազմակերպում փայատիրական և այլ ընկերություններ։ Դասակարգային միություններ ստեղծելու ճանապարհով նրանք փորձում էին դիմակայել ֆեոդալական պետության և օտար կապիտալի աճող ճնշմանը։ Սակայն այդ փորձերը մեծ մասամբ քիչ արդյունք էին տալիս։ Թուրքական ՙարտնչող շովինիզմի գաղափարախոսությունն ու քաղաքականությունը հիշյալ ձգտումների իրականացման ճանապարհին հանդիսանում էին չափազանց լուրջ և հաճախ անհաղթահարելի արգելքներ։

«... Երիտթուրքերը,— գրում է է. Հասանովան,— խոսքով իբր կողմնակից էին ազատության, հավասարության, եղբայրության, իրականում հրահրեցին ազգային հակասությունները Օսմանյան կայսրության ժողովուրդների միջև և իրենք թաղեցին այն ազատությունը, որի համար 1908 թ. պայքարում էին թուրքերը կայսրության մյուս ժողովուրդների հետ միասին։ Երիտթուրքերի շովինիզմը հանդիսացավ նրանց քաղաքականության

կրախի, վերջին հաշվով, Օսմանյան կայսրության անկման ամենալուրջ պատճառներից մեկը»[1]։

Օսմանիզմին և պանիսլամիզմին հաջորդեցին պանթյուրքիզմն ու պանթուրանիզմը և դրանց պրակտիկ արտահայտությունը հանդիսացող ազգային խտրականության քաղաքականությունը (թյուրքչուլուքը) վանեց բռնության դեմ թուրք ժողովրդի դաշնակիցը հանդիսացող քրիստոնյա ազգաբնակչությանը և մահմեդական մյուս ժողովուրդներին։ Այստեղ ևս շատացվեց դասակարգային միավորում, ընդհակառակը՝ ուժեղացող ազգային ճնշումը սրեց ազգամիջյան պայքարը։ Իր անկման նախօրյակին՝ երիտթուրքերի դաժան դիկտատուրայի տարիներին, Օսմանյան կայսրությունը մի անգամ ևս ցույց տվեց, որ նա իրապես հանդիսացել է ժողովուրդների բանտ, որի ոչնչացումը չափազանց պրոգրեսիվ երևույթ էր բոլոր հպատակ ժողովուրդների, ինչպես նաև թուրք աշխատավոր ժողովրդի համար։ Կայսրության տապալումը, ռազմական ուժերի կամ պատերազմի պայմանների օգտագործմամբ, դարձել էր պատմական անհրաժեշտություն։ Եվ դա ամենից առաջ մոտ ու հասկանալի էր աշխատավոր ժողովրդական մասսաներին ու առաջադեմ մարդկության ներկայացուցիչներին։ Բայց այն չէր համապատասխանում երիտթուրքերի պանթյուրքական նվաճողական պլաններին։ Կայսրության գոյությունը նրանք դիտում էին որպես այդ պլանների կենսագործման նախապայման։

Այնուամենայնիվ, կայսրության սահմաններում և նրանցից դուրս կային ուժեր, առաջադեմ կազմակերպություններ և գործիչներ, որոնք լրջորեն մտածում էին տառապող ժողովուրդներին ազատագրելու մասին, խորհում և առաջարկում էին տարբեր ուղիներ։ Դրանցից ամենից հավանականն էր թվում դեմոկրատական վերափոխումների ճանապարհով, ազատագրական պայքարի միջոցով ֆեդերատիվ պետություն *ստեղծելու հնարավորությունը։*

Հետաքրքիրն այն է, որ Օսմանյան կայսրության տարածքում նման պետական միավորումներ ստեղծելու խնդիրը առանձին մտավորականներին զբաղեցրել է դեռևս անցյալ դարի կեսերին։

---

[1] Гасанова Э. Ю., Общественная мысль в Турции в период буржуазной революции 1908 г., Сб., Современная философская и социологическая мысль стран Востока, М., 1965, стр. 234.

Պ. Չիխաչևը «Ռուսաստանը և Արևելյան հարցը» հոդվածում 1860 թ. գրում էր թուրքերի գերիշխանությունը վերացնելու անհրաժեշտության մասին և գտնում, որ ազգային սկզբունքի վրա հենված կարելի է ստեղծել ինքնուրույն «ֆեդերատիվ պետություն՝ հար և նման Ամերիկայի Միացյալ Նահանգներին կամ Շվեյցարիայինն»[1]։

Այնուհետև այդ գաղափարը չմոռացվեց և երբեմն արտահայտվում էր մամուլում և գրականության մեջ հատկապես Բուլղարիայի ազատագրումից հետո։

Այն դարձավ կենսական խնդիր, կապված երիտթուրքական շարժման վերելքի հետ, երբ կայսրության հպատակ, հարստահարվող ազգերի ներկայացուցիչները հետևողական կերպով պայքարում էին հանուն ինքնուրույնության կամ ինքնավարության կայսրության հնարավոր կործանումից հետո։ Մարքսիստական «Օբրազովանիե» հանդեսը 1909 թ. իր մայիսյան համարում նշում էր, որ երիտթուրքերը «չափազանց կասկածամտորեն են նայում կայսրության բազմաթիվ ժողովուրդների ինքնուրույնության ձգտմանը և երիտասարդ Թուրքիայի համար միակ հնարավոր ելքի՝ ինքնավար էթնիկական ու կրոնական կազմակերպությունների ֆեդերատիվ միությունը ճանաչելու փոխարեն ուժգնորեն աշխատում են իրականացնել կենտրոնացված պետության սկզբունքը՝ ապահովելով տիրապետող ազգի գերիշխանությունը»[2]։ Հոդվածի հեղինակն իր առաջարկած ուղին համարում էր հույժ կարևոր նաև երիտթուրքերի դիրքերը քաղաքականապես ամրապնդելու իմաստով։ «Քաղաքական ազատությունների և ֆեդերատիվ ապակենտրոնացման գաղափարը,— շարունակում է նա,— եթե միայն երիտթուրքերի կուսակցությունը համաձայնվի դրանք կիրառել կյանքում, ռեակցիան արմատահան կանեն ավելի հաջող կերպով, քան երկու ճակատներում (աջ և ձախ— Հ. Ի.) տարվող կատաղի պայքարը և դեմոկրատների հալածանքը...»[3]։

Թուրքիայի տիրող շրջաններում ֆեդերատիվ պետության գաղափարի և ապակենտրոնացման ձգտումների արտահայտությունները առաջ բերեցին շովինիզմի մի նոր ալիք։ Այն

---

[1] Чихачев П. А., Великие державы и Восточный вопрос, стр. 187.
[2] «Образование», 1909, № 5, стр. 187.
[3] Նույն տեղը, էջ 188։

ներքաշվեց նաև բալկանյան երկրների հասարակության վերին շերտին ու սկսվեցին ազգամիջյան բախումներ։ Բուլղարական ձախ սոցիալիստները՝ տեսնյակները, սերբ սոցիալ-դեմոկրատների հետ աշխատավոր զանգվածներին նացիոնալիզմի վարակից հեռու պահելու նպատակով, լայնորեն պրոպագանդում էին Բալկաններում դեմոկրատական հանրապետությունների ֆեդերացիա ստեղծելու գաղափարը։ Այն ուղղված էր ոչ միայն թուրքական բռնապետության, այլև բալկանյան միապետությունների ազգայնական քաղաքականության դեմ։ Մյուս կողմից, ֆեդերացիայի գաղափարը պատասխան էր իմպերիալիստական պետությունների և ցարական Ռուսաստանի զավթողական ձգտումներին[1]։

1910 թ. սկզբներին Բելգրադում կայացած բալկանյան սոցիալ-դեմոկրատների առաջին կոնֆերանսը, Դ. Բլագոևի մասնակցությամբ, որոշեց պաշտպանել բալկանյան ժողովուրդներին մի ֆեդերացիայի մեջ միավորելու գաղափարը[2]։ Շուտով այդ և մյուս որոշումները տպագրվեցին Միջազգային սոցիալիստական բյուրոյի բյուլետենում և դարձան Ինտերնացիոնալի ու նրա անդամ կուսակցությունների քննարկման առարկա, այսինքն՝ խնդիրն ընդունեց միջազգային բնույթ։ Սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ բալկանյան երկրներում շարունակվեցին բանվորական ժողովներն ու միտինգները՝ հօգուտ ֆեդերացիայի ստեղծման։ Բալկանյան պատերազմները նոր խթան հանդիսացան քննարկվող գաղափարի ավելի լայն պրոպագանդման համար։

Միջազգային սոցիալիստական բյուրոն, որի աշխատանքներին մասնակցում էր Վ. Ի. Լենինը, պաշտպանում էր բալկանյան սոցիալ-դեմոկրատների պայքարը հանուն ֆեդերացիայի։ Ինքը Վ. Ի. Լենինը իր բազմաթիվ աշխատություններում անդրադարձել է այս պրոբլեմին։ «Սլավոն գյուղացու իսկական ազատությունը Բալկաններում,— գրել է նա 1912 թ. հոկտեմբերին,— ինչպես և թուրք գյուղացու ազատությունը, կարող է ապահովել միայն լիկատար ազատությամբ յուրաքանչյուր երկրի ներսում և լիովին ու մինչև վերջը հասցված դեմոկրատական պետությունների ֆեդերացիայով»[3]։

---

[1] Տե՛ս «История второго интернационала», т. II, стр. 275.

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Լենին Վ. Ի., Երկ., հ. 22, էջ 185։

Գերմանական սոցիալիստական թերթերից մեկում զետեղված «Բալկանյան պրոբլեմը» հոդվածն ընթերցելիս Վ. Ի. Լենինն ընդգծում է բալկանյան երկրների ու Թուրքիայի ֆեդերացիայի մասին հեղինակի այն տեսակետը, որ ֆեդերացիան կկարողանար «բավարարել աշխարհագրական տեսակետից այդ միասնական մարզի կուլտուրական պահանջները, եվրոպական իմպերիալիզմի, ինչպես նաև ռուսական համաշխարհային տերության առաջխաղացման դեմ անհաղթահարելի պատնեշ կանգնեցնել»[1]։

Այդ ամենը, այսուհանդերձ, անիրագործելի էր, քանի դեռ կանգուն էր Օսմանյան կայսրությունը և քանի նրանում պետության ղեկը գտնվում էր իրենց միապետական հայտարարած երիտթուրքերի, թուրք շովինիստների ձեռքին։

Այսպիսին են պատմության դասերը, որոնք չեն կարող մոռանալ երբեմնի հպատակ ժողովուրդները և բռնապետության դեմ, հանուն դեմոկրատիայի պայքարող ամբողջ առաջադեմ մարդկությունը։

Օսմանյան կայսրության անցած ուղին համոզիչ կերպով ցույց է տալիս, որ նրա կառավարիչների ղեկավարությամբ տեղի ունեցած պատմական գործողությունների, ինչպես նաև նրանց վարած քաղաքականության հիմքում ընկած էր չափազանց բացասական մի երևույթ՝ արտադրողական պրոցեսից հեռու պահել հիմնական արտադրողներին, ժողովրդական մասսաներին: Մի դեպքում, դա թուրք և մահմեդական ժողովուրդներն էին, որոնց հիմնական ֆունկցիան պատերազմական գործողություններին մասնակցելն էր։

Մյուս դեպքում՝ հպատակ ժողովուրդները, որոնք պարտավոր էին վճարել շատ որոշակի ծանր հարկեր ու տուրքեր, որոնց պատճառով չափազանց դժվարացել էր արտադրության ընդլայնումը։ Իսկ ամենից անտանելին տեղական իշխանության ներկայացուցիչների կամայականություններն էին։ Վերջիններին, ռուս մի դիվանագետի բնորոշմամբ, հատուկ էին աղքատությունը, նախանձը, ագահությունը, ընչաքաղցությունը, կաշառակերությունը և ունևոր քրիստոնյայի հաշվին անպատիժ հարստանալու ցանկությունը[2]։

---

[1] Լենին Վ. Ի., Երկ., հ. 28, էջ 8։

[2] Տե՛ս Улунян А. А., Апрельское восстание 1876 г. в Болгарии и Россия, М., 1978, стр. 9.

Կ. Մարքսը, նշել է, որ թուրք վաչկատուն ցեղերը կարևոր էին համարում միայն անասունների հոտի վերարտադրությունը։ Այդ պահանջը նրանց մղում էր դեպի Արևմուտք, դեպի նոր հողերի գրավում և սահմանների ընդլայնում։ Այնուհետև, երկրում տիրապետող ռազմաավատական հողօգտագործման սիստեմը ստիպում էր վերնախավին մղել նորանոր պատերազմներ, որ և տեղի էին ունենում անընդհատ, մինչև կայսրության հզորության անկումը։ Պատերազմները, որոնք քայքայում էին երկրի տնտեսությունը և արտադրողական ուժերը, մասնակիցների համար ապրուստի և հարստացման գլխավոր միջոց էին։

Կայսրության քաղաքականության հիմնական աղբյուր հանդիսացող իսլամն ևս մշտապես իր հետևորդներին մղում էր դեպի նորանոր արշավների ու ավարառությունների։ Հարձակման այդ շրջանը տևեց մոտ երկու դար և ստեղծեց հաղթանակների ու կայսրության՝ իբր անպարտելի ուժի մասին մտայնություն, որը վարակեց թե վերնախավին և թե թուրք ժողովրդի մի զգալի մասին։

Մինչդեռ Թուրքիայի հեշտ և արագ տարածքային ընդլայնումը, երկրի ներսում դեռևս գոյություն չունեցող կայուն տընտեսական կապերի պայմաններում, լրջորեն խանգարեց ֆեոդալական տնտեսության զարգացմանը ոչ միայն լայնությամբ, այլև խորությամբ։ Ահա թե ինչու գյուղատնտեսությունը Թուրքիայում դարերով մնաց ֆեոդալիզմի ամենացածր՝ «բարբարոսական» մակարդակի վրա։ Արդեն XVIII դարի վերջերին ռազմաավատական հողատիրության քայքայումն ավարտվեց, հողը կենտրոնացվեց խոշոր սեփականատերերի, տարբեր փաշաների, դերեբեյերի և այլոց ձեռքերում, որը, իր հերթին, ամրապնդեց սեպարատիզմը՝ կայսրության առանձին շրջանների և նրանցում բնակվող ժողովուրդների մասնատումը։

Ընդհանուր պատկերը ամբողջացնելու համար նշենք, ինչպես իրավացի կերպով այդ անում է Ա. Ֆ. Միլլերը, որ «գրաված ամբողջ տարածության վրա, բացի Անատոլիայից և Ստամբուլին հարած Ռումելիայի մասից, թուրքերը ըստ էության շարունակում էին մնալ որպես ռազմական օկուպանտներ»[1]։

Իսկ օկուպանտի համար բնորոշ է տեղական հարստություն-

---

[1] Миллер А. Ф., Турция, актуальные проблемы новой и новейшей истории ,М., 1983, стр. 21.

ների յուրացումը, հպատակ ազգաբնակչության թալանը և կողոպուտը, օրինական և անօրինական հարկերի գանձումը։ Այս բոլորը, ամենայն հետևողականությամբ, տեղի էր ունենում կայսրության ամբողջ տարածքի վրա և հատկապես քրիստոնյա ժողովուրդների բնակավայրերում։

Հետևանքը եղավ այն, որ արտադրողական ուժերի հիմնական մասը կազմող այս տարրերը ևս շահագրգռված չէին զարգացնելու արտադրությունը ոչ գյուղում և ոչ քաղաքում։ Բարիքների կուտակումը, շատ հաճախ, նոր բռնագրավումների ու թալանի առիթ էր հանդիսանում և հենց այս պատճառով գյուղացին կամ քաղաքի արհեստավորը արտադրում էր միայն իր մինիմալ պահանջները բավարարելու, քիչ դեպքերում էլ շուկայի համար։ Բացառություն էին կազմում պետական հսկողության ենթակա արտադրությունները։ Բայց դրանք չէին փոխում իրերի վիճակը։ Անօրինականությունը և կամայականությունները համընդհանուր երևույթ էին և գույքի ու անձի անապահովությունը՝ օրինաչափություն։

Այս միջոցներով տեղի ունեցող վերնախավի հարստացումը միաձուլում էր նրան պետական ապարատի հետ, հանգեցնում նրա բյուրոկրատացմանը և պարազիտային տարրի վերածվելուն։ Բնականաբար, այն դառնում էր ամեն մի նորամուծության և ընդհանրապես առաջընթացի բացարձակ թշնամին։ Դրանով է բացատրվում, որ կայսրությունում ռեֆորմների բոլոր փորձերը ձախողվում էին, և դրանք երբեք չէին հետապնդում երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կարգերը վերափոխելու նպատակը։

Թուրքիայի զարգացման նման ընթացքին նպաստեց նաև XIX դարում ձևավորված երկրի ներքին ռեակցիոն ուժերի և իմպերիալիզմի միասնական ճակատը, որի ազդեցությունը զգալի է մինչև օրս։

Գրականության մեջ փորձ է արվում նույնացնել օտար կապիտալի և ոչ թուրք, այլազգի բուրժուազիայի դերը երկրի առաջընթացի պրոցեսում։ Այդ տեսակետին հարող հեղինակները մոռանում են, որ վերջինս եղել է երկրում կապիտալիստական կարգերի հաստատման ամենահետևողական կողմնակիցը և Վ. Ի. Լենինը նրա շարժումները գնահատել է որպես բուրժուական տարրերի պայքար ֆեոդալիզմի դեմ։

Դժբախտաբար, ֆեոդալիզմի ամուր դիրքերի առկայու-

թյամբ ձևավորվեց և ամրապնդվեց Օսմանյան կայսրության-պետական և քաղաքական ռեժիմը։ Համարյա վեց դարերի իր գոյության ընթացքում նա հանդիսացավ ֆեոդալական կարգերի, ռազմաբյուրոկրատական վարչաձևի ամուր պատվարը։ Շնորհիվ կառավարման այդ պահպանողական ձևերի՝ բուրժուական հարաբերությունների զարգացման պրոցեսը մինչև վերջ ընթացավ, և այսօր էլ մասամբ ընթանում է ֆեոդալական կարգերի տիրապետող ազդեցության պայմաններում։

Այսուհանդերձ, հասարակական առաջընթացի տրամաբանությունն ու օրինաչափությունը Թուրքիայում ևս սոցիալ-տնտեսական տեղաշարժեր առաջացրին։ Այլազգի բուրժուազիայի երևան գալը XIX դարի սկզբին, արհեստների ու արդյունաբերության զարգացումը, առևտրական կապերի աշխուժացումը և ի վերջո օտար կապիտալի մուտքը պայմաններ ստեղծեցին կապիտալիստական հարաբերությունների և թուրքական ազգային բուրժուազիայի ձևավորման համար։ Բայց թուրքական կապիտալը, ինչպես տեսանք, մեծ մասամբ ներգրավում էր առևտրի ոլորտը։ Թուրքական բուրժուազիան, մինչև կայսրության անկումը, լրջորեն չկապվեց արդյունաբերության հետ ու չստեղծեց լուրջ սոցիալական, դասակարգային հիմքեր՝ երկրի տնտեսության մեջ։ Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ նա համարյա չունեցավ զարգացման նախապատրաստման շրջան, մասնավորապես քաղաքականության բնագավառում, որը պետք է հենվեր ձևավորված գաղափարախոսության վրա։ Սկզբից մինչև վերջ բուրժուազիան բավարարվում էր ֆեոդալական գաղափարախոսության տված սնունդով։ Անգամ նացիոնալիզմն ու շովինիզմը, որոնք կապիտալիզմի զարգացման ուղղակի արդյունք են, թուրքական ազգային բուրժուազիան վերցրեց ֆեոդալական պատրաստի ձևերից և իրենը հայտարարեց օսմանիզմն ու պանիսլամիզմը, պանթուրանիզմն ու պանթյուրքիզմը։ Բառիս իսկական իմաստով, չունենալով իր քաղաքական կուսակցությունը, քանի որ երիտթուրքերին այդպիսին չի կարելի համարել, թուրքական բուրժուազիան այստեղ ևս հարեց ֆեոդալական-միապետական կազմակերպությունների և քաղաքական աշխատանքի ձևերին։ Սոցիալ-տնտեսական զարգացման տրամաբանությունը ինչ-որ չափով հասկացող կոմս Սաբահեդդինը և նրա հետևորդները ավելի բարձր զարգացման աստիճանի հասած հպատակ ժողովուրդների համար ավտո-

նամիա կիրառելու իրենց առաջարկություններով, դուրս շպրտվեցին երկրի հասարակական-քաղաքական կյանքից։ Կառավարության ղեկը ֆեոդալներից անցավ լիբերալ կալվածատերերի, պետական ու զինվորական բյուրոկրատիայի ներկայացուցիչների ձեռքը։

Տնտեսության մեջ քրիստոնյաների իշխող վիճակը, ինչպես բազմաթիվ այլ երկրներում, չհասցրեց նրանց նաև քաղաքական իրավահավասարության։ Նրանք մնացին «գյավուրներ» (իսկ այժմ համարվում են երկրորդ կարգի քաղաքացիներ)՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով։ Համակերպվել նման դրությանը չէին կարող իրենց զարգացման աստիճանով թուրքերից ավելի բարձր կանգնած ժողովուրդները։ Ազգային-ազատագրական շարժումները դարձան երկրում մշտական երևույթ հետզհետե ավելի կազմակերպված ու մասսայական և XIX դարի պատմությունը հագեցվեց ազատագրական պայքարի փայլուն էջերով։ Դարասկզբին որոշակի հաջողության հասավ սերբերի պայքարը։ Սակայն առաջինը ազատագրվեց Հունաստանը, և կայսրությունը զրկվեց կապիտալիստական բուռն զարգացում ապրող, տնտեսական մեծ կարևորություն ունեցող շրջաններից։ Հաջորդ տասնամյակում, 1830-ական թթ., իր ինքնուրույնությունը և փաստական անկախությունը ամրապնդեց սուլթանի երբեմնի վասալ Մուհամմեդ Ալին Եգիպտոսում։

Անցյալ դարի 70-ական թթ. ազատագրական շարժումները ծայր առան Բալկաններում և 1876 թ. ապրիլյան ապստամբությունը Բուլղարիային բերեց անկախություն։ Իսկ բալկանյան բոլոր ժողովուրդները վերջնականապես ազատագրվեցին միայն առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին։

Կրած բոլոր պարտությունները, տնտեսության և կուլտուրայի բնագավառում ունեցած կորուստները կայսրության վերնախավին տրամադրել էին ձեռնարկելու ամեն միջոց և թույլ չտալու, որ հաղթանակով ավարտվեր նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը։ Տեղական իշխանությունների, աղաների ու բեկերի, կանոնավոր զորքերի ու համիդիեի գործունեությունը և թալանի ու տնտեսական տեռորի, հարըստահարումների ու հետապնդումների հնարավոր բոլոր ձևերի գործադրումը ուղղված էին այդ պայքարի ձախողմանը։

Բեռլինի կոնգրեսի որոշումներից բխող կիսատ-պռատ բարենորոգումների պահանջի անտեսումը, Սասունի ջարդերը և

Հայերի ցեղասպանությունը ստեղծեցին ողբերգական վիճակ հայ ժողովրդի համար։ Մարդկային կորուստների հետ նա կորցրեց նաև իր պապենական հողերի մեծագույն մասը։ Սակայն նշված ոճրագործությունների շղթան թանկ նստեց նաև կայսրության վրա։ Թալանի ու ոչնչացման ենթարկվեցին բազմաթիվ ծաղկուն շրջաններ ու երկիրը կրեց նյութական և մարդկային ռեսուրսների մեծագույն վնասներ, որոնց հետևանքները զգալի են մինչև այսօր։ Կայսրության անկման վերջին ողբերգական ակտը, նրա մասնակցությունն ու պարտությունն էր առաջին համաշխարհային պատերազմում։ Նյութական հսկայական կորստին զուգակցվեցին Արևմտյան Հայաստանից բացի, նաև հունաբնակ շրջանների քայքայումը, երկրի սնանկացումը և նրա գերմանական իմպերիալիզմի կցորդ դառնալը։

Այս բոլոր հանցագործությունների համար Ստամբուլի ռազմական ատյանը 1919 թ. հուլիսի 5-ի իր դատավճռով, երիտթուրքերի պարագլուխներ Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և դոկտ. Նազըմին, հեռակա կարգով, դատապարտել էր մահվան։ Մի շարք վիլայեթների դատական հատուկ ատյաններ տնտեսական քայքայում պատճառելու, քրիստոնյաների ջարդեր կազմակերպելու և հակամարդկային այլ գործողությունների համար դատապարտեցին տեղական բազմաթիվ պաշտոնյաների ու վերնախավի ներկայացուցիչների։

Օսմանյան կայսրությունն իր երկարատև գոյության ընթացքում, հետզհետե վերածվեց (և՛ քաղաքական, և՛ տնտեսական իմաստով) Թուրքիայի ու նրանում բնակվող ժողովուրդների առաջընթացը խանգարող ու արգելակող ուժի։ Իսկ ոչ թուրք, ավելի զարգացած ժողովուրդների համար նա դարձել էր ռեակցիոն վերապրուկ դեռևս հարյուրամյակներ առաջ։ Կայսրությունը հինգ դար կասեցրել էր նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման ընթացքը։

Ինչպես տեսնում ենք, պատմությունը վաղուց արդեն կայացրել էր իր դատավճիռը։ Այլ ժողովուրդների և ազգերի հարստահարող ու կեղեքող տարրերի տիրապետությունը, ինչ ձև էլ նա ունենա, չի կարող լինել հարատև։ Նա պետք է տապալվի։ Օսմանյան կայսրության անկումը, որպես պատմականորեն օրինաչափ և պրոգրեսիվ երևույթ, հաստատում է առաջընթացի ճանապարհին կանգնած նույնիսկ հզոր արգելքների խորտակման անխուսափելիությունը։

РЕЗЮМЕ

В обширной литературе по истории Османской империи нет специального исследования о социально-экономических причинах ее падения. Факторы, определяющие объем и глубину этого закономерного явления освещены мимоходом, лишь при анализе отдельных событий или этапов развития страны.

Среди главных исторических причин—опустошительные нашествия тюрко-монгольских племен, которые в XI—XVI веках четырежды уничтожали достигнутый экономический и культурный уровень Передней Азии. Сами турки, в ходе завоевательных походов, свое общественное устройство дважды начинали «с нуля».

Другой фактор, определяющий крайне медленное социально-экономическое развитие Турции, это—патриархально-родовые отношения, которые кочевники-тюрки сохраняли веками, перебазируясь с одного места на другое и навязывая эти отношения покоренным народам.

Третий — это государственная собственность на землю. В период нашествий захваченная земля рассматривалась как общинная, племенная, коллективная собственность, а проще, пастбища для скота, главного богатства кочевнических объединений. Уходя, они оголяли и опустошали использованные земли, затрудняя их культивирование. Позднее, земля раздавалась за государственную и военную службу (тимары, зиаметы и хассы) в виде временных пожалований, что обеспечивало новых владельцев материальными благами и финансами, но не делало их истинными хозяевами, заинтересованными в улучшеии качества земли и условий земледелия.

В течение веков настоящим общественным бедствием была откупная система налогов и поборов, при которых сборщики сами определяли сумму налогов и «долгов», цены на продукты и сырье, натуральную или денежную фор-

му законных и произвольных поборов. Органы власти не чинили им никаких препятствий, ибо в грабеже имели свою долю.

В период становления капиталистических отношений социально-экономические условия менялись крайне медленно. Военно-бюрократическая верхушка политическими и экономическими мерами пыталась тормозить развитие буржуазных отношений. Формирование турецкой национальной буржуазии не привело к свободе предпринимательской деятельности. Даже наиболее динамичные элементы иконациональной буржуазии не смогли освободиться от феодальных ограничений и религиозно-шариатских запретов. Укрепление позиций турецкой буржуазии в конце прошлого века еще больше обострило отношения между различными национальными группами буржуазии. Христиане всячески вытеснялись из экономической и политической сфер, их разоряли путем насилия, произвола и беззакония.

Превращение Османской империи в конце XIX столетия в полуколонию лишь усугубило указанные внутренние процессы. Создание в 1881 г. «Управления государственного долга» только в конце века узаконило зависимое положение Турции.

Младотурецкий переворот не приостановил процесс разложения и падения империи османов. Младотурки не думали даже о проведении заметных социально-экономических преобразований, об установлении равноправия народов, о равенстве мусульман с христианами. В области экономики они продолжали курс прежних правительств, сохраняя силу и мощь феодальных порядков в стране.

Для оценки всей исторической значимости указанных отрицательных факторов следует подчеркнуть их пагубное влияние на покоренные народы. Экономический, политический и культурный пропресс последних был почти приостановлен в течение примерно 500 лет. Для отдельных же христианских народов, в особенности для армян, частично греков и других, мрачные столетия турецкого ига завершились физическим уничтожением и депортацией основной массы этих народов.

Вышеотмеченные отрицательные внутренние факторы и авантюристический, пантюркистский курс внешней политики, с благословения империалистического Запада, привели в годы первой мировой войны к краху Османской империи. Таков закономерный и прогрессивный итог ее исторического развития.

SUMMARY

The extensive literature on the history of the Ottoman Empire lacks a special research on the social-economic reasons of its downfall. Factors defining the volume and depth of that regular phenomenon are elucidated in a perfunctory manner, only when analising individual events or stages of the development of the country.

Among the main historical reasons are the devastating invasions of the Turkish-mongolian tribes, who during the XI—XVI centuries A.D. four times destroyed the highly developed economic and cultural level of the Near Eastern peoples. Turks themselves twice during the conquering invasions began their social organization from zero level.

Another factor, defining the extremely slow social-economic development of the Turks, is the patriarchal-ancestral relations, which the nomad Turks kept during the centuries, moving from place to place and imposing by force these relations on the submissed peoples.

The third factor is the state property on the land. During the invasions the seized lands were considered as belonging to community, tribe, as a collective property, i.e. pasture for the cattle, the main wealth of the nomads. When departing they bared and devastated these lands, making difficult their cultivation. Later on the lands were distributed for the state and military services (timars, ziamets and chasesü as the temporary gifts providing material wealth and money for the new owners, but it could never make them the real landlords, interested in improvement of the quality of the land and conditions of agriculture.

During the centuries the system of taxes was a real public disaster. The collectors themselves determined the sum of taxes and "debts", costs on products and the raw materials, natural or money forms of the legal and arbitrary taxes. Local authorities never put obstacles on this because they also had their share.

In the making of the capitalistic relations the social-economic conditions were changing very slowly. The mili-

tary-bureaucratic leaders were trying to hamper the growth of the capitalistic relations by means of political and economic measures. The formation of the Turkish national bourgeoisie never brought to free business. Even the most dynamic elements of the non-Turkish bourgeoisie could not make themselves free from feudal restrictions and religious-shariatic interdictions. The consolidation of the Turkish bourgeoisie at the end of the XIX century strained more the relations among various national groups of the bourgeoisie. In every possible way the Christians were forced out of the economic and political spheres, they were impoverished by means of violence, arbitrariness and lawlessness. The transformation of the Ottoman Empire into a semicolony at the end of the XIX century aggravated the mentioned internal processes.

The creation of the "State Debt Office" in 1881 only at the end of the XIX century legalized the dependent position of Turkey.

The Young-Turkish upheaval did not stop the process of demonstration and downfall of the Ottoman Empire. The Young-Turks never thought about the marked social-economic transformations, nor about establishing the equality of the peoples, about the equality between the Muslims and the Christians. In the economic sphere they continued the policy of the former governments, trying to keep the strength and power of the feudal orders in the country.

For the estimation of the whole historical significance of the above-mentioned negative factors, their fatal influence on the subjugated nations should be emphasized. The economic, political and cultural progress of the latters was practically suspended in the course of about 500 years. For some Christian nations, especially Armenians, partially Greeks and others, the dark ages of the Turkish yoke were completed by the extermination and the deportation of the main masses of these nations.

The above-mentioned and other negative internal factors and also the venturesome panturkist course of foreign policy, with the blessing of the imperialistic West, brought the Ottoman Empire into collapse during World War I. This was the legitimate and progressive result of its whole historical development.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՕՍՄԱՆՅԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄ ԿԱՄ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ . . . 33
ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՀԱՐՄԱՐՎՈՒՄ Է 97
ա. Ֆեոդալական հարաբերությունների քայքայումը . . 98
բ. Կապիտալիզմի դանդաղ առաջընթացը 148
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՈՒՂԻՆ 211
ա. Նոր հասարակարգի դասակարգերի ձևավորման յուրահատկությունները 213
բ. Տարբեր գործոնների ազդեցությունը 262
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ
(Եզրահանգումներ) 305
Резюме 332
Summary . 334

Инджикян Оганес Григорьевич
ПАДЕНИЕ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ
(социально-экономический очерк)
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван — 1984

Հրատ. խմբագիր՝ Ռ. Հ. Մուրադյան, կրտսեր խմբագիր՝ Գ. Ռ. Կեյապյան, նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան, գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան, տեխն. խմբագիր՝ Ա. Մ. Բլբուլյան, վերստուգող սրբագրիչ՝ Մ. Մ. Արշակյան

ИБ 3965
Հանձնված է շարվածքի 12.06.1984 թ.։
Ստորագրված է տպագրության 19.09.1984 թ.։
Ձևաչափ՝ $84 \times 108^{1}/_{32}$։ Թուղթ տպ. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։
Տպագրություն՝ բարձր։ 17,64 պայմ. տպագր. մամ., հրատ., 17,29 մամ.։
Պատվեր՝ 959։ ՎՖ 09427։ Տպաքանակ՝ 20 000։ Գինը՝ 1 ռ. 40 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Айастан», Ереван—9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փող. № 23/1։
Типография № 6 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР,
Ереван, ул. Туманяна, 23/1.

9(58)
л-58